









ՆԱԵՍՏԱՆԻ ԱԺԳԱՅԻՆ ԳՐԱՐԱՐԱՆ  
NATIONAL  
LIBRARY  
OF ARMENIA

**Սույն ստեղծագործությունը հասանելի է  
Հայաստանի ազգային գրադարանի  
թվային շտեմարաններում՝ համաձայն  
դրա իրավատիրոջ հետ կնքած  
Համագործակցության պայմանագրի, և  
կարող է օգտագործվել բացառապես  
օրենքով նախատեսված կարգով՝  
պահպանելով հեղինակի և իրավատիրոջ  
հեղինակային իրավունքները**



ՄԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԸՆԴԱՐՁԱԿ  
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
(1974 - 2024)

**SERGEY VARDANYAN**

**COMPREHENSIVE  
BIBLIOGRAPHY**

(1974 - 2024)

YEREVAN

LUSAKN

2025

**СЕРГЕЙ ВАРДАНЯН**

**ОБШИРНАЯ  
БИБЛИОГРАФИЯ**

(1974 - 2024)

ЕРЕВАН

ЛУСАКН

2025

ՄԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԸՆԴԱՐՁԱԿ

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

(1974 - 2024)

ԵՐԵՎԱՆ  
ԼՈՒՍԱԿՆ  
2025



ՀՏԴ 012:80:94:39

ԳՄԴ 91.1:80+91.1:63

Վ 301

Գիրքը տպագրվել է գավակներիս՝  
**Գագիկ և Գոհար Վարդանյանների**  
աջակցությամբ

Սերգեյ Վարդանյան: Ընդարձակ մատենագիտություն (1974 - 2024) /  
Վ 301 Ս. Վարդանյան.- Եր.: Լուսակն, 2025.- 380 էջ:

Գրքում ընդգրկված է շուրջ հինգ տասնամյակի՝ 1974-2024 թթ. ընթացքում բանասեր, պատմաբան, ազգագրագետ, բանագետ, բանահավաք, բարբառագետ, արձակագիր, հրապարակախոս Սերգեյ Վարդանյանի գրքերի, հոդվածների, այլևայլ հրապարակումների մատենագիտությունը:

Նախատեսված է բանասերների, պատմաբանների, ազգագրագետների, մշակութաբանների, սփյուռքագետների, ցեղասպանագետների, քրիստոնյա և կրոնափոխ համշենահայերի անցյալով ու ներկայով, բարբառով, բանահյուսությամբ, երգերով հետաքրքրվողների, դասախոսների և ուսանողների համար:

ՀՏԴ 012:80:94:39

ԳՄԴ 91.1:80+91.1:63

ISBN 978-9939-968-97-1

© Սերգեյ Վարդանյան, 2025

© Լուսակն, 2025

## ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սերգեյ Գագիկի Վարդանյան. բանասեր, պատմաբան, ազգագրագետ, բանահավաք, բանագետ, բարբառագետ, հրապարակախոս, արձակագիր:

Ծնվել է 1952 թ. նոյեմբերի 9-ին Երևանում: 1959-1961 թթ. սովորել է Երևանի № 51, իսկ 1961-1969 թթ.՝ Հ. Պարոնյանի անվան թիվ 59 դպրոցում: 1974 թ. ավարտելով Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, աշխատել է նույն համալսարանի հոգեբանության ամբիոնում, այնուհետև՝ «Պիոներ կանչ» («Կանչ») թերթի, «Պիոներ» («Աղբյուր»), «Սովետական արվեստ», «Մշակույթ» ամսագրերի խմբագրություններում, Հայ ճարտարապետության թանգարան-ինստիտուտում, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում: 1991 թ. մայիսին նշանակվել է ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի փոխնախագահ և մինչև լուծարումը՝ 2002 թ., տասնմեկ տարի եղել է ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհրդի փոխնախագահը:

Սոցիի նորաստեղծ «Սևան» հայկական մշակութային կենտրոնին աջակցելու նպատակով 1991 թ. նոյեմբերից մինչև 1992 թ. մայիսը Երևանում մի քանի մտավորականների հետ հրատարակել է «Լույս Համշենի» ամսաթերթը, որի յուրաքանչյուր համարի ամբողջ տպաքանակը՝ երկու հազար օրինակը, առաքվում էր Սոցի (Ադլեր)՝ հայկական գյուղերում և դպրոցներում անվճար բաժանելու համար:

1992 թ. Հայաստանի «Համշեն» հայրենակցական-բարեգործական ՀԿ հիմնադիր համագումարում ընտրվել է նախագահի տեղակալ:

2004-2018 թթ. հասարակական հիմունքներով աշխատել է նույն ՀԿ «Չայն համշենական» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր: Ամսաթերթի 1000 օրինակ տպաքանակը 14 տարի անվճար բաժանվում էր հայրենիքում և սփյուռքում:

2009 թ.-ից գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնում: 1978-1982 թթ. մամուլի միջոցով նախաձեռնել է պատանեկան բանահավաքչական շարժում, որին մասնակցել են Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Արցախի, Նախիջևանի, Աբխազիայի և Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասի հայկական դպրոցների աշակերտները: Նրանց հավաքած բանահյուսական նյութերով լույս է ընծայել «Հրեղեն ձին» (1981) և «Թագավորի երագները» (2003) ժո-

ղովածունները, որոնցից ընտրված հեքիաթները «Փրկված հեքիաթներ» վերնագրով լույս են տեսել Երևանում անգլերեն («The salvaged tales», 2007) և գերմաներեն («Gerettete Märchen», 2009): Գերմաներեն նոր տարբերակը՝ «Vor dem Vergessen gerettete armenische Märchen» (Մոռացությունից փրկված հայկական հեքիաթներ) 2023 թ. ավելի քան կրկնակի ծավալով (82 հեքիաթ և զվարճապատում)՝ դարձյալ հրատարակվել է Երևանում:

Ս. Վարդանյանի «Հայոց մայրաքաղաքները» (1985) ուսումնասիրությունը մեծաքանակ նյութերով հարստացված «Հայաստանի մայրաքաղաքները» վերնագրով հրատարակվել է 1995 թ. և արժանացել «Թեքեյան» մշակութային միության «Հայկաշեն Ուզունյան» մրցանակին:

Մանկական պատմվածքների «Արևածաղիկը» գիրքը 1989 թ. տպագրվել է Երևանում, իսկ 1994 թ. արևմտահայերեն՝ Ստամբուլում: Նրա պատմվածքները ընդգրկվել են «Մայրենիի» 4-րդ (2009-ից) և 5-րդ (2011-ից) դասարանների դասագրքերում:

Հայ ժողովրդի պատմության, ազգագրության, բանահյուսության, հայագիտության տարբեր հարցերին նվիրված նրա հոդվածները թարգմանվել են անգլերեն, ֆրանսերեն, հունարեն, իսպաներեն, ռուսերեն, սլովակերեն, թուրքերեն և գերմաներեն:

Դեռևս 1970-ական թթ.-ից զբաղվում է ԽՍՀՄ-ում սփռված հայության՝ այսպես ասած՝ Ներքին սփյուռքի ազգապահպանության հարցերով: ԽՍՀՄ-ի հայության, այդ թվում՝ համշենահայության մասին բազմաթիվ հոդվածների հեղինակ է:

1984 և 1987 թթ. Ղազախստանում, Ուզբեկստանում, Ղրղզստանում և Ռուսաստանում հայտնաբերել է իսլամադավան համշենահայեր: Քանիցս եղել է Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփայի և Բորչքայի գավառներում, ճշտել 20-ից ավելի հայախոս գյուղեր: Ուսումնասիրություններ է կատարել նաև Ռիզեի և Էրզրումի նահանգների կրոնավոխ, թուրքախոս համշենցիների գյուղերում:

Թուրքիայի, Ռուսաստանի և Կենտրոնական Ասիայի կրոնավոխ համշենահայերի մասին նրա հետազոտությունները տպագրվել են հայրենի և արտերկրի մամուլում, 1989 թ. իր կազմած «Չայն համշենական» ժողովածուի երրորդ հատորում, 2009 թ. ԵՊՀ հրատարակած «Կրոնավոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ)» և 2022 թ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի լույս ընծայած «Բանահյուսական պատումի

միջավայրը (Կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները)» մենագրություններում:

Նրա «Окровкавленные семена» (թարգմ.՝ Արյունոտ սերմեր) (2015) գիրքը պատմում է Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասի և Աբխազիայի հայության մղած պայքարի առաջամարտիկների մասին, որոնցից 13-ը արժանացել են Խորհրդային Միության հերոսի կոչման: Ողջ տպաքանակն անվճար բաժանվել է Կրասնոդարի երկրամասում և Աբխազիայում:

1979-ից Հայաստանի ժուռնալիստների միության, 1991-ից՝ Գրողների միության անդամ է, քանիցս ընտրվել է ԳՄ վարչության կազմում:

## ԳՐՔԵՐ

1. Հրեղեն ձին, մշակեց և վերապատմեց Սերգեյ Վարդանյանը, գիտ. խմբագիր՝ Սարգիս Հարությունյան, խմբագիր՝ Դավիթ Հովհաննես, նկարիչ՝ Նիկոլայ Մանուկյան: Առաջաբանը՝ բ.գ.դ. Սարգիս Հարությունյանի, Երկու խոսքը՝ Սերգեյ Վարդանյանի, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1981 (- 240 էջ), չափսը՝ 70x100 1/16, տպաքանակը՝ 15.000:

2. Սերգեյ Վարդանյան, Հայոց մայրաքաղաքները (դպրոցական բարձր տարիքի համար), Երևան, «Սովետական գրող» հրատ., 1985 (- 168 էջ, 130 լուսանկար), չափսը՝ 70x90 1/16, տպաքանակը՝ 20.000:

3. Ձայն համշենական, ժողովածու, գիրք 3, բանաստեղծություն, արձակ, բանահյուսություն, կազմեց, խմբագրեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Սերգեյ Վարդանյանը, Երևան, «Խորհրդային գրող» հրատ., 1989 (- 252 էջ), չափսը՝ 84x108 1/32, տպաքանակը՝ 5.000:

4. Սերգեյ Վարդանյան, Արևածաղիկը, պատմվածքներ (դպրոցական կրտսեր տարիքի համար), նկարիչ՝ Մ[իհրան] Քեչոյլյան, Երևան, «Արևիկ» հրատ., 1989 (- 40 էջ), չափսը՝ 84x90 1/16, տպաքանակը՝ 15.000:

5. Սերգեյ Վարդանյան, Արևածաղիկը, պատմուածքներ, Արեւմտահայերէնի վերածեց՝ Մաքրուհի Պ. Յակոբեան, նկարագարդեց՝ Ժպիտ Պերպերեան, Իսթանպուլ, «ԱՐԱՍ» հրատարակչատուն, 1994 (- 64 էջ):

6. Սերգեյ Վարդանյան, Հայաստանի մայրաքաղաքները, Երևան, «Ապոլոն» հրատ., 1995 (- 264 էջ + 24 էջ գունավոր ներդիր), տպագրվել են 450 սև-սպիտակ և գունավոր լուսանկարներ, վիմագրություններ, քարտեզներ և այլն, չափսը՝ 60x84 1/8, տպաքանակը՝ 1000:

7. Թագավորի երագները (բանահյուսական ժողովածու), կազմեց, ծանոթագրեց և հրատարակության պատրաստեց Սերգեյ Վարդանյանը: Առաջաբանի և բարբառային բառարանների հեղինակ՝ Ս. Վարդանյան, նկարիչ՝ ՆԻԿՕ (Նիկոլայ Մանուկյան), Երևան, «Գասպրինտ» հրատ., 2003 (-144 էջ), տպաքանակը՝ 1000:

8. The Salvaged Tales, Translated by Gohar Vardanyan, Gagik Vardanyan, Edited by Svetlana Mardanyan, Compiled and prepared for publishing by Sergey Vardanyan, Yerevan, Graber”, 2007 (- 164 p.), չափսը՝ 60x84 1/16, տպաքանակը՝ 500:

9. Gerettete Märchen, Gebildet von Sergej Wardanjan, Deutsche Übersetzung: Arpine Stepanjan, Hasmik Howhannisjan, Sprachliche Beratung: Elke Schröder, Allgemeine Beratung: Klaus Brüggemann, Jerewan, “Graber”, 2009 (- 104 s.), չափսը՝ 60x84 1/16, տպաքանակը՝ 500:

10. Սերգեյ Վարդանյան, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), Երևանի պետհամալսարան, Երևան, ԵՊՀ հրատ., 2009 (- 428 էջ+12 էջ սև-սպիտակ+12 էջ գունավոր լուսանկարների ներդիրներ), չափսը՝ 60x84 1/16, տպաքանակը՝ 300:

11. Сергей Варданян, Окровавленные семена, Ереван, изд. ВМВ-Принт, 2015 (-80 стр., 70 фотографии), формат 70x100 1/16, тираж 400.

12. Սերգեյ Վարդանյան, Բանահյուսական պատումի միջավայրը (Կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀԱԻ հրատ., 2022 (- 352 էջ + 16 էջ գունավոր լուսանկարների ներդիր), տպաքանակը՝ 400:

13. Sergej Wardanjan, Vor dem Vergessen gerettete armenische Märchen, Übersetzung Narine Howessjan, Deutsche Bearbeitung Dorothee Schmid (Schweiz), Jerewan, Lusakn, 2023 (-208 seiten, 176 s. + 32 s. bunte Beiblätter), տպաքանակը՝ 300:

## ՊԱՐԳԵՎՆԵՐ

1. 2015 թ.՝ ՀԳՄ «Գրական վաստակի համար» մեդալ:
2. 2013 թ.՝ Հովհաննես Թումանյանի թանգարանի մրցանակ և մեդալ:
3. 2012 թ.՝ Երևանի քաղաքապետի Ոսկե մեդալ:
4. 2012 թ.՝ ՀՀ սփյուռքի նախարարության «Վիլյամ Սարոյան» մեդալ:
5. 2012 թ.՝ ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալ:
6. 2012 թ.՝ Հայաստանի Ֆրիտյոֆ Նանսեն միջազգային հիմնադրամի «Ֆրիտյոֆ Նանսեն» Ոսկե հուշամեդալ:
7. 2012 թ.՝ ընտրվել է Աբխազիայի հայ գրողների «Սնծոլյան այգաբաց» գրական միավորման Պատվավոր անդամ:
8. 2010 թ.՝ Ռուսաստանի հայերի միության հիմնադրման 10-ամյակին նվիրված մեդալ:
9. 2009 թ. որպես խմբագիր՝ Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության, ՀՀ սփյուռքի նախարարության և Հայաստանի ժուռնալիստների միության բարձրագույն մրցանակ:
10. 2001 թ.՝ Հռոմի պապ Հովհաննես Պողոս Երկրորդից՝ Հայաստան կատարած ուխտագնացությանը նվիրված հուշամեդալ:
11. 1997 թ.՝ «Հայաստանի մայրաքաղաքները» (1995) գրքի համար՝ Թեքեյան մշակութային միության «Հայկաշեն Ուզունյան» մրցանակ:
12. 1992 թ.՝ Հռոմի պապ Հովհաննես Պողոս Երկրորդից Վատիկանում ստացել է Արծաթե հուշամեդալ:
13. 1980 թ.՝ «Հրապարակախոսական հոդվածի և ակնարկի համար» Հայաստանի ժուռնալիստների միության տարվա մրցանակ:
14. 1975 թ.՝ «Գրքերի աշխարհ» ամսաթերթի «Հուհա» հումորի մրցույթի կրկնակի դափնեկիր:
15. 1974 թ.՝ «Գրքերի աշխարհ» ամսաթերթի «Հուհա» հումորի մրցույթի մրցանակ:

## ՏԵՄ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ

1. **Հայկական համառոտ հանրագիտարան**, հ. 4, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2003 (- 972 էջ), կենսագր.՝ էջ 621:
2. **Ով ով է, հայեր**, կենսագրական հանրագիտարան, հ. 2, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2007 (- 740 էջ), կենսագր.՝ էջ 544:
3. **Հայ գրատպություն և գրքարվեստ**, հանրագիտարան, Երևան, ՀՀ ԳԱԱ, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2015 (- 1120 էջ), «Ձայն համշենական»՝ էջ 650, կենսագր.՝ էջ 1014:
4. **Հանրագիտական բառարան**, հ. 2, Երևան, ՀՀ ԳԱԱ, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2018 (- 1144 էջ), «Ձայն համշենական»՝ էջ 236, 237, կենսագր.՝ էջ 923:
5. **Հայ երգիծանքի հանրագիտարան**, գիրք 3-րդ, կազմեց՝ Կարո Սթալնու, Երևան, Հեղինակային հրատարակչություն, 2020 (- 316 էջ), կենսագր.՝ էջ 258-260:

## ԵՎ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

6. Լևոն Սողոմոնյան, **Արծվանիստ Զեյթուն**, Երևան, Գասպրիհնտ, 2007 (- 672 էջ + 48 էջ ներդիր), կենսագր.՝ էջ 618, 619:
7. **Տրապիզոն նահանգ եւ Համշեն (Օրտու, Սամսոն, Կիրասոն, Արտուփն, Ռիզե, Հոփա, Իւլյէ, Տրապիզոն)**, Printed by: A&V Digital Offset, Publisher: ARS “Roubina” Chapter, Թորոնթո, Գանատա, 2014 (-166 էջ), կենսագր.՝ էջ 97:
8. **Գրական տեղեկատու**, կազմեց Էդվարդ Միլիտոնյանը, Հայաստանի գրողների միություն, Երևան, «Վան Արյան», 2023 (- 404 էջ), կենսագր.՝ էջ 277-279:

## ԱՌԱՋԱԲԱՆ

Մատենագիտություններով հետաքրքրվել եմ երիտասարդ տարիներից, ձեռք էի բերել տարբեր թերթերի և ամսագրերի՝ «Մշակի» (1975), «Մուրճի» (1977) մատենագիտությունները, «Ժողովրդագիտությունը հայ պարբերականներում» (1985-1986) եռհատորյակը, որն ընդգրկում էր «Ազգագրական հանդեսի», «Էմինյան ազգագրական ժողովածուի», «Բանբեր Երևանի համալսարանի», «Բանբեր Մատենադարանի», «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսների և այլ մատենագիտություններ: Եթե Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի (այժմ՝ Ազգային գրադարան) և Հայաստանի ազգագրության պետական թանգարանի հրատարակած այս գրքերի տպաքանակները 500, 1000 կամ 1500 էին, ապա ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնի լույս ընծայած «Օտար լեզուներով գրականության հայագիտական մատենագիտության» (1974), «Արևելյան մամուլ» (1976), «Ծաղիկ» (1983), «Կարմիր ծիլեր» (1983) հանդեսների, «Կռունկ Հայոց աշխարհին» և «Հայկական աշխարհի կռունկ» կամ «Հայկական աշխարհ» ամսագրերի (1982) և մի շարք այլ պարբերականների և «Հայրենական Մեծ պատերազմի» (1985) մատենագիտությունների տպաքանակներն ընդամենը 120, 150, 200 կամ 300 օրինակ էին, ինչն էլ 1986 թ. ինձ դրդեց «Ու՛մ համար են հրատարակվում մատենագիտությունները» վերնագրով հոդված գրել. ««Գրքերի աշխարհում» կարդալով, որ տպագրվել է հայատառ թուրքերեն գրականության մատենագիտություն, սկսեցի որոնումներս, բայց ապարդյուն: Գիրքը հրատարակվել է ընդամենը 200 օրինակ և իսկույն դարձել, այսպես ասած, մատենագիտական հազվագյուտ նմուշ: ...Հարց է ծագում, այդ դեպքում ո՞ւմ համար են հրատարակվում այս բնույթի մատենագիտությունները, որ նույնիսկ հայագետները չեն կարող հայթայթել: Ավելի ճիշտ, ինչո՞ւ են հրատարակվում: Կպատասխանեն՝ որպեսզի խոտի հսկայական դեզի մեջ ասեղ որոնելու փոխարեն գիտնականը, ուսուցիչը, ուսանողը, այս կամ այն հարցով ու գրքով հետաքրքրվող մարդը կարողանա հեշտությամբ գտնել փնտրածը: Բայց այնպիսի վիճակ է ստեղծվել, որ ավելի դժվար է հենց մատենագիտություն գտնելը:

Այսօր զբաղվել հայագիտությամբ կամ հասարակական գիտության մի այլ բնագավառով, առանց մշտապես ձեռքի տակ ունենալու մատենագիտական ժողովածուներ, անհնար է: Հիշենք, որ միայն մինչև 1920 թ. տար-

բեր երկրներում հրատարակվել են մոտ 1800 անուն հայերեն պարբերականներ և շուրջ 15 հազար անուն հայերեն գրքեր:

...Առհասարակ մատենագիտությունների տպաքանակը փոքր է, հիմնականում 120-200 օրինակ (հազվադեպ՝ 500 կամ ավելի), որի մի մասն ուղարկվում է գրադարաններին: Գրադարանային բաշխիչը սպասարկում է մոտ 4000 գրադարանների: Թվաքանակյա պարզ գործողությամբ կարելի է ճշտել, որ, ասենք, 200 օրինակ հրատարակված մատենագիտությունը, եթե նույնիսկ նրա ողջ տպաքանակը հատկացվի գրադարաններին, ապա այն կարելի է ձեռք բերել յուրաքանչյուր քսանից մեկում: Բայց սա միայն թվաքանորեն, իրականում մատենագիտություններ կան հարյուր գրադարանից... մեկում, որովհետև դրանք առաքվում են միայն հանրապետության 41 ԳԿՀ-ներին» («Գրքերի աշխարհ», ամսաթերթ, 1986, դեկտեմբերի 21):

Նոսրվածի լույս տեսնելուց հետո անցել է մոտ չորս տասնամյակ, սակայն պատկերն ավելի է վատացել, տպաքանակները չեն մեծացել, և հազվագյուտ գրադարաններում է հնարավոր գտնել նոր հրատարակված մատենագիտություններ: Բացի այդ, մեր բազմաթիվ գիտնականներ, արվեստի և մշակույթի գործիչներ, գրողներ առայսօր չունեն իրենց մատենագիտությունները և հայտնի չէ՝ երբևէ կունենան:

Այս տխուր մտորումներով որոշեցի ըստ տարիների կազմել իմ մատենագիտությունը, քանի որ ինձ շատ հաճախ են դիմում հատկապես համշենահայությամբ հետաքրքրվող պատմաբանները, բանասերները, բանագետներն ու բարբառագետները, երաժիշտները, երգիչ-երգչուհիները, պարախմբերի ղեկավարները, մշակութաբանները, լրագրողները, դասախոսներն ու ուսանողները, մյուսները, հարցնում են այս կամ այն խնդրի մասին ունե՞մ որևէ հրապարակում, Համշենի բարբառով այս կամ այն երգն արդյոք հրատարակե՞լ եմ, որտե՞ղ, ե՞րբ և այլն: Եվ ամեն անգամ ստիպված եմ լինում բազմաթիվ ամսագրերում և թերթերում, նաև 13-14 տարի (2004-2018 թթ.) իմ խմբագրած «Ձայն համշենական» ամսաթերթի համարներում փնտրել, ինչը, հասկանալի է, հոգս է պատճառում և բավականին ժամանակ խլում:

Բայց ես ոչ միայն համշենահայության մասին եմ գրել: Ինձ դիմում են նաև Հայաստանի պատմության ընթացքում իրար հաջորդած տասներկու մայրաքաղաքներին նվիրված գրքերիս ու հրապարակումներիս, բազմաթիվ թեմաներով հոդվածներիս վերաբերող հարցերով ևս: Այսօր ես ձգտում եմ բոլորին լիարժեք պատասխանել, իսկ վա՞ղը...

Իմ մատենագիտությունը կազմելուց առաջ կրկին թերթեցի ձեռքիս տակ եղածները: Դրանք ընդհանրությունների հետ ունեին մի շարք տարբերություններ: Եթե երախտավոր Կարապետ Քացախյանի (1919-1996) կազմած «Մուրճի» (1977), «Ժողովրդագիտությունը հայ պարբերականներում» (1985-86) եռհատորյակի, «Լուսնայի» (1988) մատենագիտությունները այժի են ընկնում հնարավորինս ամբողջական, հանգամանալից և օգտակար փաստեր հաղորդելով ու քաղվածքներով, ապա բազմաթիվ այլ մատենագիտություններ առանձնանում են կարծես սեղմ և քիչ տեղեկություններ փոխանցելու նպատակաուղղվածությամբ: Այդպիսիների շարքում են նաև վերջին երկու տասնամյակում լույս տեսած գիտնականներին նվիրված մատենագիտական գրքույկները, որոնց մի մասում հիմնականում նշվում են միայն նրանց գրքերի ու հոդվածների վերնագրերն ու հրատարակման տվյալները, առանց բովանդակությանն անդրադառնալու:

Այդ գրքույկներն ունեն մի յուրահատկություն ևս. տառաչափերը, թվերը ընտրվում են մեծ, և նկարագրությունները տեղադրվում են իրարից հեռու՝ ավելի շատ էջեր զբաղեցնելու ձգտումով: Այնինչ կարելի էր թղթի ազատ հատվածներն օգտագործել մատենագիտական ավելի շատ մանրամասներ հաղորդելու համար:

Անշուշտ, կան նաև գիտնականների գրքերն ու հոդվածները բավարար չափով ներկայացնող մատենագիտություններ ևս:

Կ. Քացախյանին հետևելու դեպքում մատենագիտությունս կազմելը կլիներ շատ աշխատատար և ժամանակատար, նաև ծավալը զգալիորեն ավելի մեծ, բնականաբար, տպագրությունն էլ՝ առավել թանկ: Ուստի ստիպված ընտրեցի միջին ուղին՝ երբեմն արտատպելով իմ և ուրիշների գրքերից ու հոդվածներից մեծ ու փոքր քաղվածքներ:

Ընթերցողների համար օգտակար համարեցի նաև նշել նկարագրվող գրքերում և հոդվածներում տարբեր լուսանկարների առկայության մասին, բայց, ցավոք, այդ ինձ ոչ միշտ հաջողվեց:

Ունեցածս տարաբնույթ նյութը պայմանականորեն բաժանեցի երեք մասի: Ասեմ, որ տարբեր լեզուներով շուրջ 180 անուն թերթերից, ամսագրերից ու հանդեսներից բաղկացած իմ հավաքածուն ամբողջական չէ, խորհրդային տարիների երկաթե վարագույրի պայմաններում սփյուռքում արտատպվող հոդվածներիս մասին հաճախ տեղեկանում էի պատահականորեն, ենթադրում եմ, որ շատ անգամ էլ չէի տեղեկանում: Տասնամյակներ անց էլ վիճակը չի փոխվել, որովհետև սփյուռքի մեր գործընկերներից շա-

տերն այսօր էլ հեղինակին չեն իրազեկում, թերթ կամ ամսագիր չեն ուղարկում:

Քանի որ այդ շուրջ 180 անուն թերթերի, ամսագրերի ու հանդեսների մի մասը շատերին անձանոթ է կամ էլ արդեն չի հրատարակվում, գրքի վերջում՝ **«Տեղեկություններ պարբերականների մասին»** բաժնում, շատ համառոտ ներկայացնում եմ դրանք: Ավելին իմանալ ցանկացողները կարող են կարդալ համապատասխան գրականություն, հանրագիտարաններ, փնտրել գրադարաններում և համացանցում:

Որոշ դեպքերում մի շարք պատճառներով (հոդվածաշարեր, թեմատիկ ընդհանրությամբ նյութեր և այլն) նկարագրությունների հաջորդականության ժամանակագրությունն ըստ ամիսների կամ ամսաթվերի չի պահպանվել:

Չնայած թերություններին, որոշեցի ի վերջո հրապարակել կազմածս մատենագիտությունը, միևնույնն է, որքան էլ ձգձգեմ, երբեք այն ավարտուն ու ամբողջական չի կարող լինել, քանի որ պետք է անընդհատ լրացվի: Նույնիսկ սրբագրության, նաև տպագրության պատրաստման ընթացքում տեղեկանում էի տարբեր վայրերում, սփյուռքում, նախկինում կամ մեր օրերում արտատպված հոդվածներիս, իմ անվան ու գրքերի հղումների, իրական կամ ենթադրյալ հիշատակումների մասին:

**Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան),** Ս. Վարդանյանի գրած գրքերը, գիտական, հրապարակախոսական հոդվածները, ուղեգրությունները, բանահյուսական-բարբառային գրառումներն ու թարգմանությունները, գրական ստեղծագործությունները, լրագրային տարաբնույթ հրապարակումները և այլն:

**Երկրորդ բաժին (հարցազրույցներ),** Ս. Վարդանյանի հետ կամ իր վարած հարցազրույցները:

**Երրորդ բաժին,** Ս. Վարդանյանի գրած գրքերի գրախոսություններ, հոդվածների արձագանքներ, նրան նվիրված հրապարակումներ, տարբեր առիթներով անդրադարձներ, խմբագրած գրքեր, գրական ստեղծագործություններում կամ հարցազրույցներում նրա մասին հիշատակումներ, գիտական հրատարակություններում հղումներ և այլն:

1974

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Ինքնագործունեության համերգ, համերգը վարեցին Ֆ. Ռուբենյանը և Ս. Վարդանյանը, «Գրքերի աշխարհ», ամսաթերթ, Երևան, 1974, մարտի 15, № 3, էջ 8:

«Գրքերի աշխարհի» հայտարարած «Հուհա» հումորի մրցույթին մասնակցել են Սերգեյ Վարդանյանը և Ֆ. Ռուբենյանը (Ռուբեն Ֆիլյանը), որոնք հայկական հանրահայտ երգերի տողերը վերագրել են տարբեր ազգերի նշանավոր անհատների, զանազան մասնագիտությունների տեր մարդկանց, գրողների, գրական հերոսների: Առաջին յոթ կատակների հեղինակը Ս. Վարդանյանն է. «Ես իմ յարը սիրեցի խնձորի ծառի տակին...» (Ադամ), «Մի տաս շահի փող տուր...» (Հուդա), «Ես գնում եմ գինետուն...» (Օմար Խայամ), «Ես պուճուր, յարս պուճուր... » (Ռումեո և Ջուլիետ), «Ալ այլուխս, ալ այլուխս՝ կորցրել եմ յարո ջան... » (Դեզդեմոնա), «Միայնակ եմ ես հիմա...» (Ռոբինզոն Կրուզո), «Թամամ աշխարհ պտուտ էկա... » (Կոլումբոս):

1975

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Սահմանապահ (բանաստեղծություն), «Պիոներ», ամսագիր, Երևան, 1975, № 5, էջ 12:

2. Երգը (բանաստեղծություն), «Պիոներ», ամսագիր, Երևան, 1975, № 6, էջ 4:

3. Հայտարարություններ, «Գրքերի աշխարհ», ամսաթերթ, Երևան, 1975, հոկտեմբերի 15, № 10, էջ 8:

Թերթի «Հուհա» հումորի բաժնում Ս. Վարդանյանը տպագրել է երեք հայտարարություն:

### Երրորդ բաժին

4. «Հուհան» երեք տարեկան է, «Գրքերի աշխարհ», ամսաթերթ, Երևան, 1975, հունվարի 15, № 1, էջ 8:

Թերթի խմբագրությունը, ամփոփելով հումորի մրցույթի արդյունքները, տեղեկացնում է, որ 1974 թ. 3-րդ համարում տպագրված «Ինքնագործունեության համերգի» համար Ֆ. Ռուբենյանը (Ռ. Ֆիլյանը) և Ս. Վարդանյանը արժանացել են խրախուսական մրցանակի:

1976

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Պատանի տեխնիկների կայանը, «Պիոներ», ամսագիր, Երևան, 1976, № 3, էջ 22, 23:

Երևանի պատանի տեխնիկների կայանի մասին է:

2. Զրույց Երևանի հետ, «Գարուն», ամսագիր, Երևան, 1976, № 8 (№ 116), էջ 64-68:

Հոդվածը Երևանի և երևանցիների մի շարք խնդիրների ու թերությունների, քաղաքն ու քաղաքացուն ավելի լավը տեսնելու ցանկության մասին է:

### Երրորդ բաժին

3. «Հուլիս-75», «Գրքերի աշխարհ», ամսաթերթ, Երևան, 1976, հունվարի 15, № 1, էջ 8:

Թերթի 1975 թ. № 10-ում հրապարակված «Հայտարարությունների» համար Ս. Վարդանյանը ճանաչվել է «Գրքերի աշխարհի» «Հուլիս» հումորի մրցույթի կրկնակի դափնեկիր:

1978

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Այդ համերաշխ 6-րդ Բ-ն, «Պիոներ կանչ», 1978, մարտի 15, № 21: Երևանի Հ. Պարոնյանի անվան № 59 դպրոցի 6-րդ Բ դասարանի մասին է:

2. «Գնչուական ռոմանսներ», մանրապատում, «Ասպագա բժիշկ», շաբաթաթերթ, Երևան, 1978, մայիսի 24, № 18, էջ 4:

3. Ինքնահաստատման որոնումներ, «Երեկոյան Երևան», օրաթերթ, Երևան, 1978, հուլիսի 24, № 171, էջ 3:

Հայկական ժողգործիքների նվագախմբի առաջին ելույթի մասին է:

4. Հեքիաթներ կենդանաբանական այգում, «Պիոներ կանչ», եռօրյա թերթ, Երևան, 1978, օգոստոսի 23, № 67:

Երևանի կենդանաբանական այգում անցկացվող միջոցառումների, ներկայացումների, կենդանիների վերաբերյալ երեխաների հորինած հեքիաթների և այլ մրցույթների մասին է:

5. «Կենդանիների աշխարհում», «Երեկոյան Երևան», 1978, սեպտեմբերի 1, № 205, էջ 4:

Երևանի կենդանաբանական այգու աշխատանքների մասին է:

6. Արմատներ (պատմվածք), «Գարուն», ամսագիր, Երևան, 1978, № 9 (№ 141), էջ 62-63:

Պատմվածքի ամբողջական տարբերակը տե՛ս Сергей Варданян, Корни, перевела Светлана Марданян, «Литературная Армения», журнал, Ереван, 1982, № 6, с. 67-70.

7. Անմիտ խաղից մինչև ..., «Պիոներ կանչ», 1978, մայիսի 26, № 42:

Դպրոցական տղաների չնտածված արարքների՝ երկաթուղու մալուխը կտրելու, գնացքի անիվների արգելակիչները քաշելու և այլնի մասին է:

8. «Արևիկ»-ի արևոտ ժպիտը, «Պիոներ կանչ», 1978, մայիսի 17, № 39:

Սևանա լճի ափին գտնվող «Արևիկ» մանկական առողջարանի մասին է:

9. Նվիրաբերված սիրտ, «Պիոներ կանչ», 1978, հուլիսի 21, № 58:

Հրեական ծագումով նշանավոր գրող, մանկավարժ, բժիշկ, «Մաթիուշ Առաջին թագավորը», «Ինչպես սիրել երեխաներին» և այլ գրքերի հեղինակ Յանուշ Կորչակի մասին է, որը 1942 թ. Վարշավայի մանկատան իր սաների հետ գնաց համակենտրոնացման ճամբար և զոհվեց, թեև ուներ ներման հրաման:

10. Հուշարձանները սերունդների համար են. Գործով կապացուցեն, «Պիոներ կանչ», 1978, հուլիսի 12, № 55:

Քանաքեռի Ս. Աստվածածին և Ս. Հակոբ եկեղեցիների պահպանության մասին է:

11. Ուշադրություն, պատանի բանահավաք. Մասնակցի՛ր մեր մրցույթին [1]: «Պիոներ կանչ», 1978, մայիսի 19, № 40:

Չի նշված, հեղինակը Ս. Վարդանյանն է: Կոչն արվում է խմբագրության կողմից, որ ամառային արձակուրդի օրերին դպրոցականները բանահյուսություն գրառեն և մինչև սեպտեմբերի 30-ը ուղարկեն «Պատանի բանահավաք» մրցույթին, որպեսզի լավագույն նմուշները տպագրվեն:

12. «Պատանի բանահավաք» [2], բաժինը պատրաստեց Ս. Վարդանյանը, «Պիոներ կանչ», 1978, հունիսի 16, № 48:

Բ.գ.թ. Նելլի Հակոբյանի «Առատ հունձք ձեզ...» հոդվածը մասնակիցներին բացատրում է՝ ինչպես պետք է բանահյուսություն գրառել: Տպագրվել են խմբագրության ստացած առաջին նյութերը:

13. «Պատանի բանահավաք» [3], բաժինը պատրաստեց Ս. Վարդանյանը, «Պիոներ կանչ», 1978, հունիսի 28, № 51:

Տպագրվել է Բ.գ.թ. Նելլի Հակոբյանի «Հեքիաթ» հոդվածը, ներկայացվել են դպրոցականների գրառած բանահյուսական նյութերը:

14. «Պատանի բանահավաք» [4], Սերո Խանգադյան, Բանահյուսությունը հոգևոր գանձ է, զրույցը վարեց Սերգեյ Վարդանյանը, «Պիոներ կանչ», 1978, հուլիսի 14, № 56:

Ս. Խանգադյանը շատ հետաքրքիր օրինակներ է բերում իր բանահավաքչական գործունեությունից, բազմաթիվ օգտակար խորհուրդներ տալիս:

15. «Պատանի բանահավաք» [5], բաժինը պատրաստեց Ս. Վարդանյանը, «Պիոներ կանչ», 1978, օգոստոսի 16, № 65:

Տպագրվել են բ.գ.դ. Սարգիս Հարությունյանի «Ժողովրդական վեպ» հոդվածը, նաև տարբեր վայրերի դպրոցականների ուղարկած բանահյուսական նյութերը:

16. «Պատանի բանահավաք» [6], բաժինը պատրաստեց Ս. Վարդանյանը, «Պիոներ կանչ», 1978, սեպտեմբերի 13, № 73:

Տպագրվել են ակադեմիկոս Արամ Ղանալանյանի «Առած և ասացվածք» հոդվածը և տարբեր վայրերի դպրոցականների ուղարկած բանահյուսական նյութերը:

17. «Պատանի բանահավաք» [7], բաժինը պատրաստեց Ս. Վարդանյանը, «Պիոներ կանչ», 1978, նոյեմբերի 3, № 88:

Տպագրվել են բ.գ.թ. Նելլի Հակոբյանի «Խաղիկ» հոդվածը և տարբեր վայրերի դպրոցականների ուղարկած բանահյուսական նյութերը: «Ուշադրություն» հրապարակաման մեջ նշվում է, որ մրցույթի ժամկետը երկարաձգվում է:

18. «Պատանի բանահավաք» [8], բաժինը պատրաստեց Ս. Վարդանյանը, «Պիոներ կանչ», 1978, դեկտեմբերի 8, № 98:

«Մրցույթը շարունակվում է» հրապարակման մեջ ամփոփվել են արդյունքները, նշվել են առաջին փուլի հաղթողները և տպագրվել են տարբեր վայրերի դպրոցականների ուղարկած բանահյուսական նյութերը:

### **Երկրորդ բաժին (հարցազրույցներ)**

19. «Պատանի բանահավաք» [4], Սերո Խանգադյան, Բանահյուսությունը հոգևոր գանձ է, զրույցը վարեց Սերգեյ Վարդանյանը, «Պիոներ կանչ», 1978, հուլիսի 14, № 56:

Ս. Խանգադյանը շատ հետաքրքիր օրինակներ է բերում իր բանահավաքչական փորձից, բազմաթիվ օգտակար խորհուրդներ տալիս:

20. Վարագույրի բազմազան ծալքերը, հարցազրույց Հայաստանի թատերական ընկերության նախագահի առաջին տեղակալ, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Արտաշես Բարայանի հետ, զրույցը վարեց Ս. Վարդանյանը, «**Երեկոյան Երևան**», օրաթերթ, Երևան, 1978, հուլիսի 20 (№ 168), էջ 3:

21. Հանդիպումներ Ձեզ համար. բանաստեղծությունը պետք է խոսի ընթերցողի հետ, ինչպես հեքիաթի ձին, հարցազրույցը՝ Սերգեյ Վարդանյանի, «**Պիոներ կանչ**», եռօրյա թերթ, Երևան, 1978, հուլիսի 26, № 59:

Հարցազրույցը երիտասարդ բանաստեղծ Էդվարդ Միլիտոնյանի հետ է:

22. Անգին գանձեր, հարցազրույց լեհ երաժշտագետ Զբիգնև Կոսցյովի հետ, հարցազրույցը՝ Լևոն Անանյանի, Սերգեյ Վարդանյանի, «**Երեկոյան Երևան**», 1978, սեպտեմբերի 15 (№ 217), էջ 4:

23. Անփոխարինելի կապավոր է արվեստը, հարցազրույց հարավսլավացի արվեստաբան Պավլե Միլովիչի հետ, հարցազրույցը՝ Լևոն Անանյանի, Սերգեյ Վարդանյանի, «**Երեկոյան Երևան**», 1978, սեպտեմբերի 18 (№ 219), էջ 3:

24. «Միրով են գնում իմ գրքերը», հարցազրույց անգլիացի նշանավոր հայագետ Դեյվիդ Մարշալ Լանգի հետ, հարցազրույցը՝ Լևոն Անանյանի, Սերգեյ Վարդանյանի, «**Երեկոյան Երևան**», 1978, սեպտեմբերի 20 (№ 221), էջ 3:

25. Մանրանկարը՝ քննության մեծ խնդիր, հարցազրույց ավստրիացի գիտնականներ Հայդե և Հելմուդ Բուշհաուզենների հետ, հարցազրույցը՝ Լևոն Անանյանի, Սերգեյ Վարդանյանի, «**Երեկոյան Երևան**», 1978, սեպտեմբերի 21 (№ 222), էջ 3:

26. Հիացմունք և տքնանք, հարցազրույց ռումին հայագետ Իոն Սավա Նանուի հետ, հարցազրույցը՝ Լևոն Անանյանի, Սերգեյ Վարդանյանի, «**Երեկոյան Երևան**», 1978, սեպտեմբերի 23 (№ 224), էջ 3:

27. Ազնիվ կոչումին նվիրված, հարցազրույց Երբադսովետի գործկոմի ժողկրթբաժնի վարիչ Ա. Բեյբուրյանի հետ, զրույցեց Ս. Վարդանյանը, «**Երեկոյան Երևան**», օրաթերթ, Երևան, 1978, սեպտեմբերի 30 (№ 230), էջ 2:

1979

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Հեծանիվը (պատմվածք), «**Ծիծեռնակ**», ամսագիր, Երևան, 1979, № 4, էջ 13:

2. Լեհահայերի երաժշտությունը, «**Գարուն**», ամսագիր, Երևան, 1979, № 10, էջ 67-69:

Գրախոսությունը նվիրված է հայկական ծագումով լեհ մանկավարժ և երգեհոնահար Զբիգնև Կոսցյովի Zbigniew Kósciów, “Muzyka polskich ormian” («Լեհահայերի երաժշտությունը») (1976) և “Polsko-Ormianskie muzykalia” («Լեհ-հայկական երգարան», Օպոլե, 1978) լեհերեն գրքերին: Ս. Վարդանյանը անդրադառնում է նաև լեհահայ գաղթօջախի պատմությանը, մշակույթին, նշանավոր լեհահայերին: Հոդվածի իսպաներեն թարգմանությունը տե՛ս «**Krunk**» («**Սովետական Հայաստան**» ամսագրի առանձին հրատարակվող իսպաներեն Հավելված), Երևան, 1980, № 2, էջ 14-15 և «**Սեւան Սեւան**», հայերեն-իսպաներեն շաբաթաթերթ, Բուենոս Այրես, 1981, հոկտեմբերի 22: Ֆրանսերեն թարգմանությունը տե՛ս «**Krounk**» («**Սովետական Հայաստան**» ամսագրի առանձին հրատարակվող ֆրանսերեն Հավելված), Երևան, 1980, № 2, էջ 12-13:

3. Համշենի ձայնը, «**Գրքերի աշխարհ**», ամսաթերթ, Երևան, 1979, նոյեմբերի 15, № 11, էջ 5:

Ս. Վարդանյանն անդրադառնում է համշենահայերի անցյալին ու ներկային, «Ձայն համշենական» (1971) ժողովածուի առաջին գրքին (կազմող՝ Սերո Խանգադյան), ավելի մանրամասն՝ երկրորդ գրքին («Սովետական գրող», Երևան, 1979), և այն կազմողին՝ ազգագրագետ և մանկավարժ Անդրանիկ Զեյթունյանին (Կրասնոդարի երկրամաս, ք. Ադլեր):

4. Հինավուրց գյուղի հրաշքները (շարունակելի), «**Պիոներ կանչ**», եռօրյա թերթ, Երևան, 1979, սեպտեմբերի 12, № 73:

Հոդվածաշարը գրվել է Լևոն Անանյանի համահեղինակությամբ, Նոյեմբերյանի շրջանի իր հայրենի Կողբ գյուղի մասին է:

5. Հինավուրց գյուղի հրաշքները. Հերոսները անմահ են, սկիզբը՝ № 73-ում (շարունակելի), «**Պիոներ կանչ**», 1979, սեպտեմբերի 14, № 74:

Երկրորդ համաշխարհային պատերազմին Կողբ գյուղի զավակների մասնակցության և Խորհրդային Միության հերոս Ջահան Կարախանյանի մասին է:

6. Հինավուրց գյուղի հրաշքները. Լեգենդ բժշկի մասին, սկիզբը՝ № 73 և 74-ում (շարունակելի), «**Պիոներ կանչ**», 1979, սեպտեմբերի 19, № 75:

Տարբեր ժամանակներում Կողբում աշխատած նշանավոր բժիշկներ Արտո Ալեքսանյանի և Նիկոլայ Նասիբյանի մասին է:

7. Հինավուրց գյուղի հրաշքները. Ավանդություններին հավատարիմ, սկիզբը՝ № 73- 75-ում (վերջը՝ հաջորդ համարում), «Պիոներ կանչ», 1979, սեպտեմբերի 21, № 76:

Կողքի աշխատանքային ավանդությունների մասին է:

8. Հինավուրց գյուղի հրաշքները. Կերտում է իր պատմությունը (սկիզբը՝ «Պիոներ կանչ» № № 73-76-ում), «Պիոներ կանչ», 1979, սեպտեմբերի 26, № 77:

Կողքի մշակույթի տան թանգարանի և գյուղի ներկայի մասին է:

9. «Պատանի բանահավաք» [9], բաժինը պատրաստեց Ս. Վարդանյանը, «Պիոներ կանչ», 1979, հունվարի 12, № 4:

Տպագրվել են տարբեր վայրերի դպրոցականների ուղարկած բանահյուսական նյութերը:

10. «Պատանի բանահավաք» [10], բաժինը պատրաստեց Ս. Վարդանյանը, «Պիոներ կանչ», 1979, մարտի 9, № 20:

Տպագրվել են Կապանի շրջանի Լեռնաձոր գյուղի դպրոցի աշակերտների գրառած բանահյուսական նյութերը:

11. «Պատանի բանահավաք» [11], բաժինը պատրաստեց Ս. Վարդանյանը, «Պիոներ կանչ», 1979, ապրիլի 11, № 29:

Տպագրվել են բ.գ.թ. Մառլենա [Մարո] Մուրադյանի «Հայերենի բարբառները» հոդվածը, նաև տարբեր վայրերի, այդ թվում՝ **Աբխազիայի Անուխվա գյուղի** դպրոցականների ուղարկած բանահյուսական նյութերը:

12. «Պատանի բանահավաք» [12], բաժինը պատրաստեց Ս. Վարդանյանը, «Պիոներ կանչ», 1979, մայիսի 23, № 41:

«Մրցույթը շարունակվում է» (անստորագիր է, հեղինակը Ս. Վարդանյանն է): Հոդվածում ամփոփվում է մրցույթի երկրորդ փուլը և թվարկվում են մրցանակակիրները, ապա հայտարարվում է երրորդ փուլը: Տպագրվել են տարբեր վայրերի դպրոցականների ուղարկած նյութերը, առանձին բաժին է հատկացված **համշենահայերի** բանահյուսությանը, որտեղ ներկայացվել են **Աբխազիայի Մեբեղա գյուղի** հայկական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, գրող և բանահավաք Հակոբ Գուրունյանի տրամադրած հանելուկները, խաղիկները, ասացվածքները՝ բարբառով և կից գրական թարգմանությամբ, իսկ երկու զվարճապատում՝ միայն թարգմանությամբ:

13. «Պատանի բանահավաք» [13], բաժինը պատրաստեց Ս. Վարդանյանը, «Պիոներ կանչ», 1979, հունիսի 22, № 50:

Հրապարակվել է բ.գ. թ. Մառլենա [Մարո] Մուրադյանի «Կարևոր և անհետաձգելի աշխատանք» հոդվածը, որը կարևորում է բանահյուսական գրառումները: Տպագրվել են տարբեր վայրերում, այդ թվում՝ **Աղլերի շրջանի Մուղովկա գյուղում** գրառված նմուշներ:

14. «Պատանի բանահավաք» [14], բաժինը պատրաստեց Ս. Վարդանյանը, «Պիոներ կանչ», 1979, օգոստոսի 1, № 61:

Տպագրվել են Աբխազիայից հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, գրող **Հակոբ Գուրունյանի** ուղարկված բանահյուսական նյութերը՝ **Համշենի բարբառով** և գրական հայերեն թարգմանությամբ:

15. «Պատանի բանահավաք» [15], բաժինը պատրաստեց Ս. Վարդանյանը, «Պիոներ կանչ», 1979, օգոստոսի 29, № 69:

Հրատարակվել են տարբեր վայրերի դպրոցականների ուղարկված բանահյուսական նյութերը:

16. «Պատանի բանահավաք» [16], բաժինը պատրաստեց Ս. Վարդանյանը, «Պիոներ կանչ», 1979, սեպտեմբերի 28, № 78:

Տպագրվել է հայրենի Շատախում տարածված երգերի մասին Հայրիկ Մուրադյանի «Հայկական ժողովրդական երգը» հոդվածը: Շարունակությունը՝ հաջորդ համարում:

17. «Պատանի բանահավաք» [17], բաժինը պատրաստեց Ս. Վարդանյանը, «Պիոներ կանչ», 1979, հոկտեմբերի 3, № 79:

Հայրիկ Մուրադյանի «Հայկական ժողովրդական երգը» հոդվածի շարունակությունն է:

18. «Պատանի բանահավաք» [18], բաժինը պատրաստեց Ս. Վարդանյանը, «Պիոներ կանչ», 1979, նոյեմբերի 23, № 93:

Տպագրվել են Կրասնոդարի երկրամասի Աղլեր քաղաքում բնակվող, երկարամյա մանկավարժ, բանահավաք **Անդրանիկ Զեյթունյանի «Համշենահայերի բանահյուսությունը»** հոդվածը և **նմուշներ** այդ բանահյուսությունից:

19. «Պատանի բանահավաք» [19], բաժինը պատրաստեց Ս. Վարդանյանը, «Պիոներ կանչ», եռօրյա թերթ, Երևան, 1979, դեկտեմբերի 28, № 103, 104:

Ս. Վարդանյանի «Ալաշկերտցի բանասացը» հոդվածը նվիրված է Ալաշկերտի Կազի գյուղում ծնված 106-ամյա Կաքավին, որից գրառված նյութերը տպագրվել են թերթի այդ համարում:

**Մռաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)**

1. «Պատանի բանահավաք» [20], բաժինը պատրաստեց Ս. Վարդանյանը, «Պիոներ կանչ», եռօրյա թերթ, Երևան, 1980, մարտի 12, № 21:

«Սպասում ենք նոր նյութերի» հրապարակումը հիշեցնում է գրառման կանոնները, նաև կոչ է անում նոր նմուշներ ուղարկել: Տպագրվել են տարբեր վայրերի դպրոցականների ուղարկած բանահյուսական նյութերը:

2. «Պատանի բանահավաք» [21], բաժինը պատրաստեց Ս. Վարդանյանը, «Պիոներ կանչ», 1980, մայիսի 21, № 41:

Ներկայացվել են տարբեր վայրերի, այդ թվում՝ **Աբխազիայի** դպրոցականների ուղարկած **բանահյուսական նյութերը**:

3. «Չայն համշենական», «Գարուն», ամսագիր, Երևան, 1980, № 6 (№ 162) էջ 93, 94:

Գրախոսությունը նվիրված է «**Չայն համշենական**» (1979) ժողովածուի 2-րդ հատորին, կազմող՝ Անդրանիկ Զեյթունյան (Կրասնոդարի երկրամաս, ք. Ադլեր):

4. Serguey Vartanian, Musica De Los Armenios De Polonia, «**Krunk**» («**Սովետական Հայաստան**» ամսագրի առանձին հրատարակվող իսպաներեն չավելված), Երևան, 1980, № 2, էջ 14, 15:

Տե՛ս նաև «**Մեան Sevan**», հայերեն-իսպաներեն շաբաթաթերթ, Բուենոս Այրես, Արգենտինա, 1981, հոկտեմբերի 22, № 758:

Serguei Vardanian, La musique des Arméniens de Pelogne, «**Krounk**» («**Սովետական Հայաստան**» ամսագրի առանձին հրատարակվող ֆրանսերեն չավելված), Երևան, 1980, № 2, էջ 12, 13:

«**Գարուն**» ամսագրի 1979 թ. № 10-ում լույս տեսած «Լեհահայերի երաժշտությունը» հոդվածի իսպաներեն թարգմանությունն է: Այն անդրադառնում է հայկական ծագումով լեհ գիտնական Զբիգնև Կոսցյովի՝ լեհահայերի երաժշտական ժառանգությանը նվիրված երկու գրքերին:

5. Զմրուխտ անտառի հեքիաթը, «Պիոներ կանչ», 1980, հոկտեմբերի 29, № 86:

Դիլիջանի պետական արգելոցի մասին է:

6. Serguei Vardanian, La musique des Arméniens de Pelogne, «**Krounk**» («**Սովետական Հայաստան**» ամսագրի առանձին հրատարակվող ֆրանսերեն չավելված), Երևան, 1980, № 2, էջ 12, 13:

«Գարուն» ամսագրի 1979 թ. № 10-ում տպագրված «Լեհահայերի երաժշտությունը» հոդվածի ֆրանսերեն տարբերակն է՝ որոշ կրճատումներով:

7. Արևի երկիր, Հայաստան. 1. Գույների և լույսերի կղզին, «Պիոներ կանչ», 1980, հուլիսի 30, № 61:

Իջևան քաղաքի և շրջանի պատմության ու ներկայի մասին է:

8. Արևի երկիր, Հայաստան. 2. Երկու հուշ մայիսյան օրերից, «Պիոներ կանչ», 1980, օգոստոսի 1, № 62:

1920 թ. մայիսին Իջևանի գյուղերի իրավիճակի մասին է:

9. Արևի երկիր, Հայաստան. 3. Հեռավոր աստղի լույսը, «Պիոներ կանչ», 1980, օգոստոսի 6, № 63:

Ենթ Մկրտումյանի մասին է, որի անունով կոչվել է Իջևանի շրջանի Ենթբավան գյուղը:

10. Արևի երկիր, Հայաստան. 4. «Ողջունում եմ Խորհրդային Հայաստանը...», «Պիոներ կանչ», 1980, օգոստոսի 8, № 64:

Հայաստանի խորհրդայնացման մասին է:

11. Արևի երկիր, Հայաստան. 5. Գյուղի խաղաղ առավոտը, «Պիոներ կանչ», 1980, օգոստոսի 13, № 65:

Իջևանի շրջանի Սևքար գյուղի պատմության և ներկայի մասին է:

12. Արևի երկիր, Հայաստան. 6. Հերոսների գյուղը, «Պիոներ կանչ», 1980, օգոստոսի 22, № 68:

Իջևանի շրջանի Սարիգյուղի անցյալի ու ներկայի մասին է:

13. Արևի երկիր, Հայաստան. 7. Հինավուրց Հովքի հմայքները (շարունակելի), «Պիոներ կանչ», 1980, սեպտեմբերի 10, № 73:

Դիլիջանի պատմության և ներկայի մասին է:

14. Արևի երկիր, Հայաստան. 7. Հինավուրց Հովքի հմայքները (սկիզբը՝ № 73-ում), «Պիոներ կանչ», Երևան, 1980, սեպտեմբերի 12, № 74:

15. Արևի երկիր, Հայաստան. 8. Ծովահայաց գյուղի կենսագրությունը, «Պիոներ կանչ», 1980, հոկտեմբերի 22, № 83:

Ծովագյուղի (Ճիպոտիկ, Չիբուխլու) պատմության և ներկայի մասին է:

16. Արևի երկիր, Հայաստան. 9. Կառուցել հարատևելու համար, «Պիոներ կանչ», 1980, նոյեմբերի 14, № 91:

Երևանի անցյալի մասին է:

17. Արևի երկիր, Հայաստան. 10. Ծաղկած քարերի լեգենդը (շարունակելի), «Պիոներ կանչ», 1980, նոյեմբերի 21, № 93:

Ապարանի շրջանի պատմության, 1918 թ. Ապարանի ճակատամարտի աշխարհագրայինների հրամանատար Դավիթ Մելիքսեթյանի մասին է:

18. Արևի երկիր, Հայաստան. 10. Ծաղկած քարերի լեգենդը (սկիզբը՝ № 93-ում), «Պիոներ կանչ», 1980, նոյեմբերի 26, № 94, էջ 1:

Հոդվածի շարունակությունը նորօրյա Ապարանի, նորակառույց ջրամբարի, գյուղերի նորացված անունների և XIX դարում բացված գյուղական առաջին դպրոցների մասին է:

19. Քիմիա, զարմանալի, հրաշալի աշխարհ, «Պիոներ կանչ», 1980, մայիսի 14, № 39:

Դպրոցականների քիմիայի համամիութենական 14-րդ օլիմպիադայի և հայ նշանավոր քիմիկոսների մասին է:

20. Հայրենիքով զորացած, «Պիոներ կանչ», 1980, սեպտեմբերի 12, № 74:

Հեղինակը գրուցում է տարբեր երկրներից եկած սփյուռքահայ դպրոցականների հետ, հետաքրքրվում հայրենիքից ստացած տպավորությունների մասին: Անստորագիր է, քանի որ թերթի նույն համարում Ս. Վարդանյանը տպագրել է մեկ այլ հոդված ևս:

21. Հրավիրում է «Դպրոցականի ֆիլիհարմոնիան», «Պիոներ կանչ», եռօրյա թերթ, Երևան, 1980, նոյեմբերի 12, № 90:

«Դպրոցականի ֆիլիհարմոնիայի» գործունեության մասին է:

### Երրորդ բաժին

22. Մրցանակներ ժուռնալիստներին, «Սովետական Հայաստան», օրաթերթ, Երևան, 1980, դեկտեմբերի 31, № 302, էջ 4:

Տե՛ս նույնի ռուսերենը՝ Премии журналистам, «Комсомолец», газета, Ереван, 1981, 1 января, № 1, с. 4:

Ըստ հրապարակման՝ «Հրապարակախոսական հոդվածի և ակնարկի համար» Ս. Վարդանյանը Հայաստանի ժուռնալիստների միության տարվա մրցանակի է արժանացել «Պիոներ կանչում» տպագրված հոդվածների համար:

1981

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. «Հրեղեն ձին», մշակեց և վերապատմեց Սերգեյ Վարդանյանը, գիտ. իմբագիր՝ Սարգիս Հարությունյան, իմբագիր՝ Դավիթ Հովհաննես, նկարիչ՝ Նիկոլայ Մանուկյան, Առաջաբանը՝ բ.գ.դ. Սարգիս Հարությունյանի,

Երկու խոսքը՝ Սերգեյ Վարդանյանի, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1981 (240 էջ), չափսը՝ 70x100 1/16, տպաքանակը՝ 15.000:

Գրքում ընդգրկված է 1978 թ. «Պիոներ կանչ» թերթում հրատարակված կոչին Հայաստանի Հանրապետությունից, Ադրբեջանից, Լեռնային Ղարաբաղի ԻՄ-ից, Նախիջևանի ԻՀ-ից, Վրաստանից, Աբխազիայի ԻՀ-ից, Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասից հայ դպրոցականների ուղարկած բանահյուսական նյութերի ընտրանին:

2. Serguey Vartanian, Musica De Los Armenios De Polonia, «Սեան Սեան», հայերեն-իսպաներեն շաբաթաթերթ, Բուենոս Այրես, Արգենտինա, 1981, հոկտեմբերի 22, № 758:

«Գարուն» ամսագրի 1979 թ. № 10-ում հրատարակված «Լեհահայերի երաժշտությունը» հոդվածի իսպաներեն թարգմանությունն է: Այն անդրադառնում է հայկական ծագումով լեհ գիտնական և երաժիշտ Զբիգնև Կոսցյովի լեհահայերի երաժշտական ժառանգությանը նվիրված երկու գրքերին:

Նույնը՝ Serguei Vardanian, La musique des Arméniens de Pologne, «Krounk» («Սովետական Հայաստան» ամսագրի առանձին հրատարակվող ֆրանսերեն Հավելված), Երևան, 1980, № 2, էջ 12, 13:

Serguey Vartanian, Musica De Los Armenios De Polonia, «Krounk» («Սովետական Հայաստան» ամսագրի առանձին հրատարակվող իսպաներեն Հավելված), Երևան, 1980, № 2, էջ 14, 15:

3. Լեհ հայագետի նոր գիրքը, «Գրքերի աշխարհ», ամսաթերթ, Երևան, 1981, փետրվարի 15, № 2, էջ 5:

Ներկայացվում է հայկական ծագումով լեհ հայագետ և երաժիշտ Զբիգնև Կոսցյովի լեհերեն երրորդ գրքույկը՝ “Polsko - ormiańskie szkice muzyczne” («Լեհ-հայկական երաժշտական ակնարկներ»), որը 1980 թ. տպագրվել է Լեհաստանի Օպոլե քաղաքում:

4. Մետրոյի ծաղկած կայարանները, «Շիժեռնակ», ամսագիր, Երևան, 1981, № 5, էջ 4:

Երևանի նորակառույց մետրոյի մասին է:

5. Բարի լույս, դպրոց, «Շիժեռնակ», ամսագիր, Երևան, 1981, № 9, էջ 3:

Անատրագիր է, հեղինակը Ս. Վարդանյանն է: Նվիրված է սեպտեմբերին առաջին անգամ դպրոց գնացողներին:

6. Աղավնաթև ինքնաթիռների նոր բույնը, «Շիժեռնակ», ամսագիր, 1981, № 9, էջ 6:

Նորակառույց «Զվարթնոց» օդանավակայանի մասին է:

7. Հնարամիտ արվորը (բանաստեղծություն), «**Միծեռնակ**», ամսագիր, 1981, № 11, էջ 11:

8. Օգնության եկան մարդիկ, «**Միծեռնակ**», ամսագիր, Երևան, 1981, № 11, էջ 13:

Հայաստանի բնության եզակի ներկայացուցիչների՝ վայրի ոչխարների՝ մուֆլոնների պահպանության մասին է:

9. Կոչումը՝ ծառայել ժողովրդին, «**Սովետական արվեստ**», ամսագիր, Երևան, 1981, № 7, էջ 30, 31:

Հայաստանի ժողովրդական արտիստ, թատերական գործիչ, ռեժիսոր, դերասան, թարգմանիչ, մանկավարժ Ամո Խարազյանի (1880-1957) ծննդյան 100-ամյակի առթիվ հողվածը պատմում է նրա մասին:

10. Ինը օր Շամշադինում, «**Սովետական արվեստ**», 1981, ամսագիր, Երևան, № 8, էջ 1-8:

Շամշադինի (Տավուշի) մշակութային կյանքի խնդիրների մասին է:

11. Շուշիի թատերական կյանքի համապատկերը, «**Սովետական արվեստ**», ամսագիր, Երևան, 1981, № 12, էջ 51, 52:

Գրախոսվում է Բորիս Խանդամիրյանի և Սուրեն Հարությունյանի «Էջեր Շուշիի հայ թատրոնի անցյալից (1891-1905)», Երևան, ՀԹԸ, 1978 ( 248 էջ) գիրքը:

12. Ժողովրդի երգերը, «**Սովետական արվեստ**», ամսագիր, 1981, № 12, էջ 52:

Ներկայացվում է Հայրիկ Մուրադյանի ձայնից երաժշտագետ Ալինա Փահլևանյանի նոտագրած 123 երգերից կազմված «Հայրենի երգեր» (1980) երգարանը:

13. Անհրաժեշտ է թարգմանել, «**Սովետական արվեստ**», ամսագիր, Երևան, 1981, № 6, էջ 61, 62:

Ս. Վարդանյանն առաջարկում է վերջապես գերմաներենից թարգմանել ավստրիացի նշանավոր հայագետ և արվեստաբան Յոզեֆ Ստրժիգովսկու (1862-1941) «Հայերի շինարարական արվեստը և Եվրոպան» (Վիեննա, 1918) մեծարժեք աշխատությունը:

14. Լուսաշող հորիզոններ, առաջին երթուղին՝ Երևան-Գառնի (շարունակելի), «**Պիոներ կանչ**», եռօրյա թերթ, Երևան, 1981, փետրվարի 20, № 15:

«Պիոներ կանչի» աշխատակիցների և «Շավիղ» մանկապատանեկան խմբագրության անդամների արշավախումբը ծանոթանում է Հայաստանի պատմությանն ու ներկային:

15. Լուսաշող հորիզոններ (սկիզբը՝ «Պիոներ կանչի» № 15-ում), «**Պիոներ կանչ**», 1981, փետրվարի 25, № 16:

Հոդվածը Ողջաբերդ, Գեղադիր և Գառնի գյուղերի մասին է, հեղինակները թերթի աշխատակիցներ Սերգեյ Հարությունյանը և Սերգեյ Վարդանյանն են:

16. Հուրհրացող ներկի գաղտնիքը, «**Պիոներ կանչ**», Երևան, 1981, մարտի 18, № 22:

Որդան կարմիր ներկի մասին է:

17. Որ չդառնա տուն՝ առանց բնակիչների, «**Պիոներ կանչ**», 1981, փետրվարի 11, № 12:

Հայկական մուֆլոնների՝ վայրի ոչխարների պահպանության մասին է:

18. Քեզ կանչում է անտառը, «**Պիոներ կանչ**», եռօրյա թերթ, Երևան, 1981, փետրվարի 18, № 14:

Հայաստանի կենդանական աշխարհի պահպանության մասին է:

### **Երկրորդ բաժին (հարցազրույցներ)**

19. Ռոմանտիկ սերունդ, նվիրյալ սերունդ, հարցազրույցը վարեց Սերգեյ Վարդանյանը, «**Գարուն**», ամսագիր, Երևան, 1981, № 10 (№ 178), էջ 53-55:

Հարցազրույցներ՝ գրողներ Ադավնու, Վալտեր Արամյանի, Սադաթել Հարությունյանի, Խաժակ Գյուլնազարյանի հետ:

20. «Սովետական գրողը»՝ ձեզ համար, հարցազրույց «Սովետական գրող» հրատարակչության մանկապատանեկան գրականության գլխավոր խմբագրության գլխավոր խմբագիր Գևորգ Արշակյանի հետ, հարցազրույցը վարեց Սերգեյ Վարդանյանը, «**Պիոներ կանչ**», եռօրյա թերթ, Երևան, 1981, մարտի 20, № 23:

Հրատարակված և ապագայում հրատարակելիք գրքերի մասին է:

### **Երրորդ բաժին**

21. Премии журналистам, «**Комсомолец**», газета, Ереван, 1981, 1 января, № 1, с. 4:

Ըստ հրապարակման՝ Հայաստանի ժուռնալիստների միության «Հրապարակախոսական հոդվածի և ակնարկի համար» մրցանակի է արժանացել Ս. Վարդանյանը «Պիոներ կանչում» տպագրված ակնարկների համար:

Տե՛ս նույնի հայերենը՝ Մրցանակներ ժուռնալիստներին, «Սովետական Հայաստան», օրաթերթ, Երևան, 1980, դեկտեմբերի 31, № 302, էջ 4:

22. Людмила Будашевская, Юные летописцы, «Аврора», журнал, Ленинград, 1981, № 5, с. 126-128:

Հոդվածը պատմում է «Պիոներ կանչ» թերթում 1978 թ. հայտարարված «Պատանի բանահավաք» մրցույթի և այն նախաձեռնած Ս. Վարդանյանի մասին, նաև նշվում է, որ հավաքված նյութերը լույս կտեսնեն գրքով: Ռուսերեն թարգմանությամբ ներկայացվել են դպրոցականների գրառած երկու զվարճապատում՝ «Որսորդը» (Կրասնոդարի երկրամաս) և «Թաքավերը» (Ադր. ՍՍՀ, Շահումյանի շրջան), նաև մեկ առակ՝ «Հարևանը» (Շամշադինի շրջան):

23. Սարգիս Հարությունյան, Առաջաբան // «Հրեղեն ձին», մշակեց և վերապատմեց Սերգեյ Վարդանյանը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1981 (-240 էջ), էջ 4, 5:

«Հրեղեն ձին» բանահյուսական ժողովածուի գիտական խմբագիր, Բ.Գ.Պ. Սարգիս Հարությունյանի առաջաբանից հատված. «Նշածս այս բոլոր հանգամանքների ընդհանուր գիտակցությամբ է առաջնորդվել պատանեկան բանահավաքչության գործի նախաձեռնող Սերգեյ Վարդանյանը: Վերջինս ինքնամոռաց նվիրումով, բայց և գործի գիտական, հասարակական ու դաստիարակչական նշանակության խոր գիտակցությամբ ոչ միայն կազմակերպել է ու արդյունավորել այդ ինքնատիպ շարժումը, այլև այս գրքով այն մղել մինչև վերջ, արխիվային-ձեռագրային վիճակից կամ «Պիոներ կանչի» սահմանափակ էջերից բանահյուսական նյութերը դուրս բերելով գրական ասպարեզ, դարձնելով գիրք, ընթերցող լայն խավերի սեփականություն:

Սերգեյ Վարդանյանը այս ժողովածուն կազմելիս հանդես է բերել մասնագիտական հմտություն և պատշաճ բանիմացություն: Նա մանուկների ու պատանիների կատարած բազմաբղետ ու մեծաքանակ բանահյուսական գրառումներից գիտական խստապահանջությամբ ու գրական ճաշակով ընտրել, ըստ ժանրերի ու տեսակների խնամքով դասդասել, ծանոթագրել է բանահյուսական իսկատիպ նմուշները, դարձրել մի ամփոփ ու ամբողջական ժողովածու, որն անկախ իր հատընտիր բնույթից, ընդհա-

նուր ճաշակ ու գաղափար է տալիս պատանի բանահավաքների գործի արդյունքների հիմնական արժեքի մասին»:

24. Մեր հյուրն է «Піянер Беларусі» («Պիյաներ Բելառուսի») թերթը, «Պիոներ կանչ», 1981, հունվարի 14, № 4:

1980 թ. Բելոռուսիայի հեռուստատեսության մանկական հաղորդումների գլխավոր խմբագրության Հայաստանին նվիրված «Ի՞նչ գիտես Հայաստանի մասին» մրցույթին մասնակցած բազմաթիվ դպրոցների մեջ հաղթել էր Սմոլնիչ քաղաքի № 2 դպրոցը: «Պիոներ կանչի» աշխատակից Ս. Վարդանյանը Մինսկում, բելոռուսական հեռուստատեսության հաղորդման ժամանակ այդ դպրոցի աշակերտներին է հանձնել Հայաստանում հատուկ պատրաստված մեծ բյուրեղապակե գավաթը:

25. Hajnal László Gábor, Örmények és magyarok. Emlékkönyv-Kiadás előtt, «Szovjet irodalom», folyóirat, Budapest, 1981, № 8, o. 186-188.

Հունգարացի ճանաչված գրող և լրագրող, խմբագիր Գաբոր Լասլո Հայնալը (1948-2002) քսանմեկ տարեկանում քաղաքական մեղադրանքով բանտարկվել է, 1970-ին՝ համաներումով ազատվել: Զբաղվել է գրական և լրագրողական բուն գործունեությամբ, 1981 թ. քաղաքական ապաստան ստացել Գերմանիայում, որտեղ հրատարակել է թերթ և ամսագիր: 1995-ին վերադարձել է Բուդապեշտ: Բազմաթիվ գրքերի և հոդվածների հեղինակ է: 1981 թ. Հայաստան այցի տպավորությունների մասին հոդվածը «Հայերը և հունգարացիները: Հուշագրություն՝ հրատարակումից առաջ» վերնագրով տպագրվել է Բուդապեշտի «Szovjet irodalom» (թարգմ.՝ «Սովետական գրականություն») հունգարերեն ամսագրում, որից թարգմանաբար ներկայացվում է մեկ հատված. «Ահա և անակնկալ: Մերզեյ Վարդանյանը՝ հայաստանյան «Սովետական արվեստ» հանդեսի աշխատակիցը, մեզ ողջունեց հունգարերեն և համառոտ «պատմության ժամ» անցկացրեց. ըստ Շիմոն Կեզաիի ժամանակագրության, Կարպատյան Ուկրաինայից շատ հայեր են տեղափոխվել Հունգարիա, որպեսզի նոր հայրենիք գտնեն, և Էնդրե II-ը որդուն Հայոց թագավորի դստեր հետ է նշանել, բայց ամուսնությունը գլուխ չեկավ, քանի որ օրիորդը վախճանվեց: Ապա ևս քառորդ ժամ մեզ բացատրում էր, թե մեր գրական երկերում որքան շատ տեղ է հատկացված հայ վաճառականներին...

-Որտեղի՞ց գիտես այս բաները, ինչու՞ են դրանք քեզ հետաքրքրում, հարցուփորձեցինք մենք:

-Մինչև հիմա հունգարական գրականությունը գլխավորապես ռուսերենից են հայերեն թարգմանել, բայց կրկնակի «փոխադրությունը» զգալիորեն զգում է մակարդակը, ստեղծագործության արժեքը: Թարգմանությունն առանց այդ էլ վարդ է ապակու տակ: Հասկապես պաճուճանքներից պետք է զգուշանալ: Այդ պատճառով էլ հունգարերեն եմ սովորում» (էջ 187):

1982

### **Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)**

1. «Հրեղեն ձին», Կոչ հանրապետության դպրոցականներին, **«Պիոներ»**, ամսագիր, Երևան, 1982, № 9, էջ 26, 27:

Տե՛ս նաև **«Պիոներ»**, ամսագիր, 1982, № 12, էջ 16, 17:

«Հրեղեն ձին» (1981) բանահյուսական ժողովածուն ներկայացնելուց հետո կոչ է արվում շարունակել բարբառներով զբաղել ժողովրդական բանահյուսության նմուշներ և այս անգամ ուղարկել Գեղագիտական դաստիարակության հանրապետական կենտրոն, որտեղ Ս. Վարդանյանի նախաձեռնությամբ ստեղծվել է «Պատանի բանահավաք» ստուդիան:

2. Ուրախ պատկերի ասպետը, **«Հայրենիքի ձայն»**, շաբաթաթերթ, Երևան, 1982, մայիսի 12, № 20, էջ 7:

Նույնը տե՛ս նաև **«Մեվան»**, կիսամյա հանդես, Լոս Անջելես, 1982, օգոստոսի 1, № 6, էջ 13, 14:

Չեխոսլովակիայի հետ բազմաթիվ թելերով կապված նշանավոր մնջախաղաց և ծաղրածու Լեոնիդ Ենգիբարյանին նվիրված չեխերեն հրապարակումներն ուսումնասիրած, չեխերենի թարգմանիչ Հովհաննես Հարությունյանի (1948-1995) մասին է:

3. Ուրախ պատկերի ասպետը, **«Մեվան»**, կիսամյա հանդես, Լոս Անջելես, 1982, օգոստոսի 1, թիվ 6, էջ 13, 14:

Նույնը տե՛ս նաև **«Հայրենիքի ձայն»**, շաբաթաթերթ, Երևան, 1982, մայիսի 12, № 20, էջ 7:

Նշանավոր մնջախաղաց և ծաղրածու Լեոնիդ Ենգիբարյանին նվիրված չեխերեն հրապարակումներն ուսումնասիրած, չեխերենի թարգմանիչ Հովհաննես Հարությունյանի (1948-1995) մասին է:

4. Գեղանկարչի ալբոմը, **«Մովետական արվեստ»**, ամսագիր, Երևան, 1982, № 6, էջ 56:

ԽՄՀՄ պետական մրցանակի դափնեկիր, ՀԽՄՀ արվեստի վաստակավոր գործիչ, ժողովրդական նկարիչ Սարգիս Մուրադյանի՝ Մոսկվայում հրատարակված գեղանկարների ալբոմի մասին է:

5. Եվս երկու հրատարակություն, «Մովետական արվեստ», ամսագիր, Երևան, 1982, № 2, էջ 60:

Չեխոսլովակիայում հրատարակված Յան Բուզեկի և Ռադիսլավ Հոշեկի «Սևծովյան անտիկ արվեստ» և Ջոենեկ Կրոպաչի «Աշխարհի մասը կազմող երկիրը» չեխերեն գրքերի մասին է, որոնցում բազմաթիվ անդրադարձներ կան Հայաստանին և հայերին:

6. Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ, «Գարուն», ամսագիր, Երևան, 1982, № 11, էջ 60-73:

Հոդվածի արտատպությունները տե՛ս «Յառաջ», օրաթերթ, Փարիզ, 1983, փետրվարի 12-13, 15, 16:

«Զարթոնք», օրաթերթ, Պեյրուք, 1983, մարտի 1, 2, 3, 4, 5, 6, 8, 9, 10, 11:

«Զայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2012, № 5-6, 7-8, հոդվածը արտատպվել է Ս. Վարդանյանի «Որպես հին ծանոթներ» առաջաբանով:

Կրասնոդարի երկրամասում և Աբխազիայում բնակվող հայերի՝ մասնավորապես համշենահայերի անցյալի ու ներկայի, նրանց առաջ ծառայած խնդիրների մասին է:

Արձագանքները տե՛ս «Գարուն», 1983, № 9, էջ 24-25 և 1984, № 6, էջ 42, 43:

7. Корни, рассказ перевела Светлана Марданян, «Литературная Армения», журнал, Ереван, 1982, июнь, № 6, с. 67-70.

Պատմվածքի կրճատված տարբերակը տպագրվել է «Գարուն» ամսագրում, «Արմատներ», 1978, № 9, էջ 62, 63:

8. Կոչ սփյուռքահայ դպրոցականներին, «Հայրենիքի ձայն», շաբաթաթերթ, Երևան, 1982, օգոստոսի 25, № 35, էջ 8:

Հրապարակման հեղինակ՝ Ս. Վարդանյան: Պատմվում է «Հրեղեն ձին» ժողովածուի ստեղծման մասին, և Հայաստանի գրողների միության և Գեղագիտական դաստիարակության հանրապետական կենտրոնի անունից սփյուռքահայ դպրոցականներին կոչ է արվում հավաքել բանահյուսական նյութեր և ուղարկել հայրենիք:

9. Կոչ հանրապետության դպրոցականներին, «Ավանգարդ», երկօրյա թերթ, Երևան, 1982, ապրիլի 8, № 42, էջ 4:

Հրապարակման հեղինակ՝ Ս. Վարդանյան: Կոչ է արվում բանահյուսական ստեղծագործություններ հավաքել և ուղարկել Գեղագիտական դաստիարակության հանրապետական կենտրոնի հասցեով, որտեղ նույնպես ստեղծվել էր «Պատանի բանահավաք» ստուդիա:

10. Բնության օրացույց. Հունվար, «Շիժեռնակ», ամսագիր, Երևան, 1982, № 1, էջ 12:

«Շիժեռնակի» 12 համարներում տպագրված հոդվածաշարը երեխաներին ներկայացնում է Հայաստանի կենդանական և բուսական աշխարհը՝ ըստ տարվա եղանակների և ամիսների, տարբեր կենդանիների և բույսերի յուրահատկությունները, մրգերի հասունացման, ծաղիկների ծաղկման ամիսները, բացման և փակման ժամերը և այլն:

11. Բնության օրացույց. Փետրվար, «Շիժեռնակ», 1982, № 2, էջ 14:

12. Բնության օրացույց. Մարտ, «Շիժեռնակ», 1982, № 3, էջ 14:

13. Բնության օրացույց. Ապրիլ, «Շիժեռնակ», 1982, № 4, էջ 14:

14. Բնության օրացույց. Մայիս, «Շիժեռնակ», 1982, № 5, էջ 14:

15. Բնության օրացույց. Հունիս, «Շիժեռնակ», 1982, № 6, էջ 13, 14:

16. Բնության օրացույց. Հուլիս, «Շիժեռնակ», 1982, № 7, էջ 13, 14:

17. Բնության օրացույց. Օգոստոս, «Շիժեռնակ», 1982, № 8, էջ 14:

18. Բնության օրացույց. Սեպտեմբեր, «Շիժեռնակ», 1982, № 9, էջ 13:

19. Բնության օրացույց. Հոկտեմբեր, «Շիժեռնակ», 1982, № 10, էջ 14:

20. Բնության օրացույց. Նոյեմբեր, «Շիժեռնակ», 1982, № 11, էջ 14:

21. Բնության օրացույց. Դեկտեմբեր, «Շիժեռնակ», ամսագիր, Երևան, 1982, № 12, էջ 14:

### Երրորդ բաժին

22. Սերո Խանգաղյան, Փրկված մասունքներ, «Գրական թերթ», շաբաթաթերթ, Երևան, 1982, փետրվարի 19, № 8, էջ 2:

«Հրեղեն ձին» (1981) բանահյուսական ժողովածուի մասին է: Հոդվածից հատվածներ. «Մեր հարուստ բանահյուսության սքանչելի մասունքների մի հավաքածու է սա, նո՛ր հավաքածու: Եվ ինչն է ուրախացնող ու նաև զարմացնող. սրանք հավաքել, գրի են առել հինգից տասներորդ դասարանցի աշակերտներ:

...Լավ գործ սկսեց մեր «Պիոներ-կանչը»: Ահա և այդ լավ գործի առաջին պտղաբերքը՝ «Հրեղեն ձին»: Սա ես կարդացի մի շնչում: Ուրախանում, ցնծում էի: Եվ ուզեցի մի երկու բարի խոսք ասել թե՛ հավաքողներին, և թե՛ հրատարակիչներին:

Նաև ասեմ՝ ամենից լավ, ամենից ճիշտ փոքրերն են ընկալում բանահյուսությունը: Բիսրկե, ոչ բոլոր տեսակները: Փոքրերն ընկալում են ամենից շատ հեքիաթները, հանելուկները, շուտասելուկները: Եվ իրենց հոգում ստեղծում են մի հրաշք աշխարհ, որ գեղեցկացնում է կյանքը և երբեք չի մոռացվում:

...Աշխարհագրական տեսակետից «**Հրեղեն ձին**» ընդգրկում է գրեթե ողջ Սովետական Հայաստանը և դրսի հայաշատ որոշ վայրեր: Գովելի է: Ուրեմն այս գիրքը կարդացողը կճանաչի իր երկիրը, իր հայրենիքը, իր տունը: Եվ դա կճանաչի հաստատուն, որովհետև մատուցվում է արվեստի լույսով, այն էլ ժողովրդական արվեստի, որի ազդեցությունը հսկայական է:

Լավ է, որ ժողովածուի նյութերը մատուցված են հայոց բարբառներով: Բարբառը գանձ է, նրանից է իսկական գրականությունը քաղում լեզվական շատ գույներ, ստանում զգալի համ ու հոտ: Բարբառում պահպանված են մեր դասական լեզվի՝ գրաբարի շատ գանձեր: Բարբառը պետք է լավ խախալել՝ օգտագործելուց առաջ, որպեսզի օտարամուտ ու խորթ որոմները գտվեն մաքուր, բնիկ հատիկներից:

...Բանահյուսությունը նաև մեկ ուրիշ մեծ հատկություն ունի՝ մարդուն մղել երազելու: Այո՛, երազելու: Ժողովրդական պոեզիան մարդուն մղում է դեպի հոգեկան բախտավորություն:

Ողջունում եմ «**Հրեղեն ձիու**» այս թռիչքը: Միայն երախտագիտական խոսք պիտի հղել այս գիրքը կազմող-խմբագրողներին: Թող որ սա վերջինը չլինի, այս գործը շարունակվի՝ աշխարհագրական լայն շրջանակ ընդգրկելով»:

23. Ա. Հովհաննիսյան, «**Հրեղեն ձին**», «**Սովետական Հայաստան**», օրաթերթ, Երևան, 1982, հունվարի 13, № 10, էջ 4:

Թերթի աշխատակցուհի Ա. Հովհաննիսյանի հոդվածը «**Հրեղեն ձին**» (1981) բանահյուսական ժողովածուի մասին է:

24. Արամ Ղանալանյան, Նվեր պատանի դպրոցականներին, «**Գրքերի աշխարհ**», ամսաթերթ, Երևան, 1982, հունվարի 18, № 1, էջ 4:

Նշանավոր գիտնական, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ղանալանյանը ողջունում է «**Հրեղեն ձին**» ժողովածուի (1981) լույս ընծայումը: Հոդվածից հատվածներ. «Անհրաժեշտ է այստեղ նշել, որ հիշատակված բանահյուսական նյութերը թե՛ բովանդակությամբ և թե՛ արվեստի տեսակետից հավասար արժեքի չեն: Դրանց մի մասը մինչև այժմ մեզանում տպագրված և հայտնի ստեղծագործությունների նորահայտ տարբերակներ են և գնահա-

տելի են որպես այդպիսիք: Կան ստեղծագործություններ էլ, որոնք առաջին անգամ են հրատարակվում և, այս առումով, ունեն բանագիտական նորույթի նշանակություն: «Հրեղեն ձին» գրքի բուն արժեքը, սակայն, ոչ այնքան նրա բերած բանահյուսական ստեղծագործությունների նորությունն է, որքան պատանի դպրոցական բանահավաքների հայրենանվեր աշխատանքի արդյունք լինելու հանգամանքը:

...Ահա թե ինչու մենք ջերմորեն ողջունում ենք «**Հրեղեն ձին**» գրքի լույս ընծայման փաստը, ցանկանալով, որ նրա երիտասարդ հեղինակ Սերգեյ Վարդանյանը նույն նվիրումով ու մասնագիտական սթափ ու պահանջ-կոտ վերաբերմունքով շարունակի իր դրվատելի գործունեությունը»:

25. М[ери] Юзбашьян, За живою водой, «**Комсомольская правда**», ежедневная газета, Москва, 1982, 27 июля, № 171, с. 2.

«**Հրեղեն ձին**» (1981) ժողովածուի մասին է. հոդվածից հատված. «В редакцию «Пионер канча» стали приходиться письма, число которых превысило полторы тысячи. Координировал всю эту работу молодой журналист Сергей Варганян. В течение двух лет газета из месяца в месяц публиковала материалы, присылаемые юными собирателями сказок, школьниками 2-10-х классов. Уже в процессе работы родился замысел отобрать наиболее ценное для издания отдельной книги. Сергей сам же и подготовил к печати сборник «Огненный конь». Он включает 55 сказок, притч, преданий, сказов, примерно 250 песен и частушек, более 360 загадок, около 320 поговорок и прибауток.

Книга «Огненный конь» мгновенно исчезла с прилавков, чему способствовали и отличные иллюстрации в лубочном стиле художника Н. Манукяна».

26. В[алерий] Айдинян, Праздник для души и глаз, «**Комсомолец**», газета, издавалась трижды в неделю, Ереван, 1982, 4 февраля, № 15, с. 4.

«**Հրեղեն ձին**» (1981) ժողովածուին նվիրված հոդվածից հատվածներ. «Чтобы не попасть впросак, Сергею Варданяну пришлось серьезно изучить несколько сотен книг. Дело непростое, если учесть газетного конвейера-раз в месяц публиковалась подборка фольклорных материалов. Но зато, надо полагать, Сергей стал большим знатоком армянских диалектов, устного народного творчества и народного быта. А главное - три года постоянного общения с шедеврами народной фантазии, и прекрасный итог - сборник «Огненный конь».

Несомненно, сборник будет полезен исследователям, тем более, что, наряду с местными вариантами уже известных, он содержит немало произведений, записанных впервые. Но главное, думается, не в этом. Движение, начатое газетой, расширило интерес детей к истории родного края, к языку народа, научило уважать прошлое. А тот, кто уважает прошлое, ценит и день сегодняшней, уверенно смотрит в будущее.

И еще одно показывает сборник, составленный Сергеем Варданяном - как бы ни ширился поток научной и культурной информации, захлестывающий нас никогда не иссякнет интерес к острой шутке, меткому слову, и пока есть на земле дети, будет жить добрая, умная, чудесная народная сказка».

27. Айрик Мурадян, Предания наших предков, «**Коммунист**», ежедневная газета, Ереван, 1982, 26 марта, № 70.

«Հրեղեն ձին» (1981) ժողովածուի մասին ժողովրդական երգերի նշանավոր գիտակ և կատարող Հայրիկ Մուրադյանի հոդվածից հատված. «Материал сборника бережно подготовлен к печати Сергеем Варданяном, которому удалось сохранить диалектный колорит и художественные особенности каждого произведения. Безусловно, проделанную им работу следует расценивать как серьезный научный труд».

28. Ռաֆիկ Համբարձումյան, Կարևոր իրագործում, «**Ավանգարդ**», երկօրյա թերթ, 1982, մարտի 7, № 29, էջ 3:

Նվիրված է «**Հրեղեն ձին**» (1981) ժողովածուին: Հոդվածից հատված. «Գրքի արժանիքներից է նաև այն, որ Ս. Վարդանյանը ընթերցանությունը հնարավորին չափ դյուրացնելու և հասկանալի դարձնելու համար ոչ միայն բացատրել է շուրջ 750 բարբառային բառ, այլև գիտական տառադարձությունից խուսափելով՝ կարողացել է հնչաառոգանական տարբեր կանոնների ենթարկվող զանազան բարբառները բերել մեկ միասնական, պարզ ու մատչելի ուղղագրության:

«Հրեղեն ձին» մեր վերջին տարիների մանկապատանեկան ամենահաջողված գրքերից է: «Սովետական գրող» հրատարակչության լույս ընծայած այդ եզակի ժողովածուն մշակութային կարևոր իրագործում է»:

29. Ս. Իսկանդարյան, Մանկության հեքիաթի հրեղեն ձին, «**Հայրենիքի ձայն**», շաբաթաթերթ, Երևան, 1982, մարտի 3, № 10, էջ 7:

Արտատպությունը տե՛ս Ս. Իսկանդարեան, Մանկութեան հեքիաթի հրեղեն ձին, «**Պայքար**», օրաթերթ, Բոստոն, Մասաչուսեթս, ԱՄՆ, 1982, մայիս 18, № 74, էջ 3:

«**Հայրենիքի ձայնի**» աշխատակից Ալեքսանդր Իսկանդարյանի հոդվածը նվիրված է «**Հրեղեն ձին**» (1981) ժողովածուին:

30. Ս. Իսկանդարեան, Մանկութեան հեքիաթի հրեղեն ձին, «**Պայքար**», օրաթերթ, Բոստոն, Մասաչուսեթս, ԱՄՆ, 1982, մայիս 18, № 74, էջ 3:

Արտատպություն է, տե՛ս Ս. Իսկանդարյան, Մանկության հեքիաթի հրեղեն ձին, «**Հայրենիքի ձայն**», շաբաթաթերթ, 1982, մարտի 3, № 10, էջ 7:

31. Վարդանուշ Թորոսյան, Հրեղեն ձին, «Սովետական դպրոց», շաբաթաթերթ, Երևան, 1982, հուլիսի 15, № 29, էջ 4:

«Սովետական դպրոցի» աշխատակցուհի Վ. Թորոսյանի հոդվածը նվիրված է «Հրեղեն ձին» (1981) բանահյուսական ժողովածուին:

32. Հայրիկ Մուրադյան, Սիրեք, սովորեք, տարածեք, «Պիոներ», ամսագիր, Երևան, 1982, № 12, էջ 16-17:

Ժողովրդական երգերի նշանավոր գիտակ և կատարող Հայրիկ Մուրադյանը արժևորում է «Հրեղեն ձին» (1981) բանահյուսական ժողովածուն և ողջունում «Պիոներ» ամսագրի 1982 թ. № 9-ում տպագրված կոչը՝ շարունակել հավաքել բանահյուսության նմուշները:

33. Обо всём, «Советский Союз», ежемесячный журнал, Москва, 1982, № 5 (387), с. 25.

Աշխարհի 10 լեզուներով լույս տեսնող այս ամսագրի՝ Խորհրդային Միությունում կատարվող ամենահետաքրքիր իրադարձությունների մասին պատմող «Обо всём» (Ամեն ինչի մասին) բաժնում տպագրվել է լրատվություն նաև «Հրեղեն ձին» (1981) բանահյուսական ժողովածուի ստեղծման և հրատարակման մասին:

34. Էդուարդ Վիրապյան, Հրեղեն ձիու վերադարձը, «Սովետական գրականություն», ամսագիր, Երևան, 1982, № 6, էջ 127-128:

«Հրեղեն ձին» (1981) բանահյուսական ժողովածուի մասին է:

35. «Բյուրակն», «Եթերում է Երևանը» (Հեռուստատեսության և ռադիոյի փետրվարի 8-14-ի ծրագրերը), շաբաթաթերթ, Երևան, 1982, փետրվարի 6, № 7, էջ 3:

«Բյուրակն» հեռուստահաղորդաշարի փետրվարի 10-ի (Ժ. 22. 35-ին) թողարկման ազդագրից հատված. «Մի քանի տարի առաջ «Պիոներ կանչ» թերթն իր ընթերցողներին դիմեց մի առաջարկությամբ՝ հավաքել, գրի առնել երաժշտական բանավոր ստեղծագործության նմուշները: «Պատանի բանահավաք» խորագրի ներքո թերթը տպագրեց երեխաների գրի առած հեքիաթները, զրույցները, ավանդույթները, երգերն ու խաղիկները, հանելուկներն ու առածները, ասացվածքները: Թերթում տպագրված նյութերից կազմվեց «Հրեղեն ձին» գիրքը, որը օրերս ներկայացվեց ընթերցողներին: «Բյուրակնը» իր սրահներից մեկը սիրով տրամադրել է այդ գրքին»:

36. Örmény ifjúsági küldöttség megyénkben, «Kisalföld», lap, v. Győr, 1982, június 22, № 144, o. 8.

Հայաստանի հետ եղբայրացած Հունգարիայի Դյոր-Շոպրոնի մարզի կենտրոն Դյոր քաղաքում հրատարակվող մարզային «Կիշալֆյոլդ» թերթի

1982 թ. հունիսի 22-ի համարի 8-րդ էջում տպագրված «Հայ երիտասարդության պատվիրակությունը մեր մարզում» լրատվությունը տեղեկացնում է, որ ՀԼԿԵՄ ԿԿ քարտուղար Ֆրիկ Մկրտչյանը, գրող, լրագրող Սերգեյ Վարդանյանը և երգիչ Էդվարդ Դարբինյանը մարզ են այցելել երիտասարդական շարժմանը ծանոթանալու և երկու ժողովուրդների բարեկամությունն ամրապնդելու նպատակով:

1983

**Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)**

1. Հայոց մայրաքաղաքները. Վան, «Պիոներ», ամսագիր, Երևան, 1983, № 1, էջ 20-23:
2. Հայոց մայրաքաղաքները. Արմավիր, «Պիոներ», 1983, № 2, էջ 24-27:
3. Հայոց մայրաքաղաքները. Երվանդաշատ, «Պիոներ», 1983, № 3, էջ 24, 25:
4. Հայոց մայրաքաղաքները. Արտաշատ, «Պիոներ», 1983, № 4, էջ 22-25:
5. Հայոց մայրաքաղաքները. Տիգրանակերտ, «Պիոներ», 1983, № 5, էջ 22-25:
6. Հայոց մայրաքաղաքները. Վաղարշապատ, «Պիոներ», 1983, № 6, էջ 22-25:
7. Հայոց մայրաքաղաքները. Դվին, «Պիոներ», 1983, № 7, էջ 24-27:
8. Հայոց մայրաքաղաքները. Բագարան, «Պիոներ», 1983, № 8, էջ 18-20:
9. Հայոց մայրաքաղաքները. Շիրակավան, «Պիոներ», 1983, № 9, էջ 22, 23:
10. Հայոց մայրաքաղաքները. Կարս, «Պիոներ», 1983, № 10, էջ 22-25:
11. Հայոց մայրաքաղաքները. Անի, «Պիոներ», 1983, № 11, էջ 26-29:
12. Հայոց մայրաքաղաքները. Երևան, «Պիոներ», ամսագիր, Երևան, 1983, № 12, էջ 28-31:
13. Հայոց մայրաքաղաքները. Վան (Ա), (Մնացեալը յաջորդով), «Լրաբեր», շաբաթաթերթ, Լուս Անջելես, 1983, հոկտեմբեր 15, № 2, էջ 4:
14. Հայոց մայրաքաղաքները. Վան (Շար. նախորդ թիւն եւ վերջ), «Լրաբեր», շաբաթաթերթ, Լուս Անջելես, 1983, հոկտեմբեր 22, № 3, էջ 4:
15. Հայոց մայրաքաղաքները. Արմավիր (Բ), «Լրաբեր», շաբաթաթերթ, Լուս Անջելես, 1983, նոյեմբեր 26, № 8, էջ 4:

16. Հայոց մայրաքաղաքները. Երուանդաշատ (Գ), «**Լրաբեր**», Լոս Անջելես:

Ինձ չի հաջողվել գրադարաններում և առցանց գտնել թերթի այն համարը, որտեղ տպագրվել է Երվանդաշատին նվիրված հոդվածս, ուստի ենթադրում եմ՝ 1983 թ. դեկտեմբերին կամ 1984 թ. հունվարին:

17. Տոն՝ Պուշկինի լեռնանցքում, «**Պիոներ**», ամսագիր, Երևան, 1983, № 7, էջ 11:

18. Մերգեյ Վարդանեան, Համշենցիները՝ ծանօթ եւ անծանօթ, ուղեգրական նօթեր, «**Յառաջ**», օրաթերթ, Փարիզ, 1983, փետրուարի 12-13, թիւ 15.370, էջ 2, փետրուարի 15, թիւ 15.371, էջ 2, փետրուարի 16, թիւ 15.372, էջ 2:

Արտատպվել է «**Գարուն**» ամսագրի 1982 թ. № 11, էջ 60-73-ից, փոխադրվել է արևմտահայերենի և տպագրվել «փոքր յապառումներով»:

Տե՛ս նաև «**Զարթօնք**», օրաթերթ, Պեյրուս, 1983, մարտի 1, 2, 3, 4, 5, 6, 8, 9, 10, 11:

«**Չայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2012, № 5-6, էջ 1, 3: Ս. Վարդանյանի «Որպես հին ծանոթներ» առաջաբանով (էջ 1) և լուսանկարներով, № 7-8, էջ 2-5:

19. Մերգեյ Վարդանեան, Ուղեգրական նոթեր՝ «**Ներքին**» սփիւռքէն. Համշենցիները՝ ծանօթ եւ անծանօթ, «**Զարթօնք**», օրաթերթ, Պեյրուս, 1983, մարտի 1, թիւ 125, էջ 3, մարտի 2, թիւ 126, էջ 3, մարտի 3, թիւ 127, էջ 3, մարտի 4, թիւ 128, էջ 3, մարտի 5, թիւ 129, էջ 3 (փաստացի 3-րդ էջը տպագրվել է 2-րդ էջի տեղում, իսկ 2-րդ էջը՝ 3-րդի), մարտի 6, թիւ 130, էջ 3, մարտի 8, թիւ 131, էջ 3, մարտի 9, թիւ 132, էջ 3, մարտի 10, թիւ 133, էջ 3, մարտի 11, թիւ 132, էջ 3, 4:

Արտատպվել է «**Գարուն**» ամսագրի 1982 թ. № 11, էջ 60-73-ից:

Տե՛ս նաև «**Յառաջ**», օրաթերթ, Փարիզ, 1983, փետրուարի 12-13, 15, 16:

Տե՛ս նաև «**Չայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2012, № 5-6, էջ 1, 3, «Որպես հին ծանոթներ» առաջաբանով (էջ 1) և լուսանկարներով, № 7-8, էջ 2-5:

20. Մայկոսյան խճանկար, «**Մովետական գրականություն**», ամսագիր, Երևան, 1983, № 5, էջ 88-95:

Հոդվածի արտատպությունը տե՛ս «**Չայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2012, № 9-10, էջ 2, 3, 6, հեղինակի «Որոշ պարզաբանումներ» առաջաբանով (էջ 2):

Աղբյուրական ինքնավար մարզում Ս. Վարդանյանի կատարած ուսումնասիրությունների, Եղիշե Չարենցի մայկոպյան այցելությունների և այնտեղ բնակություն հաստատած եղբոր, մարզում ապրող հայերի, այդ թվում՝ համշենահայերի անցյալի և ներկայի մասին է: Ուղեգրությունից հատված. «Աբաձեխսկից Մայկոպ ճանապարհին հայկական գյուղեր են՝ Յվետոչնայա, Տուլսկ, Շահումյան, Վերին Շահումյան... Կարճ ժամանակով կանգ եմ առնում Շահումյան գյուղում՝ Սարգիս Գուգույանի տանը: Նրա հետ ծանոթացել էի դեռևս Ուշ Դերեում՝ Սև ծովի առափնյա մի գյուղում, Գուգույան տոհմի ավանդական հավաքի ժամանակ: Ինչպես այս կողմերի մյուս գյուղերը, Շահումյանը ևս հիմնականում փայտաշեն, փոքր գյուղ է՝ 80 տուն: Վերին Շահումյանն ավելի մեծ է՝ 100 տուն, նույնքան էլ՝ Տուլսկում: Ինձ ուրախացրեց այն, որ Սարգսի ավագ որդին վարժ գրում և կարդում էր հայերեն: Բանն այն է, որ մինչև 1960 թվականը գյուղում հայկական միջնակարգ դպրոց է եղել, իսկ մինչև հայերենի ուսուցչի թռչակի անցնելը՝ 1977 թվականը, դասավանդվել է հայոց լեզու:

Բազմաթիվ խոհերով ու մտորումներով վերադառնում եմ Մայկոպ, այնտեղից բռնում տունդարձի ճամփան: Բարակ անձրև է մաղում և հայկական փայտաշեն, թրջված գյուղերը ծածկում է մշուշը, ինչպես հայելու վրա արտաշնչելիս խունանում է պատկերը, լուծվում սպիտակ մշուշի մեջ»:

21. Ծննդավայր (պատմվածք), «**Օրծեռնակ**», ամսագիր, Երևան, 1983, № 8, էջ 6, 7:

Տե՛ս նաև Ս. Վարդանյան, Արևածաղիկը, պատմվածքներ, Երևան, Արևիկ հրատ., 1989, էջ 20-24:

Ս. Վարդանեան, **Արևածաղիկը**, պատմուածքներ, Արևմտահայերենի վերածեց՝ Մաքրուհի Պ. Յակոբեան, Իսթանպուլ, ԱՐԱՍ հրատ., 1994 (- 64 էջ), էջ 43-47:

«Ծննդավայր» պատմվածքի արևմտահայերեն տարբերակի հիման վրա ստեղծված «Հայրենիք» վերնագրված թատերախաղը 1998 թ. բեմ են բարձրացրել Նյու Յորքի Սրբոց Նահատակաց շաբաթօրյա դպրոցի սաները, տե՛ս 1998 թ. № 13 և 14 մատենագիտական նկարագրությունները, իսկ «Ուղտին հայրենիքը» արևմտահայերեն տիկնիկային ներկայացումը (ռեժիսոր՝ Վարդան Գառնիկի Հովհաննիսյան) 2011 թ. խաղացվել է Նյու Ջերսիում (ԱՄՆ), տե՛ս Aram Arkun, The Camel's Homeland, A Western Armenian Puppet Show in New Jersey, «**The Armenian Mirror-Spectator**», Մասաչուսեթս, ԱՄՆ, 2011, հունիսի 25:

Հ[ակոբ] Ծ[ուլիկյան], «Ուղտին հայրենիքը»՝ տիկնիկային ներկայացում  
Լյու Ջերսիում, «Ազգ», թերթ, Երևան, 2011, հուլիսի 19:

Տե՛ս նաև՝ Ծննդավայր, մանկական պատմվածք, «Պատանեկան արձա-  
գանգ», ամսագիր, Բեյրութ, 1997, ապրիլ, № 4, էջ 85-88: Ս. Վարդանյանի  
«Արևածաղիկը» (1989) գրքից, «Պատանեկան արձագանգ» ամսագրի պա-  
տասխանատու խմբագիր Երվանդ Քասունու առաջաբանով:

22. Վեճը (պատմվածք), «Ծիծեռնակ», ամսագիր, Երևան, 1983, № 11,  
էջ 12, 13:

Տե՛ս նաև՝ Ս. Վարդանյան, **Արևածաղիկը**, պատմվածքներ, Երևան,  
Արևիկ հրատ., 1989 (- 40 էջ), էջ 3, 4:

Վեճը (Արեւմտահայերէնի վերածուած), «Նոր Մարմարա», օրաթերթ,  
Իսթանպուլ, 1994, յունուար 29, № 4294:

Վեճը // Մայրենի 4, Հանրակրթական դպրոցների դասագիրք / Կ. Թո-  
րոսյան, Հ. Խաչատրյան, Վ. Սարգսյան, Կ. Չիբուխչյան, Երևան, Մակմիլան  
Արմենիա, 2009 (- 176 էջ), էջ 86, 87, 88:

23. Թռիչք (պատմվածք), «Պիոներ կանչ», եռօրյա թերթ, Երևան, 1983,  
դեկտեմբերի 14, № 99:

Տե՛ս նաև Ս. Վարդանյան, **Արևածաղիկը**, պատմվածքներ, Երևան,  
Արևիկ հրատ., 1989 (- 40 էջ), էջ 28-30:

Ս. Վարդանեան, **Արևածաղիկը**, Արեւմտահայերէնի վերածեց՝ Մաքրու-  
հի Պ. Յակոբեան, Իսթանպուլ, ԱԲԱՍ հրատ., 1994 (- 64 էջ), էջ 49-52:

Թռիչք // **Մայրենի 5, Հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասա-  
գիրք** / Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Երևան, Էդիթ  
պրինտ հրատ., 2011 (-240 էջ), էջ 105-110:

### Երրորդ բաժին

24. Վ[աչէ] Բրուտեան, Պարբերական ակնարկ խորհրդահայ մամուլի,  
հոկտեմբեր-դեկտեմբեր, Խորհրդահայ մամուլը 1982ի աշնան (Բ մաս),  
«Ազդակ», օրաթերթ, Պեյրութ, 1983, Յուլիս 19, թիւ 109 (15.587), էջ 4:

Նույնը տե՛ս նաև՝ «Ազատ օր», օրաթերթ, Աթենք, 1983, յուլիսի 27, թիւ  
11.621, էջ 3:

«Հայրենիք», օրաթերթ, Բոստոն, 1983, օգոստոսի 16, թիւ 31.233, էջ 2:

Վաչէ Բրուտեան, Երկիրը Արտերկրեն (Յօդուածներու ժողովածու),  
Երեւան, Լուսակն, 2021 (- 392 էջ), էջ 175-178:

Վ. Բրուտյանը (ՀՅԴ Մամուլի Դիւան, Պէրուրթ) պարբերաբար ներկայացնում և վերլուծում է խորհրդահայ մամուլում տպագրված որոշակի հետաքրքրություն ներկայացնող հրապարակումները: Այս անգամ «Խորհրդահայ սփիւռք» ենթավերնագրի ներքո նա բավականին մանրամասն անդրադարձել է Ս. Վարդանյանի «Համշէնցիները՝ ծանոթ և անծանոթ» ուղեգրությանը:

Հատվածներ հոդվածից. «Առաջին հերթին, ան ծանօթացած է համշէնցիներու պարարուեստին՝ տեղական պարախումբի փորձի ընթացքին. «Նոր ես հասկանում, թէ արտաքնապէս մեղմաբարոյ այս մարդիկ ի՛նչ կրակոտ սիրտ ունեն»: Ապա կու գայ տխուր եզրակացութիւնը. «Մնում է ափսոսալ, որ այս պարերն անծանօթ են Հայաստանի ինքնագործ, ազգագրական եւ պետական պարախմբերին... Լաւ կը լինի, եթէ Հայաստանից նկարահանող խումբ այցելի այս կողմերը և մեզ վերադարձնի պատմական երկրի զարմանալի անադարտ պահուած երգն ու պարը»: Հայաստան վերադարձին Վարդանեան իր այս մտահոգութիւնները կը բաժնէ մշակոյթի գործիչներու հետ: Միայն կարելի է ուրախանալ, որ այս ուղղութեամբ արդէն իսկ աշխատանք սկսած է տարուիլ:

Յօդուածագիրը կ'անդրադառնայ նաեւ համշէնցիներու ճարտարապետութեան (տուներ եւ եկեղեցիներ), որոնք ընդհանրապէս փայտաշէն եղած են. երկրորդ անտեսում եւ երկրորդ անհրաժեշտութիւն. հայ ճարտարապետութեան մասնագէտները պէտք է անպայման իրենց ուշադրութեան առարկայ դարձնեն համշէնցիներու փայտաշէն հարիւրաւոր տուններն ու եկեղեցիները:

Մէկ գիւղէն միւսը՝ հանդիպումներ ուսուցիչներու, հասարակական կեանքի գործօն դերակատարներու հետ: Վարդանեան բոլորին մէջ կը տեսնէ իր արմատներուն ամբօրէն կառչած հայը, իր բարբառին, նիստ ու կացին, երգ ու պարին, մէկ խօսքով՝ մշակոյթին փարած հայու կերպարը: Վարդանեան նաեւ կը ծանօթանայ անոնց, որոնք, 1915ի արհաւիրքի օրերուն, զենքով պաշտպաներ էին իրենց կեանքն ու պատիւը թուրքին եաթաղանին դէմ ու հասեր՝ Կրասնոդարի ափերը: Վերջին մոհիկաններն են անոնք, ու Վարդանեան գրի առած է իրենց պատումները, ցաւով հաստատելով, որ մինչեւ այսօր չէ գրառուած եւ ուսումնասիրուած՝ Սեւ ծովու այս փրկ հասած համշէնցիներու ինքնապաշտպանութեան մաքառումներու պատմութիւնը, «որ այնքան նման է մուսալեռցիների պայքարի պատմութեանը»:

...Մեծ թափով կը սկսի կրթական շարժումը ու շուտով դպրոցներու թիւը կը հասնի 140ի: 1921ին կը հիմնուի համալսարան մը՝ Ս. Շահումեանի անունով: Այդ բոլորը՝ անցեալին, այժմ՝ **«ցաւօք, տարբեր պատճառներով, լաւ սկսուած գործը կիսատ մնաց: Այսօր Կրասնոդարի երկրամասում կայ չորս հայկական դպրոց: Որո՞նք են պատճառները: Նախ եւ առաջ չկային ուսուցիչներ՝ հայոց լեզուի եւ գրականութեան, միւս առարկաների... Շատ զոհեր իլեց նաեւ Մեծ հայրենականը»:** Ատեն մը Հայաստանէն եւ այլ շրջաններէ ուսուցիչներ շարունակեր են գալ, սակայն տարիներու ընթացքին կարելի չէ եղած մարդուժի բացը զոցել: Ահա այս ձեւով կը հիւծի հայրենիքին այնքան մօտ, սակայն նաեւ այնքան հեռու գտնուող **«ծանօթ ու անծանօթ»** համշէնցիներու գաղութը:

Ու՞ր է ելքը, լուծումը: Վարդանեան ի՞նք կը պատասխանէ իր հարցումին. **«Պէտք է, որ Հայաստանի մանկավարժական ինստիտուտներում ամէն տարի մի քանի տեղ յատկացուի այլ հանրապետութիւնների հայկական դպրոցների շրջանաւարտներին, որոնց մեծագոյն մասը, աւարտելուց յետոյ, սիրով կը վերադառնայ հայրենի գիւղ կամ քաղաք»:**

25. Վ[աչէ] Բրուտեան, Սեւ Ծովու հիւսիս-արեւելեան ափերուն՝ Կրասնոդարի հայ գաղութը՝ խորհրդահայ սփիւռքի մէկ մասնիկը, 100-150 տարի առաջ թրքական հալածանքներէն ապաստանած, ունէին համալսարան, այսօր, միայն չորս հայկական դպրոց, **«Հայրենիք»**, օրաթերթ, Բոստոն, ԱՄՆ, 1983, օգոստոսի 16, թիւ 31.233, էջ 2:

**«Ազդակ»** և **«Ազատ օր»** թերթերում տպագրված խորհրդային մամուլի մասին ակնարկաշարի **«Համշէնցիները՝ ծանօթ և անծանօթ»** ուղեգրությամբ նվիրված հատվածը **«Հայրենիքում»** հրատարակվել է որպէս առանձին հոդված:

Այն արտատպվել է նաև հեղինակի ժողովածուում, տե՛ս Վաչէ Բրուտեան, Երկիրը Արտերկրէն (Յօդուածներու ժողովածու), Երեւան, Լուսակն, 2021 (- 392 էջ), էջ 175-178:

26. Արձագանքում են **«Համշէնցիները՝ ծանօթ և անծանօթ»** հոդվածին, **«Գարուն»**, ամսագիր, Երևան, 1983, № 9 (201), էջ 24, 25:

Տպագրվել է ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստր Լյուդվիգ Ղարիբջանյանի **«Պաշտոնական պատասխանը»** (էջ 25), ըստ որի՝ **«Գարունի»** ահագանգից հետո մինիստրությունը դիմել է ՌՍՖՍՀ լուսավորության, Վրացական ՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրություններին, և ստացվել են

պաշտոնական պատասխաններ: 1983-84 ուստարվանից սկսած՝ Երևանի Խ. Աբովյանի անվ. հայկական և Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտներում Աբխազիայի հայկական դպրոցների շրջանավարտներին կոոպերացման սկզբունքով հատկացվել է 30 տեղ (13 առարկաների համար): Իսկ հաջորդ ուստարվանից սկսած՝ Երևանի բուհերում տեղեր կհատկացվեն նաև ՌՄՖՍՀ Ռոստովի մարզի և Կրասնոդարի երկրամասի հայկական դպրոցների շրջանավարտներին:

Տպագրվել են նաև Աբխազիայի ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի մեթոդիստ Ս. Մարկոսյանի, Կրասնոդարի երկրամասի Նովոռոսիյսկ քաղաքից Վարսենիկ Հայրապետյանի, Հայաստանի Նկարչի տան տնօրեն Լյուդվիգ Խաչատրյանի, Սոչիի Լազարևսկի շրջանի Բերանդա գյուղի դպրոցի տնօրեն, «Ձայն համշենական» գրական խմբակի ղեկավար Աշոտ Քոչքոնյանի, Աբխազիայի Պիցունդա քաղաքից Ռազմիկ Քոջամաշյանի և ուրիշների արձագանք-նամակները:

Տե՛ս նաև «Գարուն», ամսագիր, Երևան, 1984, № 6, էջ 42, 43:

27. Խարոյկ, «**Եթերում է Երևանը**» (Հեռուստատեսության և ռադիոյի հունվարի 3-9-ի ծրագրերը), շաբաթաթերթ, Երևան, 1983, հունվարի 1, № 1, էջ 8:

Մանկապատանեկան «Խարոյկ» հեռուստահաղորդաշարի 1983 թ. հունվարի 6-ի (ժ. 17.00-17.55) թողարկման ազդագրից հատված. ««Հրեղեն ձին» բանահյուսական ժողովածուն, որ կազմել է «Պիոներ» ամսագրի պատասխանատու քարտուղար Սերգեյ Վարդանյանը, հետաքրքիր կենսագրություն ունի: Նրա ստեղծմանը մասնակցել են 1500 դպրոցականներ: Արդյունքը եղել է այն, որ երկու տարվա ընթացքում հավաքվել է ժողովրդական բանահյուսության մեծաքանակ նյութ, որը տպագրվել է «Հրեղեն ձին» ժողովածուի առաջին գրքում: Նրանք շարունակում են ժողովածուի երկրորդ գրքի համար հավաքել ու գրի առնել նոր երգեր ու հեքիաթներ, հանելուկներ ու զրույցներ, ասացվածքներ: Այդ շնորհակալ գործում պատանի բանահավաքներին օգնել են Սարգիս Հարությունյանը, Մարո Մուրադյանը, Հայրիկ Մուրադյանը: Եվ ահա ստուդիան կհյուրընկալի «Հրեղեն ձին» ժողովածուի բոլոր բարեկամներին»:

28. Վարդերես Գարակեօզեան, «Հրեղեն Ձին», «**Լրաբեր**», շաբաթաթերթ, Լոս Անջելես, 1983, Յուլիս 2, № 39, էջ 2, 6:

Նախկին պոլսեցի, լուսանջելեսաբնակ բանաստեղծ և հրատարակիչ Վ. Կարագոյանը գրում է «**Հրեղեն ձին**» բանահյուսական ժողովածուի ստեղծման, պատանեկան բանահավաքչական շարժման նախաձեռնող Ս. Վարդանյանի մասին, նաև սփյուռքահայ դպրոցականներին հորդորում է արձագանքել թերթի նույն համարում տպագրված բանահյուսություն գրառելու նրանց ուղղված կոչին: Հոդվածից հատված. «Այսօր... ուզում եմ ձեզ հետ զրուցել հեքիաթային մի աշխատանքի՝ **հեքիաթային մի երիտասարդի մասին**: Հայաստանում գարնանային դպրոցական արձակուրդների առթիւ, աւանդոյթ է դարձած «Մանկա-պատանեկան գրքերի շաբաթ»: Յերեկոյթին մասնակից մի խումբ գրողների կողքին, բեմ հրաւիրուեց նաեւ «**Հրեղեն Ձի**»ի հեղինակ Սերկէյ Վարդանեանը: Գրքին ծանօթ էի, անունին էլ, բայց անձին՝ ո՛չ: Երիտասարդ, շիկահեր, համեստ մի երիտասարդ բարձրացաւ բեմ: Զարմացայ, ուրախացայ, որոշեցի անմիջապէս ծանօթանալ ու հարցուփորձել իր տարած աշխատանքի ու ծրագրերի, նամանաւանդ իմանալ Հայրենիքի Ձայն շաբաթաթերթում եւ այնտեղից էլ Սփիւռքահայ այլազան թերթերում արտատպուած «Կոչ՝ սփիւռքահայ դպրոցականներին»ի արդիւնքի մասին: Որեւէ՝ արձագանգ, պատասխան ստացուել էր, թէ՛ ո՛չ:

Ծանօթացայ-զրուցեցի եւ... պարզուեց, որ ոչ մի պատասխան՝ արձագանգ:

Լինելով քաջատեղեակ սփիւռքեան մեր ընթացիկ առօրեային ու մտահոգութիւններին, պէտք չէ զարմանայի: Բայց, մեղքս ինչ թաքցնեմ, էլի զարմացայ, զարմացած ձեւացրի. ոչ մի պատասխան, ոչ մի արձագանգ...

...Աշխարհում առաջին անգամ ստեղծուել ու կազմակերպուել է բանահիւսութեան աշակերտական արշավախմբեր ու այդ նիւթերը ձեւաւորելու եւ հրատարակելու հնարաւորութիւններ: Մենք՝ սփիւռքահայերս անմասն պէտք չէ մնանք»:

«Լրաբերի» երկրորդ էջում տպագրվել է «Կոչ՝ սփիւռքահայ դպրոցականներին» դիմումը՝ հավաքելու բանահյուսության նմուշներ, նաև «Հրեղեն ձին» (1981) գրքից «Էջ մը ՀՐԵՂԵՆ ՁԻ ժողովածուէն» խորագրի ներքո արտատպվել է «Քնկոտ պահակը» զվարճապատումն իր նկարագարումով:

29. Քնկոտ պահակը, «**Լրաբեր**», շաբաթաթերթ, Լոս Անջելես, 1983, Յուլիս 2, № 39, էջ 2:

«Էջ մը ՀՐԵՂԵՆ ՁԻ ժողովածուէն» խորագրի տակ գրքից արտատպւել է «Քնկոտ պահակը» զվարճապատումը՝ «Հրեղեն ձին» գրքի իր նկարագար-դումով (էջ 2):

30. Ռաֆայել Իշխանյան, Բանահյուսություն, բարբառ, արդիականություն, «Գարուն», ամսագիր, Երևան, 1983, № 1 (№ 193), էջ 86-92:

ԵՊՀ դասախոս, բ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Իշխանյանը 92-րդ էջում անդրադառնում է նաև «Հրեղեն ձին» ժողովածուին:

31. Լուսանկար և մակագրություն, «Արտաշատ», երկօրյա թերթ, ք. Արտաշատ, 1983, ապրիլի 23, № 49, էջ 4:

Տպագրվել է լուսանկար հետևյալ մակագրությամբ. ««Պիոներ» ամսագրի լույսընծայման 60-ամյակի առթիվ քաղաքի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտները հանդիպում ունեցան ամսագրի խմբագրության աշխատակիցներ Անահիտ Թարյանի, Սերգեյ Վարդանյանի և Մաքսիմ Ոսկանյանի հետ: Դպրոցականները սիրով ընդունեցին ցանկալի հյուրերին: Լուսանկարը՝ Ժ. Սարգսյանի»:

1984

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Վայրէջք (պատմվածք), «Ծիծեռնակ», ամսագիր, Երևան, 1984, № 2, էջ 12:

Տե՛ս նաև Ս. Վարդանյան, **Արևածաղիկը**, պատմվածքներ, Երևան, Արևիկ հրատ., 1989 (- 40 էջ), էջ 25-27:

Ս. Վարդանեան, **Արևածաղիկը**, պատմուածքներ, Արեւմտահայերէնի վերածեց՝ Մաքրուհի Պ. Յակոբեան, Իսթանպուլ, ԱՐԱՍ հրատ., 1994 (- 64 էջ), էջ 53-56:

2. Տյաու-մյաու (պատմվածք), «Պիոներ կանչ», եռօրյա թերթ, Երևան, 1984, հունիսի 13, № 47:

Տե՛ս նաև Ս. Վարդանյան, **Արևածաղիկը**, պատմվածքներ, Երևան, Արևիկ հրատ., 1989 (- 40 էջ), էջ 10-13:

Ս. Վարդանեան, **Արևածաղիկը**, պատմուածքներ, Արեւմտահայերէնի վերածեց՝ Մաքրուհի Պ. Յակոբեան, Իսթանպուլ, ԱՐԱՍ հրատ., 1994 (- 64 էջ), էջ 25-28:

3. Հայոց մայրաքաղաքները. Երուանդաշատ (Գ), «Լրաբեր», Լոս Անջելես (Չհաջողվեց գրադարաններում և առցանց գտնել թերթի այն համարը,

որտեղ տպագրվել է Երվանդաշատին նվիրված հոդվածը, ուստի ենթադրվում է՝ 1983 թ. դեկտեմբերին կամ 1984 թ. հունվարին):

4. Հայոց մայրաքաղաքները. Արտաշատ (Դ), «**Լրաբեր**», շաբաթաթերթ, Լու Անջելես, 1984, Յունուար 21, № 16, էջ 5:

5. Հայոց մայրաքաղաքները. Տիգրանակերտ (Ե), «**Լրաբեր**», Լու Անջելես, 1984, Փետրուար 4, № 18, էջ 4:

6. Հայոց մայրաքաղաքները. Վաղարշապատ (Զ), «**Լրաբեր**», Լու Անջելես, 1984, Մարտ 10, № 23, էջ 6, 7:

7. Հայոց մայրաքաղաքները. Դուին (Է), «**Լրաբեր**», Լու Անջելես, 1984, մարտ 24, № 25:

8. Հայոց մայրաքաղաքները. Բազարան (Ը), «**Լրաբեր**», Լու Անջելես, 1984: (Զհաջողվեց թերթի համարը գտնել գրադարաններում կամ առցանց, ուստի տվյալները թերի են):

9. Հայոց մայրաքաղաքները. Շիրակաւան (Թ), «**Լրաբեր**», Լու Անջելես, 1984, ապրիլ 14, № 28, էջ 2:

10. Հայոց մայրաքաղաքները. Կարս (Մնացեալը յաջորդիւ), «**Լրաբեր**», Լու Անջելես, 1984, յունիս 2, № 35, էջ 2:

11. Հայոց մայրաքաղաքները. Կարս (Շար. նախորդ թիւէն եւ վերջ), «**Լրաբեր**», Լու Անջելես, 1984, յունիս 9, № 36:

12. Հայոց մայրաքաղաքները. Անի (Մնացեալը յաջորդ թիւով), «**Լրաբեր**», Լու Անջելես, 1984, յուլիս 7, № 40:

13. Հայոց մայրաքաղաքները. Անի (Շար. 2 եւ վերջ), «**Լրաբեր**», Լու Անջելես, 1984, յուլիս 14, № 41:

14. Հայոց մայրաքաղաքները. Երեւան (Մնացեալը յաջորդ թիւով), «**Լրաբեր**», Լու Անջելես, 1984, օգոստոս 25, № 45:

15. Հայոց մայրաքաղաքները. Երեւան (Շար. նախորդ թիւէն եւ վերջ), «**Լրաբեր**», շաբաթաթերթ, Լու Անջելես, 1984, սեպտեմբեր 1, № 46:

16. Sergej Vardanján, Arménska slovesnost, Preložil Jaroslav Reznik, “**Revue Svetovej Literatúry**”, Bratislava, 1984, № 1, էջ 129-143:

Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավայում հրատարակվող «**Revue Svetovej Literatúry**» (Համաշխարհային գրականության տեսություն) հանդեսում տպագրված Ս. Վարդանյանի «Հայկական բանահյուսություն» հոդվածը ներկայացնում է հայկական բանահյուսությունը հնագույն շրջանից սկսած, այնուհետև թարգմանաբար հրատարակվել են 10-ից ավելի հար-

սանեկան, օրորոցային, ողբի երգեր, 55 առած-ասացվածքներ: Սլովակերեն է թարգմանել Յարոսլավ Ռեզնիկը:

Այս մասին տպագրված անվերնագիր տեղեկությունը տե՛ս «**Հայրենիքի ձայն**», շաբաթաթերթ, Երևան, 1984, փետրվարի 29, № 9, էջ 7:

Տե՛ս նաև «**Գրքերի աշխարհ**», ամսաթերթ, Երևան, 1984, ապրիլի 22, № 4, էջ 7:

17. Համշենահայերի խոհանոցը, «**Հայաստանի աշխատավորուհի**», ամսագիր, Երևան, 1984, № 10, էջ 16-17-ի միջև «**Անվճար հավելված**» № 10:

Հոդվածում ներկայացվում են համշենահայերի պատմությունը, այնուհետև Կրասնոդարի երկրամասի Ադլեր քաղաքում բնակվող մանկավարժ, գրող Անդրանիկ Ջեթոնյանի գրառած 12 կերակրատեսակները:

18. Ավանդույթի հեղինակը ուսանողներն են, «**Հայաստանի աշխատավորուհի**», ամսագիր, Երևան, 1984, № 7, էջ 31-32, շապիկի 4-րդ էջ:

Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում (համալսարանում) կազմակերպվող ազգագրական համույթների փառատոնին Ադրդեական ԻՄ-ից եկած «**Ջենիկ**» և «**Թրթռուկ**», նաև Աբխազիայի ԻՀ-ից եկած «**Հրմշեծիկ**» պարի համույթների մասնակցության մասին է: Ամսագրի շապիկի 4-րդ էջում տպագրվել են պարախմբերի ելույթների գունավոր լուսանկարները (հեղինակ՝ Ս. Վարդանյան):

### Երրորդ բաժին

19. Արձագանքում են տպագրվածին. «**Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ**», «**Գարուն**», ամսագիր, Երևան, 1984, № 6 (210), էջ 42, 43:

ՀՄՄՀ Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարությունը տեղեկացնում է, որ 1984 և 1985 թթ. Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում (համալսարանում) արտամրցութային կարգով տեղեր կհատկացվեն Ռոստովի մարզի և Կրասնոդարի երկրամասի հայ շրջանավարտներին, Ռոստովի մարզին՝ տարեկան երկուսական տեղ հայոց լեզվի և գրականության ուսուցչի, իսկ Կրասնոդարի երկրամասի համար՝ տարբեր մասնագիտությունների գծով՝ 5-6 տեղ: Աբխազիայի հայկական դպրոցների շրջանավարտներին Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտներում կհատկացվի 32 տեղ (էջ 42):

Տպագրվել են Լենինգրադից ինժեներ Մեռոն Շիշմանյանի, Աբխազիայի Անուխվա գյուղից Լարիսա Մուսջանի, Նովոռոսիյսկից՝ մանկավարժ Վարսենիկ Հայրապետյանի նամակները: Ի դեպ, վերջինիս նամակում պատմվում է, թե ինչպես 1942 թ. գերմանացիները, գրավելով քաղաքը, սկսեցին հրեաներին ձերբակալել, նրանց հետ էլ սխալմամբ 8-րդ դպրոցի ուսուցիչ, դարաբաղցի Շահեն Գաբրիելյանին: Երբ պարզվում է թյուրիմացությունը, գերմանացիները նրան առաջարկում են, եթե հայտնի երկու հրեայի հասցե՝ իսկույն կազատվի: Բայց նա հրաժարվում է և զոհվում է հրեաների հետ:

Այս պատմությունը կարդալով՝ նշանավոր արձակագիր **Սերո Խան-զադյանը** գրել է պատմվածք՝ «**Հայր**» վերնագրով, պահպանելով Շահեն Գաբրիելյանի անունը, տե՛ս «**Գրական թերթ**», 1984, սեպտեմբերի 7, № 37, էջ 3:

20. Արայ Գալյաճեան, «Պարզունակ թիրիմացութեան պատճառով», «Հիմա բոլորովին մոռացել են իրենց...», «Չկան մանկավարժներ, չկան աշակերտներ», «**Պայքար**», շաբաթաթերթ, Բոստոն, 1984, նոյեմբերի 17, թիւ 7 (22.524), էջ 3, 4, 11:

Հոդվածագիրը վերապատմում և քննարկում է «Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ» հոդվածը («**Գարուն**», 1982, № 11, էջ 60-73) և նրա արձագանքները, որոնք տպագրվել են «**Գարունում**»՝ 1983 թ. № 9, էջ 24-25 և 1984 թ. № 6, էջ 42, 43:

1985

### **Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)**

1. Սերգեյ Վարդանյան, Հայոց մայրաքաղաքները (դպրոցական բարձր տարիքի համար), Երևան, «Սովետական գրող» հրատ., 1985 (- 168 էջ, 130 լուսանկար), չափսը՝ 70x90 1/16, տպաքանակը՝ 20.000:

Գիրքը նվիրված է դարերի ընթացքում Հայաստանի իրար հաջորդած 12 մայրաքաղաքների (Վան, Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ, Դվին, Բագարան, Շիրակավան, Կարս, Անի, Երևան) պատմությանը:

2. Կոշիկները (պատմվածք), «**Ծիծեռնակ**», ամսագիր, Երևան, 1985, № 1:

Ամսագիրը տպագրվել է որպես պատի օրացույց-պաստառ, առանց էջագրման:

Տե՛ս նաև Ս. Վարդանյան, **Արևածաղիկը**, պատմվածքներ, Երևան, Արևիկ հրատ., 1989 (- 40 էջ), էջ 5-7:

Ս. Վարդանեան, **Արևածաղիկը**, Արեւմտահայերէնի վերածեց՝ Մաքրուհի Պ. Յակոբեան, Իսթանպուլ, ԱՐԱՍ հրատ., 1994 (- 64 էջ), էջ 15-17:

3. Ամենաարագ թռչողը (պատմվածք), **«Շիճեռնակ»**, ամսագիր, Երևան, 1985, № 4, էջ 6:

Տե՛ս նաև Ս. Վարդանյան, **Արևածաղիկը**, պատմվածքներ, Երևան, Արևիկ հրատ., 1989 (- 40 էջ), էջ 7, 8:

Ի՞նչն է, որ կը թռչի ամէնէն արագ // Ս. Վարդանեան, **Արևածաղիկը**, Արեւմտահայերէնի վերածեց՝ Մաքրուհի Պ. Յակոբեան, Իսթանպուլ, ԱՐԱՍ հրատ., 1994 (- 64 էջ), էջ 19, 20:

Տե՛ս նաև՝ Ամենաարագ թռչողը, **«Գարուն»**, ամսագիր, Սիդնեյ, Ավստրալիա, 1999, № 10, էջ 12:

4. Արևածաղիկը (պատմվածք), **«Շիճեռնակ»**, ամսագիր, Երևան, 1985, № 7, էջ 6-7:

Տե՛ս նաև Ս. Վարդանյան, **Արևածաղիկը**, պատմվածքներ, Երևան, Արևիկ հրատ., 1989 (- 40 էջ), էջ 9, 10:

Ս. Վարդանեան, **Արևածաղիկը**, Արեւմտահայերէնի վերածեց՝ Մաքրուհի Պ. Յակոբեան, Իսթանպուլ, ԱՐԱՍ հրատ., 1994 (- 64 էջ), էջ 21-23:

Արևածաղիկ, **«Ալիք»**, թերթ, Թեհրան, 1994, ապրիլի 12, № 74, Մանկական էջ, էջ 1, 2:

5. Լեռնիդ Ենգիբարյանի «Վերջին ռաունդը», **«Գրական թերթ»**, Երևան, 1985, փետրվարի 1, № 5, էջ 4:

Ճանաչված մնչախաղաց-ծաղրածուի՝ 1984 թ. Երևանում ռուսերեն լույս տեսած «Последний раунд» (Վերջին ռաունդը) մանրապատումների և նովելների ժողովածուի մասին է:

6. Բժշկի երեք կյանքը, **«Ավանգարդ»**, երկօրյա թերթ, Երևան, 1985, հունիսի 26, № 76, էջ 3:

Լևոն Անանյանի «Բժիշկ Սաղյանի երեք կյանքը» (Երևան, **«Հայաստան»** հրատ., 1984) գրքի գրախոսականն է: Նշանավոր բժիշկ Գրիգոր Սաղյանը (1880, Շուշի-1937) եղել է Հայաստանում հակատուբերկուլոգային ծառայության կազմակերպիչը:

7. Համշենահայ փայտաշեն կառույցը. հայկական ժողովրդական ճարտարապետության ևս մեկ տարբերակ, «Կուլտուր-լուսավորական աշխատարան»

տանք» (1989 թ. հուլիս-օգոստոսից՝ «Մշակույթ»), հանդես, Երևան, 1985, № 3, էջ 6-11:

Հոդվածը Տրապիգոնի նահանգում, այնուհետև Կրասնոդարի երկրամասում և Աբխազիայում համշենահայերի կառուցած փայտաշեն տների և տնտեսական կառույցների մասին է:

8. Դյուցազնապատումի մի ճյուղը, «**Հայաստանի աշխատավորուհի**», ամսագիր, Երևան, 1985, № 5, էջ 38-39, № 7, էջ 22-24:

Հոդվածը նվիրված է Երկրորդ համաշխարհային պատերազմին Կրասնոդարի երկրամասի և Աբխազիայի հայության մասնակցությանը, որոնք տվել են Խորհրդային Միության 12 (հետագայում ճշտվեց՝ 13) հերոս: Հեղինակն այցելել է Սուխում, Ադլեր, Սոչի, Տուապսե, Մայկոպ, Կրասնոդար, Անապա, Նովոռուսիյսկ քաղաքներ:

9. Դրվագներ հերոսապատումի, «**Կուլտուր-լուսավորական աշխատանք**» (1989 թ. հուլիս-օգոստոսից՝ «Մշակույթ»), հանդես, Երևան, 1985, № 2, էջ 14-17:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ՌԴ Կրասնոդարի երկրամասի և Աբխազիայի հայերի մղած պայքարի մասին է:

10. Խաչքարերի քաղաքը, «**Կուլտուր-լուսավորական աշխատանք**» (1989 թ. հուլիս-օգոստոսից՝ «Մշակույթ»), հանդես, Երևան, 1985, № 5, էջ 5-9:

Արգամ Այվազյանի «Ջուդա» (Երևան, 1984) գրքի գրախոսությունն է: Հոդվածը որոշ կրճատումներով տե՛ս Արգամ Այվազյանի գիտական վաստակի գնահատանքներ, կազմող՝ Արգամ Այվազյան, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2021 (- 436 էջ), էջ 90, 91:

1986

### **Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)**

1. Կրիան (պատմվածք), «**Ծիծեռնակ**», ամսագիր, Երևան, 1986, № 8, էջ 4:

Նույնը տե՛ս նաև՝ Ս. Վարդանյան, **Արևածաղիկը**, պատմվածքներ, Երևան, Արևիկ հրատ., 1989 (- 40 էջ), էջ 39:

Ս. Վարդանյան, **Արևածաղիկը**, պատմուածքներ, Արևմտահայերենի վերածեց՝ Մաքրուհի Պ. Յակոբեան, Իսթանպուլ, ԱԲԱՍ հրատ., 1994 (- 64 էջ), էջ 39-41:

Ծիծեռնակի թռիչքը, անթուղգիա, կազմեց՝ Կատյա Սարվազյանը, Երևան, «Ծիծեռնակ» հրատ., 2003 (- 100 էջ), էջ 62:

«**Ուրախ գնացք**», մանկական ամսագիր, Երևան, 2010, № 12, էջ 34, 35:

Ռուսերեն թարգմ.՝ Черепашка // **Сказки и рассказы для взрослых и детей**, составитель и переводчик Роза Егиазарян, Ереван, изд. «Цицернак» (- 240 с.), с. 25, 26.

Черепашка, перевела Роза Егиазарян, «**Համշեն**», տասնօրյա թերթ, Սուխում, Արխագիա, 2013, ապրիլի 10, № 9-10, էջ 6:

2. Արջուկը (պատմվածք), «**Ծիծեռնակ**», ամսագիր, Երևան, 1986, № 10, էջ 10-11:

Տե՛ս նաև Ս. Վարդանյան, **Արևածաղիկը**, պատմվածքներ, Երևան, Արևիկ հրատ., 1989 (- 40 էջ), էջ 30-34:

Ս. Վարդանեան, **Արևածաղիկը**, պատմուածքներ, Արեւմտահայերէնի վերածեց՝ Սաքրուհի Պ. Յակոբեան, Իսթանպուլ, ԱՐՄԱ հրատ., 1994 (- 64 էջ), էջ 57-62:

3. Ազնիվ նվիրում, «**Գրական թերթ**», շաբաթաթերթ, Երևան, 1986, հունիսի 20, № 25, էջ 2:

Պ. Սևակի գրքերի, հոդվածների, լուսանկարների հավաքորդ Էդվարդ Մեհրաբյանի հավաքածուի մասին է:

4. Ո՞ւմ համար են հրատարակվում մատենագիտությունները, «**Գրքերի աշխարհ**», ամսաթերթ, Երևան, 1986, դեկտեմբերի 21, № 12, էջ 3:

Մատենագիտությունների փոքր տպաքանակների և վաճառքում չլինելու մասին է: Հոդվածից հատված. «Այսօր զբաղվել հայագիտությամբ կամ հասարակական գիտության մի այլ բնագավառով, առանց մշտապես ձեռքի տակ ունենալու մատենագիտական ժողովածուներ, անհնար է: Հիշենք, որ միայն մինչև 1920 թ. տարբեր երկրներում հրատարակվել են մոտ 1800 անուն հայերեն պարբերականներ և շուրջ 15 հազար անուն հայերեն գրքեր:

...Առհասարակ մատենագիտությունների տպաքանակը փոքր է, հիմնականում 120-200 օրինակ (հազվադեպ՝ 500 կամ ավելի), որի մի մասն ուղարկվում է գրադարաններին: Գրադարանային բաշխիչը սպասարկում է մոտ 4000 գրադարանների: Թվաքանական պարզ գործողությամբ կարելի է ճշտել, որ, ասենք, 200 օրինակ հրատարակված մատենագիտությունը, եթե նույնիսկ նրա ողջ տպաքանակը հատկացվի գրադարաններին, ապա այն կարելի է ձեռք բերել յուրաքանչյուր քսանից մեկում: Բայց սա միայն թվաբանորեն, իրականում մատենագիտություններ կան հարյուր գրադարա-

նից... մեկում, որովհետև դրանք առաքվում են միայն հանրապետության 41 ԳԿՀ-ներին»:

5. Կապույտ բազեն, «Գարուն», ամսագիր, Երևան, 1986, № 5 (233), էջ 16-19:

Խորհրդային Միության հերոս օդաչու, համշենահայ Մարտիրոս Նահույանի (1920-1945) մասին է:

6. Դիլիջան. քաղաքը և մշակույթը, «Կուլտուր-լուսավորական աշխատանք» (1989 թ. հուլիս-օգոստոսից «Մշակույթ»), հանդես, Երևան, 1986, № 5, էջ 5-23 (շարունակելի):

Օավալուն հողվածի առաջին մասը հիմնականում նվիրված է քաղաքային հին շինությունների պահպանմանը, գործող մի քանի թանգարանների, թատերական Դիլիջանին: Հատված. «Դիլիջանը այսօր իրավամբ համարվում է թանգարանների քաղաք. Երկրագիտական թանգարան, «Դիլիջան» պատմամշակութային արգելոց-թանգարան, Հայաստանի ժողովրդական արվեստի պետական թանգարանի մասնաճյուղ, Դիլիջանի պետական անտառարգելոցի թանգարան»:

«Առնվազն տարօրինակ է, որ երկու գլխավոր հատակագիծ է նախագծվում, առանց պարզելու, թե որ տներն են արժանի պահպանման: Չէ՞ որ այս հարցում միայն տների արտաքին բարեմասնություններով առաջնորդվելը քիչ է: Միթե՞ դժվար էր ճշտել, թե ո՞ր տներում են ժամանակին հանգրվանել մեր մշակույթի այս և շատ ուրիշ երախտավորներ: Մանավանդ որ, դեռ 1961 թ. գլխավոր հատակագծի նախագծման ժամանակ հնաբնակներից շատերը կարող էին պարզապես մատնացույց անել այդ տները:

Օրինակ՝ ինձ շատ քիչ ժամանակ պետք եկավ, որպեսզի նրանցից մեկից՝ Զավեն Մեհրաբյանից իմանայի, որ Լեոն սիրում էր հանգստանալ «քյոխվի գրասենյակի» երկրորդ հարկի տանը, այն այժմ էլ կանգուն է, և գտնվում է Մյասնիկյան փողոցում քաղգործումից երկու քայլ հեռու: Իսկ Ալ. Շիրվանզադեն հաճախ էր հանգրվանում Արշակ Անանյանի և Գրիգոր Ասլանյանի տներում, ցավոք, երկու տներն էլ ժամանակին քանդվել են: Ցանկության դեպքում, առանց դժվարության, կարելի է հուզող հարցերի պատասխանը գտնել Երկրագիտական թանգարանի և «Դիլիջան» պատմամշակութային արգելոցի արխիվներում: Կարող են օգնել նաև Հովհ. Թումանյանի, Պ. Պոռշյանի, Ավ. Իսահակյանի, Ե. Չարենցի և մյուս գրողների տուն-թանգարանների, Գրականության և արվեստի թանգարանի աշխատակիցները և շատ ուրիշներ» (էջ 8, 9):

7. Դիլիջան. քաղաքը և մշակույթը, «Կուլտուր-լուսավորական աշխատանք» (1989 թ. հուլիս-օգոստոսից՝ «Մշակույթ»), հանդես, Երևան, № 6, էջ 5-20:

Հատված հոդվածից. «Ինձ հանդիպած հնաբնականներից շատերն էին միաձայն նշում, որ «ամբողջ հոգով» ուրախանալու համար իրենք պարտական էին քաղաքի մշակութային կյանքի կազմակերպչին՝ Հարություն Վարդանյանին: Վանեցի գաղթականների խմբի հետ նա հասել էր Դիլիջան, այստեղ՝ որբանոցում, իր հասակակից որբ պատանիների ու աղջիկների հետ կազմակերպել երգի, պարի խմբեր ու կարծես ի հեճուկս ջարդերի ու սովի, ի հեճուկս որբության, նրանք հնչեցնում էին հայրենիքի երգն ու պարը: Այո՛, ոչ ջարդն ու գաղթը, ոչ այդ տարիների դժվարությունները չկարողացան Հարություն Վարդանյանի և նրա սերնդակից շատերի մեջ սպանել նրանց հոգում ապրող սերն առ արվեստը: Եվ ընտանիք ստեղծելուց հետո, երբ արդեն թվում էր, որ ընտանիքի հոգսը պետք է ստիպեր հրաժարվել պատանեկան երազներից, նա ընդունվում է Երևանի պարարվեստի ուսումնարան: Այդ տարիներին, մտերիմ ընկերոջ, հետագայում ճանաչված պարուսույց Հովարդ Մանուկյանի հետ պարում է Վահրամ Արիստակեսյանի ստեղծած հայկական ազգագրական պարի անսամբլում, որը 1928-ին Մոսկվայում՝ համամիութենական առաջին ստուգատեսում արժանացավ առաջին մրցանակի: Այնուհետև Հարություն Վարդանյանը ղեկավարում է Երևանի № 1 մշակույթի տան պարի անսամբլը, իսկ Հայֆիլիարմոնիայի կազմակերպումից հետո, մինչև 1934 թ.՝ Հայֆիլիարմոնիայի պարի պետական անսամբլը: Պահպանվել է այդ օրերի մի եզակի ազդագիր, որը պարարվեստի սիրահարներին հրավիրում է ներկա գտնվել Ասատուրի՝ կովկասյան պարերի խմբի, և Հարություն Վարդանյանի հայկական ազգագրական պարախմբի համերգին: «Միայն մեկ գաստրոլ, շքեղ պարերի երեկո» ժամանակի ոգով հայտարարում է արդեն խունացած ազդագիրը: Այդ տարիներին Հարություն Վարդանյանի ղեկավարած պարի պետական անսամբլը բազմաթիվ ելույթներ է ունենում Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի քաղաքներում ու գյուղերում: Դրան զուգահեռ նա պարի խմբեր է կազմակերպում նաև Լենինականում:

Թվում էր, թե էլ ի՞նչ է պետք արվեստագետին, որի առաջին իսկ քայլերը մայրաքաղաքային բեմահարթակներում հաջողություն, ճանաչում ու փառք են խոստանում: Բայց Հարություն Վարդանյանը թողնում է մայրաքաղաքն ու վերադառնում Դիլիջան, վերադառնում իր պարտքը հատուցե-

լու այն քաղաքին, որը Եղեռնի ծանր օրերին պատսպարել ու փրկել է նրան: Վերադառնում է և երկար տարիներ կազմակերպում Դիլիջանի մշակութային կյանքը, ղեկավարում մշակույթի տունն ու Ռոտոնդոն, շրջանի բոլոր գյուղերում կազմակերպում երգի-պարի խմբեր, թատերախմբեր, երգչախմբեր, ժողգործիքների անսամբլներ և այլն:

Այժմ դժվար, նույնիսկ անհնար է թվարկել այն ամենը, ինչ կարողացավ շուրջ երեք տասնամյակի ընթացքում Դիլիջանի համար անել Հարություն Վարդանյանը, և դրա լավագույն վարձատրությունը այն երախտագիտությունն ու հարգանքն է, որ նա վաստակեց իր անմնացորդ նվիրումով հարազատ դարձած քաղաքին» (էջ 19):

«Մինչև վերջերս Դիլիջանի ամեն տան քիվին ծիծեռնակների մի քանի բներ կային: Վաղ առավոտից մինչև ուշ երեկո օդն էին մկրատում բազմաթիվ ծիծեռնակներ, և ինձ թվում էր, որ եթե երբևէ որոշվի քաղաքի գերբը նկարել, ապա նրա վրա ծիծեռնակ կլինի պատկերված:

Դիլիջանում հիմա համարյա ծիծեռնակներ չկան, նրանք հեռացել են ու չեն վերադարձել: Ես հրաժեշտ եմ տալիս քաղաքին, հավատալով, որ հաջորդ վերադարձիս կրկին կհանդիպեմ ծիծեռնակներին, ու նաև իրենց գործի «ծիծեռնակներին», որոնք վստահ, որ աշխարհի ամենագեղեցիկ տեղը ծննդավայրն է, անմնացորդ նվիրումով կծառայեն քաղաքն անաղարտ պահելուն և նրա մշակութային կյանքը հարստացնելուն» (էջ 20):

### Երկրորդ բաժին (հարցազրույցներ)

8. «Այսուհետև ել զբաղվելու եմ հայագիտությամբ», հարցազրույց հունգարացի հայտնի արևելագետ և հայագետ, փիլ. գիտ. դոկտոր Էդմոնդ Շյուցի հետ, զրույցը վարեց Ս. Վարդանյանը, «**Կուլտուր-լուսավորական աշխատանք**» (1989 թ. հուլիս-օգոստոսից՝ «**Մշակույթ**»), հանդես, Երևան, 1986, № 1-2, էջ 13-17:

9. Մշակութային կամուրջներ. Հունգարիա-Հայաստան, հարցազրույց հունգարացի նշանավոր արևելագետ և հայագետ Էդմոնդ Շյուցի հետ, զրույցը վարեց Ս. Վարդանյանը, «**Սովետական արվեստ**», ամսագիր, Երևան, 1986, № 6, էջ 30-31:

10. Հայոց 12 մայրաքաղաքները, մեր աշխատակցի հարցերին պատասխանում է գրքի հեղինակը, «**Գրքերի աշխարհ**», ամսաթերթ, Երևան, 1986, մայիսի 18, № 5 (212), էջ 5:

Հարցազրույցից հատված. «Ինչպե՞ս հղացավ Հայաստանի մայրաքաղաքների մասին գիրք գրելու գաղափարը:

- Երբ մի առիթով թերթում էի «Հայ ժողովրդի պատմության» դասագիրքը, նկատեցի, որ նույնիսկ մեր ամենանշանավոր մայրաքաղաքներին գրքում ընդամենը մի քանի տող է հատկացված, իսկ որոշ մայրաքաղաքներ ընդհանրապես չեն հիշատակված: Դրանում, իհարկե, մեղավորը գրքի հեղինակները չեն: Մի թե՛ հնարավոր է 208 էջանոց գրքում իր լայնքով ու խորքով ներկայացնել աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի պատմությունը, նրա կազմավորման արշալույսից մինչև մեր դարի սկիզբը: Եվ ահա, դպրոցականների համար որոշեցի գրել այս գիրքը, որը 1983 թ. հատվածաբար տպագրվեց «Պիոներ» ամսագրում:

-Ի՞նչ նախապատմություն ունի Հայաստանի մայրաքաղաքների ուսումնասիրությունը:

-Հայոց այս կամ այն մայրաքաղաքի պատմությանը շատերն են անդրադարձել, գրվել են մեծարժեք գրքեր ու հոդվածներ: Առաջիններից էր Խաչատուր Աբովյանը, որը դեկաբրիստ Ն. Մուրավյովի եղբոր՝ գրող և պատմաբան Անդրեյ Մուրավյովի խնդրանքով, 1846 թ. ընդամենը երեք օրում գրել է Արտաշատի, Դվինի և Անիի համառոտ պատմությունը: Աբովյանի այս ձեռագիրը Կիևի Ս. Շնչենկոյի անվան գրադարանում 1959 թ. հայտնաբերել է Պիոն Հակոբյանը: Հետաքրքրական է, որ դեռ այն ժամանակ Աբովյանը ճիշտ է մատնանշել Արտաշատի և Դվինի տեղը, ինչը հետագայում հաստատեցին հնագիտական ուսումնասիրությունները:

... Գրքի ծավալը թույլ չի տվել ներկայացնել նաև Փոքր Հայքի, Ծովքի, Սյունիքի, Կիլիկիայի, Տաշիր-Ձորագետի և այլ հայկական թագավորությունների մայրաքաղաքները: Մայրաքաղաքների առատությունը ոչ միայն մեր դժվարին պատմության, այլև հայ ժողովրդի անկոտրում կամքի և կառուցողական հանճարի վկայությունն է»:

### Երրորդ բաժին

11. Ռաֆայել Իշխանյան, Հայոց մայրաքաղաքները, «Գարուն», ամսագիր, Երևան, 1986, № 12 (240), էջ 88, 89:

Երևանի պետհամալսարանի ճանաչված դասախոս, բ.գ.դ., պրոֆեսոր Ռաֆայել Իշխանյանը գրախոսել է Ս. Վարդանյանի «Հայոց մայրաքաղաքները» (1985) գիրքը: Հատվածներ գրախոսությունից. «Լավ գիրք գրելու համար վճռական է ճիշտ մտահղացումը կամ մտահղացման ճշտությունը,

թեև, իհարկե, դա գործի հիմքն է, դեռ շենքը պիտի կառուցվի: Մերգեյ Վարդանյանի մտահղացումը՝ գիրք գրել Հայաստանի մայրաքաղաքների մասին, ճիշտ է, նաև գեղեցիկ: Դժվար է ասել, արդյոք լավ է, թե վատ, որ հայերս շատ մայրաքաղաքներ ենք ունեցել, շատ ավելի, քան աշխարհի ամենախոշոր ազգերից որևէ մեկը: Ս. Վարդանյանն այդ լավ թե վատի մեջ չի, որ խորանում է, այլ իրավացիորեն ելնում է փաստերից, իրողություններից: Եղել են հայոց այդ մայրաքաղաքները, յուրաքանչյուրն իր ուրույն դեմքով ու ճակատագրով, դրանք հայոց պատմության շղթայի ոսկե օղակներն են, դրանցից յուրաքանչյուրի մասին առանձին-առանձին և բոլորի մասին մի գրքի մեջ արժե գրել: Կարևոր է, պետքական:

... Հեղինակը հսկայական աշխատանք է կատարել իր մտահղացումն իրագործելու ճանապարհին, ջանադիր է եղել, պատասխանատվության զգացումով, բարեխիղճ ու ճշգրիտ լինելու ձգտումով: Շատ գրքեր ու պարբերականներ է նա թերթել, նյութեր քաղել հայոց մայրաքաղաքների մասին: Եվ ահա մենք ունենք այդ նյութերն ի մի բերած և հայրենասերի ջերմ սրտի միջով անցած մի ասք մեր մայրաքաղաքների, նրանց ծննդի, կյանքի, և ավա՛ղ, բացի մեկից, մյուս բոլորի մահվան մասին»:

12. Շիրազ Մարտիրոսյան, փիլիսոփայական գիտ. թեկնածու, Պատմություն մեր մայրաքաղաքների մասին, «Հայրենիքի ձայն», շաբաթաթերթ, Երևան, 1986, հունիսի 18, № 26, էջ 6:

«Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքի մասին գրախոսությունից հատված. «Գրքեր կան, որոնց լույս տեսնելուց հետո ակամա մտածում ես, թե ինչպես է, որ դրանք մինչև այդ չեն եղել: Եվ դա այն պարզ պատճառով, որ նման հոգեպարար գրքերը միշտ եղել են մեզ հետ, մեր հոգում:

Նման, իրոք սպասված հրատարակություններից է Մերգեյ Վարդանյանի «Հայոց մայրաքաղաքները» գիրքը...

...Ո՞րն է մայրաքաղաքի, պետության գլխավոր քաղաքի գոյության խորհուրդը: Թերևս այն, որ երկիրը կարող է շատ քաղաքներ ունենալ, բայց առանց մայրաքաղաքի այն թրատված է: Կա մայրաքաղաքը, ուրեմն կանգուն է երկիրը, գոյատևում է պետությունը: Այս միտքն է, որ քաղում ես՝ ընթերցելով նորերս լույս տեսած այս գիրքը:

...Գրքի հեղինակը շնորհակալ գործ է կատարել՝ ընթերցողին հնարավորություն տալով մտքի թռիչքով բարձրանալու մեր հազարամյակների պատմության 12 պայծառ ու նվիրական գագաթները: «Հայոց մայրաքաղաքները» գիրքը ընդհանուր ճանաչողական արժեք ներկայացնելուց բացի,

մեզ խորհել է տալիս մեր պատմության փիլիսոփայության, նրա անընդհատության, հարատևումի խորհրդի մասին»:

13. Վ[ահան] Տեր-Ղազարյան, «**Հայոց մայրաքաղաքները**», «**Երեկոյան Երևան**», օրաթերթ, Երևան, 1986, դեկտեմբերի 27, № 298, էջ 3:

Արձակագիր և պատմաբան, վավերագրական ֆիլմերի սցենարների հեղինակ Վահան Տեր-Ղազարյանի (1950-2021) գրախոսությունը նվիրված է «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքին: Հոդվածից հատված. «Մատչելի, գեղարվեստորեն գրավիչ լեզվով ներկայացված են ոչ միայն քաղաքների նկարագրությունները, այլև գիտական փաստը, հնագիտական պեղման հաշվետվությունից քաղած եզրակացությունը:

...Ճշտորեն ներկայացված ու գնահատված են հայոց մայրաքաղաքների տեղն ու դերը, և ուրախալի է, որ հեղինակը դիպուկ կերպով նկատել է դրանցից ամեն մեկի առանձնահատկությունը, դրանցից ամեն մեկի խիստ ինքնատիպ, մյուսներից խստորեն տարբեր, գրեթե մարդկային անհատականության հասնող էությունը և, միաժամանակ, այն ընդհանուրը, որը կոչվում է ժողովրդի հավաքական կերպար, որով կանգուն է մնացել Հայոց Տունը»:

14. Հովհաննես Գրիգորյան, Դեգերող մայրաքաղաքների երկիրը, «**Գրական թերթ**», շաբաթաթերթ, Երևան, 1986, հոկտեմբերի 24, № 43, էջ 2:

Ճանաչված բանաստեղծ Հովհաննես Գրիգորյանի (1945-2013) հոդվածը նվիրված է «**Հայոց մայրաքաղաքները**» (1985) գրքին, հատված. «Մեծ եղավ զարմանքս, երբ մեկամյա ամենօրյա ընթերցանությունից հետո, հասնելով գրքի վերջին էջին՝ տեսա 164 թիվը: Ետ տվեցի էջը՝ ոչ մի սխալ չկար, այնտեղ էլ 163 թիվն էր: Իսկ տպավորությունն այնպիսին էր, թե ես ընթերցել եմ առնվազն 600-700 էջանոց մի աշխատություն: Եվ դրանից հետո պարզապես հարգանքով ես լցվում գրքի երիտասարդ հեղինակի նկատմամբ, որը կարողացել է «զսպել» իրեն, և վիթխարածավալ նյութը տեղավորել համեմատաբար կարճ ու սեղմ տարածության մեջ: Ինչ խոսք, այդ «զսպվածությունը» բավականին անդրադարձել է տեքստի ընթերցելիության վրա՝ յուրաքանչյուր բացվածքում չորս-հինգ տասնյակից անցնող թվեր, տարեթվեր, անուններ, ճակատամարտեր, փողոցներ, հուշարձաններ, տերմիններ, մեջբերումներ, վկայություններ... Բարեխիղճ ընթերցանության դեպքում մեկ օրում հազիվ թե չորս-հինգ էջից ավելի յուրացնես: Սա ընթերցանության դեպքում, իսկ այդ էջերից յուրաքանչյուրը գրելու համար քանի՞ օր է հարկավոր եղել հեղինակին... Սսենք միայն, որ Մերգեյ

Վարդանյանի ուսումնասիրած աշխատությունների թիվը մոտենում է նրա գրքի էջերի քանակին: Իսկ երբ կարդաք գրքի վերջում բարեխղճորեն թվարկված այդ աշխատությունների պատկառելի ցուցակը և տեսնեք, որ դրանց մեջ քիչ չեն այնպիսիք, որոնց ծավալն անցնում է 600-700 էջից, ապա շոշափելիորեն կզգաք, թե ինչ դժվարությամբ է գրվել այս գիրքը...

...Հեղինակը մեծ պատկառանքով է վերաբերվել սկզբնաղբյուրներին. նա իր բերած բոլոր թվերն ու փաստերը ներկայացնում է, հիմնավորում այդ ասպարեզների հեղինակությունների վկայություններով: Այդուհանդերձ, նա չի մոռացել, նույնիսկ շատ հաճախ իրարամերժ վարկածները, ձգտելով ցույց տալ ոչ միայն որևէ խնդրի ճշգրիտ պատասխանը, այլև այդ պատասխանին, ճշմարտությանը հասնելու ուղիները, մեզ էլ համակելով պատմականության, իրադարձությունների սթափ գնահատման սահմաններում մնալու ձգտումով: Դրա շնորհիվ գիրքը գիտական, ճանաչողական արժեք է ստանում, դառնալով յուրօրինակ տեղեկատու: Ընդ որում, այն ունի մի շատ կարևոր առավելություն ևս՝ գրված է արվեստով: Ասել է թե՛ դեպքերի պատմական հաջորդականությունը ներկայացված է ոչ միայն փաստերի գիտական տրամաբանությամբ, այլև՝ հոգեբանական իմաստավորմամբ ու անհրաժեշտության և հնարավորության դեպքում՝ խոսքի գեղարվեստականացմամբ: Եվ դա պատահական չէ, որովհետև հեղինակն այս գրքով, փաստորեն, փորձել է մեզ ներկայացնել հայ ժողովրդի քաղաքակրթության պատմությունը՝ գիտության և արվեստի սաղմնավորման ու զարգացման պատմությունը, և այստեղ արդեն առանց պատկերավոր ու գրավիչ լեզվի չես կարող յուր գնալ:

...Նա կարողանում է ընթերցողին հաղորդել հպարտությունը՝ մայր ժողովրդի ստեղծագործական ոգու թռիչքի ու անընկճելիության նկատմամբ և ձգտում է տրամաբանություն տեսնել անդառնալի թվացող կորուստներից, բազմաթիվ կոտորածներից ու Եղեռնից վերածնվելու խորհրդի մեջ»:

15. Վարդանուշ Թորոսյան, Հայոց մայրաքաղաքները, «Սովետական դպրոց», շաբաթաթերթ, Երևան, 1986, օգոստոսի 28, № 35, էջ 4:

Թերթի աշխատակցուհի Վ. Թորոսյանի հոդվածը նվիրված է «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքին:

16. Սարո Գյոդակյան, Հայոց 12 մայրաքաղաքների մասին, «Պիոներ կանչ», եռօրյա թերթ, Երևան, 1986, հունիսի 6, № 46:

Թերթի աշխատակից Ս. Գյոդակյանի հոդվածը «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքի մասին է:

17. Գրական կամուրջներ, «Եթերում է Երևանը» (Հեռուստատեսության և ռադիոյի հունվարի 20-26-ի ծրագիրը), շաբաթաթերթ, Երևան, 1986, հունվարի 18, № 4, էջ 2:

Հունվարի 21-ին (ժամը՝ 20.40) «Գրական կամուրջներ» հեռուստահաղորդաշարի (հեղինակ՝ գրող Կարեն Ա Սիմոնյան) հյուրն է Սերգեյ Վարդանյանը, որի «**Arménska slovestnost**» («Հայկական բանահյուսություն») հոդվածը և հայկական օրորոցայինների, խաղիկների, առած-ասացվածքների մի շարք նմուշներ պովակերեն թարգմանությամբ հրատարակվել են Բրատիսլավայի «**Revue Svetovej Literatúry**» (1984, № 1, էջ 129-143) («Համաշխարհային գրականության տեսություն») հանդեսում, թարգմանիչ՝ Յարոսլավ Ռեզնիկ:

1987

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Տունը մարդկանցով է կանգուն, «Գրական թերթ», շաբաթաթերթ, Երևան, 1987, մարտի 20, № 12, էջ 3, 4:

Իշխանուհի Մարիամ Թումանյանի և բարեգործ, հասարակական, քաղաքական գործիչ Սամսոն Հարությունյանի՝ Դիլիջանում գտնվող նախկին ամառանոցները պահպանելու անհրաժեշտության մասին է: Հոդվածից հատված. «Կանցնեն մի քանի ամիսներ և Ս. Թումանյանի ու Ս. Հարությունյանի նախկին ամառանոցները լրիվ կդատարկվեն: Կամայանան 20-30-ական թվականներին և հետագայում կառուցված սպիտակ պատերով, սյունազարդ պատշգամբներով և հրակարմիր կղմինդրե տանիքներով գողտրիկ մասնաշենքերը, որոնք ամառանոցների հետ արդեն ստեղծել են օրգանապես միահյուսված մի ողջ համալիր՝ օժանդակ շինություններով, ջրավազաններով, շատրվաններով ու արձաններով: Կսկսվի՞ արդյոք նրանց համար նոր կյանք, թե՞ ինչպես հաճախ է պատահում, առանց որևէ փաստ ու փաստարկ հաշվի առնելու, դրանք կքանդվեն, կհավասարվեն հողին: Հուսով ենք, որ այս տները, որոնք հյուրընկալել են Հովհ. Թումանյանին, Ալ. Շիրվանզադեին, Ա. Տիգրանյանին, Լեոյին, Ավ. Իսահակյանին, Ազնիվ Հրաչյային, Սիրանուշին, Հասմիկին, Հովհ. Աբեյանին, Հովհ. Ջարիֆյանին, Ի. Ալիխանյանին, Մոֆի Վարդիթերին, Սաթենիկ Աղամյանին, Ժամենին ու Արուս Ոսկանյանին, Հակոբ Հակոբյանին, Աղասի Խանջանին, Մահակ Տեր-Գաբրիելյանին, Ասքանազ Մռավյանին, Անատոլի Լոնաչարսկուն, Ֆրիտյոֆ Նանսենին, Մաքսիմ Գորկուն, Ե. Չարենցին և բազմաթիվ այլ նշանավոր գրողների, դերասանների, պետական ու մշակութա-









յին գործիչների, կպահպանվեն ու կտրամադրվեն Հայաստանի գրողների, ժուռնալիստների, նկարիչների, թատերական գործիչների միություններին՝ որպես ստեղծագործական տուն, մանավանդ որ Դիլիջանում գտնվող կուպոնատորների և կինոգործիչների համամիութենական ստեղծագործական տների հարևանությունը շատ օգտակար համագործակցություն է խոստանում: 1934 թ. լուսանկարներից դատելով, անցած կես դարի ընթացքում Մ. Թումանյանի և Ս. Հարությունյանի ամառանոցները համարյա փոփոխությունների չեն ենթարկվել»:

2. Երկու ցուցահանդես Սոչիում, «**Կուլտուր-լուսավորական աշխատանք**» (1989 թ. հուլիս-օգոստոսից՝ «**Մշակույթ**»), հանդես, Երևան, 1987, № 4, էջ 27:

Սոչիի Կիրառական արվեստի ցուցասրահում Հայաստանի պետական պատկերասրահի և կուլտուրայի մինիստրության ժողովրդական ստեղծագործության հանրապետական գիտամեթոդական կենտրոնի կազմակերպած երկու ցուցահանդեսի մասին է:

3. Կրոնափոխ համշենահայերին պատմա-ազգագրորեն ներկայացնելու փորձ // ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում 1987 թ. մայիսի 18-20 կազմակերպված հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված 1984-1985 թթ. ազգագրական և բանագիտական դաշտային հետազոտությունների հանրագումարին, զեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987 (-124 էջ), էջ 95-97:

Զեկուցումից քաղվածքներ. «4. Համշենցիների այս սուբէթնիկ խումբը բաժանված է տասից ավելի ազգակցական ենթախմբի: Ամենամեծը Կարախիբրահիմօղլիների (Կարախիբրահիմով) ազգատոհմն է, որի մի մասը (266 հոգի) համախմբվել է Ղազախստանի գյուղերից մեկում: Ազգատոհմի անվանադիրը Իբրահիմն է: Ըստ մեր կազմած տոհմաձառի, հետևում է յոթ սերունդ: Հիշում են նաև, որ իրենց նախկին ազգանունը եղել է Ճերմակցի (այսինքն՝ Ճերմակյան): Նրանք հիմնականում խարսոյաշ են և կապուտաչյա, չնայած քիչ չեն թխահերները: Մյուս ազգատոհմերում գերակշռում են թխահերները:

...8. Կրոնափոխ համշենահայերը խոսում են Համշենի բարբառի երկու՝ արդլեցիների և դուրցեվանցիների խոսվածքներով: Բուն Համշենի և թերևս մեր մյուս բարբառների համեմատությամբ քիչ են օտարամուտ բառերը»:

4. Լոդասենյակում (պատմվածք), «**Միժեռնակ**», ամսագիր, Երևան, 1987, № 1, էջ 12, 13:

Տե՛ս նաև Ս. Վարդանյան, **Արևածաղիկը**, պատմվածքներ, Երևան, Արևիկ հրատ., 1989 (- 40 էջ), էջ 14-16:

Լոդաուզանի Մը Լոզարանին Մէջ // Ս. Վարդանեան, **Արևածաղիկը**, պատմուածքներ, Արեւմտահայերէնի վերածեց՝ Մաքրուհի Պ. Յակոբեան, Իսթանպուլ, ԱՐԱՍ հրատ., 1994 (- 64 էջ), էջ 35-38:

С. Варданян, В ванной комнате // **Сказки и рассказы для взрослых и детей**, составитель и переводчик Роза Егиазарян, Ереван, изд. «Цицернак», 2013 (-240 с.), с. 27-30.

5. Սպիտակ թուղթը (պատմվածք), «**Օրծեռնակ**», ամսագիր, Երևան, 1987, № 10, էջ 8, 9:

Տե՛ս նաև՝ Ս. Վարդանյան, **Արևածաղիկը**, պատմվածքներ, Երևան, Արևիկ հրատ., 1989 (- 40 էջ), էջ 16-20:

Ճերմակ թուղթը // Ս. Վարդանեան, **Արևածաղիկը**, պատմուածքներ, Արեւմտահայերէնի վերածեց՝ Մաքրուհի Պ. Յակոբեան, Իսթանպուլ, ԱՐԱՍ հրատ., 1994 (- 64 էջ), էջ 29, 30:

6. Ստեղծագործում են քո հասակակիցները. Արխագիա, Գագրայի շրջան, գյուղ Լեսելիձե, «**Պիոներ կանչ**», եռօրյա թերթ, Երևան, 1987, մայիսի 15, № 39:

Չի նշված, հեղինակը Ս. Վարդանյանն է, որը պատմում է Լեսելիձե գյուղի հայկական դպրոցի մասին և թերթի ընթերցողներին կոչ է անում նամակագրական կապ հաստատել նրա 119 սաների հետ: Տպագրվել են նաև դպրոցի հասցեն և Լեսելիձե գյուղի աշակերտների հայերեն բանաստեղծությունները:

1988

### **Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)**

1. Հանելուկ, որը լուծում է պահանջում, «**Ավանգարդ**», երկօրյա թերթ, Երևան, 1988, հուլիսի 15, № 87, էջ 2:

Խորհրդային տարիներին Հայաստանից Ադրբեջանին անցած հողերի և սահմանի վերաձևումների մասին է: Նույն թեմայով տե՛ս «Առեղծված՝ ո՛չ, զավթված հողեր», «**Խորհրդային Հայաստան**», օրաթերթ, Երևան, 1989, հոկտեմբերի 18, № 224, էջ 3:

Նույնը՝ «**Ազգ**», թերթ, Երևան, 2021, հունիսի 25, № 24, էջ 8, 9:

Նույնը՝ «**Ազդակ**», օրաթերթ, Պէյրուս, 2024, 26 Յունիս, թիւ 83, էջ 5, 6:

2. Ամբողջացնել ժառանգության հրատարակությունը, «**Գրական թերթ**», շաբաթաթերթ, Երևան, 1988, փետրվարի 12, № 7 (2375), էջ 2:

Մեծանուն պատմաբան Լեոյի տասնհատորյակի հրատարակության թերությունների, սխալների և բացթողումների մասին է, նաև առաջարկվում է տասնհատորյակին ավելացնել ևս 2-3 հատոր և ընդգրկել դուրս մնացած կարևոր աշխատությունները՝ «Անցյալից» (1925), «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» (1934) գրքերը և «Հայերը համաշխարհային պատերազմի մեջ» ու «Մանուկ Հայաստան» անտիպ ուսումնասիրությունները:

3. Խոսքի տեր կինը (Ժող. հեքիաթի մշակում), «Միժեռնակ», ամսագիր, Երևան, 1988, № 1, էջ 7:

4. Հայրն ու տղան (Ժող. հեքիաթի մշակում), «Միժեռնակ», 1988, № 10, էջ 5:

5. Համշենցի հայերի լարային նվագարանները // ՀՄՄՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում 1988 թ. ապրիլի 19-21 կազմակերպված «Հայ ժողովրդի մշակույթի հետազոտման հարցեր (մշակույթ և լեզու)», երիտասարդ գիտնականների VIII կոնֆերանսի զեկուցումների թեզիսներ, Երևան, 1988 (- 100 էջ), էջ 86, 87:

Չեկուցումից հատվածներ. «2. Ըստ 1981-1987 թթ. Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի, իսկ 1984 և 1987 թթ. Ղազախստանի, Ուզբեկստանի և Կիրգիզիայի համշենհայերի շրջանում հավաքած դաշտային նյութերի, ամենատարածված նվագարանը քեմեչեն է: Այն, մասամբ և քեմոնան, լայն կիրառություն ունի համշենահայ գյուղերում՝ հարսանիքների և խնջույքների ժամանակ: Օրինակ՝ Կրասնոդարի երկրամասի Ադլերի շրջանի Ներքին Շիլովկա գյուղում 1987 թ. կար շուրջ 40 քեմեչեն և 10 քեմոնա, որոնց մեծ մասը պատրաստված է վերջին 1-2 տասնամյակում: Հետաքրքիր է, որ քեմեչեն և քեմոնա են ձեռք բերում նաև այն ընտանիքները, որոնցում նվագողներ չկան»:

«3. Եթե նախկինում, չնչին բացառություններով, նվագողն ինքն էր պատրաստում նվագարանը, ապա 1960-ական թվականներից նրանց մի մասը խորանում և մասնագիտանում է միայն քեմեչեն և քեմոնա պատրաստելու մեջ: Այդ թվականներից են սկսվում նաև դրանց կատարելագործման աշխատանքները, որ պայմանավորված էր լարային այլ գործիքների, առաջին հերթին՝ ջութակի մրցակցությամբ: Մինչ այդ քեմեչենները կոպիտ էին, ավելի նեղ ու կարճ, հնչողությունը՝ ցածր:

Հարստանում է նաև օգտագործվող փայտանյութերի տեսականին (թթենի, վայրի սալորենի, բոխի, կենի, սուսենի, նիվենի, սպիտակ ակացիա, դոս-

խենի, վայրի տանձենի, ծիրանենի, դեղձենի, բալենի, վայրի կիտրոնենի, վայրի խուրմա, թխկի և այլն)»:

«4. Քեմեչեի և քեմոնայի որակի բարելավման աշխատանքներում խիստ արդյունավետ էին նվազարանագործ վարպետներ Հակոբ Քոսյանի (Աղլերի շրջ., գ. Վեայոլոե), Ջավեն Ավջյանի (ք. Աղլեր) և երաժիշտներ Անդրանիկ Ջաբունյանի ու Արտավազ Խաչարյանի (երկուսն էլ՝ Աբխազիայի Գագրայի շրջ., գ. Գանթիադի) համատեղ որոնումները: Այս համագործակցությունից ծնված քեմեչեներն ու քեմոնաները տարածված են Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի համշենահայերի, մասամբ նաև՝ միջինասիական հանրապետություններում բնակվող հույների շրջանում (վերջիններիս միջոցով մի քանի նվազարան հասել են Հունաստան): Նվիրատվությունների և գնումների շնորհիվ դրանցից մի քանիսը տեղ են գտել նաև Հայաստանի թանգարաններում»:

#### Երրորդ բաժին

6. Ռուզան Բաղդասարյան, Հայոց աշխարհի կերոնները, «Սովետական դպրոց», շաբաթաթերթ, Երևան, 1988, ապրիլի 21, № 17, էջ 4:

Նվիրված է «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքին և № 155 դպրոցում պատմության ուսուցչուհի Լուիզա Կուբոյանի սաների ուժերով գրքից տարբեր մայրաքաղաքներին նվիրված հատվածների բեմականացմանը: Տպագրվել է Ս. Վարդանյանի լուսանկարը դպրոցականների հետ:

7. Պատմության մեծ խորհուրդը, «Պիոներ կանչ», եռօրյա թերթ, Երևան, 1988, ապրիլի 1, № 27:

Հոդվածն անստորագիր է, պատմում է (նաև լուսանկարներով) Երևանի № 155 դպրոցի հայ ժողովրդի պատմության խմբակի (դեկավար՝ ուսուցչուհի Լուիզա Կուբոյան) կազմակերպած ցերեկույթի մասին: Ազգային տարազներ հագած դպրոցականները Ս. Վարդանյանի «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքից ներկայացնում են Հայաստանի պատմության տարբեր դրվագներ:

8. Նորք, «Եթերում է Երևանը» (Հեռուստատեսության և ռադիոյի հունիսի 6-12 ծրագրերը), շաբաթաթերթ, Երևան, 1988, հունիսի 4, № 23, էջ 3:

«Նորք» գրական հեռուստահանդեսի հերթական թողարկման ազդագրից հատված. «Բանասեր-բանահավաք Սերգեյ Վարդանյանը կպատմի համշենահայության մղած ազգային-ազատագրական պայքարի հերոսներից մեկի՝ Բարունակ Թողաքյանի մասին: Կլսեք նաև իր՝ Թողաքյանի

խոսքը»: Հաղորդաշարի հեղինակ՝ քանաստեղծ Դավիթ Հովհաննես, հունիսի 7-ին, ժ. 20.50-22.00:

9. Նորք, «**Եթերում է Երևանը**» (Հեռուստատեսության և ռադիոյի նոյեմբերի 14-20-ի ծրագրերը), շաբաթաթերթ, Երևան, 1988, նոյեմբերի 12, № 46, էջ 6:

«Նորք» գրական հեռուստահանդեսի նոյեմբերի 15-ի (ժ. 22.50-00.10) թողարկման ազդագրից հատված. «Հանդեսի վերջում քանասեր-քանահավաք Սերգեյ Վարդանյանը կպատմի համշենահայ գրական-հասարակական գործիչ Անդրանիկ Զեյթունյանի մասին, կտա նրա հայրենանվեր գործունեության բնութագիրը: Հանդեսը վարում է հեղինակը՝ Դավիթ Հովհաննեսը»:

1989

### **Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)**

1. Սերգեյ Վարդանյան, Արևածաղիկը, պատմվածքներ (դպրոցական կրտսեր տարիքի համար), նկարիչ՝ Մ[իհրան] Քեչոյլյան, Երևան, «Արևիկ» հրատ., 1989 (- 40 էջ), չափսը՝ 84x90 1/16, տպաքանակը՝ 15.000:

Գրքում ընդգրկված է 13 պատմվածք՝ Վեճը, Կոշիկները, Ամենաարագ թռչողը, Արևածաղիկը, Տյաու-մյաու, Լողասենյակում, Սպիտակ թուղթը, Ծննդավայր, Վայրեջք, Թռիչք, Արջուկը, Արժանի թագավոր, Կրիան:

2. **Չայն համշենական**, ժողովածու, գիրք 3, քանաստեղծություն, արձակ, քանահյուսություն, կազմեց, խմբագրեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Սերգեյ Վարդանյանը, Երևան, «Խորհրդային գրող» հրատ., 1989 (- 252 էջ), չափսը՝ 84x108 1/32, տպաքանակը՝ 5.000:

Ժողովածուն ընդգրկում է Կրասնոդարի երկրամասում և Աբխազիայում բնակվող շուրջ երեք տասնյակ հայ գրողների արձակ և չափածո ստեղծագործությունների նմուշներ, հուշեր (Գուրգեն Խաչատրյանի՝ 1930 թ. Ռոստովում՝ Եղիշե Չարենցի, էջ 137-149, Անդրանիկ Զեյթունյանի՝ 1940 թ. Երևանում՝ Ավետիք Իսահակյանի հետ հանդիպումների մասին, էջ 150-154), 1915-1923 թթ. համշենահայերի հերոսամարտերի դրվագներ (Զորիկ Քեչիշյանի «Չանկիրի շցիների երգը», էջ 157-177, Միքայել Մինասյանի և Հարություն Կալայջյանի «Քուչուք Արթինը», էջ 178-198), ինչպես նաև գրքի 199-246-րդ էջերում՝ Ղրղզստանում, Ղազախստանում և Ուզբեկստանում կրոնափոխ համշենահայերից 1984 և 1987 թթ. Ս. Վարդանյանի գրառած 9 հեքիաթներն ու զվարճապատումները, նոտագրված 28 խաղիկներն ու մեկ

երգը՝ «Այլ, Խաուլա, այլ», նաև Խոփայի խոսվածքի (համշեցնակ) 245 բարբառային բառերի բառարանը:

3. Առաջաբան // **Չայն համշեցնական**, ժողովածու, գիրք 3, Երևան 1989 (254 էջ), էջ 13, 14:

Առաջաբանի հեղինակը՝ Ս. Վարդանյանը, համառոտ ներկայացնում է համշեցնահայերի պատմությունը մինչև 1980-ական թթ., կրոնափոխությունը, գաղթը, մշակույթը, կրթությունը, գրական կյանքը:

Տե՛ս նախորդ Պ 2 մատենագիտական նկարագրությունը:

4. Բանահավաքի կողմից // **Չայն համշեցնական**, ժողովածու, գիրք 3, Երևան, 1989 (- 254 էջ), էջ 201-207:

Բանահավաքը՝ Ս. Վարդանյանը, համառոտ ներկայացնում է Սև ծովի հարավային ափերի հայերի բռնի կրոնափոխության պատմությունը, հերոսամարտերը, գաղթը, Սև ծովի հյուսիսային ափերին հաստատվելը, հայկական գյուղերի և դպրոցների հիմնումը և այլն: Այնուհետև ներկայացվում են 1944 թ. Աջարիայի՝ Թուրքիային սահմանակից գյուղերի համշեցիների աքսորը Կիրգիզիա և Ղազախստան, 1984 և 1987 թթ. նրանցից իր կատարած բանահյուսական գրառումները:

Տե՛ս նախորդ Պ 2 և Պ 3 մատենագիտական նկարագրությունները:

5. Աշխարհի ամենավատ բանը (ժող. հեքիաթի մշակում), «**Միծեռնակ**», ամսագիր, Երևան, 1989, Պ 2, էջ 13:

6. Մենք պարտավոր ենք, «**Սովետական Հայաստան**», օրաթերթ, Երևան, 1989, փետրվարի 9, Պ 35, էջ 2, 3:

Հոդվածն արտատպել է Մոնրեալի (Կանադա) «**Հորիզոն**» շաբաթաթերթը, 1989, մարտի 6, թիւ 41 (505), էջ 7, 8, 10, 12:

Ներքին սփյուռքի խնդիրների, ԽՍՀՄ մյուս հանրապետություններում բնակվող հայերի հետ մշակութային կապի կոմիտե ստեղծելու անհրաժեշտության մասին է:

7. Մենք պարտավոր ենք, «**Հորիզոն**», շաբաթաթերթ, Մոնրեալ, Կանադա, 1989, մարտի 6, թիւ 41 (505), էջ 7, 8, 10, 12:

Արտատպվել է «**Սովետական Հայաստան**» թերթի 1989 թ. փետրվարի 9-ի համարից: Տպագրվել է նաև խմբագրական «Այո՛, պարտավոր ենք» վերնագրով:

Ավելացվել են ենթավերնագրեր՝ «Թե ինչպե՛ս հասանք դրան, դժուար չէ կռահել» (էջ 7), «Մեղադրանք՝ ազգայնամոլութեան մեջ» (էջ 8), «Ահա ինչի հասցրեց «լճացում» քնարական անուանումը ստացած ժամանակաշրջա-

նը» (էջ 8), «Հայաստանից արտագաղթեցնելու գաղափարը այնքան կենսունակ էր...» (էջ 10), «Օգնենք վերագտնելու աշխարհում ամենաթանկը՝ մայրենին» (էջ 10), «Այս ի՛նչ աշխարհ է, ի՛նչ ազգ ենք, ի՛նչ ճակատագիր» (էջ 10), «Ցավալին միայն այն չէ...» (էջ 10), «Մենք պարտաւոր ենք» (էջ 12), «Մենք պարտաւոր ենք այդ քայլն անել» (էջ 12):

8. Кто, если не мы? «**Комсомолец**», газета, издавалась трижды в неделю, Ереван, 1989, 12 сентября, № 109, с. 3.

«Սովետական Հայաստան» թերթի 1989 թ. փետրվարի 9-ի համարում տպագրված «Մենք պարտավոր ենք» հոդվածի թարգմանությունն է՝ որոշ կրճատումներով: Տպագրական բացթողման պատճառով չի նշվել, որ թարգմանիչը իմբագրության աշխատակցուհի Գ[ենոֆիա] Ռուբինյանն է, այդ պատճառով ընթերցողները թյուրիմացաբար նրան ընկալել են որպես հոդվածի համահեղինակ:

9. Առեղծված, ո՛չ, զավթված հողեր, «**Խորհրդային Հայաստան**», օրաթերթ, Երևան, 1989, հոկտեմբերի 18, № 244, էջ 3:

Հոդվածն արտատպվել է՝ «**Զարթոնք**», օրաթերթ, Պէյրուս, 1989, Նոյեմբերի 18 (թիւ 46), էջ 2 և նոյեմբերի 19 (թիւ 47), էջ 7, 8:

«**Ազգ**», շաբաթաթերթ, Երևան, 2021, հունիսի 25, № 24 (5664), էջ 8, 9:

«**Անկախ**», 2009-2018 թթ. շաբաթաթերթ, այնուհետև՝ անցանց շաբաթաթերթ, Երևան, 2024, 22 մայիսի, <https://ankahk.comhy/article/157628>:

Նույնը՝ «**Ազդակ**», օրաթերթ, Պէյրուս, 2024, 26 Յունիս, թիւ 83, էջ 5, 6:

Որոշ կրճատումներով ռուսերեն թարգմանությունը տե՛ս u Размышления над картой о «перекройке границ», «территориальных притязаниях» и одной арифметической головоломке..., «**Комсомолец**», газета, издавалась трижды в неделю, Ереван, 1989, 25 ноября, № 140, с. 2. (Նույն թեմայով տե՛ս u «Հանելուկ, որը լուծում է պահանջում», «**Ավանգարդ**», երկօրյա թերթ, Երևան, 1988, հուլիսի 15, № 87, էջ 2):

Խորհրդային տարիներին Հայաստանից Ադրբեջանին անցած տարածքների մասին հրապարակումը գրվել է արխիվային փաստաթղթերի օգտագործմամբ, հատված. «Լրագրային հոդվածի սահմաններում, հասկանալի է, անհնար է անդրադառնալ Հայաստանից զավթված բոլոր հողակտորներին: Վերջում նշենք մի կարևոր հանգամանք ևս: Եթե 1927 թ. հանրապետության տարածքը եղել է 30 հազար 247.6 քառ. կմ, ապա այժմ այն 29 հազար 742.5 քառ. կմ է: Բնական չէ՞ ենթադրել, որ այդ 505.1 քառ. կմ կորուստը պետք է փնտրել հենց հանրապետության սահմանների հիշյալ վերաձևումների մեջ: Համեմատության համար նշենք, որ ՀԽՍՀ Մասիսի

շրջանն ընդամենը 169 քառ. կմ է, Նաիրիի շրջանը՝ 303, Էջմիածնինը՝ 377, Սևանինը՝ 389 քառ. կմ: Ասենք նաև, որ Ադրբեջանական ԽՍՀ-ն 1926 թ. եղել է 85.363 քառ. կմ, 1949-ին՝ 85.700 քառ. կմ, իսկ 1970-ին՝ 86.600 քառ. կմ (Խորհրդային մեծ հանրագիտարան, հ.1): Նույն տեղում (էջ 247) նշված է նաև, որ Կասպից ծովի մակարդակի անկման շնորհիվ Ադրբեջանական ԽՍՀ-ն մեծացել է 3.5 հազար քառ. կմ-ով: Փորձենք թվաբանական պարզ գործողությամբ գլուխ հանել թվերի այս խառնաշփոթից: Անօգուտ է: Կրկին հարց է ծագում, իսկ ի՞նչ եղավ ՀԽՍՀ 505.1 քառ. կմ, եթե հայտնի է, որ Հայաստանը ծովափնյա երկիր չէ և ծովի մակարդակի բարձրացման հետևանքով 505.1 քառ. կմ տարածքը չէր կարող ջրատակ լինել: Մի բան պարզ է, որ օրը ցերեկով Հայկական ԽՍՀ-ն խորհրդավոր կերպով փոքրացել է, իսկ Ադրբեջանական ԽՍՀ-ն՝ մեծացել:

10. Սերկեյ Վարդանեան, Առեղծուած, ո՛չ, զաւթուած հողեր, «**Զարթօնք**», օրաթերթ, Պեյրուք, 1989, նոյեմբերի 18 (թիւ 46), էջ 2, նոյեմբերի 19 (թիւ 47), էջ 7, 8:

Արտաստպվել է «**Խորհրդային Հայաստան**» թերթի 1989 թ. հոկտեմբերի 18-ի համարից: Տպագրվել է «Հայրենի մամուլ» խորագրի ներքո, առանց աղբյուրը նշելու: Նույն թեմայով տե՛ս «Հանելուկ, որը լուծում է պահանջում», «**Ավանգարդ**», երկօրյա թերթ, Երևան, 1988, հուլիսի 15, № 87, էջ 2:

Այլ արտաստպությունները տե՛ս նախորդ՝ 9-րդ մատենագիտական նկարագրության մեջ:

11. Размышления над картой о «перекройке границ», «территориальных притязаниях» и одной арифметической головоломке..., «**Комсомолец**», газета, издавалась трижды в неделю, Ереван, 1989, 25 ноября, № 140, с. 2.

Խորհրդային տարիներին Հայաստանից Ադրբեջանին անցած հողերի և սահմանի վերաձևումների մասին է, «Խորհրդային Հայաստան» թերթի 1989 թ. հոկտեմբերի 18-ի համարում տպագրված «Առեղծված, ո՛չ, զավթված հողեր» հոդվածի կրճատ տարբերակն է:

12. Հապաղել չի կարելի, «**Երեկոյան Երևան**», օրաթերթ, Երևան, 1989, մարտի 3, № 54, էջ 2:

Սպիտակի ահավոր երկրաշարժից տուժած գյուղերը և քաղաքները վերականգնելու հետ կապված խնդիրների մասին է:

13. Որոնել ազգայինն ու ժամանակակիցը, «**Մշակույթ**», հանդես, Երևան, 1989, հուլիս-օգոստոս, № 1, էջ 14, 15:

Տպագրվել է նաև «**Քաղաքական գրուցակից**» հանդեսում, Երևան, 1990, № 4, էջ 18-20:

Եղեռնի, ստալինյան գնդակահարությունների և աքսորների, Երկրորդ համաշխարհային պատերազմի, Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակի համար առաջարկվում է գտնել հուշարձանների նոր ձևեր, որոնք կլինեն ազգային և ժամանակակից:

14. Մխավելու իրավունք չունենք, «**Սովետական Հայաստան**», օրաթերթ, Երևան, 1989, մարտի 7, № 57, էջ 3:

Աղետի գոտին վերականգնելու և հիշատակի կոթողներ կառուցելու մասին է:

15. Կեղծիքների շրջապտույտ, «**Խորհրդային Հայաստան**», օրաթերթ, Երևան, 1989, օգոստոսի 22, № 199, էջ 3:

Հոդվածն անդրադառնում է ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի և Մշակույթի մինիստրության «**Советский музей**» հանդեսի 1989 թ. 3-րդ համարում (մայիս-հունիս) տպագրված դազախ ճանաչված բանաստեղծ Օլժաս Սուլեյմենովի և աղբրեջանցի բանաստեղծ ու գրաքննադատ Վալեխ Ռզանի գրույցի հակահայ դրսևորումներին:

### Երրորդ բաժին

16. Ս. Խանգաղյանն իր «Երկրորդ մերժումը» ենթավերնագրով հրապարակման մեջ անդրադառնում է նաև Ս. Վարդանյանի «**Մենք պարտավոր ենք**» («Սովետական Հայաստան», 1989, փետրվարի 9) հոդվածին. «...Կարդացի Սերգեյ Վարդանյանի համարձակ ու սրտացավ հոդվածը՝ ներքին սփյուռքի հայության ցավերի ու տառապանքների մասին:

...Սերգեյը... ազնվական տղա է՝ պատմաբան, խիզախ: Եվ վերջապես՝ 1989-ի փետրվարի 9-ի «Խորհրդային Հայաստան» թերթում երբ կարդացի նրա ընդարձակ հոդվածը, հայի այդ զավակը աչքիս գնաց մեր մեծերին հասավ: Ինչպիսի՛ ցավ, ազգային ինչպիսի՛ արթնացման խթան: Հարցեր է բարձրացնում, որոնք խեղդված էին մեզանում ամբողջ վաթսուն-վաթսունհինգ տարի շարունակ:

... Հայտնի է, որ, ինչպես նաև գրում է Վարդանյանը ասածս թերթում, միայն 1918-1923 թթ. ներկայիս Հայաստանի տարածքում հայերի թիվը նվազել է 523 հազարով: Ինչ ձևով էլ ուզում են դատեն, սա կատարյալ ցեղասպանություն էր: Հիշենք. Հայաստանի Կենտրոնական 1923-ին ահեղ վճիռ կայացրեց՝ թուրքի ձեռքից փախած հայերին արգելվում է Հայաստան

վերադառնալ: Հիշենք՝ 1927-ին ՀԽՍՀ կառավարությունը որոշում է հանրապետության բնակչության մի մասին «Նրա սահմաններից դուրս՝ ԽՍՀՄ-ի ազատ հողային ֆոնդերում տեղավորել»: Սա կատարյալ աղետ էր: Հիշում եմ՝ տասնյակ հազարավոր գաղթական դժբախտ հայերի քշեցին դեպի հյուսիս: Նրանք ողբալով գնացին ու ... այլևս, շատ քչերի բացառությամբ, չվերադարձան տուն, կորան, գնացին... Հապա 1949-ի ոճրագործությունը: Դրա մասին գրել եմ:

Սերգեյ Վարդանյանը նաև հիշատակում է, թե միայն 1970-84 թվականներին, տնտեսական, նյութական, բարոյական ու էլի այլ կարիքներից ու հալածանքներից ստիպված, մեր փոքրածավալ հայրենի հանրապետությունից ԽՍՀՄ տարբեր կողմեր են գաղթել 161 հազար հոգի: Սա ընդամենը 15 տարում: Աղե՛տ էր: Այո՛: Հիմա հարցնենք, ասածս 1920 թվականից մինչև 1984-ը հայ ժողովուրդը սրտացավ, ազգային պետականություն ունե՛ր: Ո՛չ: Չունե՛ր: Ժողովրդի նկատմամբ կա՞ր տարրական հոգատարություն: Չկա՛ր» (էջ 5):

Նույն հոդվածը ամբողջությամբ արտատպվել է «**Ձայն համշենական**» թերթի 2012 թ. № 3-4 (92-93) միացյալ համարում՝ էջ 2-5, Ս. Վարդանյանի «**Ե՛րբ կբացվեն հույսի դռները**» առաջաբանով (էջ 2):

17. Кто, если не мы? Отклики на статью, «**Комсомолец**», газета, издавалась трижды в неделю, Ереван, 1989, 19 октября, № 123, с. 2.

«**Комсомолец**»-ի 1989 թ. սեպտեմբերի 12-ի համարում տպագրված հոդվածի արձագանքներն են, հրատարակվել են Ուկրաինայից՝ Լվովի «Աղբյուր» հայկական մշակութային միության վարչության նախագահ Ալեքսանդր Աբրահամյանի «Быть ли армянской церкви во Львове?», Երևանից՝ երկրաբանական գիտ. թեկնածու Գ. Թորոսյանի «Вспомним о наших собратьях», Մոսկվայից՝ հայոց լեզվի ուսուցիչ Ե[նովք] Լազյանի «Внутрисоюзная диаспора: чем ей помочь?», Հյուսիս-Օսեթական ԻՉ մայրաքաղաք Օրջոնիկիձեում ծնված և Երևանում բնակվող ինժեներ Գ. Մխիթարյանի «Иного пути нет...», Երևանից՝ Ս. Նազարեթյանի «Возможно, стану одним из них...», Վրաստանից՝ Ջավախքի Բոգդանովկա քաղաքից լրագրող և մանկավարժ Կ. Բոդյանի «Вместе-мы сила», Ուկրաինայի Անդրկարպատյան մարզում զինվորական ծառայության մեջ եղած, Երևանում բնակվող Վ. Բադրաշարյանի «Под маской интернационализма» վերնագրերով նամակները:

18. Այո՛, պարտաւոր ենք, «**Հորիզոն**», շաբաթաթերթ, Մոնրեալ, Կանադա, 1989, մարտի 6, թիւ 41 (505), էջ 7:

«Սովետական Հայաստան» թերթում տպագրված Ս. Վարդանյանի «Մենք պարտավոր ենք» հոդվածի վերատպության առթիվ գրված անստորագիր խմբագրականն է: «Հորիզոնի» խմբագիրը 1979-1997 թթ. եղել է Կիրո Մանոյանը: Հատված խմբագրականից. «Հայրենի մտաւորականներէն Մերգէլ Վարդանէանի խիստ կարեւոր յօդուածը, լոյս տեսած «Սովետական Հայաստան» օրաթերթի 9 փետրւարի թիւին մէջ (տեսնել ստորեւ) մեր ուշադրութիւնը կը գրաւէ մէկէ աւելի պատճառներով:

Նախ եւ առաջ ան կու տայ բաւականին ամբողջական, բայց եւ տխուր պատկերը խորհրդահայ սփիւռքին, որ իր թիւով նոյնքան, եթէ ոչ աւելի մեծ է որքան մե՛ր Սփիւռքը, եւ որ սակայն արագօրէն ուժանալու վտանգին առջեւ կը գտնուի-շատ աւելի արագ քան մենք-եւ որ զրկուած է ինքնապահպանման գրեթէ բոլոր միջոցներէն:

Արդարեւ, Վարդանէան, որ տարիներէ ի վեր կ'ուսումնասիրէ Խորհրդային Միութեան տարածքին ցրուած հայաթեան վիճակը, ահազանգ մըն է, որ կը հնչեցնէ, արձագանգելով իրմէ առաջ այլ առիթներով արտայայտուած զանազան գրողներու եւ հրապարակագիրներու մտահոգութիւնները, այլեւ մեր ալ բազմիցս արտայայտած վախերն ու բողոքները, բայց անցնելով բոլորէս ալ առաջ եւ տալով այնպիսի մանրամասնութիւններ, որոնք միայն մէկ բան ցոյց կու տան - թէ ՀԱՅԱՍՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԻԱՅՆ ԹՈՒՐՔԻՈՅ ՅԱՏՈՒԿ Չ'ԵՂԱԾ. Ստալինի, ապա եւ Բրեժնեւի իշխանութեանց երկա՛ր տարիներու ընթացքին հետեւողական կերպով տարուած է հայաթիւնը Հայաստանէն հեռացնելու եւ հեռաստաններու մէջ իր էութենէն ու ազգային դիմագիծէն զրկելու մաքիաւելական մէկ քաղաքականութիւն, որուն մասին այսպէս հրապարակաւ ու համապարփակ կերպով արտայայտուելու թերեւս առաջին առիթն է, որ կը տրուի հիմա:

Հայրենի գիտնականը անշուշտ չի բաւականանար ախտաճանաչում կատարելով: Օգտուելով գորբաչովեան հրապարակայնութեան եւ վերակառուցման ստեղծած հնարաւորութենէն, հիմնուելով մանաւանդ անցեալ սեպտեմբերին Հայաստանի Համայնավար կուսակցութեան Կեդրոնական կոմիտէի կայացուցած լիագումար ժողովի տրամադրութիւններէն, ան նաեւ յստակ առաջարկ կը դնէ, որ կազմուի ներքին սփիւռքի հարցերով եւս զբաղող մշակութային կապի կոմիտէ, որ անյապաղ գործի անցնի ու փրկութեան ձեռք մէկնէ դպրոցներէ, ուսուցիչներէ, դասագրքերէ, մշակութային տուններէ եւ ձեռնարկներէ, նոյնիսկ մամուլէ - եւ հայրենի մամուլն

իսկ ստանալու հնարատրությունն է - գրկուած շուրջ երկու միլիոն հայաթեան:

Վարդանեանի թուած ցաւերը ու հայութեան կրած գրկանքները աւելի քան ծանօթ են մեզի, տասնամեակներով մենք մեր «իւղով տապկուած» սփիւռքահայաթեանս, այդ իսկ պատճառաւ անհնար չէ, որ մեր ունեցած փորձառութիւնը, մեր կազմակերպական գիտութիւնը, մեր «քարէն հաց հանելու» կարողութիւնները կարենան մեծապէս նպաստել մեր խորհրդացրիւ եղբայրներուն ու քոյրերուն հայապահպանման գործին: Այդ իսկ պատճառաւ, Հայրենիք-Սփիւռք ներկայ սերտացող կապերու այս շրջանին, թերեւս լաւ կ'ըլլայ որ Սփիւռքը, Հայրենիքին հետ ձեռք ձեռքի մասնակից դառնայ նոր սկսուելիք աշխատանքին-անշուշտ յուսալով որ Մերգէլ Վարդանեանի ըսածները չեն մնար ձայն բարբառոյ յանապատի, ընդհակառակն, հայրենի իշխանութեանց անմիջական ուշադրութեան առարկան կը դառնան, եւ Արցախի հայութեան տրուելիք օժանդակութեան եւ Մեծ Երկրաշարժէն ետք Խ. Հայաստանի հիւսիս-արեւմտեան շրջաններու վերակառուցման եւ ընդհանրապէս Հայաստանի տնտեսական, քաղաքական թէ մշակութային զարթոնքին հետ՝ կը հանդիսանան հայութիւնը յուզող այլեւ զօրաշարժի ենթարկող գլխաւոր հիմնահարցերը:

19. Անդրադարձ. «Մենք պարտավոր ենք», «**Խորհրդային Հայաստան**», օրաթերթ, Երևան, 1989, օգոստոսի 25, № 201, էջ 2:

«**Սովետական Հայաստան**» օրաթերթի 1989 թ. փետրվարի 9-ի համարում տպագրված «**Մենք պարտավոր ենք**» հոդվածի արձագանքներից հրապարակվել են հատվածներ ՀԽՍՀ ԳԱ Կենսաքիմիայի ինստիտուտի 45 աշխատակիցների, Սիրավան Սևունու (գրող, լրագրող, ք. Սուխում), Ժորա Խաչիկյանի (տեխնիկ-շինարար, ք. Արարատ), Արամայիս Դավթյանի (ԼՂԻՄ, Հաղորդ), Հ. Բաբաջանյանի (ք. Պյատիգորսկ), Մանաս Նազարյանի (ուսուցիչ, Երևան), Ա. Ուստյանի (ծնունդով Աբխազիայի Արագիչ գյուղից, ք. Երևան), Գևորգ Թորոպյանի (երկրաբանական գիտ. թեկնածու), Գառնիկ Մկրտչյանի (պատմաբան, Երևան), Ս. Համազյանցի (Հրագրանի ՊՇԷԿ-ի իրավախորհրդատու), Պ. Չիլինգարյանի (ք. Չարենցավան), Ալբերտ Գրիգորյանի (Ղափանի շրջան, գյուղ Առաջաձոր), Վարդան Պետրոսյանի (ք. Կալուգա) նամակներից:

Ներկայացվում են գրող, լրագրող Բաղդասար Թովիկի, բ.գ.դ., պրոֆեսոր Վարազ Առաքելյանի ու դոցենտ, արվեստաբան Աղասի Սահակյանի համատեղ նամակից հատվածներ. «Չափազանցություն չի լինի ասել, որ

Մերգեյ Վարդանյանի «Մենք պարտավոր ենք» հոդվածի ընթերցումից հետո մեզանից շատերն ասես նոր զարթնած և իրենց համար անտեսանելի նոր աշխարհի են հաղորդակից դառնում: Ջարմանալի է, այնպես չէ՞: Մենք շատ լավ գիտենք, թե սուլթանհամիդյան ու իթթիհատական թուրքերի աննախընթաց ցեղասպանության հետևանքով «ի սփյուռու աշխարհի» ցրված մեր ժողովրդի ծվենների ո՞ր մասը ո՞ր ցամաքամասում կամ անկյուններում է ապաստանել: Թվերն էլ են հայտնի: Գիտենք նույնիսկ, թե Մեծ եղեռնից 74 տարի անց իրենց աշխատասիրության ու գործարար հատկանիշների շնորհիվ որ երկրում համաշխարհային փառք ու անուն վաստակած որքան գիտնական, գրող, երգիչ, կամ միլիոնատեր ունենք, սակայն ի ցավ և ի զարմանք մեզ՝ չգիտենք, թե մեր շրջապատում Խորհրդային Միության լայնածավալ տարածքում որքան հայեր են ապրում:

Կարդում ես Մերգեյ Վարդանյանի հոդվածը և աչքերիդ չես հավատում, որ այդ տողերի միջից առաջդ են ցցվում հայորդիներ, որոնք մեր երկրում ցավով ու արցունքով են հիշում, որ հայ են ու կակիծով արձագանքում, որ ոչ միայն անհաղորդ են իրենց ազգի գիր ու գրականությանը, այլև մայրենի լեզվին:

...Գործը տեղից շարժելու և արդյունավետ դարձնելու համար միայն մեկ միջոց կա, այդպիսին առաջարկում է հենց ինքը՝ հոդվածի հեղինակը»:

20. Ալեքսանդր Մարգարյան, Մայրենի լեզվի շահերի պահանջով, **«Խորհրդային Հայաստան»**, օրաթերթ, Երևան, 1989, հունիսի 18, № 149, էջ 3:

Բ.գ.դ., պրոֆեսոր Ա. Մարգարյանն իր ընդարձակ հրապարակման մեջ հիշատակում է նաև Ս. Վարդանյանի «Մենք պարտավոր ենք» (**«Սովետական Հայաստան»**, 1989, փետրվարի 9) հոդվածը և վերապատմում է մեկ հատված. «Ցավով պետք է նշել հատկապես երկու տխուր իրողություն՝ առաջին, խորհրդային իշխանության օրոք, ինչպես «Խորհրդային Հայաստան» թերթի ս. թ. փետրվարի 9-ի համարում տպագրված՝ «Մենք պարտավոր ենք» խորագրով հոդվածում (հեղինակ՝ Մերգեյ Վարդանյան) է նշվում, ՀԽՍՀ-ի սահմաններից դուրս՝ բազմազան վայրերում, գյուղերում ու քաղաքներում գտնվող հայկական դպրոցները մեկը մյուսի հետևից փակվել են ու վերացել, «դրսում» ապրող հայերը կամ հայերի հոծ զանգվածները զրկվել են մայրենի լեզվով հաղորդակցվելու, ազգային մշակույթը պահպանելու և համապատասխանաբար էլ այն զարգացնելու տարրական պայմաններից ու հնարավորություններից»:

21. Ֆ[ելիքս] Ենգիբարյան, Միաբանության և ազգապահպանության մտահոգությամբ, «**Խորհրդային Ղարաբաղ**», օրաթերթ, Ստեփանակերտ, 1989, նոյեմբերի 29:

«Արմենայրեսի» հատուկ թղթակցի հոդվածը Սոչիի «Սևան» հայկական մշակութային կենտրոնի հիմնադիր ժողովի մասին է, որը տեղի է ունեցել Լազարևսկի շրջանային մշակույթի պալատում: Տարբեր հանրապետություններից և քաղաքներից եկած բազմաթիվ պատգամավորների և հյուրերի առաջ «Սև ծովի առափնյա գոտու համշենահայության մասին պատմական ակնարկով հանդես եկավ Հայաստանի մշակույթի ֆոնդի և կուլտուրայի մինիստրության «Մշակույթ» հանդեսի գիտական խմբագիր Ս. Վարդանյանը»:

«Արմենայրեսի» սույն թողարկումը, հավանաբար, հրատարակել են այլ թերթեր ևս:

22. Rüdiger Benninghaus, *Zur Herkunft und Identität der Hemşinli // Ethnic Groups in the Republic of Turkey*, compiled and edited by Peter Alford Andrews with the assistance of Rüdiger Benninghaus, Dr. Ludwig Reichert verlag, Wiesbaden, 1989, pp. 475-497.

Գերմանիայի Վիսբադեն քաղաքում 1989 թ. լույս տեսած “Ethnic Groups in the Republic of Turkey” («Էթնիկ խմբերը Թուրքիայի Հանրապետությունում») գիտական ժողովածուում հրատարակված ճանաչված արևելագետ Ռյուդիգեր Բեննինգհաուզի «Համշենցիների ծագման և ինքնության շուրջ» գերմաներեն հոդվածի 477, 482, 485, 492, 493, 497-րդ էջերում հղումներ են արվում Փարիզի «Ցառաջ» օրաթերթում տպագրված Ս. Վարդանյանի «Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ» հոդվածին (1983, փետրվարի 12-13, 15, 16), որն արտատպվել է «Գարուն» ամսագրի 1982 թ. № 11-ից (էջ 60-73):

Տե՛ս նաև Ռ. Բեննինգհաուզի հոդվածի թուրքերեն թարգմանությունը, Rüdiger Benninghaus, *Hemşinlilerin Kökeni ve Kimliği (Almancadan çeviren: Manuela Görgü-Ali Turan Görgü)*, “**Folklor/Edebiyat**”, dergisi, Ankara, 2003, № 4, cilt 9, sayı 36, s. 173-183.

23. Ժ[աննա] Գասպարյան, Նավասարդ, «**Եթերում է Երևանը**» (Հեռուստատեսության և ռադիոյի հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 5-ի ծրագրերը), շաբաթաթերթ, Երևան, 1989, հոկտեմբերի 28, № 44, էջ 4:

«Նավասարդ» հեռուստահաղորդաշարի հերթական՝ հոկտեմբերի 31-ի (ժ. 20.40-22.00) թողարկման թեմաներից մեկը նվիրված է 1920-30-ական թթ. ՀԽՍՀ-ից Ադր. ԽՍՀ-ին այլևայլ միջոցներով անցած տարածքների խնդրին: Հաղորդման մասին պատմող ազդագրում ներկայացվել են հյու-

րի՝ Սերգեյ Վարդանյանի «Առեղծված ճ, ո՛չ, զավթված հողեր» («Խորհրդային Հայաստան», 1989, հոկտեմբերի 18) հոդվածից փաստեր: Հաղորդումը վարում է բանաստեղծ Արևշատ Ավագյանը:

24. Для широкого читателя, интервью с главным редактором издательско-производственного объединения «Парберакан» Эдвардом Сафаряном, беседу вела К. Халатова, «Գրքերի աշխարհ», ամսաթերթ, Երևան, 1989, օգոստոս, № 8, էջ 6:

Հատված հարցազրույցից. «- Что в ближайших издательских планах «Парберакан» могло бы привлечь внимание читателей?

-...Намечается издать очень познавательную книгу Сергея Вартамяна о столицах Армении, книгу, посвященную амшенским армянам».

1990

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Ներքին սփյուռք. մշակույթ և ազգապահպանում, նախամուտք, «Մշակույթ», հանդես, Երևան, 1990, հունվար-փետրվար, № 1, էջ 15-19:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին Ռուսական կայսրությունում և ԽՍՀՄ-ում սփռված հայերի մասին է:

2. Ներքին սփյուռք. մշակույթ և ազգապահպանում. կրթարաններ (շարունակելի), «Մշակույթ», հանդես, Երևան, 1990, № 2-3, մարտ-հունիս, էջ 66-73:

Թեմայի առումով նախորդ համարում տպագրված հոդվածի շարունակությունն է: Այս հրապարակման վերջում նշված է՝ շարունակելի, բայց շարունակությունը չի տպագրվել: Ռուսական կայսրությունում հայապահպանության բնագավառում ազգային կրթարանների դերի մասին է:

3. Եկել էին Քարուլից, «Դպրություն», եռօրյա թերթ, Երևան, 1990, հունվարի 16, № 5 (3097), էջ 8:

Աֆղանստանից՝ Քարուլից Երևան բնակության եկած և Երևանի № 59 դպրոցում սովորող քրոջ և եղբոր մասին է, որոնց մայրը հայաստանցի հայուհի է:

4. Ներքին սփյուռք՝ խոհեր և առաջարկություններ, «Հայ աշխարհ», թերթ, Երևան, 1990, հոկտեմբերի 8, № 2, էջ 4, 5:

Արտաստությունը տե՛ս «Ասպարեզ», օրաթերթ, Գլենդել, 1991, Յունուար 23, № 8938, էջ 10, 11:

Հոդվածից հատված. «1979-1989 թթ. ընթացքում հայերի տոկոսը նվազեց նույնիսկ Վրաստանի ավանդաբար հայաշատ շրջաններում. Ադիգե-

նում՝ 6.3-ից իջավ 5.8 տոկոսի, համապատասխանաբար Ասպինձայում՝ 21.3-19.1, Ախալքալաքում՝ 91.7-91.3, Ախալցխայում՝ 47.7-42.8, Բոլնիսում՝ 9.3-6.8, Գարդաբանում՝ 2.1-1.4, Դմանիսում՝ 5.2-0.4, Մառնեուլում՝ 12.9-11.9, Թեթրիձղարոյում՝ 14.3-12.4: Պատմության դասերը շուտ մոռանալու, ազգային ծրագիր չունենալու եւ օրվա շահով առաջնորդվելու հետեանք չէ՞, որ միայն ծովափնյա Անապա քաղաքից հյուսիս գտնվող համշենահայերի Հայկաձոր գյուղում, մեր հաշվարկներով, 1984 թ. կային տարբեր վայրերից այդտեղ վերջին շրջանում գաղթած բազմաթիվ հայեր, այդ թվում. Ախալքալաքից՝ 54 տուն-Գոմանից, 48 տուն-Վաչյանից, 20-25 տուն-Խանդոյից, 4 տուն՝ Թալինից, ընտանիքներ՝ Երեւանից, Թբիլիսիից, Գանձակից, Միրբաշիրից, Շամշաղիից, Վարդենիսից եւ այլ շրջաններից: Վերջին երկու տարում, համոզված ենք, նրանց թիվն ավելացել է: Եւ սա միայն մեկ գյուղում:

Հասկանալի է, որ կա նաեւ հանդիպակաց հոսանք, բայց արդեն 1987-ին արտագաղթողները 14 հազարով գերազանցում էին ներգաղթողներին»: Տպագրվել է հեղինակի լուսանկարը:

5. Ո՞վ պետք է հրատարակի, «**Հայաստանի Հանրապետություն**», օրաթերթ, Երևան, 1990, հոկտեմբերի 19, № 10, էջ 3:

Ս. Վարդանյանն առաջարկում է հրապարակել Լեոյի տասհատորյակից դուրս մնացած «Անցյալից» (1925), «Թուրքահայոց հեղափոխության գաղափարաբանությունը» (1934) գրքերը, «Հայերը համաշխարհային պատերազմի մեջ», «Մանուկ Հայաստան» անտիպ ուսումնասիրությունները, թարգմանաբար հրատարակել Յոզեֆ Սորժիգովսկու «Հայերի շինարվեստը և Եվրոպան» (1918) աշխատությունը, Հրայա Աճառյանի «Տեղանունների բառարան», «Ժողովածու պոլսահայ անգիր բանահյուսության», «Քննություն Կիլիկիո բարբառի», «Հայ լեզվաբանության մատենագիտություն», «Հայ գաղութների պատմություն» (երկհատոր) անտիպ ուսումնասիրությունները:

6. Կա՛յ այսպիսի թանգարան, «**Երեկոյան Երևան**», օրաթերթ, Երևան, 1990, սեպտեմբերի 10, № 205, էջ 3:

Հոդվածի հեղինակը Ս. Վարդանյանն է: Հայ ճարտարապետության նորաստեղծ թանգարանի հետ ճարտարապետների և գիտնականների համագործակցության անհրաժեշտության մասին է:

7. Կառուցենք հուշատներ, «**Քաղաքական գրուցակից**», հանդես, Երևան, 1990, № 4, փետրվար, էջ 18-20:

Հողվածի տարբերակը «Որոնել ազգայինն ու ժամանակակիցը» վերնագրով տպագրվել է «Մշակույթ» հանդեսում, 1989, № 1, էջ 14, 15:

Հեղինակն առաջարկում է գյուղերում կառուցել 20-րդ դարի բոլոր հայ գոհերի՝ Մեծ եղեռնի, ստալինյան բռնատիրության, Երկրորդ համաշխարհային պատերազմի, նաև Ադրբեջանի հայահալած քաղաքականության, 1988 թ. ահավոր երկրաշարժի և այլն, նվիրված հուշատուն-թանգարաններ:

8. Շիմոն Պանեկ, «Չկա մեկը, որի հետ հայերեն խոսեմ», «Վերածնված Հայաստան», ամսագիր, Երևան, 1990, № 2 (527), էջ 19-22:

Չեխ ուսանող Շիմոն Պանեկի Արևմտյան Հայաստանում կատարած ճանապարհորդության մասին պատմող հոդվածը թարգմանաբար տպագրելուց առաջ Ս. Վարդանյանը մանրամասն ներկայացնում է հեղինակին, որի հետ Երևանում ծանոթանալուց հետո նրան խնդրել է գրել իր ուղեգրական տպավորությունները:

9. Լույսը հեռու լեռներում, «Դպրություն», եռօրյա թերթ, Երևան, 1990, ապրիլի 27, № 34, էջ 7:

Արտատպվել է «Ձայն համշենական» ամսաթերթի 2017 թ. № 5-6-ում, էջ 6, 7:

Կրասնոդարի երկրամասի Ադլերի շրջանի Նիժնյայա (Ներքին) Շիլովկա գյուղի հայկական դպրոցի մասին է:

10. Խոհեր ներքին սփյուռքի մասին, «Հայք», շաբաթաթերթ, Երևան, 1990, մարտի 25, № 7, էջ 5:

Արտագաղթի և ԽՍՀՄ-ում բնակվող հայերի խնդիրների և հայապահպանության մասին է:

11. «... Երգ ենք ասում կրակին», «Հայք», շաբաթաթերթ, Երևան, 1990, սեպտեմբերի 20, № 31-32, էջ 4, 5:

ԽՍՀՄ-ում անաստվածության, կրակապաշտության, կրթական ոլորտում ու գրական երկերում նմանատիպ երևույթների արտացոլման մասին է:

12. Из истории амшенских армян, «Կռունկ», ամսաթերթ, Սուխում, Արխազիա, 1990, նոյեմբեր, № 2, էջ 2, դեկտեմբեր, № 3, էջ 2, 1991, հունվար, № 1(4), էջ 2:

Նշված է, որ թարգմանվել է «Ձայն համշենական» (1989) գրքից: Ավելի ստույգ՝ գրքի առաջաբանից:

13. Համշենահայերի բնակարանային համալիրը և կրած փոփոխությունները // ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, հանրապետական գիտական նստաշրջան, 1986-1988 թթ. ազգաբանական և բանագիտական դաշտային հետազոտությունների հիմնական արդյունքները, Երևան, 1990, էջ 64-67:

14. Նիկոլայ Երկրորդը Թիֆլիսում, «Քաղաքական գրուցակից», հանդես, Երևան, 1990, № 11, հունիս, էջ 22-26:

Հոդվածում պատմվում է իշխանուհի Մարիամ Թումանյանի մասին, այնուհետև նրա անտիպ հուշագրությունից ներկայացվում է Նիկոլայ Երկրորդ կայսեր 1914 թ. Թիֆլիս այցելության մասին մեկ հատված՝ վերնագրված «**Ես կգրադվեմ հայկական հարցով...**»:

15. Խուզարկություն խմբագրատանը, «Հայաստան», շաբաթաթերթ, Երևան, 1990, ապրիլի 15, № 13-14, էջ 6, 7:

Նույնը՝ «Ազատամարտ», շաբաթաթերթ, Երևան, 1991, մարտի 22, № 3, էջ 10:

Ս. Վարդանյանը համապատասխան առաջաբանով հրատարակության է պատրաստել Գրականության և արվեստի թանգարանում պահվող ՀՅԴ կուսակցության հիմնադիրներից Քրիստափոր Միքայելյանի մասին իշխանուհի Մարիամ Թումանյանի ձեռագիր հուշը:

### **Երկրորդ բաժին (հարցազրույցներ)**

16. Համշենահայեր. անսալ Ներքին սփյուռքի ձայնին, «Գրքերի աշխարհ», ամսաթերթ, Երևան, 1990, հունվարի 28, № 1, էջ 7:

«Ձայն համշենական» (Երևան, 1989) ժողովածուի 3-րդ հատորի լույս ընծայման առթիվ կայացած հարցազրույցը քրիստոնյա և իսլամ համշենահայերի անցյալի ու ներկայի ուսումնասիրության, առկա խնդիրների մասին է: Տպագրվել է Ս. Վարդանյանի լուսանկարը:

### **Երրորդ բաժին**

17. Իգնատ Մամյան, Երրորդ հանդիպում, «Գրական թերթ», շաբաթաթերթ, Երևան, 1990, հունիսի 29, № 27, էջ 2:

Ճանաչված գրող Իգնատ Մամյանի (1947-2008) գրախոսականը նվիրված է «Ձայն համշենական» (Երևան, 1989) ժողովածուի 3-րդ հատորին: Հոդվածից հատված. «Բայց բուն նյութին անցնելուց առաջ պիտի երկու խոսք ասեի իմ սերնդի արդեն՝ վաստակաշատ Սերգեյ Վարդանյանի մա-

սին: Տարիներ շարունակ նա ազնիվ տքնանքով զբաղվում է ներքին Միյուռքի ցավոտ ու առեղծվածային խնդիրներով, հրաշալի գիտե նրանց կյանքն ու կենցաղը և մեզ համար պարզաբանել է այդ համայնքների հետ կապված ազգային ճակատագրի կարևոր մանրամասներ: Հավանաբար Ս. Վարդանյանի համար դա արդեն կյանքի գործ է, հայրենասիրության գործ, որից նահանջելը ուշ է և դժվար»:

18. Տիգրան Բաղայան, «Ձայն համշենական», «**Հայրենիքի ձայն**», շաբաթաթերթ, Երևան, 1990, դեկտեմբերի 26, № 52, էջ 2:

Լրագրող Տ. Բաղայանի գրախոսականը նվիրված է «Ձայն համշենական» ժողովածուի 3-րդ հատորին (Երևան, 1989):

19. «**Детская литература**», журнал, Москва, 1990, № 11, с. 24.

Արձակագիր, կինոսցենարիստ Դավիթ Մուրադյանը, մասնակցելով մանկական գրականության մասին ամսագրի խմբագրության կազմակերպած ռուսերեն քննարկմանը, նշում է. «Сергей Вартамян недавно выпустил долго пролежавшую в столе книгу остроумных сказок для самых маленьких «Подсолнух». (Սերգեյ Վարդանյանը վերջերս հրապարակեց երկար ժամանակ սեղանին մնացած ամենափոքրերի համար գրած սրամիտ հեքիաթների «**Արևածաղիկը**» գիրքը): Այնուհետև դիտարկում է, որ երբ Վահագն Գրիգորյանը, Սերգեյ Վարդանյանը և Էդվարդ Միլիտոնյանը. «...выпускают книги для взрослых, их сразу замечают и коллеги и критика, а вот детские, как правило, замалчиваются». («...մեծերի համար են գրքեր հրատարակում, նրանց իսկույն նկատում են և՛ գործընկերները, և՛ գրաքննադատությունը, իսկ ահա, նրանց մանկական գրքերը, որպես կանոն, լռության են մատնվում»):

1991

### **Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)**

1. Իշխանուհի Մարիամ Թումանյան, «**Առագաստ**», շաբաթաթերթ, Երևան, 1991, № 3, էջ 1, 3:

Հոդվածը նվիրված է նշանավոր մտավորական և բարերար, իշխանուհի Մարիամ Թումանյանի (1870-1945) գործունեությանը: Հայաստանի գրականության և արվեստի թանգարանի արխիվում պահվող նրա ձեռնագիր հուշագրությունից Ս. Վարդանյանը հրատարակության է պատրաստել 1915 թ. Մ. Թումանյանի կազմակերպած Դիլիջանի որբանոցի մասին պատմող հատվածը, որը տպագրվել է թերթի նույն (№ 3) և հաջորդ (№ 4) համարում:

2. Իշխանուհի Մարիամ Թումանյան, «Առագաստ», շաբաթաթերթ, Երևան, 1991, № 4, էջ 3, 4, 8:

Տպագրվել է նախորդ համարում Դիլիջանի որբանոցի մասին իշխանուհի Մարիամ Թումանյանի հուշի շարունակությունը: Ս. Վարդանյանը պատմում է, թե ինչպես է ինքը հուշապատումի մեջ հիշատակվող սաներից մեկին՝ Դերենիկ Դարբինյանին, 75 տարի անց փնտրել-գտել, և ներկայացնում է Վանից գաղթած նրանց ընտանքի հետագա ճակատագիրը:

3. [Առաջաբան], Մարիամ Թումանյան. Եկմայանը տարօրինակ, բայց..., (շարունակելի), «Գեղարվեստ», կիսամյա թերթ, Երևան, 1991, մարտի 15-31, № 6 (1934), էջ 2, 3:

Ս. Վարդանյանը համապատասխան առաջաբանով հրատարակության է պատրաստել Գրականության և արվեստի թանգարանում պահվող իշխանուհի Մարիամ Թումանյանի ձեռագիր հուշը Մակար Եկմայանի և Քրիստափոր Կարա-Մուրզայի մասին: Այս համարում տպագրվել է Ս. Եկմայանի մասին հուշը: Տե՛ս հաջորդ համարը:

4. Իշխանուհի Մարիամ Թումանյանի հուշերից՝ Կարա-Մուրզա, «Գեղարվեստ», կիսամյա թերթ, Երևան, 1991, ապրիլի 1-15, № 7 (1935), էջ 2, 3:

Նախորդ համարում տպագրված հուշագրության շարունակությունն է:

5. Խուզարկություն խմբագրատանը, «Ազատամարտ», շաբաթաթերթ, Երևան, 1991, մարտի 22, № 3, էջ 10:

Նույնը՝ «Հայաստան», շաբաթաթերթ, Երևան, 1990, ապրիլի 15, № 13-14, էջ 6, 7:

Ս. Վարդանյանն իր առաջաբանով հրատարակության է պատրաստել ՀՅԴ կուսակցության հիմնադիրներից Քրիստափոր Միքայելյանի մասին իշխանուհի Մարիամ Թումանյանի արխիվում գտած ձեռագիր հուշը:

6. Նվիրական անուններ. իշխանուհի Թումանյան և Լևոն Շանթ, «Գրքերի աշխարհ», շաբաթաթերթ, Երևան, 1991, մարտի 24, № 12, էջ 2:

Ս. Վարդանյանը համապատասխան առաջաբանով հրատարակության է պատրաստել Գրականության և արվեստի թանգարանի արխիվում պահվող Լևոն Շանթի մասին իշխանուհի Մարիամ Թումանյանի ձեռագիր հուշը:

7. [Առաջաբան], Армянка, Открытое письмо одному из «доблестных героев», «Арагац», еженедельная газета, Ереван, 1991, февраль, № 2, с. 6.

Նույնը թարգմանաբար տե՛ս «Առագաստ», շաբաթաթերթ, Երևան, 1991, մարտի 1-8, № 7, էջ 4:

1905 թ. Բաքվի, Նախիջևանի, Երևանի, Շուշիի հայերի կոտորածների օրերին հայերին անձամբ մորթելու պատրաստակամության մասին Ռուսական բանակի մի սպայի արած հայտարարության պատասխանն է, որը 1905 թ. հրատարակվել է Թիֆլիսի «**Новое обозрение**» թերթում: Ս. Վարդանյանն իր առաջաբանում նշում է, որ պարզել է, որ «Армянка» ծածկանունով հանդես եկած հեղինակը իշխանուհի Մարիամ Թումանյանն է: Տպագրվել է նաև այդ պատասխանը:

8. [Առաջաբան], Հայուհի, Բաց նամակ «փառապանձ հերոսներից» մեկին, «**Առագաստ**», շաբաթաթերթ, Երևան, 1991, մարտի 1-8, № 7, էջ 4:

Նույնի ռուսերեն բնագիրը տե՛ս «**Арагаст**», еженедельная газета, Ереван, 1991, февраль, № 2, с. 6.

9. Ներքին սփյուռք. Աբխազիա, «**Միծեռնակ**», ամսագիր, Երևան, 1991, № 3, էջ 10:

Հոդվածը պատմում է Աբխազիայի հայության մասին, կոչ է արվում այնտեղի հայ երեխաների համար հայերեն ընթերցանության գրքեր ուղարկել:

10. Ներքին սփյուռք. Կրասնոդարի երկրամաս, «**Միծեռնակ**», ամսագիր, Երևան, 1991, № 4, էջ 9:

Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասի հայերի անցյալի ու ներկայի մասին է, կոչ է արվում այնտեղի հայկական դպրոցների աշակերտների հետ նամակագրական կապ հաստատել, հայերեն գրքեր ուղարկել:

11. Սերկեյ Վարդանեան, Ներքին Սփյուռք՝ խոհեր և առաջարկություններ, «**Ասպարեզ**», օրաթերթ, Գլենդել, Քալիֆորնիա, ԱՄՆ, 1991, Յունուար 23 (թիւ 8938), էջ 10, 11:

Արտատպված է «**Հայ աշխարհ**» թերթից, Երևան, 1990, հոկտեմբերի 8, № 2, էջ 4, 5:

12. Համշենի մուսուլման հայերը, «**Փյունիկ**», պարբերաթերթ, Երևան, 1991, հունվարի 25, № 1 (09), էջ 3, 4:

1944 թ. Աջարիայից Միջին Ասիա արքայրված կրոնափոխ համշենահայերի հետ հանդիպման մասին է: Բարբառով հրատարակվել են «**Ցունէ էլէլ, փեռնէց չամին դալինէ**» երգն ու 21 բառից կազմված բառարան: Տպագրվել են Ս. Վարդանյանի լուսանկարները, այդ թվում՝ Ղրղզստանի Ուչ-Կորգոն գյուղում մուլլա Հաքի Քոշանիձեի հետ, նաև Ղազախստանի համշենցիների լուսանկարները:

13. Հյուսիսի հողմերը և հայ գաղութի դիմադրական ճիգերը, «**Մաշտոց**», թերթ, Երևան, 1991, հուլիսի 6, № 4, էջ 6:

Կրասնոդարի երկրամասի Ադլերի շրջանի Մոլդովկա գյուղի հայկական դպրոցի վերաբացման համար հայերի պայքարի մասին է: Հոդվածի կրճատ տարբերակը տե՛ս Բայց ի՞նչ գնով..., «**Լույս համշենյաց**», պարբերաթերթ, Երևան, 1991, նոյեմբերի 23, № 1, էջ 4, չի նշված, հեղինակը Ս. Վարդանյանն է:

Մոլդովկայի Թոչնոց բույնը, «**Լույս Համշենի**», պարբերաթերթ, Երևան, 1992, հունվարի 31, № 2(4):

Ս. Վարդանյան, Մոլդովկայի «Թոչնոց բույնը» // **Ձայն համշենական**, ժողովածու, գիրք 4-րդ, Երևան, 1999 (- 208 էջ), էջ 30-34:

Նույնը՝ Մոլդովկայի «Թոչնոց բույնը», «**Ձայն համշենական**», ամսաթերթ, 2007, № 5-6, էջ 2, 3:

Նույնը՝ «**Նոյյան տապան**», շաբաթաթերթ, Երևան, 2007, սեպտեմբերի 10, № 17, էջ 9:

14. Վերհուշ... ներկայի մասին, «**Գարուն**», ամսագիր, Երևան, 1991, № 3 (292), էջ 32-38:

Հայերի ոչ հայաստանակենտրոն քաղաքականության ծանր հետևանքների, հայ-ռուսական հարաբերությունների մասին է (19-րդ դարի սկզբից մինչև 20-րդ դարի սկիզբ):

15. Հոգու հիշողություն. Սև գետ, «**Համշեն**», պարբերաթերթ, Մուխում, Աբխազիա, 1991, նոյեմբեր, № 2, էջ 4:

Սև գետի և Համշենի գավառների բռնի կրոնափոխության մասին է:

16. Из истории амшенских армян, «**Կոունկ**», ամսաթերթ, Մուխում, Աբխազիա, 1991, հունվար, № 1(4), էջ 2, տե՛ս նաև 1990, նոյեմբեր, № 2, էջ 2, դեկտեմբեր, № 3, էջ 2:

Թարգմանվել է «**Ձայն համշենական**» (1989) գրքի առաջաբանից:

17. С. Варданян, Вдали от Армении, «**Լույս համշենյաց**», լրագիր, Երևան, 1991, նոյեմբերի 23, № 1, էջ 3, 4:

Համշենահայերի դարավոր պատմության մասին է:

18. Հայեցի ծովեզերք, «**Լույս համշենյաց**», լրագիր, Երևան, 1991, նոյեմբերի 23, № 1, էջ 1, 4:

Չի նշված, հեղինակը Ս. Վարդանյանն է: Համշենահայերի պատմության մասին է:

19. Բայց ի՞նչ գնով, «**Լույս համշենյաց**», լրագիր, Երևան, 1991, նոյեմբերի 23, № 1, էջ 4:

Չի նշված, հեղինակը Ս. Վարդանյանն է: Աղյերի շրջանի Մուղովկա գյուղի հայկական դպրոցի մասին «Մաշտոց» թերթում (Երևան, 1991, հուլիսի 6, № 4) տպագրված «Հյուսիսի հողմերը և հայ գաղութի դիմադրական ճիգերը» հոդվածից մեկ հատված է:

20. [Անվերնագիր], «**Լույս Համշենի**», լրագիր, Երևան, 1991, դեկտեմբերի 15, № 2:

Ս. Վարդանյանի շնորհավորանքի խոսքն է Աբխազիայի հայերի «**Համշեն**» գրական-լուսավորչական պարբերաթերթի Երևանում տպագրվելու առթիվ:

21. Նոր հանդես, «**Լույս Համշենի**», լրագիր, Երևան, 1991, դեկտեմբերի 15, № 2:

Չի նշված, հեղինակը Ս. Վարդանյանն է: Ներկայացվում է Մոչիի գրական-գեղարվեստական միավորման 1991 թ. հրատարակած «**Զարթոնք**» գրական-գեղարվեստական հանդեսը:

22. Կրկնվող պատմություն, «**Առագաստ**», շաբաթաթերթ, Երևան, 1991, № 2, էջ 4:

1885 թ. փետրվարի 22-ին Երևանում տարածված հայերեն մի ընդարձակ թռուցիկի մասին է, որը նվիրված է Ռուսական կայսր Ալեքսանդր Երրորդի և նրա կամակատար, լուսավորության նախարար, հայագգի Դելյանովի ձեռամբ բազմաթիվ հայկական դպրոցների փակմանը: Տպագրվել է նաև այդ եզակի թռուցիկը:

23. Գերմանական ֆաշիստների, Ադրամի թուրքերի, բայց առավելապես քրիստոնյա ռուսների մասին, «**Առագաստ**», շաբաթաթերթ, Երևան, 1991, № 11, էջ 3, № 12, էջ 3:

Ռուսական բանակի կողմից 1804, 1805 և 1917 թթ. Ս. Էջմիածնի կողոպուտի, 1827 թ. ի վեր Ռուսական կայսրության վարած հակահայկական քաղաքականության մասին է:

### **Երկրորդ բաժին (հարցազրույցներ)**

24. Ոգու կանչով, հարցազրույց Ս. Վարդանյանի հետ, «**Լույս համշենյաց**», լրագիր, Երևան, 1991, նոյեմբերի 23, № 1, էջ 1, 2:

Հարցազրույցի սկիզբը. «Տրոփուն անհանգստություն, անսահման հուզում ու թրթիռ կա Սերգեյ Վարդանյանի՝ համշենահայերի մասին գրած հոդվածներում... Հարագատության ու միմյանց կորցնելու վախի զգացումն էր, թե մեր անտեղյակությունը թոթափելու սուր ցանկությունը, Սերգեյի ա-

ռաջին նյութերը բուռն հետաքրքրություն ու արձագանք գտան Հայաստանում: Պարոն Վարդանյանը շատ բան ունի ասելու իր ընթերցողներին...» (էջ 1:)

Հարցազրույցը քրիստոնյա և իսլամ համշենցիների պատմության և խնդիրների մասին է: Տպագրվել են նաև թեմային առնչվող լուսանկարներ:

### Երրորդ բաժին

25. Վանիկ Սանթրյան, Այց Ծիծեռնակաբերդ, «Երեկոյան Երևան», օրաթերթ, 1991, հունիսի 11, № 111, էջ 1:

«Արմենպրեսի» թղթակից Վ. Սանթրյանի հոդվածը պատմում է Սիրիայի Տեր Զոր քաղաքում նորակառույց եկեղեցու օծումից հետո Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Երկրորդի Հայաստան այցի, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի, Բերիո թեմի առաջնորդ Սուրեն արք. Գաթարոյանի, հոգևոր և աշխարհիկ այրերի հետ հունիսի 10-ին Ծիծեռնակաբերդի բարձունքում «Տեր Զորից հայ նահատակներին» գրույթյամբ ծաղկեպսակի տեղադրման մասին: Թերթում տպագրվել է արարողության լուսանկարը (մասնակիցների թվում է նաև ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Վարդանյանը):

26. Հայաստանի Կրօնից Նախարար տիար Լուիսյանի Խաչատուրեան եւ հրապարակագիր Սերկեյ Վարդանեան կը ժամանեն, «Ժամանակ», օրաթերթ, Իսթանպուլ, 1991, սեպտեմբերի 18, № 4411, էջ 1:

Հոդվածից հասվածներ. «Ինչպես հաղորդած էինք, 22 Սեպտեմբեր յառաջիկայ Կիրակի օր քաղաքիս մէջ «Բրեզիտըն» պանդոկին մէջ պիտի կայանայ շահեկան համաժողով մը «Իսլամ-Քրիստոնէայ բարեկամութեան եւ հասկացողութեան երկխօսութիւն»:

Համաժողովին կազմակերպիչն է կեղրոնը Նիւ Եորք գտնուող Համաշխարհային Կրօնքներու Հիմնարկը, որ ՄԱԿ-ի անդամ ոչպետական կազմակերպութիւններէն է:

...Բազմաթիւ Իսլամ եւ Քրիստոնէայ ակադեմիկոսներ կը մասնակցին այս համաժողովին շուրջ քսանհինգ Քրիստոնէայ եւ քսանհինգ Իսլամ զեկուցողներ, որոնք մեծաւ մասամբ հրաւիրուած են այն երկիրներէն, ուր Քրիստոնէաներ եւ Իսլամներ դրացիական յարաբերութիւններ կը մշակեն:

Յանուն Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցոյ Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Վեհափառ Կաթողիկոսի փափաքով հա-

մաժողովին որպես զեկուցող կը մասնակցի Պատկառելի Կրօնական ժողովի Ատենապետ Գերշ. Տ. Մեսրոպ Ս. Եպսկ. Մութաֆեան: Իսկ, որպես ունկնդիր՝ պատուոյ հիւրեր հրաւիրուած են նաև Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի նախագահութեան ատընթեր Կրօնական Խորհուրդի Նախագահ Մեծայարգ Տիար Լուիվիկ Խաչատուրեան եւ իր Ա. Տեղակալ, պատմաբան, հրապարակագիր, գրագէտ եւ «Մշակոյթ» պարբերաթերթի աշխատակից Տիար Մերկէյ Վարդանեան:

Այդ այցի մասին նույն օրվա «Նոր Մարմարա» թերթում տպագրվել է նաև Ամենայն հայոց կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Առաջինի սեպտեմբերի 15-ի հեռագիրը Կ. Պոլսի հայոց պատրիարք, ամենապատիվ Տ. Գարեգին արք. Գազանձյանին:

Տե՛ս Հայաստանի Կրօնից նախագահը Իսթանպուլ կը ժամանէ այսօր, «Նոր Մարմարա», օրաթերթ, Իսթանպուլ, 1991, սեպտեմբերի 18, էջ 1:

27. Հայաստանի Կրօնից Նախարարն ու Տեղակալը պատուասիրուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէ, «Ժամանակ», օրաթերթ, Իսթանպուլ, 1991, սեպտեմբերի 19, № 4412, էջ 1, 4:

«Երէկ, կէսօրուան մօտ Ազգային Պատրիարքարանէն դէպի Եշիլգիւղի օղակայան ճամբայ ելան Պատկառելի Կրօնական ժողովի Ատենապետ Գերշ. Տ. Մեսրոպ Ս. Եպսկ. Մութաֆեան... դիմաւորելու համար Հայաստանի Հանրապետութեան Կրօնից Նախարար Տիար Լուիվիկ Խաչատուրեանը եւ իր Ա. Տեղակալ Տիար Մերկէի Վարդանեանը:

...Ժամը 12.15-ին օղակայան իջաւ օդանաւը եւ քիչ յետոյ յարգելի հիւրերը առաջնորդուեցան Պատուոյ Սրահ: Պահ մը հանգստանալէ ետք Հայաստանի Կրօնից Նախարարը եւ իր Տեղակալը, ընկերակցութեամբ Գերշ. Տ. Մեսրոպ Սրբազան Հօր, ճամբայ ելան Պատրիարքարանի ինքնաշարժով, որու մինչեւ Ազգային Պատրիարքարան ընկերակցեցաւ ոստիկանական ինքնաշարժ մը:

Յարգելի հիւրերը պատրիարքարանի մէջ դիմաւորուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէ: Նորին Ամենապատուութիւնը, Պատրիարքարանի իր աշխատասենեակին մէջ ընդունեց հիւրերը եւ բարի գալուստ մաղթեց իրենց:

...Այս առաւօտ ժամը 08.00-ին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Հայաստանի Հանրապետութեան Կրօնական Գործերու Նախարար՝ Տիար Լուիվիկ Խաչատուրեան եւ Տիար Մերկէի Վարդանեան սաւառնակով Անգարա մեկնեցան: Այս ճամբորդութեան ընթացքին Նորին Ամենապատուութեան

կ'ընկերանայ Պատրիարքական Փոխանորդ Գերշ. Տ. Շահան Ս. Եպսկ Սվաճեան:

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը եւ հիւրերը այսօր քաղաքավարական այցելութիւն մը պիտի տան Կրօնից Տեսուչ Փրոֆ. Տրթ. Մուսթաֆա Սաիտ Եագըճըօղլուի:

Նաեւ այցելութիւն մը պիտի տրուի Անգարայի Սովետ Աւագ Դեսպան Ալպէր Չէրնիշէվի»:

Հոգովածի սկզբում տպագրվել է նաև Պատրիարքարանում արված լուսանկար հետևյալ մակագրությամբ. «Հայաստանի Կրօնական Խորհուրդի Նախագահ Լուսինիկ Խաչատուրեան եւ իր Տեղակալը՝ պատմաբան, հրապարակագիր Սերկէյ Վարդանեան Ամեն. Տ. Գարեգին Ս. Պատրիարք Հօր եւ Գերշ. Տ. Շահան Սրբազանի հետ»:

Նույն լուսանկարը նույն մակագրությամբ տպագրվել է նաև «Քուլիս» հայերեն գրական-գեղարվեստական ամսագրում, Իսթանպուլ, 1991, հոկտեմբեր (թիւ 1042), էջ 42:

28. Հայաստանի Հանրապետութեան Կրօնական Գործերու Նախարար Լուսինիկ Խաչատուրեան Իսթանպուլ ժամանեց, «Նոր Մարմարա», օրաթերթ, Իսթանպուլ, 1991, սեպտեմբերի 19, № 3591, էջ 1:

«Պատրիարքարանէն կը տեղեկացնեն. 22-25 Սեպտեմբերի միջեւ Իսթանպուլի մէջ գումարելի Իսլամ եւ Քրիստոնէայ կրօնքներու միջեւ բարեկամական երկխօսութեան նուիրուած պաշտօնական հաւաքին մասնակցելու հրաւեր ստացած ըլլալով, Հայաստանի Հանրապետութեան Նախարարաց Խորհուրդի Կրօնական Գործերու Նախարար՝ Տիար Լուսինիկ Խաչատուրեան եւ իր փոխանորդը Տիար Սերկէյի Վարդանեան երէկ ժամանեցին Իսթանպուլ: Հիւրերը օդանաւակայանը դիմաւորուեցան Պատկ. Կրօնական Ժողովի Ատենապետ՝ Գերշ. Տ. Մեսրոպ Ս. Եպսկ. Մուսթաֆեանի կողմէ եւ պատուոյ սրահէն անցնելով առաջնորդուեացան Պատրիարքարան:

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Պատրիարքարանի իր աշխատասենեակին մէջ ընդունեց հիւրերը եւ բարի գալուստ մաղթեց իրենց...»:

29. Ամեն. Ս. Պատրիարք Հայրը եւ Հայաստանի Հանրապետութեան Կրօնական Գործերու Նախարար Տիար Լուսինիկ Խաչատուրեան Անգարա մեկնեցան, «Նոր Մարմարա», 1991, սեպտեմբերի 19, թիւ 3591, էջ 1:

Պատրիարքարանի լրատվությունը ներկայացնում ենք ամբողջությամբ. «Այս առաւօտ ժամը 8.00-ին Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Հայաստանի

Հանրապետության Կրօնական Գործերու Նախարար՝ Տիար Լուսիկ Խաչատուրեան եւ Տիար Սերկէյի Վարդանեան սաւառնակով Անգարա մեկնեցան: Այս ճամբորդութեան ընթացքին Նորին Ամենապատուութեան կ'ընկերանայ Պատրիարքական Փոխանորդ Գերշ. Տ. Շահան Ս. Եպսկ. Սվաճեան:

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը եւ հիւրերը այսօր քաղաքավարական այցելութիւն մը պիտի տան Կրօնից Տեսուչ Փրօֆ. Տօքթ. Մուսթաֆա Սաիտ Եազըզըզլուի:

Նաեւ այցելութիւն մը պիտի տրուի Անգարայի Սովետ Աւագ Դեսպան Ալպէր Չերնիշէվի:

Անգարայի սոյն այցելութեանց միջոցին կ'ընկերանայ նաեւ տեղւոյն հայ համայնքէն Տիար Կարապետ Սեօքէլի:

Նորին Ամենապատուութիւնը եւ հիւրերը կը վերադառնան այս գիշեր»:

30. Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ Հայաստանի Կրօնական Գործերու Նախարար Լուսիկ Խաչատուրեանի այցելութիւնները Անգարայի մէջ, «**Նոր Մարմարա**», օրաթերթ, Իսթանպուլ, 1991, սեպտեմբերի 20, թիւ 3592, էջ 1:

Նույն հաղորդագրութիւնը տպագրել է նաև «**Ժամանակ**» օրաթերթը, Իսթանպուլ, 1991, սեպտեմբերի 20, № 4413, էջ 1:

Պատրիարքարանի լրատվությունից հատվածներ. «Պատրիարքարանէն կը հաղորդեն.- Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Հայաստանի Հանրապետության Կրօնական Գործերու Նախարար Տիար Լուսիկ Խաչատուրեան եւ իր փոխանորդը Տիար Սերկէյի Վարդանեան, երէկ առաւօտ մեկնած էին Անգարա: Նորին Ամենապատուութեան կ'ընկերանար Պատրիարքական Փոխանորդ Գերշ. Տ. Շահան Եպսկ. Սվաճեան:

...Ըստ նախապէս առնուած ժամադրութեան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը եւ Հայաստանի Կրօնական Գործոց Նախարարը իրենց հետեւորդներով ժամը 10.00-ին այցելեցին Կրօնից Տեսուչ Փրօֆ. Տօքթ. Մուսթաֆա Սաիտ Եազըզըզլուի: Տեսակցութիւնը անցաւ շատ սիրալիք մթնոլորտի մէջ, որու ընթացքին Կրօնից Տեսուչը իր մեծ գոհունակութիւնը յայտնեց անոր համար որ առաջին անգամ օտար կրօնից նախարար մը կ'այցելէր իրեն:

... Իսկ երեկոյին ժամը 17.00ին Ամեն. Ս. Պատրիարքը եւ մեծայարգ Նախարարը, իրենց հետեւորդներով այցելեցին Սովետական Միութեան Դեսպանատունը եւ ընդունուեցան Աւագ Դեսպան Ալպէր Չերնիշէվի կողմէ»:

Անկարա այցի առնչությամբ տե՛ս նաև Լյուդվիգ Խաչատրյանի հետ Մուսաննա Լաչիկյանի վարած հարցազրույցը, «**Երկիր**», թերթ, Երևան, 1991, նոյեմբերի 8, թիւ 53, էջ 4: Արա Գալայճեան, Պալլատ ամչկոտ հարսնացուի մասին, «**Ազգ**», եռօրյա թերթ, Երևան, 1991, նոյեմբերի 6, թիւ 76, էջ 4: Ստամբուլի «**Sabah**» թուրքերեն օրաթերթի անդրադարձը տե՛ս Մապահ արձագանգ կը հանդիսանայ, «Նոր Մարմարա», 1991, սեպտեմբերի 20, էջ 1: Ստամբուլի «**Քուլիս**» հայերեն գրական-գեղարվեստական ամսագրի հակիրճ լրատվությունը տե՛ս 1991, հոկտեմբեր, էջ 43:

31. [Լրատվություն], «**Ժամանակ**», օրաթերթ, Իսթանպուլ, 1991, սեպտեմբերի 24, թիւ 4415, էջ 1:

Հատված. «Ամեն. Ս. Պատրիարք Հայրն ու Գերշ. Ս. Մեսրոպ Ս. Եպսկ. Մութաֆեան, երէկ իրիկուն ժամը 20.00-ին ընկերակցութեամբ Հայաստանի Կրօնից Գործերու Նախարար Տիար Լուսովիկ Խաչատուրեանի եւ իր տեղակալին՝ Տիար Սերկէի Վարդանեանի, այցելութիւն մը տուին Սամաթիոյ Ս. Գեորգ Եկեղեցին...»:

32. Պատրիարքարանի մէջ ընդունելութիւն ի պատիւ Հայաստանի Կրօնից Նախարարին եւ Համագումարի մասնակիցներուն, «**Նոր Մարմարա**», օրաթերթ, Իսթանպուլ, 1991, սեպտեմբերի 25, № 3598, էջ 1, 4:

«Երէկ Պատրիարքարանի մէջ, ժամը 19ին Հայաստանի Կրօնից Նախարար Պր. Լուսովիկ Խաչատուրեանի եւ իր տեղակալ Սերկէի Վարդանեանի ի պատիւ սարքուած էր շքեղ ընդունելութիւն մը, որուն հրաւիրուած էին բոլոր Իսլամ եւ Քրիստոնէայ պատուիրակները, որոնք կը մասնակցէին Իսթանպուլի մէջ գումարտող Իսլամ-Քրիստոնէայ բարեկամութեան համագումարին:

Պատրիարքարանի գեղեցիկ սրահին մէջ, Տիկնանց Յանձնախումբի հսկողութեամբ պատրաստուած էին ընթրիքի սեղաններ, որոնց շուրջ համախմբուած էին աշխարհի զանազան կողմերէն ժամանած Իսլամ եւ Քրիստոնէայ հոգեւորականներ, պատուիրակներ»: Այնուհետև մանրամասն նկարագրվում է երեկոյի ընթացքը, ներկայացվում են ներկաների ելույթներից քաղվածքներ:

33. Հայաստանի Կրօնից Նախարար Լուսովիկ Խաչատուրեանի հանդիպումները, «**Քուլիս**», ամսագիր, Իսթանպուլ, 1991, հոկտեմբեր (թիւ 1042), էջ 42, 43:

Հատված. «Քանի մը օրուան համար պաշտօնական այցելութեամբ Իսթանպուլ կը գտնուէին Հայաստանի Կրօնից Նախարար Լուսովիկ Խաչա-

տուրեան եւ իր Տեղակալը՝ Սերկէյ Վարդանեան, որոնք իբր պատուիրակ կը մասնակցէին քաղաքիս մէջ կազմակերպուած Քրիստոնէայ-Իսլամ Կրօնական Մերձեցման և Համագործակցութեան Խորհրդաժողովին: Օգտուելով այս առիթէն, Հայաստանցի հիւրերը հանդիպումներ ունեցան համայնքային հաստատութիւններու վարիչներուն հետ ու մասնաւորաբար հետաքրքրական շփումներ կատարեցին Պատրիարքարանի կողմէ եղած կարգադրութիւններով: Երկուքն ալ լաւ մշակուած, գիտակից ու հաղորդական երիտասարդներ, յուզիչ արտայայտութիւններ ունեցան և իրենց անկեղծ զգացումները յայտնեցին Իսթանպուլի պէս պատմական քաղաքի մը տրուած այցելութեան առթիւ: Ունեցան զանազան յուշանուէրներու փոխանակումներ, իսկ Խորհրդաժողովի մասնակցող ամենազգի պատուիրակներուն ի պատիւ Պատրիարքարանի մէջ սարքուած ընդունելութիւնը եղաւ իսկապէս աննախընթաց և անմոռանալի»:

Լրատվության սկզբում տպագրվել է Պատրիարքարանում արված լուսանկար, հետևյալ մակագրությամբ. «Հայաստանի Կրօնական Խորհուրդի Նախագահ Լուսովիկ Խաչատուրեան եւ իր Տեղակալը՝ պատմաբան, հրապարակագիր Սերկէյ Վարդանեան Ամեն. Ս. Գարեգին Ս. Պատրիարք Հօր և Գերշ. Ս. Շահան Սրբազանի հետ»: Աջից ձախ նստած են Ս. Վարդանյանը, Ս. Շահան եպիսկ. Սվաճյանը, Ս. Գարեգին արք. Գազանճյանը և Լ. Խաչատրյանը: Նույն լուսանկարը նույն մակագրությամբ տպագրվել է նաև «**Ժամանակ**» օրաթերթում, 1991, սեպտեմբերի 19, էջ 1:

34. Պատմական օր մը Ֆերիզիուի մէջ, «**Քուլխ**», ամսագիր, Իսթանպուլ, 1991, հոկտեմբեր (թիւ 1042), էջ 45:

«Անմոռանալի օր մը ապրեցաւ Ֆերիզիուի հայահոծ թաղը 22 Սեպտեմբեր Կիրակի, ուր Կրօնական Ժողովի Ատենապետ Գերշ. Ս. Մեսրոպ Ս. Եպիսկոպոս Մութաֆեանի կողմէ մատուցուած Պատարագին ներկայ եղան Կրօնից Նախարար Լուսովիկ Խաչատուրեան, տեղակալ Սերկէյ Վարդանեան և հիւրաբար քաղաքս գտնուող Նոր Տելիիի Մետրապոլիտ Գերշ. Ս Պաղոս Մար Կրեկորիս, որ մեծապէս տպաւորուեցաւ Հայաստանեայց Ս. Եկեղեցիի արարողութիւններէն: Աւելի վերջ, թաղային Խորհուրդը հիւրերուն ի պատիւ ընդունելութիւն մը սարքեց, որուն ներկայ գտնուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը և հիւր Մետրապոլիտը, Աթոռիս գոյգ Եպիսկոպոսները, Հայաստանցի պատուիրակները և համայնքի ծանօթ անձնաւորութիւններէն ոմանք»: Տպագրվել է նաև լուսանկար հետևյալ մակագրությամբ. «Ամեն. Ս. Պատրիարք Հօր շուրջ Նոր Տելիիի Եպիսկոպոսն ու մեր

գոյգ Եպիսկոպոսները, ինչպէս նաեւ Լուսավիկ Խաչատուրեան և Սերկէյ Վարդանեան Տէրիգիւղի Խորհրդարանին մէջ»:

35. Հայաստանցի հիւրերուն այցելութիւնը հիւանդանոց, «**Քուլիս**», ամսագիր, Իսթանպուլ, 1991, հոկտեմբեր (թիւ 1042), էջ 44:

«Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ Հայաստանի Կրօնից Նախարար Լուսավիկ Խաչատուրեանի և տեղակալ Սերկէյ Վարդանեանի, այցելեց Ս[ուրբ] Փ[րկիչ] Հիւանդանոց և հիւրերուն հետ շրջելով Հաստատութիւնը, տեղեկութիւններ ստացան Ազգին Տան աշխատանքներուն ու կարիքներուն մասին: Այս առթիւ տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում հիւրերուն ու Հոգաբարձութեան միջեւ: Հայաստանցիները մեծապէս տպաւորուած բաժնուեցան Ազգին Տունէն, գոր գտած են իսկապէս օրինակելի և պարծանք փոքրաթիւ գաղութի մը համար որ իր հաստատութիւնները կը պահէ բոլորովին իր միջոցներով, բայց օրինակելի կանոնաւորութեան մը մէջ»:

Տպագրվել է նաև խմբակային (15 հոգի) լուսանկար հետևյալ մակագրությամբ. «Ամեն. Ս. Պատրիարք Հայրը շրջապատուած Կրօնից Նախարար, Տեղակալ, Հոգաբարձու, Բժշկապետ և բժիշկներէ»:

36. Հայաստանի Կրօնական Գործերու Խորհուրդի ներկայացուցիչներուն ողջոյնի խօսքը յղուած՝ «Համաշխարհային Կրօնից Խորհուրդ»ի նախաձեռնութեամբ կատարուած «Երկխօսութիւն Իսլամ-Քրիստոնէայ բարեկամութեան եւ փոխըմբռնման շուրջ» համաժողովին, «**Նոր Մարմարա**», օրաթերթ, Իսթանպուլ, 1991, սեպտեմբերի 28, թիւ 3601, էջ 1:

Հատված. «Մենք Հայաստանի իշխանութիւնների եւ հաւատացեալների անունից կարող ենք վստահաբար յայտնել, որ մեր ժողովուրդը միշտ ցանկանում է բարեկամական յարաբերութիւններ ունենալ բոլոր երկիրների եւ ժողովուրդների հետ, առանց կրօնքի խտրութեան: Մենք ուրախ ենք, որ նոյն ձգտումներն ունեն նաեւ այս համաժողովի միւս մասնակիցները, որոնցից ոմանք ոչ միայն խօսքով, այլեւ իրենց գործով են նպաստել կրօնական համայնքների խաղաղ գործակցութեանը, անկախ կրօնական պատկանելիութիւնից օգնութեան ձեռք մեկնել ուրիշներին: Իսկ փոխադարձ օգնութեան առիթները մեր այս քաղաքական, տնտեսական, էկոլոկիական եւ տարերային աղէտներով հարուստ ժամանակներում բազմաթիւ են: Երբ 7 Դեկտեմբեր 1988ին, Հայաստանի Հանրապետութեան մէկ երրորդը աւերուեց ահաւոր երկրաշարժի հետեւանքով, երբ տասնեակ հազարաւոր մարդիկ մահացան, երբ աւելի քան կէս միլիոն մարդիկ տնանկ մնացին, արար

աշխարհի Հայաստանին օգնութեան ձեռք մեկնեց: Աղէտեալ գօտիներուն մէջ մինչեւ օրերես, տակաւին կան տասնեակ հազարաւոր տնանկներ եւ հազարաւոր որբեր, որոնք շարունակում են ստանալ նիւթական եւ բարոյական օժանդակութիւն համաշխարհային կազմակերպութիւններէ առաջին իսկ մէկ օրէն: Այս համագումարին միջացաւ, մենք անգամ մը եւս շնորհակալութիւն ենք յայտնում աշխարհի ժողովուրդներին: Այս էր նաեւ Հայ ժողովուրդի ոգին, երբ՝ մի տարի վերջ հիւսիսային Իրանի մէջ ցաւ եւ մահ առթող երկրաշարժէն վերջ, դրացնական զգացումներով, օգնութեան ձեռք երկարեց նրա հարաւային սահմանակից Իսլամ ժողովուրդին»: Ողջոյնի խոսքը ստորագրել են «Կրօնական Գործերի Կոմիտէի Նախագահ Լուսովիկ Խաչատուրեան, Կրօնական Գործերի Կոմիտէի Նախագահի Տեղակալ Սէրկէի Վարդանեան»:

37. Հայաստանի Կրօնից Նախարարն ու Տեղակալը մեկնեցան, «**Նոր Մարմարա**», օրաթերթ, Իսթանպուլ, 1991, սեպտեմբերի 28, թիւ 3601, էջ 1:

Հատված. ««Համաշխարհային Կրօնից Խորհուրդ»ի նախաձեռնութեամբ քաղաքիս մէջ գումարուած «Երկխօսութիւն Իսլամ-Քրիստոնէայ Բարեկամութեան եւ Փոխըմբռնման Շուրջ» Համաժողովը, Հինգշաբթի օր լրացուց իր աշխատանքները: Սոյն ժողովին մասնակցելու հրաւիրուած էին նաեւ Հայաստանի Հանրապետութեան Կրօնից Գործոց Նախարարը Տիար Լուսովիկ Խաչատուրեան եւ իր տեղակալը Տիար Սէրկէյ Վարդանեան, որոնք՝ համաժողովի ընթացքին ըրին իրենց ողջոյնի խօսքը, գոր կու տանք առանձնապէս:

Յարգելի Նախարարը եւ իր տեղակալը, երէկ կէսօրին մեկնեցան Մուկուայի վրայով Երեւան: Եշիլգիւղի Օդանաւակայանի Պատուոյ սրահին մէջ իրենց ողջերթ մաղթեցին Պատկ. Կրօնական Ժողովի Ատենապետ Գերշ. Տ. Մեսրոպ Ս. Եպսկ. Մութաֆեան եւ Պատրիարքարանի Դիւանապետ Արժ. Տ. Գրիգոր Քինյ. Տամատեան»:

38. Ս. Գյուլբուղայան, Անուն և անվանակոչություն, «**Երեկոյան Երևան**», օրաթերթ, Երևան, 1991, նոյեմբերի 22, № 212, էջ 2:

Երբաղխորհրդի անվանակոչության հանձնաժողովի քարտուղար Ս. Գյուլբուղայանի հողվածը նվիրված է ոչ հայեցի անվանակոչումների խնդրին: Նա օրինակներ է բերում Ս. Վարդանյանի «**Հայոց մայրաքաղաքները**» (1985, էջ 44) գրքից, որտեղ նշված են Ամիդ (Դիարբեքիր) և Տիգրանակերտ (Նփրկերտ) քաղաքների տարբեր դարերում անվանափոխությունները:

39. Լույս Համշենի, «**Հայրենիքի ձայն**», շաբաթաթերթ, Երևան, 1991, դեկտեմբերի 25, № 50-51, էջ 8:

Հեղինակը չի նշված: Համառոտ ներկայացվում է Սոչիի «Սևան» մշակութային կենտրոնի նորաստեղծ «**Լույս Համշենի**» թերթի երկու համարը, թվարկվում են հոդվածները, մասնավորապես նշվում է. «Իսկ համշենյան մշակույթի նվիրյալ, գրող-հրապարակախոս Սերգեյ Վարդանյանը ներկայացրել է համշենահայ մշակույթի զարգացման փուլերը, անդրադարձել ներքին սփյուռքի այսօրվա ցավոտ ու անհրաժեշտ հիմնահարցերին»:

1992

### **Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)**

1. Արխագահայ փախստականներ Հայաստանում (Ինչպե՞ս են ապրում, ո՞վ է հոգում նրանց մասին), «**Ազգ**», օրաթերթ, Երևան, 1992, նոյեմբերի 10, № 126, էջ 3:

Արտատպությունը՝ Ս. Վարդանյանի «25 տարի առաջ» առաջաբանով, տե՛ս «**Չայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2017, № 7-8, էջ 2:

Հոդվածից հատված. «Քանի որ միությունը դեռեւս գրասենյակ չունի, իսկ իմ աշխատավայրը քաղաքի կենտրոնում է, ուստի հավաքների ու փախստականների այցելությունների համար հարմարագույն վայր է: Ի՞նչ է արվել: Արխագահայի օգոստոսյան դեպքերից հետո միությունը գործնական առաջարկություններ է ներկայացրել ՀՀ նախագահին, վարչապետին եւ Գերագույն խորհրդին: Արխագահայերին օգնելու նպատակով կապ ենք հաստատել ԳԽ նախագահության, տարբեր հանձնաժողովների, պատգամավորական խմբերի, Հայաստանի Կարմիր Խաչի, լուսավորության նախարարության, հատուկ ծրագրերի պետվարչության, Վրաստանի Հելսինկյան խմբի, Վրաստանի եւ Արխագահայի ոռոջ պաշտոնատարների հետ: Մեր երկու ներկայացուցիչներ ԳԽ պատգամավորական խմբի հետ մեկնել են Թբիլիսի և Արխագահ՝ մասնակցելու բանակցություններին եւ ծանոթանալու իրավիճակին: Մեր պատվիրակն ենք ուղարկել վերջերս Կրասնոդարում կայացած Ռուսաստանի հայ համայնքների ներկայացուցիչների հավաքին:

Ստեղծել ենք լրահավաք խումբ, որը գրի է առնում փախստականների պատ-մածները, Արխագահայից լուրեր ստանում եւ անհրաժեշտության դեպքում կարելու փաստերը հաղորդում արտգործնախարարության ԱՊՀ երկրների բաժին, որպեսզի արտգործնախարարության խողովակով հնա-

րավոր լինի ինչ-որ կերպ ազդել հակամարտ կողմերի վրա»: Տպագրվել է նաև հեղինակի՝ Ս. Վարդանյանի լուսանկարը:

2. [Անվերնագիր], «**Լույս Համշենի**», պարբերաթերթ, Երևան, 1992, հունվարի 1, № 1(3):

1903 թ. «**Մշակում**» իշխանուհի Մարիամ Թումանյանի հրապարակած «Նամակ Անապայից» թղթակցությունը «**Լույս Համշենի**» թերթում արտատպելուց հետո անվերնագիր հոդվածում ներկայացվել են իշխանուհի Մարիամ Թումանյանը, նաև Կրասնոդարի երկրամասի Անապա քաղաքի հայերի անցյալի ու ներկայի մասին փաստեր ու տվյալներ:

Հոդվածի տարբերակը տե՛ս **Հարյուրմեկ տարի անց...**, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2004, հոկտեմբեր, № 3:

3. Բանահյուսական պատառիկներ, «**Լույս Համշենի**», պարբերաթերթ, Երևան, 1992, հունվարի 1, № 1 (3):

Չի նշված, հրապարակման հեղինակը Ս. Վարդանյանն է: Համշենի բարբառով տպագրվել է երկու զվարճապատում՝ «**Էրգու ընգեր**» և «**Տան տերը**», որոնք գրառել են Աբխազիայի հայկական դպրոցների աշակերտները:

Նույն զվարճապատումները տե՛ս **Թագավորի երազները**, Բանահյուսական ժողովածու, Երևան, 2003 (-144 էջ), էջ 56, 57:

4. Մոլորվկայի թռչնոց բույնը, «**Լույս Համշենի**», պարբերաթերթ, Երևան, 1992, հունվարի 31, № 2 (4):

Կրասնոդարի երկրամասի Ադլերի շրջանի Մոլորվկա գյուղի հայկական դպրոցը 1970 թ. հունվարի 20-ին բացելու և 1974 թ. սեպտեմբերի 1-ին քանդելու մասին է:

5. «**Համշեն**» հայրենակցական միության հիմնադիր համագումարը, «**Լույս Համշենի**», պարբերաթերթ, Երևան, 1992, ապրիլ-մայիս, № 5-6:

Չի նշված, հեղինակը Ս. Վարդանյանն է: 1992 թ. ապրիլի 5-ին Երևանում «**Համշեն**» հայրենակցական միության հիմնադրման մասին է:

6. [Անվերնագիր], «**Լույս Համշենի**», պարբերաթերթ, Երևան, 1992, ապրիլ-մայիս, № 5-6, էջ 4, 5:

Չի նշված, հրապարակումը Ս. Վարդանյանինն է: Տպագրվել է Եղեռնը վերապրող Աղասի Քյոսեյանի (1905-1975) կենսագրությունը և նրա հիշողությունների տեսրերից «Ապրիր որպես հայ» հուշը:

## Երրորդ բաժին

7. I gruppi presenti, “**L’osservatore Romano**”, Giornale quotidiano, politico, religioso, Vaticano, 1992, 28 Maggio, p. 4.

Հոդվածում հիշատակվում է Հռոմի պապ Հովհաննես Պողոս Երկրորդի հետ Ս. Վարդանյանի հանդիպումը, տպագրվել է հանդիպման լուսանկարը, էջ 4:

Տե՛ս նաև **Սերգեյ Վարդանյան, Հովհաննես Պողոս Երկրորդ**. «Ես ամեն օր աղոթում եմ հայ ժողովրդի համար», «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2005, մայիս-հունիս, № 5-6, էջ 6:

1993

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Արխազահայեր. մոռացյալ բեկորներ, «**Ազգ**», օրաթերթ, Երևան, 1993, մարտի 24, № 53, էջ 3:

Այս և հեղինակի նույն մտահոգություններին նվիրված 1992 թ. նոյեմբերի 10-ին «**Ազգ**» թերթում տպագրված «Արխազահայ փախստականներ Հայաստանում (Ինչպե՞ս են ապրում, ո՞վ է հոգում նրանց մասին)» հոդվածի արտատպությունը Ս. Վարդանյանի «25 տարի առաջ» առաջաբանով տե՛ս «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2017, № 7- 8, էջ 2, 3:

Արխազիայից հայ փախստականների տխուր վիճակի և «**Համշեն**» հայրենակցական միության գործունեության մասին է: Հոդվածից հատված. «Անշուշտ, արխազահայերին ձեռք մեկնելը միայն տեղաբնակ համշենահայերի պարտքը չէ: Հիշենք, թե ինչպես մեր ազգակիցները դեռ դարաբաղյան շարժման առաջին օրերին Արխազիայի տարբեր քաղաքներում համերաշխության հանրահավաքներ էին կազմակերպում, ինչն այն ժամանակ անվտանգ չէր: Հիշենք ինչպես էին բեռնատարներով օգնություն բերում Հայաստանի, Արցախի, երկրաշարժի օրերին՝ աղետի գոտու համար: Այնուհետև հազարավոր աղետյալներ ապաստանեցին Արխազիայում, Կրասնոդարի երկրամասում, հարյուրավոր աշակերտներ ուսումը շարունակեցին այնտեղի հայկական դպրոցներում՝ միշտ զգալով համշենահայերի հոգածությունը: Բայց չգիտես ինչու, հիմա Հայաստանում օգնություն բաժանողները չեն հիշում արխազահայ փախստականներին, ինչը նրանց մարդկայնորեն վիրավորում է: Եթե, իրոք, սիրո գինը սերն է, ապա խնդրում եմ բոլոր նպաստամատույցներին՝ Կարմիր խաչին, հայրենակցական ու բարեգործական միություններին՝ մի՛ մոռացեք Հայաստանի ար-

խագահայերի բեկորները: Եթե Աբխազիայում մնացածներին ու Կրասնոդարի երկրամաս գաղթածներին ի վիճակի չենք օգնել, այստեղ ապաստանածներին հո կարող ենք:

Այս տխուր համապատկերի միակ լուսավոր կետն այն է, որ փետրվարի 16-ին հանրապետության վարչապետ Հ. Բագրատյանն ստորագրել է կառավարության կարգադրությունը (թիվ 52), որով 1993թ. հունվարի 1-ից մինչև մայիսի 1-ը աբխազահայ փախստականներին քաղաքործկոմների և շրջգործկոմների սոցիալական ապահովության բաժինները պիտի վճարեն կենսաթոշակներ և երեխաների համար նպաստներ:

Օրերս մենք կառավարություն կդիմենք մի խնդրանքով ևս. Հայաստանում ապաստանած 150-200 աբխազահայերի մի մասը ցանկանում է վերադառնալ պատերազմի գոտուց հեռու գտնվող իրենց գյուղերը կամ առժամանակ հանգրվանել Կրասնոդարի երկրամասում՝ ազգականների մոտ, բայց Երևան-Մոսկի ինքնաթիռի տոմսն արժե 8 հազար ռուբլի: Մենք կառավարությանը պիտի խնդրենք, որ վերադարձի տոմսը նրանց տրվի անվճար, կամ զգալի զեղչով:

...Աբխազահայերից շատերը սիրով կտեղափոխվեն Հայաստան, եթե այստեղ նրանց հող տրվի գյուղեր հիմնելու համար: Թեև պատերազմի թոհուրոհին, մենք ցանկացողներին ցուցակագրում ենք այն հավատով, որ գալու է օրը, երբ Հայաստանը դառնալու է բոլոր հայերի փրկության ափը»:

2. Համշենի մուսուլման հայերը, «**Իրան-Նամե**», հանդես, Երևան, 1993, սեպտեմբեր, № 4, էջ 12, 13:

Տրապիզոնի նահանգի համշենահայերի պատմության, ինչպես նաև 1944 թ. Աջարիայից Կենտրոնական Ասիա աքսորված իսլամ համշենցիների մասին է: Տպագրվել է Խովհայի խոսվածքով երգ՝ «**Ցունե էլել, փեռնեց չամին դալինե**» և 21 բառից կազմված բառարան:

3. Կաթողիկոսը՝ «ծավալապաշտ», Կրասնոդարում տարածված մի կեղծ նամակի կապակցությամբ, «**Ազգ**», 1993, նոյեմբերի 30, № 230, էջ 3:

Կրասնոդարի «**Վեչերնի կուրյեր**» ռուսերեն թերթում նոյեմբերի 20-ին տպագրված մի գրպարտչագրի մասին է, իբր Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը ձգտում է Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերը և Ռոստովի մարզը կցել Հայաստանին:

4. Նորից կեղծագրի առիթով, «**Ազգ**», օրաթերթ, Երևան, 1993, դեկտեմբերի 24, № 247 (498), էջ 2:

«Ազգ»-ը ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհրդի նախագահի տեղակալ Ս. Վարդանյանից տեղեկանում է, որ Կրասնոդար քաղաքի «Վեչերնի կուրյեր» ռուսերեն թերթում Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին վերագրվող կեղծ նամակի առթիվ պետխորհուրդը ինչ հակաքայլեր է ձեռնարկել:

### Երրորդ բաժին

5. Սերո Խանգադյան, Նոդկալի մերժում, «Գարուն», ամսագիր, Երևան, 1993, № 8 (319), էջ 12-15:

Ռուսերեն թարգմանությունը տե՛ս **Серо Ханзадян, Возмутительный отказ // Б. Г. Торлакян, Этнография амшенских армян**, сборник статей и материалов, Амшенская библиотека № 1, Краснодар, 2002 (- 198 с.), с. 194-197. Թարգմանության աղբյուրը չի նշված:

Աջարիայից 1944 թ. նոյեմբերին Ղրղզստան և Ղազախստան արքտրված կրոնափոխ համշենահայերին Հայաստանում վերաբնակեցնելու իր և Ս. Վարդանյանի ջանքերի մասին է: Հոդվածում կան մի շարք փաստական և ժամանակագրական անձշտություններ:

1994

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Սերգեյ Վարդանեան, Արեւածաղիկը, պատմուածքներ, Արեւմտահայերէնի վերածեց՝ Մաքրուիի Պ. Յակոբեան, նկարագարդեց՝ Ժպիտ Պերպերեան, Իսթանպուլ, «Արաս» հրատարակչատուն, 1994 (- 64 էջ):

«Նոր Մարմարա» թերթի խմբագրի տեղակալ Մաքրուիի Հակոբյանը գրել է նաև առաջաբան՝ «Ինչու՞ փափաքն ունեցայ լոյս ընծայելու այս գիրքը», որտեղ մասնավորապէս նշել է. «Վստահ եմ թէ աշակերտները հաճոյք պիտի զգան կարդալով այս գիրքը եւ թափանցելով պատմուածքներու մէջ թաքնուած խորիմաստ թելադրութիւններուն:

Պատմուածքները գրի առնուած են գրական բարձր ոճով եւ բանաստեղծական թոյլքով: Այս տեսակետով կը հաւատամ որ անոնք միեւնոյն խանդավառութեամբ պիտի կարդացուին նաեւ չափահաս ընթերցողներու կողմէ» (էջ 4):

Տե՛ս նաև Մաքրուիի Պ. Յակոբեան, Ողջագուրումներու եւ բաժանումներու յաւերժական ճամբուն վրայ, Իսթանպուլ, 1995 (- 104 էջ), էջ 23, 100, 101:

2. Արժանի թագաւորը, գրեց՝ Սերկէյ Վարդանեան (Արեւմտահայերէնի վերածեց՝ Մ.Պ.Յ.), «**Նոր Մարմարա**», օրաթերթ, Իսթանպուլ, 1994, Յունուար 22, № 4288:

Պատմվածքը «**Նոր Մարմարայի**» խմբագրի տեղակալ Մաքրուհի Հակոբյանը արևմտահայերենի է վերածել Ս. Վարդանյանի «**Արևածաղիկը**» (Երևան, 1989) գրքից (էջ 36-37):

Տե՛ս նաև Ս. Վարդանեան, **Արևածաղիկը**, Արեւմտահայերէնի վերածեց՝ Մաքրուհի Պ. Յակոբեան, Իսթանպուլ, ԱՐԱՍ հրատ., 1994 (- 64 էջ), էջ 11-13:

3. Վեճը, գրեց՝ Սերկէյ Վարդանեան (Արեւմտահայերէնի վերածուած), «**Նոր Մարմարա**», օրաթերթ, Իսթանպուլ, 1994, Յունուար 29, № 4294:

«**Նոր Մարմարայի**» խմբագրի տեղակալ Մաքրուհի Հակոբյանն արևմտահայերենի է վերածել Ս. Վարդանյանի «**Արևածաղիկը**» (Երևան, 1989) մանկական պատմվածքների գրքից (էջ 3-4):

Վեճը (պատմվածք), «**Ծիծեռնակ**», ամսագիր, Երևան, 1983, № 11, էջ 12, 13: Ս. Վարդանեան, **Արևածաղիկը**, պատմուածքներ, Արեւմտահայերէնի վերածեց՝ Մաքրուհի Պ. Յակոբեան, Իսթանպուլ, ԱՐԱՍ հրատ., 1994 (- 64 էջ), էջ 7-9:

Վեճը // Մայրենի 4, Հանրակրթական դպրոցների դասագիրք / Կ. Թորոսյան, Հ. Խաչատրյան, Վ. Սարգսյան, Կ. Չիբուխչյան, Երևան, Մակմիլան Արմենիա, 2009 (- 176 էջ), էջ 86-88: Դասագիրքը հրատարակվել է 2009, 2012, 2015, 2019 և 2022 թթ.:

4. Արևածաղիկ, «**Ալիք**», թերթ, Թեհրան, 1994, ապրիլի 12, № 74, **Մանկական էջ**, էջ 1, 2:

Տե՛ս նաև «**Ծիծեռնակ**», ամսագիր, Երևան, 1985, № 7, էջ 6, 7:

Ս. Վարդանյան, **Արևածաղիկը**, պատմվածքներ, Երևան, Արևիկ հրատ., 1989 (- 40 էջ), էջ 9, 10:

Ս. Վարդանեան, **Արևածաղիկը**, Արեւմտահայերէնի վերածեց՝ Մաքրուհի Պ. Յակոբեան, Իսթանպուլ, ԱՐԱՍ հրատ., 1994 (- 64 էջ), էջ 21-23:

5. Հեռատես մարդը, «**Նոր Մարմարա**», օրաթերթ, Ստամբուլ, 1994, դեկտեմբեր 17, № 4591:

Այս գվարճապատումը բարբառով հրատարակվել է «**Հրեղեն ձին**» ժողովածուում (Երևան, 1981, էջ 81): Հավանաբար արևմտահայերեն վերապատմել է թերթի «**Ծաղկեփունջ**» մանկական էջը պատրաստող Մաքրուհի

Հակոբյանը: Օգտագործվել է «Հրեղեն ձին» գրքում տպագրված նկարազարդումը: Չեն նշված աղբյուրը, ասացողը, գրառողը և վերապատմողը:

6. Խելացի հարսնացուն, «**Նոր Մարմարա**», օրաթերթ, Իսթանպուլ, 1994, դեկտեմբեր 17, № 4591:

Այս ժողովրդական գրույցը Ս. Վարդանյանը թարգմանել է Համշենի բարբառից և հրատարակել «**Հրեղեն ձին**» ժողովածուում (Երևան, 1981, էջ 58): Հավանաբար արևմտահայերեն վերապատմել է թերթի «**Ծաղկեփունջ**» մանկական էջը պատրաստող Մաքրուհի Հակոբյանը: Օգտագործվել է «**Հրեղեն ձին**» գրքում տպագրված նկարազարդումը: Չեն նշված աղբյուրը, ասացողը, գրառողը և վերապատմողը:

7. Կրոնական կազմակերպությունների գործունեությունը պետք է վերահսկվի, «**Երկիր**», օրաթերթ, Երևան, 1994, հոկտեմբերի 25, էջ 4:

Երևանի փողոցներում ռուսերեն քարոզչություն անցկացնող կրոնական կազմակերպության մասին «**Հայլուրի**» թղթակցի հարցը պարզաբանել է Կրոնի գործերի պետական խորհրդի նախագահի տեղակալ Ս. Վարդանյանը:

#### **Երկրորդ բաժին (հարցազրույցներ)**

8. Կրոնական ներկայանակի սեն ու սպիտակը, «**Քանթեր**», կիսամյա թերթ, Երևան, 1994, փետրվարի 11, № 7, էջ 2:

ՀՀ-ում կրոնին վերաբերող իրավական փաստաթղթերի և կրոնական կազմակերպությունների մասին հարցազրույց Ս. Վարդանյանի հետ:

#### **Երրորդ բաժին**

9. «**Արեւածաղիկ**»ը՝ գեղատիպ եւ հրահանգիչ գիրք մը՝ մեր աշակերտներուն համար, «**Նոր Մարմարա**», օրաթերթ, Իսթանպուլ, 1994, դեկտեմբերի 9 (4585), էջ 1, 4:

Ներկայացվում է 1994 թ. Ստամբուլում Մաքրուհի Հակոբյանի արևմտահայերեն թարգմանած և հրատարակած Ս. Վարդանյանի «**Արեւածաղիկը**» մանկական գիրքը. ««Ծաղկեփունջ»ի մեր ընթերցողները արդեն պիտի յիշեն քանի մը նմոյշներ կարդացած ըլլալ Սերգէյ Վարդանեանի պատմուածքներէն, որոնք գրուած ըլլալով հանդերձ փոքրիկներու համար, կրնան նոյն հաճոյքով կարդացուիլ նաեւ մեծահասակներու, լիսէի աշակերտներու եւ մինչեւ իսկ չափահաս գրասէրներու կողմէ: Արդարեւ, այս պատմուածքները գրուած են կուռ երեւակայութեամբ, բանաստեղծական մթնոլորտով եւ գերիբապաշտ մերձեցումով: Անոնք մանկական գրականութիւնը

կը ճոխացնեն չափահասներու գրականութեան շեշտերով և գիտերով: Օր. Մաքրուհի Պ. Յակոբեան, որ առաջին մէկ օրէն խորապէս տպաւորուած էր այս պատմուածքներէն եւ որ մեծ հաճոյքով ուզեց զանոնք շահեցնել նաև արեւմտահայ ընթերցողներու, գիրքին սկիզբը կը բացատրէ թէ ինչո՞ւ փափաք ունեցած է այս գիրքը լոյս ընծայելու: Ան կը նշէ որ այս գիրքին մէջ տեղ գտած պատմուածքները ընդհանրապէս կը շօշափեն մանուկներու եւ մանուկները շրջապատող առարկաներու, անտառի եւ անտառի բնակիչներուն վերաբերեալ խիստ հետաքրքրական նիւթեր: Այս պատմուածքները կը գովերգեն բարին ու գեղեցիկը, ընկերասիրութիւնը, կը ծաղրեն միամտութիւնն ու ծուլութիւնը: Այս կերպով գիրքը կը դառնայ ո՛չ միայն գրական վայելք, այլ նաև բարոյական արժէքներու քարոզչութիւն»:

10. ՀՀ նախագահն ընդունեց Վատիկանի պատվիրակին, «**Հայաստանի Հանրապետություն**», օրաթերթ, Երևան, 1994, ապրիլի 23, № 76, էջ 1:

«**Արմենայրեսի**» հաղորդմամբ, ապրիլի 22-ին ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը ընդունել է Հռոմի Արևելյան ժողովի նախագահ, կարդինալ Աքիլե Միլվեստրինիին: Ներկա են եղել Հայաստանի և Վրաստանի Հայ Կոթողիկէ Եկեղեցու առաջնորդ Ներսես արք. Տեր-Ներսիսյանը, Անդրկովկասում Վատիկանի Սուրբ Աթոռի գործերի ժամանակավոր հավատարմատար, արքեպիսկոպոս Ժան-Պոլ Գոբելը, ՀՀ կառավարությանն առընթեր Կրոնի գործերի պետխորհրդի նախագահի տեղակալ Սերգեյ Վարդանյանը:

1995

### **Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)**

1. Սերգեյ Վարդանյան, Հայաստանի մայրաքաղաքները, Երևան, «**Ապոլոն**» հրատ., 1995 (- 264 էջ + 24 էջ գունավոր ներդիր), գրքում տպագրվել են 450 սև-սպիտակ և գունավոր լուսանկարներ, վիմագրություններ, քարտեզներ և այլն, չափսը՝ 60x84 1/8, տպաքանակը՝ 1000:

Աշխատությունը նվիրված է դարերի ընթացքում Հայաստանի՝ իրար հաջորդած 12 մայրաքաղաքների (Վան, Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ, Դվին, Բագարան, Շիրակավան, Կարս, Անի, Երևան) պատմությանը: Նախորդ գրքից («Հայոց մայրաքաղաքները», 1985) այն տարբերվում է ավելի մեծ ծավալով, ձևավորմամբ, նաև բովանդակությամբ, քանի որ հրատարակվել է այն ժամանակ, երբ գրաքննությունը վերացվել էր:

2. The Capitals of Armenia, «**Գրքերի աշխարհ**», ամսաթերթ, Երևան, հատուկ թողարկում, Специальный выпуск, Special issue, 1995, № 3 (297), էջ 3:

Թերթի ռուսերեն և անգլերեն միացյալ հատուկ թողարկումն է, որտեղ Ս. Վարդանյանի «**Հայաստանի մայրաքաղաքները**» (1995) գրքի անգլերեն ամփոփումից ներկայացված են 12 մայրաքաղաքների համառոտ պատմությունները:

3. Վան, «**Բանբեր**», կիսամյա թերթ, Երևան, 1995, դեկտեմբերի 1-15, № 64 (77), էջ 5:

Տպագրվել են «**Հայաստանի մայրաքաղաքները**» (1995) գրքի Վանին նվիրված գլխից քաղվածքներ:

### **Երկրորդ բաժին (հարցազրույցներ)**

4. ... Չապրած կյանքի է նման անտիպ գիրքը, «**Գրքերի աշխարհ**», ամսաթերթ, Երևան, 1995, № 2 (296), էջ 13:

Հարցազրույցը Ստամբուլում արևմտահայերեն հրատարակված «**Արևածաղիկը**» գրքի առթիվ է: Խոսվում է նաև հեղինակի անտիպ գրքերի մասին: Հարցազրույցից հատված. «Եթե հիշում եք, Ժամանակին «Հրեղեն ձիու» մասին մի շարք դրվատական գրախոսականներ տպագրվեցին, գրքին անդրադարձան նաև ռուսական ու արտասահմանյան որոշ թերթեր ու ամսագրեր, Կենտրոնական հեռուստատեսությունը գրքի ստեղծման մասին Հայաստանում հաղորդում նկարահանեց և երկու անգամ ցուցադրեց: Իսկ երկրորդ հատորն այդպես էլ մինչև օրս անտիպ է, նույնիսկ տարիներ առաջ այն կորավ հրատարակչությունում և ստիպված եղա ամիսներով աշխատել, երկրորդ անգամ պատրաստել և ներկայացնել հրատարակության: Ավա՛րդ:

...Գիտե՞ք, որքան վիրավորական է գիրք տպագրելու համար սրան-նրան դիմելը, ինչպես Հրանտի հերոսն է «Մենք ենք, մեր սարերում» ասում, ախր «մենք ոչխար ծախող չենք, մենք ոչխար պահող ենք»: Տխուր, շատ տխուր բան է անտիպ գիրքը, մի տեսակ շապրած կյանքի նման է, ծնվելիք, բայց չծնված, դեռ չծնված երեխայի նման է, որ և՛ կա, և՛ չկա»: Տպագրվել է Ս. Վարդանյանի լուսանկարը:

### **Երրորդ բաժին**

5. «Շաշ» հյուրը // Աիդա Պետրոսյան, **Մատենիկ**, երրորդ դասարան-ցիների մայրենիի գիրք-տետր, առաջին մաս, ՀՀ լուսավորության նախ., Երևան, «Նոր դպրոց» հրատ., 1995 (- 104 էջ), էջ 9:

«Հրեղեն ձին» (1981) բանահյուսական ժողովածուից գրական արևելահայերենի է վերածվել «Շաշ դոնադը» զվարճապատումը (էջ 72):

6. Игорь Кузнецов, Одежда армян Понта. Семеотика материальной культуры, Москва, издательская фирма «Восточная литература» РАН, 1995 (294 с.), с. 6, 7, 14, 15, 41, 270, 293.

Գիրքը նվիրված է Սև ծովի հարավային և հյուսիսային ափերի հայերի, հեղինակի բնորոշմամբ՝ Պոնտոսի հայերի հագուկապին, անվանումներին և այլն: Որպես Պոնտոսի հայերի ուսումնասիրող, քանիցս հիշատակվում է նաև Ս. Վարդանյանը, էջ 6, 7, 14, 15, 41, 270, 293: Գրքից հատվածներ. «Начиная с 1984 г. несколько выездов к амшенским армянам Краснодарского края и Абхазии и хемшилам-мусульманам Киргизии и Казахстана совершил ереванский филолог-журналист С. Вартамян» (с. 6).

«Ритуальная одежда всех субэтнических групп в музейных фондах не представлена. Очень немного вещей, опять-таки либо обуви, либо украшений, либо ритуальных предметов (яхлухи и платки), имеется в частных коллекциях С. Вартамяна и автора книги.

...Из-за скудности музейных коллекций фотографии из семейных архивов имеют очень большое значение. Те из них, которыми мы располагаем, относятся к концу XIX - началу XX в. до переселения (почти исключительно городские трапизонцы) и к 20-30-м годам XX в. или несколько позже, после переселения (по всем субэтническим группам). Интересные семейные фотографии армян Понта есть в собрании С. Вартамяна» (с. 7).

«- подговор с. Джернал (по Вартамяну, «ардлейский» без характерного амшенского р>2, j, Ø), Аджария;

-подговор с. Гонио (по Вартамяну, «турцеванский» без характерных амшенских р>2, j, Ø и шն>ոն), Аджария» (с. 14).

«Ардлейский» и «турцеванский» подговоры; материалы личных наблюдений – два варианта из Джаника, села Орду, селения Гонио и Джернал [Վարդանյան, 1987]» (с. 15).

(\*Վարդանյան, 1987.- Վարդանյան Ս. Գ. Կրոնափոխ համշենահայերին սիստիա-ազգազրոյէն ներկայացնելու փորձ.- Республиканская научная сессия, посвященная итогам полевых этнографических и фольклорных исследований 1984-1985 гг. Тезисы докладов. Ер., 1987, с. 95-97).

«По устному сообщению С. Вартамяна, наиболее урбанизирован комплекс одежды хемшилов Казахстана. Несмотря на то что современная мужская одежда мусульман представляет собой уже урбанизированный костюмный комплекс с полутрадиционными элементами (шапочка куди), женская одежда как в Турции, так и в Средней Азии и у переселенцев оттуда в Краснодарском крае-полутрадиционная с этнически окрашенными чертами» (с. 41).

«В собрании С. Вартапяна имеется тшасак, в Государственном музее истории Армении-несколько тшабла и тшасак, происходящих из г. Трабзона» (с. 270).

7. Մաքրուհի Պ. Յակոբեան, Ողջագուրումներու եւ բաժանումներու յաւերժական ճամբուն վրայ, Իսթանպուլ, 1995 (- 104 էջ), էջ 23, 100, 101:

Գրքում ներկայացված են 1994 թ. հոկտեմբերի վերջին հեղինակի՝ «Նոր Մարմարա» թերթի խմբագրի տեղակալ Մաքրուհի Հակոբյանի Երևան այցելության ժամանակ կայացած հանդիպումները, այդ թվում՝ Ս. Վարդանյանի հետ:

«...25 Հոկտեմբեր 1994 Երեքշաբթի:

...Պրն. Մկրտիչեան մեծ փափաք կը յայտնէ, զիս իրենց բնակարանը առաջնորդելու: Բայց սահմանափակ է իմ ժամանակը եւ առաջին հերթին, պէտք է այցելեմ արդէն, Հայաստանի Կրօնական Գործերու Պետական Խորհուրդի նախագահի տեղակալ Սերգէյ Վարդանեանի, որուն հետ ժամադրուած եմ խօսելու համար իմ կողմէ թարգմանաբար հրատարակելի իր գիրքի՝ «Արեւածաղիկ»ի մասին: Պրն. Մկրտիչեան կը փափաքի ուղեկցիլ ինձի: Ես պատիւ կը համարեմ իր ներկայութիւնը՝ իմ մօտ; Այսպէս՝ խօսակցելով, Պրն. Մկրտիչեանի հետ, կը հասնինք Պրն. Վարդանեանի մօտ: Նպատակս է իրեն տեղեկացնել թէ շատ սիրած եմ մանկական պատմուածքներու իր հատորը եւ զայն արեւմտահայերէնի վերածելով տպել ծրագրած եմ: Կը խնդրեմ իր արտօնութիւնը: Ի՛նչ արտօնութիւն. ան այնքան կ'ուրախանայ, որ հազարումէկ շնորհակալութիւնս ալ կը յայտնէ ինձի: Կը խնդրէ որ եթէ գիրքը տպուի, քանի մը օրինակ ալ իրեն ուղարկեմ: Գոհ է մանաւանդ որ շատ սիրած եմ իր պատմուածքները: Իր գոհունակութիւնը իմ ալ գոհունակութիւնս է անշուշտ:

Պրն. Վարդանեան, չի մոռնար նաեւ պատշաճ մակագրութեամբ մը, ինձի նուիրելու իր երկու թանկագին գիրքերը՝ «Հրեղէն Ձին» եւ «Հայաստանի Մայրաքաղաքները», մեծապէս երջանկացնելով զիս:

Կարճատեւ մեր տեսակցութեան աւարտին, Պրն. Վարդանեան կ'առաջարկէ իր ինքնաշարժը տրամադրել ինձի, երթալու համար ուր որ կ'ուզեմ: Սիրով կ'ընդունիմ իր ազնիւ առաջարկը եւ Պրն. Մկրտիչեանի հետ կ'երթանք բազմիլ ինքնաշարժին մէջ: Նախ կը դիմենք ռատիօկայան, յետոյ հեռատեսիլի կեդրոնը, ուր կարգաւորելի կարեւոր գործեր ունիմ: Յետոյ շարժավարն ալ առնելով մեզի հետ, կարճ միջոցի մը համար, կը հանդիպինք Պրն. Մկրտիչեանի բնակարանը» (էջ 100, 101):

Գրքում հիշատակվող «Պր. Մկրտիչեանը» ճանաչված բարբառագետ, լեզվաբան, արևելագետ, բ.գ.դ., պրոֆեսոր Ներսես Մկրտչյանն է:

8. Ս. Վարդանյանի գիրքը Ստամբուլում, «**Հայաստանի Հանրապետություն**», օրաթերթ, Երևան, 1995, յունուարի 13, էջ 4:

Ստամբուլում «**Արևածաղիկը**» գրքի արևմտահայերեն հրապարակման («Արաս» հրատ.) մասին «**Նոյյան տապան**» գործակալության լրատվությունն է:

9. Ռուզան Մինասյան, Երևանն ու Արարատը Նոյյան տապանով, «**Լրագիր**», օրաթերթ, Երևան, 1995, նոյեմբերի 21, № 202, էջ 4:

«Հայաստանի մայրաքաղաքները» (1995) ներկայացվում է գրքից Երևանի մասին քաղված հարուստ տվյալներով:

10. Աելիտա Դոլուխանյան, Նշանակալի ձեռնարկ, «**Գրական թերթ**», շաբաթաթերթ, Երևան, 1995, ապրիլի 14, № 6, էջ 3:

Բ.գ.դ. Աելիտա Դոլուխանյանի հոդվածը նվիրված է Ս. Վարդանյանի մանկական պատմվածքների «**Արևածաղիկը**» գրքին և Ստամբուլում արևմտահայերեն հրատարակությանը: Գրախոսականից հատված. «Մանկան համար գրելը հեշտ չէ, և նախաշնորհված է ոչ բոլորին, թեպետ շատերն են այդ բնագավառում իրենց գրիչը փորձում: Եվ նրանք, ովքեր կարողանում են, իրոք, ստեղծել մանկական գրականություն, ապա նրանց գործը պետք է ընկալել որպես հայտնություն»:

Ահա այդպիսի մի հայտնություն է Սերգեյ Վարդանյանի «**Արևածաղիկը**» պատմվածքների ժողովածուն, որը վերջերս արևմտահայերենով լույս տեսավ Ստամբուլում... Եթե մի քանի տարի առաջ Սերգեյ Վարդանյանի գիրքը հիանալի նվեր էր Հայաստանի մանուկներին, ապա այժմ այն այդպիսին է նաև սփյուռքահայ երեխաների համար»:

11. Յ[արութիւն] Քիրքճեան, Որակի ու ոգիի հանդիսարան մը, «**Դրօշակ**», կիսամյա հանդես, Աթենք, 1995, նոյեմբերի 2-29, № 15-16 (1471), էջ 42, 43:

Սփյուռքահայ ճանաչված մտավորական, մանկավարժ, պատմաբան, բազմաթիվ գրքերի ու հայոց լեզվի և գրականության դասագրքերի հեղինակ, փորձառու լրագրող, հրապարակախոս, «**Դրօշակի**» խմբագիր Հարություն Քյուրքչյանի (1943-2024) «Հայաստանի մայրաքաղաքները» (1995) գրքի մասին գրախոսությունից հատված. «Պատմագետ-ազգագիր Սերգեյ Վարդանեանի այս ուսումնասիրական գործը կը ներկայանայ գեղատիպ, պատկերազարդ ալպոմ-հատորի մը ձևին տակ: Կարժէ սակայն անմիջա-

պէս շեշտել, որ անիկա հակառակն է մեր օրերուն այնքան յաճախ երեւացող ալպոմային թեթեւ հրատարակութիւններու, այսինքն՝ բարձրորակ աշխատասիրութիւն մը, որ միանգամայն կը վայելէ խնամուած, ակնահաճոյ հրատարակութեան մը առաւելութիւնները:

...Մեր դարասկիզբի ե՛ւ նախորդ դարու պատմագետ-ազգագրագետներու գործին փայլուն մէկ շարունակումը ողջունելով հանդերձ անոր մէջ, գոհունակութեամբ կրնանք հաստատել, միւս կողմէ, որ ան գերծ է Լէօներու ե՛ւ դեռ աւելի նորերու (արդէն մոռնալով ա՛լ աւելի հիները...) գրքունակութենէն, ծանրութենէն» (էջ 42):

«Ուրիշ հիմնական, ոչ-անտեսելի արժանիք՝ Մ. Վարդանեանի գործի այս երկրորդ հրատարակութեան մէջ տեղ գտած վիմագրական (gravure) թէ լուսանկարչական փաստաթուղթերու ճոխ, աննախընթաց հաւաքածոն է: Թուրնըֆորէ, Թեքսիէ, Քեսթնըրէ վերարտադրուած բնանկար թէ քարտէս հին վիմատպագրութիւններէն մինչեւ հին ու նոր հազուագիւտ լուսանկարներ, ներառեալ արտաքին շապիկը ծածկող Վանի լուսանկար-համապատկերը, - նիւթեր են, որոնք հատորը կը դարձնեն առաւել ակնահաճոյ, բայց մանաւանդ զայն կը վերածեն հնատպային թէ գեղարուեստական արժէքով շահեկան ալպոմ- հաւաքածոյի:

Կարճ՝ «Հայաստանի Մայրաքաղաքները» կը ներկայանայ իբր որակի ու ոգիի հանդիսարան մը, թանկագին՝ յատկապէս «ոգու սովի» օրերու եւ ժամանակներու համար, ինչպիսին է, ինչպիսին եղաւ հայութեան համար, անսպասելիօրէն ու ամիսսալիօրէն, դարավերջի այս տասնամեակը: Պիտի արժէր, որ անիկա հասնէր ամբողջ հայութեան, մասնակցէր պայքարին՝ ընդդէմ հայութիւնը «մրրկաւ զատելու» նոր փորձերու, հոգեկան սովի մատնելու նորագոյն ճիգերու: Այս մտղթանքը՝ նաեւ ի տես անոր տխրօրէն սահմանափակ տպաքանակին (1000 օրինակ, կըսէ վերջին էջը...): Ո՛չ մէկ կասկած, անգամ մը եւս, այս գործը արժանի է լայնագոյն տարածումի, ուրեմն եւ՝ վերահրատարակութեան» (էջ 43):

12. Uwe Bläsing, Armenisch-Türkisch, Etymologische Betrachtungen ausgehend von Materialien aus dem Hemsingebiet, nebst einigen Anmerkungen zum Armenischen, insbesondere dem Hemsindialekt, Amsterdam - Atlanta, GA, 1995 (208 p.):

Նիդեռլանդների (Հոլանդիա) Լեյդեն քաղաքի համալսարանի աշխատակից, դոկտոր, պրոֆեսոր, թուրքագետ Ուվե Բլեզինգի գրքի (վերնագրի թարգմանությունը՝ «Հայերենը և թուրքերենը. ստուգաբանական դիտարկումներ Համշենի տարածքի նյութերի հիման վրա՝ հայերենին, հատկա-

պես Համշենի բարբառին, առնչվող ծանոթագրություններով») օգտագործված գրականության ցանկում (էջ 190) նշված է նաև Ս. Վարդանյանի հոդվածը (Համշենի մուսուլման հայերը, «Իրան-Նամե», 1993, № 4, էջ 12-13):

1996

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Նախկին Խորհրդային Միությունում բնակուող մահմետական հայերը, «**Բազմավեպ**», հանդես, Վենետիկ-Ս. Ղազար, 1996, № 1-4, էջ 189-200:

Ս. Վարդանյանն անդրադառնում է համշենցիների մի մասի բռնի կրոնափոխության մասին գրած հայ և օտար հեղինակներին, այդ թվում՝ գեղծարարներին. «...թուրք պատմաբան Ս. Ռեզան այնքան է առաջ անցնում, որ Ռիզեի եւ Խոփայի շրջանների կրօնափոխի հայերի մասին գրում է, թե նրանք «ծագում են իսթական թուրքերից: Նրանք նախախլամական շրջանում թուրքերի կողմից ընդունուած կրօնի պատճառով որոշ ժամանակ հայերէն են խօսել, սակայն նրանք, այնուհետեւ ընդունելով մահմետականութիւն, վերադարձել են թրքութեան գիրկը, ստացել իրենց բուն ազգային դէմքը: Այդ ժողովուրդը հիմա թրքախօս է. թուրքերէնից բացի ա՛յլ լեզու չգիտի»:

«Խեթական թուրքեր» արտայայտութեան անհեթեթութեան չանդրդառնալով, ասենք, որ Ռեզայի այն պնդումը թէ կրօնափոխի համշենահայութիւնը «թուրքերէնից բացի ալ լեզու չգիտի» լիովին հերքում են վերջին տասնամեակների ընթացքում հայ եւ օտար բանահաւաքների գրառած բանահիւսական նիւթերը» (էջ 194):

«Իմ գրառած նիւթերից 9 հեքիաթ եւ իրենց նօտագրութեամբ մէկ երգ ու 28 խաղիկ է կից բառարանով հրատարակուել «Չայն Համշենական» ժողովածուում:

Այս բանահիւսական նմոշները իրենց զուգահեռներն ունեն թե՛ քրիստոնէայ համշենահայերի, թե՛ առհասարակ Հայաստանի արեւելեան եւ արեւմտեան հատուածներում գրառուած բանարուեստի հետ եւ առաւել կամ նուազ ամբողջական տարբերակներ են: Յատկանշական է, որ մեր օրերում եւս կրօնափոխի համշենցիները այլեւայլ առիթներով խաղիկներ են հնարում: Նրանք հիանալի գիտեն նաեւ նախնեաց պարերը, իսկ աւանդական նուագարաններից նախընտրում են քեմենչան:

Ըստ մեր ումնասիրութիւնների՝ կրօնափոխի համշենահայերը խօսում են Համշենի բարբառի երկու խօսուածքներով՝ արդլեցիների եւ թուրքեւանցի-

ների: Թուրքիայում գրառուած բանահիւսութիւնը վկայում է, որ պատմական հայրենիքում բնակուողները եւս խօսում են այս երկու խօսուածքներով: Պահպանելով հանդերձ գրաբարի բառային եւ քերականական բազմաթիւ ձեւեր, այս խօսուածքները մի շարք դէպքերում կրել են զարմանալի փոփոխութիւններ եւ զգալապէս տարբերում են քրիստոնէայ համընդհանայերի Ձնիկի ու Տրապիզոնի խօսուածքներից» (էջ 200):

Ս. Վարդանյանը «Բազմավեպում» առաջին անգամ քիչ թէ շատ մանրամասն ներկայացնում է 1944 թ. Աջարիայի սահմանամերձ գյուղերից կրոնափոխ համընդհանների Ղրղաստան և Ղազախստան արքարի, 1984 և 1987 թթ. Կենտրոնական Ասիայում իր կատարած ուսումնասիրությունների մասին: Ըստ այդմ. «Կրօնափոխ համընդհանայերը բնութագրւում են իբրեւ քաջ, աշխատասէր, սակավապէտ, լրջախոհ, զգուշաւոր, ինքնամփոփ եւ բարոյական չափանիշներով առաջնորդուող: Ընդհանուր առմամբ կրօնամուլ չեն, եթէ նոյնիսկ մզկիթ կայ, ապա այցելում են բացառապէս 50-60ից բարձր տարիքի տղամարդիկ: Նրանք գիտեն, որ իրենց նախնիները մահմետականութիւն են ընդունել արիւնտոտ սպանդի հետեւանքով: Ղրղաստանում մուլլա Հեմդի Ակբույուկօղլին (ծն. 1904 թ.), այդ հաստատելով, բերեց մի արաբատառ ձեռագիր գիրք, որին իմ քրիստոնէայ լինելը պատճառաբանելով, չթոյլատրեց ձեռք տալ:

Նրա ասելով, գրքում կրօնական նիւթերի, զանազան բուժամիջոցների եւ այլնի հետ, գրառում կար նաեւ համընդհանայերի բռնի կրօնափոխութեան մասին: Գրառումը կատարուել էր հնում՝ հեղինակը Ակբույուկի Ալի Էֆենդին էր: Ըստ այդմ կրօնափոխութիւնը տեղի է ունեցել 1780ական թուկաններին» (էջ 198):

2. Հայաստանի մայրաքաղաքները. Վան, Արմավիր, Երվանդաշատ, շարունակելի, «ՊԱՍ», պարբերաթերթ, Երևան, 1996, փետրվարի 17-23, № 6, էջ 2:

«Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքից տարբեր մայրաքաղաքների մասին հատվածներ են արտատպվել:

3. Հայաստանի մայրաքաղաքները. Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ, Դվին, Բագարան, Շիրակական, Կարս, Անի, «ՊԱՍ», պարբերաթերթ, Երևան, 1996, մարտի 2-8, № 8, էջ 2:

«Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքից տարբեր մայրաքաղաքների մասին հատվածներ են արտատպվել:

4. «Հայաստանի մայրաքաղաքները», «02», շաբաթաթերթ, Երևան, 1996, մայիսի 11 (№ 18), էջ 7:

Ներկայացվել է «Հայաստանի մայրաքաղաքները» (1995) գիրքը, որից քաղվածաբար որոշ հատվածներ են արտատպվել, որոնք վերաբերում են տարբեր դարերում իրավախախտումներին և պատիժներին:

5. Էջեր այրվող Այգեստանների հերոսամարտի պատմությունից, Վան-Վասպուրական ինքնավարության 70 օրերը, «Լրագիր օր», օրաթերթ, Երևան, 1996, մայիսի 28 (79), էջ, 6:

Տպագրվել է մեկ հատված «Հայաստանի մայրաքաղաքները» (1995) գրքի Վանին նվիրված գլխից:

### Երկրորդ բաժին (հարցազրույցներ)

6. Հայոց 12 մայրաքաղաքները, հարցազրույցը՝ Սարո Գյոդակյանի, «Առավոտ», օրաթերթ, Երևան, 1996, փետրվարի 28, № 37, էջ 6:

«Հայաստանի մայրաքաղաքները» (1995) գրքի մասին է: Տպագրվել է նաև Ս. Վարդանյանի լուսանկարը:

7. Հարցազրույց հայագիտակ և հայախորհուրդ, հարցազրույցը վարեց Անի Մուղնեցյանը, «ՊԱՍ», պարբերաթերթ, Երևան, 1996, ապրիլի 13-19, № 14, էջ 2:

Ս. Վարդանյանի գրական-գիտական և աշխատանքային գործունեության մասին է: Տպագրվել է նաև Ս. Վարդանյանի լուսանկարը:

8. Հայոց պատմությունը մայրաքաղաքների միջոցով, «Գրքերի աշխարհ», ամսաթերթ, Երևան, 1996, № 1 (298), էջ 1, 10:

Ս. Վարդանյանի «Հայաստանի մայրաքաղաքները» գրքի, նաև տարբեր թեմաներով հոդվածների և գրքերի մասին է: Հարցազրույցից հատված. «-Տարբեր ժանրի, տարբեր բնույթի լրագրերում ու հանդեսներում քիչ չի երեւացել Ձեր անունը. պատմություն, բանասիրություն, ազգագրություն, գեղարվեստական գրականություն: Կարելի է՞ ասել, որ երկակի կյանք եք վարում:

–Թեև ես կարող եմ Ձեր թվարկած շարքը ընդլայնել, բայց դա երկակի կյանքի հաստատում չէ: Ես ինչպես ապրում, այդպես էլ գրում եմ: Իմ հոդվածները, ճիշտ է, հաճախ տարաբնույթ են, բայց նույն գրչի արդյունքն են, եթե նույնիսկ իմ որոշ գրող ընկերների նման նաև նկարեի, ապա կրկին շատ բնական կլիներ: Թեև, ընդունում եմ, որ խոշոր հաջողության հասնելու համար ճիշտը մեկ գործով զբաղվելն է: Այնպիսի գիտական թեմաներ

կան, որ տասնամյակներ ուսումնասիրելուց հետո էլ թվում է անհատակ ծով ես մտել: Էյնշտեյնը մի առիթով ասել է, որ իր հաջողության գաղտնիքն այն է, որ ինքը ողջ կյանքում ունեցել է մեկ մուրճ ու մեկ մեխ, այսինքն՝ ուսանողական տարիներից մինչև ծերություն զբաղվել է միայն հարաբերականության տեսությամբ: Գիտության հետագա ուղին, հաստատ, այդ է: Բայց գիտակցելով հանդերձ, ես շատ եմ ցավում, որ ավելի բազմազան թեմաներով չեմ գրել, որովհետեւ այնքան հետաքրքիր ու անսպառ է Հայոց պատմությունը:

Տարիներ շարունակ ահռելի նյութ եմ կուտակել Կրասնոդարի երկրամասի եւ Աբխազիայի հայության, իշխանուհի Մարիամ Թումանյանի, ազգագրագետ Մարգիս Հայկունու, մահմեդական համշենցի հայերի մասին, ո՞րը թվեմ: Գրածներիս մի մասն էլ թելադրել է կյանքը: Երբ 1988-ին սկսվեց դարաբաղյան շարժումը, լրջորեն ուսումնասիրում էի Մեւ ծովի հարավային ափերի հայության անցյալը՝ մ. թ. ա.-ից սկսած մինչև 1923 թվականը: Մի երկու հարյուր էջ գրել էի, գրիչը վայր դրեցի, գնացի Թատերական հրապարակ ու այդպես էլ գործս կիսատ մնաց: Փոխարենը օրվա թելադրանքով մի քանի խոշոր հոդվածներ հրատարակեցի խորհրդային տարիներին Հայաստանից Ադրբեջանին անցած տարածքների մասին, Օլժաս Սուվեյմենովի ադրբեջանամետ մի հոդվածի պատասխանը գրեցի, բարձրացրեցի նաեւ Հայաստանից ուժգնացող արտագաղթի չափերի, ուղղությունների, հայության ու հանրապետության անելիքների հարցը եւ այլն: Վերջինս «**Խորհրդային Հայաստանը**» կարծիքի էր ուղարկել ճանաչված աշխարհագրագետ Գրիգոր Ավագյանին, որն այն անվանեց դոկտորական դիսերտացիայի համարժեք: Ինքնագովություն համար չէ, որ հիշում եմ, պարզապես ամեն մի հոդվածի վրա տարբեր արխիվներում մի քանի ամիս աշխատել եմ, եւ Ձեր հարցում հնչած միտքը, թե իմ ստեղծագործական ուղին դյուրին է թվում, խաբուսիկ է. իրականում շատ դժվար եմ գրում, ամիսներով, օրը 10-12 ժամ: Մա անցյալում, իսկ վերջին տարիներս, համատարած խավարի մեջ ընկղմված միայն ծխում եմ եւ ավստսում չգրած գրքերի համար»:

9. Ռուզան Մինասյան, Որպեսզի բարեգործականները չզբաղվեն հոգևորությամբ (շարունակելի), «**Լրագիր օր**», օրաթերթ, Երևան, 1996, ապրիլի 4 (№ 44), էջ 5:

Ս. Վարդանյանի հետ հարցազրույցը Հայաստանի կրոնական կազմակերպությունների գործունեության մասին է: Տե՛ս թերթի հաջորդ համարը:

10. Հայաստանում գրանցված կրոնական կազմակերպությունները (սկիզբը՝ նախորդ համարում), «**Լրագիր օր**», օրաթերթ, Երևան, 1996, ապրիլի 5 (№ 45):

Նախորդ համարում տպագրված «Որպեսզի բարեգործականները չգրադվեն հոգևորությամբ» հարցազրույցի շարունակությունն է:

### **Երրորդ բաժին**

11. Նոր գիրք. Սերգեյ Վարդանյան «Հայաստանի մայրաքաղաքները», «**Դպրոց**», շաբաթաթերթ, Երևան, 1996, փետրվարի 18-25, № 3 (30), էջ 2:

«**Հայաստանի մայրաքաղաքները**» (1995) գրքի մասին փոքր գրախոսական-լրատվություն է:

12. Անահիտ Հարությունյան, Վան ... Երևան, «**Այժմ**», շաբաթաթերթ, Երևան, 1996, հունվարի 24-30 (№ 1), էջ 7:

Բ.գ.թ. Ա. Հարությունյանի գրախոսությունը նվիրված է «**Հայաստանի մայրաքաղաքները**» (1995) գրքին: Հոդվածից հատված. «Անցած տասը տարիների ընթացքում հեղինակի անդուլ տքնանքով հավաքված նոր ու հարուստ նյութերի եւ, անշուշտ, ժամանակին իշխած գաղափարական արժեքների վերացման շնորհիվ է, որ հնարավոր դարձավ սույն հրատարակությունը: Ուսումնասիրությանը կցված գրականության ահռելի ցանկին մի թռուցիկ հայացք նետելն իսկ զարմանք է հարուցում, թե ինչպես է մեր օրերում, մոմի լույսի տակ աշխատելով, հեղինակը կուտակել այդքան հարուստ փաստագրական նյութ եւ դրանք դրել շրջանառության մեջ: Բայց ի տարբերություն նմանատիպ այլեւայլ գիտական հրատարակությունների, Սերգեյ Վարդանյանի այս աշխատությունը ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ, գիտականությունը բնավ չի ճնշում ընթերցողին, ընդհակառակը, հավաստիություն է հաղորդում, քանզի հեղինակը չի ձգտում ապացուցել, բանավիճել կամ ժխտել ուրիշներին, այլ խուսափելով ծեծված փաստերից ու չարչրկված պատմական դրվագներից, լայնորեն օգտագործում է ոչ միայն հայ, այլեւ վրացի, ռուս, թուրք, ֆրանսիացի, անգլիացի, գերմանացի, հոլանդացի, իտալացի, չեխ, լեհ եւ այլ ազգությունների հնագետների, ճանապարհորդների ու ականատեսների գրքերն ու ուղեգրությունները, շատ անգամ ներկայացնելով մեզ ծանոթ իրադարձությունները նրանց աչքերով, դրանով իսկ ստեղծելով հետաքրքիր ու անաչառ պատում:

Թեեւ մեր պատմությունը լի է ավեր ու կոտորածով, բայց դարձյալ ի տարբերություն նմանատիպ այլ գրքերի, այստեղ ողբ ու կական չես տես-

նի. մեր վշտառատ անցյալի ողբերգական իրադարձությունների հանդեպ հեղինակի արժանապատիվ կեցվածքն ու հարազատ ժողովրդի պատմության նկատմամբ խորին ակնածանքը փոխանցվում են ընթերցողին, եւ կոտրված սրտով չէ, որ փակում ես գիրքը, այլ այն գիտակցությամբ, որ թեպետ փոքր ածու ենք, բայց արդարեւ մեզանում էլ արժանահիշատակ շատ գործեր են արվել:

Եվ այդ արժանահիշատակ գործերի, դեպքերի ու դեմքերի մասին բազմաթիվ թվերն ու փաստերը հեղինակն այնքան նրբորեն ու խիստ ընտրությամբ, կարելի է ասել, բացառիկ ճաշակով է ներկայացնում, որ դրանք նոր հնչեղություն են ստանում ու առավել ծանրակշիռ դառնում»:

13. Կարո Յովսեփեան, Հայաստանի մայրաքաղաքները, Հեղինակ՝ Սերգեյ Վարդանեան, «Յառաջ», օրաթերթ, Փարիզ, 1996, մարտ 8 (№ 18.806), էջ 2, 3:

Մարսել քաղաքի ավագանու անդամ, Հայ մշակույթի և երիտասարդության տան վարչության ատենապետ (1998-2014 թթ. Մարսելի վարչական շրջաններից մեկի ղեկավար) Կարո Հովսեփյանի գրախոսությունից հատված. «Գիրքը կը կարդացուի հեշտությամբ եւ հետաքրքրությամբ: Հեղինակը անշուշտ դիմած է պատմական դրուագներուն, նիւթերուն, փաստերուն, սակայն լայնօրէն օգտագործած է հայ եւ օտար հնագէտներուն, ուղեւորներուն, ակնաստեսներուն ուսումնասիրութիւնները: Մատենագիտութեան ցանկը բացառիկ հարստութիւն մը ունի:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԸ» համադրութեան, ամփոփումի գիրք մըն է որ կարելի է օգտագործել դպրոցներուն մէջ պատմա-աշխարհագրական եւ մշակութային ծանօթութիւններու իր տուած գումարով» (էջ 3):

14. Le Centre Cultural Saint Mesrob, Conference animée par Segueï Vartanian, Vice-Ministre des Affaires Religieuses d'Arménie "Les Capitales L'Arménie", Dédicace de l'auteur. Mardi 25 Juin a 21 heures. «Յառաջ», օրաթերթ, Փարիզ, 1996, յունիս 25, էջ 4:

Հայտարարություն է այն մասին, որ հունիսի 25-ին Փարիզի Սուրբ Մեսրոպ մշակութային կենտրոնում հանդիպում է լինելու «Հայաստանի մայրաքաղաքները» գրքի հեղինակ, Հայաստանի կրոնի գործերի պետխորհրդի փոխնախագահ Ս. Վարդանյանի հետ:

15. Грант Багратян: «У меня нет ни одного врага», Примьбер-министр Республики отвечает на вопросы главного редактора «Урарту» Иосифа Вердяна, «Урарту», еженедельник, Ереван, 1996, май, № 17 (167), с. 1, 4, 5.

«Урарту» շարաթարթերթի գլխ. խմբագրի՝ Իոսիֆ Վերդիյանի «Ինչպե՞ս եք անցկացնում ազատ ժամանակը» հարցին վարչապետ Հրանտ Բազրատյանը պատասխանում է, որ կարդում է հայկական մայրաքաղաքների պատմության մասին գիրք:

«- Как проводите свободное время?

- Его мало. Улучив час-другой, читаю. На тумбочке-книга об истории армянских столиц, до этого увлекала история Древнего Рима в изложении Момзена» (с. 5).

16. 40 կազմակերպություն, 15 ուղղություն, «Առավոտ», ամենօրյա թերթ, Երևան, 1996, հունվարի 11, № 3, էջ 1:

«**Նոյյան տապան**» լրատվական գործակալությունը ՀՀ կրոնի գործերի պետխորհրդի նախագահի տեղակալ Ս. Վարդանյանից տեղեկացել է գրանցված կրոնական կազմակերպությունների մասին:

1997

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Ծննդավայր, «Պատանեկան արձագանգ», ամսագիր, Բեյրութ, 1997, ապրիլ, № 4, էջ 85-88: «Պատանեկան արձագանգ» ամսագրի պատասխանատու խմբագիր Ե. Հ. Ք.-ի [Երվանդ Քասունու] առաջաբանով:

Տե՛ս Ս. Վարդանյան, **Արևածաղիկը, Երևան, 1989, էջ 20-24:**

Ս. Վարդանեան, Արևածաղիկը, Արևմտահայերենի վերածեց՝ Մաքրուհի Պ. Յակոբեան, Իսթանպուլ, 1994, էջ 43-47:

Պատմվածքի արևմտահայերեն տարբերակի հիման վրա ստեղծված «Հայրենիք» վերնագրով թատերախաղը 1998 թ. բեմ են բարձրացրել Նյու Յորքի Սրբոց Նահատակաց շարաթորյա դպրոցի սաները, տե՛ս 1998 թ. № 13 և 14 մատենագիտական նկարագրությունները, իսկ «Ուղտին հայրենիքը» արևմտահայերեն տիկնիկային ներկայացումը (ռեժիսոր՝ Վարդան Գառնիկի Հովհաննիսյան) 2011 թ. խաղացվել է Նյու Ջերսիում (ԱՄՆ): Տե՛ս Aram Arkun, The Camel's Homeland, A Western Armenian Puppet Show in New Jersey, "The Armenian Mirror-Spectator", 2011, June 25, No 50 (4194), p. 12, Մասաչուսեթս, ԱՄՆ, 2011, հունիսի 25: Հ[ակոբ] Ծ[ուլիկյան], «Ուղտին հայրենիքը» տիկնիկային ներկայացում Նյու Ջերսիում, «Ազգ», թերթ, Երևան, 2011, յուլիսի 19:

2. Van, "Azad magazine" (Տվյալներ չունեն):

3. Armavir. Ancienne capitale d'Arménie, "Azad magazine", Grenoble, France, 1997, № 78, p. 26, 27.

«Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքի Արմավիր գլխից, էջ 21-28, ֆրանսերեն ազատ թարգմանությունը՝ Աշոտ Հակոբյանի (Achot Akopian).

4. Ervandachat, 3 ème capitale de L'Arménie, «Azad magazine», Grenoble, France, 1997, № 79, p. 27.

Քաղվածաբար ֆրանսերեն է թարգմանվել «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքի Երվանդաշատ գլխից, էջ 29-31:

5. Artachat, 4 ème capitale, “Azad magazine”, Grenoble, France, 1997, № 80, p. 21.

Ֆրանսերեն է թարգմանվել «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքի Արտաշատ գլխից:

6. «Բազմավեպ»-ի հերթական համարը, «Գրքերի աշխարհ», ամսաթերթ, Երևան, 1997, № 1(300), էջ 9:

Անստորագիր է, հեղինակը Ս. Վարդանյանն է: Ներկայացվում է «Բազմավեպի» 1996 թ. № 1-4 համարը: Անդրադարձ է կատարվել այդ համարում տպագրված Ս. Վարդանյանի «Նախկին Խորհրդային Միությանում բնակուող մահմետական հայերը» հոդվածին:

### Երրորդ բաժին

7. Հայկաշեն Ուզունեան գրական մրցանակ, «Դիտակ», Բեյրութ, 1997, դեկտեմբեր, էջ 92:

«Դիտակի» խմբագրությունը ներկայացնում է Թեքեյան մշակութային միության «Հայկաշեն Ուզունեան» մրցանակի արժանացածներին՝ այդ թվում Ս. Վարդանյանին՝ «Հայաստանի մայրաքաղաքները» (1995) գրքի համար:

8. Lara Khatchikian, Monday Morning in Armenia for the inauguration of the Tekeyan Center. The Haigashen Ouzounian Literary Award Ceremony, “Monday Morning”, The weekly News Magazine, Beirut, Lebanon, 1997, November 3, p. 3, 48.

Ներկայացվում են «Հայկաշեն Ուզունեան» մրցանակի արժանացածները (այդ թվում՝ Ս. Վարդանյանը) և նրանց մրցանակ հանձնելու պահը և լուսանկարները:

9. ԹՄՄ «Հայկաշեն Ուզունյան» մրցանակը Հրաչյա Հովհաննիսյանին, Կիմ Բակշին, Սաստուր Մնացականյանին և Սերգեյ Վարդանյանին, «Ազգ», օրաթերթ, Երևան, 1997, հոկտեմբերի 15, № 197, էջ 1:

1995 և 1996 թթ. մրցանակակիրների մասին է, Հրաչյա Հովհաննիսյանը արժանացել է «Կապույտ լեռան շուքը» ժողովածուի, Կիմ Բակշին՝ «Սուրբ

Ղազարի հարությունը» գրքի, Ասատուր Մնացականյանը (հետմահու)՝ «Հայրեններ» գրքի, Ս. Վարդանյանը՝ «Հայաստանի մայրաքաղաքները» գրքի համար:

10. Մուտքը՝ մրցանակների բաշխմամբ, «Սուրբակ», թերթ, Երևան, 1997, հոկտեմբերի 15:

«Թեքեյան» մշակութային միությունում «Հայկաշեն Ուզունյան» մրցանակների շնորհման (այդ թվում՝ Ս. Վարդանյանին) մասին է:

11. Ի. Շաբոյան, ԹՄՄ «Հայկաշեն Ուզունյան» մրցանակը դարձավ իսկապես համահայկական. Մրցանակաբաշխություն նորաբաց Թեքեյան կենտրոնում, «Ազգ», օրաթերթ, Երևան, 1997, հոկտեմբերի 16, էջ 6:

Նշվում է, որ պարգևատրվել են 1995-96 թթ. Հայաստանում հրատարակված գրքերի չորս հեղինակներ, այդ թվում «Սերգեյ Վարդանյանի՝ Հայաստանի մայրաքաղաքները մանրամասնորեն ներկայացնող (աշխարհագրական դիրք, բնակլիմայական պայմաններ, պատմիչների, ճանապարհորդական նոթերի վկայություններ, ճարտարապետություն) աշխատությունը»:

12. TCA Haigashen Ouzounian Literary Given to Four Writers in Armenia, “**The Armenian Observer**”, Los Angeles, 1997, December 3, p. 9.

ԹՄՄ «Հայկաշեն Ուզունյան» մրցանակի դափնեկիրներին՝ Հրաչյա Հովհաննիսյանին, Կիմ Բակշիին (նրան փոխանցելու համար հանձնվեց Սոս Սարգսյանին), Ասատուր Մնացականյանին (հետմահու) և Սերգեյ Վարդանյանին մրցանակներ հանձնելու հանդիսության մասին է:

13. Ա[նահիտ] Հարությունյան, «**Բազմավեպ**» 1996, «Այժմ», շաբաթաթերթ, Երևան, 1997, փետրվարի 5-11, № 3(50), էջ 7:

Հեղինակը ներկայացնում է «**Բազմավեպի**» 1996 № 1-4 համարը, մանրամասն անդրադառնում է նաև Ս. Վարդանյանի «Նախկին Խորհրդային Միութիւնում բնակուող մահմետական հայերը» հոդվածին:

14. Համշենի բարբառը տուն կանչող ճամբայ, «**Արարատ**», օրաթերթ, Պէրոուք, 1997, նոյեմբերի 20, էջ 3:

Անատրագիր է: Գրականագետ և լրագրող, բ.գ.թ. Լյուդվիգ Կարապետյանի «Համշեն. ձայն հողի և կարոտի, հրապարակախոսական ակնարկներ», խմբագիր՝ Սերգեյ Գալստյան, Երևան, «Վերնատուն» հրատ., 1997 (- 80 էջ) գրքույկի գրախոսությունն է: Լ. Կարապետյանը 1996 թ. այցելել է Կրասնոդարի երկրամասի Սոչիի, Ադլերի և Լազարևսկի շրջաններ, որոնք նա իր հոդվածներում անվանում է Համշեն: Այստեղից էլ գրքի վերնագրի Համշեն տեղանունը: Ի դեպ, գրախոսականի մեջ ևս այդ տարածքը ան-

վանվում է Համշեն: Գրքույկում տպագրվել են նաև Կրասնոդարի երկրամասի և Աբխազիայի մերօրյա հայ գրողների բանաստեղծությունները: Գրախոսության մեջ նշվում է. «Երիտասարդ գրող, լրագրող Սերկեյ Վարդանեանը տարիներ շարունակ բանահավաքչական լուրջ աշխատանք կատարեց համշենահայության շրջանում»:

1998

### **Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)**

1. Համշենցի մուսուլման հայերի ուսումնասիրության պատմությունից, «**Իրան-Նամե**», հանդես, Երևան, 1998, № 1-2-3 (29-30-31), էջ 2-11:

Ներկայացվում է Թուրքիայի, Աջարիայի, Դրդգստանի, Ղազախստանի և Ռուսաստանի իսլամ համշենցիների ուսումնասիրության պատմությունը: Տպագրվել են Դրդգստանի և Ղազախստանի իսլամ համշենցիների և հեղինակի լուսանկարները:

2. Երևելի Երևան, փաստեր, դեմքեր, հանգրվաններ, ըստ Ս. Վարդանյանի «**Հայաստանի մայրաքաղաքները**» (1995) գրքի, պատրաստեց Հ[ովհաննես] Այվազյանը, «**Նոր Նորք**», շաբաթաթերթ, Երևան, 1998, հոկտեմբերի 9, № 34, էջ 2:

3. Էրեբունի-Երևան, «**TV ալիք**», շաբաթաթերթ, Երևան, 1998, հոկտեմբերի 12-18, № 40, էջ 12:

Հատվածներ և լուսանկարներ են տպագրվել «Հայաստանի մայրաքաղաքները» (1995) գրքի Երևանին նվիրված գլխից:

Գրքից լուսանկարներ են տպագրվել նաև նույն թերթի ռուսերեն տարբերակում «**ТВ канал**», 1998, 12-18 октября, № 40, с. 2, 3.

4. Անցյալ դարի Երևանը, «**Հայաստանի Հանրապետություն**», օրաթերթ, Երևան, 1998, հոկտեմբերի 7, № 196, էջ 7:

Հատվածներ և լուսանկարներ են տպագրվել «Հայաստանի մայրաքաղաքները» (1995) գրքի Երևանին նվիրված գլխից, հրապարակման առաջաբանում ներկայացվում է զիրքը:

5. Tigranakert (ou Tigranocerte), 5 ème capitale, “**Azad magazine**”, Grenoble, France, 1998, № 81, p. 12-13.

Ֆրանսերեն է թարգմանվել «**Հայոց մայրաքաղաքները**» (1985) գրքի Տիգրանակերտ գլխից, թարգմանիչ՝ Աշոտ Հակոբյան (Ashot Akopian):

6. Vagharchapat (l'ex Etchmiadzine), 6 ème capitale, “**Azad magazine**”, Grenoble, France, 1998, № 82, p. 24-25.

Ֆրանսերեն է թարգմանվել «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքի Վադարշապատ գլխից, թարգմանիչ՝ Աշոտ Հակոբյան (Achot Akopian):

7. Dvin, 7 ème capitale de L'ancienne Arménie. “Azad magazine”, Grenoble, France, 1998, № 83, p. 24-25.

Ֆրանսերեն է թարգմանվել «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքի Դվին գլխից, թարգմանիչ՝ Աշոտ Հակոբյան (Achot Akopian), էջ 59-70:

8. Bagaran, capitale de L'Ancienne Arménie, “Azad magazine”, Grenoble, France, 1998, № 84, p. 24-25.

Ֆրանսերեն է թարգմանվել «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքի Բագարան գլխից, թարգմանիչ՝ Աշոտ Հակոբյան (Achot Akopian), էջ 71-77:

### Երկրորդ բաժին (հարցազրույցներ)

9. Երևան, որ միշտ մեզ հետ է, հարցազրույցը վարող՝ Լ[իլիթ] Ավագյան, «Առավոտ», օրաթերթ, Երևան, 1998, հոկտեմբերի 6 (№ 19), էջ 8:

«Հայաստանի մայրաքաղաքները» (1995) գրքի, Երևանում տիրող բարոյաժողովրդական վիճակի և այլնի մասին է: Տպագրվել է նաև Ս. Վարդանյանի լուսանկարը: Հարցազրույցից հատված. «Մարդիկ տեսնում են, որ երկիրն ու քաղաքն այս վիճակին հասցնողներից ոչ ոք պատասխան չի տալիս, գուցե տարիներ անց էլ մարմարյա հուշատախտակներ կհայտնվեն նրանց տների պատերին: Կարծեմ 30-ական թվականների բոլոր գործող անձինք, բացի մեկ-երկուսից, արդարացվեցին: Օրինակ՝ օրերս Թումանյան 29 տան պատին տեսա մի հուշատախտակ. «Այս տանն ապրել է 1928-35 թթ. Հայաստանի պետական եւ կուսակցական ականավոր գործիչ Գեորգ Սարիբեկի Հանեսօղյանը»: Այդ անվանը հանդիպել ենք Պողոս-Պետրոս եկեղեցու քանդմանը վերաբերող գրազրույթյուններին ծանոթանալիս: Երևանի 1679 թ. երկրաշարժից փրկվեցին հատուկենտ շինություններ, այդ թվում՝ Պողոս-Պետրոսը:

1924 թ. Ալ. Թամանյանի կազմած Երևանի գլխավոր հատակագծում եկեղեցին պահպանվում էր, ստեղծվում էր կիսաշրջանաձև հրապարակ: Բայց 30-ականների կուսակցական եւ պետական «ականավոր» գործիչները որոշում են այն քանդել: Հայ եւ օտար նշանավոր ճարտարապետները, գիտնականներն ու արվեստագետները՝ Ալ. Թամանյանը, Ն. Բունիաթյանը, Աշխ. Քալանթարը, Ս. Սարյանը, Փ. Թերլեմեզյանը, Լ. Դուրնովն, Ի. Գրաբարը, Շնայդերը, Գ. Չիրիկովը եւ այլք իզուր էին բողոքում, նշելով, որ Պողոս-Պետրոսը 5-6-րդ դարերի եզակի հուշարձան է, որի նորահայտ 6-7

շերտ որմնանկարներն իրենց հնությամբ, կատարման տեխնիկայով եւ գեղարվեստական արժանիքներով արդեն սենսացիա են առաջացրել եւ կարող են հեղաշրջում մտցնել համաշխարհային արվեստի պատմության մեջ: Ոչինչ չի օգնում: Ստացվում է Երքաղխորհրդի նախագահ Գ. Հանեսօղյանի պատասխանը. «Հիշյալ եկեղեցին ճիշտ է, չի ընկնում քաղաքի հատակագծման տակ, սակայն այդ դեռ չի նշանակում, որ քաղխորհուրդը կարող է հանդուրժել, որպեսզի այդ եկեղեցին կանգուն թողնվի»: Վերացվում է համաշխարհային մշակույթի բացառիկ հուշարձանը, այդ քիչ է, նրա տեղում, «Մոսկվա» կինոթատրոնի հիմքերը փորելիս հայտնաբերված շատ ավելի վաղ շինության հետքերը, մի քանի տասնյակ դամբարաններն ու հնագիտական հարուստ նյութը եւս ոչնչացվում են»:

10. Սերը սեր է ծնում, մոռացումը՝ մոռացում, հարցազրույց, «**TV ալիք**», շաբաթաթերթ, Երևան, 1998, հոկտեմբերի 19-25, (№ 41), էջ 2:

«**Հայաստանի մայրաքաղաքները**» (1995) գրքի հեղինակի հետ հարցազրույցը Երևանի և երևանցիների բարոյահոգեբանական իրավիճակի մասին է: Տպագրվել է նաև Ս. Վարդանյանի լուսանկարը: Հարցազրույցից հատված. «Ինձ շատ է հուզում վերջին տարիներս մարդկանց հարաբերություններ սողոսկած օտարության զգացումը: Հակոտնյա շահերը, նոր խաղի անձանոթ կանոնները, քաղաքական շահարկումները, տնտեսական անլուծելի թվացող խնդիրները մարդկանց թշնամացնում են, օտարում իրարից: Մենք ռազմավարական հետազոտությունների կենտրոններ ունենք, քաղաքագետներ, որոնք հաշվարկում են Չինաստանից մինչև Բալկաններ, Հյուսիսային ծովերից մինչև հարավի տաք ավերն ընկած պետությունների հարաբերությունները, նրանց միավորման կամ պառակտման պատճառները: Այդ ամենը կարելու է: Բայց ռազմավարական փոքր խնդիր է, թե մե՛զ, մեր հասարակությանն ի՞նչն է պառակտում: Օտարված մարդկանցով դժվար է երկիր կառուցել եւ երկիր պաշտպանել: Այդ պառակտումը, օտարվածությունը, բարոյալքումը չէ՛ր պատճառը, որ 1920 թ. հոկտեմբերի 30-ին հանձնեցինք Կարսը, կորցրեցինք ահռելի տարածքներ: Կարսում գերի ընկան հազարավոր հայ սպաներ ու զինվորներ, քաղաքի բնակիչներ, որոնց քջեցին Թուրքիայի խորքերն ու կոտորեցին: Անառիկ Կարսը, որի պատերի տակ ռազմավարական բոլոր օրենքներով պիտի թշնամին գլխովին ջախջախվեր, առանց կրակոցի տվեցինք թուրքին»:

## Երրորդ բաժին

11. Վահան Հովհաննիսյանի հանդիպումները, «**Հայաստանի Հանրապետություն**», օրաթերթ, Երևան, 1998, մայիսի 15:

Պաշտոնական լուր. «Երեկ հանրապետության նախագահի խորհրդական Վահան Հովհաննիսյանը հանդիպում ունեցավ Կրոնի գործերի պետական խորհրդի նախագահ Լազար Սուջյանի եւ նախագահի տեղակալ Սերգեյ Վարդանյանի հետ: Քննարկվեցին Հայ առաքելական եկեղեցու, ինչպես նաև հանրապետությունում գրանցված կրոնական այլ կազմակերպությունների գործունեությանը վերաբերող հարցեր: Կարևորվեցին այս բնագավառին վերաբերող օրենսդրական դաշտի կատարելագործման, ինչպես նաև կառուցվածքային բնույթի մի շարք հարցեր: Որոշվեց այս ոլորտին վերաբերող հարցերը քննարկելու եւ դրանց լուծման ճանապարհները գտնելու համար անցկացնել խորհրդակցություն՝ շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ»:

12. Ե. Հ. Ք. [Երուանդ Հ. Քասունի], «**Հայաստանի մայրաքաղաքները**», Սերգեյ Վարդանեան, Երևան, 1995, 262 էջ, «**Ջանասեր**», հանդես, Բեյրութ, մայիս-յունիս, 1998, թիւ 9-10, 11-12, էջ 156-158:

«Ջանասեր»-ի պատասխանատու խմբագիր, մանկավարժ, լեզվաբան և պատմաբան, պ.գ.դ. Երվանդ Քասունու գրախոսությունից հատվածներ. «Հատորի գլխավոր արժանիքներէն մէկը պէտք է նկատել անոր նկարագարումը: Եթէ մինչեւ իսկ առաջին պահ գիրքը խճողուած ըլլալու տպաւորութիւնը կը ձգէ, ուշադիր պրպտումը նկարներուն ու բացատրագիրներու ընթերցումը, հաճելի եւ օգտաշատ անակնկալի առաջ կը դնէ ընթերցողը: Պիտի խոստովանիլ որ հսկայական աշխատանք տարուած է այդ բոլորը մէկտեղելու, բայց մանաւանդ նպատակաւաց օգտագործելու:

Հատորի էջադրումը բարեխիղճ է եւ ճաշակաւոր:

Բայց բարեխիղճ գիտնական է ինքը՝ հեղինակը: Սերգեյ Վարդանեան մատենագիտութեան հարուստ ցանկ մը ունի, զոր օգտագործած է պատշաճ բժախնդրութեամբ: Նոր յայտնաբերումներու փառասիրութիւնը չկայ իր մօտ, եւ ինք անոր հետամուտ չէ: Նորը՝ հատորի աշխատասիրութեան եղանակն է, եւ անոր՝ ընթերցողին մատուցումը: Եւ այս, ընդգծելի արժանիք է արդէն: Գիտական գաղտնիք չէ, եւ հեղինակը ի՛նք կը յիշեցնէ ընթերցողին, որ իր ներկայացուցած քաղաքներէն իւրաքանչիւրին մասին (գրեթէ) մէկէ աւելի մենագրութիւններ հրատարակուած են ծանօթ ու հեղնակաւոր գիտնականներու կողմէ: Մենագրութիւններէն ոմանք, մինչեւ իսկ

բազմահատորեակ են: Եւ դեռ առանց մոռնալու հանրագիտարանի ամբողջ շարքը եւ «Հայաստանի Եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարանը» (Ա եւ Բ): Բայց այս բոլորը չեն արգիլեր նմանօրինակ աշխատանքի մը նախաձեռնութիւնը: Ընդհակառակը, այդ բոլորը պատճառ են, որ այդքան կարեւոր եւ արժէքաւոր նիւթերու ցանկ մը նորօրեայ մատուցում ունենայ: Այս իմաստով, ճիշտ է եւ տեղին Սերգէյ Վարդանեանի նախաձեռնութիւնը, եւ իր մատուցումը՝ շնորհակալութեամբ ընդունելի:

... Հատորին հասցէատէրերը: Ան իրեն հասցէ ունի իւրաքանչիւր հայ տուն: Եթէ տունը բախտաւորութիւնը ունի Հայկական Հանրագիտարանի 13 հատորները ունենալու, Սերգէյ Վարդանեանի «Հայաստանի Մայրաքաղաքները» պիտի դրուի անոնց կողքին: Ան օգտաշատ եւ օգտագործելի հատոր է, ընթերցանութեան համար ճիգ չպահանջող, թէկուզ գիտական մթնոլորտի մէջ եղած ըլլալուն» (էջ 158):

13. Students of Diocesan Armenian Weekly Schools and Khrimian Lyceum Present Gala Premiere Performance of Masterpiere And Original Musical Play, “Happy Birthday Diocese” in Honor of Catholicos Karekin’s Visit, “**The Armenian Reporter**”, weekly, New York, 1998, June 13, № 37, p. 8, 32.

Վերնագրի թարգմանությունն է. «Թեմական հայկական շաբաթօրյա դպրոցների և Խրիմյան ճեմարանի սաները Գարեգին կաթողիկոսի այցի պատվին ներկայացնում են գլուխգործոց և յուրօրինակ երաժշտական թատերախաղի գալա-պրեմիերա»:

Հոդվածից թարգմանված հատվածներ. ««Ծնունդդ շնորհավոր, Ամերիկային հայոց թեմ» ներկայացումը մեկնարկեց, որը ներկաներն անվանեցին Բրողվելի շոու: Երաժշտության ներքո դերասանները պատմում էին հայերի երկար ճամփորդության մասին՝ բռնած ճամպուրկներն իրենց խղճուկ իրերով, Էլիս կղզուց մինչև այսօրվա պայծառ իրականությունը: Այս գլուխգործոց և յուրօրինակ երաժշտական պիեսի գալա-պրեմիերան բեմ բարձրացրին թեմական հայկական շաբաթօրյա դպրոցների և Խրիմյան ճեմարանի 100 սաները՝ խորհրդանշելով թեմի 100-ամյակը: Գեղարվեստական դեկավարն էր Վարդան Հովհաննիսյանը» (էջ 8):

«...Դերասանները սկսեցին պատմել թեմի ստեղծման պատմությունը՝ հանդիսատեսին տանելով մինչև 1600-ական, 1700-ական, 1800-ական և 1900-ական թթ.: Պատմությունը համեմվում էր ասմունքի, պարի, նվագախմբի, ժողովրդական, կրոնական երգերի և տիկնիկային ներկայացման հետ: Այդ ամենն իրար լրացնելով կազմում էին մի անթերի պատկեր:

...Սրբոց Նահատակաց հայկական շաբաթօրյա դպրոցի սաների ներկայացրած տիկնիկային ներկայացումն արտահայտեց բոլոր նրանց զգացմունքները, ում համար աշխարհի լավագույն վայրը հայրենիքն է: Տիկնիկները բեմ մտան, երբ արտասանվեց Խրիմյան Հայրիկի հետևյալ խոսքը. «Մի՛ մոռացիր քո երկիրը, քո բարոյական արժեքներն ու ավանդույթները»» (էջ 32): Ըստ ռեժիսոր Վարդան Գառնիկի Հովհաննիսյանի Ս. Վարդանյանին գրած նամակի, լրագրողի «տիկնիկային ներկայացում», «տիկնիկներ» բնորոշումները ճիշտ չեն ներկայացնում իրականությունը, քանի որ Ս. Վարդանյանի «Ծննդավայր» պատմվածքի արևմտահայերեն թարգմանությունը բեմադրելիս Սրբոց Նահատակաց շաբաթօրյա դպրոցի սաները պատմվածքի հերոսներին նմանակելու համար հագել են իրենց կարած համապատասխան հագուստները և կրել են տարբեր կենդանիների դիմակներ: Տե՛ս նաև հաջորդ մատենագիտական նկարագրությունը:

14. Pictorial Highlights Of Musical Play, “Happy Birthday Diocese”, Presented by Diocesan Schoolchildren in Honor of Catholicos Karekin, “**The Armenian Reporter**”, weekly, New York, 1998, June 20, № 38, pp. 12, 13, 28.

Վերնագրի թարգմանությունն է. «Ի պատիվ Գարեգին կաթողիկոսի, թեմի դպրոցականների «Շնորհավոր ծնունդդ, թեմ» երաժշտական ներկայացումից պատկերազարդ դրվագներ»:

Թերթը մի շարք լուսանկարներով և համապատասխան մեկնաբանություններով պատմում է Ամերկահայոց թեմի հաստատման 100-ամյակի առթիվ 1998 թ. մայիսի 9-ին Նյու Յորքի Գավուրջյան դահլիճում հայկական դպրոցների աշակերտների մասնակցությամբ կազմակերպված «Շնորհավոր ծնունդդ, թեմ» թատերական և երաժշտական հանդիսության մասին, որին ներկա է եղել Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինը: Լուսանկարներից մեկում պատկերված է տեսարան Նյու Յորքի Սրբոց Նահատակաց Շաբաթօրյա դպրոցի սաների «Hayrenik» («Հայրենիք») ներկայացումից, որը ինչպես մակագրությունն է տեղեկացնում, հայրենիքի հանդեպ սիրո մասին է (էջ 13):

Բեմադրության ռեժիսոր Վարդան Գառնիկի Հովհաննիսյանը 2011 թ. հուլիսի 7-ին Ս. Վարդանյանին գրած նամակով տեղեկացնում է, որ դպրոցի աշակերտները կենդանիներին նմանակելու համար համապատասխան հագուստներ և դիմակներ կրելով՝ իսաղացել են նրա «Ծննդավայր» պատմվածքի արևմտահայերեն տարբերակը, տե՛ս Ծննդավայր // Ս. Վարդանեան, Արեւածաղիկը, Արեւմտահայերէնի վերածեց՝ Մաքրուհի Պ. Յակոբեան, Իսթանպուլ, 1994, էջ 43-47):

Նույն ռեժիսորը նույն պատմվածքի հիման վրա 2011 թ. Նյու Ջերսիում բերմադրել է իսկապես տիկնիկային ներկայացում «**Ուղտին հայրենիքը**» վերնագրով, տե՛ս Aram Arkun, The Camel's Homeland, A Western Armenian Puppet Show in New Jersey, «**The Armenian Mirror-Spectator**», weekly, Boston, Massachusetts, USA, 2011, june 25, p. 12,

Տե՛ս նաև՝ Հ[ակոբ] Ծ[ուլիկյան], «Ուղտին հայրենիքը»՝ տիկնիկային ներկայացում Նյու Ջերսիում, «**Ազգ**», թերթ, Երևան, 2011, յուլիսի 19, էջ 6:

1999

### **Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)**

1. Պատմական ակնարկ // **Ձայն համշենական**, ժողովածու, գիրք չորրորդ, կազմեցին և խմբագրեցին Ս. Գալստյանը և Լ. Կարապետյանը, Երևան, «Վերնատուն» հրատ., 1999 (- 208 էջ), էջ 7-15:

Հրատարակչական խորհրդի անդամ Ս. Վարդանյանը պատմում է հնագույն ժամանակներից Սև ծովի հարավային ափերի հետ հայերի առնչությունների մասին:

Նույն գրքում տե՛ս նաև Ս. Վարդանյան, Մոլդովկայի «Թռչնոց բույնը», էջ 30-34:

2. Մոլդովկայի «Թռչնոց բույնը» // **Ձայն համշենական**, ժողովածու, գիրք չորրորդ, կազմեցին և խմբագրեցին Ս. Գալստյանը և Լ. Կարապետյանը, Երևան, «Վերնատուն» հրատ., 1999 (- 208 էջ), էջ 30-34:

Հրատարակչական խորհրդի անդամ Ս. Վարդանյանը պատմում է Կրասնոդարի երկրամասի Ադլերի շրջանի հայաբնակ Մոլդովկա գյուղի հայկական դպրոցի վերաբացման համար պայքարի և 1974 թ. այն քանդելու մասին:

Հողվածի տարբերակները տե՛ս 1991 թ. 13-րդ նկարագրությունը՝ Հյուսիսի հողմերը և հայ գաղութի դիմադրական ճիգերը, ևս վեց հողված:

3. Հունգարական գրականությունը՝ հայերեն, «**Գարուն**», ամսագիր, Երևան, 1999, № 12 (395), էջ 89, 90:

XIX և XX դդ. հունգարերենից հայերեն կատարված թարգմանությունների մասին է:

4. «Ծովն է ինձ միշտ օրոր ասել, Նոր չեմ ծանոթ ծովի հետ», «**Բնօրան**», հանդես, Երևան, 1999, № 1-2, (№ 10-11), էջ 29-31:

Սև ծովի հարավային ափերը հայկական պետականության մաս լինելու և հայերի էթնիկ սահմանների մասին է:

5. Դեղին տերեւ՝ երկնի կապույտին, «Ասպետ», պարբերաթերթ, Երևան, 1999, հունվարի 22, № 3:

Բեյրութցի ճանաչված ճարտարապետ և փայտի քանդակագործ Վարուժան Մարտիրոսյանի մասին է (1937-2023):

2024 թ. Լիբանանում՝ Այնճար հայկական գյուղում բացվեց նրա տուն-թանգարանը:

6. Սերգեյ Վարդանյան, Դեղին տերեւ՝ երկնի կապույտին, «Բնօրրան», հանդես, Երևան, 1999, № 1-2 (№ 10-11), էջ 108, 109:

Բեյրութցի ճարտարապետ և փայտե արձանների քանդակագործ Վարուժան Մարտիրոսյանի մասին է (1937-2023): «Բնօրրան» հանդեսում տպագրվել է մի փոքր ավելի շատ. «Եթե բանաստեղծ լինեի, լիբանանահայ քանդակագործ Վարուժան Մարտիրոսյանին նվիրված բանաստեղծությունն ու երաժշտություն կգրեի: Վարուժանն էլ բանաստեղծ կամ երգահան չէ, եւ այդ է պատճառը, որ իր հոգու բանաստեղծությունն ու երաժշտությունը արտահայտում է քանդակների միջոցով:

Նրանց, որ ջութակահարի համերգի ժամանակ դահլիճում նստած մտածում են, թե տեսնես ջութակն ի՞նչ փայտից է պատրաստված, ասեմ, որ ճիշտ է, Վարուժանի կերտած կանայք էլ կողոսկրից չեն, այլ՝ կարմիր ու սպիտակ սոճու, նարնջենու, ձիթենու, թթենու, կնձիի, հաճարի, եւ, իհարկե, Լիբանանի խորհրդանիշ մայրիի փայտից, բայց աստվածային ներշնչանք, մարմին առած հոգու մի մաս կա նրա քանդակներում: Դրանց նայելիս մտածում ես, միթե՞ հնարավոր է քանդակել լամպի պատրույզի կրակի լեզվակը՝ ուժգնացող ու թուլացող, ջերմացնող ու լուսավորող, պատին ընկած իր վետվետ ստվերին խաբս տվող, իր ստվերի հետ պարող կրակի այդ խաղը:

Այո, կրակի այդ մոգական պարը կա Վարուժանի քանդակներում, անըմբռնելի, փոփոխկուն, ձեռքիցդ փախչող, անվերջ նվաղուն ու անվերջ հառնող կրակի լեզվակի այդ հարափոփոխ պլաստիկան կա Վարուժանի քանդակներում: Ջութակի ձայն, Մոդիլիանի, փիլիսոփայություն, զսպանակ, ծովի ալիք, կիրք, սեր, միտք, երգեհոն, Գլյուկ, Երգ Երգոց... կարելի է բազմապատկել այն զգացողությունները, որոնք համակում են Վարուժանի ցուցահանդեսի այցելուին: Իսկ անհատական կամ խմբակային ցուցահանդեսներ Վարուժանը 1980-ականներից ի վեր շատ է ունեցել: Լավագույն ցուցասրահներն ու պատկերասրահներն են զարդարել նրա ձեռակերտե-

րը՝ համբույր, քնքշանք եւ խանդաղատանք, աղոթք, գրկախառնում, կշռույթ, մերժում, ակնկալություն...

Սրանք արդեն ոչ միայն զգացողություններ են, այլեւ նրա քանդակների անվանումները: Իսկ այս աշնանը Իտալիայի Պադովա քաղաքում մեծ հաջողություն ունեցած Վարուժանի անհատական ցուցահանդեսը եւ իտալական մամուլում ճանաչված արվեստագետների գնահատականը ոչ միայն մեր հայրենակցով հպարտանալու առիթ են տալիս, այլեւ մտորելու տեղիք, տարբեր երկրների հավաքածոներում հանգրվանած նրա քանդակները հայաստանցի արվեստասերներին ծանոթ են միայն թերթերի ու ամսագրերի վերատպություններով, թեեւ արվեստագետը շուրջ տասը տարի է, ինչ երազում է Հայաստանում ցուցադրվել» (էջ 108-109):

2024 թ. Լիբանանում՝ Այնճար հայկական գյուղում բացվեց նրա տուն-թանգարանը:

7. Ամենաարագ թռչողը (մանկական պատմվածք), «Գարուն», ամսագիր, Սիդնեյ, Ավստրալիա, 1999, յունիս, № 10 (81), էջ 12:

Տե՛ս նաև «Ծիծեռնակ», ամսագիր, Երևան, 1985, № 4, էջ 6: Ս. Վարդանյան, Արևածաղիկը, պատմվածքներ, Երևան, «Արևիկ» հրատ., 1989 (- 40 էջ), էջ 7, 8: Ի՞նչն է, որ կը թռչի ամենն արագ // Ս. Վարդանեան, Արևածաղիկը, պատմուածքներ, Արեւմտահայերէնի վերածեց՝ Մաքրուհի Պ. Յակոբեան, Իսթանպուլ, ԱՐԱՍ հրատ., 1994 (- 64 էջ), էջ 19, 20:

8. Հայոց մայրաքաղաքները. Վան, «Գարուն», ամսագիր, Սիդնեյ, Ավստրալիա (Ինձ չի հաջողվել գրադարաններում կամ առցանց գտնել ամսագրի համարը):

9. Հայոց մայրաքաղաքները. Արմավիր, «Գարուն», ամսագիր, Սիդնեյ, Ավստրալիա, 1999, յունիս, № 10 (81), էջ 6, 7:

Հոդվածը քաղված է «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքի Արմավիր գլխից, կազմեց՝ Գագիկ Մաթևոսյանը:

10. Հայոց մայրաքաղաքները. Երևանդաշատ, «Գարուն», ամսագիր, Սիդնեյ, Ավստրալիա, 1999, յուլիս, № 11 (82), էջ 6, 7:

Հոդվածը քաղված է «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքի Երվանդաշատ գլխից, կազմեց՝ Գագիկ Մաթևոսյանը:

11. Հայոց մայրաքաղաքները. Արտաշատ, «Գարուն», ամսագիր, Սիդնեյ, Ավստրալիա, 1999, օգոստոս, № 1 (85), էջ 8, 9:

Հոդվածը քաղված է «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքի Արտաշատ գլխից, կազմեց՝ Գագիկ Մաթևոսյանը:

12. Հայոց մայրաքաղաքները. Տիգրանակերտ, «Գարուն», Սիդնեյ (տվյալները չունենք):

13. Հայոց մայրաքաղաքները. Վաղարշապատ, «Գարուն», Սիդնեյ (տվյալները չունենք):

14. Հայոց մայրաքաղաքները. Դվին, «Գարուն», Սիդնեյ (տվյալները չունենք):

15. Հայոց մայրաքաղաքները. Բագարան, «Գարուն», ամսագիր, Սիդնեյ, Ավստրալիա, 1999, № 4 (88), նոյեմբեր, էջ 6, 7:

Հոդվածը քաղված է «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքի Բագարան գլխից, կազմեց՝ Գագիկ Մաթևոսյանը:

16. Chirakavan, 9-e capitale de L'Arménie, "Azad magazine", Grenoble, France, 1999, № 85, p. 20, 21.

Ֆրանսերեն է թարգմանվել «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքի Շիրակավան գլխից, թարգմանիչ՝ Աշոտ Հակոբյան (Ashot Akopian):

17. Kars, ancienne capital d'Arménie, "Azad magazine", Grenoble, France, 1999, № 86, p. 22, 23.

Ֆրանսերեն է թարգմանվել «Հայաստանի մայրաքաղաքները» (1995) գրքի Կարս գլխից, թարգմանիչ՝ Աշոտ Հակոբյան (Ashot Akopian):

18. Sergueï Vartanian, Des Arméniens oubliés, "Azad magazine", Grenoble, France, 1999, № 87, p. 16-17, № 88, p. 16, 17.

Կրոնափոխ համշենցիների մասին Հ. Պողոս Մեհերյանի (1729-1814) 1776 թ. առաջին հիշատակության, նաև Թուրքիայում, Ռուսաստանում և Կենտրոնական Ասիայում բնակվող կրոնափոխ համշենցիների մասին է: Ֆրանսերեն թարգմանությունը՝ Աշոտ Հակոբյանի (շարունակելի):

Տե՛ս «Azad magazine», Grenoble, France, 2000, № 89, p. 16, 17.

19. Сергей Вартанян (Ереван, Зампредседателя Госкомитета по делам церкви), Армяне-мусульмане (К постановке вопроса) // **Кавказский центр Иранистики**, Россия-Армения-Иран: Диалог цивилизаций, доклады и тезисы докладов международной конференции, Ереван, 18-19 мая, 1999 г., Ереван, 1999 (- 96 с.), с. 29, 30:

Երևանի Իրանագիտության կովկասյան կենտրոնի 1999 թ. մայիսի 18-19-ին կազմակերպած «Ռուսաստան-Հայաստան-Իրան. քաղաքակրթությունների երկխոսություն» միջազգային կոնֆերանսում Ս. Վարդանյանի կարդացած զեկուցման թեզիսն է:

Սույն զեկուցմանը հղում է անում **Կարինե Գրիգորյանն** իր մենագրության մեջ:

Григорьян Каринэ Эрнестовна, Грани идентичности. Социокультурное пограничье как фактор формирования этнического самосознания (на примере субэтнических групп армян), Центр цивилизационных и региональных исследований РАН, серия «Образы мира», том 5. Москва. 2006 (- 172 с.), с. 43, 55.

### **Երկրորդ բաժին (հարցազրույցներ)**

20. Մահմեդական հայեր. թավշյա կրոնափոխության ներկայի սովերները... Մոտ 200 հազար մահմեդական համշենահայեր Բաթումից մինչև Տրապիզոն հատվածում, հարցազրույցը՝ Կարինե Դանիելյանի, «**Ժամանակ**», երկօրյա թերթ, Երևան, 1999, ապրիլի 16, № 45, էջ 6:

Կրոնափոխ համշենահայերի, նաև մեր օրերում մահմեդականների հետ ամուսնանալով՝ կրոնափոխվող հայաստանցի աղջիկների մասին է: Հրապարակվել են Կենտրոնական Ասիայի կրոնափոխ համշենահայերից գրառված երկու խաղիկներ՝ «**Լուսնիկա էրօնդ կիշեր**», «**Հայդե էրթաք ինձի հեդ**»: Հարցազրույցից հատված. «Այսօր առևտրական կապերի զարգացումը, փոխայցելությունները, բաց սահմանները հանգեցրին նրան, որ մեծաթիվ հայ աղջիկներ ամուսնանում են իրանցիների հետ, որոնց մեջ երեւի նաև իրանցի աղբբեջանցիներ են:

Ենթադրում եմ, որ կրոնը փոխելու պարտադրանքը կլինի, վաղը, մյուս օրը նրանք զավակներ կունենան, վաղը, մյուս օրը մահմեդական հայ աղջիկների մեջ մենք կճանաչենք մեր հարեւանուհուն, որի հետ բակում խաղացել ենք կամ սովորել դպրոցում»: 1-ին և 6-րդ էջերում տպագրվել են Ս. Վարդանյանի լուսանկարները:

### **Երրորդ բաժին**

21. Թագուհի Հակոբյան, Կրոնի գործերի պետխորհուրդը հավատարմանիչ չէ, «**Լորաթերթ**», օրաթերթ, Երևան, 1999, հունիսի 30, № 6, էջ 12:

Ս. Վարդանյանը ներկայացնում է Հայաստանի կրոնական իրավիճակը և կրոնի գործերի պետխորհրդի գործունեությունը:

22. Գոհար Մխիթարյան, Քարոզչություն քարոզչության դեմ (Պայքարի խնդիր ունի նաև Հայ Առաքելական եկեղեցին), «**Երկիր**», օրաթերթ, Երևան, 1999, հուլիսի 14, № 128, էջ 4:

Ներկայացվում են ՀՀ-ում կրոնին վերաբերող օրենսդրության և կրոնական իրավիճակի մասին Ս. Վարդանյանի պարզաբանումները:

23. Ազգանուշ Բարսույան, Չափից ավելի խոնարհ լինելն էլ մի բան չի. բարեգործության քողի ներքո ինչ է կատարվում, «**Երկիր**», օրաթերթ, Երևան, 1999, հուլիսի 30, № 140, էջ 4:

Հայաստանի չքրանցված կրոնական կազմակերպություններից մեկի մասին պարզաբանում է տալիս Ս. Վարդանյանը:

24. Ամեն. Ս.Տ. Ներսես-Պետրոս ԺԹ կաթողիկոսին Գահակալութիւնը, «**Աւետիք**», հանդես, Բեյրութ, 1999, սեպտեմբեր-դեկտեմբեր, թիւ 9-12, էջ 389-395:

Հայ Կաթողիկէ Եկեղեցու Նորընտիր կաթողիկոսի գահակալության արարողությանը, որը տեղի է ունեցել 1999 թ. հոկտեմբերի 24-ին Բեյրութի Ս. Գրիգոր Լուսավորիչ-Ս. Եղիա աթոռանիստ եկեղեցում «Հ.Հ. Նախագահին ներկայացուցիչն էր կրօնից հարցերու Փոխ Նախարար Սերկէյ Վարդանեան» (էջ 391): Հանդիսության ժամանակ Ս. Վարդանյանը կարդացել է ՀՀ նախագահի և վարչապետի շնորհավորագրերը (էջ 395):

Ս. Վարդանյանը հիշատակվում է նաև էջ 397-ում: Հանդեսի նույն համարում տպագրվել է Հայաստան-Սփյուռք խորհրդածողովին (1999 սեպտեմբերի 22-23) մասնակցող Հայ Կաթողիկէ Եկեղեցու պատվիրակության հետ Կրոնի գործերի պետխորհրդում արված խմբակարգը (էջ 513):

25. Գահակալութիւն եւ քօղարկութիւն Ներսես-Պետրոս ԺԹ. Թարմունիի, «**Արարատ**», օրաթերթ, Պեյրութ, 1999, հոկտեմբեր 26, թիւ 280, էջ 1, 4:

Մանրամասն ներկայացվում է գահակալության արարողությունը, մասնավորապես նշվում է. «Հանդիսապետութեամբ նախկին Պատրիարք Ամեն. Յովհաննէս-Պետրոս ԺԸ.-ի գոր կը շրջապատէին Կաթողիկէ Հայոց Պատրիարքական փախանորդ Արհի. Տ. Մանուէլ Եպսկ. Պաթագեան եւ բազմաթիւ եպիսկոպոսներ եւ ի ներկայութեան Լիբանանի Հանրապետութեան նախագահ գօր. Էմիլ Լահուտի ներկայացուցիչ՝ փոխ վարչապետ եւ ներքին գործոց նախարար Միշէլ Մըրի, խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի ներկայացուցիչ երեսփոխան Ժագ Չուխատարեանի, վարչապետ Սելիմ Հոսի ներկայացուցիչ՝ կրթութեան նախարար Սոհամէտ Եուսէֆ Պայտունի, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Ռոպերթ Քոչարեանի ներկայացուցիչ՝ կրօնից հարցերու փոխ նախարար Սերկէյ Վարդանեանի, Վատիկանի Արեւելեան Եկեղեցիներու Ժողովի ներկայացուցիչներ՝ Արհիապատիւ Քլաուտիօ Կիւճերոթթի եւ Քրիստոֆ Նիթիեվիեզ եպիսկոպոսներուն ու Պապական Նուիրակ Արհի. Անթոնիօ Մարիա Վելիոյին, Կիրակի ժամը 10ին, Կաթողիկէ Հայոց Սբ. Եղիա Աթո-

ռանխատ Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ նորընտիր Կաթողիկոս- Պատրիարք Ամեն. Ներսէս-Պետրոս ԺԹ. Թարմունիի գահակալութեան եւ քողարկութեան արարողութիւնը, որուն յաջորդեց նորոժ Պատրիարքին կողմէ մատուցուած հայրապետական անդրանիկ Սբ. Պատարագը (էջ 1):

...Յաւարտ Սբ. Պատարագին, Պապական նուիրակը ընթերցեց Սրբազան Քահանայապետին շնորհատրական եւ եկեղեցական հաղորդակցութեան գիրը ուղղուած Կաթողիկէ Հայոց նորընտիր Պատրիարքին, ապա Արհի. Քլաւտիօ Կիւճերոյթի ընթերցեց Արեւելեան Եկեղեցիներու ժողովի նախագահ Կարդինալ Սիլվեսթրինիին ողջոյնին գիրը:

Հուսկ խօսք առնելով՝ Հայաստանի կրօնից հարցերու փոխ նախարար Սերկէյ Վարդանեան փոխանցեց Հայաստանի իշխանութիւններուն ողջոյնը, շնորհատրութիւններն ու բարեմաղթանքները նորընտիր Կաթողիկոս-Պատրիարքին, եւ ընթերցեց նաեւ նախ. Ռոպերթ Քոչարեանի եւ վարչապետ Վազգէն Սարգսեանի պաշտօնական շնորհատրագրերը, զորս կը հրատարակենք վերեւ: Երեք ընթերցումներն ալ ողջունուեցան ծափահարութիւններով» (էջ 4): Տպագրվել է նաև Ս. Վարդանյանի լուսանկարը՝ ելույթի պահին (էջ 4):

26. Շնորհատրականը Հայաստանի Կրօնի Պետխորհրդի Նախագահի Տեղակալին, «Աւետիք», հանդէս, Պէյրուօ, 1999, սեպտեմբեր-դեկտեմբեր, թիւ 9-12, էջ 406, 407:

Տպագրվել է Ամենապատիվ Տ.Տ. Ներսէս-Պետրոս ԺԹ. Թարմունու Հայ Կաթողիկէ Եկեղեցու Կաթողիկոս-պատրիարք ընտրվելու կապակցությամբ ՀՀ կառավարությանն առնթեր կրօնի գործերի պետխորհրդի նախագահի տեղակալ Ս. Վարդանյանի շնորհավորանքը:

27. Գահակալութիւն եւ քողարկութիւն՝ Կաթողիկէ Հայոց Նորընտիր Կաթողիկոս-Պատրիարք Ներսէս Պետրոս ԺԹ. Թարմունիի, «Ազգակ», օրաթերթ, Պէյրուօ, 1999, հոկտեմբերի 25, թիւ 193, էջ 1, 10:

Բէյրութի Ս. Եղիա աթոռանխատ եկեղեցում Հայ Կաթողիկէ Եկեղեցու նորընտիր կաթողիկոս-պատրիարք Ներսէս-Պետրոս ԺԹ. Թարմունու գահակալության և քողարկության արարողության մասին պատմող հոդվածում հյուրերի թվում Ս. Վարդանյանը սխալմամբ ներկայացվել է «Սուրիոյ մէջ Հայաստանի դեսպան»: Հատված. «Կիրակի, 24 Հոկտեմբեր 1999ին, առաւօտեան ժամը 10:00էն սկսեալ, Կաթողիկէ հայոց Ս. Եղիա աթոռանխատ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ նորընտիր կաթողիկոս-պատրիարք Ներսէս Պետրոս ԺԹ. Թարմունիի գահակալութեան եւ քողարկութեան արարողու-

թինը, ներկայութեամբ ներքին գործոց նախարար եւ փոխ վարչապետ նախարար Միշել Մըրի, որ կը ներկայացնէր նախագահ զօր. Էմիլ Լահուտը, երեսփոխան Ժաք Չուխատարեանի՝ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի ներկայացուցիչ, կրթական նախարար Մուհամէտ Եուսէֆ Պայտունի՝ ներկայացուցիչ վարչապետ Սելիմ Հըսի, ինչպէս նաեւ զբօսաշրջութեան եւ կենսոլորտի նախարար Արթիւր Նազարեան, երեսփոխաններ Աբրահամ Տէտէեան, Ճորճ Գասարճի, խորհրդարանի նախկին նախագահ Հիւսէյն Հիւսէյնի, ... լիբանանեան բանակի հրամանատարի ներկայացուցիչ զօրավար Ստեփան Տոնոյեան, նախկին նախագահ Շարլ Հըլու, նախկին վարչապետ Ռաշիտ Սուլի, Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեանի ներկայացուցիչ՝ Սուրիոյ մէջ Հայաստանի դեսպան Սերգէյ Վարդանեան, ... արաբական ու արեւմտեան այլ պետութիւններու դեսպաններ, որոնց շարքին՝ պապական նուիրակ Ֆիլիօ ...» (էջ 1):

28. Գահակալութիւն եւ քօղարկութիւն Հայ Կաթողիկէ Եկեղեցոյ նորընտիր Կաթողիկոս-Պատրիարք Ս. Տ. Ներսէս-Պետրոս ԺԹ. Թարմունիի, «**Զարթօնք**», օրաթերթ, Պէյրութ, 1999, հոկտեմբերի 26, թիւ 242, էջ 1, 8:

«Զարթօնքում» ևս Ս. Վարդանյանը ներկայացվել է որպէս «Սուրիոյ մէջ ՀՀ դեսպան»: Հոդվածից հատված. «Հայ Կաթողիկէ Եկեղեցոյ նորընտիր Կաթողիկոս-Պատրիարք՝ Ամենապատիւ Ս. Տ. Ներսէս- Պետրոս ԺԹ. Թարմունիի գահակալութեան և քօղարկութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 24 Հոկտեմբեր 1999, առաւօտեան ժամը 10:00ին, Ս. Եղիա Աթոռանիստ եկեղեցոյ մէջ: Ն. Վ. Նախագահ Էմիլ Լահուտը կը ներկայացնէր Ն. Գ. նախարար եւ փոխվարչապետ Միշել Մըր, խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրին կը ներկայացնէր երեսփոխան Ժաք Չուխատարեան, իսկ վարչապետ Սելիմ Հըսի անունով ներկայ էր կրթական նախարար Մոհտ. Եուսէֆ Պայտուն: Ներկայ էին նաեւ... նախկին նախագահ Շարլ Հըլու, նախկին վարչապետ Ռաշիտ Սուլի, Հայաստանի նախագահ Ռ. Քոչարեանի ներկայացուցիչ Սուրիոյ մէջ ՀՀ դեսպան Սերգէյ Վարդանեան ... (էջ 1):

... Ապա, յոտնկայս՝ ընթերցուեցաւ Նորին Սրբութիւն Յովհաննէս Պօղոս Բ. քահանայապետին օրհնութեան գիրը, ինչպէս նաեւ՝ շնորհաւորական գիրերը ՀՀ նախագահ Ռոպերթ Քոչարեանի եւ ՀՀ վարչապետ Վազգէն Սարգսեանի եւ ՀՀ կրօնից նախարարութեան» (էջ 8):

29. Գեւորգ Յազրճյան, Հայկական հայրենակցական-բնօրրանագիտական պարբերական մամուլը կովկասյան տարածաշրջանում (1990-1998 թթ.), «**Բնօրրան**», հանդես, Երևան, 1999, թիվ 1-2 (10-11), էջ 80-86:

Առաջին համարը կրում է 1991թ. նոյեմբերի 23 թվականի նշումը: Պարբերականությունը՝ ամիսը երկու անգամ, սակայն 3-րդ համարից հետո չի պահպանվել: Տպագրվել է Երևանում՝ «Պարբերական» հրատարակչության տպարանում եւ տեղափոխվել Աբխազիայի եւ Կրասնոդարի երկրամասի նախկին համշենահայերով բնակված շրջաններ: ...Միության գործունեության լուսաբանման կողքին լայն տեղ է հատկացրել համշենահայ կյանքին ու Համշենի ազգագրական ու բանահյուսական նյութերին:

Թերթի առաջին համարը լույս է տեսել «Լույս համշենյաց» անունով եւ թեւ անվանափոխվել է սկսած երկրորդ համարից: Հրատարակվել է ընդամենը 6 համար: 1991, թիվ 1, 2, 1992, թիվ 3-6» (էջ 83, 84):

30. Felix Corley, Face to Face with the Government and Church. Minority Faiths in Today's Armenia, "**Armenian Forum**", Princeton, N. J. (Winter 1998-99), 1999, № 4, pp. 1-18.

Ֆելիքս Քորլիի հոդվածը նվիրված է Հայաստանի կրոնական համայնապատկերին, պետություն-եկեղեցի, պետություն-կրոնական կազմակերպություններ և համայնքներ հարաբերություններին: Կրոնի գործերի պետխորհրդի նախագահի տեղակալ Ս. Վարդանյանը թվարկում է որոշ կրոնական կազմակերպություններ, որոնք այլևայլ պատճառներով չեն գրանցվել (էջ 11):

2000

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Հայոց մայրաքաղաքները. Շիրակաւան, «**Գարուն**», ամսագիր, Սիդնեյ, Ավստրալիա, Դեկտեմբեր 1999- Յունուար 2000, № 5-6 (89-90), էջ 6, 7:

Հոդվածը քաղված է «**Հայոց մայրաքաղաքները**» (1985) գրքի Շիրակավան գլխից, կազմեց՝ Գագիկ Մաթևոսյանը:

2. Հայոց մայրաքաղաքները. Կարս, «**Գարուն**», ամսագիր, Սիդնեյ, Ավստրալիա, 2000, փետրվար, № 7 (91), էջ 8, 9:

Հոդվածը քաղված է «**Հայոց մայրաքաղաքները**» (1985) գրքի Կարս գլխից, կազմեց՝ Գագիկ Մաթևոսյանը:

3. Հայոց մայրաքաղաքները. Անի, «**Գարուն**», ամսագիր, Սիդնեյ, Ավստրալիա, 2000, մարտ, № 8 (92), էջ 4, 5:

Հոդվածը քաղված է «**Հայոց մայրաքաղաքները**» (1985) գրքի Անի գլխից, կազմեց՝ Գագիկ Մաթևոսյանը:

Հայոց մայրաքաղաքներին նվիրված հոդվածաշարքը ավարտելու կապակցությամբ վերջում Գ. Մաթևոսյանը հատուկ նշել է. **«Յօրագրաշարը կազմելու համար օգտագործել են հիմնականում Մերգեյ Վարդանեանի «Հայոց Մայրաքաղաքներ» գիրքը** (Երևան, 1985 թ.)...» (էջ 5):

4. Sergueï Vartanian, Des Arméniens oubliés (suits et fin). Au sujet des Arméniens convertis a L'Islam, **“Azad magazine”**, Grenoble, France, 2000, № 89, p. 16, 17.

Թուրքիայի, Ղազախստանի, Ղրղզստանի և Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասի իսլամ համընտհայերի մասին է: Ամսագրի 1999 թ. 87 և 88 համարներում տպագրված հոդվածի շարունակությունն է և ավարտը: Վերջում հեղինակը դիմում է ֆրանսահայերին, խնդրում պարզել, թե ինչպես են համընցի նշանավոր ազգագրագետ Մարգիս Հայկունու, նաև այլ գիտնականների և գրողների արխիվները հայտնվել Ֆրանսիայում, որտեղ դրանք հայրենիք բերելու համար Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին տրվել են հայ զինվորներին, որոնք մի մասը բերել են:

5. Հայաստանում՝ 48 կրոնական և կրոնա-բարեգործական կազմակերպություն, **«Ազգ»**, օրաթերթ, 2000, դեկտեմբերի 27, № 235, էջ 2:

Հայաստանի կրոնական կազմակերպությունների մասին «Արմենպրեսի» թղթակցի պատմում է ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետխորհրդի նախագահի տեղակալ Ս. Վարդանյանը:

### **Երկրորդ բաժին (հարցազրույցներ)**

6. Կասեցնենք հոգևոր արտագաղթը..., գրուցում է Փիրուզա Մելիքսեթյանը, **«Իրավունք», Հետաքննություն**, 2000, ապրիլ, № 2, էջ 5, 6:

ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհրդի փոխնախագահի՝ Ս. Վարդանյանի հետ զրույցը Հայաստանի կրոնական իրավիճակի մասին է:

7. Նրանք ձգտում են թուլացնել ազգի ու երկրի կարողունակությունը, պետությունն ու եկեղեցին, քննարկումը վարեց Փիրուզա Մելիքսեթյանը, **«Իրավունք», Հարց ու պատասխան**, շաբաթաթերթ, Երևան, 2000 թ. օգոստոսի 29-սեպտեմբերի 4, № 65, էջ 3:

Հայաստանի կրոնական իրավիճակի և Եվրախորհուրդ մտնելու մասին քննարկմանը մասնակցում են ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհրդի փոխնախագահ Ս. Վարդանյանը, ԱԺ պատգամավոր Հրանտ Խաչատրյանը, Երևանի Ս. Հովհաննես եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Շահե քահանա Հայրապետյանը և կրոնի հարցերի մեկնաբան,

բանաստեղծ Մաքսիմ Ոսկանյանը: Տպագրվել է նաև Ս. Վարդանյանի լուսանկարը:

8. Երջանիկ է այն ազգը, որն Ավետարանն իր Սահմանադրությունը կդարձնի, քննարկումը վարեց Փիրուզա Մելիքսեթյանը, «Իրավունք», **Հարց ու պատասխան**, Երևան, 2000, սեպտեմբերի 5-11, № 67, էջ 6:

Թերթի խմբագրությունում ծավալված քննարկման շարունակությունն է, տե՛ս նախորդ հղումը՝ «Իրավունք», **Հարց ու պատասխան**, Երևան, 2000, օգոստոսի 29-սեպտեմբերի 4, № 65, էջ 3: Տպագրվել է Ս. Վարդանյանի լուսանկարը:

### Երրորդ բաժին

9. Գայլն ու ձին, Մանգաղ շինելը, Արջն ու մարդը, արդի հայերենի վերածեց Հրաչյա Հունանյանը «Հրեղեն ձին» գրքից, «Ծիծեռնակ», ամսագիր, Երևան, 2000, № 1-2, էջ 3:

Տե՛ս «Հրեղեն ձին» (1981), ժողովածու, «Գայլն ու ձին» (էջ 91), «Մագաղ շինելը» (էջ 95), «Արջն ու մարդը» (էջ 104):

10. Անժիկ Հակոբյան, Կարոտախտով և առանց կարոտախտի, «Գարուն», ամսագիր, Երևան, 2000, № 5 (400), էջ 5:

1976-1986 թթ. «Գարունի» խմբագիր Անժիկ Հակոբյանն ամսագրի 400-րդ համարի լույս ընծայման առթիվ իր մտորումներն է կիսել ընթերցողների հետ, նաև իր օրագրից 7 գրառում ներկայացրել, որոնցից մեկում (6 հունվարի, 1986 թ.) հիշատակվում է Ս. Վարդանյանը. «.. Պարզապես ափսոսում եմ մեր մայրաքաղաքը:

Ինչ ասել, գուցե այս ամենի պատճառն այն է, որ Երևանը հայոց 13-րդ մայրաքաղաքն է, չգիտեմ...

(Գրել եմ այս տողերն ու չեմ ստուգել. իսկապե՞ս Երևանը թափառող մայրաքաղաքների հայոց երկրի 13-րդ քաղաքամայրն է: Ստուգեցի. ժամանակին լրագրող-արվեստաբան ու հետազոտող, իմ բարեկամ Սերգեյ Վարդանյանը «Հայոց մայրաքաղաքները» վերնագրով իր գիրքն էր ինձ նվիրել: Ես նրան միշտ շնորհակալությամբ եմ հիշում, որովհետև սովետական տարիներին նա այն սակավ լրագրողներից էր, որ ԽՍՀՄ տարածքում ծվարած ներքին սփյուռքի դարդուցավը իր գրչին հանձնեց, ու «Գարունը» իր հզոր տպաքանակով արծարծեց մի ողջ հողվածաշար: Մի տաբու ևս ունահարվեց: Գալով գրքին՝ ես վերստին կարդացի ու համոզվեցի, որ սխալ եմ, Երևանը 12-րդ քաղաքամայրն է, բայց չուզեցի նախորդ միտքս ջնջել, գրել, գրել եմ, թող մնա, այն ժամանակ այդպես եմ մտածել)» (էջ 5):

11. Հետաքրքիր գրքեր, «**Լույս**», շաբաթաթերթ, ԱՄՆ, Գլենդեյլ, 2000, հուլիսի 21-28, № 83, էջ 1:

Թերթի առաջին էջում՝ «Հետաքրքիր գրքեր» բաժնում, հրապարակվել է Ս. Վարդանյանի «**Հայաստանի մայրաքաղաքները**» (1995) գրքի շապիկի լուսանկարը, հակիրճ տեղեկություն գրքի մասին, նաև ԱՄՆ-ում այն գնորդին առաքելու պայմանների մասին ծանուցում:

12. Լիլիթ Գալստյան, Անձայրածիր լսարան՝ եհովականների համար, «**Հայոց աշխարհ**», օրաթերթ, Երևան, 2000, փետրվարի 16, № 27, էջ 6:

Վրոնի գործերի պետխորհրդի նախագահի տեղակալ Ս. Վարդանյանը բացատրում է իրենց խորհրդի գործառույթները և կրոնին վերաբերող իրավական դաշտի յուրահատկություններն ու անկատարությունը:

13. И. В. Кузнецов, Хемшилы Краснодарского края в 1980-1990-е гг. // **Старый свет: Археология. История. Этнография**: Сборник научных статей, Министерство Образования РФ, Кубанский государственный университет, Краснодар, 2000 (-200 с.), с. 110-139.

Վրաստոդար քաղաքի Վուրանի պետ. համալսարանի դոցենտ, պ.գ.թ. Բգոր Վուզնեցովն անդրադառնալով Թուրքիայի, Աջարիայի, Վենստրոնական Ասիայի և Վրաստոդարի երկրամասի իսլամ համշենցիներին՝ խեմշիլներին, հիշատակում է նաև Ս. Վարդանյանին (էջ 121, 124, 136):

14. И. В. Кузнецов, Турки-хемшилы или исламизированные армяне? (случай «неясной» этнической идентичности), «**Диаспоры**», независимый научный журнал, Москва, 2000, № 1-2, с. 226-258.

Հոդվածում հիշատակվում է նաև Ս. Վարդանյանը. «Րանե, в 1984 г., хемшилов Краснодарского края с целью изучения посещал только ереванский журналист Сергей Вартанян, работавший тогда корреспондентом журнала «Гарун» (Garun)», с. 257. Ղազախստանի համշենցիների ավանդական պարը պատկերող լուսանկարի տակ նշված է, որ հեղինակը Ս. Վարդանյանն է (էջ 231): «... несколько образованных молодых людей из числа хемшилов Киргизии предпринимали попытку создания особого алфавита для хемшильского «языка», не подозревая, что это лишь диалектная форма армянского (информация С. Вартаняна)», с. 236. «Хемшилы свободно употребляют в своей речи армянские слова *хач* (крест) и *astuac* (бог). Однако первый термин является привычным обозначением для христианского креста во всех тюркских языках и диалектах региона (тур. *hac* < арм. *хач* и др.). В отношении второго высказывалось мнение о том, что хемшилы, вместо обычного для мусульман *allah*, именуют объект своих молений «по-христиански» - *astuac* (информация С. Вартаняна)» (с. 240). «Многие из признаков, описанные этими

исследователями, не характерны для хемшилов Краснодарского края. В то же время наблюдаются определенные различия в речи моих информантов, происходящих, с одной стороны, из села Джарнал (почти не выражен характерный амшенский признак  $r > y$ ,  $r > \check{s}$ ,  $r > r$ ), с другой – из села Гонио (то же самое в отношении и этого, и другого признака:  $a > o$ ). На этом основании С. Варгянян пробовал выделить в составе здешнего хемшильского два говора - «ардылейский» и «турцеванский». Однако наиболее вероятно, что говоры не коррелируют с локальными подразделениями хемшилов» (с. 242). «В качестве местного языка хемшилы, за исключением упомянутой полностью тюркоязычной группы, употребляют диалект (хемшильский этнолект) - почти единственный язык домашнего общения. Этот диалект существует в привычной, т. е. устной форме, если только не брать во внимание описанные выше, по-видимому, единичные попытки приспособить его под кириллицу или информацию С. Варгяняна о неудачной попытке создать особый хемшильский алфавит в Киргизии. И в этом смысле хемшильская культура – культура бесписьменная» (с. 244). «В этой связи очень интересно предание Караибрахимоглы- Караибрагимовых, на которое обращали внимание чуть ли не все, кто занимался хемшилами. Оно повествует о том, что до отуречивания настоящей фамилией этого рода была *Jermakci* (<арм. *jermak* «белый»)), с. 258, «См. напр: Торлакян Б., Этнография амшенских армян..., об этом сообщал автору и С. Варгянян» (с. 256).

2001

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. [Հայ եկեղեցին անկախության տասը տարիներին] // «Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում», ՄՄԿ-ի Ջարգացման ծրագրի աջակցությամբ և հովանավորությամբ, Մարդկային զարգացման ազգային զեկույց, Հայաստան, 2001, Երևան, 2001, (- 172 էջ), էջ 31:

Հոդվածն անվերնագիր է և անստորագիր, հեղինակն է ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհրդի փոխնախագահ Ս. Վարդանյանը:

2. Դեղին տերև՝ երկնի կապույտին // *Varoujan Mardirian, Sculptures 1994 -2001*, արժու, Բեյրութ, Antelias-Libanon, 2001 (- 96 p.), էջ 73, 75, շապիկի 4-րդ էջ:

Հոդվածը նվիրված է բեյրութցի ճանաչված մտավորական, ճարտարապետ, փայտի քանդակագործ Վարուժան Մարտիրոսյանի քանդակներին:

Արտատպված է՝ «Ասպետ» պարբերաթերթ, Երևան, 1999, հունվարի 22-ի № 3-ից:

Նույն հոդվածը շատ քիչ խմբագրված տե՛ս «Բնօրրան», հանդես, Երևան, 1999, № 1-2, էջ 108, 109:

### Երկրորդ բաժին (հարցազրույցներ)

3. Կարինե Հարությունյան, Քննարկվում է կրոնական ազատությունը, «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, Երևան, 2001, դեկտեմբերի 20, № 170, էջ 2:

Հայաստանում գրանցված կամ չգրանցված, բայց գործող կրոնական կազմակերպությունների մասին պարզաբանում է անում ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհրդի փոխնախագահ Ս. Վարդանյանը:

### Երրորդ բաժին

4. Մուկը մկան հետ խնամի կլինի, Ներկիր ինքը, Երևան, «Գրաբեր» հրատ., 2001 (-8 էջ):

Համշենի բարբառից գրական հայերենի Ս. Վարդանյանի փոխադրած «Մուկը մկան հետ խնամի կլինի» հեքիաթը, որը հրատարակվել է «Հրեղեն ձին» քանահյուսական ժողովածուում, երեխաների գունազարդելու համար հրատարակվել է գրքույկով:

5. Diran Lokmagözyan, Momi'ye gümüş melek, “Agos”, Haftalık gazete, Istanbul, 2001, Aralık 14, № 298, s. 8.

Դեկտեմբերի 1-5 Երևանում՝ «Մոսկվա» կինոթատրոնում կայացած կինոփառատոնում ցուցադրվել է նաև ստամբուլաբնակ համշենցի ռեժիսոր Օզջան Ալփերի «Մոմի» (Մամիկ, մեծ մայր) կարճամետրաժ ֆիլմը, որի հերոսները հաճախ խոսում են Համշենի բարբառի Խոփայի խոսվածքով, որը հանդիսատեսին հաճախ անհասկանալի է կամ դժվար հասկանալի: Ինչպես հոդվածի ենթավերնագիրն է վկայում՝ «Վերջին թռչելի թարգմանիչը», ցուցադրությունից թռչելներ առաջ փառատոնի կազմակերպիչները «օգնության կանչեցին Համշենի լեզվի և պատմության մասնագետ Մերգեյ Վարդանյանին: Վարդանյանի գրքերում համշենցիների պատմության փաստաթղթերի և Համշենի պատմություններից բացի, առաջին անգամ համշենցիների նոտագրված խաղիկներ և երգեր կան»: Ֆիլմի ցուցադրության ժամանակ Ս. Վարդանյանը Համշենի բարբառի Խոփայի խոսվածքից զուգահեռաբար թարգմանել է արևելահայերեն: Ֆիլմն արժանացել է «Արծաթե հրեշտակ» մրցանակի, բայց, քանի որ ռեժիսորը Հայաստան չէր ժամանել, ուստի ֆիլմի համար «վերջին վաստակ ունեցողը»՝ Ս. Վարդանյանը, մրցանակը հանձնել է Տիրան Լոքմագոյանին՝ Ստամբուլում Օ. Ալփերին հանձնելու համար:

6. Bert Vaux, Hemshinli: The Forgotten Black Sea Armenians, “**Journal of Armenian Studies**”, vol. VI, no 2, Winter-Spring 2000-2001, 2001, Belmont: 2001, pp. 47-71.

Հարվարդի համալսարանի (ԱՄՆ) աշխատակից Բերթ Վոքսի «Հեմշինլիներ. Սև ծովի մոռացված հայերը» հոդվածում հղումներ են արվում (էջ 48, 70) Ս. Վարդանյանի «Համշենի մուսուլման հայերը» («**Իրան Նամե**», 1993, № 4, էջ 12-13) հոդվածին:

7. Հայաստանի Ավետարանական Աստվածաբանական Ճեմարանի առաջին շրջանավարտները, «**Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցի**», եռամսյա հանդես, Երևան, 2001, № 1 (17), էջ 13-16:

2001 թ. նոյեմբերի 29-ին Երևանի Հակոբ Պարոնյանի անվան պետական թատրոնի շենքում Հայաստանի Ավետարանական Աստվածաբանական Ճեմարանի առաջին շրջանավարտներին դիպլոմներ հանձնելու հանդիսավոր արարողության մասին է. «... ներկա էին շուրջ վեց հարյուր հյուրեր, Ազգային Ժողովի անդամներ, Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Էջմիածնի Գեորգյան Ճեմարանի, օտարերկրյա դեսպանատների և կազմակերպությունների, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանի գրասենյակի, ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի խորհրդի, Հայաստանի Աստվածաշնչային ընկերության նեկայացուցիչներ և լրագրողներ» (էջ 14): Պատվավոր հյուրերի թվում ելույթ է ունեցել նաև Ս. Վարդանյանը. «ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհրդի փոխնախագահ Սերգեյ Վարդանյանը նշեց, որ, ցավոք, Հայաստանում կրոնագիտության, աստվածաբանության, նաև հոգևոր ոլորտում դեռևս ամբողջությամբ չի ցրվել խորհրդային տարիների խավարը, և շնորհավորելով շրջանավարտներին՝ ասաց. «Ձեզ բոլորիդ մաղթում եմ, որ ձեր մուրվառեք այդ խավարին ընդդեմ և բարու սերմնացաններ լինեք, բազմացնեք գիտության ուժը և անշեջ պահեք հավատի լույսը»» (էջ 15): Նույն էջում տպագրվել է նաև Ս. Վարդանյանի լուսանկարը՝ ամբիոնի մոտ ելույթ ունենալիս:

2002

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 10-ամյա ուղին, «**Դիտորդ**», «Մարդու իրավունքները Հայաստանում», տեղեկագիր, 2002, № 3, էջ 2-4:

Հողվածը նվիրված է օրենքի անցած ուղուն, նաև մի շարք թերություններին: Հողվածի հեղինակի՝ Սերգեյ Վարդանյանի անունը չի տպագրվել, քանի որ 24 էջանոց ամսագրի նույն համարում նա հրապարակել է ևս 2 հողված, որոնցից ևս մեկն անստորագիր է: Տե՛ս նույնի անգլերենը՝ № 4 մատենագիտական նկարագրությունը:

2. Մտորումներ Հայաստանին վերաբերող միջազգային զեկույցի շուրջ, «Մարդու իրավունքները Հայաստանում», «**Դիտորդ**», տեղեկագիր, Երևան, 2002, № 3, էջ 5-6:

Հողվածում քննարկվում է Հայաստանի կրոնական իրավիճակի մասին ԱՄՆ-ի պետդեպարտամենտի 2001 թ. հոկտեմբերին հրապարակված զեկույցը:

3. Հայաստանի կրոնական համապատկերի ուրվագիծ, «**Դիտորդ**», տեղեկագիր, Երևան, 2002, № 3, էջ 7-9:

Հիմնականում ներկայացված են հեղինակի՝ Ս. Վարդանյանի ՀՀ կառավարությանն առնթեր կրոնի գործերով պետխորհրդի փոխնախագահ աշխատած տարիներին՝ 1991-2002 թթ. Հայաստանում գրանցված կազմակերպությունները:

Հեղինակը չի նշված, քանի որ «**Դիտորդի**» նույն համարում Ս. Վարդանյանը հրապարակել է ևս 2 հողված:

4. On Freedom of Conscience and Religious Organizations Decade of the Armenian Law, “**Ditord**” (Observer), Yerevan, 2002, № 3, p. 2-4.

Անստորագիր է, հեղինակը Ս. Վարդանյանն է:

5. Reflection over Annual Report on International Religions Freedom: Armenia, “**Ditord**” (Observer), Yerevan, 2002, № 3, p. 5-6.

6. On Outline of Armenia's Religious Derview, “**Ditord**” (Observer), Yerevan, 2002, № 3, pp. 7-9.

7. Հայաստանի կրոնական համապատկերը // «**Տեղեկատու**» (Կրոնական հանդուրժողականությունը Հայաստանում), 2002, № 1, (- 28 էջ), էջ 3-8:

Տպագրվել է 2001 թ. դեկտեմբերի 19-ին «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» միության կազմակերպած Կլոբ սեղանի ժամանակ ՀՀ կառավարությանն առնթեր կրոնի գործերի պետական խորհրդի նախագահի տեղակալ Ս. Վարդանյանի զեկուցումը կրճատումներով: Զեկուցման զգալի մասը լույս է տեսել «**Մարդու իրավունքները Հայաստանում**» համաժողովի զեկուցումների գրքում (2003)՝ «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» ՀԿ նախագահ Ստեփան Դանիելյանի հողվածում, ինչի մասին կա համապատասխան նշում, տե՛ս էջ 51-53:

8. General Religious Picture of Armenia, Religious Tolerance in Armenia (Collaboration for Democracy union), Yerevan, 2002, p. 4-6.

Հայաստանի կրոնական համապատկերի մասին հոդվածների ժողովածու է, որտեղ 1991-2002 թթ. ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետիտորի փոխնախագահ Ս. Վարդանյանը ներկայացրել է Հայաստանի կրոնական համապատկերը և գրանցված կազմակերպությունները:

### Երրորդ բաժին

9. Լևոն Անանյան, Արմատների որոնումը, «Գրական թերթ», շաբաթաթերթ, Երևան, 2002, դեկտեմբերի 27 (№ 45), էջ 8:

Հոդվածի մի հատվածն արտատպվել է «Գրական թերթի» 2023 թ. մայիսի 26-ի համարում, էջ 6:

Հայաստանի գրողների միության նախագահ Լ. Անանյանի հոդվածը Ս. Վարդանյանի անցած ուղու մասին է: ՀԳՄ վարչությունը և «Գրական թերթը» ևս շնորհավորում են նրա 50-ամյակը: Տպագրվել է Ս. Վարդանյանի լուսանկարը: Հոդվածից հատվածներ. «Շատ տարիներ առաջ «Գարուն» ամսագրում տպագրվեց Սերգեյ Վարդանյանի «Արմատներ» պատմվածքը: Խիտ, բյուրեղի նման ցուցյուն պատկերները հիացնում են թարմությամբ ու ինքնատիպ ոճով: ...Սա սկիզբն էր, և շատերը ողջունեցին օժտված երիտասարդի գրական նորամուտը: Սակայն այլ ճակատագիր էր նախասահմանված Սերգեյին՝ հետաքրքրությունների, պրպտումների ու հայտնագործությունների բազմաշերտ ու ընդգրկուն ասպարեզ: Հետագայում նրա «Արևածաղիկը» մանկական պատմվածքների ժողովածուն ունեցավ երկու հրատարակություն՝ նախ Երևանում, ապա և Ստամբուլում՝ արևմտահայերեն: Նուրբ, գեղեցիկ այս դիպաշարն ուղղված է մանուկների աշխարհընկալմանը, լի է գեղարվեստական գյուտերով, սեր ու հավատ է սերմանում կյանքի ու բնության նկատմամբ: Այդ սիրո դրսևորումները առատորեն սփռված են թերթերի և հանդեսների էջերում, որտեղ *Սերգեյ Վարդանյան* ստորագրությունը փնտրված անուն էր, որովհետև, եթե նա գրիչ է վերցնում, անպայման պիտի նոր խոսք ասի, նոր շերտեր պեղի, նորովի բացի անգամ ձեռնած թեմաները: Նա երբեք չի գրում սոսկ գրելու համար, թեթև ձեռքով, արարում է դժվար երկունքով, կառուցիկ ու սպառիչ, և ամենաբժախնդիր խմբագիրն այլևս անելիք չունի:

...Այսպես ծնվեցին հարյուրից ավելի ուսումնասիրություններ. իշխանուհի Մարիամ Թումանյանի կերպարը նա դուրս է հանում տողատակի ծանոթագրություններից՝ ներկայացնելով իր ողջ բազմանիստ տարողու-

յամբ: Հիմնավորում է արվեստի ավստրիացի պատմաբան Յոզեֆ Ստրժիգովսկու «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» երկհատոր աշխատությունը թարգմանելու, Հր. Աճառյանի անտիպ և Լեոյի արգելված երկերի տպագրման հրատապությունը: Պատմական փաստերի կուռ տրամաբանությամբ վիճարկում է սահմանների վերաձևման անթույլատրելիության գորբաչովյան սկզբունքը: ...Բացում է փակ դռները ներքին սփյուռքի հայության հոգս ու ցավի առաջ, որ ինտերնացիոնալիզմի գաղափարախոսներն այնպես փութաջանորեն կոծկում-սղալում էին: Չմոռանանք, որ խորհրդային իշխանության ժամանակներն էին, երբ մամուլի կազմակերպած ամենահամարձակ շարժումը թերևս պատանի միջուրինականների ձախավեր կոչն էր՝ վայրի անտառը պատվաստելով, դարձնել պտղատու այգի, իսկ Ծաղկածորի ու Հանքավանի ճամբարները դորդում էին դպրոցականների հազարաձայն հավաստիացումներից. «Երդվում եմ ապրել, սովորել և աշխատել Լենինի պես»: Հիմա այս ամենը իր անհեթեթությամբ լոկ քնծիծաղ է հարուցում, բայց ժամանակի կուսակցական կարգախոսները պարտադիր կենսաձև էին: Այս հենքի վրա Սերգեյը յուրովի այլախոս էր: Առանց ավելորդ աղմուկի, առանց ինքնաթմբկահարման՝ նա նոր սերնդի ուշադրությունը շեղում էր վաղանցիկ, կեղծ արժեքներից, ինքուրույն մտածողությունն աղավաղող կաղապարների բեռից, ուղղորդում դեպի սեփական պատմությունը, ինքնության արմատների գորեղությամբ չափում վաղվա սաղարթի փարթամությունը: Նրա բանահավաքչական հերթական մտահղացումը՝ գրի առնել մեր ասացողների վերջին մոհիկաններին, կորստից փրկել հայ բանավոր գրականության գոհարները, իսկական ռումբի պայթյուն էր, որ փոթորկեց խանդավառ պիոներների անվրդով անդորրը: Գյուղերում և քաղաքներում (Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի) նրանք հավաքում էին հայ ժողովրդական հեքիաթներ, և Սերգեյը մի ամբողջ ինստիտուտի գործ արեց՝ դասդասելով, բաղդատելով տարբերույթ տարբերակները, ճշտելով ու ճշգրտելով բարբառային սպրդումները: Արդյունքում՝ առանձին գրքով հրատարակեց «Հրեղեն ձին» ժողովածուն: Այնքան նյութ էր կուտակվել, որ այսօր՝ 20 տարի անց, նա հրատարակության է պատրաստել պատանի բանահավաքների երկրորդ գիրքը՝ «Թագավորի երագները» խորագրով:

Սերգեյ Վարդանյանը առաջինն էր, որ տեր կանգնեց համշենցիների դատին. Կրասնոդարի երկրամասի ու Աբխազիայի հայկական բնակավայրերում շրջելով և բանուկ կամուրջ գցելով հայրենիքի ու իր տարագիր գա-

վակների միջև, հրապարակեց բազմաթիվ հոդվածներ, կազմեց և խմբագրեց «Ձայն համշենական» ժողովածուն... Միջին Ասիայի խուլ գյուղերում նա հայտնաբերեց մի քանի հազար կրոնափոխ համշենցիների, ուսումնասիրեց նրանց կյանքն ու բարքերը և լրջորեն քայլեր էր ձեռնարկում ազգային պատկանելությունը կորցնող այդ ներփակ համայնքը Հայաստան տեղափոխելու: ... Առանձին բաժին են կազմում նրա պատմամշակութային, ազգագրական, բանահյուսական աշխատությունները, որոնք հավաստում են մեղվաջան հետազոտողի պրպտուն միտքը, ներկան պատմության դասերով վերաիմաստավորելու նրա ջանքը: Սերգեյի պատմագիտական գործերի պսակը «Հայաստանի մայրաքաղաքները» մենագրությունն է՝ հայոց 12 ոստանների ամփոփ կերպարը, որը լույս տեսավ 1985-ին և մեկ տասնամյակ անց վերահրատարակվեց շքեղ պատկերազարդումով: Դժվար է գերազնահատել հատորի ազգային-ճանաչողական նշանակությունը, այն միանգամից դարձավ ո՛չ միայն պատանիների սեղանի գիրքը:

Իր ծանրակշիռ վաստակի համար գրող-պատմաբան-բանահավաքն արժանացել է բազմաթիվ մրցանակների, հայ ժողովրդի պատմության, մշակույթի, ազգագրության հիմնախնդիրներին նվիրված նրա հրապարակումները մտել են գիտական լայն շրջանառության մեջ, թարգմանվել անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, իսպաներեն, պոլակերեն և այլ լեզուներով:

Սերգեյ Վարդանյանը մտավորականի այն տեսակն է, որը կազմում է հասարակության ոսկե միջուկը, և ինչքան էլ ժամանակի հարվածները ձևախեղեն հայոց արժեքային համակարգի պատյան-կեղևը, նրանք անխաթար են պահում ազգային ոգին ու բարոյականությունը:

Այսպիսի անհատներով է իմաստավորվում կենսունակ ազգի հարատևությունը»:

10. Серо Ханзаян, Возмутительный отказ // **Б. Г. Торлакян, Этнография амшенских армян**, сборник статей и материалов, Амшенская библиотека № 1, Краснодар, 2002 (-198 с.), с. 194-197.

Տե՛ս հայերեն՝ **Սերո Խանզայան**, Նողկալի մերժում, «Գարուն», ամսագիր, Երևան, 1993, № 8 (319), էջ 12-15:

Աջարիայից 1944 թ. նոյեմբերին Դրոզստան և Ղազախստան արքարված կրոնափոխ համշենահայերին Հայաստանում վերաբնակեցնելու իր և Ս. Վարդանյանի ջանքերի մասին է: Հոդվածում կան մի շարք փաստական և ժամանակագրական անճշտություններ:

11. Արամայիս Սահակյան, Ծաղկածորյան ծաղիկներ և ... ծաղկեփշեր, «Ոգնի», ամսաթերթ, Երևան, 2002, սեպտեմբեր, № 9 (1156), էջ 4: «Ոգնու»

գլխ. խմբագիր, բանաստեղծ Ա. Սահակյանը Ծաղկաձորում՝ Գրողների ստեղծագործական տանը, գրառել է իր հետ պատահած զվարճալի միջադեպերը և իր լսած սրամիտ պատասխանները, դրանցից մեկը՝ «Ո՞րն է Հայաստանի հաջորդ մայրաքաղաքը» վերնագրով՝ Ս. Վարդանյանի մասին է:

12. Կարեն Մաթևոսյան, Անի // **Քրիստոնյա Հայաստան**, հանրագիտարան, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, Երևան, 2002 (-1076 էջ), էջ 60, 61:

Պ.գ.թ. Կ. Մաթևոսյանի գրած «Անի» հոդվածի օգտագործված գրականության ցանկում նշված է նաև Ս. Վարդանյանի «**Հայաստանի մայրաքաղաքները**» (1995) գիրքը (էջ 61):

13. И. В. Кузнецов, О том, как политики вмешиваются в «Акт божественного творения»: веселая история - Машантакет - Пеквот, печальная история – хемшилы // **Грани**, Ежегодник факультета истории, социологии и международных отношений, Материалы II научной сессии ФИСМО (24 - 27 апреля 2001 г.), Краснодар, Издательство Кубанского государственного университета, 2002 (204 с.), с. 39-48.

Կրասնոդար քաղաքի Կուրանի պետական համալսարանի պատմության, սոցիոլոգիայի և միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի գիտական զծով տեղակալ, պ.գ.թ. Իգոր Կուզնեցովի հոդվածում զուգահեռներ են անցկացվում ԱՄՆ-ի բնիկների՝ հնդկացիների և Կրասնոդարի երկրամասում հաստատված ազգային փոքրամասնությունների՝ իւեմշիկների, մեսխեթցի թուրքերի, թուրքերի, քրդերի և մյուսների իրավունքների միջև: Հոդվածում հիշատակվում է նաև Ս. Վարդանյանը. «Но, с другой стороны, несколько образованных молодых людей из числа хемшилов Кыргызстана предпринимали даже попытку по созданию особого алфавита для хемшилского «языка», не подозревая, что это – лишь диалектная форма армянского (личная информация Сергея Вартапяна)», с. 46.

14. Hovann H. Simonian, The vanished Khemshins: return from the brink, «**Journal of Genocide Research**», London, 2002, volume 4, № 3, p. 375-385.

Անգլիայում գրանցված «Journal of Genocide Research» (թարգմ.՝ «Ցեղասպանության ուսումնասիրության հանդես») գիտական պարբերականում տպագրված Հովան Սիմոնյանի «Անհետացած Խեմշիկները. վերադարձ անդունդի եզրից» անգլերեն հոդվածում քանիցս հղում է արվում Ս. Վարդանյանի «Համշենցի մուսուլման հայերի ուսումնասիրության պատմությունից» («**Իրան-Նամե**», հանդես, Երևան, 1998, № 1-3 (29-31, էջ 2-11) հոդվածին, տե՛ս էջ 373 № 14, էջ 378 № 15, № 22, էջ 380 № 36, № 38, էջ 381 № 42, №

45, էջ 382 № 48: 378-րդ էջի № 15 հղման մասին Հ. Սիմոնյանը գրել է. «Համ- շենի մասնագետ Սերգեյ Վարդանյանը առաջ է քաշել այն վարկածը, որ Ա- ջարիայի այն 522 թուրքախոս քրդերը, որոնք հաշվառված էին 1926 թ. մար- դահամարում, իրականում քուրդ-հեմշինցիներ էին» (էջ 378): Իսկ 382-րդ է- ջի № 47 հղումը ոչ թե հոդվածին է արված, այլ Ս. Վարդանյանի անձամբ հաղորդածին. «Ըստ Սերգեյ Վարդանյանի՝ ավելի շատ հեմշինցիներ կա- րող էին գաղթած լինել Ռուսաստան, եթե կարողացած լինեին իրենց տնե- րը շուկայական գնով վաճառել, սակայն տեղացիներն իմանալով, որ հեմ- շինցիներն այսպես թե այնպես պիտի գաղթեն, կա՛մ ցածր գին են առա- ջարկում, և կա՛մ պարզապես սպասում են, որ նրանք լքեն իրենց տները, ու ապա իրենք գալին ու անվճար տիրանային հեմշինցիների տներին» (էջ 382, տե՛ս նաև էջ 385-ի № 47 հղումը):

2003

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Թագավորի երազները (բանահյուսական ժողովածու), կազմեց, ծա- նոթագրեց և հրատարակության պատրաստեց Սերգեյ Վարդանյանը, նկա- րիչ՝ ՆԻԿՕ (Նիկոլայ Մանուկյան), Երևան, «Գասպրինտ» հրատ., 2003 (-144 էջ), տպաքանակը՝ 1000: Առաջաբանի և բարբառային բառարանների հեղինակը նույնպես Ս. Վարդանյանն է:

Գրքում ընդգրկված են Ս. Վարդանյանի կոչով Հայաստանի Հանրապե- տության, Աղբբեջանի, Լեռնային Ղարաբաղի, Նախիջևանի, Վրաստանի, Աբխազիայի, Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասի հայ դպրոցական- ների գրառած 79 հեքիաթները, զրույցները, զվարճապատումները և այլն:

2. Ազգային փոքրամասնությունները՝ որպես կրոնական փոքրամաս- նություններ, «Օրբան», օրաթերթ, Երևան, 2003, հունիս 27, № 106 (252), էջ 6:

Հայաստանի կրոնական համապատկերի, նաև խղճի ազատության օ- րենադրական դաշտի հակասությունների և թերությունների մասին է: Հոդ- վածին հղում է արել և որոշ հատվածներ վերապատմել իրավաբանական գիտ. թեկնածու Վահե Սայադյանն իր «Կրոնական կազմակերպություննե- րի սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրները Հայաս- տանի Հանրապետությունում» գրքում, Երևան, ՀՀ ոստիկանության կրթա- համալիր, «ՄԻՄՄԱ» ՍՊԸ, 2017 (-168 էջ), էջ 100-101: Տե՛ս նաև հաջորդ նկարագրությունը:

3. Sergey Vardanyan. National Minorities as Religious Minorities, “**Orran**”, Deily, Yerevan, 2003, june 23, № 106 (252):

«Օրբան»-ում տպագրված «Ազգային փոքրամասնությունները՝ որպես կրոնական փոքրամասնություններ» հոդվածի (27.06.2003) թարգմանությունն է թերթի առցանց անգլերեն տարբերակում: Տե՛ս նաև նախորդ նկարագրությունը:

4. Դեպի Վան քաղաքը կատարուած շրջապտոյտէն յամեցող լուսանկարներ, «**Նոր Մարմարա**», օրաթերթ, Իսթանպուլ, 2003, հոկտեմբերի 10, № 7260, էջ 3:

Թերթի հոկտեմբերի 9-ի համարում (էջ 3) տպագրված այս հոդվածաշարի առաջին հրապարակման մեջ նշված է, որ հեղինակն իրենց թղթակիցն է (անունը չի նշված), իսկ լուսանկարների հեղինակը Արսէն Եարմանն է: Իսկ հոկտեմբերի 10-ին լույս տեսած հոդվածում նշվում է, որ «հայաստանցի գրագէտ եւ բանաստեղծ Սէրկէյ Վարդանեանի «Հայաստանի մայրաքաղաքները» անուն գիրքին մէջ կը կարդանք, որ...»: Հոդվածի շարունակությունը տե՛ս թերթի հաջորդ համարներում:

5. Դեպի Վան քաղաքը կատարուած շրջապտոյտէն յամեցող լուսանկարներ, «**Նոր Մարմարա**», օրաթերթ, Իսթանպուլ, 2003, հոկտեմբերի 13, № 7262, էջ 3:

Նշվում է. «Սէրկէյ Վարդանեանի «Հայաստանի մայրաքաղաքները» անուն գիրքէն կը տեղեկանանք, որ ...», այնուհետև գրքից արտատպվել են հատվածներ: «**Մարմարայի**» 2003 հոկտեմբերի 14-ի (7263) համարում տպագրված հոդվածի շարունակությունում Ս. Վարդանյանի գրքից հատվածներ չեն արտատպվել:

6. Դեպի Վան քաղաքը կատարուած շրջապտոյտէն յամեցող լուսանկարներ, «**Նոր Մարմարա**», օրաթերթ, Իսթանպուլ, 2003, հոկտեմբերի 15, № 7264, էջ 3:

7. Հայոց մայրաքաղաքները. Վան, «**Ակունք**», ամսաթերթ, ք. Ախալքալաք, 2003, փետրվար, № 1 (19), էջ 4:

Ըստ «**Հայոց մայրաքաղաքները**» (1985) գրքի:

8. Հայոց մայրաքաղաքները. Արմավիր, «**Ակունք**», ամսաթերթ, ք. Ախալքալաք, 2003, մարտ, № 2 (20), էջ 3:

Ըստ «**Հայոց մայրաքաղաքները**» (1985) գրքի:

9. Հայոց մայրաքաղաքները. Երվանդաշատ, «**Ակունք**», ամսաթերթ, ք. Ախալքալաք, 2003, ապրիլ, № 3 (21):

Ըստ «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքի:

10. Հայոց մայրաքաղաքները. Արտաշատ, «Ակունք», ամսաթերթ, ք. Ախալքալաք, 2003, հուլիս, № 6 (24):

Ըստ «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքի:

11. Հայոց մայրաքաղաքները. Տիգրանակերտ, «Ակունք», ամսաթերթ, ք. Ախալքալաք, 2003, հոկտեմբեր, № 7 (25):

Ըստ «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքի:

12. Հայոց մայրաքաղաքները. Վաղարշապատ, «Ակունք» (հատուկ թողարկում), ամսաթերթ, ք. Ախալքալաք, 2003, հոկտեմբեր, № 8 (26):

Ըստ «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքի: Հաջորդ մայրաքաղաքի՝ Դվինի մասին թերթում հոդված չի տպագրվել:

13. Հայոց մայրաքաղաքները. Բագարան, «Ակունք», ամսաթերթ, ք. Ախալքալաք, 2003, հոկտեմբեր, № 9 (27):

Ըստ «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքի:

14. Հայոց մայրաքաղաքները. Շիրակական, «Ակունք», ամսաթերթ, ք. Ախալքալաք, 2003, դեկտեմբեր, № 11 (29):

Ըստ «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքի:

15. Գրախոսականի փոխարեն, «Բնօրրան», հանդես, Երևան, 2001-2003, № 1-2-3 (14-16), էջ 297-298:

Ներկայացված են Ս. Վարդանյանի կենսագրությունը և նրա «Հայաստանի մայրաքաղաքները» (1995) գիրքը: Չի նշված, հեղինակը Ս. Վարդանյանն է:

16. Կրիան (պատմվածք) // «Ծիծեռնակի» թռիչքը, անթոլոգիա, կազմեց Կատյա Սարվազյանը, Երևան, «Ծիծեռնակ» հրատ., 2003 (- 100 էջ), էջ 62:

Անթոլոգիայում ընդգրկված են «Ծիծեռնակ» (նախկին՝ «Հոկտեմբերիկ») մանկական ամսագրում «74 տարիների ընթացքում տպված լավագույն հեղինակների լավագույն ստեղծագործությունները»:

Տե՛ս Կրիան, «Ծիծեռնակ», ամսագիր, 1986, № 8, էջ 4: Տե՛ս նաև Ս. Վարդանյան, Արևածաղիկը, պատմվածքներ, Երևան, Արևիկ հրատ., 1989 (- 40 էջ), էջ 39: Ս. Վարդանյան, Արևածաղիկը, պատմուածքներ, Արեւմտահայերէնի վերածեց՝ Մաքրուհի Պ. Յակոբեան, Իսթանպուլ, ԱՐԱՍ հրատ., 1994 (- 64 էջ), էջ 39-41: Կրիան, «Ուրախ գնացք», մանկական ամսագիր, Երևան, 2010, № 12, էջ 34, 35: Черепашка // Сказки и рассказы для взрослых и детей, составитель и переводчик Роза Егиазарян, Ереван, изд.

«Цицернак» (240 с.), с. 25, 26. Черепашка, перевела Роза Егиазарян, «**Համշեն**», տասնօրյա թերթ, Սուխում, Աբխազիա, 2013, ապրիլի 10, № 9-10, էջ 6:

17. Այս երկու գրքերը մեկ հրաշալի նախաձեռնության արդյունք են, «**Գանջ**», մանկական շաբաթաթերթ, Երևան, 2003, մարտի 26, № 11 (5964), էջ 5, 6:

Հոդվածն անդրադառնում է «Հրեղեն ձին» (1981) ու «Թագավորի երագները» (2003) բանահյուսական ժողովածուների ստեղծման պատմությանը և կոչ է արվում բոլոր գրառողներին արձագանքելու և տեղեկացնելու իրենց հետագա ճակատագրի մասին: «Թագավորի երագները» գրքից արտատպվել են նաև «**Ամեն մարդու դարդ ...**», «**Կուշտն ինչ գիտի սովածի հալը**», «**Հեռատես մարդը**», «**Աղվեսն ու գելը**» զվարճապատումները:

### Երրորդ բաժին

18. Վարդանյան Սերգեյ Գագիկի // **Հայկական համառոտ հանրագիտարան**, չորս հատորով, հ. 4, Երևան, «Հայկական հանրագիտարան» հրատ., 2003 (- 972 էջ), էջ 621:

Ս. Վարդանյանի հակիրճ կենսագրությունն է, գրքերը և պարզները:

19. Սուսաննա Հարությունյան, Վերադարձավ մանկությունը, որ գնացել էր հրեղեն ձիու ետևից, «**Գրական թերթ**», շաբաթաթերթ, Երևան, 2003, փետրվարի 28, № 5, էջ 11:

Նվիրված է «**Թագավորի երագները**» (2003) բանահյուսական ժողովածուին: Հեղինակի՝ պատանի բանահավաք շարժման մասնակից, արձակագիր Սուսաննա Հարությունյանի գրառումները ևս տպագրվել են «**Հրեղեն ձին**» և «**Թագավորի երագները**» ժողովածուներում: Հոդվածից հատվածներ. «Սերգեյ Վարդանյանի կազմած և հրատարակած «Հրեղեն ձին» բանահյուսական նյութերի ժողովածուն իմ առաջին գիրքն էր: Եվ իմ՝ այն տարիների պատանի լրագրողի ու բանահավաքի համար, մեծ իրադարձություն էր այդ չքնաղ գրքի ստեղծման աշխատանքներին մասնակից լինելը, այնքան մեծ, որ դրանով պարծենում էի ոչ միայն ես, այլև դասընկերներս՝ մյուս դպրոցի երեխաների մոտ, և մայրս՝ ազգուտակի:

...Բացի բանավոր փոխանցվող գոհարները փրկելուց, այս ազգագրական շարժումը նաև արթնացրեց այն տարիների պատանիների ու դպրոցականների ազգային ինքնագիտակցությունը, որոնք ապրելով զարգացած սոցիալիզմի պայմաններում՝ դպրոցում հայ ժողովրդի պատմության դասերն անցնում էին թռուցիկ, ֆակուլտատիվի մակարդակով: Եվ փնթ-

փնթան տատիկները, որոնք մեզ տանջում էին իրենց տնքսոնքոցներով, ջրի ուղարկելով, գառ ու հորթ արածեցնել տալով, հանկարծ վերափոխվեցին ու դարձան կենդանի լեզենդներ...

...Իսկ եթե հաշվի առնենք, որ շարժման մասնակիցների մեջ հազարավոր էին Հայաստանից դուրս ապրող երեխաները, կարող ենք ասել, որ շարժումը նաև ազգապահպան էր»:

20. Սուսաննա Հարությունյան, Թագավորի երազները, «**Երևանյան ժամանց**», կիսամյա հանդես, 2003, դեկտեմբերի 13-26:

Համառոտ ներկայացված է «**Թագավորի երազները**» (2003) բանահյուսական ժողովածուն: Հոդվածագիրը՝ արձակագիր Սուսաննա Հարությունյանը ևս եղել է այն դպրոցականներից, որոնց գրառումներով են ստեղծվել «Հրեղեն ձին» (1981) և «Թագավորի երազները» (2003) բանահյուսական ժողովածուները:

21. Ալվարդ Ղազինյան, Արժեքավոր նվեր, «**Ազգ**», օրաթերթ, Երևան, 2003, հոկտեմբերի 30, № 198, էջ 6:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի վարիչ, բ.գ.թ. Ա. Ղազինյանի (թերթում սխալմամբ տպագրվել է Ղազինյան) գրախոսականը նվիրված է «Թագավորի երազները» (2003) բանահյուսական ժողովածուին: Հոդվածից հատված. «Ժողովածուում տեղ գտած ամեն մի նմուշ, որ ասվում, պատմվում է նոր ասացողի, գրի է առնվում նոր բանահավաքի նոր բնակավայրում, նոր միջավայրում՝ նոր բանահյուսական ստեղծագործություն է, նոր տարբերակ: Դա բանահյուսության տարերքն է, էությունը: Այդ իմաստով մենք գործ ունենք կատարյալ բանահյուսական ժողովածուի հետ:

... Եվ արժանին պետք է հատուցել ժողովածուն կազմող Ս. Վարդանյանին, որը բոլոր նմուշները ներկայացրել է՝ պահպանելով ասացողի լեզուն, հնարավորություն տալով հաջորդ սերնդին հաղորդակից լինելու բարբառների անկրկնելի համ ու հոտին: Նյութը դյուրությամբ հասկանալու համար յուրաքանչյուր նմուշին կցված է բարբառային եւ օտար բառերի բացատրական բառարան: Գիրքն օժտված է արժեքավոր առաջաբանով»:

22. Հրաչօ (Հրաչյա Մաթևոսյան), Պի՛նդ կացեք, պատմվածքներ, խոհագրություններ, երգիծական էջեր, մտորումներ, պատկերներ, գիրքը կազմել ու տպագրության է պատրաստել Արտակ Մաթևոսյանը, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 2003 (- 228 էջ):

Գրքի 191-րդ էջում հիշատակվում են Ս. Վարդանյանը և Հայաստանի մայրաքաղաքներին նվիրված նրա գիրքը:

23. Մարիամ Թումանյան, Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները, տեքստը կազմեց և ծանոթագրեց Արծվի Բախչինյանը, Երևան, ԳԱԹ հրատ., 2003 (-416 էջ):

Իշխանուհի Մարիամ Թումանյանի արխիվից Ս. Վարդանյանի հրապարակումները հիշատակվում են Ա. Բախչինյանի «Գուրգուրացող, ազնիվ մի սիրտ...» վերնագրված առաջաբանում՝ էջ 10 № 8, էջ 18 № 22, 23 և «Ծանոթագրությունների» բաժնում՝ էջ 146 և 398 № 72, էջ 289 և 403 № 109, էջ 310 և 404 № 116:

«Չնայած իշխանուհի Թումանյանի հուշերը մինչև այժմ մնացել են անտիպ, սակայն եղել են հայ բանասիրության, մասնավորապես՝ թումանյանագիտության ուշադրության կենտրոնում: Մասնավորապես բանասեր Սերգեյ Վարդանյանը մամուլում կատարել է առանձին հատվածների հրապարակումներ ինչպես սույն հուշագրքից (22), այնպես էլ Մարիամ Թումանյանի այլ ձեռագիր և տպագիր գործերից (23)»: «22. Տե՛ս Սերգեյ Վարդանյան, Նիկոլայ Երկրորդը Թիֆլիսում. իշխանուհի Մարիամ Թումանյան. «Ես կգբաղվեմ հայկական հարցով» (խոստացավ կայսրը), «**Քաղաքական զրուցակից**», 1990, թ. 11, էջ 22-26: Իշխանուհի Մարիամ Թումանյան. Դիլիջանի որբանոցը, «**Առագաստ**», 1991, թ. 3: Խուզարկութիւն խմբագրատանը, «**Ազատամարտ**», 22.03.1991: Իշխանուհի Մարիամ Թումանյանի հուշերից. Կարա Սուրգա, «**Գեղարվեստ**», 1-15.04.1991: Նվիրական անուններ. իշխանուհի Թումանյան և Լևոն Շանթ, «**Գրքերի աշխարհ**», 24.03.1991»: «23. Տե՛ս Սերգեյ Վարդանյան, Մարիամ Թումանյան. Եկմայյանը տարօրինակ, բայց...», «**Գեղարվեստ**», 15-31.03.1991: Իշխ. Մարիամ Թումանյան, Նամակ Անապայից («Մշակում» 1903-ին հրատարակված նամակի վերատպությունը), «**Լույս Համշենի**», 1.01.1992» (էջ 18):

«72. Սամսոն Հարությունյանը և Մարիամ Թումանյանը խորհրդային իշխանության առաջին իսկ օրերին Դիլիջանում գտնվող իրենց շքեղ ամառանոցները նվիրել են Հայաստանին: Այդ սյունազարդ պատշգամբներով զեղեցիկ շենքերում հյուրընկալվել են Հովհաննես Թումանյանը, Սիրանույշը, Եղիշե Չարենցը, Ֆրիտյոֆ Նանսենը և շատ այլ նշանավոր անձինք, այստեղ է վախճանվել հայ բեմի ականավոր դերասանուհի Ազնիվ Հրաչյան: Ամառանոցներն ունեցել են չորս մասնաշենք, որոնցից երեքը պահպանվել էին մինչև վերջերս: Բանասեր Սերգեյ Վարդանյանը ժամանակին

բարձրացրել է այդ շենքերին նոր կյանք տալու, հայ մտավորականների և արվեստագետների համար ստեղծագործական տներ դարձնելու հարցը (տե՛ս Սերգեյ Վարդանյան, Տունը մարդկանցով է կանգուն, «Գրական քերթ», 20.03.1987): Ցավոք սրտի, նմանատիպ կառույցներով ոչ հարուստ Հայաստանում այդ եզակի շինությունները ոչ միայն անհրաժեշտ ուշադրության չեն արժանացել, այլև 1990-ականների սկզբին անխոհեմաբար քանդվել են» (էջ 398):

«116. Բանասեր Սերգեյ Վարդանյանը 1991-ին որոնել և գտել է Երևանում բնակվող Դերենիկ Դարբինյանին, նրանից մանրամասներ իմացել Մարիամ Թումանյանի հուշերում հիշվող անձնավորությունների մասին: Նրանց մայրը՝ Արշալույս Ավետադայանը (1884-1970) Լենինականում աշխատել է աղջիկների որբանոցի կառավարիչ, հայրը՝ Վարդան Դարբինյանը (1874-1957), աշխատել է որպես դեղագործ, ապա՝ թարգմանիչ: Դերենիկ Դարբինյանը (ծնված 1907-ին) մասնագիտությամբ եղել է անասնաբույժ, աշխատել որպես այգեգործ-գյուղատնտես, փոքր եղբայրը՝ Վազգեն Դարբինյանը (1908-1976), երկար տարիներ ինժեներ է աշխատել Երևանի հացի գործարաններից մեկում (տե՛ս Սերգեյ Վարդանյան, Իշխանուհի Մարիամ Թումանյան. Դիլիջանի որբանոցը, «Առագաստ», 1991, թ. 3)» (էջ 404):

24. Ստեփան Դանիելյան, Կրոնական հանդուրժողականությունը Հայաստանում // «Մարդու իրավունքները Հայաստանում» համաժողովի զեկուցումներ, Երևան, 2003, էջ 50-58:

«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» ՀԿ նախագահ Ս. Դանիելյանն իր զեկուցման «Հայաստանի կրոնական համապատկերը» բաժնում գրում է. «Մեր կողմից տպագրված բուկլետներից մեկում ներկայացրել էինք արդեն լուծարված Կառավարությանը կից Կրոնի Գործերով խորհրդի փոխնախագահ Սերգեյ Վարդանյանի տրամադրած տվյալները: Այսօր նման տեղեկություններ, փաստորեն, ոչ մի տեղից գտնել հնարավոր չէ, գոյություն չունի որևէ կառույց, որը պրոֆեսիոնալ կերպով կարողանա զբաղվել այս խնդրով: Այսօր կրոնական կազմակերպությունների գրանցման հարցերով զբաղվում է ՀՀ վարչապետի աշխատակազմը: Ես կներկայացնեմ պարոն Վարդանյանի պաշտոնական տվյալները՝ լրացումներ կատարելով այդ համայնքների մասին իմ ունեցած տվյալներից» (էջ 51, 52):

25. Rüdiger Benninghaus, Hemsinlilerin Kökeni ve Kimliği (Almancadan çeviren: Manuela Görgü-Ali Turan Görgü), “Folklor/Edebiyat”, dergisi, Ankara, 2003, № 4, cilt 9, sayı 36, s. 173-183.

Գերմանիայում՝ Քյոլնում բնակվող ճանաչված արևելագետ Ռյուդիգեր Բեննինգհաուզն իր «Համշենցիների ծագումը և ինքնությունը» գերմաներենից թուրքերեն թարգմանված հոդվածում, որը տպագրվել է Անկարայում հրատարակվող թուրքերեն «Ֆոլքլոր/Էդեբիյաթ» (թարգմ.՝ Բանահյուսություն/Գրականություն) գիտական եռամսյա հանդեսում, 174, 177, 179, 182, 183-րդ էջերում հղումներ է կատարում Փարիզի «Ցառաջ» օրաթերթում տպագրված Ս. Վարդանյանի «Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ» հոդվածին (1983, փետրվարի 12-13, 15, 16), որն արտատպվել է «Գարուն» ամսագրի 1982 թ. № 11-ից (էջ 60-73):

Ռ. Բեննինգհաուզի հոդվածի գերմաներեն բնագիրը տե՛ս Rüdiger Benninghaus, Zur Herkunft und Identität der Hemsinli // **Ethnic Groups in the Republic of Turkey**, compiled and edited by Peter Alford Andrews with the assistance of Rüdiger Benninghaus, Dr. Ludwig Reichert verlag, Wiesbaden, 1989, pp. 475-497.

2004

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Խմբագրական, «Չայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2004, օգոստոս, № 1, էջ 1:

Խմբագրականն անստորագիր է, հեղինակը թերթի գլխ. խմբագիր Ս. Վարդանյանն է: Այն նորաստեղծ թերթի խնդիրների և նպատակների մասին է:

2. Բարի երթ «Չայն համշենական», «Երկիր», շաբաթաթերթ, Երևան, 2004, օգոստոսի 20-26, № 30, էջ 4:

«Երկիրը» ողջունում է «Չայն համշենական» թերթի անդրանիկ համարի լույս ընծայումը, և հրապարակում է «Չայն համշենականի» առաջին համարում տպագրված խմբագրականը, որի հեղինակը Ս. Վարդանյանն է:

3. Որպես հարգանքի տուրք, «Չայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2004, օգոստոս, № 1, էջ 1, 2:

Կրասնոդարի երկրամասի Լոռ գյուղում 1966 թ. հիմնված «Չայն համշենական» գրական խմբակի, ինչպես նաև Երևանում 1971, 1979, 1989, 1999 թթ. հրատարակված «Չայն համշենական» չորս ժողովածուների մասին է: Այն փոքր փոփոխությամբ տպագրվել է նաև «Չայն համշենական» 5-րդ ժողովածուում (Երևան, 2006) «Կազմողների կողմից» (էջ 7-10) վերնագրով, առանց հեղինակի՝ Ս. Վարդանյանի անվան նշումի:

4. Բանահյուսություն, «Չայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2004, օգոստոս, № 1, էջ 12:

Ս. Վարդանյանի առաջաբանով թերթում արտատպվել են 2003 թ. իր կազմած և հրատարակած «**Թագավորի երագները**» բանահյուսական ժողովածուում ընդգրկված Աբխազիայի դպրոցականների՝ Համշենի բարբառով գրառած բանահյուսության նմուշները:

5. Աբխազական առածանին՝ հայերեն, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2004, սեպտեմբեր, № 2, էջ 12:

Ներկայացվում է ռուսերենից թարգմանված և 2003 թ. Սուխումում հրատարակված «Աբխազական առածանի» հայերեն գրքույկը: Հոդվածի վերջում տպագրվել է նաև 31 նմուշ:

6. Յո՞ւ երթաս, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2004, հոկտեմբեր, № 3, էջ 1:

Վերոնշյալ վերնագրով Ս. Վարդանյանի առաջաբանից հետո տպագրվել է Մարտիրոս Սարյանի «Գրառումներ իմ կյանքից» (Երևան, 1980, էջ 246-248) գրքից մեկ հատված, թե ինչպես է Ս. Սարյանը 1918 թ. կյանքը վտանգելով անցել Լարսի անցակետով:

7. Հարյուրմեկ տարի անց, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2004, հոկտեմբեր, № 3, էջ 5:

1903 թ. «Մշակ» թերթում իշխանուհի Մարիամ Թումանյանի տպագրած «Նամակ Անապայից» թղթակցության մասին է: Նշանավոր հայուհու արձարձած հարցերը 101 տարի անց էլ չեն լուծվել: Արտատպվել է նաև «Մշակում» հրապարակված նամակը: Ս. Վարդանյանի հողվածի անվերնագիր տարբերակը տե՛ս «**Լույս Համշենի**», պարբերաթերթ, Երևան, 1992, հունվարի 1, № 1(3):

8. Մծարա գյուղը 125 տարեկան է, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2004, հոկտեմբեր, № 3, էջ 5:

Չի նշված, հեղինակը Ս. Վարդանյանն է: Հիմնադրման 125-ամյակի առթիվ համառոտ ներկայացվում է գյուղի պատմությունը:

9. 1776 թ.-հանդիպում մահմեդականացած համշենահայերի հետ, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2004, նոյեմբեր-դեկտեմբեր, № 4-5, էջ 8:

Վենետիկի Մխիթարյան միաբան Հ. Պողոս Մեհերյանի (1729-1814) Վենետիկի Մբ Ղազար կղզում պահվող հուշագրության մասին է, որտեղ առաջին անգամ հայերեն գրավոր հիշատակվում են մահմեդական համշենահայերը: Տպագրվել են նաև այդ հատվածը և բնագրի մեկ էջի, նաև Ս. Վարդանյանի լուսանկարները:

10. Страницы истории, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2004, նոյեմբեր-դեկտեմբեր, № 4-5, էջ 11:

Ս. Վարդանյանն անդրադառնում է համշենահայերի պատմությանը, Աբխազիայում ու Կրասնոդարի երկրամասում նրանց վերաբնակեցմանը:

11. Մի անձրևոտ օր Տուբիում, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2004, նոյեմբեր-դեկտեմբեր, № 4-5, էջ 21-23:

Կրասնոդարի երկրամասի Ապշերոնսկի շրջանի Տուբի գյուղ 1981 թ. հեղինակի այցելության մասին է: Ուղեգրությունից հատված. «Եվ այսպես, սեպտեմբերյան մի անձրևոտ օր հանգրվանեցի անդնդախոր լեռների ու անտառների մեջ կորած հեռավոր Տուբի գյուղում. անցած 23 տարիների ընթացքում ի՞նչ եղան ինձ հանդիպած մարդիկ, չգիտեմ, հեքիաթներ ասողներն ու հեքիաթներ լսողները կա՞ն թե չկան, թե՞ Տուբին հիմա իր հեքիաթները պատմում է միայն Փշեխա գետի հորդահոս ջրերին, կա՞ թե չկա բոլորից մոռացված ու դատարկվող գյուղը և ունի՞ կատակելու սիրտ, որպեսզի ճակատագրական «լինել թե չլինել» հարցը յուրովի բարձրաձայնի՝ «Տուբի, օր նոթ Տուբի»: Այս է խնդիրը»: Տպագրվել են մի քանի լուսանկարներ, այդ թվում՝ հեղինակի:

12. Ս. Վարդանյան, Կարևոր սկզբնաղբյուր մահմեդականացված հայերի մասին, «**Պատմա-բանասիրական հանդես**», Երևան, 2004, № 3, էջ 159-170:

Հեղինակը ներկայացնում է Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում իր հայտնաբերած Հայր Պողոս վրդ. Մեհերյանի հուշագրության այն հատվածը, որտեղ պատմվում է կրոնափոխ համշենահայերի Խևակ գյուղում 1776 թ. նրա հանգրվանելու մասին: Հրատարակվել է նաև բնագիրը:

Հոդվածի կրճատ տարբերակը և Պ. Մեհերյանի կենսապատումի հատվածն ու ձեռագրի մեկ էջի լուսանկարը տե՛ս Ս. Վարդանյան, «1776 թ.-հանդիպում մահմեդականացված համշենահայերի հետ», «**Ձայն համշենական**», ամսաթերթ, 2004, № 4-5, էջ 8:

ՊԲՀ-ում տպագրված հոդվածը և հուշագրության համապատասխան հատվածը, ավելացված բնագրի գրական արևելահայերեն թարգմանությունը տե՛ս Ս. Վարդանյան, «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ)», Երևանի պետհամալսարան, Երևան, ԵՊՀ հրատ., 2009 (- 428 էջ), էջ 406-426:

Ռուսերեն կրճատված թարգմանությունը տե՛ս «Одно важное свидетельство 1776 года об Амшенских армянах-мусульманах», «**Չայն համշենական**», 2007, № 3-4, նաև Չրասնոդարի «**Еркрамас**» թերթում, «Свидетельство 1776 г. об исламизированных армянах Амшена», 2005, № 10:

Անգլերենը՝ Sergey Vardanyan, An Important Source of Information about Islamized Armenians, «**Armenian Folia Anglistika**», International Journal of English studies, Yerevan, 2009, № 1-2 (6), pp. 251-261: Տպագրվել է Հ. Պողոս վրդ. Մեհերյանի (1729-1814) հուշագրության կրոնավորիս համշենահայերի մասին առաջին հիշատակության հատվածը:

13. W. Cole Durham, Jr., Natalie J. Peterson, and Elizabeth A. Sewell, A Comparative Analysis of Religious Association Laws in Post-Communist Europe // **Laws on Religion and the State in Post-Communist Europe, Law and Religion Studies 2**, Uitgeverij Peeters, Leuven (Belgium), 2004 (- XLIV+333 p. = 374 p.), p. VII-XLIII.

Հեղինակները քննարկում են Արևելյան Եվրոպայի պետությունների հետկոմունիստական հասարակարգերում խղճի ազատության մասին օրենսդրությունները: Հայաստանին վերաբերող մասերը՝ էջ VII, VIII, X, XVI, XIX, XX, XXI, XXIV, XXV, XXVIII, XXXI գրվել են Ս. Վարդանյանի աջակցությամբ, ինչի մասին կա նշում (էջ VII): Բեյզիայի նշանավոր համալսարանական քաղաք Լյովենի (Leuven) “Peeters” հրատարակչությունում լույս ընծայված գրքում անգլերեն թարգմանությամբ տպագրվել են Արևելյան Եվրոպայի 17 պետությունների խղճի ազատության մասին օրենքները, այդ թվում՝ Հայաստանի «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենքը» (էջ 33-41):

14. Հաշվի առնենք յուրահատկությունները, «**Չայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2004, սեպտեմբեր, № 2, էջ 3:

Ռոստովի մարզի հայկական Չալտր գյուղի դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Հրանտ Քաղկիչյանի և Չալտրի հայկական եկեղեցու քահանա Տեր Թադևոս Հայբարյանի հետ քննարկվում են Դոնի Ռոստովի մարզի, Կրասնոդարի երկրամասի և Աբխազիայի հայ դպրոցականների համար հայերեն յուրահատուկ դասագրքերի տպագրության անհրաժեշտության հարցերը, որոնցում կլինեն նաև սփյուռքում աշակերտների ապրած հայկական բնակավայրերի պատմությունները:

### Երկրորդ բաժին (հարցազրույցներ)

15. Համշենահայերը միավորվում են, հարցազրույց «Համշեն» հայրենակցական միության փոխնախագահ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Սերգեյ Վարդանյանի հետ, հարցազրույցը՝ Սաթիկ Միսակյանի, «Երկիր», շաբաթաթերթ, Երևան, 2004, մայիսի 14-20, № 18, էջ 6:

Նույնը՝ «Ասպարեզ», օրաթերթ, Գլենդել, 2004, օգոստոսի 4, թիվ 12273, էջ 6:

16. Համշենահայերը միաւորում են, հարցազրույց Ս. Վարդանյանի հետ, Սաթիկ Միսակյան, «Ասպարեզ», օրաթերթ, Գլենդել, 2004, օգոստոսի 4, թիվ 12273, էջ 6:

Նույնը տե՛ս «Երկիր», շաբաթաթերթ, Երևան, մայիսի 14-20, № 18, էջ 6:

17. Համահայկական կրթական խորհրդաժողով Ծաղկաձորում, զրույցը վարեց Ս. Վարդանյանը, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2004, սեպտեմբեր, № 2, էջ 1:

Հարցազրույցը ՀՀ ԿԳՆ սփյուռքի հետ կապերի բաժնի պետ Հրաչ Թադևոսյանի հետ է:

18. Մեծ Սոչիի հայկական դպրոցները, զրույցը վարեց Ս. Վարդանյանը, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2004, սեպտեմբեր, № 2, էջ 2:

Հարցազրույցը Մեծ Սոչիի հայոց լեզվի և գրականության ուսուցիչների ասոցիացիայի նախագահ, Լազարևսկի շրջանի Սերգեյ-Պոլե գյուղի № 85 դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ռսկի Սունգուրտյանի հետ է:

19. Կրասնոդարի «Նարեկ» կրթամշակութային կենտրոնը, զրույցը վարեց Ս. Վարդանյանը, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2004, սեպտեմբեր, № 2, էջ 3:

Հարցազրույցը Կրասնոդար քաղաքի «Նարեկ» կրթամշակութային կենտրոնի տնօրեն Ամալյա Մոսինյանի հետ է:

20. 225 лет на Донской земле, Беседу вёл Сергей Варданян, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2004, սեպտեմբեր, № 2, էջ 5:

Հարցազրույցը Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանի կրթության բաժնի վարիչ Եկատերինա Դոմչենկովայի հետ է:

21. Պաշտպանեցինք մեր երկրորդ հայրենիքը, զրույցը վարեց Ս. Վարդանյանը, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2004, հոկտեմբեր, № 3, էջ 1:

Հարցազրույցը Արխագիայի հերոս, խորհրդարանի պատգամավոր, Արխագիայի թոշակային ֆոնդի վարչության նախագահ, «Արխագիայի Հանրապետության հայկական համայնք» ՀԿ համանախագահ Գալուստ Տրապիզոնյանի հետ է:

### Երրորդ բաժին

22. «Ակունքի» շնորհավորանքները. «Չայն համշենական», «Ակունք», ամսաթերթ, Ախալքալաք, 2004, № 6-7 (35-36), էջ 8:

Շնորհավորում են Երևանի «Համշեն» հայրենակցական-բարեգործական միության թերթի առաջին համարի տպագրության, նաև միության ղեկավարության ընտրությունների առթիվ:

23. Ստեփան Շահինյան, Արժեքավոր պարբերական, «Գրական թերթ», շաբաթաթերթ, Երևան, 2004, դեկտեմբերի 3, № 39, էջ 8:

«Չայն համշենական» թերթի մասին է:

24. Գևորգ Յազրճյան, Նոր հրատարակություններ, «Շրջադարձ», ամսագիր, Երևան, 2004, № 1, ապրիլ, էջ 28:

Պ.գ.թ. Գ. Յազրճյանը այլ հրատարակությունների հետ համառոտ ներկայացնում է նաև «Թագավորի երազները» (2003) գիրքը:

25. Ծանոթ և անծանոթ համշենահայեր, հարցազրույցը՝ Հրայր Կարապետյանի, «Երկիր», շաբաթաթերթ, Երևան, 2004, հոկտեմբերի 1, № 36, էջ 6:

Հարցազրույցը Բ.Գ.Թ. Հայկազուն Ալվրցյանի հետ է: Նա խոսում է համշենցիների անցյալի ու ներկայի մասին, նշում. «Սակայն խորհրդային տարիներին իսլամացած համշենահայերի խնդիրը կարծես արգելքի տակ էր դրվել: Մեզանում այս հարցով առաջինը լրջորեն հետաքրքրվել է հայագետ Ս. Վարդանյանը, որը 1984 և 87 թթ. եղավ Միջին Ասիայում, ծանոթացավ հեմշիլներին և իր ուսումնասիրությունների արդյունքները հրապարակեց մամուլում»:

26. Հայկազուն Ալվրցյան, Հեմշիլներ. ինքնության որոնում, «Չայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2004, նոյեմբեր-դեկտեմբեր, № 4-5, էջ 6, 7:

Միջին Ասիայից Կրասնոդարի երկրամասի Ապշերոնսկի շրջան տեղափոխված մահմեդական համշենցիների մասին է, մասնավորապես նշվում է. «Տարիներ առաջ՝ 1984 թ., ապա 1987-ին, հայագետ Սերգեյ Վարդանյանը ոչ միայն մեզանում առաջինը ուշադրություն դարձնելով հեմշիլների խնդրին այցելեց Միջին Ասիա և Կրասնոդարի երկրամաս, այլև դիմեց գրող Սերո Խանգադյանին՝ մեր միջինասիացի հայրենակիցների Հայաստան»:

տան տեղափոխվելու խնդրանքը իշխանություններին ներկայացնելուն աջակցելու համար: Կոմունիստական վարչակարգը մերժեց այս խնդրանքը, թիկունք դարձրեց նրանց» (էջ 7):

Նույն հոդվածը, որոշ խմբագրական տարբերություններով տե՛ս նաև՝ Հայկազուն Ալվրեցյան, Ինքնության որոնում, «**Երկիր**», շաբաթաթերթ, Երևան, 2004, հոկտեմբերի 8, № 37, էջ 5:

27. Արխագահայ համայնք. երեկ, այսօր, և ..., հարցազրույց Արխագիայի կրթության նախարարության հայկական դպրոցների տեսուչ, «**Համշեն**» ամսաթերթի խմբագիր Արտավազդ Սարեցյանի հետ, զրույցը՝ Հմայակ Պետրոսյանի և Արամայիս Ապանյանի, «**Կանչ**», մանկապատանեկան պարբերաթերթ, Երևան, 2004, սեպտեմբերի 15, № 12:

Հիշատակվում են նաև Ս. Վարդանյանը և «**Ձայն համշենական**» ամսաթերթը:

2005

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Свидетельство 1776 г. об исламизированных армянах Амшена, «**Еркрамас**», еженесячная газета, г. Краснодар, 2005, октябрь, № 10 (128), с. 3.

2005 թ. հոկտեմբերի 13-15-ին Սոչիում (Ադլեր) անցկացված «Համշենը և համշենահայերը» միջազգային գիտաժողովում կարդացված զեկուցումն է:

Տե՛ս նաև Одно важное свидетельство 1776 года об Амшенских армянах-мусульманах, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2007, մարտ-ապրիլ, № 3-4:

2. Երկու երգ, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2005, հունվար-փետրվար, № 1-2, էջ 7:

Ս. Վարդանյանը պատմում է 1981 թ. Սոչիի Ջուրովա Շչել գյուղ այցելության մասին: Տպագրվել է նաև Համշենի բարբառով Ս. Վարդանյանի գրառած երկու երգ՝ «Գագոնկի երկը» և «Չոբնին երկը», նաև բառարան:

3. Հանդիպում Ազգային ժողովում, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2005, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 2:

Չի նշված, հեղինակը Ս. Վարդանյանն է: Տեղեկատվությունը պատմում է 2005 թ. մարտի 11-ին ԱԺ նախագահին առընթեր հայրենակցական միությունների խորհրդի նիստի մասին, որին մասնակցել են նաև «Համշեն» ՀԲՀԿ նախագահ Ի. Կրբաշյանը և փոխնախագահ Ս. Վարդանյանը: Քննարկվել են մի շարք կարևոր հարցեր:

4. Անհատի ճակատագիրը ժողովրդի ճակատագիրն է, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2005, մայիս-հունիս, № 5-6, էջ 1-4:

Հոդվածը պատմում է Երկրորդ համաշխարհային պատերազմին Կրասնոդարի երկրամասի և Աբխազիայի հայության հերոսական մասնակցության մասին:

5. Հովհաննես Պողոս Երկրորդ. «Ես ամեն օր աղոթում եմ հայ ժողովրդի համար», **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2005, մայիս-հունիս, № 5-6, էջ 6:

Հռոմի պապի վախճանման առթիվ Ս. Վարդանյանը ներկայացնում է նրա հայանպաստ գործունեությունն ու պատմում է նրա հետ 1992 թ. մայիսի 27-ին Վատիկանում հանդիպման մասին: Տպագրվել են նաև հանդիպման լուսանկարները:

6. Из истории исламизации амшенских армян, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2005, հունիս-օգոստոս, № 7-8, էջ 4:

Համշենցի նշանավոր ազգագրագետ և բանահավաք Սարգիս Հայկունու հրապարակումների հիման վրա հոդվածում ներկայացվում է համշենցիների մի մասի բռնի մահմեդականացման պատմությունը: Ս. Վարդանյանն անդրադառնում է նաև Սև գետի նշանավոր Տեր Կարապետի սերունդներից Սարգար Ղուկասյանի հետ 1984 թ. Մայկոպի մոտակա Պրոլետարսկի գյուղում իր հանդիպմանը, որի լուսանկարը ևս գետեղվել է: Տպագրվել են նաև Ս. Հայկունու «Կորած ու մոռացուած հայեր (Տրապիզոնի հայ-մահմեդական գիղերն ու նրանց ասանդությունները)», (**«Արարատ»**, ամսագիր, Վաղարշապատ, 1895, № 7-8), հոդվածի որոշ հատվածների ռուսերեն թարգմանությունները:

Արտատպությունը՝ **«Հիսիսափայլ»**, պարբերաթերթ, Երևան, 2005, սեպտեմբեր, № 2(2): Ս. Հայկունու հոդվածի ռուսերեն թարգմանությունը չի արտատպվել:

7. Из истории исламизации амшенских армян, **«Հիսիսափայլ»**, պարբերաթերթ, Երևան, 2005, սեպտեմբեր, № 2 (2), էջ 6:

Արտատպություն է, նույնը, նաև Ս. Հայկունու հոդվածի ռուսերեն թարգմանությունը տե՛ս **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2005 թ. հունիս-օգոստոս, № 7-8, էջ 4, 5:

8. Առաջաբան, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2005, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 6:

Եղեռնը վերապրող Աղասի Քյոսեյանի (1905-1975) հիշողությունների ձեռագիր տետրերից Ս. Վարդանյանն իր առաջաբանով հրատարակության է պատրաստել «Ապրիր որպես հայ» վերնագրված հուշապատումը, նաև ներկայացրել է հեղինակի համառոտ կենսագրությունը:

Տե՛ս նաև «**Լույս Համշենի**», պարբերաթերթ, Երևան, 1992, ապրիլ-մայիս, № 5-6, էջ 4, 5: Նույնը տե՛ս նաև «**Ցառաջ**», օրաթերթ, Փարիզ, 2005, մայիս 25 և մայիս 26:

Ս. Վարդանյանի նախաձեռնությամբ Ա. Քյոսեյանի Եղեռնի հուշը թարգմանվել է նաև թուրքերեն (թարգմանիչ՝ Հովսեփ Թոքաթ), տե՛ս Birak Ermeni Olarak Yaşasın, Hazırlayan: Osep Tokat, “**Paros**”, Çok Kültürlü Yaşam Dergisi, İstanbul, 2011, Kasım, № 2, s. 85-87.

9. [Առաջաբան], «**Չայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2005, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 6:

Ս. Վարդանյանի առաջաբանով տպագրվել է Տրապիզոնի նահանգի Սամսոնի գավառի Թերմեի գավառակում 1905 թ. ծնված Աղասի Քյոսեյանի ձեռագիր հուշատետրից մեկ հատված «Գայլը» վերնագրով: Ս. Վարդանյանի նախաձեռնությամբ այն թարգմանվել է նաև թուրքերեն (թարգմանիչ՝ Հովսեփ Թոքաթ), տե՛ս Kurt, çeviren: Osep Tokat, “**Paros**”, Çok Kültürlü Yaşam Dergisi, İstanbul, 2011, Aralık, № 3, s. 86-88.

10. «Համշենը և համշենահայերը» թեմայով միջազգային գիտաժողով, «**Չայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2005, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 1, 2:

2005 թ. հոկտեմբերի 13-15-ին Կրասնոդարի երկրամասի Ադլեր քաղաքում կայացած միջազգային գիտաժողովի մասին է:

11. Վերականգնենք ավանդույթը, «**Չայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2005, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 8:

Անստորագիր է, հեղինակը Ս. Վարդանյանն է:

«Համշեն» հայրենակցական-բարեգործական ՀԿ նախաձեռնությամբ Երևանի ռեստորաններից մեկում Ամանորի և Սուրբ Ծննդի առթիվ հայաստանաբնակ համշենահայերի հավաքի մասին է:

### Երկրորդ բաժին (հարցազրույցներ)

12. Голос амшенцев, вёл интервью Роланд Джоджуа (Сухуми), ред. газет «Абхазия молодая» и «Абхазский университет», «**Голос Армении**», газета, издаётся трижды в неделю, Ереван, 2005, 29 марта, № 31.

Ս. Վարդանյանի անցած ուղու, հրապարակած գրքերի և համշենահայերի ուսումնասիրության մասին է:

13. Կարինե Ասատրյան, Ռուսաստան գաղթած հայր գերադասում է ռուսերեն սովորել, «Այբ-Տե», շաբաթաթերթ, Երևան, 2005, մարտի 25-31, №10, էջ 7: Լրագրող Կ. Ասատրյանը ռուսականացման հարցերի շուրջ զրուցում է «Ձայն համշենական» թերթի գլխ. խմբագիր Ս. Վարդանյանի հետ:

14. Դժվարին պայմաններում, զրույցը վարեց Սերգեյ Վարդանյանը, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2005, հունվար-փետրվար, № 1-2, էջ 1:

Հարցազրույցը Աբխազիայի կրթության նախարարության առաջատար մասնագետ, «Համշեն» թերթի խմբագիր, բանաստեղծ Արտավազդ Սարեցյանի հետ է:

15. Наш гость Тигран Тавадьян, вёл беседу Сергей Варданян, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2005, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 3:

Հարցազրույցը Կրասնոդար քաղաքում հրատարակվող «Еркрамас» թերթի գլխ. խմբագիր Տիգրան Թավադյանի հետ է:

### Երրորդ բաժին

16. Գևորգ Յազըճյան, Համշենահայոց ձայնը Երեւանից, «Ազգ», օրաթերթ, Երևան, 2005, յունուար 21, № 9, էջ 6:

«Ձայն համշենական» թերթի և խմբագրի մասին է: Հոդվածից հատված. «**Ձայն համշենական**» ունի խայտաբղետ բովանդակություն, այդ առումով թերթի նյութերի համահավաքը կարելի է նմանեցնել բազմատեսակ ծաղիկներից կազմված փնջի, որն ունի թե՛ յուրահատուկ բույր եւ թե՛ արտաքին ու ներքին ներդաշնակություն:

... «Ձայն համշենականի» առ այսօր լույս տեսած երեք համարները մեզ իրավունք են տալիս թերթն անվանել հանրագիտարան Համշենի հայերի մասին, ու բարեմաղթել, որ նա անխափան շարունակի իր նվիրական առաքելությունը»:

17. Գոհար Գևորգյան, Նոր խոսք հայահավաք մամուլում, «Ազգ», օրաթերթ, Երևան, 2005, փետրուարի 10, № 23, էջ 6:

«Ձայն համշենական» թերթի և խմբագրի մասին է:

18. Հարուստն ու հովիվը // Վաչագան Ա. Սարգսյան, Հայերենի դասագիրք 1, «9-րդ հրաշալիք» հրատ., Երևան, 2005 (- 136 էջ), էջ 94-95:

«Հրեղեն ձին» (1981) բանահյուսական ժողովածուից գրական արևելահայերենի է վերածվել «Հարուստն ու չոբանը» հեքիաթը (էջ 66-67):

19. [Արփիկ Միսաքեան], Համշենցիներուն թերթը եւ «որպէս հայ» ապրողը, «Յառաջ», օրաթերթ, Փարիզ, 2005, մայիս 25 (№ 21.207), էջ 2:

«Յառաջի» խմբագիրն անդրադառնում է «Չայն համշենական» թերթի 2005 № 1-2 և 3-4 միացյալ համարներին: «Յառաջի» այդ մայիսի 25-ի և հաջորդ մայիսի 26-ի համարում՝ տե՛ս Աղասի Քեօսեան, Ապրիլ որպէս հայ (Բ. եւ Վերջին Մաս), «Յառաջ», օրաթերթ, Փարիզ, 2005, մայիս 26 (№ 21.208), էջ 2:

«Չայն համշենական» թերթի 2005 թ. № 3-4-ից արտատպվել է Աղասի Քյոսեյանի Եղեռնի տարիների հուշը՝ «Ապրիլ որպէս հայ», որը հրատարակության է պատրաստել Ս. Վարդանյանը:

20. Հ[ամօ] Մոսկոֆեան, «Չայն համշենական» կամ համշենահայերու զարթօնքը Մայր Հայրենիքի, Կովկասի, Թուրքիոյ, Ռուսիոյ, Գերմանիոյ եւ այլ երկիրներու մէջ, «Արարատ», շաբաթաթերթ, Պէյրութ, 2005, Յունուար 14-20, թիւ 3 (17362), էջ 5:

Տարասփյուռ համշենահայերի, «Չայն համշենական» թերթի, նրա խմբագիր, «հանրածանոթ գիտնական, Հայաստանի կրօնի նախկին փոխ նախարար» Ս. Վարդանյանի մասին է. «...ամսաթերթի էջերուն մէջ տեղատրուած է հսկայական աշխարհ մը, յաճախ անծանօթ նոյնինքն սփիւռքահայերու: Յուշեր, պատմական փաստարկներ, ապրումներ, արանդոյթներ ու սովորոյթներ, նոյնիսկ բանահիւսութիւն ու բանաստեղծութիւն, թղթակցութիւններ Հայաստանէն, Աբխազիայէն, Սոչիէն, Իզպետիստանի ստալինեան բռնատիրութեան օրերուն աքսորուած «Հեմշիլ»-ներէն, մինչեւ Գերմանիա եւ Ա.Մ.Ն. 1776 թուական եւ Զօրավար Անդրանիկ, որուն հետ պայքարած են նաեւ համշենցի ռազմիկներ...: Այս բոլորը, հայերէն ու ռուսերէն, հիանալիօրէն պատրաստուած եւ կազմուած, որ պատիւ կը բերէ հայ լրագրութեան ու լրատուութեան: Մէկ խօսքով, հայութեան անտեսուած մէկ հսկայ հատուածը զարթօնքի մէջ է արդէն, կը մնայ աշխարհացրի իր որդիներուն միատրում եւ վերադարձ դէպի հայութիւն, դէպի Մայր Հայրենիք»:

21. ՀՅԴ մամլոյ դիվան, Կայացավ «Համշենը եւ համշենահայերը» թեմա-յով միջազգային գիտաժողովը, «Երկիր», շաբաթաթերթ, Երևան, 2005, հոկտեմբերի 21, № 39, էջ 2:

Հանգամանալից ներկայացված է հոկտեմբերի 13-15 Ադլերում կայացած գիտաժողովի ընթացքը, թվարկված են զեկուցումները, այդ թվում՝ Ս. Վարդանյանի: Նշված է, որ նա գիտաժողովի բացմանը Հայաստանի «Համշեն» հայրենակցական միության անունից ողջույնի խոսք է ասել:

22. Պատմութիւն վարուց Հայր Պօղոս վարդապետի Մէհերեան. շարագրեալ յիւրմէ, 1811, Վենետիկ, ի վանս սրբոյն Ղազարու, հրատարակութեան պատրաստեց Գեորգ Տէր-Վարդանեան, «**Բազմավէպ**», հանդես, 2005, № 1-4, էջ 412- 489:

Հ. Պողոս վրդ. Մեհերյանի շատ արժեքավոր հուշագրությունից մեկ հատված, որը վերաբերում է Համշենին, 2004 թ. «**Պատմաբանասիրական հանդեսի**» № 3-ում հրատարակել է Ս. Վարդանյանը: Այնուհետև, խնդրել է Երևանի Մատենադարանի գլխ. ավանդապահ Գևորգ Տեր-Վարդանյանին, որը ձեռագրեր կարդալու համար հաճախ էր լինում Վենետիկում, հնարավորության դեպքում պատճենահանի և հրատարակության պատրաստի: Հուշագրությունը տպագրվել է «Բազմավէպի» 2005-2007 թթ. համարներում: Հրատարակության սկզբում՝ «Նախաբանում», Գ. Տեր-Վարդանյանը նշել է. «Շնորհակալութեամբ արձանագրում ենք, որ այս աշխատութեան վրայ մեր ուշադրութիւնը հրաւիրել է **Սերգէյ Վարդանեանը**» (էջ 413):

23. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, անավարտ վեպ, գլուխ երկրորդ, «Միանգամայն ուրիշ ջրեր», գլուխ երրորդ, «Բանաստեղծների ժամանակը», «**Առավոտ**», օրաթերթ, Երևան, 2005, փետրվարի 19, № 30, էջ 8, 9:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է: Տե՛ս նաև՝ Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, անավարտ վեպ, Անցյալ ժամանակ, գիրք առաջին, Երևան, «Վան Արյան» հրատ., 2005 (- 400 էջ), էջ 34-43:

24. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, վեպ, գլուխ տասներկուերորդ, «Զգուշացիր ավտոմեքենայից», «**Առավոտ**», օրաթերթ, Երևան, 2005, ապրիլի 23, № 74, էջ 8, 9:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է: Վեպից հատված. «Ինչ վերաբերում է աղջիկ ու կին ընթերցողներին, ապա, պետք է ասեմ, որ երկուսից էլ ունեմ, ու դրանում վերջերս վերջնականապես համոզվեցի իմ համակուրսեցի Վարդանյան Սերգեյից մի իրական պատմություն լսելուց հետո միայն, եւ իմ ընկեր Սերգեյի տեսածն ու պատմածը հետեւյալն էր: Ինքը վերջերս մտել է «Նորք» գրատուն, եւ, իր ասելով, մի քիչ հետո էլ նույն գրախանութ է մտել մի չքնադագույն



Ես Սերգեյին հիշեցի Նատի Քեմփբլի էդ, ուրեմն, հնարավոր մրցակցուհու առումով, բայց հիմա նաեւ հիշեցի, որ Սերգեյն ընկերներիցս միակն էր, ում ես բանակից նամակներ էի գրում... »:

Տե՛ս նաև՝ Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, անավարտ վեպ, Անցյալ ժամանակ, գիրք առաջին, Երևան, «Վան Արյան» հրատ., 2005 (- 400 էջ), էջ 149-151:

25. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, վեպ, գլուխ երեսուներկուերորդ, «Բարի վերադարձ», «Առավոտ», օրաթերթ, Երևան, 2005, սեպտեմբերի 10, № 172, էջ 8, 9: Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է:

Տե՛ս նաև՝ Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, անավարտ վեպ, Անցյալ ժամանակ, գիրք առաջին, Երևան, «Վան Արյան» հրատ., 2005 (- 400 էջ), էջ 386:

26. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, վեպ, գլուխ երեսուներեքերորդ, «Երևանի ժամանակով», «Առավոտ», օրաթերթ, Երևան, 2005, սեպտեմբերի 17, № 177, էջ 8, 9:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է:

Տե՛ս նաև՝ Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, անավարտ վեպ, Անցյալ ժամանակ, գիրք առաջին, Երևան, «Վան Արյան» հրատ., 2005 (- 400 էջ), էջ 397:

27. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, անավարտ վեպ, Անցյալ ժամանակ, գիրք առաջին, Երևան, «Վան Արյան» հրատ., 2005 (- 400 էջ):

Ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է, նրա մասին տես՝ գլուխ երկրորդ, «Միանգամայն ուրիշ ջրեր», էջ 34-37, գլուխ երրորդ, «Բանաստեղծների ժամանակը», էջ 38-43, գլուխ տասներկուերորդ, «Զգուշացիր ավտոմեքենայից», էջ 149-153, գլուխ երեսուներկուերորդ, «Բարի վերադարձ», էջ 386, գլուխ երեսուներեքերորդ, «Երևանի ժամանակով», էջ 397: Նույնը՝ «Առավոտ», օրաթերթ, Երևան, 2005, փետրվարի 19 (№ 30), էջ 8, 9, ապրիլի 23 (№ 74), էջ 8, 9, սեպտեմբերի 10 (№ 172), էջ 8, 9, սեպտեմբերի 17 (№ 177), էջ 8, 9:

28. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, գիրք երկրորդ, գլուխ վեցերորդ, «Գրողական հանդիպումներ», «Առավոտ», օրաթերթ, Երևան, 2005, հոկտեմբերի 29, № 206, էջ 8, 9:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է:

Տե՛ս նաև՝ Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, անավարտ վեպ, Միջանկյալ ժամանակ, գիրք երկրորդ, Երևան, «Վան Արյան» հրատ., 2006 (- 416 էջ), էջ 68, 75, 76:

29. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, գիրք երկրորդ, գլուխ յոթերորդ, «Մեփականաշնորհված տարածքներ», «Առավոտ», օրաթերթ, Երևան, 2005, նոյեմբերի 5, № 211, էջ 8, 9:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է:

Տե՛ս նաև՝ Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, անավարտ վեպ, Միջանկյալ ժամանակ, գիրք երկրորդ, Երևան, «Վան Արյան» հրատ., 2006 (- 416 էջ), էջ 83, 84, 86, 87:

30. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, գիրք երկրորդ, գլուխ ութերորդ, «Ընկերական հանդիպումներ», «Առավոտ», օրաթերթ, Երևան, 2005, նոյեմբերի 12, № 216, էջ 8, 9:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է:

Տե՛ս նաև՝ Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, անավարտ վեպ, Միջանկյալ ժամանակ, գիրք երկրորդ, Երևան, «Վան Արյան» հրատ., 2006 (- 416 էջ), էջ 88-92, 97-99:

31. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, գիրք երկրորդ, գլուխ իններորդ, «Գարեջուր և տեսարաններ», «Առավոտ», օրաթերթ, Երևան, 2005, նոյեմբերի 19, № 221, էջ 8, 9:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է:

Տե՛ս նաև՝ Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, անավարտ վեպ, Միջանկյալ ժամանակ, գիրք երկրորդ, Երևան, «Վան Արյան» հրատ., 2006 (- 416 էջ), էջ 100-111:

32. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, գիրք երկրորդ, գլուխ տասներորդ, «Փոքր թենիս», «Առավոտ», օրաթերթ, Երևան, 2005, նոյեմբերի 26, № 226, էջ 8, 9:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է:

Տե՛ս նաև՝ Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, անավարտ վեպ, Միջանկյալ ժամանակ, գիրք երկրորդ, Երևան, «Վան Արյան» հրատ., 2006 (- 416 էջ), էջ 112-115, 119-122, 124:

33. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, գիրք երկրորդ, գլուխ տասնամեկերորդ, «Չեղած տեղից պրոբլեմներ», «Առավոտ», օրաթերթ, Երևան, 2005, դեկտեմբերի 3, № 232, էջ 8, 9:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է:

Տե՛ս նաև՝ Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, անավարտ վեպ, Միջանկյալ ժամանակ, գիրք երկրորդ, Երևան, «Վան Արյան» հրատ., 2006 (- 416 էջ), էջ 125-137:

34. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, գիրք երկրորդ, գլուխ տասներկուերորդ, «Պատմություն փուչ պոպոքների մասին», «Առավոտ», օրաթերթ, Երևան, 2005, դեկտեմբերի 10, № 236, էջ 8, 9:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է:

Տե՛ս նաև՝ Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, անավարտ վեպ, Միջանկյալ ժամանակ, գիրք երկրորդ, Երևան, «Վան Արյան» հրատ., 2006 (- 416 էջ), էջ 138-149:

35. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, գիրք երկրորդ, գլուխ տասներեքերորդ, «Հաջողություն, պարոն Գրեցկի», «Առավոտ», օրաթերթ, Երևան, 2005, դեկտեմբերի 17, № 241, էջ 8, 9:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է:

Տե՛ս նաև՝ Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, անավարտ վեպ, Միջանկյալ ժամանակ, գիրք երկրորդ, Երևան, «Վան Արյան» հրատ., 2006 (- 416 էջ), էջ 151-159:

36. Özhan Öztürk, Karadeniz, Ansiklopedik Sözlük, Cilt 1, Istanbul, Heyamola yayımları, 2005 (- 630 s.).

Օզհան Օզթյուրքի «Սև ծով. հանրագիտարանային բառարանի» առաջին հատորում Համշենի բարբառին նվիրված “Hemşetsi, Homşetsi, Homşetma” (Խեմշոցի, Խոմշեցի, Խոմշեթմա) հոդվածի գրականության ցանկում (էջ 508) նշված է նաև Ս. Վարդանյանի հրապարակումը (Համշենի մուսուլման հայերը, «Իրան-Նամե», 1993, № 4, էջ 12-13):

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Կազմողների կողմից // **Ձայն համշենական**, ժողովածու, գիրք հինգերորդ, կազմեցին և խմբագրեցին Սերգեյ Գալստյանը և Սերգեյ Վարդանյանը, Երևան, «Տոներ» հրատ., 2006 (-240 էջ):

Գրքի «**Կազմողների կողմից**» առաջաբանի (էջ 7-10), հեղինակը Ս. Վարդանյանն է (չի նշված), ներկայացվում է նախորդ չորս հատորների բովանդակությունը:

Հոդվածի տարբերակը տե՛ս Ս. Վարդանյան, Որպես հարգանքի տուրք, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2004, օգոստոս, № 1, էջ 1, 2:

2. Сергей Варданян. «Приветствую издание «ГА» на армянском», «**Голос Армении**», газета, издаётся трижды в неделю, Ереван, 2006, 26 декабря, № 139.

«**Голос Армении**» թերթի «**Գոլոս Արմենիի**» հայերեն տարբերակի հրատարակության առթիվ գնահատանքի և շնորհավորանքի խոսք է:

3. Դպրոցի ճամփան... «**Էկոնոմիկա**», եռամսյա հանդես, Երևան, 2006, սեպտեմբեր, № 2, էջ 49-53:

Ռուսական կայսրությունում և ԽՍՀՄ-ի առաջին տասնամյակներին Ներքին սփյուռքում հայկական դպրոցների խնդիրների մասին է: Հոդվածի հեղինակին ներկայացնում է հանդեսի խմբագիրը՝ Լուսյա Մեհրաբյանը. «Լրագրողական բեղուն գործունեությանը զուգահեռ՝ Սերգեյ Վարդանյանի հետաքրքրությունների շրջանակն այնքան մեծ է, որ, ինչպես ինքն է խոստովանում՝ մի կյանքը քիչ է ամենն իրականացնելու համար: Արմատներով վանեցի է, մեծ հետաքրքրությամբ ու ինքնամոռաց ջանասիրությամբ զբաղվել է Կրասնոդարի երկրամասի ու Աբխազիայի. ինչպես նաև մահմեդական համշենահայերի խնդրով, եղել է Կիրգիզիայում, Ուզբեկստանում, Ղազախստանում, Պամիրի լեռներում ու հայտնաբերել նրանց՝ սեփական պատկանելությունը մոռացած մահմեդական համշենահայերին, բանահավաքությամբ փրկել ու հրատարակել է մշակութային մասունքներ, ցանկացել կառավարական մակարդակով լուծելի դարձնել վերագտնված մեր հայրենակիցների՝ հայրենիքում բնակություն հաստատելը:

... Սերգեյ Վարդանյանը բազմազգիտակ և բեղուն մտավորական է, կարծես թե ամեն ինչ գիտի հայ ժողովրդի մասին: 14 տարի է նա Հայաստանի «Համշեն» հայրենակցական-բարեգործական հասարակական կազմակերպության փոխնախագահն է, երկու տարի է հրատարակում է «Ձայն համշենական» բացառիկ թերթը, որի գլխավոր խմբագիրն է, մեկտեղում է հայության մասին զարմանալի հետաքրքիր տեղեկատվություն, որով, կարծես

թե, տեսանելի է դարձնում աշխարհի հեռավոր անկյուններում բնավորված ու իրենց իսկական դեմքը գտնելու կարոտ աշխատավոր ու ստեղծագործ սովորական հայ մարդկանց կյանքը: Կարողում ես ու զարմանում, թե ովքեր ու ինչեր ունես, որոնց մասին երբևէ չէիր իմանա, եթե չլիներ այս տիտանական աշխատանքը: Թերթը բաժանվում է անվճար, հասնում ՌԴ Կրասնոդարի երկրամաս և Աբխազիա, հեռավոր հայկական համայնքներ, ինքնության բացահայտման կարոտ հայության ցրիվ եկած մասունքներին:

...Սերգեյ Վարդանյանին ավելի շատ գիտեն որպես «Հայաստանի մայրաքաղաքները» շքեղ հրատարակության հեղինակի: Ստորև ներկայացնում ենք նրա հոդվածներից մեկը և խնդրում խորհրդածել այն խնդրի շուրջ, որը տքնաջան հետազոտության արդյունքում պատրաստել է հիանալի մտավորականը»:

Տպագրվել են նաև Ս. Վարդանյանի լուսանկարները Հռոմի պապ Հովհաննես Պողոս Երկրորդի, Շառլ Ազնավուրի հետ:

4. Ինչու՞ ոչ Թայիրյան, այլ՝ Շուստով (տեղեկագիր), «**Էկոնոմիկա**», եռամսյա հանդես, Երևան, 2006, դեկտեմբեր, № 3, էջ 54-56:

XIX դ. և XX դ. սկզբին Երևանի նահանգում գինու, օղու և կոնյակի արտադրության մասին է:

5. Столицы Армении, интервью с Сергеем Варданяном. Ван, глава из книги «Столицы Армении» сокращённый вариант (продолжение следует), «**АниВ**», журнал, Минск, 2006, № 1 (4), с. 88-93.

Ս. Վարդանյանի կենսագրությունը ներկայացնելուց հետո հանդեսը հարցազրույց է սպագրել «Հայաստանի մայրաքաղաքները» (1995) գրքի ստեղծման շուրջ, այնուհետև հաջորդում է գրքի Վանին նվիրված գլխից մեկ հատվածի թարգմանությունը (Շարունակելի):

6. Ван, глава из книги «Столицы Армении», сокращённый вариант (продолжение следует), «**АниВ**», журнал, Минск, 2006, № 2 (5), с. 27-34.

Սկիզբը նախորդ համարում, շարունակելի:

7. Ван, глава из книги «Столицы Армении», сокращённый вариант, «**АниВ**», журнал, Минск, 2006, № 3 (6), с. 42-50.

Սկիզբը նախորդ համարներում, ավարտն է:

8. Երկու խոսք // Զորիկ Քեշիշյան, «Մահապարտների պարը», Երևան, «Վան Արյան» հրատ., 2006, (-162 էջ), էջ 3, 4:

Խմբագրի՝ Սերգեյ Վարդանյանի առաջաբանն է: Աբխազիայում բնակվող գրողի վեպը նվիրված է Եղեռնի տարիներին Տրապիզոնի նահանգի Օրդուի գավառի համշենահայերի պայքարին:

9. Յի կօղնուշը, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2006, հունվար-փետրվար, № 1-2, էջ 7:

Խոփայի խոսվածքով տպագրվել է 1987 թ. Ղազախստանում կրոնափոխ համշենահայերից Ս. Վարդանյանի գրառած հեքիաթը:

10. Գովելի նախաձեռնություն, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2006, հունվար-փետրվար, № 1-2:

Ներկայացվում է մոսկվաբնակ տնտեսագիտության դոկտոր Սերգեյ Կալենջյանի նախաձեռնությամբ 2004 թ. Մոսկվայում լույս տեսած «Фольклор Амшенских армян. Частишки-четырёхстишья (мни)» (-32 с.) գրքույկը, որտեղ տպագրված Համշենի բարբառով խաղիկները (մընի) զուգահեռ ներկայացված են նաև ռուսատառ:

11. Օրդուի հերոսներին նվիրված վեպ, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2006, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 6:

Արխագիայում բնակվող Ջորիկ Քեշիշյանի «Մահապարտների պարը» վեպի մասին է, որը 2006 թ. հրատարակվել է Երևանում (առաջաբանի՝ «Երկու խոսք»-ի հեղինակ և գրքի խմբագիր՝ Սերգեյ Վարդանյան): Տպագրվել է նաև հատված վեպից:

12. Մահմեդական համշենահայերը՝ Մեծ եղեռնի վկաներ, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2006, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 7:

Հոդվածը 1944 թ. Աջարիայի սահմանամերձ գյուղերից Ղազախստան արքտրված կրոնափոխ համշենահայերից 1984 և 1987 թթ. Ս. Վարդանյանի գրառած Եղեռնի վկայությունների մասին է:

13. [Առաջաբան], Աղասի Քյոսեյան, Այցելություն Բրգնիք, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2006, մայիս-հունիս, № 5-6, էջ 2:

Ս. Վարդանյանի առաջաբանով հրատարակվել է Եղեռնը վերապրող, 1905 թ. Տրապիզոնի նահանգի Սամսոնի գավառի Թերմեի գավառակում ծնված Աղասի Քյոսեյանի հուշատետրից մի հատված «Այցելություն Բրգնիք» վերնագրով, որը պատմում է Դանիել Վարուժանի հայրենի Բրգնիք գյուղ 1922 թ. Սեբաստիայի որբանոցի սաների այցելության մասին:

Տե՛ս նաև **«Նոյան տապան»**, շաբաթաթերթ, Երևան, 2007, օգոստոսի 27, № 15, էջ 5: **«Գրական թերթ»**, շաբաթաթերթ, Երևան, 2009, դեկտեմբերի 4, №41, էջ 3:

14. Նոր հանդիպման սպասումով, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2006, մայիս-հունիս, № 5-6, էջ 7:

Տեղեկատվությունն է 2006 թ. հունիսի 17-ին Հայաստանի «Համշեն» հայրենակցական-բարեգործական ՀԿ խորհրդի նախաձեռնությամբ Երևանի ռեստորաններից մեկում հինգ տասնյակ հայաստանաբնակ և Երևանում ուսանող համշենահայերի հանդիպման մասին:

15. Լսենք օգնության կանչը, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2006, մայիս-հունիս, № 5-6, էջ 8:

Կոչ է արվում օգնության ձեռք մեկնել Արխագիայի Գանթիադի (Յանդրիպշ) ավանի հայկական դպրոցի ուսուցչուհի Մուսաննա Մինայանին, որի տունը ջրհեղեղից ավերվել է: Կից տպագրվել է Ս. Մինայանի նամակը՝ «Օգնություն, որը տեղ չի հասնում» վերնագրով:

16. Անժելիկա Չոլոկյանի նոր հաջողությունը, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2006, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 8:

Գագրայում ծնված, Մոչիում բնակվող Անժելիկա Չոլոկյանի մասին է, որը, 2006 թ. հուլիսի 1-ին Մոսկվայում անցկացվող վարսահարդարման արվեստի աշխարհի առաջնությունում ներկայացնելով Հայաստանը, 1250 մասնակիցների մեջ գրավել է 4-րդ տեղը:

17. Անդրանիկ Զեյթունյան-90, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2006, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12:

Երկարամյա մանկավարժ, հասարակական գործիչ, գրող Անդրանիկ Զեյթունյանի (1916-1986) անցած ուղու և հայապահպանության համար տասնամյակներ շարունակ մղած պայքարի մասին է:

Կից տպագրվել է նաև Ա. Զեյթունյանի արխիվում պահպանված ««Ձայն համշենական» գրական խմբակը» հոդվածը:

18. Սիրելի հայրենակիցներ, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2006, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12:

Անստորագիր է, հեղինակը Ս. Վարդանյանն է: Կոչ է, որով դիմում է հայրենակիցներին աջակցելու տպագրելու համշենցի ֆիդայիների հուշատետրերը և համշենահայությանը վերաբերող տարբեր հեղինակների՝ Սաթիկ Գեջանի, Ս. Վարդանյանի, Վահան Մենակեցու, Մակարե Հարությունյանի գրքերը:

19. Թուրքերեն հոդված մահմեդական համշենցիների մասին, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2006, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 7:

Թուրքական «Radikal» թերթի 2005 թ. հունիսի 12-ի համարում տպագրված Ջան Ուդուր Բիրյուլի «Համշենցիները հայն ր են. համշենցիների մա-

սին» հողվածի հայերեն թարգմանության (թարգմանիչ՝ Լուսինե Սահակյան) տպագրության առթիվ գրված Ս. Վարդանյանի առաջաբանն է:

Լույսը տե՛ս նաև՝ «Ազգ», օրաթերթ, Երևան, 2007, փետրվարի 17, № 30, Քաղաքական-հասարակական հավելված, էջ Դ:

«**Նոյյան տապան**», շաբաթաթերթ, Երևան, 2007, օգոստոսի 3, № 12, էջ 5:

20. «**Ձայն համշենական**», գիրք հինգերորդ, «**Գրական թերթ**», շաբաթաթերթ, Երևան, 2006, հոկտեմբերի 6, № 34, էջ 8:

Անստորագիր է: Ներկայացվում է «Ձայն համշենական» ժողովածուների 5-րդ գիրքը (Երևան, 2006), որը կազմել և խմբագրել են Սերգեյ Գալստյանը և Սերգեյ Վարդանյանը:

21. Լույս է տեսել «Ձայն համշենական» ժողովածուի 5-րդ հատորը, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2006, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12:

Հողվածն անստորագիր է, հեղինակը Ս. Վարդանյանն է: Ներկայացվում է նախորդ չորս հատորների բովանդակությունը և հինգերորդ հատորը: Ավելի համառոտ տարբերակը տպագրվել է 5-րդ հատորի «Կազմողների կողմից» առաջաբանում:

### **Երկրորդ բաժին (հարցազրույցներ)**

22. Амшенцы на дорогах мира, беседа вела М[агдалина] Затикян, «**Голос Армении**», газета, издаётся трижды в неделю, Ереван, 2006, 11 ноября (№ 120), с. 6.

Ս. Վարդանյանի համշենահայությանը նվիրված գործունեության մասին է:

Արտատպությունը տե՛ս «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2006, նոյեմբեր-դեկտեմբեր, №№ 11-12:

23. Амшенцы на дорогах мира, беседа вела М[агдалина] Затикян, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2006, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12:

«**Голос Армении**» թերթում 2006 թ. նոյեմբերի 11-ին (№ 120) տպագրված հարցազրույցի արտատպությունն է:

24. Амшенские армяне-знакомые и незнакомые, беседовала Роза Егиазарян, «**Новое время**», газета, издаётся трижды в неделю, Ереван, 2006, 7 октября, № 1398, с. 5.

Ս. Վարդանյանի համշենահայությանը նվիրված գործունեության մասին է:

Արտատպությունը տե՛ս «**Еркрамас**», ежемесечная газета, г. Краснодар, 2006, октябрь, № 10 (140), с. 6, արտատպության արդյուրը չի նշված:

25. Амшенские армяне-знакомые и незнакомые, беседовала Роза Егиазарян, «**Еркрамас**», ежемесечная газета, г. Краснодар, 2006, октябрь, № 10 (140), с. 6.

Ս. Վարդանյանի գործունեության և հրապարակումների մասին է:

Արտատպվել է՝ «**Новое время**» (газета, Ереван, 2006, 7 октября, с. 5) թերթից, արդյուրը չի նշված:

Հրապարակմանն ավելացվել է Հայաստանի «Համշեն» հայրենակցական միության ղեկավարության 5 անդամների (այդ թվում՝ Ս. Վարդանյանի) «**Еркрамас**»-ի խմբագրի Երևանում արած խմբակային լուսանկարը:

26. Столицы Армении, интервью с Сергеем Варданяном. Ван, глава из книги «Столицы Армении» сокращённый вариант (продолжение следует), «**Анив**», журнал, Минск, 2006, № 1 (4), с. 88-93.

Ս. Վարդանյանի կենսագրությունը ներկայացնելուց հետո հանդեսը հարցազրույց է տպագրել «Հայաստանի մայրաքաղաքները» (1995) գրքի ստեղծման շուրջ, այնուհետև հաջորդում է գրքի Վանին նվիրված գլխից մեկ հատվածի թարգմանությունը այս և հաջորդ համարներում, տե՛ս 2006, № 2, էջ 27-34, № 3, էջ 42-50:

27. Արխագիայի հայկական դպրոցներն ունեն ուսուցիչների կարիք, գրույցը վարեց Սերգեյ Վարդանյանը, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2006, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 1, 2:

Հարցազրույցը Արխագիայի Գուդաութայի շրջանի Ագարակ (Վավակլուղ) գյուղի հայկական միջնակարգ դպրոցի տնօրեն Շամիրամ Քեյանի հետ է:

28. Սուխումի հայկական դպրոցը 100 տարեկան է, գրուցեց Ս. Վարդանյանը, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2006, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10:

Հարցազրույցը Սուխումի Հովհ. Թումանյանի անվ. № 9 միջնակարգ դպրոցի տարրական դասարանների ուսուցչուհի Էմմա Թորոսյանի հետ է:

29. Աջարիայում կա ընդամենը ... 40 աշակերտ, գրուցեց Ս. Վարդանյանը, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2006, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10:

Հարցազրույցը Բաթումի հայկական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Սաթենիկ Դանիելյանի հետ է:

30. Շնորհավոր Նոր տարի և Սուրբ Ծնունդ, հարցազրույցը՝ Սաթիկ Միսակյանի և Սերգեյ Վարդանյանի, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2006, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12:

Հարցազրույցը Հայ Առաքելական եկեղեցու Հարավային Ռուսաստանի թեմի Արխիպիսկոպի նորաստեղծ հովվության հոգևոր հովիվ, հոգեշնորհ Տեր Տարոն արեղա Ղուլիկյանի հետ է:

31. Խիստ կրճատվել է հայերեն առարկաների թիվը, զրուցեց Ս. Վարդանյանը, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2006, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12:

Հարցազրույցը Մոչիի Լազարևսկի շրջանի Սերգեյ-Պոլե գյուղի թիվ 85 դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ոսկի Սունգուրտյանի հետ է:

### **Երրորդ բաժին**

32. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, անավարտ վեպ, Միջանկյալ ժամանակ, գիրք երկրորդ, Երևան, «Վան Արյան» հրատ., 2006, (-416 էջ):

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է, նրա մասին տես՝ գլուխ վեցերորդ, «Գրողական հանդիպումներ», էջ 68, 75, 76, գլուխ յոթերորդ, «Սեփականաշնորհված տարածքներ», էջ 83-84, 86-87, գլուխ ութերորդ, «Ընկերական հանդիպումներ», էջ 88-92, 97-99, գլուխ իններորդ, «Գարեջուր և տեսարաններ», էջ 100-111, գլուխ տասներորդ, «Փոքր թենիս», էջ 112-115, 119-122, 124, գլուխ տասնմեկերորդ, «Չեղած տեղից պրոբլեմներ», էջ 125-137, գլուխ տասներկուերորդ, «Պատմություն փուչ պոպոքների մասին», էջ 138-149, գլուխ տասներեքերորդ, «Հաջողություն, պարոն Գրեցկի», էջ 151-159: Տե՛ս նույնը՝ «**Առավոտ**», օրաթերթ, Երևան, 2005, հոկտեմբերի 25, № 206, նոյեմբերի 5, № 211, նոյեմբերի 12, № 216, նոյեմբերի 19, № 221, նոյեմբերի 26, № 226, դեկտեմբերի 3, № 232, դեկտեմբերի 10, № 236, դեկտեմբերի 17, № 241:

33. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, վեպ, գիրք երրորդ, գլուխ առաջին, «Շարունակվող սկիզբ», «**Առավոտ**», օրաթերթ, Երևան, 2006, մայիսի 27, № 96, էջ 8, 9:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է:

Տե՛ս նաև՝ Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, անավարտ վեպ, Միջանցիկ ժամանակ, գիրք երրորդ, Երևան, «Վան Արյան» հրատ., 2007 (- 348 էջ), գլուխ առաջին, «Շարունակվող սկիզբ», էջ 9:

34. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, վեպ, գիրք երրորդ, գլուխ քսանիններորդ, «Արարատյան դաշտի առավոտը», Վերջ երրորդ գրքի, «Առավոտ», օրաթերթ, Երևան, 2006, դեկտեմբերի 9, № 234, էջ 4, 5:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է:

Տե՛ս նաև՝ Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, անավարտ վեպ, Միջանցիկ ժամանակ, գիրք երրորդ, Երևան, «Վան Արյան» հրատ., 2007 (- 348 էջ), գլուխ քսանիններորդ, «Արարատյան դաշտի առավոտը», էջ 340, 341, 343:

35. Լյուդվիգ Կարապետյան, Դասը վարում է գրողը, XX դարի հայ մանկապատանեկան գրականություն, գրական-կենսամատենագիտական ակնարկներ, գրողների դիմանկար-էսքիզներ, պրակ չորրորդ, Երևան, «Վան Արյան» հրատ., 2006 (-382 էջ):

**Սերգեյ Վարդանյանի կենսագրությունը՝** էջ 333, նրա ստեղծագործական ուղու մասին հոդվածը՝ «**Այդ զարմանալի հրեղեն ձին, այդ հրաշալի «Արևածաղիկը»**՝ էջ 334-339:

Գրքից հատվածներ. «...Բանահավաքչական մանկապատանեկան այս եզակի շարժման նախաձեռնող Սերգեյ Վարդանյանը՝ այսօր արդեն ճանաչված արձակագիրն ու նաև մանկական հրաշալի գրողը թող պատմի. 1978-ին էր, աշխատում էր «Պիոներ կանչ» թերթում: Ծովեց հրաշալի մտահղացում՝ կոչով դիմել ոչ միայն Հայաստանի, այլև արտերկրի հայ երեխաներին՝ մերձավորներից, հարազատներից, ծանոթներից գրի առնել և խմբագրություն ուղարկել տարաբնույթ բանահյուսական նյութեր, որոնցից լավագույնները կիրապարակվեն թերթում, ապա լույս կտեսնեն առանձին գրքով: Ինչպե՛ս էր իր նախաձեռնությամբ ոգևորված Սերգեյ Վարդանյանը. ընդունում էր ոգևորված երեխաների նամակները՝ տասնյակ հասցեներից, պատասխանում, նոր հանձնարարականներ տալիս... Այդ տարիներին ինքս էլ էի «պիոներկանչական», ականատես ու վկա մի խանդավառ շարժման, որի կենտրոնաձիգ զարկերակը մեր բարեկամ Սերգեյ Վարդանյանն էր: Ահա այդպես լույս աշխարհ եկավ նրա առաջին մանկապատանեկան (ինչու միայն, նաև մեծերի սեղանի գիրքը դարձավ) «ճնունդը»՝ իր մշակած, վերապատմած, ծանոթագրած բանահավաքչական նյութերով... (էջ 335):

...Սերգեյ Վարդանյանի ստեղծագործական ճանապարհին մեր մանկապատանեկան գրականության դարավերջի մի ուրիշ զարկերակ էլ է կենդանի թրթիռներով բաբախել: Խոսքը գիտահանրամատչելի գրականութ-

յան մասին է, որի ճանաչողական-ուսուցողական, նաև դաստիարակչական դերը մանուկ ու պատանի ընթերցողների համար դժվար է գերազնահատել: 1985-ին լույս տեսած և լրացումներով տասը տարի անց ավելի գեղազարդ վերահրատարակված **«Հայոց մայրաքաղաքները»** գիրքը հայոց պատմության մի ինքնատիպ, հետաքրքրաշարժ, հանրամատչելի դասագիրք է մանուկ ու պատանի (և ինչու միայն) ընթերցողի, ամեն մի հայի համար (էջ 337):

...Սերգեյ Վարդանյանը տարբեր ժամանակներում մամուլում հրապարակել է նաև փոքրիկ ընթերցողներին հասցեագրված պատմվածքներ, զրույցներ, հեքիաթներ: Իսկ ահա 1989-ին Երևանում լույս տեսած և 1994-ին Ստամբուլում արևմտահայերեն վերահրատարակված «Արևածաղիկը» ժողովածուն շնորհաշատ արձակագրի մանկագրական տաղանդի իսկական վկայագիր է» (էջ 338):

36. Լ. Պողոսյան, Մերոնք Աբխազիայում, **«Հայոց աշխարհ»**, օրաթերթ, Երևան, 2006, դեկտեմբերի 15, № 235, էջ 5:

Նախորդ օրը «Ուրբաթ» ակումբում կայացած մամուլի ասուլիսի մասին է, որին մասնակցել են Աբխազիայի խորհրդարանի պատգամավոր, Աբխազիայի հերոս Գ. Տրապիզոնյանը, Աբխազիայի հայոց հոգևոր հովիվ Տարոն արեղա Ղուլիկյանը և Հայաստանի «Համշեն» հայրենակցական միության փոխնախագահ Սերգեյ Վարդանյանը: Տպագրվել է նաև ասուլիսի լուսանկարը:

Տե՛ս նաև **«Իմ իրավունքը»**, **«Ազգ»**, **«Երկիր»** թերթերի 2006 թ. դեկտեմբերի 15-ի համարները: Նույն ասուլիսի մասին տե՛ս նաև «Մեդիամաքսի» համառոտ լրատվությունը. «Աբխազիայում բնակվում են ավելի քան 60 հազար հայեր», **«Հայաստանի Հանրապետություն»**, 2006, դեկտեմբեր 15, թիվ 230:

37. Հասմիկ Համբարձումյան, Աբխազահայերը գլորել են դաժան կյանքի օրերը. ժամանակն է հիշել հայրենակիցներին, **«Իմ իրավունքը»**, շաբաթաթերթ, Երևան, 2006, դեկտեմբերի 15, № 77 (89), էջ 7:

Դեկտեմբերի 14-ին «Ուրբաթ» ակումբում տեղի ունեցած մամուլի ասուլիսի մասին է, որին մասնակցել են «Աբխազիայի հայկական համայնքի նախագահ Գալուստ Տրապիզոնյանը», «Աբխազիայում հաստատված Հայ Առաքելական եկեղեցու հոգևոր հովիվ Տարոն արեղա Ղուլիկյանը» և Սերգեյ Վարդանյանը: «Ու եթե Աբխազիայում նախկինում 128 դպրոց է գործել՝ 12 հազար աշակերտով, այժմ մնացել են դրանցից միայն 37-ը, այն էլ 2820

աշակերտով: «Աշակերտների թիվը պակասել է արտագաղթի պատճառով», - պատճառաբանեց ասուլիսին ներկա «Ձայն համշենական» թերթի խմբագիր Սերգեյ Վարդանյանը: Ի դեպ, այս թերթը տպագրվում է այստեղ և առաքվում Աբխազիա»:

Տե՛ս նաև «**Հայոց աշխարհ**», «**Երկիր**», «**Ազգ**» թերթերի 2006 թ. դեկտեմբերի 15-ի համարները:

38. Ա. Հարությունյան, Աբխազահայությունը հնարավորինս ակտիվ է Աբխազիայի կյանքում. Աբխազիայում հայկական միայն մի եկեղեցի-մատուռ կա, «**Ազգ**», օրաթերթ, Երևան, 2006, դեկտեմբերի 15, № 240, էջ 3:

Նախորդ օրը «**Ուրբաթ**» ակումբում տեղի ունեցած մամուլի ասուլիսի մասին է, որին մասնակցել են Աբխազիայի հայ համայնքի համանախագահ Գալուստ Տրապիզոնյանը, Աբխազիայի հայ համայնքի հոգևոր հովիվ Տարոն աբեղա Ղուլիկյանը և Սերգեյ Վարդանյանը: ««Ձայն համշենական» թերթի խմբագիր, «Համշեն» հայրենակցական-բարեգործական միության փոխնախագահ Սերգեյ Վարդանյանի տեղեկացմամբ, Աբխազիայի հայերի մեծ մասը համշենահայեր են: Նրանք ստեղծել են հասարակական կազմակերպություն, որն արդեն գործում է 14 տարի: Վարդանյանն ընդգծեց, որ Աբխազիայում 37 հայկական դպրոցների գոյությունը բնավ լավ վիճակի մասին չի խոսում, քանի որ դրանք քառակի ավելի են եղել»: Տպագրվել է ասուլիսի լուսանկարը:

Տե՛ս նաև «**Հայոց աշխարհ**», «**Երկիր**», «**Իմ իրավունքը**» թերթերի 2006 թ. դեկտեմբերի 15-ի համարները, «**Ազգ**»-ից արտատպել է «**Ազդակ**» օրաթերթը, Բեյրութ, 2007, Յունուար 15, թիւ 257:

39. Կ. Մանգասարյան, Աբխազահայությունը ողջունում է ԼՂՀ Սահմանադրության ընդունումը, «**Երկիր**», օրաթերթ, Երևան, 2006, դեկտեմբերի 15, № 47, էջ 7:

Նախորդ օրը «**Ուրբաթ**» ակումբում կայացած մամուլի ասուլիսի մասին է, որին մասնակցել են Աբխազիայի հայկական համայնքի համանախագահ, Աբխազիայի խորհրդարանի պատգամավոր, Աբխազիայի հերոս Գ. Տրապիզոնյանը, Աբխազիայի հայոց հոգևոր հովիվ Տարոն աբեղա Ղուլիկյանը և Սերգեյ Վարդանյանը:

««Ձայն համշենական» թերթի խմբագիր, «Համշեն» հայրենակցական միության փոխնախագահ Սերգեյ Վարդանյանն էլ ներկայացրեց 1992 թվականին հիմնադրված «Համշեն» հայրենակցական-բարեգործական միության կատարած աշխատանքը, նշեց, որ 1991-ին փորձ արվեց 2000

տպաքանակով տպել «Լույս Համշենի» թերթը, որը տարածվում էր Աբխազիայի, ինչպես նաև Կրասնոդարի մարզի համշենահայերի մեջ, որտեղ հայկական խոսքի կարիք կար: 2004 թվականի օգոստոսից սկսվել է «Չայն համշենական» թերթի հրատարակումը...: Նա նույնպես անդրադարձավ հայկական դպրոցների խնդրին: «Այսօր ոմանց զարմացնում է այսօրվա հայկական դպրոցների թիվը, իսկ ով գիտի, թե նախկինում ինչքան է եղել այդ թիվը, վշտանում է, որովհետև մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը եղել է 128 հայկական դպրոց՝ 12 հազար աշակերտով: Ցավոք, այսօր աշակերտների թիվը արտագաղթի արդյունքում նվազել է», - ասաց Ս. Վարդանյանը»:

Տե՛ս նաև «**Հայոց աշխարհ**», «**Իմ իրավունքը**», «**Ազգ**» թերթերի 2006 թ. դեկտեմբերի 15-ի համարները:

40. Հայ ժողովրդական հեքիաթներ. Այգեպանի աղջիկները, «**9-րդ հրաշալիք**», շաբաթաթերթ, Երևան, 2006, 15-24 ապրիլի, № 10 (365), էջ 11:

«**Հրեղեն ձին**» (1981) բանահյուսական ժողովածուից գրական հայերենի է վերածվել «Բոստանչու աղջիկները» հեքիաթը (էջ 52-54):

41. Լուսինե Սահակյան, Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման հետևանքները, «**Չայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2006, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 2, 3, 7:

Հոդվածում հիշատակվում է նաև Ս. Վարդանյանը. «Ըստ Մերգեյ Վարդանյանի, որը «Չայն համշենական» ժողովածուի երրորդ հատորում (1989) հրատարակել է Խոպային հարակից Աջարիայի սահմանամերձ գյուղերից 1944 թ. Միջին Ասիա արքստրված մահմեդական համշենցիներից իր գրառած խաղիկները և հեքիաթները, կրոնափոխ համշենցիների լեզուն Համշենի բարբառի առանձին խոսվածք է, որը զգալի տարբերություններով հանդերձ մոտ է Տրապիզոնի շրջակա գյուղերի խոսվածքին և բաժանվում է երկու ճյուղի՝ արդլեցիների (Արդալա գյուղի բնակիչների) ու թուրքսանցիների (դրսեցիների)», էջ 3:

42. Լուսինե Սահակյան, Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները // **Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ**, հ. IV, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Երևան, «Ասողիկ» հրատ., 2006 (- 292 էջ), էջ 207, 228:

Բ.գ.թ., թուրքագետ Լ. Սահակյանը հոդվածում նշել է. «Հոդվածի նախնական տարբերակը ընթերցելու և օգտակար խորհուրդների համար շնոր-

հակալուրդուն ենք հայտնում բանասեր, համշենահայության պատմության և ազգագրության երկարամյա ուսումնասիրող, Հայաստանի «Համշեն» հայրենակցական-բարեգործական ՀԿ փոխնախագահ, «**Ձայն համշենական**» թերթի գլխավոր խմբագիր Մերգեյ Վարդանյանին» (էջ 223): «Թուրք և վրաց պատմաբանների՝ համշենահայերի ծագումը և ազգային պատկանելությունն աղավաղող վարժանքները ժամանակին քննադատել է բանասեր-ազգագրագետ, համշենահայերի պատմության և ազգագրության լավագույն մասնագետ Ս. Վարդանյանը» (էջ 209):

Հոդվածում Ս. Վարդանյանը և նրա ուսումնասիրությունները հիշատակվում են հետևյալ էջերում՝ 209, 214-216, 219, 223-227:

43. Ардаваст Тулумджян, Экспедиции в Амшен, Окончание. Начало в № 4, 5, «**Еркрамас**», ежемесячная газета, г. Краснодар, 2006, август, № 8 (138), с. 6.

Կրասնոդարի երկրամասի՝ Ապշերոնսկի «Համշեն» գիտական, տեղեկատվական-մշակութային կենտրոնի նախագահ Ա. Թուլումջյանն իր հոդվածում անդրադառնում է նաև 1984 թ. Մայկոպի մոտակա Պրոլետարսկի գյուղում Սև Գետի նշանավոր քահանա Տեր-Վարապետի թոռան թոռի հետ Ս. Վարդանյանի հանդիպմանը. «В 1984 году известный специалист по Амшену Сергей Вардамян познакомился в армянском хуторе Пролетарский вблизи Майкопа с 84-летним уроженцем села Калафка Маргаром Гукасяном, в чьем доме висел на стене ковер, изготовленный его дедом в 1906 году с надписью «Священник Тер-Хорен, сын Тер-Карапета, род. 1831 году». По словам Маргара Гукасяна Тер-Хорен погиб на дорогах изгнания в 1915 году...».

44. Վաչագան Վահրադյան, Երևան քաղաքի անունը // **Երևան. Հոդվածների ժողովածու՝ նվիրված Երևանի պատմության խնդիրներին**, Երևան քաղաքի պատմության թանգարան, Երևան, 2006 (-263 էջ), էջ 210-223:

Հոդվածը նվիրված է Երևան անվան տարբեր հեղինակների ստուգաբանություններին: Հիշատակվում է նաև Ս. Վարդանյանի վերաբերմունքը դրանցից մեկին, որը տպագրվել է «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքի 130-րդ էջում: Հատված հոդվածից. «- կար մեկ այլ կարծիք ևս, որը գոյություն ուներ մինչև Էրեբունի բերդի հիմնադրման մասին արձանագրության հայտնաբերումը, ըստ որի Երևանը անվանակոչվել է Երվանդունիներից վերջինի պատվին: Քննադատել է Ս. Վարդանյանը» (էջ 219):

45. Գևորգ Օրբելյան, Երևանի նկարագրությունը ըստ եվրոպացի ճանապարհորդների (17-րդ դ.-19-րդ դարի I քառորդ) // **Երևան. Հոդվածների ժողովածու՝ նվիրված Երևանի պատմության խնդիրներին**, Երևան քաղաքի պատմության թանգարան, Երևան, 2006 (-263 էջ), էջ 249-257:

Երևան քաղաքի պատմության թանգարանի փոխսնօրեն Գ. Օրբելյանն իր հոդվածում Ս. Վարդանյանի «Հայաստանի մայրաքաղաքները» (1995) գրքից քաղվածաբար ներկայացրել է նաև 1673 թ. Երևան այցելած Ժան Շարդենի (էջ 250-251) և 1829 թ. այցելած Ֆրիդրիխ Պարրոտի (էջ 256-257) նկարագրությունները:

46. Григорьян Каринэ Эрнестовна, Грани идентичности. Социокультурное пограничье как фактор формирования этнического самосознания (на примере субэтнических групп армян), Центр цивилизационных и региональных исследований РАН, серия “Образы мира”, том 5. Москва, 2006 (-172 с.).

Գրքում քրիստոնյա համշենահայերից գատ, առանձին գլուխ է նվիրված նաև կրոնափոխ համշենահայերին (хемшилы, էջ 32-42), որտեղ նրանց Համշենի բարբառի թուրքականցիների և արդալացիների խոսվածքների առթիվ հիշատակվում է Ս. Վարդանյանը. «Хемшильский диалект подразделяется на ряд локальных подговоров, а именно сел. Залуна (Хопский район), сел. Джернал (по Вартаняну, «ардылейский» в Аджарии), сел. Гонио (по Вартаняну, «турцеванский», в Аджарии)», с. 36. Հղումը արված է՝ Кузнецов И. В., Одежда армян Понта. Семиотика материальной культуры, Москва, Издательская фирма «Восточная литература» РАН, 1995 (- 296 с. + 24 с. ил.), с. 14.

Մ. Գրիգորյանն իր գրքի 43-րդ էջում հղում է ( տե՛ս հղումը՝ էջ 55) նաև Երևանի Իրանագիտության կովկասյան կենտրոնի 1999 թ. մայիսի 18-19-ին կազմակերպած «Ռուսաստան-Հայաստան-Իրան. քաղաքակրթությունների երկխոսություն» թեմայով միջազգային կոնֆերանսում Ս. Վարդանյանի կարդացած «Հայ-մուսուլմաններ» զեկուցմանը, տե՛ս Армяне-мусульмане (К постановке вопроса), Кавказский центр Иранистики, Россия-Армения-Иран: Диалог цивилизаций, доклады и тезисы докладов международной конференции, 18-19 мая, 1999 г., Ереван, 1999 (- 96 с.), с. 30.

2007

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. The Salvaged Tales, Translated by Gohar Vardanyan, Gagik Vardanyan, Edited by Svetlana Mardanyan, Compiled and prepared for publishing by Sergey Vardanyan, Yerevan, “Graber”, 2007 (- 164 p.), չափսը՝ 60x84 1/16, տպաքանակը՝ 500:

«Փրկված հեքիաթներ» վերնագրված գրքում ընդգրկված են «Հրեղեն ձին» (1981) և «Թագավորի երազները» (2003) բանահյուսական ժողովածուներից ընտրված 95 հեքիաթների, զրույցների, զվարճապատումների անգ-

լերեն թարգմանությունները, թարգմանիչները՝ Ս. Վարդանյանի դուստրը և որդին են՝ Գոհար և Գագիկ Վարդանյանները:

2. Լ. Ս. Սահակյան, Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Ե., 2007, 308 էջ, «**Բանբեր Երևանի համալսարանի**», հանդես, Երևան, 2007, № 3 (123), էջ 226-230:

Լ. Սահակյանի գրքի մասին Ս. Վարդանյանի գրախոսությունն է:

3. Հայագիտական կարևոր հրատարակություն, «**Հայաստանի Հանրապետություն**», օրաթերթ, Երևան, 2007, սեպտեմբերի 7, № 161, էջ 5:

Ս. Վարդանյանի գրախոսությունը նվիրված է Լուսինե Սահակյանի «Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում» (2007) մենագրությանը:

Նույնը տե՛ս նաև «**Նոյան տապան**», շաբաթաթերթ, Երևան, 2007, սեպտեմբերի 24, № 19 (693), էջ 17, 18:

4. Հայագիտական կարևոր հրատարակություն, «**Նոյան տապան**», շաբաթաթերթ, Երևան, 2007, սեպտեմբերի 24, № 19 (693), էջ 17, 18:

Լուսինե Սահակյանի «Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում» (2007) գրքի Ս. Վարդանյանի գրախոսությունն է:

Նույնը տե՛ս նաև «**Հայաստանի Հանրապետություն**», օրաթերթ, Երևան, 2007, սեպտեմբերի 7, № 161, էջ 5:

5. Հայոց մայրաքաղաքներ, դարեր և դասեր, Վան, «**Էկոնոմիկա**», եռամսյա հանդես, Երևան, 2007, ապրիլ, № 1 (4), էջ 86-90:

6. Մահմեդական համշենահայերը՝ Մեծ եղեռնի վկաներ, «**Եզերք**», հանդես, Երևան, 2007, № 2, օգոստոս, էջ 40-43:

Տպագրվել են Եղեռնի ականատեսներ Խաուլա Կարախիբրահիմովայի, Դուրսուն Կարաբաջակովի և Իսակ Կարախիբրահիմովի վկայությունները:

7. Բանահյուսությունը որպես դաստիարակության միջոց // 2007 թ. հոկտեմբերի 16-19-ին Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիայի և ԵՊՀ-ի կազմակերպած «**Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում**» միջազգային երկրորդ գիտա-ժողովի ծրագիր և թեզիսներ, Երևան, 2007, էջ 98-99:

8. Մահմեդական համաձայնագրերի մասին 1776 թ. վերաբերող մի կարևոր վկայություն // **Համաձայնագրեր և համաձայնագրեր (գիտաժողովի նիստեր)**, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան-Պեյրոթ, Համազգային Վահե Սեֆեյան տպարան, 2007 (- 296 էջ), էջ 269-277:

2005 թ. հոկտեմբերին Սոչի (Ադլեր) քաղաքում տեղի ունեցած Համաձայնագրերի և համաձայնագրերի նվիրված միջազգային առաջին գիտաժողովում Ս. Վարդանյանի կարդացած զեկուցումն է, որը «**Պատմաբանասիրական հանդես**» 2004 թ. № 3-ում (էջ 159-170) տպագրված հոդվածի կրճատ տարբերակն է:

Տե՛ս նաև ռուսերենը՝ Свидетельство 1776 г. об исламизированных армянах Амшена, «**Еркрамас**», ежемесячная газета, г. Краснодар, 2005, октябрь, № 10 (128), с. 3.

Одно важное свидетельство 1776 года об Амшенских армянах-мусульманах, «**Ձայն համաձայնական**», ամսաթերթ, Երևան, 2007, մարտ-ապրիլ, № 3-4:

Vardanyan Sergey, 1776 yılına ait Müslüman Hemşinli Ermeniler hakkındaki önemli bir şahadetname // **Hemşin ve Hemşinli Ermeniler (konferans makaleleri)**, Ermenistan Cumhuriyeti Bilimler Ulusal Akademisi Tarih Enstitüsü, Yerevan, «Name», 2007 (- 306 s.), s. 278-286.

9. Vardanyan Sergey, 1776 yılına ait Müslüman Hemşinli Ermeniler hakkındaki önemli bir şahadetname // **Hemşin ve Hemşinli Ermeniler (konferans makaleleri)**, Ermenistan Cumhuriyeti Bilimler Ulusal Akademisi Tarih Enstitüsü, Yerevan, «Name», 2007 (- 306 s.), s. 278-286.

10. Հայտնի և անհայտ Արման Կոթիկյանը, «**Ձայն համաձայնական**», ամսաթերթ, Երևան, 2007, № 11-12:

Հոդվածը պատմում է նշանավոր դերասան Արման Կոթիկյանի կյանքի անհայտ էջերի մասին, մասնավորապես Եղեռնի օրերին Տրապիզոնի լեռներում եղբոր և ընկերոջ հետ թաքնվելու, երկու հույն քույրերի օգնության, նաև Եղեռնը վերապրողներից 1916 թ. նրա կատարած գրառումների մասին: Հոդվածը Ա. Կոթիկյանին ներկայացնում է նաև որպես տաղանդավոր բանաստեղծ և գիտնական:

11. [Առաջաբան], Աղասի Քյոսեյան, Այցելություն Բրզնիք, «**Նոյան տապան**», շաբաթաթերթ, Երևան, 2007, օգոստոսի 27, № 15 (689), էջ 5:

Ս. Վարդանյանը հայտնաբերել և հրատարակության է պատրաստել Եղեռնը վերապրողներից Սամսոնի գավառի Թերմեի գավառակում ծնված Աղասի Քյոսեյանի ձեռագիր հուշը:

Նույնը՝ «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2006, մայիս-հունիս, №5-6, էջ 2:

«**Գրական թերթ**», շաբաթաթերթ, Երևան, 2009, դեկտեմբերի 4, № 41, էջ 3:

12. Ուշադրություն, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2007, հունվար-փետրվար, № 1-2, էջ 8:

Ս. Վարդանյանը հրատարակելով Կրասնոդարի երկրամասի Լազարևսկի շրջանի Բերանդա գյուղում 1912 թ. արված մի լուսանկար, նշելով նկարվածների տվյալները, խնդրում է, որ լրացուցիչ տեղեկություններ իմացողները հայտնեն «Ձայն համշենականի» խմբագրությանը:

13. Նշանակալից իրագործում, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2007, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 3:

Հոդվածն անստորագիր է, հեղինակը Ս. Վարդանյանն է: Ներկայացվում է 2005 թ. հոկտեմբերի 13-15-ը Կրասնոդարի երկրամասի Ադլեր քաղաքում տեղի ունեցած «Համշենը և համշենահայերը» թեմայով միջազգային գիտաժողովի զեկուցումների թուրքերեն թարգմանությունների 2007 թ. Երևանում տպագրված ժողովածուն՝ «Hemşin ve Hemşinli Ermeniler (Konferans makaleleri)»:

14. Одно важное свидетельство 1776 года об Амшенских армянах-мусульманах, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2007, մարտ-ապրիլ, № 3-4:

Հեղինակի «Կարևոր սկզբնաղբյուր մահմեդականացված հայերի մասին», «**Պատմաբանասիրական հանդեսում**» (2004, № 3, էջ 159-170) տպագրված հոդվածի կրճատված թարգմանությունն է:

15. Մոլդովկայի «Թոչնոց բույնը», «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2007, մայիս-հունիս, № 5-6 (34-35), էջ 2, 3:

Ի տարբերություն նախորդ հրատարակությունների, ավելացվել է առաջաբան:

Հոդվածի տարբերակները տե՛ս **Հյուսիսային հողմերը և հայ գաղութի դիմադրական ճիգերը**, «**Մաշտոց**», թերթ, Երևան, 1991, հուլիսի 6, № 4, էջ 6: Բայց ի՞նչ գնով... «**Լույս համշենյաց**», պարբերաթերթ, Երևան, 1991, նոյեմբերի 23, № 1, անստորագիր է, հեղինակը Ս. Վարդանյանն է: Մոլդովկայի Թոչնոց բույնը, «**Լույս Համշենի**», ամսաթերթ, Երևան, 1992, հունվարի 31, № 2 (4): Մոլդովկայի «Թոչնոց բույնը» // **Ձայն համշենական**, ժողովածու, չորրորդ հատոր, Երևան, 1999 (- 208 էջ), էջ 30-34: Նույնը՝ Մոլդովկայի «Թոչնոց բույնը», «**Նոյյան տապան**», շաբաթաթերթ, Երևան, 2007, սեպտեմբերի 10, № 17, էջ 9:

16. Մուղղովկայի «Թռչնոց բույնը», «Նոյյան տապան», շաբաթաթերթ, Երևան, 2007, սեպտեմբերի 10, № 17, էջ 9:

Կրասնոդարի երկրամասի Ադլերի շրջանի Մուղղովկա գյուղի հայկական դպրոցի վերաբացման համար տեղի հայերի պայքարի մասին է:

Տպագրվել է նաև Ս. Վարդանյանի լուսանկարը:

17. Հայագիտական նոր հրատարակություն, «Չայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2007, հուլիս-օգոստոս, № 7-8:

Համառոտ ներկայացվում է 2007 թ. Լոնդոնում և Նյու Յորքում հրատարակված “The Hemshin. History, Society and Identity in the Highlands of Northeast Turkey” (թարգմ.՝ Հեմշինը. պատմությունը, հասարակությունը և ինքնությունը Թուրքիայի հյուսիսարևելյան լեռնաշխարհում) գիտական հոդվածների ժողովածուն:

18. Մահմեդական համշենցիների բարբառով նոր երգ, «Չայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2007, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10:

Համառոտ առաջաբանով ներկայացվում է Թուրքիայի կրոնափոխ համշենցիների «Ջերմագ» (ճերմակ) վոկալ-գործիքային անսամբլի «Թէվես փերնա» (Ձեռքս բռնիր) երգի բնագիրը և գրական արևելահայերեն թարգմանությունը:

19. [Առաջաբան], «Չայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2007, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12:

Սմբատ Մինասյանի «Մոչիի հայության դրությունը և կամավորական բանակը (1918 թ. երկրորդ կես-1919 թ. սկիզբ)» հոդվածի տպագրության անվերնագիր, հակիրճ առաջաբան:

20. Թուրքերեն հոդված մահմեդական համշենցիների մասին, «Ազգ», օրաթերթ, Երևան, 2007, փետրվարի 17, № 30, Բաղաքական-հասարակական հավելված, էջ Դ:

Թուրքական “Radikal” (Ռադիկալ) թերթում 2005 թ. հունիսի 12-ին տպագրված չամլըհեմշինցի երիտասարդ հայրենագետ Ջան Ուդուր Բիրյոլի «Հեմշինցիները հայեր են» հոդվածի հայերեն թարգմանությունը (թարգմանիչ՝ Լուսինե Սահակյան) տպագրվել է «Չայն համշենական» թերթի գլխ. խմբագիր Ս. Վարդանյանի առաջաբանով: Առաջաբանից հատված. «Այս ընթացքում, երբ «Ակօս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի սպանությունը շարունակում է վերլուծությունների տաք նյութ մնալ սփյուռքի եւ հայաստանյան մամուլում, ցանկանում եմ հիշել «Ակօսի» հետ համագործակցության դրվագներից մեկը: «Ակօսը» Թուրքիա-

յում իր հայապահպան դժվարին առաքելությունից զատ փորձում էր հայերի մասին թուրքական մամուլում հրատարակվող քիչ թե շատ անկողմնակալ հոդվածները ծանոթացնել նաև մեզ: Այդպես «Ակօսից» ստացանք թուրքական հայտնի «**Ռադիկալ**» թերթի այն համարը, որտեղ տպագրվել էր Թուրքիայում բնակվող մահմեդական համշենցիների մասին հոդված: Համշենյան գյուղական պատկեր ներկայացնող լուսանկարի վրա հստակ գրված էր «Հեմշինցիները հայե՞ր են» հարցը, որի դրական պատասխանը տալիս էր հրատարակվող հոդվածը, որտեղ օգտագործվել էին մի քանի գիտական աղբյուրներ: Եվ խմբագրությունը, ըստ երեւույթին ցանկանալով շեշտել, որ այն գիտական հոդված չէ, այլ՝ լրագրողական, աստղանիշով ծանոթագրել էր, որ հեղինակը՝ Ջան Ուդուր Բիրյուրը, լրագրող է, ուրեմն, ինչ-որ չափով ազատ իր լրագրողական կարծիքը հայտնելու: Հոդվածը տպագրվել է 2005 թ. հունիսի 12-ին, բայց ոչ միայն չի կորցրել կարեւորությունը, այլև այս օրերին, երբ թուրք հասարակությունը փորձում է գտնել իր անցյալին եւ այդ անցյալում հայերի դերին վերաբերող մի շարք հարցերի պատասխաններ, ավելի է կարեւորվում: Կարծում ենք, որ «Մենք բոլորս հայ ենք» պաստառներով քայլող թուրքերի մի մասն իսկապես ծագումով հայ է, եւ վաղուց է հասունացել այդ մասին բարձրաձայն ասելու ժամանակը»:

Նույնը տե՛ս նաև «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2006, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 7:

«**Նոյան տապան**», շաբաթաթերթ, Երևան, 2007, օգոստոսի 3, № 12, էջ 5:

### **Երկրորդ բաժին (հարցազրույցներ)**

21. «Մեզ թավայի ծուգ իք» («Մեկ թավայի ձուկ ենք»), զրույցը վարեց Անի Ղարաբաղցյանը, «**Մենք մեր մասին**», հանդես, Երևան, 2007, № 2 (№ 10), էջ 20-23:

Դրդաստանում և Ղազախստանում բնակվող կրոնափոխ համշենահայերի մասին է:

22. «Պաղտասար աղբարը»՝ Տրապիզոնում, զրույցեց Ս. Վարդանյանը, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2007, հունվար-փետրվար, № 1-2, էջ 3:

2006 թ. նոյեմբերի 24-ին Տրապիզոնի Արվեստի թատրոնում (Sanat tiyatrosu, Մանաթ թիյաթրոսու) թուրքերեն բեմադրվել է Հ. Պարոնյանի երկը: Հարցազրույցն այն բեմադրող հայաստանցի բեմադրիչ Հրանտ Հակոբ-

յանի հետ է: Թերթում տպագրված հարցազրույցի լուսանկարը հրապարակվել է Տրապիզոնի Արվեստի թատրոնի տնօրեն Նեջաթի Ջենգինի՝ Տրապիզոնում թատերական կյանքի սկզբնավորման և հետագա պատմության մասին պատմող «Օսմանցուց մինչև մեր օրերը. թատրոնը Տրապիզոնում» թուրքերեն գրքի այն հատվածում (էջ 236), որտեղ խոսվում է թատրոնի 2006-2007 թթ. խաղաշրջանի և այդ ներկայացման մասին՝ տե՛ս **Necati Zengin**, Osmanlı'dan günümüze, Trabzon'da tiyatro. Trabzon Sanat Tiyatrosu yayınları № 3, Trabzon, 2009 (- 272), s. 236:

Նույն հարցազրույցը տե՛ս նաև՝ **«Ազգ»**, օրաթերթ, Երևան, 2007, մարտի 3, № 40:

«**Նոյյան տապան**», շաբաթաթերթ, Երևան, 2007, օգոստոսի 10, № 13, էջ 5:

23. «Պաղտասար աղբարը»՝ Տրապիզոնում, զրույցը վարեց Սերգեյ Վարդանյանը, **«Ազգ»**, օրաթերթ, Երևան, 2007, մարտի 3, № 40, էջ 6:

Հարցազրույցը Տրապիզոնի թատրոնում 2006 թ. նոյեմբերի 24-ին բեմադրությունն իրականացրած բեմադրիչ Հրանտ Հակոբյանի հետ է:

Տե՛ս նույնը նաև **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2007, հունվար-փետրվար, № 1-2, էջ 3:

«**Նոյյան տապան**», շաբաթաթերթ, Երևան, 2007, օգոստոսի 10, № 13, էջ 5:

24. «Պաղտասար աղբարը»՝ Տրապիզոնում, զրուցեց Սերգեյ Վարդանյանը, **«Նոյյան տապան»**, շաբաթաթերթ, Երևան, 2007, օգոստոսի 10, № 13, էջ 5:

Տես նույնը՝ **«Ազգ»** օրաթերթ, 2007, մարտի 3, № 40, էջ 6:

«**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2007, հունվար-փետրվար, № 1-2, էջ 3:

25. «Թուրքիայի Խոփայի շրջանում այսօր 25-30 հազար մահմեդական հայախոս համշենցի կա», հարցազրույց բանասեր, «Համշեն» հայրենակցական-բարեգործական ՀԿ փոխնախագահ և **«Ձայն համշենական»** ամսաթերթի գլխ. խմբագիր Սերգեյ Վարդանյանի հետ, հարցազրույցը՝ Վահե Սարուխանյանի, **«Հետք» (Hetq.am)** ինտերնետային թերթ, 23 ապրիլի, 2007 թ.:

26. «Մայրի՛կ, մենք հա՛յ ենք», զրուցեց Սերգեյ Վարդանյանը, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2007, մայիս-հունիս, № 5-6:

Հարցազրույցը Ստամբուլի Կետիկփաշա թաղամասի Հայ Ավետարանական եկեղեցու հովիվ, վերապատվելի Գրիգոր Աղաբալօղլուի հետ է:

Հարցազրույցի արտատպությունները տե՛ս «**Հանրապետական**», ամսագիր, 2007, № 9, էջ 11-14:

«**Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցի**», եռամսյա հանդես, Երևան, 2007, № 4(44), էջ 4, 5:

**Այլախոս և այլադավան հայեր**, հոդվածների ժողովածու, Երկրորդ լրացված հրատարակություն, Երևան, «Հայրենիք» ակումբ, 2008 (- 72 էջ), էջ 48-51:

27. Մայրի՛կ, մենք հա՛յ ենք, հարցազրույց Ստամբուլի Կետիկփաշա թաղամասի Հայ Ավետարանական եկեղեցու հովիվ, վերապատվելի Գրիգոր Աղաբալօղլուի հետ, զրուցեց Սերգեյ Վարդանյանը, «**Հանրապետական**», ամսագիր, Երևան, 2007, № 9 (51), էջ 11-14:

Տե՛ս նաև «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2007, № 5-6:

«**Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցի**», եռամսյա հանդես, Երևան, 2007, № 4, էջ 4, 5:

**Այլախոս և այլադավան հայեր**, հոդվածների ժողովածու, Երևան, 2008 (- 72 էջ), էջ 48-51:

28. Երեխաները բանահյուսություն են հավաքում, զրուցեց Ս. Վարդանյանը, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2007, հունվար-փետրվար, № 1-2, էջ 8:

Հարցազրույցը Սոչիի Լազարևսկի շրջանի Լոռ գյուղի դպրոցի հայկական բաժնի ուսմասվար Վարդուհի Բերուջանյանի հետ է:

29. Վրաստանում գործում է 150 հայկական դպրոց, զրուցեց Ս. Վարդանյանը, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2007, մարտ-ապրիլ, №3-4:

Հարցազրույցը Թբիլիսիի № 95 դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ռոզա Զոհրաբյանի հետ է:

30. Սուխումի Հայ Ավետարանական եկեղեցին, զրուցեց Ս. Վարդանյանը, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2007, մարտ-ապրիլ, № 3-4:

Հարցազրույցը Սուխումի Հայ Ավետարանական եկեղեցու հովիվ, վերապատվելի Միհրան Թորոսյանի հետ է:

Հոդվածն արտատպել է «**Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցի**» եռամսյա հանդեսը, Երևան, 2007, № 3 (43), էջ 11, 12:

31. Սոչիի Հայ Ավետարանական եկեղեցին, զրուցեց Ս. Վարդանյանը, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2007, մարտ-ապրիլ, № 3-4:

Հարցազրույցը Սոչիի Հայ Ավետարանական եկեղեցու հովիվ, վերապատվելի Սասուն Կարապետյանի հետ է:

Հոդվածն արտատպել է **«Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցի»** եռամսյա հանդեսը, Երևան, 2007, № 3(43), էջ 12, 13:

32. Հայերի բռնի մահմեդականացման մասին դասախոսություններ Լոս Անջելեսում, զրուցեց Սերգեյ Վարդանյանը, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2007, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 8:

Հարցազրույցը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի ավագ դասախոս, բ.գ.թ., թյուրքագետ Լուսինե Սահակյանի հետ է: Հարցազրույցի վերջում Լ. Սահակյանը «Ձայն համշենական» թերթին առնչվող մի հետաքրքիր դրվագ է պատմում. «Ասեմ, որ Գլենդեյլում ծանոթացա Ջավեն Խանճյանի հետ, որը «Ասպարեզ» թերթում տպագրել էր Արևմտյան Հայաստան կատարած իր ուխտագնացության նոթերը՝ «Քելե էրթանք մըր էրգիր» վերնագրով: Նա ասաց, որ Խոփա քաղաքում և Բորչքա ավանում հանդիպել և հայերենով զրուցել է կրոնափոխ համշենցիների հետ: Բորչքայում նա իր մոտ եղած «Ձայն համշենական» թերթի օրինակը, որը ձեռք էր բերել Երևանում կայացած Հայրենիք – Ափյուռք համաժողովի ժամանակ, ցույց է տվել համշենցի նպարավաճառ Ռամատանին, որը ցանկացել է թերթն իր հարազատների և ընկերների համար պատճենահանել: Պարոն Խանճյանը թերթը նվիրել է նրան, ինչը համշենցի երիտասարդին մեծ ուրախություն է պատճառել: Ես Ձեր համար հետս բերել եմ այդ մասին պատմող «Ասպարեզի» մարտի 31-ի համարը»:

Տե՛ս նաև **«Նոյան տապան»**, շաբաթաթերթ, Երևան, 2007, հուլիսի 6, № 8, էջ 5:

33. Հայերի բռնի մահմեդականացման մասին դասախոսություններ Լոս Անջելեսում, հարցազրույցը վարեց Սերգեյ Վարդանյանը, **«Նոյան տապան»**, շաբաթաթերթ, Երևան, 2007, հուլիսի 6, № 8 (682), էջ 5:

Հարցազրույցը բ.գ.թ. Լուսինե Սահակյանի հետ է, որը 2007 թ. ապրիլին այդ թեմայով դասախոսություններ է կարդացել Լոս Անջելեսի հայության համար:

Նույնը տե՛ս **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2007, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 8:

34. Արխագիա եմ վերադառնում սպագայի ծրագրերով, զրուցեց Սերգեյ Վարդանյանը, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2007, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10:

Հարցազրույցը Հայ Առաքելական Եկեղեցու Հարավային Ռուսաստանի թեմի Արխազիայի հովվության հովիվ, հոգեշնորհ Տեր Տարոն արեղա Ղուլիկյանի հետ է:

35. Ճուլիա Յակոբեան, Համշենահայեր. պայքար յանուն ինքնութեան եւ ճանաչման, «**Ազգակ**», օրաթերթ, Բեյրութ, 2007, մարտ 16, թիւ 11, էջ 5:

«Արմենիա նաուի» թղթակցի հարցազրույցը քրիստոնյա և իսլամ համշենահայերի շրջաններում Ս. Վարդանյանի կատարած ուսումնասիրությունների և նրա խմբագրած «**Ձայն համշենական**» թերթի մասին է: Տպագրվել է նաև Ղրղզստանում մոլլա Հեմդիի հետ Ս. Վարդանյանի լուսանկարը: Հավանաբար հարցազրույցը տպագրել են սփյուռքի այլ թերթեր ևս:

### Երրորդ բաժին

36. Վարդանյան Սերգեյ Գագիկի // **Ով ով է, հայեր, կենսագրական հանրագիտարան**, երկու հատորով, հ. 2, ՀՀ Գիտությունների Ազգային ակադեմիա, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2007 (- 744 էջ), էջ 544:

Ս. Վարդանյանի կենսագրության, հրատարակած գրքերի և պարզևների մասին է:

37. Վարդանյան Սերգեյ Գագիկի // **Լևոն Սողոմոնյան, Արծվանիստ Ձեյթուն**, Երևան, «Գասպրինտ» հրատ., 2007 (- 672 էջ), էջ 618, 619:

Գիրքը նվիրված է Երևանի Ձեյթուն թաղամասի հիմնադրման 60-ամյակին, ունի հանրագիտարանային բնույթ, ներկայացված են Մեծ եղեռնից փրկված պատմական Ձեյթունի բնակիչների հուշերը, նույնանուն թաղամասի հիմնադրման պատմությունը, տարբեր հաստատությունները, գոհված ազատամարտիկների, ճանաչված գիտնականների և արվեստագետների, մտավորականների, այդ թվում՝ Սերգեյ Վարդանյանի կենսագրությունները:

38. Ա. Յարութինեան, Արխազահայութիւնը հնարաւորինս աշխուժ է Արխազիայի կեանքում: Արխազիայում հայկական միայն մի եկեղեցի-մատուռ կայ, «**Ազգակ**», օրաթերթ, Պեյրութ, 2007, Յունուար 15, թիւ 257, էջ 6:

2006 թ. դեկտեմբերի 14-ին Երևանի «Ուրբաթ» մամուլի ակումբում տեղի ունեցած ասուլիսի մասին է, որին մասնակցել են «Արխազիայի հերոս, Խորհրդարանի պատգամաւոր, ընկերային քաղաքականութեան յանձնաժողովի նախագահ, Արխազիայի հայ համայնքի համանախագահ Գալուստ Տրապիզոնեանը», «Արխազիայի հայ համայնքի հոգեւոր հովիւ Տա-

րօն արեղայ Ղուլիկեանը» և ««Ձայն համշէնական» թերթի խմբագիր, «Համշէն» հայրենակցական բարեգործական միութեան փոխ նախագահ Սերգէյ Վարդանեանը», որի «տեղեկացմամբ Արխագիայի հայերի մեծ մասը համշէնահայեր են:

Նրանք [Երևանում] ստեղծել են հասարակական կազմակերպութիւն, որն արդէն գործում է 14 տարի: Վարդանեանն ընդգծեց, որ Արխագիայում 37 հայկական դպրոցների գոյութիւնը բնաւ էլ լաւ վիճակի մասին չի խօսում, քանի որ դրանք քառակի անելի են եղել:

Արտաստպվել է «Ազգ» օրաթերթից՝ 2006, դեկտեմբերի 15, № 240, էջ 3:

Նույն թեմայով տե՛ս նաև «Իմ իրավունքը», «Երկիր», «Հայոց աշխարհ» թերթերի 2006 թ. դեկտեմբերի 15-ի համարները:

39. Sergio Kniasian, Deportados al Asia Central en La era staliniana, «Ararat», Periódico, Argentina, Buenos Aires, 2007, 20 de Junio.

Քուենտո Այրեսում հրատարակվող «Ararat» («Արարատ») իսպաներեն պարբերաթերթում տպագրված Ս. Կնյազյանի հոդվածը պատմում է Կենտրոնական Ասիա արտրված համշէնահայերի շրջանում Ս. Վարդանյանի ուսումնասիրությունների մասին:

40. Մագդալինա Չատիկյան, Փրկված հեքիաթներ, «Գոլոս Արմենիի», հայերեն շաբաթաթերթ, Երևան, 2007, հունիսի 13-19, № 16:

Դպրոցականների բանահավաքչական շարժման նախաձեռնող Ս. Վարդանյանի «Հրեղեն ձին» և «Թագավորի երագները» ժողովածուներից ընտրությամբ անգլերեն թարգմանված «The salvaged Tales» (2007) (Փրկված հեքիաթներ) գրքի մասին է:

Տե՛ս նույնի ռուսերենը «Голос Армении», 2007, 7 июня, № 62.

41. М[агдалина] Затикян, Спасённые сказки, «Голос Армении», газета, издаётся трижды в неделю, Ереван, 2007, 7 июня, № 62.

Տե՛ս նույնի հայերենը՝ «Գոլոս Արմենիի», 2007, հունիսի 13-19, № 16.

42. Роза Егиазарян, Всякое бывало, «Собеседник Армении», еженедельная газета, Ереван, 2007, 5 марта-5 апреля, № 12:

Արձակագիր, թարգմանիչ և լրագրող Ռոզա Եղիազարյանը պատմում է իր կամ ծանոթների, այդ թվում՝ Ս. Վարդանյանի հետ պատահած ծիծաղաշարժ դեպքերի մասին:

43. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, անավարտ վեպ, Միջանցիկ ժամանակ, գիրք երրորդ, Երևան, «Վան Արյան» հրատ., 2007 (-348 էջ):

Վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է: Տե՛ս գլուխ առաջին, «Շարունակվող սկիզբ», էջ 9: Տե՛ս նաև՝ «Առավոտ», օրաթերթ, Երևան, 2006, մա-

յիսի 27, № 96, էջ 8, 9: Գլուխ քսանիններորդ, «Արարատյան դաշտի առավու-  
տը», էջ 340, 341, 343: Տե՛ս նաև՝ «Առավոտ», օրաթերթ, Երևան, 2006, դեկ-  
տեմբերի 9, № 234, էջ 4, 5:

44. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, անավարտ վեպ, Թափան-  
ցիկ ժամանակ, գիրք չորրորդ, Երևան, «Վան Արյան» հրատ., 2007 (-292 էջ):  
Տե՛ս և Գլուխ տասնութերորդ, «Քրիստավորի ռեկորդը՝ վտանգի տակ», էջ  
222: Տե՛ս նաև՝ «Առավոտ», օրաթերթ, Երևան, 2007, ապրիլի 28, № 78, էջ 8:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վար-  
դանյանն է:

45. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, վեպ, գիրք հինգերորդ, զլուխ յոթերորդ, «Օնլայն Ծաղկաձորից», «Առավոտ», օրաթերթ, Երևան,  
2007, հուլիսի 14, № 133, էջ 4, 5:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վար-  
դանյանն է:

Տե՛ս նաև՝ Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, անավարտ վեպ,  
Հպանցիկ ժամանակ, գիրք հինգերորդ, Երևան, «Վան Արյան» հրատ., 2011  
(- 340 էջ): Տե՛ս և Գլուխ յոթերորդ, «Օնլայն Ծաղկաձորից», էջ 82, 83, 84:

46. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, վեպ, գիրք հինգերորդ, զլուխ տասներորդ, «Սեյրան Մալունցյան», «Առավոտ», օրաթերթ, Երևան,  
2007, օգոստոսի 4, № 148, էջ 4:

Տե՛ս նաև՝ Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, անավարտ վեպ,  
Հպանցիկ ժամանակ, գիրք հինգերորդ, Երևան, «Վան Արյան» հրատ., 2011  
(340 էջ), էջ 115:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վար-  
դանյանն է:

47. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, վեպ, գիրք հինգերորդ, զլուխ տասնհինգերորդ, «Առանց միջնորդի», «Առավոտ», օրաթերթ, Երևան,  
2007, սեպտեմբերի 8, № 173, էջ 8, 9:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վար-  
դանյանն է:

Տե՛ս նաև՝ Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, անավարտ վեպ,  
Հպանցիկ ժամանակ, գիրք հինգերորդ, Երևան, «Վան Արյան» հրատ., 2011  
(340 էջ), զլուխ տասնհինգերորդ, «Առանց միջնորդի», էջ 184:

48. Хемшилы тоже армяне, подготовила Роза Егиазарян, «Новое время»,  
газета, издаётся трижды в неделю, Ереван, 2007, 10 февраля, № 1441, с. 7.

Ինչպես նշված է հոդվածի սկզբում, այն գրող, թարգմանիչ և լրագրող Ռոզա Եղիազարյանը պատրաստել է «**Ձայն համշենական**» ամսաթերթի հրապարակումների հիման վրա: Ըստ երևույթին, դրանք են՝ Ардаваст Тулумджян, Хопа-хемшилы и Баш-хемшилы: материалы экспедиции, «**Ձայն համշենական**», 2006, № 1-2:

Նաս Ս. Վարդանյանի հետ հարցազրույցը՝ Амшенцы на дорогах мира, беседа вела М. Затикян, «**Голос Армении**», 2006, 11 ноября, № 120:

Амшенцы на дорогах мира, беседа вела М. Затикян, «**Ձայն համշենական**», 2006, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12:

49. Hovhann H. Simonian, Hemshin from Islamicization to the end of the nineteenth century // **The Hemshin: History, Society and Identity in the Highlands of Northeast Turkey**, edited by Hovann H. Simonian, London and New York, 2007 (- 418 p.), pp. 52-99.

Տարբեր ազգերի 11 հեղինակների Համշենին և համշենահայությանը նվիրված գիտական հոդվածների ժողովածու է: Ս. Վարդանյանը հիշատակվում է հետևյալ էջերում և ծանոթագրություններում՝ էջ XXV, էջ 71 և 95 № 121, էջ 81 և 98 № 180: էջ 71-ի և 95-ի № 121 հղումն արված է Ս. Վարդանյանի «Համշենցի մուսուլման հայերի ուսումնասիրության պատմությունից» («**Իրան-Նամե**», հանդես, Երևան, 1998, № 1-2-3, էջ 2-11) հոդվածի՝ Վենետիկի Մխիթարյան միաբան Հ. Պողոս վրդ. Մեհերյանի 1776 թ. Համշենի Խևակ գյուղ այցի և կրոնավորի համշենցիների մասին պատմող հատվածին:

էջ 81-ի և 98-ի 180-րդ հղումի թարգմանությունը. «Տե՛ս առաջիկա The Hemshin-ի երկրորդ հատորի Սերգեյ Վարդանյանի և Իգոր Կուզնեցովի գրած գլուխները»: Երկրորդ հատորը չի տպագրվել:

50. Hovhann H. Simonian, Interactions and mutual perceptions during the 1878-1923 period: Muslims of Armenian background and Armenians in the Pontos // **The Hemshin: History, Society and Identity in the Highlands of Northeast Turkey**, edited by Hovann H. Simonian, London and New York, 2007 (- 418 p.), pp. 124-137.

Ս. Վարդանյանը հիշատակվում է հետևյալ էջերում և ծանոթագրություններում՝ էջ 124 և 135 № 1, էջ 132 և 137 № 35:

էջ 124-ի և 135-ի № 1 հղումի թարգմ.՝ «Ռուսական և խորհրդային իշխանության տակ գտնվող հեմշինների մասին տե՛ս առաջիկա The Hemshin-ի երկրորդ հատորի Սերգեյ Վարդանյանի և Իգոր Կուզնեցովի հեղինակած գլուխներում»: Երկրորդ հատորը լույս չի տեսել:

Էջ 132-ի և 137-ի № 35 հղումի թարգմ.՝ «Տե՛ս առաջիկայում տպագրվելիք The Hemshin-ի երկրորդ հատորի Սերգեյ Վարդանյանի հեղինակած գլուխը»: Երկրորդ հատորը լույս չի տեսել:

51. Hagop Hachikian, Notes on the historical geography and present territorial distribution of the Hemshinli // **The Hemshin: History, Society and Identity in the Highlands of Northeast Turkey**, edited by Hovann H. Simonian, London and New York, 2007 (- 418 p.), pp. 141-190.

Ս. Վարդանյանը հիշատակվում է՝ էջ 179 № 22: Հեղինակը 144-րդ էջում հակիրճ անդրադառնում է 1940-ական թթ. Վրացական ԽՍՀ-ից հեմշինլիների Կենտրոնական Ասիա արտրին և 22-րդ հղման մեջ (էջ 179) գրում է, որ նախկին Խորհրդային Միության հեմշինլիների մասին տե՛ս Սերգեյ Վարդանյանի և Իգոր Կուզնեցովի հոդվածները The Hemshin-ի առաջիկա երկրորդ հատորում: Երկրորդ հատորը չի տպագրվել:

52. Hagop Hachikian, Some particulars of Hemshin identity // **The Hemshin: History, Society and Identity in the Highlands of Northeast Turkey**, edited by Hovann H. Simonian, London and New York, 2007 (- 418 p.), pp. 305-319.

Ս. Վարդանյանը հիշատակվում է՝ էջ 306, էջ 316 № 7: 306-րդ էջում հեղինակը գրում է, որ ինչպես նշում են Կուզնեցովը և Վարդանյանը «Հոպա հեմշինլիների մեջ կա երկու խումբ՝ արդելեցիների և թուրքնանցիների», այնուհետև «Հոպայի երկու ենթաբաբառների մասին» հղում է անում (էջ 316 № 7) Ս. Վարդանյանի կազմած և խմբագրած «Չայն համշենական» ժողովածուի 3-րդ հատորի (1989) 207-րդ էջին:

53. Զաւէն Խանճեան, Այս տունը քու՛կդ է թե իմս, Ուխտագնացութիւն դէպի Արեւմտահայաստան, Կիլիկիա եւ Պոլիս, օրագրի էջեր, Լոս Անճելըս, 2007 (-266 էջ):

Հեղինակը Թուրքիայում շրջագայելիս Արդվինի նահանգի Բորչքա քաղաքում ծանոթանում է Ռամատան անունով մի կրոնափոխ համշենցու հետ և նրան նվիրում «Չայն համշենական» թերթի իր մոտ եղած օրինակը. «Հայաստան-Սփիւռք երրորդ համաժողովի ընթացքին դահլիճէն դուրս կրպակներէն մէկուն մէջ հանդիպած էի «Համշենական Չայն» շաբաթաթերթին, որու ընթերցումով իմացած թէ համշենցիներու ներկայութիւնը նաև տարածուած է Սեւ Օովու հիւսիս-արեւելեան ասիերը: Երբ Ռամատանին ցոյց տուի այդ երկլեզու, ռուսերէն-հայերէն թերթը, ուզեց պատճենագրելով պահել զայն: Հարագատ օրինակը տուի իրեն՝ գոհացնելու իր հետաքրքրութիւնը» (էջ 196, 197): Թերթը հիշատակվում է նաև գրքի 205, 206 էջերում:

Տե՛ս նաև Զաւէն Խանճեան, Ուխտագնացութիւն դէպի պատմական Հայաստան-օրագրի էջեր, Քելէ էրթանք մըր էրգիր, Ժ. Կարս-Հոքա-Ռիզէ, Երեքշաբթի, հոկտեմբեր 3, 2006, (շարունակելի), «Ասպարէզ», օրաթերթ, Լոս Անջելէս, 2007, մարտ 31 (թիւ 12.926), էջ 13:

54. Լուսինէ Սահակյան, Հայկական երգերը՝ բռնի կրոնափոխված համշէնցիների ինքնության հիշողություն և դրսևորում (շարունակելի), «Ձայն համշէնական», ամսաթերթ, Երևան, 2007, հուլիս-օգոստոս, № 7-8 (36-37), էջ 6, 7:

Բ. գ. թ., թուրքագետ Լ. Սահակյանն անդրադառնում է համշէնահայերի պատմությանը, բարբառին: Հոդվածում հիշատակվում են նաև Ս. Վարդանյանի ուսումնասիրությունները, էջ 7-ում և 21-րդ և 35-րդ ծանոթագրություններում:

55. Լուսինէ Սահակյան, Հայկական երգերը՝ բռնի կրոնափոխված համշէնցիների ինքնության հիշողություն և դրսևորում (սկիզբը՝ նախորդ համարում) «Ձայն համշէնական», ամսաթերթ, Երևան, 2007, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10 (38-39), էջ 6, 7:

Բ.գ.թ. Լ. Սահակյանի հոդվածում ներկայացվել են նաև Ստամբուլի համշէնցիների «Վովա» երաժշտախմբի թողարկած խտասկավառակի երգերը բարբառով և գրական արևելահայերեն թարգմանությամբ, մասնավորապես նշվում է. «Թարգմանության ընթացքում մի շարք բարբառային բառերի ճշտումների և արժեքավոր խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում «Ձայն համշէնական» թերթի գլխավոր խմբագիր, բանասեր-ազգագրագետ Ս. Վարդանյանին» (էջ 6):

Ս. Վարդանյանը կամ համշէնցիների մասին նրա ուսումնասիրությունները հիշատակվում են 6-րդ և 7-րդ էջերում, նաև № 39, 40, 51, 68, 72 ծանոթագրություններում:

Տե՛ս նույնը՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. V, Երևան, 2008, էջ 243-260:

56. Իգոր Կուզնեցով, Համշէնահայերի եւ հեմշիլների մշակոյթում պահպանուած պոնտական ժառանգութիւնը (հմայութիւն ընդդէմ երաշտի) // **Համշէն եւ համշէնահայութիւն** (գիտաժողովի նիւթեր), ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Երեւան-Պէրուք, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 2007 (- 296 էջ), էջ 181-197:

Կրասնոդարի Կուբանի համալսարանի պրոֆեսոր, ազգագրագետ Ի. Կուզնեցովն իր զեկուցման մեջ հիշատակում է Ս. Վարդանյանին. «Ուշագրաւ է, որ հայալեզու այս տեքստերում հայերէն սովորական «Աստուած» բառը բոլորովին չի կիրառուում, միւս կողմից՝ Ս. Վարդանեանի խօսքերով եւ իմ անձնական դիտարկումներով մուսուլման-հեմձիլները նամազ կատարելիս աստծուն հենց հայերէն բառով են յիշատակում: Այս ամէնը շատ նման է սրբազան կերպարների անունների տաբույսցման տարածուած երեւոյթին (տոյնն է յուդայիզմի մէջ)» (էջ 192, 193): Տե՛ս նաև թուրքերէն հրատարակութիւնը:

57. Igor Kuznetsov, Hemşin Ermenileri ile Hemşillerin Kültüründe Pontus mirası (Kurağa Karşı Büyüculük) // **Hemşin ve Hemşinli Ermeniler (Konferans makalaleri)**, Ermenistan Cumhuriyeti Bilimler ulusal Akademisi Tarih Enstitüsü, Yerevan, Publish house “NAME”, 2007 (- 306 s.), s. 185-200.

Տե՛ս նախորդ նկարագրությունը: Ս. Վարդանյանի մասին թուրքերէնում՝ տե՛ս էջ 197:

Տե՛ս նաև Şerif Yılmaz, Hemşinlilerin ve Hemşinli Ermenilerin (Hayların) Kökeni, Ankara, Payda Yayıncılık, 2012 (- 198 s.): Շերիֆ Յըլմազն իր գրքում հիշատակում է Ս. Վարդանյանին (էջ 145)՝ հղում անելով Ի. Կուզնեցովի թուրքերէն հոդվածին:

58. Արմեն Այվազյան, Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը Հայկական հարցի համատեքստում, Երևան, «Արարատ» ռազմավարական կենտրոն, 2007 (- 24 էջ):

2007 թ. դեկտեմբերի 19-20-ին ՀՀ Ազգային ժողովում կայացած «Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ եւ հեռանկարներ» թեմայով խորհրդարանական լսումների ժամանակ քաղաքական գիտ. դոկտոր Ա. Այվազյանի կարդացած զեկուցումից հատված. «Մի քանի տարի անց նույն Թալեաթի հրամանով հայ ժողովուրդը բնաջնջվեց իր բնիկ հայրենիքում, իսկ օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորներ Գրիգոր Զոհրապիւն, Վարդգես Սերենկյուլյանին և Նազարեթ Տաղավարյանին վարագորեն սպանեց երկար տարիներ Լոնդոնում ապրած և մի քանի լեզուների գիտակ, արիստոկրատական հագուկապ ու շարժումն ունեցող մի ստահակ» (էջ 14, 15): Հղումն արված է Ս. Վարդանյանի «Հայաստանի մայրաքաղաքները» (Երևան, 1995, էջ 40) գրքին:

59. Պատմում է ՀՆՄ անդամ, քանդակագործ Տարիել Հակոբյանը, Ուխտագնացություն երկիր դրախտավայր..., «**Իրավունք**», Հետաքննություն, թերթ, Երևան, 2007, սեպտեմբերի 13, թիվ 34, էջ 7:

Քանդակագործ, պրոֆեսոր Տարիել Հակոբյանը (ծնվ. 1941) մտավորականների խմբով 2007 թ. հուլիսին Արևմտյան Հայաստան ուխտագնացության մասին իր պատմությունը սկսում է այսպես. «Էրզիր ուղևորվող մեր խմբում էին հնէաբաններ, պատմաբաններ, իրավագետներ, մասնավորապես՝ «Հայաստանի մայրաքաղաքները» գրքի հեղինակ Սերգեյ Վարդանյանը, կենսաֆիզիկոս Ծովակ Ավագյանը, տոհմիկ սասունցի Ռաֆայել Սահակյանը՝ Արմավիրից, աշնակցիներ, օպերատոր և ռեժիսոր Ռադիկ Շառոյանը յուր տիկնոջ հետ և այլք»:

Այս ուխտագնացության մասին տե՛ս նաև գրող և հրապարակախոս Ռաֆայել Սահակյանի (ծնվ. 1936) «Էրզիրը տեսա հորս աչքերով» հոդվածը, որը տպագրվել է իր խմբագրած «Հայրենական» թերթում (2009, օգոստոսի 4, թիվ 27-28, էջ 3, 4) և նույն վերնագրով գիրքը, Երևան, Լուսակն, 2011 (- 472 էջ + 16 էջ գունավոր լուսանկարներ):

60. Լ. Ս. Սահակյան, Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, պատասխանատու խմբագիրներ՝ Բանասեր-ագագրագետ Ս. Գ. Վարդանյան [և երեք հոգի], Երևան, Լուսակն, 2007 (- 308 էջ + վիճակագրություններ + քարտեզներ և լուսանկարների ներդիրներ), էջ 129, № 263 հղում:

Գրքի 3-րդ էջում հեղինակը գրում է. «Շնորհակալություն բանասեր-ագագրագետ Սերգեյ Վարդանյանին... օգտակար խորհուրդների համար»:  
Հղում է արվել Ս. Վարդանյանի «Կարևոր սկզբնաղբյուր մահմեդականացված հայերի մասին», «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2004, № 3:

2008

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Արման Կոթիկյանը՝ Մեծ Եղեռնի տարեգիր, «Դրօշակ», ամսագիր, Երևան, 2008, ապրիլ, № 4 (1595), էջ 19-25:

Տպագրվել են նաև ապագա նշանավոր դերասան Արման (Առաքել) Կոթիկյանի՝ Մեծ եղեռնի ականատեսներից գրառած 5 պատմությունները, որոնք հրատարակվել են 1917 թ.:

2. Կրոնափոխ համշենահայերի ուսումնասիրման պատմությունից, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի «Տեղեկագիր», հանդես, Երևան, 2008, № 22, էջ 20-44:

3. Интеллигент и политический деятель, «Դրօշակ» (ռուսերեն), приложение к № 1 (1593), январь, 2008, с. 41.

Հնագետ, մտավորական, քաղաքական գործիչ Վահան Հովհաննիսյանի մասին է: Հռովաժի ռուսերեն թարգմանության մեջ առաջին նախադասությունը տպագրվել է «1980 թվականն էր», այնինչ բնագրում գրված էր «1980-ական թթ.»:

4. Դեպի աղբյուրը լույսին. Վան, «**Եթեր**», շաբաթաթերթ, Երևան, 2008, հունիսի 26, № 26, էջ 22:

Հատված «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքից:

5. Դեպի աղբյուրը լույսին. Արմավիր, «**Եթեր**», 2008, հուլիսի 31, № 31, էջ 22:

Հատված «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքից:

6. Դեպի աղբյուրը լույսին. Երվանդաշատ, «**Եթեր**», 2008, օգոստոսի 28, № 35, էջ 22:

Հատված «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքից:

7. Դեպի աղբյուրը լույսին. Արտաշատ, «**Եթեր**», 2008, նոյեմբերի 25, № 39, էջ 22:

Հատված «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքից:

8. Դեպի աղբյուրը լույսին. Տիգրանակերտ, «**Եթեր**», 2008, հոկտեմբերի 9, № 41, էջ 22:

Հատված «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքից:

9. Դեպի աղբյուրը լույսին. Վաղարշապատ, «**Եթեր**», 2008, նոյեմբերի 20, № 47, էջ 22:

Հատված «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքից:

10. Դեպի աղբյուրը լույսին. Դվին, «**Եթեր**», շաբաթաթերթ, Երևան, 2008, դեկտեմբերի 18, № 51, էջ 22:

Հատված «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքից:

11. Երգահան Նիկոլ Գալանդերյանը՝ Արխազիայում, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2008, հունվար-մարտ, № 1-3:

Ճանաչված երգահան Նիկոլ Գալանդերյանի 1910-1911 թթ. Արխազիայի Օբերելդա գյուղի հայկական դպրոցում երգեցողության ուսուցիչ աշխատելու մասին է:

12. Նոր ամսագիր՝ Կրասնոդարում, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2008, հունվար-մարտ, № 1-3:

Կրասնոդար քաղաքում 2007 թ. հիմնադրված Հայկական մշակութային կենտրոնի հրատարակած «**Хачкар**» (Խաչքար) ռուսերեն ամսագրի մասին է:

13. Արամ Հակոբյան՝ Կարեն, «Չայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2008, հունվար-մարտ, № 1-3:

Բոստոնի «Հայրենիք» հանդեսի 1930 թ. № 2-ից արտատպելով «Արևմտահայ զաղուր» մը Կովկասի մէջ» հոդվածը, համառոտ ներկայացվել է՝ ով է հեղինակը՝ Կարենը:

14. [Նախաբան], «Չայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2008, հունվար-մարտ, № 1-3:

Հայ նշանավոր ազգագրագետ և բանահավաք Սարգիս Հայկունու (1838-1908) Սև գետի՝ Սյուրմենեի (Կարա-դերե) կրոնափոխ համշենցիներից 1878 թ. գրառած բանարվեստի չափածո նմուշները «Արարատ» ամսագրից (1895) արտատպելու առթիվ համառոտ նախաբան է:

15. Судьба одного человека есть судьба народа, «Չայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2008, ապրիլ-հունիս, № 4-6:

Հոդվածը նվիրված է Երկրորդ համաշխարհային պատերազմին Կրասնոդարի երկրամասի և Աբխազիայի հայության մասնակցությանը և Խորհրդային Միության 13 հայ հերոսներին:

16. Մեկ երգի հինգ տարբերակ, «Չայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2008, հուլիս-օգոստոս, № 7-8:

Ներկայացված են 1984 թ. Ղրղզստանում առաջին անգամ լսած «Ասա՛, բիձի՛ գ, ասա՛» երգի ևս չորս տարբերակներ՝ «Ասա՛, օնդէ՛ր, ասա՛» (երկու տարբերակ), «Ասա՛, սեվդա՛մ», «Լուս եղ, օնցար»՝ զուգահեռ գրական հայերեն թարգմանություններով:

17. Բռնի կրոնափոխված համշենահայերի ուսումնասիրման պատմությունից, «Չայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2008, № 9-10, 11-12 (շարունակելի):

Գիտական աղբյուրների հիման վրա ներկայացվում է համշենահայերի բռնի կրոնափոխության պատմությունը:

Շարունակությունը 2009 թ. № 1-2, 5-6, 7-8, 11-12 համարներում է:

18. Գյոքիան Բիրբենի հայերեն երգերը, «Չայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2008, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12:

Ներկայացվում են Թուրքիայում բնակվող համշենցի երգիչ Գյոքիան Բիրբենի «Ասա՛, սեվդա՛մ», «Թուն՝ սարի, մազեղ՝ սարի», «Հավազ ալի մերալեց» երգերը և դրանց գրական արևելահայերեն Ս. Վարդանյանի թարգմանությունները:

### Երկրորդ բաժին (հարցազրույցներ)

19. Մայրիկ, մենք հա՛յ ենք... , զրուցեց Սերգեյ Վարդանյանը // **Այլախոս և այլադավան հայեր**, հոդվածների ժողովածու, երկրորդ լրացված հրատարակություն, հրատարակիչ՝ «Հայրենիք» ակումբ, Երևան, 2008 (- 72 էջ), էջ 48-51:

Արտատպված է «**Հանրապետական**» ամսագրի 2007 թ. № 9-ից:

Հարցազրույց Ստամբուլի Կետիկփաշա թաղամասի Հայ Ավետարանական եկեղեցու հովիվ, վերապատվելի Գրիգոր Աղաբալօղլուի հետ:

Տպագրվել է նաև «**Չայն համշենական**» ամսաթերթում, Երևան, 2007, № 5-6-ում և «**Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցի**» եռամսյա հանդեսում, Երևան, 2007, № 4, էջ 4, 5:

20. Հայապահպան առաքելությամբ, զրուցեց Ս. Վարդանյանը, «**Չայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2008, ապրիլ-հունիս, № 4-6:

Հարցազրույցը Աբխազիայի Յաշտխուա գյուղի Բաղրամյանցիների անվան № 2 հայկական միջն. դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ Ռոբերտ Ալվրցյանի հետ է:

### Երրորդ բաժին

21. Adnan Genç, Hemsinlilerin Sesi Gazetesi Yayımcısı Vartanyan: Hemsin kültürü için gazete yapıyorum, “**Bir Gün**”, gazete, Istanbul, 2008, 24 Ağustos, № 1592, s. 15.

Լրագրող Ադնան Գենչը Ստամբուլում հրատարակվող նշանավոր “**Bir Gün**” (Բիր գյուն, թարգմ.՝ Մեկ օր) թուրքերեն ամենօրյա թերթում տպագրած «Համշենցիների Չայն թերթի հրատարակիչ Վարդանյան. Համշենի մշակույթի համար թերթ եմ պատրաստում» հոդվածում պատմում է «Չայն համշենական» թերթի, նրա խմբագրի, տարբեր երկրներում սփռված համշենահայերին նվիրված 2008 թ. երևանյան գիտաժողովի մասին: Տպագրվել է Լուսինե Սահակյանի և Ս. Վարդանյանի լուսանկարը:

Հոդվածի տարբերակը տպագրվել է նաև ստամբուլաբնակ համշենցիների “**Gor**” հանդեսում, տե՛ս Adnan Genç, Ermenistan’da iki dilli etnik bir yayım organı var, “Bu nedenle Hemsinlilerin Sesi gazetesini kurmaya karar verdim. Dünyanın her tarafından Hemsinliler’den haber geliyor ve bunları ben yayımlıyorum”, “**Gor**”, Hemsin Kültür, Dil, Tarih Dergisi, Türkçe-Hemsince, Istanbul, 2015, sayı 2, s. 58, 59. (Թարգմանություն՝ Ադնան Գենչ, Հայաստանում երկլեզվյան էթնիկ մի հրատարակչական մարմին կա, «Այս պատճառով որոշեցի Համշենցիների Չայն թերթը հիմնել: Աշխարհի ամեն կողմից համշենցիներից լուրեր են գալիս և ես դրանք հրատարակում եմ», «**Գոր**»,

Համշենի մշակույթի, լեզվի, պատմության հանդես, թուրքերեն-համշեներեն), Ստամբուլ, 2015, թիվ 2, էջ 58, 59: Տպագրվել է Ադնան Գենչի լուսանկարը Ս. Վարդանյանի և Լ. Սահակյանի հետ:

22. Игорь Кузнецов, Хемшилы Краснодарского края в 1980-1990-е гг. // Понтийско-кавказские исследования: лекции, статьи. Краснодар, Кубанский гос. университет. 2008 (- 590 с.), с. 224, 228, 230, 247, 249.

Կրասնոդար քաղաքի Կուբանի պետական համալսարանի դասախոս, պ.գ.թ., դոցենտ Ի. Կուզնեցովի հոդվածների ժողովածուում քանիցս հիշատակվում է Կենտրոնական Սսիայի և Կրասնոդարի երկրամասի կրոնափոխ համշենահայերի՝ իւեմշիլների շրջանում Ս. Վարդանյանի գիտական գործունեության մասին, տե՛ս հոդվածից հատվածներ. «Несколько образованных молодых людей из числа хемшилов Кыргызстана предпринимали даже попытку по созданию особого алфавита для хемшилского «языка», не подозревая, что это лишь диалектная форма армянского (личная информация С. Вартапяна)». (с. 224). «Хемшилы свободно употребляют в своей речи армянские слова խաչ «крест» и աստուած «бог». Но первый термин является привычным обозначением для христианского креста также во всех тюркских языках и диалектах региона (тур. haç <арм. խաչ и др.). В отношении второго высказывалось мнение о том, что хемшилы вместо обычного для мусульман allah именуют объект своих молений «по-христиански» - աստուած (личная информация С. Вартапяна)». (с. 227, 228). Տե՛ս նաև «История изучения Понта (Лекция 2)» (с. 496-514), էջ 496, 498, նաև 587:

23. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, վեպ, գիրք վեցերորդ, գլուխ հինգերորդ, «Ակամա ընթերցողներ», «Առավոտ», օրաթերթ, Երևան, 2008, հունվարի 19, № 10, էջ 8, 9:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է:

24. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, վեպ, գիրք յոթերորդ, գլուխ իններորդ, «Կիսովի», «Առավոտ», օրաթերթ, Երևան, 2008, նոյեմբերի 8, № 206, էջ 8, 9:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է:

25. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, վեպ, գիրք յոթերորդ, գլուխ տասներորդ, «Արտույտը», «Առավոտ», օրաթերթ, Երևան, 2008, նոյեմբերի 15, № 211, էջ 8, 9:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է:

26. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, վեպ, գիրք յոթերորդ, գլուխ տասնմեկերորդ, «Ապրիլ և հիշիր», «Առավոտ», օրաթերթ, Երևան, 2008, նոյեմբերի 22, № 216, էջ 8, 9:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է:

27. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, վեպ, գիրք յոթերորդ, գլուխ տասնվեցերորդ, «Ծուռ հայելիներ», «Առավոտ», օրաթերթ, Երևան, 2008, դեկտեմբերի 27, № 241, էջ 8, 9:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է:

28. Ռուբեն Մելքոնյան, Համշենին և համշենահայությանը նվիրված միջազգային գիտաժողով, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2008, հուլիս-օգոստոս, № 7-8:

Բ.գ.թ. Ռ. Մելքոնյանի հոդվածը 2008 թ. հուլիսի 23-ին ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ու Հայրենադարձության և հիմնավորման «Երկիր» միության նախաձեռնությամբ Երևանի «Կոնգրես» հյուրանոցում տեղի ունեցած «Համշեն և համշենահայեր. պատմություն և մշակույթ» խորագրով միջազգային գիտաժողովի մասին է. «Երկար տարիներ համշենահայության խնդիրներով զբաղվող բանասեր, «Ձայն համշենական» թերթի գլխավոր խմբագիր, «Համշեն» հայրենակցական միության փոխնախագահ Սերգեյ Վարդանյանը հետաքրքիր զեկույց ներկայացրեց Խոփայի և Աջարիայի հարակից շրջանների, ինչպես նաև այնտեղից 1944 թ. Միջին Ասիա արտոնված կրոնափոխ համշենահայերի և Ղազախաստանում, Ուզբեկստանում, Ղրղզստանում և Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասում իր կատարած հետազոտությունների մասին» (էջ 1):

29. Լուսինե Սահակյան, Ձորավար Անդրանիկի մասին վիպասքի ակունքները, պատմաէպիկական առանձնահատկություններն ու արժեքը // **Ասք Անդրանիկ Ձորավարի մասին**, բանահավաք և մշակող՝ Սուրեն Սահակյան, խմբագրեց և հրատարակության պատրաստեց բ.գ.թ. Լուսինե Սահակյանը, գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանը, բանասեր-ազգագրագետ Սերգեյ Վարդանյանը:

Տպագրվել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի և «Արարատ» ռազմավարագիտական կենտրոնի գիտական խորհուրդների որոշումներով, Երևան, «Լուսակն» հրատ., 2008 (- 144 էջ), էջ 3-22:

Տիտղոսաթերթի և 3-րդ էջի միջև գրքի հրատարակության հովանավորի մասին տեղեկության էջում գրված է նաև. «Արժեքավոր խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում բանասեր-ազգագրագետ Սերգեյ Վարդանյանին»:

Իր առաջաբանում Լ. Սահակյանը նշում է. «Նոր ժամանակներում Խաստուրի անվանը հանդիպում ենք Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Պողոս վրդ. Մեհերյանի (1729-1814) խիստ կարևոր հուշագրության մեջ» և էջատակում (8-րդ հղում) գրում է. «Շնորհակալություն ենք հայտնում բանասեր-ազգագրագետ Սերգեյ Վարդանյանին՝ հուշագրությունում խաստուրցիների հիշատակումների վրա մեր ուշադրությունը հրավիրելու և ձեռագրի համապատասխան էջերի պատճենները մեզ տրամադրելու համար» (էջ 5): 8-րդ էջում նշելով, որ խաստուրցիներից բանահավաքները բանահյուսություն են գրառել, տողատակում (հղում 25-րդ) գրում է. «Տե՛ս նաև Հրեղեն ձին, մշակեց և վերապատմեց Ս. Վարդանյանը, Երևան, 1981, էջ 106-108, 129:

Տե՛ս նաև The Salvaged tales, Compiled and prepared for publishing by Sergey Vardanyan, Yerevan, 2007, p. 55, 56».

30. Амшенские новости, «**Еркрамас**», ежемесячная газета, г. Краснодар, 2008, август-сентябрь, № 8 (162), с. 7.

Ընթերցողներին պատմում է Երևանում հրատարակվող «Չայն համշենական» ամսաթերթի մասին և տեղեկացնում, որ բոլոր համարները կարելի է կարդալ թերթի կայքէջում:

31. Կորուսյալ հայրենիքի կարոտով, «**Գրական թերթ**», շաբաթաթերթ, Երևան, 2008, հուլիսի 18, № 26, էջ 3:

Անստորագիր է: Ոչ մեծ հոդվածը պատմում է հուլիսի 14-ին ՀԳՄ Կլոր սրահում կայացած Կրիկոր Մազլումյանի (Մոչի, ք. Լազարևսկ) «Երգ համշենական» երկվեզվյան՝ հայերեն և ռուսերեն գրքի շնորհանդեսի մասին: Շատ հակիրճ ներկայացվել է նաև «Չայն համշենական» թերթի խմբագիր Ս. Վարդանյանի ելույթը:

32. Анзор Нибо, Крикор Мазлумян: Поэтический путь на историческую родину, «**Еркрамас**», ежемесячная газета, г. Краснодар, 2008, август-сентябрь, № 8 (162), с. 7.

Սոցիի Լազարևսկի շրջանի գործկուրի մշակույթի բաժնի վարիչ Կրիկոր Մազունյանի ռուսերեն բանաստեղծությունների և զուգահեռ հայերեն թարգմանությունների երկրեզվյան «Երգ համշենական, Песнь об Амшене» (Երևան, «Զանգակ-97», 2008, 100 էջ) ժողովածուի ՀԳՄ-ում կայացած շնորհանդեսի մասին է պատմում հեղինակի հետ ՀՀ-ում և ԼՂՀ-ում շրջապայած ազգությամբ շապսուղ լրագրող Անգոր Նիրոն: Շնորհանդեսին ելույթ է ունեցել նաև Ս. Վարդանյանը. «-Для меня значим сам факт того, что поэт живёт в Сочи, но многие годы пишет о своей исторической родине, по которой очень тоскует, сопереживает её трагической судьбе, - считает главный редактор газеты «Голос амшенцев», издающейся в Ереване, Сергей Варданян. – Он не просто рассказывает о далёком Амшене, но и делает это очень хорошо-качественно, профессионально, доступно».

Նույնը տե՛ս նաև «**Ձայն համշենական**», 2008, № 9-10, էջ 5: Նույնը «Поэтические письма на родину» վերնագրով:

Տե՛ս «**Գործարար/Горцарар**» միջազգային ռուս-հայերեն ամսագիր, ք. Վալուգա, ՌԴ, 2008, հուլիս-սեպտեմբեր, № 7-9, էջ 20, 21:

Նույն թեմային է նվիրված նաև «Կորուսյալ հայրենիքի կարոտով» հոդվածը, «**Գրական թերթ**», Երևան, 2008, հուլիսի 18, № 26, էջ 3:

33. Анзор Нибо, Поэтические письма на родину, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2008, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 5:

Ավելի մանրամասն տե՛ս նախորդ նկարագրությունը՝ «**Երկրամաս**», еженесячная газета, г. Краснодар, 2008, август-сентябрь, № 8 (162), с. 7.

Տե՛ս նաև «**Գործարար/Горцарар**» միջազգային ռուս-հայերեն ամսագիր, ք. Վալուգա, ՌԴ, 2008, հուլիս-սեպտեմբերի, № 7-9, էջ 20, 21: Նույն թեմային է նվիրված նաև «Կորուսյալ հայրենիքի կարոտով», հոդվածը, «**Գրական թերթ**», Երևան, 2008, հուլիսի 18, № 26, էջ 3:

34. Ν. Κιλισιάν, Μια απόμακρη φωνή των Αρμενίων του Χαμσέν, (Ն. Կիլիչյան, Միա ապոմակրի ֆոնի տոն Արմենիոն տու Խամսեն), «**Αρμένικος Τύπος**» (Արմենիկոս Տիպոս), ամսագիր, Աթենք, 2008, մարտ, № 3 (196), էջ 8, 9:

Աթենքում հրատարակվող «**Արմենիկոս Տիպոս**» (Հայկական մամուլ) հունարեն ամսագրում տպագրված արվեստագիտության թեկնածու Նաիրա Կիլիչյանի հոդվածը (թարգմանություն՝ Համշենցի հայերի հեռավոր ձայնը) Ս. Վարդանյանի գործունեության, «**Ձայն համշենական**» թերթի և համանուն ժողովածուների մասին է:

35. Լուսինե Սահակյան, Հայկական երգերը՝ բռնի կրոնափոխված համշենցիների ինքնության հիշողություն և դրսևորում // **Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ**, հ. V, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2008 (- 262 էջ), էջ 243-260:

Հոդվածը նվիրված է համշենահայերի պատմությանը, բարբառին և կրոնափոխ համշենցիների երգերին: Հեղինակը քանիցս հիշատակում է Ս. Վարդանյանին. «Ըստ Բերթ Վոքսի՝ համշենցիներն իրենց լեզուն կոչում են «հոմշեցմա»: Կրոնափոխ համշենցիների բարբառի և բանահյուսության առաջին ուսումնասիրողներից մեկի՝ Սերգեյ Վարդանյանի համաձայն՝ Միջին Ասիա արքայրված համշենցիները և Խոփայի համշենցիներն իրենց խոսակցական լեզուն անվանում են «հոմշեցնակ» կամ «համշեցնակ»» (էջ 248): «Թյուրքական հայտնի «**Ռադիկալ**» թերթում տպագրված «Հեմշինցիների մասին, հեմշինցիները հայե՞ր են» հոդվածի թուրք հեղինակը թեև խուսափում է մի քանի կարևոր հարցերի պատասխանները տալուց, այնուամենայնիվ, ինչպես նկատում է Ս. Վարդանյանը, այդ հոդվածը ուշադրության է արժանի որպես «թուրքական մամուլում մահմեդական համշենցիների մասին քիչ թե շատ անաչառ խոսք ասելու առաջին փորձերից մեկը» (էջ 249): «Ս. Վարդանյանը գրի է առել և 1989 թ. հրատարակել Խոփայի հարակից Աջարիայի սահմանամերձ գյուղերից 1944 թ. Միջին Ասիա արքայրված կրոնափոխ համշենցիների խաղիկներն ու հեքիաթները՝ կազմելով նաև համապատասխան բառարան: Ս. Վարդանյանը նրանց լեզուն համարում է Համշենի բարբառի առանձին խոսվածք, որը «զգալի տարբերություններով հանդերձ համեմատաբար մոտ է Տրապիզոնի շրջակա գյուղերի խոսվածքին»: Այն բաժանվում է երկու ճյուղի. «...արդիւցիների և թուրքականցիների (այսինքն՝ Արդալա գյուղի բնակիչների և դրսեցիների)»» (էջ 249): «Թարգմանության ընթացքում մի շարք բարբառային բառերի ճշգրտումների և արժեքավոր խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում «Ձայն համշենական» թերթի գլխավոր խմբագիր, բանասեր-ազգագրագետ Ս. Վարդանյանին» (էջ 251):

Հոդվածում Ս. Վարդանյանն ու նրա ուսումնասիրությունները հիշատակվում են 246, 248, 249, 251, 254-րդ էջերում, ինչպես նաև № 20, 34, 38, 39, 50, 68, 69 (էջ 257-260) ծանոթագրություններում:

Տե՛ս նույնը՝ «**Ձայն համշենական**», ամսաթերթ, 2007, № 7-8, էջ 6, 7, № 9-10, էջ 6, 7:

36. Շուվինար Լոքմակեօղեան, Աբխազիան, Հարաւային Օսեթիան եւ Վրաստանի ժողովրդավարութիւնը, “**Agos**”, Haftalik gazete, Istanbul, 2008, Ağustos 22, № 647, Հայերէն ներդիր, «**Ալօս**», 2008, օգոստոս 22, թիւ 647, էջ 2:

Հիշատակվում են նաև Ս. Վարդանյանը և «**Չայն համշենական**» թերթը:

37. Հովնաթիւն Վո՞վ ա, “**Agos**”, Haftalik gazete, Istanbul, 2008, Ağustos 1, № 644, հայերէն ներդիր, «**Ալօս**», 2008, օգոստոս 1, թիւ 644, էջ 2:

Անստորագիր է: Ներկայացվում են հուլիսին Երևանում կազմակերպված «Համշենի շաբաթի» շրջանակներում Ստամբուլի «Վովա» երաժշտախմբի 3 համերգները, նաև հուլիսի 23-ին կայացած գիտաժողովը, որտեղ ելույթ ունեցողների շարքում նշվում է նաև Ս. Վարդանյանը:

38. Համշենահայերի «Վով ա»-ն «Նարեկացիում», «**Առավոտ**», օրաթերթ, Երևան, 2008, հուլիսի 26, № 132, էջ 10:

Նյութի հեղինակը կամ աղբյուրը չեն նշված: Հատված. «Հուլիսի 21-ին Երևանում մեկնարկած համշենահայությանը նվիրված մշակութային շաբաթվա ամենահուզիչ իրադարձությունը Թուրքիայից հրավիրված համշենական «Վով ա» խմբի համերգներն էին: ... Սկզբում ամեն ինչ անսովոր թվաց: Երգում էին հայերէն, սակայն անծանոթ մի բարբառով:

... Հավաքվածների մեջ զգացվում էր ուրախ տրամադրություն, շատերը հուզված էին: Հայաստանում հայտնի համշենագետ Սերգեյ Վարդանյանը բարձր գնահատեց նման միջոցառման մտահաղացումը: Նրա կարծիքով, այսօր հայերն իրենք իրենց չեն ճանաչում եւ Համշենական շաբաթը կօգնի ավելի լավ հասկանալ, «թե ով ենք մենք, որքան եւ ինչպիսին»»:

39. Հայկազուն Ավրցեան, Համշենի եւ համշենահայութեան մասին, «**Հորիզոն**», **Բացառիկ**, Բոստոն, 2008, դեկտեմբեր, էջ 13-18:

Հեղինակը, ներկայացնելով համշենահայերի դարավոր պատմությունը, հիշատակում է նաև Ս. Վարդանյանին. «Յայտնի հայագետ-համշենագետ Ս. Վարդանեան «Համշենցի մուսուլման հայերի ուսումնասիրութեան պատմութիւնից» յօդուածով հետաքրքրական տեղեկութիւն կու տայ այս հերոսական պատմութեան վերջաբանի մասին», բերում է ընդարձակ քաղվածք Մայկոպի մոտակա Պրոլետարսկի գյուղում կալաֆկացի 84-ամյա Մարգար Դուկասյանի հետ Ս. Վարդանյանի հանդիպման մասին (էջ 16):

Հ. Ավրցյանը նույն քաղվածքը մեջբերել է նաև իր «Համշենը եւ համշենահայութիւնը. Արդի հիմնախնդիրները», Երևան, 2016 (- 152 էջ) գրքում, էջ 42:

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Սերգեյ Վարդանյան, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), Երևանի պետհամալսարան, Երևան, ԵՊՀ հրատ., 2009 (- 428 էջ+12 էջ սև-սպիտակ+12 էջ գունավոր լուսանկարներով ներդիրներ), չափար՝ 60x84 1/16, տպաքանակը՝ 300:

Գիրքն ընդգրկում է 1944 թ. Աջարիայից Ղազախստան և Ղրղզստան արտրված կրոնափոխ համշենահայերից հեղինակի գրառած բարբառագիտական և բանահյուսական նյութերը, նաև Թուրքիայի կրոնափոխ համշենահայերի անցյալի և ներկայի մասին ուսումնասիրությունները:

2. Gerettete Märchen, Gebildet von Sergej Wardanjan, Deutsche Übersetzung: Arpine Stepanjan, Hasmik Howhannisjan, Sprachliche Beratung: Elke Schröder, Allgemeine Beratung: Klaus Brüggemann, Jerewan, "Graber", 2009 (- 104 s.), չափար՝ 60x84 1/16, տպաքանակը՝ 500:

«Հրեղեն ձին» (1981) և «Թագավորի երագները» (2003) բանահյուսական ժողովածուներից «Փրկված հեքիաթներ» վերնագրով գերմաներեն թարգմանությամբ ընդգրկվել են 36 հեքիաթներ, գրույցներ և զվարճապատումներ, թարգմանիչներ՝ Արփինե Ստեփանյան, Հասմիկ Հովհաննիսյան, կազմող՝ Սերգեյ Վարդանյան:

3. Դեպի աղբյուրը լույսին. Բագարան, «**Եթեր**», շաբաթաթերթ, Երևան, 2009, հունվարի 22, № 4, էջ 22:

Հատված «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքից:

4. Դեպի աղբյուրը լույսին. Շիրակավան, «**Եթեր**», շաբաթաթերթ, 2009, փետրվարի 19, № 8, էջ 22:

Հատված «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքից:

5. Դեպի աղբյուրը լույսին. Կարս, «**Եթեր**», շաբաթաթերթ, 2009, մարտի 12, № 11, էջ 22:

Հատված «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքից:

6. Դեպի աղբյուրը լույսին. Անի, «**Եթեր**», շաբաթաթերթ, Երևան, 2009, ապրիլի 23, № 17, էջ 22:

Հատված «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքից:

7. Թուրքիայի կրոնափոխ հայության թվաքանակի վերաբերյալ հայախոս համշենցիներ, «**Հանրապետական**», ամսագիր, Երևան, 2009, № 10 (74), էջ 5-8:

8. Արման Կոթիկյանին օգնել է մի հույն երիտասարդ կին, **«Իրավունքը de facto»**, եռօրյա թերթ, Երևան, 2009, ապրիլի 21-23, № 29 (89), էջ 6, 7:

1915 թ. ապագա նշանավոր դերասան Արման (Առաքել) Կոթիկյանի Տրապիզոնի լեռներում պատսպարվելու մասին է:

9. Ծխացող հուշեր, նյութը տպագրության պատրաստեց Սերգեյ Վարդանյանը, **«Իրավունքը de facto»**, եռօրյա թերթ, Երևան, 2009, ապրիլի 24-27, № 30 (90), էջ 18:

Հրատարակվել է ապագա նշանավոր դերասան Արման Կոթիկյանի Մեծ եղեռնի օրերին գրառած 4 պատմություն: Նախորդ համարում լույս տեսած հոդվածի շարունակությունն է:

10. Բանահյուսությունը որպես դաստիարակության միջոց // **Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում**, հոդվածների ժողովածու, ԵՊՀ, Երևան, «Լուսակն» հրատ., 2009 (- 270 էջ), էջ 257-260:

ԵՊՀ-ի և Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիայի 2007 թ. հոկտեմբերի 16-19-ին կազմակերպած «Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» միջազգային երկրորդ գիտաժողովում կարդացած զեկուցումն է:

11. [Առաջաբան], Աղասի Քյոսեյան, Այցելություն Բրգնիք, **«Գրական թերթ»**, շաբաթաթերթ, Երևան, 2009, դեկտեմբերի 4, № 41, էջ 3:

Ցեղասպանությունը վերապրած Աղասի Քյոսեյանի գրառումների տեքստերը հայտնաբերել և որոշ հատվածներ համապատասխան առաջաբանով հրատարակության է պատրաստել Ս. Վարդանյանը: «Այցելություն Բրգնիքը» պատմում է Դանիել Վարուժանի հայրենի գյուղ Սեբաստիայի որբանոցի երեխաների 1922 թ. այցի մասին:

Տե՛ս նաև **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2006, մայիս-հունիս, № 5-6, էջ 2:

**«Նոյան տապան»**, շաբաթաթերթ, Երևան, 2007, օգոստոսի 27, № 15, էջ 5:

12. Վեճը (պատմվածք) // **Մայրենի 4: Հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի դասագիրք** / Կարինե Թորոսյան, Վաչագան Ա. Սարգսյան, Հեղինե Խաչատրյան, Կարինե Չիբուխյան, նկարիչ Խորեն Հակոբյան: Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից, Երևան, Մակմիլան-Արմենիա հրատ., 2009 (- 176 էջ), էջ 86-88:

Դասագիրքը հրատարակվել է 2009, 2012, 2015, 2019 և 2022 թթ.:

Տե՛ս **«Ծիծեռնակ»**, ամսագիր, 1983, № 11, էջ 12, 13:

Ս. Վարդանյան, Արևածաղիկը, պատմվածքներ, Երևան, 1989 (- 40 էջ), էջ 3, 4:

Ս. Վարդանյան, Արևածաղիկը, պատմվածքներ, Իսթանպուլ, 1994 (- 64 էջ), էջ 7-9: Վէճը (Արեւմտահայերէնի վերածուած), «**Նոր Մարմարա**», օրաթերթ, Իսթանպուլ, 1994, Յունուար 29, № 4294:

13. Բանաստեղծի չորրորդ գիրքը, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2009, հունվար-փետրվար, № 1-2, էջ 6:

Համառոտ ներկայացվում է 1955 թ. Վրաստանի Բողոքանովկայի (Նի-նոնդինոյի) շրջանի Հեշտիա գյուղում ծնված, 1978 թ.-ից Աբխազիայի հայկական դպրոցներում մաթեմատիկայի ուսուցիչ աշխատած և 1993-ին Հայաստանում վերաբնակված Ալեքսան Գոմցյանի կենսագրությունն ու «Անձրևոտ ծառեր» ժողովածուն:

14. Թրից պրծածները, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2009, մարտ-ապրիլ, № 3-4:

Հոդվածը Թուրքիայում հայտնի փաստաբան և իրավապաշտպան Ֆեթ-հիյե Չեթինի «Մեծ մայրս» հուշագրական վիպակի հերոսուհու՝ Հերանուշ Կատարյանի հայրենի գյուղի՝ Հավավի մասին է: Ս. Վարդանյանը 1917 թ. մամուլում գտել է հավավցի Տիրան Մեսրոպյանից Վարդան Կատարյանի գրած Եղեռնի մասին հուշերը, որոնք արտասպել է հոդվածի հետ:

15. Նոր անուն՝ Մահիր Էօզքան, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2009, մարտ-ապրիլ, № 3-4:

Ներկայացվում է ծնունդով Արդվինի նահանգի Խոփայի գավառից ստամբուլաբնակ երիտասարդ գրող, համշենցի Մահիր Էօզքանը, նաև տպագրվել է Խոփայի խոսվածքով գրած նրա «Վախի աղօթք» պատմվածքը:

16. Թողեց բարի հիշատակ, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2009, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10:

Հիշատակի խոսք է այդ օրերին մահացած Վարդուհի Խաչիկյանի մասին, որը Հայաստանի «Համշեն» ՀԿ խորհրդի անդամ էր: Նա 1935 թ. ծնվել էր Աբխազիայի Ներքին Յաշարա գյուղում, 1965-ից բնակվում էր Երևանում: Ս. Վարդանյանի խնդրանքով գրել էր «**Մեր Յաշարա գյուղը**» հուշագրությունը, որը տպագրվել է նույն համարում, էջ 2, 3:

17. Համշենագիտական կարևոր ձեռնարկում, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2009, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10:

Ներկայացվել է Կրասնոդարում հրատարակված (տպագրվել է Դոնի Ռոստովում) «**Амшен-Понтос**» հանդեսի (ժողովածու) առաջին համարը: Երեք հոգուց կազմված խմբագրական կոլեգիայի անդամ է նաև Ս. Վարդանյանը:

18. Բոնի կրոնափոխված համշենահայերի ուսումնասիրման պատմությունից, սկիզբը՝ «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2008, № 9-10, № 11-12, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2009, № 1-2, № 5-6, № 7-8, № 11-12:

### **Երկրորդ բաժին (հարցազրույցներ)**

19. Քամուց քշվածները. «19-րդ դարում Թիֆլիսին 25-26 հայ քաղաքագլուխ ենք տվել...», գրուցեց Կարինե Ռաֆայելյանը, «**Իրավունքը de facto**», եռօրյա թերթ, Երևան, 2009, ապրիլի 17-20, № 28 (88), էջ 14, 15:

Զրույցը Ս. Վարդանյանի անցած ուղու, հրատարակած գրքերի և այլ հարցերի մասին է: Տպագրվել է Ս. Վարդանյանի լուսանկարը: Հարցազրույցից հատված. «1905 թ., 1918 թ. Բաքվում հայերի կոտորածներ եղան, ու դրանից հետո հայերը նորից գնացին բնակվեցին Բաքվում: Ես ուղղակի ապշած եմ: Երկու տարեկան երեխայի մատը, երբ դիպչում է տաք վառարանին, նա նույնիսկ չվատվող վառարանին այլևս ձեռք չի տալիս, զգուշանում է, ինչո՞ւ 200.000 հայություն լցվեց Բաքու, հետո ամեն ինչ թողած մազալուրծ փախավ: Զանգեզուրը, Դաշտային և Լեռնային Ղարաբաղը դատարկելով՝ հայությունը գնում էր Բաքու: Ինչո՞ւ: Ես դա չեմ ընկալում: Հիմա բողոքում ենք Թիֆլիսի հայ եկեղեցիների վտանգված ճակատագրի մասին: Կրկին զարմանում եմ մեր մտավորականության, մեր ժողովրդի վրա: Ինչո՞ւ գնացին-լցվեցին Թիֆլիս ու այնտեղ կառուցեցին այդ մի քանի տասնյակ եկեղեցիները, հայկական մշակութային կենտրոնները, երբ հստակ գիտեին, որ Թիֆլիսը Հայաստան չէ, Հայաստանը Երևանն է: 18-րդ, 19-րդ դարերում հայկական ոչ մի քաղաքական ուժ, ազգային գործիչ ապագա անկախ Հայաստանի մայրաքաղաքը Թիֆլիսը, առավել ևս Բաքուն չի նախատեսել, այլ՝ Երևանը: Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառացում» և 1778 թ. Վենետիկում հրատարակված Հայաստանի քարտեզի վրա Երևանն է նշված որպես մայրաքաղաք: Ուրեմն ինչո՞ւ Հայաստանը լքելով կուտակվեցինք Թիֆլիսում ու Բաքվում, երբ 19-րդ դարի սկզբին Թիֆլիսը, Բաքուն ու Երևանն իրենց բնակչության թվով համարյա հավասար էին, և այն, որ դարավերջին նրանք անհամեմատ առաջընթաց ապրեցին, մեծ մասամբ հա-

յերի շնորհիվ էր: Հենց հայերի կողմից Երևանին վերապահվեց աղքատ ազգականի դեր: Այն դեպքում, երբ այն Հայկական մարզի, հետագայում էլ Երևանի նահանգի կենտրոնն էր և իր իրավական ու վարչական կարգավիճակով զարգանալու մեծ հնարավորություն ուներ: Ասում են, թե 19-րդ դարում Թիֆլիսին 25-26 հայ քաղաքագլուխ ենք տվել: Է՛, քաղաքագլուխ տվող ժողովուրդ ենք, ինչո՞ւ Երևանին մի կարգին քաղաքագլուխ չենք կարողանում տալ և միլիոնանոց մայրաքաղաքը որբի գլուխ ենք դարձրել, ով ասես վարսավիրություն է սովորում»:

20. Արմեն Հակոբյան, Պետք է օգնել, որպեսզի այդ մարդիկ գնան ինքնաճանաչման, «**Հայոց աշխարհ**», թերթ, Երևան, 2009, մայիսի 5, № 82, էջ 6:

Ս. Վարդանյանի հետ հարցազրույցը Թուրքիայում և ԽՍՀՄ-ում բնակվող մահմեդական համաձայնակցի մասին է: Տպագրվել է Ս. Վարդանյանի լուսանկարը:

### Երրորդ բաժին

21. Գայանե Եգանյան, «Փրկված հեքիաթներ»-ը՝ գերմաներեն, «**Գրական թերթ**», շաբաթաթերթ, Երևան, 2009, ապրիլի 17 (№ 12), էջ 1:

Հրեղեն ձին» (1981) և «Թագավորի երազները» (2003) բանահյուսական ժողովածուներից գերմաներեն թարգմանված հեքիաթներից կազմված «Gerettete Märchen» (Փրկված հեքիաթներ) (2009) գրքի շնորհանդեսի մասին է, որը կայացել է ապրիլի 14-ին Երևանի Խնկո-Ապոլո անվան գրադարանում:

22. Ռուբեն Մելքոնյան, Նոր գիրք կրոնափոխ համաձայնակցի մասին, «**21-րդ դար**», հանդես, Երևան, 2009, № 5 (27), էջ 124-126:

Թուրքագետ, բ.գ.թ. Ռ. Մելքոնյանի Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համաձայնակցի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ)» (2009) գրքի գրախոսությունից հատված. «Կրոնափոխ հայության ուրույն և յուրահատուկ խմբի՝ իսլամացված համաձայնակցի մերօրյա հետազոտողների շարքում առաջին և կարևոր անուններից է Սերգեյ Վարդանյանը, որը երկար տարիներ նվիրվել է հայագիտության այս խուլյան ոլորտի ուսումնասիրմանը: Տարբեր տարիներին հրապարակած նրա արժեքավոր հոդվածները, միևնույն ժամանակ, յուրահատուկ ուղեցույց են եղել կրոնափոխ հայության պատմությամբ զբաղվողների և այդ ոլորտ նոր-նոր ոտք դնողների (այդ թվում և ինձ) համար:

...Ս. Վարդանյանի առաջին հանդիպումը քրիստոնյա համաձայնակցի հետ կայացել է 1969 թ. Աբխազիայում և Ռուսաստանի Կրասնոդարի երկ-

բամասում, սակայն հետագայում, լայնացնելով աշխարհագրությունը, հեղինակը 1984 և 1987 թթ. լինում է Միջին Ասիայում, ուր 1944 թ. Աջարիայից արտորվել էր բռնի իսլամացված համշենցիների մի մասը, և կատարում է դաշտային-հետազոտական աշխատանք, գրի առնում նրանց բանահյուսության, բարբառի, երգարվեստի բազմաթիվ ուրույն նմուշներ: Հավաքած նյութը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ կրոնափոխ համշենահայերը պահպանել և մինչև մեր օրերն են հասցրել հայոց մշակույթի մի շերտ, որը, յուրահատուկ լինելով հանդերձ, ընդհանուր հայկական մշակույթի անքակտելի մասն է: Բացի գիտական ուսումնասիրություններից, Ս. Վարդանյանը փորձել է նաև գործնական քայլեր կատարել Միջին Ասիայում բնակվող կրոնափոխ համշենահայերի խնդրի բարձրաձայնման, ավելին՝ Հայաստանում բնակվելու նրանց ցանկությանն օժանդակելու ուղղությամբ: Ցավոք, նրա այս ջանքերը չեն ստացել համապատասխան դրական արձագանք:

... Հեղինակը լայնախոտի և գիտականորեն հիմնավորված գնահատական է տալիս հայության այն հատվածներին, որոնք այս կամ այն պատճառով ստիպված են եղել փոխել կրոնը, և երկրորդ՝ հանրագիտարանային սեղմությամբ հիշատակում է կրոնափոխ հայերի վերաբերյալ տարբեր ժամանակներում տպագրված գրքերն ու հոդվածները, որոնք կարևոր ուղեցույց կարող են հանդիսանալ թեմայով հետաքրքրվողների համար: Այս մեծածավալ գիտական գրականության համակարգումը տարիների համառ աշխատանքի արդյունք է, որը զգալիորեն կհեշտացնի մյուս հետազոտողների գործը»:

23. Ռուբեն Մելքոնյան, Գիրք՝ նվիրված կրոնափոխ համշենահայությանը, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2009, մայիս-հունիս, № 5-6:

Թուրքագետ, բ.գ.թ. Ռուբեն Մելքոնյանը գրախոսել է Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ)», Երևան, ԵՊՀ հրատ., 2009 (- 428 էջ +12 էջ գունավոր և 12 էջ սև սպիտակ լուսանկարներ) գիրքը:

Շատ քիչ տարբերություններով տե՛ս նաև «**21-րդ դար**», հանդես, Երևան, 2009, № 5, էջ 124-126:

24. Սարգիս Սերովբեան, Համշենահայ բանահիւսութիւնը, “**Agos**”, Haftalik gazete, Istanbul, 2009, Kitap/Kirk, Gazetesinin Ücretsiz Eki, № 7, Mayıs. Ստամբուլ, «**Ակօս**», Գիթափ/ Գիրք, № 7, մայիս, 2009, էջ 18:

«Ակօս» թերթի 20 էջանոց անվճար ներդիրը հիմնականում թուրքերեն է, որոշ էջեր՝ հայերեն: Այն ներկայացնում է թուրքերեն և հայերեն հրատարակված այն գրքերը, որոնք, ենթադրաբար, կհետաքրքրեն թերթի ընթերցողներին: «Ակօսի» հայերեն բաժնի խմբագիր Սարգիս Սերովյանի գրախոսականը նվիրված է Ս. Վարդանյանի «Կրոնավոխի համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ)» (Երևան, 2009) գրքին:

25. Ա[նահիտ] Աբրահամյան, «Երկրերան բրիչ» հասկացության բառային զուգաբանությունները հայերենի բարբառներում, **«Բաներ Երևանի համալսարանի»**, հանդես, Երևան, 2009, № 3 (129), էջ 159-171:

Հոդվածի 165-րդ և 166-րդ էջերում հղումներ կան Ս. Վարդանյանի «Կրոնավոխի համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ)» (2009) գրքին:

26. Երվանդ Կյուրեղյան, Իմ հուշերի ճանապարհով, հրատարակության պատրաստեցին, խմբագրեցին և ծանոթագրեցին Սերգեյ Վարդանյանը և Լուսինե Մահակյանը, «Արարատ» ռազմավարագիտական կենտրոն, ԵՊՀ օսմանագիտական կենտրոն, Երևան, «Լուսակն» հրատ., 2009 (-394 էջ + 8 էջ սև-սպիտակ, 12 էջ գունավոր լուսանկարներով ներդիր և քարտեզ):

Գրքի առաջաբանի՝ «Գիրը մնաց հիշատակող (Տառապանքի ուղիներով)» (էջ 3-12), հեղինակները նույնպես ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Ս. Վարդանյանն ու ԵՊՀ օսմանագիտական կենտրոնի ղեկավար, բ.գ.թ. Լ. Մահակյանն են: Գրքի վերջում՝ կազմի ներսի կողմում, փակցված է Ե. Կյուրեղյանի մասին պատմող 30 բուպեանոց վավերագրական ֆիլմի խտասկավառակը (հեղինակներ՝ Լ. Մահակյան, Ս. Վարդանյան):

Գրքի 390 ծանոթագրությունները հուշագրության մեջ հանդիպող անձանց, բնակավայրերի և իրադարձությունների մասին են: Հուշագրության հեղինակը՝ Երվանդ Կյուրեղյանը, ծնվել է 1888 թ. Վանի նահանգի Հայոց ձորի գավառի Քերծ գյուղում, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մասնակցել է բազմաթիվ մարտերի՝ Վանի հերոսամարտից մինչև 1918 թ. Սարդարապատի ճակատամարտը: 1921 թ. փետրվարյան ապստամբությունից հետո տարագրվել է Իրան: 1985 թ. արտագաղթել է Լոս Անջելես, որտեղ էլ մահացել է 1998 թ.՝ 110 տարեկանում:

Ս. Վարդանյանի համառոտ կենսագրությունը տե՛ս էջ 12, նրա նախնիների Հայոց ձորի Աստվածաշեն (այժմ՝ Չաուշթեփե) գյուղի մասին՝ էջ 47,

«Հայաստանի մայրաքաղաքները» (1995) գրքին հղումները տե՛ս հետևյալ էջերում՝ 18, 77, 110, 121, 147, 176, 196, 218, 277:

27. Ռուբեն Մելքոնյան, Իսլամացված հայերի խնդիրների շուրջ, «Նորավանք» ԳԿՀ, Երևան, 2009 (-112 էջ):

Թուրքագետ, բ.գ.թ. Ռ. Մելքոնյանը կարևորում է քրիստոնյա և մուսուլման համշենահայերի խնդիրներով զբաղվող «Չայն **համշենական**» թերթը (խմբագիր՝ Ս. Վարդանյան), որն անվճար տարածվում է Հայաստանում և Միջուրքում (էջ 4):

Գրքի առաջաբանի արտատպությունը տե՛ս «Նոր գիրք բռնի իսլամացված հայերի մասին», «**Չայն համշենական**», ամսաթերթ, 2010, № 1-2, էջ 7:

28. Կարեն Խանլարեան, Հայ բնակչության էթնոկրոնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետությունում (1923-2005 թթ.), Անթիլիաս, 2009 (-296 էջ), էջ 212, 213:

Հեղինակն անդրադառնում է Ս. Վարդանյանի գիտական հրապարակումներից մեկին. «Ամեն դեպքում թույլ է, թե իսլամացած համշենահայերը նկատի չեն առնուել պատրիարքարանի նախաեղեռնեան վիճակագրություններում: Հետևաբար՝ ենթադրելի է, թե յետեղեռնեան հայկական վիճակագրությունը եւս զանց է արել նրանց՝ որպէս հայեր: Սերգեյ Վարդանեանը համշենահայության մասին իր յօդուածներից մէկում («Կարելոր սկզբնաղբիւր մահմեդականացուած հայերի մասին»), մանրամասնօրէն քննարկելով Էփրիկեանի եւ Ա-Ղօ-ի 1907 եւ 1909 թուականների տուեալները, ցոյց է տալիս, որ հայկական աղբիւրներում (այդ թույլ՝ նաեւ Կարինի առաջնորդարանի «վիճակագիրներում») «իսլամացած» հայերի գիւղերը չէին յիշատակուում: Օրինակ՝ մահմեդական համշենահայերի Խեւակ գիւղը չի նշուել «Վիճակագիր Կիսկիմի գաւառի հայ ժողովրդի» համապատասխան աղիւսակում, «այն պայմաններում,– գրում է Վարդանեանը,– երբ 15 տուն ունեցող Գասապան եւ ընդամենը 7 տուն ունեցող Նիխախը նշուած են»:

29. Զավէն Կնեազեան, Հայկական աւանդական «շաւառ» աղեղնային նուագարանի մասին, «**Քազմավէպ**», հանդես, Վենետիկ, 2009, № 1-4, էջ 260-304:

Արգենտինայում բնակվող հեղինակը, որը Բուենոս-Այրեսի «Մասիս» պարախմբի ղեկավարն է, իր ընդարձակ ուսումնասիրության մեջ երկու անգամ հիշատակում է Ս. Վարդանյանին, առաջին անգամ նրա «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը...»

(2009) գրքից Կրասնոդարի երկրամասում 1925-1953 թթ. գոյատևած Հայկական ազգային շրջանի մասին պատմող հատվածը վերապատմելիս (էջ 263), հաջորդ անգամ՝ էջ 270-ում նշում է. «Թիւ 1, 3, 4, 5, 6, 9, 10 լուսանկարները տրամադրեց Երեւանէն՝ համշենահայութեան խնդիրներով զբաղող բանասէր, «Ձայն Համշենական» թերթի գլխատըր խմբագիր, «Համշեն» հայրենակցական միութեան փոխնախագահ Սերգէյ Վարդանեանը»: 270, 272, 274, 276 և 280-րդ էջերում հրապարակված այդ 7 լուսանկարներում պատկերված են քեմէչէ և քեմոնա պատրաստող համշենահայ վարպետներ, նվագողներ և պարախմբեր:

30. Igor Kuznetsov, *Armenian Pontic Communities in the Kuban and Abkhazia // Armenian Pontus: The Trebizond-Black Sea Communities*, Edited by Richard G. Hovannisian, Mazda Publishers, Inc. Costa Mesa, California, 2009 (-XX+454 p.), pp. 403-430.

2002 թ. մայիսի 4-5-ին Լոս Անջելէսի Քալիֆորնիա համալսարանում կազմակերպված «Սև ծովի-Պոնտոսի տարածաշրջանի հայկական համայնքները» թեմայով գիտաժողովում Կրասնոդար քաղաքի Կուբանի պետ. համալսարանի դասախոս, պ.գ.թ. Իգոր Կուզնեցովն իր զեկուցման մեջ հիշատակում է նաև Ս. Վարդանյանին՝ “Erevan journalist Sergei Vardanyan has since 1984 steadily interacted with the Hamshentsis in the Kuban and Abkhazia”. “(Sergei Vardanyan, “Hamshentsi musulman hayeri usumnasirutyan patmutyunits” [From the History of Study of Hamshen Muslim Armenians], “**Iran-Name**”, 1-3 (1998): 2-11”. (p. 409).

“Before that, only Sergei Vardanyan, then the correspondent of the Garun (Spring) magazine in Erevan, had visited the Hemshinli in Krasnodar in 1984”. “(Sergei Vardanyan, “Hamshentsi musulman hayeri usumnasirutyan patmutyunits” [From the History of Study of Hamshen Muslim Armenians], *Iran-Name*, 1-3 (1998): 2-11”. (p. 410).

“Hemshinli and Hamshentsis are multilingual and use Armenian, Turkish, Russian, and other languages, but they also have their own specific languages: Homshetsma and Turkish. Homshetsma is almost the only language of household discourse for the Hemshinli, except for the small completely Turkish-speaking Kurdo-Hemshinli group. This language continues to exist only in its oral form, although there were a few unsuccessful attempts to adapt it to Cyrillic or, according to Sergei Vardanyan, to create a special Hemshin system of writing in Kyrgyzstan. There are many persons, except for the elders, who speak also Russian and Uzbek or Kyrgyz, while a few of the oldest men and women, deported from Ajaria, know Georgian” (p. 420).

31. Necati Zengin, Osmanlı'dan günümüze, Trabzon'da tiyatro. Trabzon Sanat Tiyatrosu yayınları № 3, Trabzon, 2009 (- 272 s.).

Տրապիզոնի Արվեստի թատրոնի (Sanat tiyatrosu Սանաթ թիյաթրոնու) տնօրեն Նեջաթի Զենգինի՝ Տրապիզոնում թատերական կյանքի սկզբնավորման և հետագա պատմության մասին պատմող «Օսմանցուց մինչև մեր օրերը. թատրոնը Տրապիզոնում» թուրքերեն գրքի այն հատվածում, որտեղ խոսվում է թատրոնի 2006-2007 թթ. խաղաշրջանի մասին (էջ 236), տպագրվել է «**Չայն համշենականում**» (2007, № 1-2, էջ 3) հրատարակված Ս. Վարդանյանի վարած ««Պաղտասար աղբարը»՝ Տրապիզոնում» հարցազրույցի թերթի 3-րդ էջի լուսանկարը: Հարցազրույցը Հ. Պարոնյանի երկի թուրքերեն թարգմանությունը (թարգմանիչ՝ Տիրան Լոքմազոզյան) 2006 թ. նոյեմբերի 23-ին բեմադրած երևանցի ռեժիսոր Հրանտ Հակոբյանի հետ է:

32. М. Татул (Туапсе), Некоторые проблемы амшеноведения, «**Амшен-Понтос**», Выпуск первый, Краснодар, 2009, с. 3-9.

Հանդեսի երեք հոգուց կազմված խմբագրական կոլեգիայի անդամ է նաև Ս. Վարդանյանը: Պատասխանատու խմբագիր Ս. Թաթուլին (Թաթուլյան) «**Չայն համշենականի**» ընթերցողները ծանոթ են Միխայիլ Կուզուր անուն-ազգանունով: Նա իր հոդվածի 3, 7, 8-րդ էջերում հղումներ է անում Ս. Վարդանյանի 5 հրապարակումներին, տե՛ս սույն Մատենագիտության 1987 № 3, 1990, № 4, 1991 № 6, 1996 № 1, 1998 № 2 նկարագրությունները:

Նույն հոդվածներով, բայց ձևավորման, էջադրման փոքր տարբերություններով (103-ի փոխարեն 82 էջ) և խմբագրական կոլեգիայի անդամների ավելացմամբ սույն «**Амшен-Понтос**» հանդեսը 2011 թ. հրատարակվել է նաև Տուապսեում:

33. М. Татул, «hАмшен» и «хамшенцы», «**Амшен-Понтос**», Краснодар, 2009, с. 51-54.

Հեղինակը 51 և 54-րդ էջերում հղում է անում Ս. Վարդանյանի «Կարևոր սկզբնաղբյուր մահմեդականացված հայերի մասին» (ՊԲՀ, 2004, № 3, էջ 159-170) հոդվածին:

34. М. Дженикци, Предисловие от редактора, «**Амшен-Понтос**», выпуск второй, Краснодар, 2009, с. 2.

Հավանաբար հանդեսի պատասխանատու խմբագրի՝ Ս. Թաթուլի (Թաթուլյանի), (Միխայիլ Կուզուրի) ծածկանունն է: Առաջաբանում հիշատակվում է նաև Ս. Վարդանյանը. «В последние годы появилось большое количество работ, посвященных культуре и истории амшенских мулсульман-хем-

шилов. Достаточно назвать целый ряд известных имен исследователей работающих в этой плоскости, как Сергей Варданян из Армении...».

35. М. Татул, Вопросы культурологии армян Понта (диахрония), продолжение, начало в № 1, 2009, «**Амшен-Понтос**», выпуск второй, Краснодар, 2009, с. 3-93.

Ս. Վարդանյանի ուսումնասիրություններին (Ձայն համշենական, ժողովածու, հ. 3, 1989 և հ. 4, 1999, «**Իրան Նամե**», հանդես, 1993, № 4 և 1998, № 1-3, «Բազմավեպ», հանդես, 1996, № 1-4, «Ձայն համշենական», ամսաթերթ, 2005, № 7-8, 2006, № 3-4) արված հղումները տե՛ս հետևյալ էջերում՝ 5, 6, 23, 24, 26, 66, 76, 79, 80, 81, 90:

36. Ռաֆայել Սահակյան, Էրզիրը տեսա հորս աչքերով, «**Հայրենական**», թերթ, ք. Արմավիր, 2009, օգոստոսի 4, թիվ 27-28 (198), էջ 3, 4:

«**Հայրենական**» թերթի գլխ. խմբագիր, գրող և հրապարակախոս Ռ. Սահակյանը 2007 թ. հուլիսին մտավորականների խմբի Արևմտյան Հայաստան ուխտագնացության մասին պատմող հոդվածում հիշատակում է նաև Ս. Վարդանյանին. «Մերգեյը ընդմիջել էր պատմական տեղավայրերի մասին իր բացատրությունները, Տարիել քանդակագործը հանպատրաստի գծագրեր չէր անում, գլխահակ ու ավելի շատ մտածկոտ էին Սիմոնն ու Հայկը, գիտնական Ծովակ Ավագյանն իր հայտնի վերլուծությունների հետ էր» (էջ 3):

Նույնը տե՛ս նաև հեղինակի «Էրզիրը տեսա հորս աչքերով» գրքում, Երևան, Լուսակն, 2011 (- 472 էջ + 16 էջ գունավոր լուսանկարներ), էջ 103:

Նույն թեմայով տե՛ս նաև Տարիել Հակոբյան, Ուխտագնացություն երկիր դրախտավայր..., «**Իրավունք**», Հետաքննություն, թերթ, Երևան, 2007, սեպտեմբերի 13, թիվ 34 (1484), էջ 7:

2010

### **Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)**

1. Կրիան (պատմվածք), «**Ուրախ գնացք**», մանկական ամսագիր, Երևան, 2010, № 12 (21), էջ 34, 35:

Տե՛ս նաև **Կրիան** (պատմվածք), «**Ծիծեռնակ**», ամսագիր, Երևան, 1986, № 8, էջ 4: Ս. Վարդանյան, **Արևածաղիկը**, պատմվածքներ, Երևան, Արևիկ հրատ., 1989 (- 40 էջ), էջ 39: Ս. Վարդանեան, **Արևածաղիկը**, պատմուածքներ, Արևմտահայերէնի վերածեց՝ Մաքրուհի Պ. Յակոբեան, Իսթանպուլ, ԱՐԱՍ հրատ., 1994 (- 64 էջ), էջ 39-41: Ծիծեռնակի թռիչքը, անթոլոգիա, կազմեց՝ Կատյա Սարվազյանը, Երևան, «Ծիծեռնակ» հրատ., 2003 (- 100

էջ), էջ 62: Черепашка // **Сказки и рассказы для взрослых и детей**, составитель и переводчик Роза Егиазарян, Ереван, изд. «Цицернак» (- 240 с.), с. 25, 26. Черепашка, перевела Роза Егиазарян, «**Համշեն**», տաճարային թերթ, Սուխում, Աբխազիա, 2013, ապրիլի 10, № 9-10, էջ 6:

2. Վանը միջնադարից մինչև XX դարի սկիզբը, «**Պատմաբանասիրական հանդես**», Երևան, 2010, № 3, էջ 20-33:

3. Հայոց հին մայրաքաղաքներին Վանը՝ պատմության բախիղներու ընդմեջէն, գրեց՝ Սերկէյ Վարդանեան (Արեւմտահայերէնի վերածեցին եւ վերամշակեցին Մաքրուհի Պ. Յակոբեան եւ Նաիրա Սիւզմէ), «**Նոր Մարմարա**», օրաթերթ, Իսթանպուլ, 2010, սեպտեմբերի 14, № 9377, էջ 3, սեպտեմբերի 15, № 9378, էջ 3, սեպտեմբերի 16, № 9379, էջ 3, սեպտեմբերի 17, № 9380, էջ 3, սեպտեմբերի 18, № 9381, էջ 2, 3:

Թերթի **հինգ համարներում** արտատպվել է Ս. Վարդանյանի «Հայաստանի մայրաքաղաքները» (1995) գրքի Վանին նվիրված գլուխը:

4. Պատմական Հայաստանի հին մայրաքաղաքները, պատրաստեց՝ Նաիրա Սիւզմէ, (Շար. 1), «**Նոր Մարմարա**», օրաթերթ, Իսթանպուլ, 2010, հոկտեմբերի 12, № 9401, էջ 3:

Հրապարակման առաջաբանում նշված է. «Ստորեւ քաղելով Սերկէյ Վարդանեանի «Հայաստանի մայրաքաղաքները» անուն հատորէն, մեր ընթերցողներուն կը ներկայացնենք Հայաստանի 12 մայրաքաղաքներու մասին ուշագրաւ հատուածներ»:

Այնուհետև տպագրվել են հատվածներ Վան, Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Տիգրանակերտ քաղաքների մասին:

5. Պատմական Հայաստանի հին մայրաքաղաքները, պատրաստեց՝ Նաիրա Սիւզմէ (Շար. 2 եւ վերջ), «**Նոր Մարմարա**», օրաթերթ, Իսթանպուլ, 2010, հոկտեմբերի 13, № 9402, էջ 3:

Սկիզբը նախորդ համարում է, այս համարում՝ Վաղարշապատ, Դվին, Բագարան, Շիրակավան, Կարս, Անի քաղաքների մասին է:

6. Հայաստանի մայրաքաղաքները. Անի, «**Լուսակն**», հանդես, Երևան, 2010, դեկտեմբեր, № 2, էջ 14-15:

7. Մի զվարճախոսության գրառումների և հրապարակումների պատմությունից, «**Ոսկե դիվան**», հեքիաթագիտական հանդես, պրակ 2, Հովհ. Թումանյանի թանգարան, Երևան, 2010, էջ 32-41:

Հոդվածը նվիրված է կրոնափոխ համշենցիներից գրառված մի զվարճապատումի տարբերակներին, որոնք տարածված են եղել Հայաստանի

տարբեր գավառներում և հարևան երկրների հայկական գաղթօջախներում:

8. Մահմեդական համաշնահայերից գրառված երկու զվարճախոսության տարբերակները // **«Հեթիաթի զարգացումը քանահյուսական և գրական միջավայրում»**, Հովհ. Թումանյանի թանգարան, 2010 թ., մարտի 30-31, գիտաժողովի ծրագիր և թեզիսներ, Երևան, 2010, էջ 12:

Գիտաժողովի կազմակերպիչներ՝ Հովհ. Թումանյանի թանգարան, Fabula armeniaca ծրագիր, ԵՊՀ անգլիական քանասիրության ամբիոն:

9. Հայերի բռնի կրոնափոխությանը նվիրված միջազգային գիտաժողով Ստեփանակերտում, **«Չայն համաշնական»**, ամսաթերթ, Երևան, 2010, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 2:

Հոդվածը նվիրված է 2010 թ. ապրիլի 20-ին Ստեփանակերտում՝ Ազգային ժողովի նիստերի դահլիճում, տեղի ունեցած «Բռնի կրոնափոխությունը՝ որպես ցեղասպանության բաղադրիչ» միջազգային գիտաժողովին, որտեղ զեկուցում է կարդացել նաև Ս. Վարդանյանը:

Արտատպել է **«Վարդանի կանչ»** թերթը, Երևան, 2010, № 12 (150), էջ 6:

Տպագրվել է նաև Ս. Վարդանյանի լուսանկարը էլոյթի պահին:

Սույն լրատվությունը տե՛ս նաև **«Амшен-Понтос»**, выпуск четвертый, Краснодар-Сочи, 2011, с. 8.

10. Հայերի բռնի կրոնափոխությանը նվիրված միջազգային գիտաժողով Ստեփանակերտում, **«Վարդանի կանչ»**, թերթ, Երևան, 2010, № 12 (150), էջ 6:

Արտատպվել է **«Չայն համաշնական»** ամսաթերթի 2010 թ., № 3-4 -ից:

11. [Առաջաբան], **«Չայն համաշնական»**, ամսաթերթ, Երևան, 2010, մարտ-ապրիլ, № 3-4:

Երջանկահիշատակ Վարդուհի Խաչիկյանի Ջենիգի խոսվածքով գրառած հեթիաթի տպագրության առթիվ գրված առաջաբանն է:

12. Մեծ հաղթանակի 65-ամյակի առթիվ. Արյունտոված սերմեր, **«Չայն համաշնական»**, ամսաթերթ, Երևան, 2010, մայիս-հունիս, № 5-6, էջ 2, 3:

Հոդվածը նվիրված է Մեծ Սոցիի Լազարևսկի շրջանի Խնձորուտ (Վերխնյայա Խոբգա) գյուղում ծնված Խորհրդային Միության հերոս, օդաչու Մարտիրոս Նահուլյանին (1920-1945):

13. Մի հոդված **«Ազօում»**, **«Չայն համաշնական»**, ամսաթերթ, Երևան, 2010, մայիս-հունիս, № 5-6, էջ 8:

Տասնմեկ ծանոթագրություններում նշված են այն սխալները, որոնք տեղ են գտել Ստամբուլի «**Agos**» թերթի 2010 թ. հունվարի 8-ի համարում նրա թղթակից Արիս Նալջրի՝ Ս. Վարդանյանի մասին գրած «**Erevan'da bir Hemsinli**» (Մի համշենցի Երևանում) թուրքերեն հոդվածում: Տպագրվել է նաև Արիս Նալջրի հոդվածի հայերեն թարգմանությունը:

14. [Անվերնագիր], «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2010, հուլիս-օգոստոս, № 7-8:

Ստամբուլաբնակ համշենցի ճանաչված ռեժիսոր Օսջան Ալպերի հետ Հայկազուն Ալվրցյանի «Օսկան Ալպերը՝ «Դրոշակի» խմբագրատանը» հարցազրույցի արտատպությունից առաջ Ս. Վարդանյանը ներկայացրել է ռեժիսորի մասին որոշ տեղեկություններ:

15. Հայկ Խաստյան, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2010, հուլիս-օգոստոս, № 7-8:

Տուապսեի շրջանի Գորսկի գյուղում բնակվող բանաստեղծ Հայկ Խաստյանի մասին հակիրճ խոսք է, որից հետո տպագրվել է նրա բանաստեղծությունը:

16. Համշենցի բանաստեղծը, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2010, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 2:

Ներկայացվել է Արդվինի նահանգի Խոփա քաղաքում բնակվող համշենցի բանաստեղծ Յուսուֆ Վայիչի անցած ուղին, տպագրվել են Խոփայի խոսվածքով նրա գրած երեք բանաստեղծությունները՝ «**Գերթաք**», «**Մեզ օր մե**», «**Էլլե հանա**» ու Ս. Վարդանյանի գրական արևելահայերեն թարգմանությունները:

17. Հակոբ Գուրունյան, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2010, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 8:

Հոդվածը 1916 թ. Աբխազիայի Գուլրիպշի շրջանի Ծեբելդա գյուղում ծնված, համշենահայ ճանաչված մտավորական, արձակագիր, բանաստեղծ և բանահավաք, Երևանում, Թբիլիսիում, Սուխումում հայերեն, վրացերեն, աբխազերեն հրատարակված շուրջ մեկուկես տասնյակ գրքերի հեղինակ, Հայաստանի և Վրաստանի գրողների միությունների անդամ, հայոց լեզվի և գրականության երկարամյա մանկավարժ, Վրաստանի վաստակավոր ուսուցիչ Հակոբ Գուրունյանի մասին է (մահ.՝ 1997 թ.):

Հոդվածից հատված. «Նա հաճախ էր գալիս Երևան, որտեղ լույս էին տեսնում նրա գրքերը: 1970-80-ական թթ., երբ ես աշխատում էի «Պիոներ կանչ» թերթի և «Պիոներ» ամսագրի խմբագրություններում, այցելում էր

ինձ և տպագրելու համար տալիս իր և սաների, ինչպես նաև Սուխումի «Սնծովյան այգաբաց» գրական միավորման անդամների ստեղծագործությունները: Եվ նրա ամեն այցը, խոսքն ու գրույցը ջերմությամբ ու աշխույժով էին լցնում խմբագրությունը»: Տպագրվել են նաև Հ. Գուրունյանի մեկ բանաստեղծությունը և գրի առած տասը խաղիկները (մընիներ):

18. [Անվերնագիր], **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2010, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 1:

Երևանում բնակվող, Աբխազիայի Օչամչիրի շրջանի Հայկական Աթաբա գյուղում ծնված, հայտնի քեմեչեհար Նշան Ֆերմանյանի (Յանուկյանի) **«Փրկված հուշերի»** հրապարակման առաջաբանն է:

19. [Անվերնագիր], **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2010, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 6:

Վարդուհի Խաչատրյանի Համշենի բարբառով գրառած «Մինասը» հեքիաթի տպագրության առթիվ համառոտ խոսք է:

20. Հովհ. Թումանյան, Սուտասանը, Խափելուջին, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2010, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 8:

Հովհ. Թումանյանի «Սուտասանը» հեքիաթին զուգահեռ տպագրվել է Խովհայի խոսվածքի վերածված տարբերակը, վերածող՝ Ս. Վարդանյան: Թարգմանության ճշտված տարբերակը տպագրվել է նույն թերթի 2012 թ. հունվար-փետրվարի № 1-2 համարում՝ «Շիդագ չասողը (խափող)» վերնագրով:

### Երրորդ բաժին

21. Արմեն Հովակիմյան, Համշենահայերին մեծ աշխարհի հետ կապող շավիղը, Սերգեյ Վարդանյանը՝ ծանոթ և անծանոթ, **«Հայաստանի Հանրապետություն»**, օրաթերթ, Երևան, 2010, փետրվարի 11 (№ 23), էջ 5:

Քրիստոնյա և իսլամ համշենահայերի շրջանում Ս. Վարդանյանի գործունեության, **«Ձայն համշենական»** թերթի և համշենահայերի մասին հոդվածների մասին է: Տպագրվել է նաև Ս. Վարդանյանի լուսանկարը:

Հոդվածից հատվածներ. «Թերթը թեմատիկ-բովանդակային առումով ընդգրկում է գիտական-ազգագրական-ճանաչողական բնույթի այնպիսի նյութեր, որոնք մնայուն են եւ կարող են ընթերցողներին արժեքավոր պատմաազգագրական տեղեկություններ հաղորդել՝ անկախ դրանց ընթերցման ժամանակահատվածից: ... Ինչ խոսք, հարգանքի արժանի եռանդով Սերգեյ Վարդանյանը շարունակում է նոր ուսումնասիրություններ կատարել, սակայն նրա դարակներում դեռևս մնում են չտպագրված բազ-

մաթիվ նյութեր Համշենի, համշենահայ ֆիդայիների եւ հայ ազգագրության ու պատմության մասին: Այս հանգամանքն արժե, որ մտահոգեր ազգասիրական նախաձեռնություններին նախանձախնդիր կազմակերպություններին ու անհատներին»:

Հոդվածի արտատպությունը տե՛ս **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2010, մարտ-ապրիլ, № 3-4:

22. Արմեն Հովակիմյան, Համշենահայերին մեծ աշխարհի հետ կապող շավիղը. Սերգեյ Վարդանյանը՝ ծանոթ և անծանոթ, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2010, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 7:

Արտատպված է **«Հայաստանի Հանրապետություն»** օրաթերթի 2010 թ. փետրվարի 11-ի համարից, էջ 5:

23. Վանիկ Սանթրյան, Մի կյանքի պատմություն, ներկայացվեց Վանի և Սարդարապատի հերոսամարտերի մասնակցի գիրքը, **«Հայաստանի Հանրապետություն»**, օրաթերթ, Երևան, 2010, հունիսի 26, № 119, էջ 4:

Պատմում է Երվանդ Կյուրեղյանի «Իմ հուշերի ճանապարհով» (2009) հուշագրության ԵՊՀ-ում կայացած շնորհանդեսի մասին: Այն հրատարակության են պատրաստել, խմբագրել և ծանոթագրել Ս. Վարդանյանը և Լ. Սահակյանը: Գիրքն ունի նաև խտասկավառակ:

24. Ալվարո Դազիյան (գրախոսություն), Ս. Վարդանյան, «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ)», Երևան, ԵՊՀ հրատ., 2009, 428 էջ, **«Պատմաբանասիրական հանդես»**, քառամսյա հանդես, Երևան, 2010, № 2, էջ 276-278:

Գրախոսությունից հատված. «Ս. Վարդանյանի աշխատության ակնառու արժանիքներից է բանահյուսությանը նվիրված բաժինը: Նախ նշենք, որ նյութերի մեծ մասը գրի է առել ինքը՝ հեղինակը, իր շրջագայությունների ընթացքում: Թե որքան հոգեմաշ ու դժվար աշխատանք է բանահյուսական նյութ հայտնաբերելն ու գրանցելը, դա միայն բանահավաքներին է հայտնի: Ներկայացված ստեղծագործություններն այսօրվա գիտական պահանջներին համապատասխան ծանոթագրված են, տեղեկություններ են տրված բանասացի, գրառման տեղի, ժամանակի վերաբերյալ: Երգերին կցված են գրական թարգմանությունները: Հատկանշական է, որ երգերն ու մանիները նոտագրված են» (էջ 277): «Հայագիտական կարևոր նշանակություն ու արժեք ունի գրքի բարբառագիտական բաժինը: Նշենք, որ նյութի յուրացումը դյուրին դարձնելու նպատակով հեղինակը զուգահեռ տվել է նաև գրական թարգմանությունները: ...Ամփոփելով մեր խոսքը՝ ասենք, Ս.

Վարդանյանի սույն աշխատությունը յուրահատուկ ներդրում է հայագիտության ասպարեզում» (էջ 278):

25. Алвард Газиян, Фольклорист, канд. филологических наук, Речь пока о подсчёте потерь, «**Голос Армении**», газета, издаётся трижды в неделю, Ереван, 2010, 1 июля, № 71.

Հոդվածը սկսվում է Ս. Վարդանյանի գործունեության և նրա «Կրոնափոխ համաձայնագրերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ)» (2009) գրքի գնահատմամբ, այնուհետև անդրադառնում է Ադրբեջանում մեր ոչ նյութական մշակութային կորուստներին:

26. Mesut Çevikalp, Erivan'da bir garip Hemşinli, Van'dan Erivan'a, Soçi'den Hemşin'e uzanan bir hikâye Sergey Vartanyan'ınki. 30 yıl önce bir merakla başlamış ve..., «**Aksiyon**», Haftalık haber dergisi, Istanbul, 2010, 5-11 Nisan, № 14 (800), s. 52-54.

(Թարգմանություն՝ Մեսութ Չևիքալփ, Երևանում մի տարօրինակ համաձայնագրի, Սերգեյ Վարդանյանինը Վանից Երևան, Սոչիից Համաձայն երկարող մի պատմություն է: 30 տարի առաջ մի հետաքրքրությամբ է սկսել և..., «**Աքսիյոն**», շաբաթաթերթ, լրատու, Ստամբուլ, 2010, ապրիլ, № 14 (800), էջ 52-54):

Նույն հոդվածում տեղադրված է նաև ստամբուլաբնակ գրող-լրագրող, համաձայնագրի Ադնան Գենչի փոքր նյութը Ս. Վարդանյանի և «Չայն համաձայնական» թերթի մասին, տե՛ս **Adnan Genç**, Hemşin kültürünün yok olmaması için çabalıyor (Թարգմանություն՝ **Ադնան Գենչ**, Նա ճիգ է թափում, որ Համաձայնի մշակույթը չվերանա), էջ 53:

Հոդվածի անգլերեն տարբերակը տե՛ս **Mesut Çevikalp**, A lone “Hemşinli” in Yerevan, “**Today’s Zaman**”, gazete, Istanbul, 2010, may 06: “**Today’s Zaman**”-ում անգլերեն հրապարակված հոդվածը՝ «Մի միայնակ «համաձայնի» Երևանում» կրճատումներով տպագրվել է ռուսերեն՝ ««**Голос Амшена**» в Ереване. Сергей Варданян», «**Hamshen**», периодическое издание, Москва, 2010, лето, № 2, с. 73, 74.

27. Mesut Çevikalp, A lone “Hemşinli” in Yerevan, “**Today’s Zaman**”, gazete, Istanbul, 2010, may 6: (Թարգմանություն՝ Մի միայնակ «համաձայնի» Երևանում):

«**Today’s Zaman**»-ում անգլերեն հրապարակված հոդվածը կրճատումներով տպագրվել է ռուսերեն՝ ««**Голос Амшена**» в Ереване. Сергей Варданян», «**Hamshen**», периодическое издание, Москва, 2010, лето, № 2, с. 73, 74.

28. [Месут Чевикалп], «Голос Амшена» в Ереване. Сергей Варданян, переводчики Гарри Гаранян и Георг Мхитарян, «**Hamshen**», периодическое издание, Москва, 2010, лето, № 2, с. 73, 74.

Ստամբուլի «**Aksiyon**» հանդեսի 2010 թ. № 14-ում հրատարակած Մեսութ Չևիքալիի հոդվածի անգլերեն տարբերակից՝ (Mesut Çevikalp, A lone «Hemşinli» in Yerevan, «**Today's Zaman**», gazete, Istanbul, 2010, may 6), (Թարգմանություն՝ Մի միայնակ «համշենցի» Երևանում) կատարված կրճատ թարգմանությունն է, առանց հեղինակի անունը նշելու: Հոդվածի վերջում, ինչպես բնագրում է, թարգմանաբար տպագրվել է Ս. Վարդանյանի և «Չայն համշենական» թերթի մասին ստամբուլաբնակ գրող-լրագրող, համշենցի Ադնան Գենչի նյութը՝ Известный турецкий журналист Аднан Генч: «Он работает, чтобы сохранить культуру Амшена».

29. Ներսես Մկրտչյան, բ. գ. դ., պրոֆեսոր, Հանրագիտարան կրոնափոխ համշենահայերի մասին, «**Հայաստանի Հանրապետություն**», օրաթերթ, Երևան, 2010, փետրվարի 4 (№ 18), էջ 4:

Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ)» (2009) գրքի գրախոսությունն է: Հատված. «Այս գիրքը նորություն է բերում հայերենագիտությանը՝ մի քանի առումներով՝ և՛ բարբառագիտության, և՛ ժողովրդի պատմության անծանոթ մնացած էջերը լրացնելու, և՛ երգարվեստի՝ երաժշտության և ազգագրության: Այսպես, օրինակ՝ քրիստոնյա համշենահայերի բարբառը թեև ուսումնասիրված է Հ. Աճառյանի կողմից, սակայն նրա խոսվածքների կամ տարբերակների քնությունը մնացել է բաց:... Հ. Աճառյանի «Քնություն Համշենի բարբառի» (1947 թ.) ուսումնասիրությունը հենված է միայն Տրապիզոնի և Ճանիկի, երբեմն Մալայի խոսվածքների վրա, սակայն կրոնափոխված համշենցիներից Ս. Վարդանյանի գրի առած նյութերը պարզում են, որ գոյություն է ունեցել նաև Խոփայի խոսվածք, որը տարբերվում է հիշյալ խոսվածքներից...»

Մերգեյ Վարդանյանը սովորական գիտնական չէ, նա անձնագրի, գրկանքների գնով հայ մշակույթի կորած արժեքները վերադարձրել է իր ժողովրդին: Նա դեռ եռանդով լի է և մուսուլման համշենցիների մոտ պահպանված մյուս արժեքներն էլ մայր ժողովրդի մշակույթին միացնելու դժվարին աշխատանքները շարունակելու երդվյալն է մնում: Նրա գիրքը իսկապես մի հանրագիտարան է նաև համշենահայերի մասին ընդհանրապես անցյալում և մեր ժամանակներում հրատարակված սպառնիչ գրա-

կանությամբ, ուր հեղինակը ամենայն բժախնդրությամբ հավաքել է ու ներկայացրել վաղեմի հրատարակություններն ու մերօրյա վկայությունները»:

Արտատպությունը տե՛ս «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2010, հունվար-փետրվար, № 1-2, էջ 3:

30. Ներսես Մկրտչյան, Հանրագիտարան կրոնափոխ համշենահայերի մասին, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2010, հունվար-փետրվար, № 1-2, էջ 3:

Արտատպվել է «**Հայաստանի Հանրապետություն**» օրաթերթի 2010 թ. փետրվարի 4-ի համարից: Բ.գ.դ., պրոֆեսոր Ն. Մկրտչյանը գրախոսել է Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (կյուրեր և ուսումնասիրություններ)» (Երևան, ԵՊՀ հրատ., 2009 թ.) գիրքը:

31. Aris Nalci, Yerevan'da bir Hemsinli, “**Agos**”, gazete, Istanbul, 2010, 8 ocak, № 719, s. 12.

Ստամբուլի «**Ակօս**» թերթի հունվարի 8-ի համարում թղթակից Արիս Նալջըն «Երևանում մի համշենցի» թուրքերեն հոդվածում պատմում է Ս. Վարդանյանի գործունեության մասին: Հոդվածի թարգմանությունից հատված. «Երևանում հրատարակվող «Ձայն համշենական» թերթը՝ այս գանձը, լույս աշխարհ բերող գլխավոր խմբագիրն ու միակ աշխատողը գիտնական Սերգեյ Գագիկի Վարդանյանն է:

Այցելում եմ Վարդանյանին, ... որի տունը միաժամանակ թերթի խմբագրատունն է: Երևանի Մայր Հայաստանի արձանի գրեթե հանդիպակաց բլրի վրա գտնվող նրա տունը մտնելով, թղթի հոտ առա, և իմ մեջ այն զգացումն արթնացավ, որ այստեղից մեծ գանձով եմ դուրս գալու (այցի ավարտին խմբագրատնից մի խուրձ գրքերով իմ հեռանալը ինձ ցույց տվեց, որ ես չեմ սխալվել թղթի հոտ առնելու հարցում):

Երբ տուն ենք հասնում, Վարդանյանն ինձ ասում է. «Թափթփվածության համար ներող եղիր»: Դռան հետևում նկատում եմ, որ իրար վրա են դարսված «Ձայն համշենականի» հին համարները, կողքին էլ՝ շատ ձեռագիր գրքեր: Այդ տետրերը լիքն են ցեղասպանությունից փրկված ընտանիքի մեծերի հիշողություններով: Վարդանյանն ասում է, որ ժամանակ չունեցավ, որ համակարգիչ մտցնի:

Հինգ տարի շարունակ «**Ձայն համշենականը**» հրատարակող Վարդանյանի նպատակը չքացման շեմին գտնվող մի մշակույթի վերջին փշրանք-

ներն ի մի բերելն է: Վաստահ է, որ 1000 տպաքանակով թերթի արժեքը տա-  
սը տարի հետո ավելի կգնահատվի»:

Ամբողջ հոդվածի հայերեն թարգմանությունը տե՛ս **Արիս Նալչը**, Մի  
համշենցի Երևանում, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2010, № 5-  
6:

Այն տպագրվել է Ս. Վարդանյանի «Մի հոդված «**Ազօտում**» առաջաբա-  
նով, որտեղ նշվում է, որ Ա. Նալչըի գրության մեջ տեղ են գտել մի շարք  
անճշտություններ, որոնց Ս. Վարդանյանն անդրադառնում է իր 11 ծանո-  
թագրություններում:

32. Ռուբեն Մելքոնյան, Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության  
տարիներին. ընթացքը և հետևանքները, Երևան, Հեղինակային հրատա-  
րակություն, 2010 (-184 էջ):

Բ.գ.թ., թուրքագետ Ռ. Մելքոնյանն իր գրքում քանիցս հիշատակում է Ս.  
Վարդանյանին և նրա ուսումնասիրությունները, տե՛ս էջ 5, 51, 76, 83, 104,  
119, 170, 180:

33. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, վեպ, գիրք տասնմեկերորդ,  
գլուխ տասներորդ, «Արձաններ և մարդիկ», «**Առավոտ**», օրաթերթ, Երևան,  
2010, նոյեմբերի 20, № էջ 8, 9:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վար-  
դանյանն է:

34. Ազնեսա Խամոյան, Հայոց ցեղասպանության ևս մեկ անժխտելի  
վկայություն, «**Երկիր**», օրաթերթ, Երևան, 2010, հունիսի 26, № 116, էջ 6:

Հոդվածը հունիսի 25-ին ԵՊՀ-ում կայացած Ե. Կյուրեղյանի «Իմ հուշերի  
ճանապարհով» (2009) գրքի շնորհանդեսի մասին է:

35. Հ. Աֆյան, Համաշխարհային հայկական կոնգրեսի և ժուռնալիստ-  
ների միության մրցանակները, «**Ազգ**», օրաթերթ, Երևան, 2010, Յուլիս 10,  
№ 128, էջ 3:

Ռուսաստանի հայերի միության, Համաշխարհային հայկական կոնգրե-  
սի, ՀՀ սփյուռքի նախարարության և Հայաստանի ժուռնալիստների միութ-  
յան հայտարարած մրցանակաբաշխության մասին է. «Երեկ ժուռնալիստ-  
ների միությունում ամփոփվեցին 2009-ի մրցանակաբաշխության արդ-  
յունքները: Այս տարվա մրցույթի թեման մնացել էր անփոփոխ՝ «Աշխարհի  
հետ մեր ինքնությամբ. Հայաստանը համայն հայության հայրենիքն է:  
...«Ազգ» թերթը, ինչպես նաև «Ձայն համշենական» թերթի գլխավոր խմբա-  
գիր Սերգեյ Վարդանյանը պարզևստրվում են բարձրագույն մրցանակնե-

րով», ասաց մրցանակաբաշխության ժյուրիի նախագահ, ժուռնալիստների միության փոխնախագահ Գրիգոր Ջանիկյանը»:

36. Հայկանուշ Մեսրոպյան, Համշենահայության տեղաշարժերը և բարբառային առանձնահատկությունները, «Չայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2010, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 3, 7:

Բ.գ.թ., դոցենտ Հ. Մեսրոպյանն իր ընդարձակ հոդվածում անդրադառնում է նաև Ս. Վարդանյանին: Հոդվածից հատվածներ. «Համշենահայերի բարբառի և տեղաշարժերի մասին արժեքավոր տեղեկություններ կարելի է քաղել Սերգեյ Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը» մենագրությունից: Գրքում ի մի են բերված Համշենի և համշենահայության մասին առկա բազմաթիվ նյութեր ու վկայություններ, որոնց հիման վրա հեղինակը կատարել է նոր եզրահանգումներ: Նա մանրամասնորեն խոսում է ոչ միայն մահմեդականացած համշենցիների պատմության ու կենցաղի, նրանց տեղաշարժերի, այլև Համշենի բարբառի ներկա լեզվավիճակի մասին: Հեղինակը, շրջագայելով Ղազախստանում, Ղրղզստանում, Ուզբեկստանում, ՌԴ Կրասնոդարի երկրամասում, մոտիկից շփվել է կրոնափոխ համշենահայերի հետ, ծանոթացել նրանց ավանդույթներին, բանահյուսությանը և լեզվին:

Վերջին տարիներին Ս. Վարդանյանը հնարավորություն է ունեցել շփվելու նաև Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփայի գավառի հայության հետ և գրի առնելու նրանց բարբառը՝ հոմշեցնակը, բանահյուսությունը և երգարվեստի արժեքավոր նմուշները:

Իր գրքում Ս. Վարդանյանը համառոտակի ներկայացնում է Համշենի բարբառի Խոփայի խոսվածքի հնչյունական, բառապաշարային, քերականական առանձնահատկությունները՝ ասելիքը հաստատելով «Հայերենի բարբառագիտական աստլասի նյութերի հավաքման ծրագրի» պահանջներին համապատասխան գրի առած հարուստ բարբառային նյութերով, ապա և Խոփայի խոսվածք-ժամանակակից գրական արևելահայերեն բառարանով:

...[Ս. Վարդանյանի] վերոնշյալ աշխատության հիման վրա ավելացնում ենք համշենահայության տեղաշարժերի մի քանի ուղղություններ ևս»:

37. Լուսինե Սահակյան, Այցելություն Համշեն, մոռացվող տեղանուններ և անձնանուններ, «Չայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2010, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 1:

Բ. գ. թ., թուրքագետ Լ. Սահակյանի հոդվածը պատմում է 2010 թ. հուլիսին Արդվինի և Ռիզեի նահանգներում կատարված ուսումնասիրությունների մասին, նշվում է. «Մեր խմբի կազմում էին «Ձայն համշենական» թերթի գլխ. խմբագիր, բռնի կրոնափոխված համշենահայերի պատմությունը, բարբառը և բանահյուսությունը շուրջ երեք տասնամյակ ուսումնասիրող Սերգեյ Վարդանյանը, ...» (էջ 1):

38. Ռուբեն Մելքոնյան, Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության (1920-ականներից մինչև մեր օրերը), ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, ՎՄՎ-Պրինտ, 2010 (-104 էջ):

Գրքի 68, 74, 75, 99-րդ էջերում հիշատակվում է Ս. Վարդանյանը. «Վերապատվելի Գրիգոր Աղաբալօղլուն «Ձայն համշենական» թերթի գլխավոր խմբագիր Սերգեյ Վարդանյանին տված հարցազրույցում, անդրադառնալով իսլամացված հայերի միջև ներքին ամուսնություններին, ասում է. «(Հայերի-Ռ.Մ.) մէկ մասն ալ Անատոլիա կ'ապրին, իսլամացած են, կըսեն մեր գիւղը հայ է, միւս գիւղն ալ հայ է, մենք իրարու աղջիկ կուտանք, որ դուքսէն մարդ չըմտնէ մեր մէջ» («Ձայն համշենական», 2007, № 34-35)» (էջ 74): «Ի դեպ, հարկ է նշել, որ հայության տարբեր խմբերի կողմից իսլամացված համշենահայերին վանելու փաստեր արձանագրվել են ոչ միայն Թուրքիայում, այլև, օրինակ՝ 1944-ին Աջարիայից Միջին Ասիա արքայրված կրոնափոխ համշենահայերի պարագայում ևս: Ինչպես փոխանցում է համշենահայերի խնդիրներով տասնամյակներ զբաղվող բանահավաք Սերգեյ Վարդանյանը, ԽՍՀՄ տարիներին Միջին Ասիայի իսլամացված համշենահայերի ձգտումները՝ վերինտեգրվելու հայությանը, հանդիպում էին անտարբերության և սառնության վերջիններիս կողմից, և 1980-ականներին այդ վայրերը այցելած Վարդանյանին կրոնափոխ համշենահայերն ասել են, թե ինքն առաջին հայն է, որ իրենց համարում է հայ» (էջ 75):

39. Lusine Sahakyan, Լուսինե Սահակյան, Лусине Саакян, Turkification of The Toponyms in The Ottoman Empire and The Republic of Turkey, Տեղանունների թուրքացումն Օսմանյան կայսրությունում և Հանրապետական Թուրքիայում, Отуречивание топонимов в Османской Империи и Республиканской Турции, Montreal Arod books, Quebec, Canada, 2010 (- 70 էջ):

«Արարատ» ռազմավարագիտական և ԵՊՀ օսմանագիտական կենտրոնների հրատարակած ուսումնասիրությունը նվիրված է Օսմանյան կայսրությունում և Հանրապետական Թուրքիայում հայկական տեղանուն-

ների միտումնավոր փոփոխությանը: 22, 44 և 66-րդ էջերում Դվին տեղանվան առթիվ հղված է Ս. Վարդանյանի «Հայաստանի մայրաքաղաքները» (1995) գրքի 109-րդ էջին:

2011

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Բանահյուսական նոր գրառումներ Թուրքիայի կրոնափոխ համշենահայերից // **«Արևելյան հեքիաթ, Արևելքը հեքիաթում»** գիտաժողովի ծրագիր և թեզիսներ, Հովհ. Թումանյանի թանգարան, 2011 թ. մարտի 30-31, Երևան, 2011 թ., էջ 26:

Գիտաժողովի կազմակերպիչներ՝ Հովհ. Թումանյանի թանգարան, Fabula armeniaca ծրագիր, ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոն:

2. Կրոնափոխ համշենահայից Բոստոնում գրառված զվարճախոսության տարբերակների մասին // **«Լեզուն, գրականությունը և արվեստը միջմշակութային համատեքստում»** (ԵՊՀ, 2011 թ. հոկտեմբերի 4-8) միջազգային գիտաժողովի թեզիսներ, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 133, 134:

Միջազգային գիտաժողովի կազմակերպիչներ՝ ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոն, Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիա:

3. Հայոց մայրաքաղաքները. Վան, **«Լուսակն»**, հանդես, Երևան, 2011, № 3, մարտ, էջ 12, 13:

4. Հայոց մայրաքաղաքները. Արմավիր, **«Լուսակն»**, հանդես, Երևան, 2011, մայիս, № 4, էջ 10, 11:

5. Հայոց մայրաքաղաքները. Երվանդաշատ, **«Լուսակն»**, հանդես, Երևան, 2011, սեպտեմբեր, № 5, էջ 10, 11:

6. Հայոց մայրաքաղաքները. Արտաշատ, **«Լուսակն»**, հանդես, Երևան, 2011, դեկտեմբեր, № 6, էջ 10, 11:

7. Солнечный город, **«Ереван»**, журнал, Ереван, 2011, январь-февраль, № 1-2 (62), с. 8, 104-111.

Հայաստանի առաջին մայրաքաղաք Վանի մասին է նկարագարող է:

8. Թոխչք (պատմվածք) // **Մայրենի-5, հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք** / Գյուրջինյան Դավիթ, Ալեքսանյան Թամար, Գալստյան Աշոտ, Երևան, Էդիթ Պրինտ, 2011 (- 240 էջ), էջ 105-110:

Այս դասագրքով հանրակրթական դպրոցներում դասավանդվել է մինչև 2022-2023 ուստարին ներառյալ:

Տե՛ս նաև «Պիոներ կանչ», եռօրյա թերթ, 1983, դեկտեմբերի 14, № 99: Ս. Վարդանյան, Արևածաղիկը, պատմվածքներ, Երևան, 1989 (-40 էջ), էջ 28-30: Ս. Վարդանյան, Արևածաղիկը, պատմվածքներ, Իսթանպուլ, 1994 (-64 էջ), էջ 49-52:

9. Բանահյուսական նոր գրառումներ Թուրքիայի Արդվինի նահանգում, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2011, հունվար-փետրվար, № 1-2, էջ 2, 3, 8:

2010 թ. հուլիսին Արդվինի նահանգ ուղևորության նոթերից հետո տպագրվել են այնտեղ բնակվող կրոնափոխ համշենցիներից գրառված մի շարք բանահյուսական նյութեր՝ զուգահեռաբար Ս. Վարդանյանի արևելահայերեն թարգմանությամբ («Շաեդնիյե», «Արչե», «Հորթն ու քուփե», «Արչ փերնուշե», 13 առածներ, ասացվածքներ և դարձվածքներ, 11 խաղիկներ և 1 մանկական խաղերգ):

10. Ուղիղ 100 տարի առաջ, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2011, մարտ-ապրիլ, № 3-4:

Շիրակի գյուղացիության արտագաղթի մասին 1911 թ. «Հորիզոն» (Թիֆլիս) թերթում տպագրված «Գաղթը շարունակվում է» հոդվածի արտաստպության առթիվ գրված առաջաբանն է:

11. Դժոխային կիրճի արձագանքները, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2011, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 2, 3:

Եղեռնի ժամանակ հայերին Արտանուշ քաղաքի Ջեհեննեմ դերե (Դժոխքի ձոր) կիրճի ժայռից ցած նետելու մասին է: Տպագրվել է նաև ստամբուլաբնակ համշենցի երգիչ Հիքմեթ Աքչիչեքի պատմած և Ս. Վարդանյանի գրի առած «Բաթումի արդանուշցի էրմենի մե» վկայությունը բարբառով և Ս. Վարդանյանի արևելահայերեն թարգմանությունը («Բաթումում մի արտանուշցի հայ»):

12. [Անվերնագիր], «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2011, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 6:

Ս. Վարդանյանը, տպագրելով Աբխազիայում ձեռք բերած երջանկահիշատակ Եփրեմ Ջաքարյանի տարիներ առաջ գրի առած «43 տարի անց» հուշապատումը, որը Եղեռնից 43 տարի հետո Ջանակ տատի և նրա որդու՝ Սամվելի հանդիպման մասին է, ներկայացրել է Ե. Ջաքարյանի կենսագրությունը և այս պատմության հետ կապված որոշ մանրամասներ:

«43 տարի անց» հուշապատումը արտատպվել է Բեյրութի «Ազգակ» օրաթերթում՝ 2018, ապրիլի 24, № 40, ապրիլի 30, № 44, մայիսի 1, № 45: Ցա-

վոք, չի նշվել, որ այն Աբխազիայից ձեռք է բերել, հրատարակության պատրաստել և ծանոթագրել Ս. Վարդանյանը: Թեև «Ազդակի» 2018 թ. մայիսի 3-ի № 46-ում «Ձայն համշենական» թերթի 2011 թ. № 5-6-ից արտատպվել է Ս. Վարդանյանի «Տառապանքի փշոտ ճանապարհներին» հոդվածը, որը վերոնշյալ հուշագրության արձագանքների մասին է, բայց կրկին տեղեկատվությունը և անհրաժեշտ հղումը թերի են:

Եփրեմ Զաքարյանի գրի առած «43 տարի անց» հուշագրությունը Ս. Վարդանյանի նախաձեռնությամբ թարգմանվել և տպագրվել է նաև թուրքերեն. «Այս, զավակս, ամեն ինչ չեմ կարողանում պատմել» վերնագրով, թարգմանիչ՝ Օսեփ Թոքաթ, տե՛ս “Ah evladım, her şeyi anlattımıyorum ki!”, çeviren: Osep Tokat, “**Paros**”, Çok Kültürlü Yaşam Dergisi, İstanbul, 2012, Nisan, № 7, s. 71-73.

13. Տառապանքի փշոտ ճանապարհներին, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2011, մայիս-հունիս, № 5-6, էջ 2:

Թերթի նախորդ 3-4 համարում հրապարակված «43 տարի անց» հուշագրության արձագանքների մասին է: Տպագրվել են նաև արձագանքները: Բեյրութի «Ազդակ» օրաթերթը նախորդ համարներում «Ձայն համշենականից» **արտատպելով** «43 տարի անց» հուշագրությունը, 2018 թ. մայիսի 3-ի № 46-ում **արտատպել** է նաև «Տառապանքի փշոտ ճանապարհներին» հոդվածը, ցավոք, կրկին չնշելով աղբյուրը:

14. Նմուշներ Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփայի գավառի կրոնափոխ համշենահայերի բանահյուսությունից, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2011, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 8:

Տպագրվել են Ս. Վարդանյանի գրառած 5 խաղիկները, 1 մատնախաղը և 1 զվարճախոսությունը և նրանց արևելահայերեն թարգմանությունները:

15. Շնորհավոր հաղթանակդ, հայրենիքի զինվոր, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2011, մայիս-հունիս, № 5-6, էջ 1:

Հոդվածը Աբխազիայի Գուդաութայի շրջանի Հայկական Անուխվա գյուղում ծնված, Երկրորդ համաշխարհային պատերազմին մասնակցած, Երևանում բնակվող Գրիգոր Գունդակչյանի մասին է: Որոշ նկատառումներով, առանց հեղինակը և աղբյուրը նշելու, հոդվածը մի քանի փոփոխություններով հրապարակվել է նաև Ստամբուլում թուրքերեն հրատարակվող «**Paros**» հանդեսում՝ հետևյալ վերնագրով «Համաշխարհային պատերազմում մի համշենցի», պատրաստող՝ Օսեփ Թոքաթ, տե՛ս Dünya Savaşı’nda Bir Hemsinli, Hazırlayan: Osep Tokat, “**Paros**”, Çok Kültürlü Yaşam Dergisi, İstanbul, 2012, Ocak, № 4, s. 31.

16. Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփայի և Բորչկայի գավառների կրոնափոխ համալսարանի քանադոնային նմուշներ, «**Ձայն համալսարանական**», ամսաթերթ, Երևան, 2011, մայիս-հունիս, № 5-6, էջ 7, 8:

Տպագրվել են Ս. Վարդանյանի գրառած «**Թեմալին Շաիզեին հեթիյան**», «**Զոնգաքե**», «**Գոթոբ բեդ էնուշե**», «**Գեդդեվային խոջային հեթիյան**» պատմությունները և «**Բեդ գենիմ**» երգը, բոլորը՝ զուգահեռ գրական արևելահայերեն թարգմանությամբ:

17. Դպրոցական դաս, ինդիր № 1. «Լինե՞լ թե՞ չլինե՞լ», «**Ձայն համալսարանական**», ամսաթերթ, Երևան, 2011, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 1:

Հոդվածը Կրասնոդարի երկրամասի և Աբխազիայի հայկական դպրոցների թվի նվազման մասին է:

18. Նոթատետրիս նշումներից, «**Ձայն համալսարանական**», ամսաթերթ, Երևան, 2011, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 8:

2011 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Թուրքիայի Էրզրումի, Արդվինի և Ռիզեի նահանգների համալսարանների շրջանում կատարած ուսումնասիրությունների մասին է: Տպագրվել են նաև **11 առած-ասացվածքներ և մեկ մանկական խաղերգ՝ իրենց թարգմանություններով**:

Հոդվածը և 7 առած-ասացվածքները Ս. Վարդանյանի թարգմանություններով, առանց աղբյուրը նշելու, արտատպվել են Աթենքի «**Ազատ օր**» օրաթերթի 2012 թ. «**Բացառիկում**», էջ 34, 37:

19. Հրաշալի նախաձեռնություն (Մոսկվայի “**Hamshen**” հանդեսը), «**Ձայն համալսարանական**», ամսաթերթ, Երևան, 2011, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 1:

Ռուսաստանի հայերի միության կազմում 2007 թ. ստեղծված Մոսկվայի «Համալսարանի հայերի ասոցիացիան» 2009 թ. օգոստոսին սկսել է հրատարակել ռուսերեն “**Hamshen**” հանդեսը: Հոդվածը պատմում է լույս տեսած երեք համարների մասին:

20. Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփայի և Բորչկայի գավառներում, «**Ձայն համալսարանական**», ամսաթերթ, Երևան, 2011, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10:

Տպագրվել են Խոփայի և Բորչքայի գավառներում 2011 թ. Ս. Վարդանյանի գրառած 13 խաղիկները (առանց թարգմանության):

21. Հայության կրոնադավանական հատվածներ. մարտահրավերներ և հնարավորություններ (միջազգային գիտագործնական կոնֆերանս), «**Ձայն**

**համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2011, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 1:

2011 թ. դեկտեմբերի 9-10-ը Երևանի «Կոնգրես» հյուրանոցում անցկացված միջազգային գիտագործնական կոնֆերանսի մասին է: Ս. Վարդանյանի կարդացած **«Կրոնափոխ համշենահայեր. փոխադարձ ծանոթություն»** զեկուցումը տպագրվել է կոնֆերանսին նվիրված նյութից հետո:

22. Կրոնափոխ համշենահայեր. փոխադարձ ծանոթություն, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2011, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12:

«Հայության կրոնադավանական հատվածներ. մարտահրավերներ և հնարավորություններ» միջազգային գիտագործնական կոնֆերանսում (Երևան, 2011, դեկտեմբերի 9-10) Ս. Վարդանյանի կարդացած զեկուցումն է:

23. Տոհմածառ (Արմատներ և սաղարթ, հայի ճակատագիր...), **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2011, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 3, 4:

«Ձայն համշենական» թերթի 2011 թ. № 3-4-ում տպագրված Եփրեմ Զաքարյանի «43 տարի անց» հոդվածից հետո տարբեր երկրներում հայտնաբերված Զանակ տատի թոռների և ծոռների մասին է:

24. Նոր գրառումներ Խոփայի և Բորչկայի գավառներում, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2011, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 8:

Խոփայի խոսվածքով և գրական արևելահայերեն թարգմանությամբ տպագրվել են Ս. Վարդանյանի գրառած բանահյուսական նյութերը՝ **«Նանի» (օրորոցային երգ), 6 հանելուկ, վախ չափելու 2 աղոթք:**

### **Երկրորդ բաժին (հարցազրույցներ)**

25. **«Ձայն համշենականի»** խմբագիրը երագում է թանգարան հիմնել ու վիրավորվում է անտարբերությունից, հարցազրույց, **«Անկախ»**, շաբաթաթերթ, Երևան, 2011, հունիսի 2-9 (№ 20), էջ 6:

Հարցազրույցը քրիստոնյա և իսլամ համշենահայերի պատմության ու ներկայի մասին է: Խոսվում է «Ձայն համշենական» թերթի, համշենցիների նվերաբերող տարբեր գրքերի մասին: Տպագրվել է նաև Ս. Վարդանյանի լուսանկարը, իսկ թերթի 1-ին էջում՝ նրա լուսանկարը Ղրղզստանի Կզըլ-Կիյա քաղաքում՝ Քոշանիձե ամուսինների հետ: Հարցազրույցից հատված. **«Մյսինքն՝ բավական լուրջ ֆինանսական խնդիրներ ունեք, որոնք խանգարում են Ձեր աշխատանքին:**

- Այո՛, տարիների իմ երազանքն է, որ կարողանամ թերթի հեղինակներին վճարել: Երազում եմ նաև խմբագրատուն ունենալ, մեկ-երկու սենյակ, գոնե մեկ աշխատակից: Ասեմ, որ տարբեր երկրներ գնացող-եկողների հետ թերթեր ուղարկելն էլ ժամանակ ու եռանդ է խլում: Երազում եմ նաև համշենահայերին (քրիստոնյա և իսլամ) նվիրված թանգարան հիմնել: Տարիների ընթացքում ձեռք եմ բերել այդ թեմային առնչվող բազմաթիվ գրքեր, ամսագրեր, թերթեր, եզակի լուսանկարներ, ցեղասպանությունից վերապրածների ձեռագիր հուշագրություններ, տարբեր իրեր, քարտեզներ և ինձ այժմ շատ է անհանգստացնում դրանց հետագա ճակատագիրը: Ապշում և վիրավորվում եմ, երբ Ռուսաստանի մեր հայրենակից մեծահարուստները շոուֆիզնեսի առանց այդ էլ հարուստ ներկայացուցիչներին, երգիչ-երգչուհիներին, երաժիշտներին փողեր են շռայլում, տուն ու թանկարժեք մեքենաներ նվիրում, իսկ ազգային այս շատ կարևոր գործին ոչնչով չեն օգնում»:

26. Ուժացման ճանապարհին (Հայերենի ուսուցումը ՌԴ Կրասնոդարի երկրամասի Արմավիր քաղաքում), գրույցը վարեց Ս. Վարդանյանը, «**Ձայն համշենակյան**», ամսաթերթ, Երևան, 2011, հունվար-փետրվար, № 1-2, էջ 1, 6:

Հարցազրույցը Կրասնոդարի երկրամասի Արմավիր քաղաքում աշխատող հայոց լեզվի և գրականության ուսուցչուհիներ Վալենտինա Հովհաննիսյանի և Հռիփսիկ Դարբինյան-Քթոյանի հետ է:

### Երրորդ բաժին

27. Մանիկ Աճեմյան, Փոքր Միեր, հրապարակումների ժողովածու, «Լևոն Միրիջանյան» հիմնադրամ, Երևան, 2011 (- 112 էջ):

Գրքում մեկտեղված են մի շարք հայ գրողների, արվեստագետների, հոգևորականների, ռազմական գործիչների, գիտնականների հրապարակումներից քաղվածքներ: Ս. Վարդանյանի «**Հայաստանի մայրաքաղաքները**» (1995) գրքից հատվածները տե՛ս **Վան** (էջ 66), **Արմավիր** (69), **Երվանդաշատ** (էջ 71), **Արտաշատ** (էջ 75), **Տիգրանակերտ** (էջ 80), **Վաղարշապատ** (էջ 83), **Դվին** (էջ 87), **Բագարան** (էջ 91), **Շիրակավան** (էջ 93), **Կարս** (97), **Անի** (էջ 101), **Երևան**-ամփոփում (էջ 104):

28. Aram Arkun, The Camel's Homeland, A Western Armenian Puppet Show in New Jersey, “**The Armenian Mirror-Spectator**”, weekly, Boston, Massachusetts, USA, 2011, june 25, № 50, p. 12.









(Թարգմ.՝ Արամ Արքուն, Ուղտի հայրենիքը, Արևմտահայերեն տիկնիկային ներկայացում Նյու Ջերսիում, «Արմինիզն միրոր սփեքթեյթոր», շաբաթաթերթ, Բոստոն, Մասաչուսեթս, ԱՄՆ, 2011, հունիսի 25, № 50, էջ 12):

Նյու Ջերսիի նորաստեղծ հայկական տիկնիկային թատրոնի առաջին ներկայացման հաջողության մասին է: Տպագրվել են նաև լուսանկարներ: Հոդվածի հեղինակը բավականին մանրամասն անդրադառնում է Ս. Վարդանյանի և բեմադրիչ Վարդան Գառնիկի կենսագրություններին, նշում, որ «Ուղտի հայրենիքը» տիկնիկային ներկայացումը ստեղծվել է 1994 թ. Ստամբուլում արևմտահայերեն հրատարակված Ս. Վարդանյանի «Արեւածաղիկը» գրքի պատմվածքներից մեկի հիման վրա (արևմտահայերենի վերածող՝ Մաքրուհի Հակոբյան):

Տե՛ս նաև հաջորդ՝ № 29 մատենագիտական նկարագրությունը՝ Հ[ակոբ] Ծ[ուլիկյան], «Ուղտին հայրենիքը»՝ տիկնիկային ներկայացում Նյու Ջերսիում, «Ազգ», թերթ, Երևան, 2011, յուլիսի 19, № 132, էջ 6:

29. Հ[ակոբ] Ծ[ուլիկյան], «Ուղտին հայրենիքը»՝ տիկնիկային ներկայացում Նյու Ջերսիում, «Ազգ», թերթ, Երևան, 2011, յուլիսի 19, № 132, էջ 6:

Հոդվածից հատվածներ. «Նյու Ջերսիում գործող Վարդան Գառնիկի Օգանեսյանի «Հայ թատրոն-ստուդիայի» կազմակերպությամբ հունիսի 11-ին «Հայ-ամերիկյան կրթության եւ խրախուսման կենտրոնի» դահլիճում տեղի է ունեցել «Ուղտին հայրենիքը» տիկնիկային ներկայացման պրեմիերան: «Արմինյն միրոր սփեքթեյթոր» շաբաթաթերթի հունիսի 25-ի համարի փոխանցմամբ, յոթ տղաներ եւ աղջիկներ արևմտահայերենով բեմադրել են երեւանցի Սերգեյ Վարդանյանի կարճ պատմվածքը՝ վերցված 1989-ին հրատարակված «Արեւածաղիկը» ժողովածուից, որը 1994-ին վերահրատարակվել էր Ստամբուլում, Մաքրուհի Հակոբյանի կողմից արեւմտահայերենի վերածված տարբերակով:

... Պիեսի հիմքում ընկած է հայրենիքի որոնման գաղափարը: Ուղտը համոզում է մյուս կենդանիներին (սկյուռին, ճագարին, գորտին) միասին ճանապարհ ընկնել, բայց երբ նրանք հասնում են անապատ՝ ուղտի հայրենիքը, հասկանում են, որ իրենց հարմար չէ այդ վայրը եւ ցրվում են տարբեր վայրեր՝ վերագնահատելով իրենց նախկին օրրանները ու տեղի արժեքները:

... Երեխաների շրջանում մեծ ոգեւորություն առաջացրած տիկնիկային ներկայացումը, որի բեմական հարդարումներն ու տիկնիկների պատրաստությունը կատարել է Վարդանի կինը՝ Անահիտը, նախատեսվում է աշ-

նանը բեմականացնել նաեւ Նյու Յորքի եւ Նյու Ջերսիի տարածաշրջաններում գտնվող հայկական դպրոցներում եւ եկեղեցիներին կից գործող դահլիճներում»:

«Ազգի» հոդվածին հավելենք, որ ներկայացման առթիվ **«Hye Theater Studio Հայ Թատրոն Արվեստանոց»-ը «Puppet Show Ուղտին Հայրենիքը Տիկնիկային ներկայացում»** վերնագրով հայերեն-անգլերեն 12 էջանոց գունավոր գիրք է հրատարակել: Մեկական էջով մանրամասն ներկայացվել են Մերգեյ Վարդանյանի (հայերեն) և բեմադրիչ Վարդան Գառնիկիի (անգլերեն) կենսագրությունները՝ իրենց լուսանկարներով:

...Գրքույկի սկզբում (էջ 3) նշված է. «Ներկայացման հասույթը տրամադրվում է Արցախում զոհված ազատամարտիկների երեխաներին»: (Բեմադրիչ Վարդան Գառնիկի Հովհաննիսյանի ներկայացուցիչը և Ս. Վարդանյանը հասույթը՝ հազար դոլարը, ինչպես որ խոստացվել էր, հանձնել են «Զինվոր» հասարակական կազմակերպությունների համագործակցության իրավապաշտպան համակարգող խորհրդին- Ս.Վ.):

30. Магдалина Затикян, Книжная Армения в Парижском салоне, **«Голос Армении»**, газета, издаётся трижды в неделю, Ереван, 2011, 14 апреля, № 38, с. 7.

2011 թ. մարտի 18-21-ը Փարիզում կայացած գրքի միջազգային ցուցահանդեսում Հայաստանը ևս ունեցել է իր տաղավարը: Հողվածագրի վկայությամբ, ցուցահանդեսում պահանջարկ վայելող լավագույն գրքերից մեկը Ս. Վարդանյանի կազմած հայկական հեքիաթների գերմաներեն ժողովածուն էր: Խոսքը 2009 թ. Երևանում հրատարակված «Gerettete Märchen» (Փրկված հեքիաթներ) գրքի մասին է:

31. Իշխան Անդրանիկեան, Եւս 47 տարի անց, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2011, մայիս-հունիս, № 5-6:

Թերթի նախորդ՝ № 3-4 համարում տպագրված Եփրեմ Զաքարյանի «43 տարի անց» հուշագրությանը արձագանքել է Զանակ տատի թոռը՝ Բեյրութում բնակվող Ի. Անդրանիկյանը և նամակ է գրել հուշագրությունը հայտնաբերող և հրատարակող Ս. Վարդանյանին (էջ 3):

32. Իշխան Անդրանիկեան, Ինչպես վերագտայ ազգականներս, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2011, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 5:

Բեյրութաբնակ Ի. Անդրանիկյանը պատմում է՝ ինչպես է **«Ձայն համշենականում»** Ս. Վարդանյանի հրապարակումների միջոցով գտել իր կորած ազգականներին. «Մեծ շնորհակալութիւն կը յայտնեմ նախ Աստուծոյս, ա-

պա, մասնաւորապէս, Հայաստանի մէջ հրատարակուող «Չայն համշէնական» ամսաթերթի խմբագիր Պրն. Սերկէյ Վարդանեանին, որ իր լայն սրտով եւ իր ազգային պարտականութեան գիտակցումով անուղղակիօրէն օգնած եղաւ Հայոց Ցեղասպանութենէն վերապրած մեր ընտանիքներուն վերամիացման՝ ամսաթերթի էջերուն մէջ մեծ տեղ տրամադրելով որպէս իրականութիւն եւ վկայութիւն: Թերթին եւ Պրն. Սերկէյին շնորհիւ այսօր, տասնամեակներ ետք, վերագտայ ազգականներս»:

33. Լուսինե Սահակյան, Համշէնի Եղնովիտ-Էլլիտ բնակավայրի պատմությունը և տեղանվան ստուգաբանությունը, «Չայն համշէնական», ամսաթերթ, Երևան, 2011, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 2-4:

Բ.գ.թ., թուրքագետ Լ. Սահակյանը պատմում է 2011 թ. ամռանը Թուրքիայի Ռիզէի նահանգում կատարած ուսումնասիրությունների մասին, նշում. «Խմբի կազմում էր նաև ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, Հայաստանի «Համշէն» հայրենակցական-բարեգործական հ/կ փոխնախագահ, «Չայն համշէնական» ամսաթերթի գլխավոր խմբագիր Սերգէյ Վարդանյանը», «Իսկ Քաջքարը, ավելի հավանական է, որ քաջք (դներ, ոգի, փերի) և քար բաղադրիչներից է կազմվել (տեղանվան այսպիսի մեկնաբանությունը մեզ հուշել է Ս.Վարդանյանը)» (էջ 2):

Հոդվածի որոշ փոփոխություններով տարբերակը տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», ամսագիր, 2012, № 2-3, էջ 305-314:

34. Թագուհի Ասլանյան, Ղրղզստանի համշէնահայերը կվերաբնակեցվեն Ղարաբաղում, «Հայաստանի գրուցակից», շաբաթաթերթ, Երևան, 2011, մայիսի 6-13, № 17, էջ 5:

Մոսկվայից Գեորգի Մխիթարյանի և Ղրղզստանից եկած Ռուսլան Կարաբաջակովի՝ գործարար, բարերար Լևոն Հայրապետյանի հետ Ղարաբաղ այցելության մասին է: Հոդվածում մասնավորապէս գրված է. «Ի դեպ, Կրասնոդարից և Աբխազիայից քրիստոնյա, իսկ Միջին Ասիայից՝ մահմեդական համշէնահայերին Հայաստանում (Լոռվա դատարկված գյուղերից մեկում) վերաբնակեցնելու փորձ 1984 թվականին արդեն եղել է, որի նախաձեռնողն էր Երևանում գործող «Համշէն» հայրենակցական, բարեգործական կազմակերպության փոխնախագահ, պատմաբան և լրագրող Սերգէյ Վարդանյանը»:

Տե՛ս նաև «Собеседник Армении», 2011, 6-13 мая, № 17.

35. Тагуи Асланян, Амшенские армяне из Киргизии поселятся в Карабахе, «Собеседник Армении», еженедельная газета, Ереван, 2011, 6-13 мая, № 17, с. 5.

Տե՛ս նույնի հայերեն տարբերակը:

36. Համշենահայեր՝ Արցախում, «**Լուսանցք**», շաբաթաթերթ, Երևան, 2011, մայիսի 13-19, թիվ 18, էջ 4:

Անստորագիր է: ««**News.am**»-ը տեղեկացնում է, որ Ղրղզստանում բնակվող համշենահայերը մտադիր են տեղափոխվել և բնակվել Արցախում: Համայնքի ղեկավար Ռուսլան Կարաբաջակովը այդ ծրագրի մշակման նպատակով եղել է ՀՀ-ում, հետո՝ ԼՂՀ-ում, որպեսզի համշենահայ 200 ընտանիքների բնակության համար առավել հարմար վայր ընտրի: «Մեր տեղն այստեղ՝ Հայաստանում է: Մեր ճակատագիրն այնպես է դասավորվել, որ ավելի քան 250 տարի տեղից տեղ ենք տեղափոխվել՝ Աջարիա, Միջին Ասիա: Այժմ վերջապես որոշել ենք ապաստան գտնել մեր հարազատ հողում», - ասել է Ղրղզստանի համշենահայ համայնքի ղեկավարը:

Քրիստոնյա համշենահայերին Կրասնոդարի երկրամասից և Աբխազիայից, իսկ մահմեդական համշենահայերին՝ Միջին Ասիայից, Լոռու գյուղերից մեկը տեղափոխելու փորձ արվել էր նաև 1984 թ.: Նախաձեռնողը եղել էր Երևանում գործող «Համշեն» հայրենակցական միության փոխնախագահ Սերգեյ Վարդանյանը: Սակայն Սպիտակի երկրաշարժից հետո ծրագիրը իրականացնել չհաջողվեց: Նախատեսվում է, որ համշենահայերի 200 ընտանիքները կտեղավորվեն ԼՂՀ Մարտակերտի շրջանում: Նախագծով հետաքրքրված են նաև Մոսկվայի «Համշեն» հայրենակցական միության անդամները»:

37. «Կրօնափոխ համշենահայերու վերադարձին հարցով բարձրացուած աղմուկը կրնայ խոչընդոտներ յառաջացնել» կ'ըսէ «Չայն համշենական» ամսաթերթի խմբագիրը, «**Ազատ օր**», թերթ, Աթենք, 2011, մայիսի 19, № 19610, էջ 3:

Լրատվամիջոցներով տարածված տեղեկատվության առթիվ, իբր Ղրղզստանից 200 ընտանիք կրոնափոխ համշենահայեր են գալիս Արցախում վերաբնակվելու, **tert.am**-ը պարզաբանման համար դիմել է «Համշեն» ՀԿ փոխնախագահ, «Չայն համշենական» թերթի գլխ. խմբագիր Ս. Վարդանյանին, որն անդրադարձել է ինդրի պատմությանը, նշել, որ այդ օրերին ընդամենը մեկ համշենցի է եկել Արցախում վերաբնակվելու հնարա-

վորություններին ծանոթանալու համար և մամուլին հորդորել է չստուգված, ուռճացած թվեր չհրատարակել:

38. Համշենահայերու մասին, «Ազատ օր», թերթ, Աթենք, 2011, մայիսի 19, № 19610, էջ 3:

Ղրղզստանից իբր 200 ընտանիք համշենահայերի Արցախում վերաբնակեցման վերաբերյալ տարածված ապատեղեկատվության առթիվ «**Ուրբաթ**» մամուլի ակումբում «Ձայն համշենական» թերթի խմբագիր Ս. Վարդանյանի և Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն Հ. Ալվրցյանի ասուլիսի մասին է:

«Ազատ օրի» այս հրապարակման ռուսերեն վերապատմությունը տե՛ս «**Амшен-Понтоc**», выпуск пятый, Краснодар-Сочи, 2012, с. 9.

39. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, անվարտ վեպ, Հպանցիկ ժամանակ, գիրք հինգերորդ, Երևան, «Վան Արյան» հրատ., 2011 (-340 էջ):

Վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է: Տե՛ս գլուխ յոթերորդ, «Օնլայն Ծաղկաձորից», էջ 82, 83, 84 (տե՛ս նաև «**Առավոտ**», օրաթերթ, Երևան, 2007, հուլիսի 14, № 133, էջ 4, 5): Գլուխ տասներորդ, «Մեյրան Մալունցյան», էջ 115 (տե՛ս նաև «**Առավոտ**», օրաթերթ, Երևան, 2007, օգոստոսի 4, № 148, էջ 4): Գլուխ տասնհինգերորդ, «Առանց միջնորդի», էջ 184 (տե՛ս նաև «**Առավոտ**», օրաթերթ, Երևան, 2007, սեպտեմբերի 8, № 173, էջ 8, 9):

40. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, վեպ, գիրք տասներկուերորդ, գլուխ երրորդ, «Շարժանկար և կյանք», «**Առավոտ**», օրաթերթ, Երևան, 2011, մարտի 19, № 49, էջ 8, 9:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է:

41. Արմեն Շեկոյան, Հայկական ժամանակ, վեպ, գիրք տասներկուերորդ, գլուխ չորրորդ, «Գրական անուններ», «**Առավոտ**», օրաթերթ, Երևան, 2011, մարտի 26, № 54, էջ 8, 9:

Ա. Շեկոյանի ինքնակենսագրական վեպի հերոսներից մեկը Ս. Վարդանյանն է:

42. Լ. Սահակյան. «Համշենցիների թվաքանակի մասին հաճախ կեղծ և ուռճացված տվյալներ են շրջանառվում», հարցազրույցը վարեց Աստղիկ Խաչատրյանը, «**Անկախ**», շաբաթաթերթ, Երևան, 2011, մայիսի 26-հունիսի 2, № 19 (81), էջ 6:

Հարցազրույցում Բ.Գ.Թ., թուրքագետ Լ. Սահակյանը անդրադառնում է Թուրքիայի համշենցիների թվաքանակին և ուսումնասիրության վիճակին,

մասնավորապես ասում է. «Նշեմ, որ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, ճանաչված համշենագետ Սերգեյ Վարդանյանը Բիլբիլանում իր հավաքած արժեքավոր բանահյուսական նյութերի մի մասն արդեն հրատարակել է «**Ձայն համշենական**» ամսաթերթում (2011, № 1-4)»:

Նույնը տե՛ս “**Armenian Times**” (Արմենիան Թայմս, Армениян Таймс) հայերեն-ռուսերեն ամսաթերթ, Մոսկվա, 2011, սեպտեմբեր, № 36, էջ 13-15, Ս. Վարդանյանի մասին՝ էջ 14:

43. Հ[ամօ] Մ[ոսկոֆեան], Վաստակաշատ համշենագետը, գիտնականն ու հայրենասերը՝ Սերկեյ Վարդանեան, «**Դիտակ**», հանդես, Բեյրութ, 2011, Յուլիս-Օգոստոս (№ 48), էջ 28, 81, տե՛ս նաև էջ 14, 16, 81:

44. Համօ Մոսկոֆեան, Ճանապարհորդություն դեպի աննման ու վերածնված Հոմշեն-համշենցիներու հիւրընկալ օճախը, «**Դիտակ**», հանդես, Բեյրութ, 2011, Յուլիս-Օգոստոս (№ 48), էջ 14-21:

Հոդվածում հիշատակվում է նաև Ս. Վարդանյանը (էջ 14, 16):

45. [Համօ Մոսկոֆեան], Աշխարհի հայերուն մէկ չորրորդը մահմետականն է. Դիտակը կը փնտռէ զանոնք Ռուսիոյ տարածքին վրայ, «**Դիտակ**», հանդես, Բեյրութ, 2011, Յուլիս-Օգոստոս (№ 48), էջ 6-8:

46. Համո Մոսկոֆյան, Միջազգային գիտագործնական կոնֆերանս՝ նվիրված հայության կրոնադավանական հատվածներին, մարտահրավերներին ու հնարավորություններին, «**Ազգ**», երկօրյա թերթ, Երևան, 2011, դեկտեմբերի 9, № 223, էջ 3:

ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ «Հիքսոս» և «Նորավանք» հիմնադրամների կազմակերպած, Հայաստանի և սփյուռքի գիտնականների մասնակցությամբ Երևանի «Կոնգրես» հյուրանոցում դեկտեմբերի 9-ին կայանալիք միջազգային գիտաժողովի մասին է, ներկայացվում են զեկույցները և թեմաները. «Սերգեյ Վարդանյանը մասնակիցներին կփոխանցի իր երկարամյա փորձը հայության էթնիկական մեծագույն հատվածի՝ համշենահայության կրոնափոխ զավակների հետ փոխադարձ ծանոթության մասին»:

47. Համո Մոսկոֆյան, Մայր հայրենիք վերադարձի երազներով... Ֆեդերցովկայի կրոնափոխ համշենահայերի (հեմշիլ) մոտ, «**Ազգ**», օրաթերթ, Երևան, 2011, հուլիսի 15, № 130, էջ 4:

Հոդվածում հիշատակվում են նաև Ղազախստանի և Ղրղզստանի համշենցիների գյուղեր «վաստակաշատ գիտնական և համշենագետ Սերգեյ

Վարդանյանի» այցելությունները, ով «անհատական փորձ անելով որոշ համշենահայերի վերաբնակեցնել Խորհրդային Հայաստանում, որին դեմ էր կանգնել այն ժամանակվա Հայաստանի ղեկավարությունը»:

48. Георг Мхитарян (Москва), Поездка к хомшечи, «**Ձայն համշենական**», 2011, № 7-8, էջ 5:

Մոսկվայի «Համշենցի հայերի ասոցիացիայի» ՀԿ վարչության անդամ, ասպիրանտ Գեորգ Մխիթարյանը Կենտրոնական Ասիայից Ռոստովի մարզի Կամենսկի շրջանի գյուղերից մեկում վերաբնակված կրոնափոխ համշենցիների հարսանիքի հրավիրվելով՝ Ս. Վարդանյանի խնդրանքով գրել է իր եռօրյա այցի տպավորությունների մասին. «Яркий момент для меня, когда я увидел как бережно люди хранят книгу, написанную Сергеем Варданяном про язык, историю и быт хомшечи. Это книга для них нечто больше, чем просто ценный труд, это настоящая семейная реликвия. Если войны своим оружием добиваются результата, то такие люди как Сергей Варданян своим пером добиваются не меньше, если не больше. Никогда я не видел что бы книга, да еще и на письменности (труд написан на армянском языке) которую люди не понимают, производила такой эффект. Своим трудом и верой в свое дело, Сергей Варданян сделал больше чем многие другие вместе».

49. Մուրեն Մուրադյան, Հայոց մայրաքաղաքները: Բանաստեղծություններ, Երևան, ՎՄԿ- Պրինտ, 2011 (- 24 էջ):

Ս. Վարդանյանի «Հայոց մայրաքաղաքները» (1985) գրքի բովանդակությունը հիմք ընդունելով, նաև հեղինակի հետ խորհրդակցելով՝ անվանի մանկագիր Մուրեն Մուրադյանը գրել է 12 մայրաքաղաքներին նվիրված բանաստեղծությունների շարք: Գրքի ձևավորման մեջ մեծապես օգտագործվել են նաև «Հայոց մայրաքաղաքներ»-ում (1985) տպագրված լուսանկարները:

50. Ալվարո Դազիյան, Հայագիտական կարևոր ներդրում, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2011, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 7:

Բ.գ.թ. Ա. Դազիյանը գրախոսել է Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (կյութեր և ուսումնասիրություններ)», Երևան, ԵՊՀ հրատ., 2009 գիրքը: Գրախոսությունից հատված. «Մերզեյ Վարդանյանը որոնել ու գտել է մի ամբողջ համայնք, հայ ժողովրդի փոթորկահույզ պատմության ակերախումբների ժամանակ բնականոն ազգային կյանքից բռնի դուրս նետված մի ամբողջ շրջան՝ գավառ, որը թեև այլակրոն, բայց մայրենի լեզուն, ազգային-տոհմիկ շատ տվորությունները պահպանել է ցայսօր: ...Տարիների ընթացքում

կատարած հետազոտական ու հավաքչական աշխատանքների մի մասն այժմ ամփոփված է մի գրքում, որը բացառիկ արժեք ու նշանակություն ունի հայագիտության, մասնավորապես՝ հայ ազգային ինքնության սահմանների ճշտման ու որոշման տեսանկյունից:

51. Амшенские армяне в 2009 - март 2010 гг., «**Амшен-Понтоc**», выпуск третий, Краснодар-Сочи, 2011, с. 4-6.

Տպագրվել են համշենահայերին առնչվող 29 տեղեկություններ: Առաջինը նվիրված է «Ձայն համշենական» ամսաթերթին. «В 2009 г. известный арменовед и амшеновец Сергей Варданян (Ереван) продолжил выпуск газеты «Дзайн Амшенакан» Общественной земляческой благотворительной организации «Амшен», объединяющей выходцев из Амшена в Республике Армении. За 2009 г. вышло шесть номеров газеты, в которых были помещены десятки статей и корреспонденции о жизни, культуре и истории амшенских армян и хемшилов» (с. 4). Այնուհետև հատ-հատ նշվում են 2009 թ. թերթի համարներում տպագրված տարբեր հեղինակների քիչ թե շատ կարևոր հոդվածները:

Նույն էջում տպագրվել է լրատվություն Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ)» (2009) մենագրության լույս ընծայման մասին:

52. Понтийские армяне, Амшен, Апрель 2010 - январь 2011 гг., «**Амшен-Понтоc**», выпуск четвертый, Краснодар-Сочи, 2011, с. 7-10.

Տպագրվել է համշենահայությանը վերաբերող 28 լուր, առաջին լուրը հետևյալն է. «1. В январе-декабре 2010 г. вышли в свет очередные номера газеты Общественного земляческого благотворительного объединения «Амшен» в Армении «Дзайн Амшенакан» (№№ 1-12 /66-77) под редакцией Сергея Варданяна (Ереван). В газете за этот период опубликовано ряд ценных статей и исследований, посвящённых амшенским армянам и хемшилам» (с. 7). Այնուհետև թվարկվում են մեկ տարվա ընթացքում տպագրված կարևոր համարված հոդվածները: 10-րդ լրատվությունը 2010 թ. Ապրիլի 20-ին Ստեփանակերտում անցկացված «Բռնի կրոնափոխությունը որպես ցեղասպանության բաղադրիչ» միջազգային գիտաժողովի մասին է, որտեղ ելույթ է ունեցել նաև Ս. Վարդանյանը «Сменившие веру амшенские армяне» թեմայով (էջ 8):

Ս. Վարդանյանը հիշատակվում է նաև նույն՝ 7 և 8-րդ էջերի № 2 և № 13 լրատվություններում:

53. Ռաֆայել Սահակյան, Էրգիրը տեսա հորս աչքերով, Երևան, Լուսակն, 2011 (- 472 էջ + 16 էջ գունավոր լուսանկարներ):

«**Հայրենական**» թերթի գլխ. խմբագիր, գրող և հրապարակախոս Ռաֆայել Սահակյանի՝ 2007 թ. հուլիսին մտավորականների խմբով Արևմտյան Հայաստան (Կարս, Իգդիր, Անի, Ալաշկերտ, Մուշ, Սասուն, Վան, Դիարբեքիր, Սիլվան, Նեմրութ, Բիթլիս և այլն) ուխտագնացության մասին պատմող գրքում հիշատակվում է նաև Ս. Վարդանյանը. «Մերգեյը ընդմիջել էր պատմական տեղավայրերի մասին իր բացատրությունները, Տարիել քանդակագործը հանպատրաստի գծագրեր չէր անում, գլխահակ ու ավելի շատ մտածկոտ էին Սիմոնն ու Հայկը, գիտնական Ծովակ Ավագյանն իր հայտնի վերլուծությունների հետ էր» (էջ 103): Ուխտագնացների խմբի գունավոր լուսանկարները տե՛ս գրքի ներդիրում:

Նույն հեղինակի նույն վերնագրով հոդվածը տե՛ս «**Հայրենական**», թերթ, ք. Արմավիր, 2009, օգոստոսի 4, թիվ 27-28 (198), էջ 3, 4:

Նույն թեմայով տե՛ս նաև Տարիել Հակոբյան, Ուխտագնացություն երկիր դրախտավայր..., «**Իրավունք**», **Հետաքննություն**, թերթ, Երևան, 2007, սեպտեմբերի 13, թիվ 34 (1484), էջ 7:

54. Talin Büyükkürkcayan, Hemsinlilerde Unutarak ve Gizlenerek var Olmak. Istanbul Bilgi Üniversitesi, Sosyal Bilimler Enstitüsü, Istanbul, 2011 (- 140 s.).

(Թարգմ.՝ Թալին Բյույուքքյուրքչյան. Համշենցիների մոռացվող և թաքցվող ինքնությունը, Ստամբուլի Բիլգի համալսարանի Սոցիոլոգիայի ինստիտուտ (թեգ), Ստամբուլ, 2011 (- 140 էջ):

Ս. Վարդանյանը և իր կազմած Չայն համշենական երրորդ ժողովածուն (տե՛ս **Չայն համշենական**, ժողովածու, հ. Գ, բանաստեղծություն, արձակ, բանահյուսություն, կազմեց, խմբագրեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Մերգեյ Վարդանյանը, Երևան, «Խորհրդային գրող» հրատ., 1989) հիշատակվում են հետևյալ էջերում՝ 18, 19, 20, 21, 24, 25, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 36, 37, 38, 39 և այլն:

2012

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Հայոց մայրաքաղաքները. Բազարան, «**Լուսակն**», հանդես, Երևան, 2012, մարտ, № 7, էջ 10, 11:

2. Հայոց մայրաքաղաքները. Տիգրանակերտ, «**Լուսակն**», հանդես, Երևան, 2012, օգոստոս, № 8, էջ 10-13:

3. Հայոց մայրաքաղաքները. Կարս, Շարունակելի, «**Լուսակն**», հանդես, Երևան, 2012, դեկտեմբեր, № 9, էջ 14-17:

4. Հայոց մայրաքաղաքները. Կարս, Սկիզբը նախորդ համարում «**Լուսակն**», հանդես, Երևան, 2012, դեկտեմբեր, № 10, էջ 10-11 (թողարկվել է 01.05.2013):

5. Կրոնափոխ համշենահայեր. փոխադարձ ծանոթություն // **Հայության կրոնադավանական հաստիքներ. մարտահրավերներ և հնարավորություններ**, միջազգային գիտագործնական կոնֆերանսի նյութերի ժողովածու, «**21-րդ դար**» (հատուկ թողարկում), «Լորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, Երևան, 2012, № 2 (42), էջ 91-96:

Տպագրվել է 2011 թ. դեկտեմբերի 9-10-ին ՀՀ սփյուռքի նախարարության, «Հիքսոս» հիմնադրամի և «Լորավանք» գիտակրթական հիմնադրամի կազմակերպած միջազգային գիտագործնական կոնֆերանսում Ս. Վարդանյանի կարդացած զեկուցումը:

Տե՛ս նաև ռուսերեն և անգլերեն հրատարակությունները:

6. Sergei Vardanyan, Converted Hamsheni Armenians: Mutual Acquaintance, “**21 st century**”, (special issue), «Noravank» foundation, Religious and Confessional Segments of the Armenianness: Challenges and Possibilities, Collection of Conference papers, Yerevan, 2012, № 1 (11), p. 81-86:

Տե՛ս նաև հայերեն և ռուսերեն հրատարակությունները:

7. Сергей Варданын, Верообращённые Амшенские армяне: взаимное знакомство // **Религиозно-конфессиональные сегменты армянства: вызовы и возможности**, сборник материалов международной научно-практической конференции, «**21-й век**» (специальный выпуск), журнал фонда «**Нораванк**», Ереван, 2012, № 2 (22), с. 78-83.

Տե՛ս նաև հայերեն և անգլերեն հրատարակությունները:

8. Верообращённые амшенские армяне: взаимное знакомство, «**Наири в Калининграде**», ежемесячная газета, Калининград, РФ, 2012, май, № 89, с 8.

Արտատպվել է «**Ձայն համշենական**» թերթում և «**21-րդ դար**» հանդեսում տպագրված հոդվածը: Տպագրվել է հեղինակի լուսանկարը:

9. Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2012, № 5-6, № 7-8:

«**Գարուն**» ամսագրի 1982 թ. № 11, էջ 60-73-ում տպագրված հոդվածը արտատպվել է Ս. Վարդանյանի «**Որպես հին ծանոթներ**» առաջաբանով:

10. Որպես հին ծանոթներ, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2012, մայիս-հունիս, № 5-6:

«Գարուն» ամսագրի 1982 թ. № 11-ում լույս տեսած Ս. Վարդանյանի «Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ» հոդվածն արտատպելու առթիվ գրված ընդարձակ առաջաբանն է, որտեղ անդրադարձ է կատարվում ժամանակին հոդվածի գտած լայն արձագանքներին:

11. Սերկեյ Վարդանեան, Նոթատետրիս նշումներից, «Ազատ օր» օրաթերթի «Բացառիկ» տարեկան հրատարակությունը, Աթենք, Հունաստան, 2012, էջ 34:

2011 թ. Էրզրումի, Արդվինի և Ռիզեի նահանգներում, Խոտորջրում կատարած ուսումնասիրությունների մասին է:

Առանց աղբյուրը նշելու արտատպվել են «Ձայն համշենական» թերթի 2011 թ. № 7-8 (84-85) միացյալ համարից, էջ 7, 8:

12. Առաձներ և ասացուածքներ Խոփայի գաւառէն, «Ազատ օր», օրաթերթ, «Բացառիկ», տարեկան հրատարակություն, Աթենք, 2012, էջ 37:

Առանց աղբյուրը նշելու «Ձայն համշենական» թերթի նույն էջից արտատպվել են Ս. Վարդանյանի «Նոթատետրիս նշումներից» հոդվածի հարևանությամբ տպագրված 11 առած-ասացվածքներից 7-ը (Ս. Վարդանյանի արևելահայերեն թարգմանությամբ), տե՛ս «Ձայն համշենական», 2011, № 7-8, էջ 8:

13. Կրոնափոխ համշենահայերի բանահյուսության նմուշներ, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2012, հունվար-փետրվար, № 1-2, էջ 7, 8:

Տպագրվել է Հովհ. Թումանյանի «Սուտասանը» հեքիաթի Խոփայի խոսվածքով նոր թարգմանությունը՝ «Շիղագ չասողէ (խափօղէ)», ճշտվել են մի շարք բառեր ու արտահայտություններ: Նախորդ թարգմանությունը՝ «Խափելուջին» տե՛ս «Ձայն համշենական», 2010, № 11-12: Համարում հրատարակվել են 2011 թ. Ս. Վարդանյանի գրառած բանահյուսական նմուշները՝ զուգահեռ գրական արևելահայերեն թարգմանությամբ՝ «Յիլէք արդէլէցի», «Թուզ հազ էնօղ բարավէ», «Արդէլէցիքի ձառան իշնուշի հէքիյան», նաև մեկ իրական պատմություն՝ «Արդանուչցիին թօրէ»: Տպագրվել են նաև 2 «վախ չափուշի դուվա» (վախ չափելու աղոթք) և 6 անեծք:

14. Ե՛րբ կբացվեն հույսի դռները, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2012, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 2:

Հոդվածն անդրադառնում է Հայաստանում վերաբնակվելու հնարավորությունները ճշտելու համար 2011 թ. Դրղզստանից Ռուսլան Կարաբաջակովի Երևան այցելությանը: Պատմվում է նաև Ս. Վարդանյանի և նշանա-

վոր արձակագիր Սերո Խանգաղյանի 1984 թ. նույն նպատակով գործադրած ջանքերի մասին:

«Ե՛րբ կբացվեն հույսի դռները» առաջաբանից հետո «**Հայրենիքի ձայնից**» արտատպվել է Սերո Խանգաղյանի «**Փակ դռների առաջ**» հոդվածը (1989, մայիսի 3, 10):

15. Հայերի թիվը Աբխազիայում, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2012, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 5:

16. Որոշ մտորումներ Խոփայի խոսվածքի մասին, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2012, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 6-8:

Խոփայի խոսվածքի յուրահատկությունների մասին մտորումներից հետո հեղինակն իր և համշենցիների անհանգստությունն է հայտնում Խոփայի խոսվածքի ապագայի հանդեպ և խոսվածքով ու գրական հայերեն թարգմանությամբ ներկայացնում է «Վօվա» երաժշտախմբի դեկավար Հիքմեթ Աքչիչեքի հետ զրույցից մեկ հատված՝ «**Մեր լիզվիս մերնուշին վարե**»: Նաև նրա հետ այլ թեմաներով զրույցները՝ «**Վանցիք**», «**Քուրու**», «**Փերի**» և Ս. Վարդանյանի արևելահայերեն թարգմանությունները:

17. Մարգո Ղուկասյանի նոր գիրքը, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2012, մայիս-հունիս, № 5-6:

Ներկայացվում է ճանաչված հրապարակախոս և լրագրող Մարգո Ղուկասյանի նոր գիրքը՝ «Անվերնագիր...1915», այնուհետև տպագրվել է մեկ հատված գրքից:

18. Կրոնափոխ համշենահայերի երգերը և զրույցները, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2012, մայիս-հունիս, № 5-6, էջ 7, 8:

Հոդվածը պատմում է Թուրքիայի համշենցի երգիչների մասին, Խոփայի խոսվածքով և գրական հայերեն թարգմանությամբ ներկայացվել են Գյոքհան Բիրբենի երգացանկից «**Զուրփիջինե ախսքենին**» և Յաշար Քաբասուանօղլիի երգացանկից՝ «**Լերն ի վեր էրթօք**», «**Գարմի դօշ**» և «**Բարա**» երգերը: Տպագրվել են նաև «**Քեօխ չուննօղին հեքիյան**» զվարճապատումը, նաև «**Փէյինօուն փօղօրը**» իրական զրույցը՝ զուգահեռ Ս. Վարդանյանի գրական հայերեն թարգմանությամբ:

19. Մի դրվագ Տրապիզոնի մշակութային կյանքի անցյալից, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2012, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 6, 7:

Հոդվածը 1909-1910 թթ. Տրապիզոնում Գրիգոր Սյունիի կազմած 120 հոգանոց երգչախմբի և 17 հոգանոց նվագախմբի համերգներից մեկը անհայտ անձանց կողմից խափանելու պատմության և Գրիգոր Սյունիի մա-

սին է: Տպագրվել են նաև այդ թեմայով Բարունակ Թողլաքյանի և Միմոն Վրացյանի նյութերը:

20. Նուրջանըմի երգերը, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2012, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 8:

Համառոտ ներկայացված է ստամբուլաբնակ համշենցի երգչուհի Նուրջանըմը: Խոփայի խոսվածքով և Ս. Վարդանյանի գրական հայերեն թարգմանությամբ տպագրվել է նրա երգացանկի երգերից մեկը՝ «**Նէշանլու աղար, գերթաս**»:

21. Մայկոպյան խճանկար, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2012, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 2, 3, 6:

Արտատպվել է «**Սովետական գրականություն**» ամսագրի 1983 թ. 5-րդ համարում (էջ 88-95) լույս տեսած Ս. Վարդանյանի ուղեգրությունը, այդ առթիվ տպագրվել է նաև հեղինակի «**Որոշ պարզաբանումներ**» առաջաբանը:

22. Նոր գրառումներ, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2012, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 8:

Բանահավաքի անհրաժեշտ պարզաբանումներից հետո Խոփայի խոսվածքով տպագրվել է համշենցի երգչուհի Նուրջանըմի «**Յէ մա**» ողբերգը, ինչպես նաև Բորչքայի գավառից «**Նըշանլու դէս**» նշանածին տեսնելու ավանդույթի մասին կարճ պատմություն, նաև **3 առած** և **1 պատկերավոր խոսք**՝ բոլորը Ս. Վարդանյանի գրական հայերեն թարգմանությամբ:

23. Հիրավի, պատմական տարի էր, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2012, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 1:

2012 թ. հունիսին Մոսկվայում, իսկ հոկտեմբերին՝ Սոչիում կայացած Ստամբուլի համշենցիների «Վօվա» երաժշտախմբի համերգների մասին է: Բարբառը չիմացողների համար թարգմանելու նպատակով հատուկ Մոսկվա էր մեկնել Ս. Վարդանյանը:

Նույնը տե՛ս Հիրավի պատմական տարի էր, Armenian Tims, հայերեն-ռուսերեն ամսաթերթ, Մոսկվա, 2012, դեկտեմբեր, № 12 (50), էջ 9:

24. Հիրավի պատմական տարի է, Armenian Tims, հայերեն-ռուսերեն ամսաթերթ, Մոսկվա, 2012, դեկտեմբեր, № 12 (50), էջ 9:

2012 թ. հունիսին Մոսկվայում, իսկ հոկտեմբերին Սոչիում Ստամբուլի «Վոլա» վոկալ գործիքային խմբի մասին է: Մոսկվայի համերգը և քրիստոնյա համշենցիների հետ զրույցները թարգմանում էր հատուկ Մոսկվա մեկնած Ս. Վարդանյանը:

Նույնը տե՛ս «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2012, № 11-12, էջ 1:

25. Արդվինի նահանգի կրոնափոխ համշենահայերի երգերից, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2012, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 7:

Բնագրով և Ս. Վարդանյանի թարգմանությամբ տպագրվել է երկու երգ՝ «**Քա՛, յես քեզի ամա**» և Նուրջանըմի «**Շադ դարթ ունիմ**»:

26. Մահմեդական համշենահայերի բանահյուսության նմուշների ֆրանսերեն և անգլերեն թարգմանություններ // «**Ջարմանալի հայելի. հրաշապատում հեքիաթի թարգմանական մեկնություններ**», Հովհ. Թումանյանի թանգարան, 2012 թ. ապրիլի 3-4, գիտաժողովի ծրագիր և թեզիսներ, Երևան, 2012, էջ 32, 33:

Գիտաժողովի կազմակերպիչներ՝ Հովհ. Թումանյանի թանգարան, Fabula armeniaca ծրագիր, ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոն:

27. Norhars Ellim // Aysenur Kolivar, Bahçeye Hanimeli, Istanbul, Kalan Müzik, 2012.

Ստամբուլաբնակ համշենցի երգչուհի Այշենուր Քոլիվարի խտասկավառակի Խոփայի խոսվածքով երգերի, այդ թվում՝ Ս. Վարդանյանի գրի առած «**Նօրհարս էլլիմ**» երգի մասին տե՛ս սույն Մատենագիտության 2012 թ. Երրորդ բաժնում Անի Սեփեթյանի «**Ակօս**» թերթում տպագրած հարցազրույցի նկարագրությունը, նաև՝ Ս. Վարդանյան, Այշենուր Քոլիվարի հայերեն երգերը, «**Ձայն համշենական**», 2013, № 3-4, էջ 4, 5:

Խտասկավառակի այլումում նշված է, որ «Նօրհարս էլլիմ» երգի գրառողը Ս. Վարդանյանն է, ասացողը՝ Հատիջե Քարաքչիօղլին (Զիմքենդ-Ղազախստան):

Երգի նոտագրված երկու խաղիկները տե՛ս **Ձայն համշենական**, գիրք երրորդ, կազմեց, խմբագրեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Ս. Վարդանյանը, Երևան, Խորհրդային գրող, 1989 (- 252 էջ), էջ 214, 216, 239:

Ս. Վարդանյան, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը, Երևան, ԵՊՀ, 2009 (- 428 էջ), էջ 249, 253:

### **Երկրորդ բաժին (հարցազրույցներ)**

28. Վտանգավորը անուղղելի սխալներն են, հարցազրույց Սերգեյ Վարդանյանի հետ, հարցազրույցը՝ Ռ[ոզա] Եղիազարյանի, «**Գրական թերթ**», շաբաթաթերթ, Երևան, 2012, դեկտեմբերի 7 (№ 41), էջ 6:

Ս. Վարդանյանի ծննդյան 60-ամյակի առթիվ նրա անցած ուղու մասին գրուցում է արձակագիր, թարգմանիչ և լրագրող Ռ. Եղիազարյանը. «- **Սերգեյ, շատ բաներից խոսեցինք, բայց քո մանկական պատմվածքները մոռացանք:** Վերջերս դրանցից մի քանիսը թարգմանել եմ ռուսերեն և շատ եմ ափսոսում, որ ժամանակ չես գտնում մանուկների համար գրելու: Գիտեմ, որ պատմվածքներդ ընդգրկված են 4-րդ և 5-րդ դասարանների դասագրքերում: Ի՞նչ նորություններ ունես:

-1994 թ. Ստամբուլում արևմտահայերենով հրատարակված իմ մանկական պատմվածքների ժողովածուն հասել է ԱՄՆ, և ռեժիսոր Վարդան Գառնիկին պատմվածքներից մեկը հիմա բեմադրում է Նյու Ջերսիի նորաստեղծ հայկական տիկնիկային թատրոնում: Ռեժիսորից իմացա, որ դեռևս 1998 թ. նա այդ պատմվածքը բեմադրել է Նյու Յորքում՝ պատանեկան թատրոնում: Ներկա է եղել Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսը և շատ է հավանել: Հետաքրքիր է, որ ԱՄՆ-ից վերադարձից հետո վեհափառն ինձ պատմեց այդ մասին: Այն ժամանակ ես ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետխորհրդի փոխնախագահն էի, բայց իմ մտքով չանցավ, թե դա իմ գրածն է, քանի որ վերնագիրը փոխված էր: Այդպիսի անակնկալներ շատ են լինում, մանավանդ Սփյուռքի մամուլում, հոդվածներ, գրքերից հատվածներ ու պատմվածքներ են արտատպում ու տեղյակ էլ չեն պահում: Հատկապես իմ «Հայաստանի մայրաքաղաքները» գրքից են շատ արտատպում, երբեմն էլ՝ ուրիշների անունով: Ես այս բաներին հումորով եմ մոտենում, վտանգավորը անուղղելի սխալներն են, իսկ ուղղվող սխալների համար պետք չէ շատ մտահոգվել: Եվ, ընդհանրապես, կյանքում առաջնորդվում եմ հայտնի սկզբունքով՝ եթե կոշիկ չունես, շատ մի վշտանա, հիշիր նրանց մասին, ովքեր ոտք չունեն»:

Տպագրվել են նաև ՀԳՄ վարչության և «Գրական թերթի» շնորհավորանքները և Ս. Վարդանյանի լուսանկարը:

Արտատպությունը տե՛ս «**Չայն համշենական**», ամսաթերթ, 2012, № 11-12, էջ 8:

«**Armenian Times**», ամսաթերթ, Մոսկվա, 2012, դեկտեմբեր, № 12 (№ 50), էջ 6, 7:

29. «Վտանգավորը անուղղելի սխալներն են», հարցազրույց Սերգեյ Վարդանյանի հետ, հարցազրույցը՝ Ռ[ոզա] Եղիազարյանի, «**Չայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2012, № 11-12, էջ 8:

Արտատպվել է «**Գրական թերթից**», 2012, դեկտեմբերի 7, էջ 6:

Տե՛ս նաև «**Armenian Times**» (Արմենիան Թայմս, Армениан Таймс), հայերեն-ռուսերեն ամսաթերթ, Մոսկվա, 2012, դեկտեմբեր, № 12 (№ 50), էջ 6, 7:

30. «Վտանգավորը անուղղելի սխալներն են», հարցազրույց Սերգեյ Վարդանյանի հետ, հարցազրույցը՝ Ռ[ոզա] Եղիազարյանի, «**Armenian Times**» (Արմենիան Թայմս, Армениан Таймс), հայերեն-ռուսերեն ամսաթերթ, Մոսկվա, 2012, դեկտեմբեր, № 12 (№ 50), էջ 6, 7:

Արտատպվել է «**Գրական թերթից**», 2012, դեկտեմբերի 7, էջ 6:

31. Սերգեյ Վարդանյան. «Հայերը գանձեր թողել են ոչ միայն գետնի տակ», հարցազրույցը՝ Ռոզա Եղիազարյանի, «**Հայաստանի գրուցակից**», շաբաթաթերթ, Երևան, 2012, սեպտեմբերի 21-28 (№ 32), էջ 22, 23:

Հարցազրույցը Ս. Վարդանյանի գրքերի և Արևմտյան Հայաստան այցելությունների մասին է: Տպագրվել են նաև Ս. Վարդանյանի և նրա գրքերի լուսանկարները: Հարցազրույցից հատված. «-**Սերգեյ, իսկ այդ գրքերը չե՞ս ցանկանում այլ լեզուներով ևս հրատարակել, չե՞ որ եզակի երևույթ է, որ երեխաներն իրենք գրառեն իրենց սիրած հեքիաթները:**

- Դու ճիշտ ես, եզակի երևույթ է: Այս նախաձեռնությունը, եթե մի եվրոպական երկրում կամ Ամերիկայում արվեր, երևի ամբողջ աշխարհը կիմանար, և մենք էլ անընդհատ օրինակ կբերեինք: Ասեմ, որ դեռ 1981-ին երեք զրույց ռուսերեն թարգմանությամբ տպագրվեց Լենինգրադի «Аврора» (Ավրորա) ամսագրում: Երկու գրքերից քաղված արձակ նյութերի ընտրանին իմ նյութական միջոցներով թարգմանվեց անգլերեն և գերմաներեն: Ցանկանում էի երեխաների նկարագրողումներով հրատարակել: Ի վերջո 2007-ին անգլերեն The Salvaged Tales վերնագրով և 2009-ին գերմաներեն Gerettete Marchen վերնագրով պետպատվերով լույս տեսան: Վերնագրերը թարգմանաբար նշանակում են «Փրկված հեքիաթներ» և ճիշտ են արտացոլում երևույթը:

...Մի քանի տարի առաջ էր, Երևանում զրուցում էի թուրք հայտնի հրատարակիչ և մարդու իրավունքների պաշտպան Ռեզրփ Զարաբոյուի հետ: Այդ հեքիաթները թուրքերեն հրատարակելու իմ առաջարկը հավանեց, ասացի՝ շատ կարևոր է, որ ասենք, Ալաշկերտի Խաստուր գյուղում ապրող թուրք երեխան կարդա իրենց գյուղում ծնված հայ մարդու պատմած հեքիաթը: Ի դեպ, երկու անգամ եղել եմ այդ գյուղում: Ինչպես գյուղացիներն էին ասում՝ այդ մեծ գյուղի ամբողջ բնակչությունը գիշեր-ցերեկ հող է փորում, փնտրում են հայերի ոսկիները: Երբեմն գտնում են: Նրանց պետք է ցույց տալ, որ հայերը գանձեր թողել են ոչ միայն գետնի տակ: Բայց ինչպես

գիտեք՝ Ջարաքոյուն հետապնդումների ենթարկվեց, հերթական անգամ քանտ ընկավ և հասկանալի է՝ առաջարկս էլ այդպես մնաց: Անցած տարի Թուրքիայում՝ Հոփա քաղաքում ինձ ծանոթացրին մի կրոնավորիս համշենցի երիտասարդի հետ, ով գրքի անգլերեն հրատարակությունը թուրքերեն էր թարգմանում: Հայաստան էի գալիս, կարճ խոսեցինք, այս տարի իմացա, որ նա բնակության է տեղափոխվել Իսպանիա, և այս էլ այսպես կիսատ մնաց»:

Տե՛ս նույնի ռուսերենը:

32. Сергей Варданян: «Армяне оставили сокровища не только под землей»- беседа вела Роза Егиазарян, «Собеседник Армении», еженедельник, Ереван, 2012, 21-28 сентября (№ 32), с. 22, 23.

Տե՛ս նույնի հայերենը: Տպագրվել են Ս. Վարդանյանի և նրա գրքերի լուսանկարները:

33. «Տասնյակ հազարավոր հայեր հանգստանում էին Սև ծովի հյուսիսային ափերին, բայց չգիտեին, թե ովքեր են համշենցիները», գրույցը՝ Արմինե Սարգսյանի, «**Գրատես de facto**», եռօրյա թերթ, Երևան, 2012, մարտի 13-15, № 17 (348), էջ 10:

Հարցազրույցից հատված. «Տասնյակ հազարավոր հայեր հանգստանում էին Սև ծովի հյուսիսային ափերին (Մուխում, Գագրա, Սոչի, Տուապսե, Նովոռոսիյսկ, Անապա), բայց չգիտեին, թե ովքեր են համշենցիները: Ծովափից մի քանի կիլոմետր այն կողմ՝ լեռներում, հայկական գյուղեր կային, ուր մարդիկ գյուղատնտեսությամբ էին զբաղվում, անասնապահությամբ, անգամ չէին էլ իջնում ծով:

Այդ տարիներին հայկական դպրոցները փակվում էին: Կրասնոդարի երկրամասում 1951-ին կար 140 հայկական դպրոց, 1981-ին մնացել էին 4-ը: Տիրահոչակ Մեղունով կար, Կրասնոդարի երկրամասի կոմկուսի առաջին քարտուղարն էր, նա հայկական դպրոցները փակում էր, և կամակատարներ ուներ հենց հայերի մեջ»: Տպագրվել է Ս. Վարդանյանի լուսանկարը:

34. Требуется перевода, [беседовала] Магдалина Затикян, «Голос Армении», газета, Ереван, 2012, 28 февраля (№ 20), с. 5.

Հարցազրույցը Ս. Վարդանյանի համշենահայությանը նվիրված գործունեության, նաև նրա արմատների, գիտական, խմբագրական աշխատանքների մասին է:

Արտատպությունը՝ «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2012, հունվար-փետրվար, № 1-2:

Տպագրվել են Ս. Վարդանյանի և Խոփայի գավառի Հենդեք գյուղի համ-  
շենցիների լուսանկարները:

35. Требует перевода, [беседовала] Магдалина Затикян, «**Ձայն համշենա-  
կան**», ամսաթերթ, Երևան, 2012, հունվար-փետրվար, № 1-2, էջ 4:

Հարցազրույցը Ս. Վարդանյանի՝ համշենահայությանը նվիրված գոր-  
ծունեության մասին է:

Արտատպվել է «**Голос Армении**» թերթի 2012 թ. փետրվարի 28-ի համա-  
րից:

Տպագրվել են Ս. Վարդանյանի և Խոփայի գավառի Հենդեք գյուղի համ-  
շենցիների լուսանկարները:

36. Նվաղող հայություն, զրուցեց Ս. Վարդանյանը, «**Ձայն համշենա-  
կան**», ամսաթերթ, Երևան, 2012, մայիս-հունիս, № 5-6, էջ 5:

Հարցազրույցը Աբխազիայի Կավակլուղ (Ագարակ) գյուղի հայկական  
դպրոցի տնօրեն Շամիրամ Քեյանի հետ է:

37. Դպրոցները խինդով կլցվեն, զրուցեց Սերգեյ Վարդանյանը, «**Ձայն  
համշենական**», ամսաթերթ, Երևան, 2012, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12,  
էջ 2:

Հարցազրույցը Աբխազիայի կրթության նախարարության հայկական  
դպրոցների գլխ. մասնագետ, «Համշեն» թերթի խմբագիր Արտավազդ Սա-  
րեցյանի հետ է:

### **Երրորդ բաժին**

38. Արտավազդ Սարեցյան, Երկու խոսք // **Գրական Համշեն**, Աբխա-  
զիայի հանրապետության «Սնծովյան այգաբաց» հայկական գրական միա-  
վորման ավանախ, կազմեց՝ Արտավազդ Սարեցյան, Սուխում, Աբխազ-  
պետհրատ., 2012 (- 96 էջ):

Գրքի առաջաբանում գրական միավորման նախագահը, գնահատելով  
Ս. Վարդանյանի վաստակը, նշում է, որ նա ընտրվել է գրական միավոր-  
ման Պատվավոր անդամ (էջ 5):

39. Լուսինե Սահակյան, «Համշենի տեղանունների բառաքնությունը  
ցույց է տալիս դրանց հայկական լինելը», զրույցը Գևորգ Պետրոսյանի,  
«**Armenian Times**» (Արմենիան Թայմս, Армениян Таймс), հայերեն-ռուսերեն  
ամսաթերթ, Մոսկվա, 2012, հուլիս, № 46, էջ 8, 9:

Թուրքիայի համշենցիների բնակավայրերի տեղանունների ուսումնա-  
սիրությունների մասին է: Հարցազրույցից հատված. «Հասկանալով, որ այս  
ամենը խիստ կարևոր է համշենագիտության և առհասարակ հայագի-

տության համար՝ որոշեցի զբաղվել այս հարցի ուսումնասիրությամբ: 2010 և 2011 թթ. գիտահետազոտական աշխատանքներ կատարելու նպատակով այցելեցի ներկայիս Թուրքիայի Ռիզեի և Արդվինի նահանգների համալսարանների բնակավայրեր, նշեմ, որ խմբի կազմում էր նաև ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, «**Ձայն համաշենական**» թերթի խմբագիր Սերգեյ Վարդանյանը» (էջ 8):

40. Լուսինե Սահակյան, Համաշենի Եղնովիտ-Էլևիթ բնակավայրի պատմությունը և տեղանվան ստուգաբանությունը, «**Լրաբեր հասարակական գիտությունների**», ամսագիր, Երևան, 2012, № 2-3, էջ 305-314:

Քաջքար լեռան անվան մասին. «Իսկ Քաջքարը, ավելի հավանական է, որ քաջք (ղևեր, ոգի, փերի) և քար բաղադրիչներից է կազմվել (ի դեպ, տեղանվան այսպիսի մեկնաբանությունը մեզ հուշել է համաշենագետ Սերգեյ Վարդանյանը)», էջ 306:

Հոդվածի տարբերակը տե՛ս «**Ձայն համաշենական**», 2011, № 9-10:

41. Անի Գասպարյան, Հայաստանի դեսպանը համաշենահայության շրջանում, «**Անկախ**», շաբաթաթերթ, Երևան, 2012, ապրիլի 12-19, № 14, էջ 7:

Ս. Վարդանյանի գործունեության, ինչպես նաև կրոնափոխ համաշենահայերի հետ կապված հետաքրքիր դիպվածների մասին է: Թերթի 1-ին էջում տպագրվել է Ս. Վարդանյանի լուսանկարը Համաշենի լեռներում, իսկ 7-րդ էջում՝ նրա լուսանկարը համաշենցի հայտնի երգիչներ Հիքմետ Աքչիչեքի և Գյոքհան Բիրբենի հետ Ռիզեի նահանգի Չայելիի գավառի Օրմանջըք գյուղում, ինչպես նաև մի քանի համաշենցիների հետ Արդվինի նահանգի Խովայի գավառի Շանա (Կայա գյուղախումբ) գյուղում: Հոդվածից հատված. «Մեր իրականության մեջ օրինաչափություն է դարձել այն, որ որոշ մարդիկ իրենց վրա են վերցնում պետական մի ողջ համակարգի գործառույթ և սեփական նախաձեռնությամբ ու միջոցներով մղվում այս կամ այն խնդրի լուծմանը:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, «Համաշեն» հայրենակցական ՀԿ-ի փոխնախագահ, «**Ձայն համաշենական**» թերթի գլխավոր խմբագիր Սերգեյ Վարդանյանը համաշենահայության հետ առնչվել է դեռևս 1969 թվականից՝ Կրասնոդարի երկրամասի ծովափնյա Ադլեր քաղաքում հանգստանալու ժամանակ: Անցել է 43 տարի, և այդ ընթացքում համաշենահայերի, նրանց բազմաշերտ խնդիրների մասին կատարած նրա ուսումնասիրություններն ու անձնական շփումներն այն-

քան են խորացել, որ նրան կարելի է համարել համշենահայության շրջանում Հայաստանի դեսպանը:

Նա իր ուսերին է վերցրել ոչ միայն հայության մի կարևոր հատվածի՝ քրիստոնյա և մահմեդական համշենահայերի բարբառի, բանահյուսության, ավանդույթների, մշակույթի ուսումնասիրությունն ու պահպանումը, այլև նրանց ամենատարբեր խնդիրները. Վարդանյանի շնորհիվ, օրինակ, Կրասնոդարի երկրամասի և Աբխազիայի շատ համշենցիներ գտել են իրենց ազգակիցներին ու ազգականներին աշխարհի տարբեր վայրերում: Հայաստանի համապատասխան կառույցներում նրա գործունեությունը ոչ միշտ են նկատում, փոխարենը Վարդանյանի գործունեությանն ուշիուշով հետևում է թուրքական կողմը: Պատահական չեն թուրքական հայտնի պարբերականներում նրա մասին ընդարձակ հրապարակումները»:

42. Ani Sepetçiyen, Doğu Karadeniz'in çokdilli şarkılarına “hanimeli” değdi, “**Agos**”, Haftalık gazete, Istanbul, 2012, Şubat 17, № 827, s. 16. (Թարգմանություն՝ Արևելյան Սև ծովի բազմալեզու երգերին «տիկնաթաթիկ» է դիպել):

Այշենուր Քուլիվարի հետ հարցազրույցը նրա նոր թողարկած «Bahçeye Hanimeli» (Թարգմանություն՝ «Տիկնաթաթիկ պարտեզի համար», ըստ «Ալյուսի» թարգմանության՝ «Պարտեզին այծտերեուկ» խտասկավառակի մասին է: Տիկնաթաթիկը կամ այծտերեուկը ծաղկի անուն է): Թղթակցի հարցին ի պատասխան նա անդրադառնում է խտասկավառակի «Նորհարս էլլիմ» երգին, նշում, որ Ստալինի ժամանակ Ղազախստան արքայրված համշենցիներից այն գրառել է Սերգեյ Վարդանյանը:

Հարցազրույցի հայերեն տարբերակը տե՛ս «**Agos**», 2012, Şubat 24, № 828, **Հայերեն ներդիր**, էջ 4:

43. Անի Մեփեթճեան, Ծաղիկ դպաւ երգերուն, “**Agos**”, Haftalık gazete, Istanbul, 2012, Şubat 24, № 828, տե՛ս «**Ալյուս**», 2012, փետրուար 24, թիւ 828, **Հայերեն ներդիր**, էջ 4:

Այշենուր Քուլիվարի հետ հարցազրույցը նրա նոր թողարկած «Bahçeye Hanimeli» («Պարտեզին այծտերեուկ», այծտերեուկը կամ տիկնաթաթիկը ծաղկի անուն է), խտասկավառակի մասին է: Նա ի պատասխան թղթակցի հարցին անդրադառնալով խտասկավառակի «Նորհարս էլլիմ» երգին, նշում է. ««**Նորհարս էլլիմ**» երգը Հովայեն Ղազախստան զացած, այնտեղէն ալ Երևան վերադարձած եղանակ մըն է: Սերկեյ Վարդանեան, Ստալինի շրջանին Ղազախստան արքայրուած Համշենցիներէն քաղեր է: Սերկեյի փո-

խանցած բառերուն վրայ Հիքմեթ Ազիչէք եւ Նեժմէթ Չաքմաք իրենց մշակումներէն յաւելումներ ըրին»:

Հարցազրույցի թուրքերէն տարբերակը տե՛ս թերթի նախորդ համարում: Այշենուր Քոլիվարի թողարկած խտասկավառակի մասին տե՛ս նաև Ս. Վարդանյան, Այշենուր Քոլիվարի հայերէն երգերը, «**Չայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2013, № 3-4, էջ 4, 5:

44. Լուսինե Սահակյան, Համշենի մանրատեղանունները, խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Սերգեյ Վարդանյան, Երևան, ԵՊՀ հրատ., 2012 (-176 էջ):

Գիրքը եռալեզու է՝ հայերէն 1-58 էջ, թուրքերէն՝ “Hamşen (Hemşin) mikro yer isimleri”, էջ 59-108, ռուսերէն՝ «Микротопонимы Амшена», էջ 109-161, օգտագործված գրականության եռալեզու ցանկ՝ էջ 162-176, նաև ճանապարհորդության ընթացքում արված լուսանկարներ:

Ս. Վարդանյանի անունը և ուսումնասիրությունները նշված են հայերէնում՝ էջ 2, 3, 7-9, 16, 17, 29-41, 52, 56, 57, թուրքերէնում՝ էջ 60-62, 68, 69, 79, 81-86, 88-91, 99, 102, 105, 106, ռուսերէնում՝ էջ 110-112, 119, 120, 131-143, 152, 154, 158, 159, օգտագործված գրականության եռալեզու ցանկում՝ էջ 169, 170:

45. Գևորգ Ասատրյան, Համշենի մասին արժեքավոր ուսումնասիրություն, «**Չայն համշենական**», Երևան, 2012, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 1:

ԵՊՀ դասախոս, թարգմանիչ, լրագրող Գ. Ասատրյանը գրախոսել է Բ.Գ.Թ., թուրքագետ Լուսինե Սահակյանի «Համշենի մանրատեղանունները» հայերէն, թուրքերէն և ռուսերէն գիրքը (Երևան, 2012), բարձր գնահատելով այն, անդրադարձել է նաև գրքի խմբագրին՝ Ս. Վարդանյանին. «Ի դեպ, այդ ուղևորությունների ժամանակ այդ փոքր խմբում էր նաև հմուտ բանասեր և բանահավաք **Սերգեյ Վարդանյանը**, որ գիտական աշխարհին հայտնի է համշենահայերի, մասնավորապես կրոնափոխ համշենահայերի պատմությանը, բարբառին, բանահյուսությանն ու երգարվեստին նվիրված մի շարք արժեքավոր ուսումնասիրություններով:

...Հրապարակում եղած հայերէն, առայժմ միակ ընդարձակ աշխատանքը մնում է մահմեդական համշենահայերի խոսվածքին նվիրված Սերգեյ Վարդանյանի 2009 թ. լույս ընծայած արժեքավոր մենագրությունը:

...Այստեղ ես կուզենայի հատուկ նշել, որ գիրքը խմբագրել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, ճանաչված մտավորական ու խորագիտակ բանասեր, «Չայն համշենական» ամ-

սաթերթի գլխավոր խմբագիր Սերգեյ Վարդանյանը, շեշտել նրա տասնամյակների վաստակն ու փորձառությունը հատկապես համշենահայ մեր հայրենակիցների պատմության, լեզվի ու մշակույթի ուսումնասիրության բնագավառում»:

46. Ардаваст Тулумджян, Хемшилы (хомшеци) Краснодарского края: современное положение, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2012, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 4, 5:

Կրոսնոդարի երկրամասի Ապշերոնսկ քաղաքում բնակվող հողվածագիրը, որը «Համշեն» գիտամշակութային կենտրոնի նախագահն է, հիշատակում է նաև Ս. Վարդանյանին. «В 1984 г. первым, кто встречался с хемшилами с целью исследования, в период проживания последних в Средней Азии, был филолог из Армении Сергей Варданян, им был собран богатейший материал по говору и фольклору амшенцев-мусульман. В том же году, Варданяном С. была проведена экспедиция в Апшеронский и Белореченский районы, где обосновались первые семьи хемшилов-переселенцев из Киргизии» (с. 4). «... хотелось бы отметить книгу Варданян С. «Диалект, фольклор и музыкальное искусство исламизированных амшенских армян» (Ереван, 2009), содержащую ценнейший материал по этнографии хемшилов» (с. 4).

Տե՛ս նույնը՝ Ардаваст Тулумджян, Хемшилы (хомшеци) Краснодарского края: современное положение, «**Armenian Times**» (Արմենիան Թայմս, Армениан Таймс), հայերեն-ռուսերեն ամսաթերթ, Մոսկվա, 2012, декабрь, № 12 (50), с. 8, 9:

47. Աբրահամյան Ա. Ա., «Գերանդի» հասկացության բառանվանումները հայերենի բարբառներում, «**Լրաբեր հասարակական գիտությունների**», ամսագիր, Երևան, 2012, № 2-3, էջ 334-341:

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի աշխատակից բ.գ.թ. Անահիտ Աբրահամյանի հողվածում հիշատակվում է նաև Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը...» (2009) գիրքը, էջ 337 և 338: «Ս. Վարդանյանը Համշենի բարբառի Խոփայի ենթախոսվածքում արձանագրել է **քերէնդին հեղը** «հնձելիս՝ մանգաղի և գերանդու բերանից ընկած խոտի, ցորենի յուրաքանչյուր շերտը» բառակապակցությունը» (էջ 338):

48. Армяне. Серия «Народы и культуры», Институт этнологии и антропологии им. Н. Н. Миклухо-Маклая РАН, Институт археологии и этнографии НАН РА, Москва, издательство «Наука», 2012 (- 648 с.).

Հայերի պատմությանն ու մշակույթին, ազգագրությանը նվիրված ակադեմիական հրատարակության գլուխները գրել են շուրջ երկու տասնյակից ավելի գիտնականներ: Գրքի 566, 567 և 569-րդ էջերում տպագրված լուսանկարները (համապատասխանաբար՝ «Армянский памятник в Будёновске», «Армянская церковь Св. Креста в Ростов-на-Дону», «Армянское село Нижняя Шиловка, Адлерский р-н Краснодарский край»), ինչպես նշված է դրանց տակ, Ս. Վարդանյանի անձնական արխիվից են:

49. Şerif Yılmaz, Hemsinlilerin ve Hemsinli Ermenilerin (Hayların) Kökeni, Ankara, Payda Yayıncılık, 2012 (- 198 s.).

Շերիֆ Յըլմազն իր գրքում հիշատակում է Ս. Վարդանյանին (էջ 145)՝ հղում անելով Ի. Կուզնեցովի թուրքերեն հոդվածին, տե՛ս 2007 թ. № 52 և 53 նկարագրությունները:

50. Հարություն Ծատրյան, Մի մեծ հետազոտության վավերագրական պատմություն, «**Երևանի համալսարան**», ամսաթերթ, Երևան, 2012, դեկտեմբեր, № 11 (2146), էջ 10, 11:

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության բաժնի դոցենտ, Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հայ-օսմանական առնչությունների բաժնի վարիչ Լուսինե Սահակյանի «Համշենն անցյալի ու ներկայի խաչմերուկներում» (հայերեն տարբերակը՝ 80, անգլերեն վազոդ տողերով՝ 60 բուպե տևողությամբ) վավերագրական ֆիլմի՝ նույնբերին Հովիվուղում կայացած “ARPA” («ԱՐՓԱ») միջազգային կինոփառատնում Արմին Թ. Վեգների անվան մրցանակին արժանանալու առթիվ հարցազրույց է: Հ. Ծատրյանը նշում է. «Տեղում կատարված նկարահանումների հիման վրա վեր է հանված համշենահայերի մերօրյա մշակույթը՝ երգարվեստն ու պարը, սովորույթները, լեզվական վիճակը, ներկա կենցաղն ու զբաղմունքը, իրենց իսկ ինքնության հետ կապված նրանց ընկալումներն ու ժողովրդագրական պատկերը: Ֆիլմի և սցենարի հեղինակը Լուսինե Սահակյանն է, իսկ սցենարի խմբագիրն ու բարբառային տեքստերի թարգմանիչը՝ Սերգեյ Վարդանյանը» (էջ 10):

Հարցազրույցում Լ. Սահակյանը, պատմելով ֆիլմի ստեղծման մասին, ասում է. «Երեք տարի շարունակ՝ ամռան ամիսներին, դաշտային հետազոտություններ եմ իրականացրել Թուրքիայում ապրող համշենցիների բնակավայրերում (փոքրիկ գիտահետազոտական խմբով, որի կազմում էր նաև «Ձայն համշենական» թերթի գլխավոր խմբագիր Սերգեյ Վարդանյանը), մասնավորապես Արդվինի նահանգի Խովա գավառում, Արդահանի նրանց Բիլբիլանի արոտավայրում, ամառանոցում, ինչպես նաև Ռիզեի

նահանգում գտնվող բնակավայրերում» (էջ 10): «Հատկապես կցանկանամ նշել նաև «Չայն համշենական» թերթի գլխավոր խմբագրին՝ Սերգեյ Վարդանյանին, ով նաև սցենարի խմբագիրն է ու բարբառային նյութերի թարգմանիչը: Նա ինձ իսկապես շատ է օգնել» (էջ 11):

51. Մամվել Մարգարյան, Օրհներգեր հայոց 12 մայրաքաղաքներին, Самвел Маргарян, Гимны 12-и столицам Армении, Samvel Margaryan, Anthems to the 12 capitals of Armenia, Երևան, «Վան Արյան» հրատ., 2012 (- 96 էջ):

Եռալեզվյան՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն գրքի ընթերցողներին ուղղված խոսքում հեղինակն իր օգտագործած աղբյուրների շարքում նշում է նաև Ս. Վարդանյանի «Հայոց մայրաքաղաքները» (1985): 12 մայրաքաղաքներին նվիրված բանաստեղծությունները, մայրաքաղաքների մասին պատմական ակնարկները ներկայացվել են նաև ռուսերեն ու անգլերեն:

52. М. Татул, Редакционное. К итогам 2011 г., «Амшен-Понтос», выпуск пятый, Краснодар-Сочи, 2012 г., с. 3, 4.

«В 2011 г. в Армении благодаря деятельности «Центра по изучению Западной Армении» под руководством Айказуна Алврцяна и редактора газеты «Дзайн Амшенакан» Сергея Варданяна вокруг них сформировалась группа исследователей – амшеноведов, которые проводят очень важную работу в этом направлении. Можно сказать, что в Армении состоялось новое поколение амшеноведческого дискурса, что, бесспорно, добавляет нам силы и веру в будущее амшенских армян. Хочется надеяться, что, подобное произойдет и здесь, по образному выражению Серо Ханзадяна, в Новом Амшене, и амшенские армяне смогут сформировать свой общенациональный культурный центр» (с. 3).

53. Сообщения, «Амшен-Понтос», выпуск пятый, Краснодар-Сочи, 2012, с. 5-17.

Հանդեսի «Сообщения» (Հաղորդագրություններ, լուրեր) բաժնի էջերում, որպես առանձին լուրեր տպագրվել են «Չայն համշենական» ամսաթերթի 2011 թ. հերթական համարների հրատարակության և տարբեր հեղինակների՝ այդ թվում Ս. Վարդանյանի կարևոր հոդվածների մասին տեղեկություններ: Այդ թեմայով բոլոր լուրերը սկսվում են համարյա նույն կերպ. «Вышел в свет № 78-79 газеты «Дзайн Амшенакан» Амшенского земляческого объединения Армении под редакцией известного амшеноведа Сергея Варданяна. В этом номере были напечатаны ряд важных амшеноведческих материалов:... » (с. 6), № 80-81-ի մասին տե՛ս էջ 8, № 82-83-ի մասին՝ էջ 11, № 84-85-ի՝ էջ 13, № 86-87-ի՝ էջ 15, № 88-89-ի՝ էջ 17:

54. Ջավախքի ժողովրդական հեքիաթներ և գրույցներ, կազմողներ՝ պատմ. գիտ. թեկնածուներ Վ. Սարգսյան, Է. Աբրահամյան, Երևան, «Միտք» վերլուծական կենտրոն, 2012 (-160 էջ):

Ս. Վարդանյանը հիշատակվում է 3, 4, 5, 6, 76, 79, 84, 86 էջերում:

Պ. գ. թ. Վահե Սարգսյանի «Երկու խոսք այս գրքի ստեղծման մասին» առաջաբանից հատված. ««Օրթմա» վերնագիրն ունեցող հաջորդ՝ 9-րդ հեքիաթը, վերցրել ենք «Հրեղեն ձին» ժողովածուից («Հրեղեն ձին», մշակեց և վերապատմեց Սերգեյ Վարդանյանը, Երևան, 1981):

Հաջորդ երեք հեքիաթները (ըստ հերթականության՝ 10-րդ, 11-րդ և 12-րդ հեքիաթները) մեր կողմից վերցված են մեկ այլ՝ «Թագավորի երագները» ժողովածուից («Թագավորի երագները» (Բանահյուսական ժողովածու), կազմեց, ծանոթագրեց և հրատարակության պատրաստեց Սերգեյ Վարդանյանը, Երևան, 2003):

Այժմ երկու խոսք վերջին երկու ժողովածուների մասին: Ինչպես արդեն նշեցինք, ժողովածուները հրատարակել է մեր օրերի հայտնի ազգագրագետ, բանահավաք Սերգեյ Վարդանյանը, որը տասնամյակներ առաջ՝ 1978 թ., «Պիոներ-կանչի» մայիսյան համարներից մեկում տպագրեց դպրոցականներին ուղղված կոչ՝ գրառելու, կորստից փրկելու ժողովրդի ստեղծած բանահյուսական արժեքները: Ահա այս կոչին արձագանքելով, Հայկական ԽՍՀ-ի, ինչպես նաև հարևան Ջավախքի, Արցախի, հայաշատ վայրերի՝ Վրաստանի, Աբխազիայի, Նախիջևանի ու Ադրբեջանի հազարավոր հայ դպրոցականներ շուտով խմբագրություն են ուղարկում իրենց ընտանիքների մեծերից՝ պապիկ-տատիկներից, տվյալ վայրի լեզվաոճային նրբերանգներով գրի առնված հեքիաթներ, առակներ, գրույցներ ու ավանդույուններ, երգեր, մանկական խաղերգեր, խաղիկներ, հանելուկներ, առածներ և ասացվածքներ: Ստացված հազարավոր նյութերը, շուրջ մի քանի տարի, տպագրվել են «Պիոներ-կանչ» թերթի «Պատանի բանահավաք» էջում: Իսկ շուրջ հազարի հասնող նշյալ նյութերը նախաձեռնության երախտավոր Ս. Վարդանյանի կողմից խնամքով մշակվել և առանձին գրքով հրատարակվել են, ինչպես վերևում նշեցինք 1981 թ.՝ «Հրեղեն ձին» ընդհանուր վերնագրով: Միաժամանակ՝ կուտակված ողջ նյութը ի պահ է հանձնվել ՀՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտին, որտեղ էլ ստեղծվել է մանկապատանեկան ֆոնդ: Սակայն, «Հրեղեն ձին» գրքի հրատարակումը ոչ միայն չի դադարեցրել, այլ ընդհակառակը, է՛լ ավելի է ոգևորել դպրոցականներին, որոնք շարունակել են նշյալ վայրերից ուղար-

կել նորանոր բանահյուսական գրառումներ, որոնցից մի քանիսը լույս են տեսել «Ծիծեռնակ» ամսագրում և «Լույս Համշենի» թերթում: Ելնելով այս փաստից, Ս. Վարդանյանը նախաձեռնում է երկրորդ ժողովածուի հրատարակումը, որին տրվել է «Թագավորի երագները» խորագիրը: Ցավոք գիրքը լույս է տեսել միայն 2003 թ., չնայած այն պատրաստ էր հրատարակության դեռ 1983 թ.:

Ահա վերոնշյալ երկու գրքերից մեր կողմից գտնվեցին թվով 4 հեքիաթներ, որոնք պատմվել են Ջավախքում, գրի առնվել դպրոցականների կողմից և ուղարկվել խմբագրություն: Հեքիաթներն առանձնահատուկ են ինչպես լեզվաառճային, այնպես էլ՝ բովանդակային առումներով: Բավական է նշել այն փաստը, որ սույն հեքիաթներում պահպանված՝ Նոյի ու աստվածաշնչյան Հայր Աբրահամի մասին տեղեկությունները գրեթե բացակայում են այլ վայրերից գրառված հայ բանահյուսական գործերում», (էջ 3, 4):

2013

### **Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)**

1. Բռնի իսլամացված համշենահայերի մշակութային ժառանգությունից. մանկական բանահյուսություն // **«Հասկեր»** մանկական գրականության և բանահյուսության տարեգիրք, հ. 3, Երևան, Հովհ. Թումանյանի թանգարան, 2012-2013, էջ 25-32:

Հոդվածում Համշենի բարբառի Խովայի խոսվածքով և գրական արևելահայերեն թարգմանությամբ ներկայացված են Թուրքիայում Ս. Վարդանյանի գրառած **2 մանկական խաղերգ (հաշվերգ), 1 մատնախաղ և 6 հանելուկ:**

2. Անտառային ոգիները կրոնավորված համշենահայերի բանահյուսության մեջ // **«Անտառը հրաշապատում հեքիաթում»**, 2013 ապրիլի 16-17, հեքիաթագիտական 5-րդ գիտաժողովի ծրագիր և թեզիսներ, Երևան, Հովհ. Թումանյանի թանգարան, 2013, էջ 37-39:

Գիտաժողովի կազմակերպիչներ՝ Հովհ. Թումանյանի թանգարան, *Fabula armeniaca* ծրագիր, ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոն:

3. Վանը միջնադարից մինչև 1915 թ. // ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, «Վասպուրական» հայրենակցական միություն, Վան քաղաքի առաջին հիշատակության 2865-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (7-9 հոկտեմբերի, 2010 թ.) նյութերի ժողովածու, ժողովածուի խմբագիր՝ Հ. Մարության, «Հայաստանի մայրաքաղաքները», գիրք I, Վան, «Գիտություն» հրատ., Երևան, 2013 (-352 էջ), էջ 135-145:

4. Յայտնի է անյայտ Արման Կոթիկեանին, «**Նոր աշխարհ**-ի 2007-ի և 2010-ի **Տարեգիրք**», Գ և Դ միացեալ հատոր, Աթենք, 2013, էջ 50-53:

Աթենքում հրատարակվող «**Նոր աշխարհ**» թերթի տարեգիրքն է: Հեղինակը՝ Ս. Վարդանյանը, հողվածի վերջում դիմում է ընթերցողներին, որպէսզի օգնեն գտնելու Ս. Կոթիկյանին 1915 թ. օգնած հույն կնոջ (անունը՝ Զոյի, ամուսնական ազգանունը՝ Գոգոֆիրիս) սերունդներին, եթէ նրանք փրկվել են կոտորածներից: (Հողվածում, Արման Կոթիկյանի լուսանկարների հետ, սխալմամբ տպագրվել են նաև Ս. Վարդանյանի պապի՝ Հայֆիլհարմոնիայի պետական ազգագրական պարախմբի ղեկավար Հարություն Վարդանյանի ազգագիրը՝ «Շքեղ պարերի երեկո» (1932 թ.), նաև Վանի տարագով նրա բնական լուսանկարը, որոնք հավանաբար ներբեռնվել են Արման Կոթիկյանի լուսանկարների հետ):

5. Դերասան Արման Կոթիկյանը՝ նաև բանաստեղծ, թարգմանիչ և Եղեռնի տարեգիր, «**Կինոաշխարհ**», ամսաթերթ, Երևան, 2013, ապրիլ, № 4, էջ 6, 7:

Հողվածը հանրահայտ դերասան Արման Կոթիկյանի մասին է, նաև հրապարակվել է Եղեռնը վերապրածներից նրա գրառած երկու հուշ-վկայությունը:

Նույն հողվածի տարբերակը տե՛ս «**Գրական Համշեն**», արխագահայ գրողների ստեղծագործությունների պլաննախ, Երևան, 2016 (- 264 էջ), էջ 105-115:

Ի տարբերություն «Կինոաշխարհի», «Գրական Համշենում» տպագրվել է Եղեռնի 5 հուշ-վկայություն:

Տե՛ս նաև «**Համշեն**» ամսաթերթ, Սուխում, 2013, № 15-16:

6. Դերասան Արման Կոթիկյանը՝ նաև բանաստեղծ, թարգմանիչ և Եղեռնի տարեգիր, «**Համշեն**» ամսաթերթ, Սուխում, 2013, № 15-16, էջ 6:

Նույն վերանգրով «Կինոաշխարհ» ամսաթերթում (2013, № 4) տպագրված հողվածն է, առանց Եղեռնը վերապրողների հուշերի:

7. Հայոց մայրաքաղաքները. Վաղարշապատ, «**Լուսակն**», հանդես, Երևան, 2013, № 11, հունիս, էջ 20-21, № 12, դեկտեմբեր, էջ 14-16:

8. Черепашка, В ванной комнате (рассказы) // **Сказки и рассказы для взрослых и детей**, составитель и переводчик Роза Егиазарян, Ереван, изд. «Цицернак», 2013 (- 240 с. ), с. 24-30.

Շամանակակից 11 հայ գրողների մանուկների համար գրած պատմվածքների ռուսերեն թարգմանված ժողովածու է:

9. Черепашка, перевела Роза Егиазарян, «**Համշեն**», տասնօրյա թերթ, Սուխում, Աբխազիա, 2013, ապրիլի 10, № 9-10, էջ 6:

«Կրիան» մանկական պատմվածքի թարգմանությունն է:

Տե՛ս Կրիան (պատմվածք), «**Ծիծեռնակ**», ամսագիր, Երևան, 1986, № 8, էջ 4:

Ս. Վարդանյան, **Արևածաղիկը**, պատմվածքներ, Երևան, Արևիկ հրատ., 1989 (- 40 էջ), էջ 39: Ս. Վարդանյան, **Արևածաղիկը**, պատմուածքներ, Արևմտահայերենի վերածեց՝ Մաքրուհի Պ. Յակոբեան, Իսթանպուլ, ԱԸԱՍ հրատ., 1994 (- 64 էջ), էջ 39-41: Ծիծեռնակի թռիչքը, անթողոզիա, կազմեց՝ Կասյա Սարվազյանը, Երևան, «Ծիծեռնակ» հրատ., 2003 (- 100 էջ), էջ 62: «**Ուրախ գնացք**», մանկական ամսագիր, Երևան, 2010, № 12, էջ 34, 35: Черепашка // **Сказки и рассказы для взрослых и детей**, составитель и переводчик Роза Егиазарян, Ереван, изд. «Цицернак» (- 240 с.), с. 25,26.

10. Նոր գրառումներ Թուրքիայում, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2013, հունվար-փետրվար, № 1-2, էջ 8:

Տպագրվել է Արդվինի նահանգի Խոփայի գավառի Հենդեք գյուղում գրառված երկու զվարճապատում՝ Ս. Վարդանյանի զուգահեռ գրական հայերեն թարգմանությամբ՝ «**Ասպաձէ էմէն դաղ դէսու գու**» և «**Վէլիսէլին աթմաջա փըրնուշի հէքիյան**»:

11. Բարձրարժեք հրատարակություն, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2013, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 1, 3:

Անստորագիր է, հեղինակը Ս. Վարդանյանն է: Հայաստանի պետական արխիվի 2012 թ. հրատարակած «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու» եռահատոր գիրքը ներկայացնելուց հետո արտատպվել են կտորածների մասին տրապիզոնցի վերապրած Գոհար Մարյանի հուշերը:

12. Այշենուր Քոլիվարի հայերեն երգացանկը, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2013, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 4, 5:

Համշենցի երգչուհի Այշենուր Քոլիվարի մասին է, ներկայացվում է 2012 թ. նրա թողարկած խտասկավառակը, որի 25 երգերից 3-ը հայերեն են՝ Խոփայի խոսվածքով: Հրատարակվել են այդ երգերը՝ բարբառով և Ս. Վարդանյանի թարգմանությամբ («**Ջօրօխի քօվուշ**», «**Ղա՛, իմ Յուսուֆ օրթի**», «**Նօրհարս էլլիմ**»): Վերջին երգը 1984 և 1987 թթ. Ս. Վարդանյանն է գրառել Ղազախստանում բնակվող կրոնափոխ համշենցիներից, ինչի մասին նշված է նաև խտասկավառակի գրքույկում:

13. Հաջողություն քեզ, Սոֆիա, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2013, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 7:

Երիտասարդ լրագրող Սոֆիա Հակոբյանի հոդվածը տպելու առթիվ հեղինակին բարեմատությանքի խոսք է:

14. Մի երգի մասին, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2013, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 8:

Համառոտ ներկայացվում է համշենցի երգիչ Հիքմեթ Աքչիչեքի գրած երգի նախապատմությունը, որից հետո Խոփայի խոսվածքով տպագրվել է երգը՝ **«Լեյլիմ յար»** և Ս. Վարդանյանի թարգմանությունը:

15. Նոր հանդիպում Յուսուֆ Վայիչի հետ, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2013, մայիս-հունիս, № 5-6, էջ 8:

Ս. Վարդանյանը պատմում է բանաստեղծ և երգահան Յուսուֆ Վայիչի մասին, նաև Խոփայի խոսվածքով և թարգմանությամբ ներկայացնում է նրա խոհերն իրենց խոսվածքի վերաբերյալ՝ **«Իսա օրես ինչվես էգաք»** (Այս օրիս ինչպես եկանք):

16. Բանահյուսական նոր գրառումներ Թուրքիայի Արդվինի նահանգում, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2013, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 6-8:

Խոփայի խոսվածքով և թարգմանությամբ հրատարակվել են Ս. Վարդանյանի նոր գրառումները՝ **«Գանջեօզե քուկա, փախի՛», «Թեմիզ Հարունին արգային ցավե՛», «Լուսնիկան», «Իսուն լիրան շադ ա»,** Խոջա Նաբեդիինի մասին զվարճապատումներ՝ **«Աբրելե իսա ջամփացան գերթա», «Խերք չուներ, զարթե՛», «Շաշ ասթաք ու աղաղիզ ալ չա», «Ա՛խ, ջիվանություն»,** նաև 5 խաղիկ թարգմանությամբ: **«Վախ չափելու աղոթք»** Հենդեք գյուղից: Ներկայացվում են վախ չափելու ողջ գործողությունը և աղոթքը:

17. Նույն նավի ուղևորները, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2013, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 2, 3:

Համառոտ անդրադարձ է Եփրեմ Չաքարյանի «43 տարի անց» պատմության տպագրությունից հետո եղած արձագանքներին. հրատարակվել են նոր նյութեր:

18. Ներկայացվում է լրագրողը, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2013, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 6:

«Թուրքիայի իսլամացված հայերը» հոդվածը տպագրելու առթիվ ներկայացվել է հեղինակը՝ Աննա Մուրադյանը:

19. Երկու երգ Արդվինի նահանգի Խոփայի և Բորչկայի գավառներից, «**Չայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2013, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 8:

Խոփայի խոսվածքով և Ս. Վարդանյանի թարգմանությամբ տպագրվել են Էբրալ Այդընի «**Յէ՛ մա**» և Բայար Շահինի երգած «**Գասադ մէնուշ**» երգերը: Էբրալ Այդընը խոփացի համշենցի է, ծնվել է 1981 թ., այժմ բնակվում է Իզմիրում՝ Բուրնովայում, իսկ Բայար Շահինը իսլամ վրացի է, ծնվել է 1965 թ. Արդվինի նահանգի Բորչքայի գավառի Ջամիլի գյուղում, սովորել է Էրզինջանի (Երզնկա) համալսարանում, բնակվում է Ստամբուլում: Թուրքերեն, վրացերեն, լազերեն, մեգրելերեն երգեր պարունակող 7 խտասկավառակի հեղինակ է, Համշենի բարբառի Խոփայի խոսվածքով «Գասադ մէնուշ» երգը ընդգրկված է 2007 թ. Ստամբուլի «Ateş Muzik» ստուդիայի թողարկած «Nalia» (Նալիա՝ «սարբեն») խտասկավառակում, խոսքի և երաժշտության հեղինակը Խոփայի գավառի Բաշոբա (Խիզո) գյուղում բնակվող Հարուն Աքսուն է: Ցավոք, բարբառային տեքստում, ուստի և թարգմանության մեջ մեկ բառ՝ նախորդ տողի «քուկա»-ն, կրկնվել էր, այնինչ պետք է լիներ «խուփ ա»:

Թեր ցըմերին ցուն քուկա,

Լերինէ ջամփան խուփ ա:

(Դեռ ձմռանը ձյուն է գալիս,

Յայլայի ճանապարհը փակ է):

20. Իսլամացված հայերին նվիրված գիտաժողով Ստամբուլում, «**Չայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2013, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 1:

Մանրամասն ներկայացվում է 2013 թ. նոյեմբերի 2-4 Ստամբուլում՝ Բողազիչի համալսարանում կայացած գիտաժողովը, որի ժամանակ զեկուցում է կարդացել նաև Ս. Վարդանյանը:

21. Իսլամացուած համշենցիները թէ գոհեր են եւ թէ վկաներ (ՀՀ Գիտութիւններու Ազգ. Ակադեմիայի Ազգագրական Ինստիտուտէն եւ «Չայն Համշենական» թերթի խմբագրապետ-հրատարակիչ Սերկէյ Վարդանեանի երկարաշունչ զեկուցումը համառոտելով ու արեւմտահայերէնի վերածելով կու տանք ստորեւ...), “Agos”, Haftalık gazete, Istanbul, 2013, Kasım 8, № 914, «Ալօս», շաբաթաթերթ, Ստամբուլ, 2013, նոյեմբերի 8, № 914, **Հայերեն ներդիր**, էջ 3:

Տպագրվել է Ս. Վարդանյանի լուսանկարը Բողազիչի համալսարանի դիմաց: Ստամբուլի Բողազիչի (Բոսֆորի) համալսարանում 2013 թ. նոյեմբերի 2-4-ը տեղի ունեցած «Իսլամաց(վ)ած հայեր» միջազգային գիտաժողովում Ս. Վարդանյանի կարդացած զեկուցումն է՝ կրճատված և արևմտահայերենի փոխադրված: Նյութի ավելի սեղմ տարբերակը արտատպվել է Աթենքի «**Ազատ օր**» օրաթերթում, 2013 թ., նոյեմբերի 20, թիւ 20205:

Ս. Վարդանյանի զեկուցման համառոտված թուրքերեն տարբերակը լոյս է տեսել “**Agos**” թերթի նույն համարում՝ “Karadeniz’in gizemli halkı”, էջ 8:

22. Uygur Gültekin, Karadeniz’in gizemli halkı, “**Agos**”, Haftalık gazete, Istanbul, 2013, Kasım 8, № 914, s. 8. (Թարգմանություն՝ Ույգար Գյուլթեքին, Սև ծովի խորհրդավոր ժողովուրդը):

2013 թ. նոյեմբերի 2-4-ը Ստամբուլի Բողազիչի (Բոսֆորի) համալսարանում կայացած «Իսլամաց(վ)ած հայեր» միջազգային գիտաժողովում Ս. Վարդանյանի կարդացած զեկուցման թուրքերեն վերապատմությունն ու թարգմանությունն է՝ կրճատումներով: Նույն համարի հայերեն ներդիրում տե՛ս նաև արևմտահայերեն կրճատված տարբերակը՝ «Իսլամացուած համշէնցիները թէ գոհեր են եւ թէ վկաներ», էջ 3:

Զեկուցման ամբողջական թուրքերեն թարգմանությունը տե՛ս գիտաժողովի զեկուցումների ժողովածուում՝ Sergey Vardanyan, Müslümanlaştırılmış Hemsinli Ermeniler: Kurbanlar ve Tanıklar, Ermeniceden çeviren Pakrat Estukyan // **Müslümanlaş(tır)ılmış Ermeniler**, Konferans Tebliğleri, Kasım 2013, Istanbul, Hrant Dink Vakfı Yayınları, 2015 (- 470 s.), s. 75-86.

23. «Իսլամացուած համշէնցիները թէ գոհեր են եւ թէ վկաներ», «**Ազատ օր**», օրաթերթ, Աթենք, 2013, նոյեմբեր 20, № 20205, էջ 5:

Ստամբուլի «**Ակօս**» թերթի հայերեն ներդիրում հրատարակված Ս. Վարդանյանի զեկուցման կրճատված տարբերակն է: Տպագրվել է Ս. Վարդանյանի լուսանկարը Բողազիչի համալսարանի բակում, տե՛ս “**Agos**”, Istanbul, 2013, kasım 8, Հայերեն ներդիր, էջ 3:

### **Երկրորդ բաժին (հարցազրույցներ)**

24. Քույր դպրոցներ, զրուցեց Սերգեյ Վարդանյանը, «**Ձայն համշէնական**», ամսաթերթ, Երևան, 2013, մարտ-ապրիլ, № 3-4:

Հարցազրույցը Աբխազիայի Գագրայի շրջանի Յանդրիպշ (նախկին Գանթիադի) ավանի Ավ. Իսահակյանի անվան № 1 հայկական միջն. դպրոցի տնօրեն Ռիմա Փափազյանի հետ է:

25. Արմինե Սարգսյան, «Ցեղասպանությունը շարունակվում է», ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, «Չայն համշենական» թերթի գլխ. խմբագիր Ս. Վարդանյանի հետ զրուցում է Արմինե Սարգսյանը, «**Իրասեու de facto**», եռօրյա թերթ, Երևան, 2013, մայիսի 7-9, № 31 (447), էջ 10:

Ս. Վարդանյանը պատմում է Ռիզեի նահանգի Չամլրհեմշինի գավառի լեռներում՝ Գիթո յայլայում հանդիպած կրոնափոխ համշենցիների ընտանիքի մասին, որի 40-ամյա որդին տեղյակ չէր, որ իրենք հայկական ծագում ունեն և մայրը հայերեն ժողովրդական հմայական աղոթքներ գիտի: Տպագրվել է նաև Ս. Վարդանյանի լուսանկարը կրոնափոխ համշենցիների տանը:

Արտատպությունը՝ «**Չայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2013, մայիս-հունիս, № 5-6, էջ 5:

26. Արմինե Սարգսյան, «Ցեղասպանությունը շարունակվում է», «**Չայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2013, մայիս-հունիս, № 5-6, էջ 5:

Ներկայացվում է Ռիզեի նահանգի Չամլրհեմշինի գավառի Գիթո յայլայում կրոնափոխ համշենցիների հետ մի հետաքրքիր հանդիպման մասին Ս. Վարդանյանից գրառած պատմությունը:

Արտատպված է՝ «**Իրասեու de facto**», թերթ, Երևան, 2013, մայիսի 7-9, № 31, էջ 10:

27. Եկել են Հայաստան, հարցազրույցը՝ Սերգեյ Վարդանյանի, «**Չայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2013, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 1, 2:

Հարցազրույցը Սաթենիկ Դավթյանի հետ է, որի գլխավորությամբ «Արի տուն» ծրագրով Աբխազիայից Հայաստան են եկել մի խումբ հայ դպրոցականներ:

### Երրորդ բաժին

28. Հարություն Մարության, Ներածություն // ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, «Վասպուրական» հայրենակցական միություն, Վան քաղաքի առաջին հիշատակության 2865-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (7-9 հոկտեմբերի, 2010 թ.) նյութերի ժողովածու, ժողովածուի խմբագիր՝ Հ. Մարության, «Հայաստանի մայրաքաղաքները», գիրք I, Վան, «Գիտություն» հրատ., Երևան, 2013 (- 352 էջ), էջ 7-24:

Պ.գ.դ., «Վասպուրական» միության փոխնախագահ Հ. Մարությանը գրքի ներածականում հղում է կատարում Ս. Վարդանյանի «Հայոց մայրաքաղաքները» (1985) և «Հայաստանի մայրաքաղաքները» (1995) գրքերին:

Ներածությունից հատված. «Մայրաքաղաք» բառեզրն ունի մի քանի նշանակություն, այդ թվում՝ Սո. Մալխասյանցի ձևակերպմամբ. «Պետութեան այն քաղաքը, որտեղ գտնվում է այդ պետութեան կենտրոնական իշխանությունը»:

«Մայրաքաղաք» բառեզրի այս իմաստը նկատի ունենալով՝ իր ժամանակին Սերգեյ Վարդանյանը՝ «Հայաստանի մայրաքաղաքները» մենագրության հեղինակը, իրավացիորեն նկատել է, որ «աշխարհի ոչ մի երկիր իր պատմության ընթացքում այնքան մայրաքաղաքներ չի ունեցել, որքան Հայաստանը»: Թերեւս այս հանգամանքն է ժամանակին առիթ դարձել, որ օտար հեղինակները Հայաստանն անվանեն «դեգերող մայրաքաղաքների երկիր»: Եվ իրոք, «եթե նույնիսկ չհաշվենք պատմական այս կամ այն ժամանակահատվածում իրենց անկախ հռչակած Փոքր Հայքի, Ծոփքի, Սյունիքի, Կիլիկիայի, Տաշիր-Չորագետի և այլ հայկական թագավորությունների մայրաքաղաքները կամ ժամանակավոր թագավորանիստերը, ապա կունենանք տասներկու մայրաքաղաք՝ Վան, Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ, Դվին, Բագարան, Շիրակավան, Կարս, Անի և, վերջապես, Երևան» (էջ 7, 8): Ս. Վարդանյանը հիշատակվում է նաև 13-րդ էջում:

29. Շամիրամ Քեայան, Անմնացորդ նվիրումով, «**Համշեն**», պարբերաթերթ, Սուխում, 2013, փետրվարի 6, № 3-4, էջ 2:

Արխագահայերի «Սնծովյան այգաբաց» գրական միավորման անդամ, Ագարակ (Կավակլուղ) գյուղի հայկական դպրոցի տնօրեն Շ. Քեայանը պատմում է Ս. Վարդանյանի անցած ուղու մասին: Հռոկվածում Ս. Վարդանյանի ծննդյան թվականը 1952-ի փոխարեն սխալմամբ տպագրվել է 1942 թ.: Թերթի հաջորդ համարում խմբագրությունը ներողություն է խնդրել և սխալը ուղղել, տե՛ս «Համշեն», 2013, մարտի 12, թիւ 5-6, էջ 8: «Սնծովյան ալմանախ» (2013) ժողովածուում ևս սխալը ուղղվել է (էջ 109): Տպագրվել են նաև Ս. Վարդանյանի երկու լուսանկարը, որոնցից մեկը՝ Արդվինի նահանգի Յուսուֆելի գավառի Խնակ գյուղում, թուրքագետ Լ. Սահակյանի և նշանավոր պարկապգուկահարուհի Ֆելիզ Իլքա Բալթայի հետ: Հռոկվածից հատված. ««Գարուն» ամսագրում մի ընդարձակ հոդված տպվեց համշենցիների մասին, որով Սերգեյ Վարդանյանը դարձավ շատ համշենցիների մտերիմը, հարազատը: Գոնե ինձ համար դա այդպես էր, քանի որ ես առաջին անգամ էի մամուլում կարդում այդ թեմայով նյութ: Այն ժԱգատամանակ ես մտածեցի, որ գրողն անպայման համշենցի է: Երբ

2006-ին ծանոթացանք, իմ առաջին հարցն էր՝ ի՞նչ կապ ունի նա համշենցիների հետ: Ոչ մի կերպ չէի ուզում հավատալ, որ համշենական արմատներ չունի»:

Տե՛ս նաև **Գրական Համշեն**, Սուխում, 2013 (-264 էջ), էջ 109, 110:

30. Շամիրամ Քեայան, Անմնացորդ նվիրումով (Սերգեյ Վարդանյան) // **Գրական Համշեն**, Աբխազիայի Հանրապետության «Սևծովյան այգաբաց» գրական միավորման պլանախի, կազմող՝ Արտավազ Սարեցյան, Սուխում, Աբխազական պետական հրատարակչություն, 2013, (- 264 էջ), էջ 109, 110:

Աբխազիայի Ազարակ (Կավակլուդ) գյուղի հայկական դպրոցի տնօրեն Շամիրամ Քեայանը ներկայացնում է Ս. Վարդանյանի անցած ուղին:

Տե՛ս նաև, «**Համշեն**», պարբերաթերթ, Սուխում, 2013, փետրվարի 6, № 3-4, էջ 2:

31. В литературном объединении «Черноморская заря», «**Համշեն**», պարբերաթերթ, Սուխում, 2013, հունվարի 17, № 1-2, էջ 1:

Ռուսերեն տպագրվել է Աբխազիայի հայ գրողների «Սևծովյան այգաբաց» գրական միավորման որոշումը «Համշենցի հայերի ժողովրդական ստեղծագործության և ազգագրության ուսումնասիրության գործում նշանակալի վաստակի, Աբխազիայի հայ գրողների ստեղծագործությունները տարածելու համար Ս. Վարդանյանին «Սևծովյան այգաբաց» գրական միավորման պատվավոր անդամ ընտրելու մասին»: Տպագրվել է նաև Ս. Վարդանյանի լուսանկարը:

32. Արտավազ Սարեցյան, Սևծովյան այգաբացներ, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2013, № 1-2, էջ 1, 2:

«Մեր հյուրերն են աբխազահայ գրողները» խորագրի ներքո թերթի 4 էջերում տպագրվել են Սուխումի «Սևծովյան այգաբաց» գրական միավորման անդամների ստեղծագործությունները: Գրական միավորման ղեկավար Ա. Սարեցյանն իր հոդվածում հիշատակում է նաև Ս. Վարդանյանին. «...Վերջերես մեր միավորման Պատվավոր անդամ ընտրվեց Երևանի «**Ձայն համշենական**» թերթի գլխավոր խմբագիր Սերգեյ Վարդանյանը՝ մի վաստակաշատ մտավորական, որը համշենահայության պատմության ու բանահյուսության ուսումնասիրությունն իր կյանքի հիմնական նպատակներից մեկն է դարձրել, և այս բնագավառում ակնառու են նրա նվաճումները: Սերգեյ Վարդանյանը ամենայն պատասխանատվությամբ շարունակեց «**Ձայն համշենական**» գրքի առաջին հատորի խմբագիր Սերո Խանգաղ-

յանի սկսած բարի գործը, կազմեց և խմբագրեց գրքի այլ հատորները» (էջ 1):

33. Роза Егиазарян, Всякое бывало, «Собеседник Армении», еженедельная газета, Ереван, 2013, 29 марта-5 апреля, № 12 (266), с. 14:

Արձակագիր, թարգմանիչ և լրագրող Ռոզա Եղիազարյանը գրի է առել տարիների ընթացքում իր կամ հայտնի գիտնականների ու մտավորականների (այդ թվում՝ Ս. Վարդանյանի) հետ պատահած զավեշտալի պատմություններ: Տե՛ս նույնի հայերենը:

34. Ռոզա Եղիազարյան, Ինչ ասես չի եղել, «Հայաստանի զրուցակից», շաբաթաթերթ, Երևան, 2013, մարտի 29-ապրիլի 5, № 12 (266), էջ 14:

Տե՛ս նախորդ նկարագրությունը:

35. Lamiya Adilgızı, Islamized Armenians in Turkey represent assimilation policy, “**Today’s Zaman**”, daily newspaper, Istanbul, 2013, November 4, p. 17. (Թարգմանություն՝ Լամիյա Ադիլգըզը, Թուրքիայի իսլամացած հայերը ներկայացնում են ուժացման քաղաքականությունը):

Ստամբուլում տպագրվող թուրքերեն “**Zaman**” (Ջաման, թարգմ.՝ ժամանակ) օրաթերթի անգլերեն տարբերակում հոդվածագիրը պատմում է 2013 թ. նոյեմբերի 2-4-ը Ստամբուլի Բողազիչի համալսարանում կայացած «Իսլամաց(վ)ած հայեր» միջազգային գիտաժողովի մասին, անդրադառնում է նաև Ս. Վարդանյանի զեկուցմանը:

Ջեկուցման ամբողջական թուրքերեն տարբերակի թարգմանությունը տե՛ս գիտաժողովի զեկուցումների ժողովածուում՝ Sergey Vardanyan, Müslümanlaştırılmış Hemsinli Ermeniler: Kurbanlar ve Tanıklar Ermeniceden çeviren Pakrat Estukyan // **Müslümanlaş(tırıl)mış Ermeniler, Konferans Tebliğleri**, Kasım 2013, Istanbul, Hrant Dink Vakfı Yayınları, 2015 (- 470 s.), s. 75-86.

36. Lusine Sahakyan, Les microtoponymes de Hamchen, Editions SIGEST, Paris, 2013 (-184).

Համջենի մանրատեղանուններին նվիրված Լուսինե Սահակյանի 2012 թ. Երևանում հրատարակված եռալեզվյան՝ հայերեն, թուրքերեն և ռուսերեն գիրքը 2013 թ. Փարիզում հրատարակվել է երկլեզվյան՝ ֆրանսերեն (էջ 1-70) և թուրքերեն (էջ 71-135), հավելվել նոր ուսումնասիրություններով: Ինչպես նախորդ գրքում, կա լուսանկարների բաժին (էջ 136-169) և օգտագործված գրականության ցանկ (էջ 171-181): Գրքի խմբագիրը Ս. Վարդանյանն է, նրա անունը և ուսումնասիրությունները հիշատակվում են ֆրանսերեն բաժնում՝ էջ 2, 9-11, 18, 29-34, 36-38, 45, 47, 48, 51, 56, թուրքերեն բաժ-

նում՝ էջ 74-76, 82, 92, 94-96, 98-103, 110, 113, 116-118, 122, տե՛ս լուսանկարների բաժինը՝ էջ 138, 141, 148, 159, 162, 165, 169, օգտագործված գրականության ցանկում՝ էջ 175:

37. Անահիտ Աբրահամյան, Երկրագործական գործիքների անվանումները հայերենի բարբառներում, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, «Գիտություն» հրատ., 2013 (- 333 էջ):

Գրքում Ս. Վարդանյանը և նրա «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ)» աշխատությունը հիշատակվում են՝ 53, 55, 88, 93, 95, 134, 135, 171, 191, 192, 223, 256-րդ էջերում:

38. Համշենցիների բռնի իսլամացման ավերիչ հետևանքներն ու ինքնության փնտրտուքը ֆիլմում, հարցազրույցը՝ Նանա Պետրոսյանի, «**Կինոաշխարհ**», ամսաթերթ, Երևան, 2013, մարտ, № 3 (16), էջ 9:

Հարցազրույցը «Համշենը անցյալի ու ներկայի խաչմերուկներում» ֆիլմի հեղինակ, բ.գ.թ., թուրքագետ Լուսինե Սահակյանի հետ է: Ֆիլմը 2012 թ. Հոլիվուդում կայացած «Արփա» միջազգային կինոփառատոնում արժանացել է Արմին Վեգների անվան մրցանակի: Լ. Սահակյանը նշում է. «Ի դեպ՝ սցենարի հեղինակն ու ռեժիսորն ինքս եմ, իսկ սցենարի խմբագիրը՝ «Ձայն համշենական» թերթի գլխավոր խմբագիր, իմ լավ բարեկամ Սերգեյ Վարդանյանը, որն իր ողջ կյանքը նվիրել է Համշենի ուսումնասիրությանը: Ֆիլմում տեղ գտած բարբառային տեքստերի թարգմանությունը նույնպես Սերգեյ Վարդանյանինն է: Ասեմ, որ նա նույնպես մասնակցել է դաշտային աշխատանքներին»:

Արտատպությունը տե՛ս «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2013, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 2-3:

39. Սարգիս Փաշայան, Եհովայի վկաները Աստվածաշնչի և պատմության լույսի ներքո, հավակնություններ և սխալներ, թարգմանիչ՝ Էլեն Օհանջանյան, խմբագիր՝ Սերգեյ Վարդանյան, Երևան, «Հույս Հայաստանի համար» հրատ., 2013 (-444 էջ):

Բրյուսելում բնակվող վերապատվելի Սարգիս Փաշայանի գիրքը թարգմանվել է ֆրանսերեն հրատարակությունից, Ս. Վարդանյանը թարգմանության խմբագիրն է:

40. «Ազատ օր»-ի հարցազրույցը Յարութին Քիրքճեանի հետ, գիտաժողով՝ իսլամաց(ու)ած հայերու մասին (Պոլիս, Վոսփոր-Պողոզի ի համալ-

սարան), «Ազատ օր», օրաթերթ, Աթենք, 2013, դեկտեմբերի 2, № 20213, էջ 3-5:

Աթենքում բնակվող ճանաչված պատմաբան, բազմաթիվ գրքերի և դասագրքերի հեղինակ և լրագրող Հարություն Քյուրքյանը, որը որպես մշակութային դիտորդ ներկա էր 2013 թ. նոյեմբերի 2-4-ը Ստամբուլում կայացած գիտաժողովին, իր հարցազրույցում պատմում է այդ մասին: Հիշատակում է նաև Ս. Վարդանյանի զեկուցումը. «Զեկույցներին՝ դեռ այլապես շահեկան էին Համշենի, Տերսիմի եւ Սասուն-Մուշի շրջաններուն մեջ վերապրող իսլամացուած հայ համայնքներու կամ սոսկական խումբերու նուիրուած զեկույցները՝ հայրենի մասնագէտ-մտաւորականներէ, ինչպէս Սերգէյ Վարդանեան, Հրանուշ Խառատեան» (էջ 4): Տպագրվել է Ս. Վարդանյանի, Իշխան Չիֆթչյանի (զեկուցող, Գերմանիա) և Հարություն Քյուրքյանի խմբանկարը (էջ 3):

Հարցազրույցի արտատպությունը տե՛ս «Ազդակ», օրաթերթ, Պէրուք, 2013, դեկտեմբերի 17:

41. «Ազատ օր»-ի հարցազրույցը Յարութին Քիւրքճեանի հետ, Գիտաժողով՝ իսլամաց(ու)ած հայերու մասին (Պոլիս, «Վոսիոր-Պողազիչի» համալսարան), «Ազդակ», օրաթերթ, Պէրուք, 2013, դեկտեմբերի 17:

Հարցազրույցը լուսանկարներով հանդերձ արտատպվել է Աթենքի «Ազատ օր» օրաթերթի 2013 թ. դեկտեմբերի 2-ի համարից:

42. Գրագէտ Սէրկէյ Վարդանեան խմբագրատանս մէջ, «Նոր Մարմարա», օրաթերթ, Իսթանպուլ, 2013, նոյեմբերի 7, № 10333, էջ 1, 4:

Հեղինակը չի նշված: Մասնավորապես նշվում է. «Սէրկէյ Վարդանեան վաղեմի բարեկամ մըն էր մեզի, անոր կանուխ շրջանի գործերէն մեկը՝ «Արեւածաղիկ»ը Մաքրուհի Պ. Յակոբեանի վերծանումով տպուած էր քաղաքիս մէջ: Ան ըսաւ որ այս համագումարը գիտական շատ բարձրամակարդակ համաժողով էր, խոսուեցան այնպիսի նիւթեր, որոնց մասին խօսիլ երազել իսկ կարելի չէր մօտ ժամանակ առաջ: Սէրկէյ Վարդանեանի հետ մեր խօսակցութիւնը ընդհանրապէս ծանրացաւ Հէմշինահայութեան վրայ»: Տպագրվել է նաև Ս. Վարդանյանի լուսանկարը խմբագրությունում:

43. Մահմետականացած կամ մահմետականացուած հայերու մասին աննախընթաց համագումար Պողազիչի համալսարանի մէջ, «Նոր Մարմարա», օրաթերթ, Իսթանպուլ, 2013, նոյեմբերի 4, № 10330, էջ 1, 4:

Հեղինակը չի նշված: Ընդարձակ հոդվածը թերթի առաջին և չորրորդ էջերում ներկայացնում է Բողազիչի համալսարանում կայացած միջազգա-

յին գիտաժողովը. «Հայաստանցի Սերկեյ Վարդանեան խօսեցաւ մահմե-տականացած հեմշինցի հայերուն մասին, պատմեց զոհերու եւ ականա-տեսներու մասին» (էջ 4):

44. Բազմակողմանի աշխատանք, «**Ժամանակ**», օրաթերթ, Իսթանպուլ, 2013, նոյեմբերի 4, թիւ 10260, էջ 8:

«Հրանտ Դինք» հիմնադրամի նախաձեռնությամբ Ստամբուլի Բողազի-չի համալսարանում կայացած «Իսլամաց(վ)ած հայեր» միջազգային գիտա-ժողովի մասին լրատվություն է: Տպագրվել է նաև բեմում զեկուցման ժա-մանակ Ս. Վարդանյանի լուսանկարը:

45. Հանօ Մոսկոֆեան, Կրօնափոխ ու «կորսուած» հայրողիներու փրկութեան շարժման հայ, զագա, քրմանձ, քզըլպաշ, ասորի դրօշակակիր-ները, «**Ազդակ**», **Բացառիկ**, Բեյրութ, 2013, յունուար 1, № 243, էջ 135-138:

Հողվածում այլ դրոշակակիրների շարքում առանձին ներկայացվել է նաև Ս. Վարդանյանը (էջ 137-138): Տպագրվել է 2012 թ. Մոսկվայում արված մի լուսանկար, ձախից՝ Հանո Մոսկոֆյանը, Դրդգստանի համշենցիների դեկավարներից Ռուսլան Քարաբաշաքովը և Ս. Վարդանյանը:

46. Г. Мартиросян, Армянские диалекты (характеристика отдельных диалектов) // Языки мира: Реликтовые индоевропейские языки Передней и Центральной Азии /РАН. Институт языкознания. Ред. Колл: Ю. Б. Коряков, А. А. Кибрик.- Москва: Academia, 2013 (-512 с.), с. 334-385.

Ռուսաստանի ԳԱ լեզվագիտության ինստիտուտի «Языки мира» գիտա-կան ժողովածուում տպագրված բ.գ.թ. Հրաչ Մարտիրոսյանի հայկական բարբառերի մասին հողվածի Համշենի բարբառին (Амшенский диалект) նվիրված բաժնում (էջ 361-364) օգտագործված գրականության ցանկում նշված է նաև Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը...» (2009) գիրքը (էջ 362, 385):

47. Լուսինե Սահակյան. «Ինձ համար մեծ պատիվ է Համշենի պատ-մությունն ու մշակույթը մինչև Հոլիվուդ հասցնելը», գրույցը՝ Արմինե Սարգսյանի, «**Իրատես de facto**», եօրոյա թերթ, Երևան, 2013, մարտի 5-7, № 15 (431), էջ 10:

«**Համշենը անցյալի և ներկայի խաչմերուկներում**» վավերագրական ֆիլ-մի հեղինակ, թուրքագետ Լուսինե Սահակյանը հարցազրույցում նշում է, որ ֆիլմի սցենարի խմբագիրը իր լավ բարեկամ, «**Ձայն համշենական**» թեր-թի գլխավոր խմբագիր Սերգեյ Վարդանյանն է, որը նաև բարբառային տեքստերի թարգմանիչն է և նրա հետ է իրականացրել դաշտային աշխա-տանքները:

48. Cemil Aksu, Hemsinliler Kimdir?, Nereden Geldiler, Nereye Giderler? “**Toplumsal Tarih**”, dergisi, Istanbul, 2013, Ağustos, № 236, s. 40-47. (Թարգմ.՝ Ջեմիլ Աքսու, Ովքե՞ր են համշենցիները, որտեղի՞ց են եկել, ու՞ր են գնում, թարգմանեց Մելինե Անուսյանը, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, 2014, № 5-6, էջ 1-3):

Նախկին քաղբանտարկյալ, 2008-2010 թթ. Խոփայում հրատարակված “**Bir yaşam**” (թարգմ.՝ Մի կյանք) ամսագրի խմբագիր Ջեմիլ Աքսուն իր հոդվածում անդրադառնում է նաև Ս. Վարդանյանի հրապարակումներից մեկին. «Համշենցիների իսլամացման գործընթացի վերաբերյալ ոչ վաղ անցյալում մի կարևոր փաստաթուղթ հրապարակվել է Սերգեյ Վարդանյանի կողմից: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Պողոս վարդապետ Մեհերյանն իր ինքնակենսագրական գրքում պատմում է Համշենում գտնվող Խևակ գյուղ իր այցի և այնտեղ իր հետ պատահածների մասին»: Այնուհետև նա Ս. Վարդանյանի հոդվածում տպագրված Պ. Մեհերյանի հուշագրությունից մեջ է բերում «...առի ընդ իս գՏեր Պետրոսն» տողից մինչև «Եւ տես դու, զի ուրացեալքն ի ժամ պատարագին լնուին զեկեղեցին» տողը հատվածը, որը նա կարդացել է 2007 թ. Երևանում թուրքերեն տպագրված Ս. Վարդանյանի «1776 yılına ait Müslüman Hemsinli Ermeniler Hakkındaki önemli bir Şehadetname» // **Hemsin ve Hemsinli Ermeniler (Konferans makalaler)**, Yerevan, 2007 (-306 s., 278-286), s. 283 հոդվածում.

49. Cemil Aksu, Artvin Ermenilerine Ne Oldu? “**Tarih ve Toplum - Yeni Yaklaşımlar**”, dergisi, Istanbul, 2013, Yaz, Sayı: 16 (256), s. 93, 100.

Նախկին քաղբանտարկյալ, 2008-2010 թթ. Արդվինի նահանգի Խոփա քաղաքում հրատարակված “**Bir yaşam**” (Բիր յաշամ, Մի կյանք) ամսագրի խմբագիր Ջեմիլ Աքսուն «Արդվինի հայերին ի՞նչ պատահեց» հոդվածում անդրադառնում է նաև Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Պողոս վրդ. Մեհերյանի հուշագրության Ս. Վարդայանի հրատարակված հատվածին (էջ 93), վերապատմում Հ. Պ. վրդ. Մեհերյանի Խևակ և Արդվին այցելության նկարագրությունը (էջ 100), հղելով՝ S. Vardanyan, 1776 yılına ait Müslüman Hemsinli Ermeniler Hakkındaki önemli bir Şehadetname // **Hemsin ve Hemsinli Ermeniler (Konferans makalaleri)**, Yerevan, 2007 (- 306 s.), s. 278-285.

50. Ներսես Սկրտյան, բ.գ.դ., Համշենի բարբառի նպաստը ընդհանուր հայերենին, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2013, № 5-6, էջ 2:

**Օնուրթ, կորոպ, մաշմուրկ, օդ, զիվ, վառեցուկ** բառերի քննության ժամանակ հեղինակը հղում է անում նաև Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշե-

նահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը» (2009) գրքի համապատասխան (281, 283, 304, 319, 329, 330, 366) էջերին:

2014

**Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)**

1. Իսլամացված համշենահայերը՝ Յեղասպանության ականատեսներ // **Տրապիզոն նահանգ եւ Համշէն**, Printed by: A&V Digital Offset, Publisher: ARS “Roubina” Chapter, Թորոնթօ, Գանատա, 2014 (-166 էջ), էջ 67-76:

ՀՕՍ-ի Տորոնտոյի «Ռուբինա» մասնաճյուղը 2014 թ. հոկտեմբերի 18-ին անցկացվելիք ավանդական «Տոհմիկ օր» միջոցառման համար հրատարակված այս հանրագիտակ-ժողովածուում տպագրել են Տրապիզոնի նահանգի և համշենահայերի մասին տարբեր աղբյուրներից նյութեր, այդ թվում՝ անգլերեն, Սև ծովի տարածաշրջանի և Համշենի խոհանոցի անգլերեն թարգմանված մոտ երկու տասնյակ բաղադրատոմսեր:

Հրատարակվել են Ս. Վարդանյանի «Իսլամացված համշենահայերը՝ Յեղասպանության ականատեսներ», Նախաբան (էջ 67, 68), Թուրքիայի իսլամացված հայախոս համշենահայերը (էջ 68, 70), Համշենցի կրոնափոխի հայերն Աջարիայում, Ղրղզստանում, Ղազախստանում և Ռուսաստանում (էջ 70-71): Վկայություններ Արդվինի նահանգի կոտորածների մասին (էջ 71-74): Վկայություններ Ռիզեի նահանգի կոտորածների մասին (էջ 74-76), նաև՝ առանց աղբյուրը նշելու՝ քաղվածքներ և էջեր նրա «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ)» (2009) գրքից, տե՛ս ժողովածուի 30, 32, 33, 42, 43, 50, 51 էջերը, և այլ հոդվածներից (էջ 78-81):

«Օգտագործված Աղբիւրներ»-ի (էջ 162) ոչ ընդարձակ ցանկում, նշված են Չայն Համշենական, Գ. Գիրք, Երեւան 1989, Չայն Համշենական ամսաթերթ, Կրօնափոխ Համշենահայերի բարբառը, բանահիւսութիւնը և երգարուեստը. Սերգէյ Վարդանեան, Երեւան, 2009:

2. Երգեր // Տրապիզոնի նահանգ եւ Համշէն, Printed by A&V Digital Offset, Publisher: ARS «Roubina» Chapter, Թորոնթօ, Գանատա, 2014 (-166 էջ), էջ 50, 51:

ՀՕՍ-ի Տորոնտոյի «Ռուբինա» մասնաճյուղի 2014 թ. հոկտեմբերի 18-ին անցկացնելիք ավանդական «Տոհմիկ օր» միջոցառման համար հրատարակված գունագարդ հանրագիտակ-ժողովածուի «Երգեր» բաժնում, առանց աղբյուրը նշելու, Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի

բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը» (2009) մենագրությունից նոտաներով արտատպվել է չորս խաղիկ՝ 3-ը էջ 267-ից՝ «Քա՛ թուն թուռը սալեցեր, յար», «Քա՛, թու մի՞ թա խընդաս օչ, յար», «Քա՛, աշուն ու քա անա, յար» և մեկը 257 էջից՝ «Գաղնուդնիվա քալեցի»:

3. Ականաւոր դէմքեր. Մերգեյ Գագիկի Վարդանեան, 1952 // **Տրապիզոն նահանգ եւ Համշէն**, Թորոնթօ, Գանատա, 2014 (- 166 էջ), էջ 97:

Ավելի մանրամասն տե՛ս 2014 թ. նախորդ՝ № 1 և № 2 մատենագիտական նկարագրությունները: ՀՕՄ-ի Տորոնտոյի «Ռուբինա» մասնաճյուղի 2014 թ. հոկտեմբերի 18-ին անցկացնելիք ավանդական «Տոմիկ օր» միջոցառման համար հրատարակված գունագարդ հանրագիտակ ժողովածուի «Ականաւոր դէմքեր» բաժնում (էջ 77-97) ներկայացված են Տրապիզոնում ծնված 18 նշանավոր հայերի՝ նկարիչ Արշակ Ֆեթվաճյանի (1866-1947), ծովանկարիչ Վարդան Մախոխյանի (1869-1937), Գարեգին Պատրիարք Խաչատուրյանի (1880-1961), վրիժառու Միսաք Թողաքյանի (1888-1968), ջութակահար Դավիթ Դավթյանի (1880-1911), գրող Զավեն Սյուրմելյանի (1905-1995), դերասան Արման Կոթիկյանի (1896-1968) և ուրիշների, այդ թվում՝ Ս. Վարդանյանի, որը արմատներով վանեցի է, լուսանկարները և կենսագրությունները: (Ցավոք, իմ № 59 դպրոցն ավարտելու տարին՝ 1969 թ. տպագրվել է 1960):

4. Ականաւոր դէմքեր. Արման Կոթիկեան 1896-1968 // **Տրապիզոն նահանգ եւ Համշէն**, Թորոնթօ, Գանատա, 2014 (- 166 էջ), էջ 79-81:

Տե՛ս 2014 թ. նախորդ՝ № 1-3 մատենագիտական նկարագրությունները:

Նշանավոր դերասան և թարգմանիչ Արման Կոթիկյանի կենսագրությունն է, Եղեռնից փրկվելու, Աբխազիայում, Հյուսիսային Կովկասում, Բաթումում, Փարիզում ապրած տարիների, թատերական գործունեության և ստեղծագործելու, Սորբոնում սովորելու, 1936-ին Հայաստան ներգաղթելու և ֆրանսերենից գրքեր թարգմանելու մասին է:

Հեղինակը Ս. Վարդանյանն է, վերածվել է արևմտահայերենի:

5. Հայոց ցեղասպանության մասին գրառումներ կրոնափոխ համշենահայերից // **Հայ ժողովրդական մշակույթ XVI**, «Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում», 2013 թ. դեկտեմբերի 17-19-ին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում կազմակերպված Դերենիկ Վարդումյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014 (- 496 էջ), էջ 327-334:

6. Կրոնափոխ համշենահայերից գրառված հրաշապատում հեքիաթ // «Գերբնական խորհուրդը հեքիաթում», Հովհ. Թումանյանի թանգարան, 2014 թ. մայիսի 13-14, հեքիաթագիտական 6-րդ գիտաժողովի ծրագիր և թեզիսներ, Երևան, 2014 (- 56 էջ), էջ 34:

Գիտաժողովի կազմակերպիչներ՝ Հովհ. Թումանյանի թանգարան, Fabula armeniaca ծրագիր, ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոն:

7. Թուրքիայում բնակվող համշենահայերի արդի լեզվավիճակը // «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի (2014 թ., հոկտեմբերի 8-9) զեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, Երևան, «Աստղիկ» հրատ., 2014 (- 226 էջ), էջ 211-222:

8. Իսլամացված հայերին նվիրված գիտաժողով Ստամբուլում, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2014, № 1, էջ 296-299:

Հոդվածը պատմում է 2013 թ. նոյեմբերի 2-4-ը Ստամբուլի Բողազիչի (Բոսֆորի) նշանավոր համալսարանում տեղի ունեցած «Իսլամաց(վ)ած հայեր» միջազգային գիտաժողովի մասին, որը կազմակերպել էին «Հրանտ Դինք» հիմնադրամը, Մալաթիայի բարեգործասեր հայոց մշակութային և համագործակցական միությունը և Բողազիչի համալսարանը: Գիտաժողովում Ս. Վարդանյանը կարդացել է «Մահմեդականացված համշենահայերը՝ զոհեր և ականատեսներ» զեկուցումը:

9. Դժոխքի ձորը, կրոնափոխ համշենցիները՝ Մեծ եղեռնի ականատեսներ, «Անդին», ամսագիր, Երևան, 2014, ապրիլ, № 4 (17), էջ 14-19:

1914 թ. Արտանուջ քաղաքի Դժոխքի ձոր թուրքերը բազմաթիվ հայերի են ժայռերից ցած նետել, ինչի ականատես կրոնափոխ համշենցիները կամ նրանց սերունդները այդ մասին պատմել են Ս. Վարդանյանին:

10. Sergey Vartanyan, Bilinen ve Bilinmeyen Trabzonlu Arman Kotikyan, “Paros”, Çok Kültürlü Yaşam Dergisi, Istanbul, 2014, Mayıs, № 32, s. 124-126:

«Հայտնի և անհայտ տրապիզոնցի Արման Կոթիկյանը», թարգմանիչը՝ Տիրան Լոքմազյոզյան:

11. Այդողան Թոփալի երգերը, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2014, հունվար-փետրվար, № 1-2, էջ 8:

Հոդվածը ստամբուլաբնակ համշենցի երգիչ Այդողան Թոփալի մասին է: Խոփայի խոսվածքով և Ս. Վարդանյանի թարգմանությամբ տպագրվել են նրա երկու երգերը՝ «Միջոդ» և «Արդեցուր»:

12. «Երգից բառ դուրս չես նետի», «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2014, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 7:

Հողվածը Խոփայում բնակվող համշենցի բանաստեղծ Յուսուֆ Վայիչի ստեղծագործությունների մասին է: Խոփայի խոսվածքով և Ս. Վարդանյանի թարգմանությամբ տպագրվել են նրա «Քուզիմ», «Օբոլ աեր օյ», «Լըմա-նեցնել չի գայիմ», «Քիշերնիյե» բանաստեղծությունները:

13. Թուրքիայում արված նոր գրառումներ, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2014, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 8:

Խոփայի խոսվածքով և գրական թարգմանությամբ տպագրվել են 2013 թ. օգոստոսին Խոփայի և Բորչքայի գավառներում Ս. Վարդանյանի գրառած բանահյուսության նմուշները՝ **4 խաղիկ, 4 հանելուկ, 6 առած-ասացվածք և 1 զվարճախոսություն:**

14. Ածպտեր գյուղի վերապրողները, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2014, մայիս-հունիս, № 5-6, էջ 5:

Աննա Մուրադյանի «Սեբաստիայի Էզրիդար գյուղի Հայրապետ տոհմի ժառանգորդ Քարթալները հավատարիմ են իրենց պապերի կտակին» հոդվածի տպագրության առթիվ անհրաժեշտ որոշ լրացումներ են:

15. Թուրքիայում արված բանահյուսական նոր գրառումներ, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2014, մայիս-հունիս, № 5-6, էջ 7, 8:

Խոփայի և Բորչքայի գավառներում 2013 թ. Ս. Վարդանյանի գրառած բանահյուսական արձակ նյութերը և դրանց թարգմանություններն են՝ «Ո՞ւմ քելօխն էր», «Հօրթե», «Չաղու», «Խիփիլիզ»:

16. Համշենական հանրագիտարան. «Ձայն համշենականի» խմբագրի մասին, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2014, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 3:

«Ձայն համշենական» թերթի 10-ամյակի առթիվ գնահատանքի հոդվածների կողքին տպագրվել է նաև գլխավոր խմբագիր Ս. Վարդանյանի կենսագրությունը:

17. Եղեռնից 100 տարի անց, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2014, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 6:

Լրագրող Աննա Մուրադյանի «Ստամբուլի հայկական դպրոցները» հոդվածի տպագրության առթիվ գրված խոսք է:

18. Բանահյուսական նշխարներ (Թուրքիայի Արդվինի նահանգում արված բանահյուսական նոր գրառումներ), «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2014, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 7, 8:

Խոփայի խոսվածքով և գրական հայերեն թարգմանությամբ տպագրվել են Ս. Վարդանյանի գրառումները՝ «Չախցուցե քարե քիլուշե», «Արդելեցիքի

ցի փարցուշէ», «Արչար մօրթուշէ», «Մօզի մօն էգուշէ», 2 հանելուկ, 1 առած, 1 ժողովրդական հմայական աղոթք, 2 խաղիկ, 1 երգի հատված:

19. Նան համշենահայերի պարերի մասին, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2014, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 2:

Ներկայացվում է պ.գ.թ. Ժենյա Խաչատրյանի «Պարը հայոց մեջ» (Երևան, «Էդիթ պրինտ», 2013, 276 էջ) հոդվածների ժողովածուն:

20. Զորիկ Քեշիշյանի երրորդ գիրքը, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2014, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 2:

Անստորագիր է, հեղինակը Ս. Վարդանյանն է: Համառոտ ներկայացվում է Զորիկ Քեշիշյանի «Ֆիդայիներ» գիրքը (Երևան, «ՎՄՎ-Պրինտ», 2014, 98 էջ), որի խմբագիրը, առաջաբանի և 50 ծանոթագրությունների հեղինակը Ս. Վարդանյանն է:

21. Երկու խոսք Մահիր Էօզբանի մասին, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2014, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 3:

Համշենցի մտավորական Մ. Էօզբանի «Համշենական ինքնությունը՝ լեզու, կրոն, մշակույթ» հոդվածի հայերեն թարգմանությունը տպագրելու առթիվ համառոտ ներկայացվում է հեղինակը:

22. «**Գրական հայտնություն**» մրցանակը՝ Ռոզա Խասսոյանին, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2014, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 5:

Անստորագիր է: Հեղինակը Ս. Վարդանյանն է: 2014 թ. հոկտեմբերի 8-ին IGEFA ամերիկյան բարեգործական հիմնադրամի և Հայաստանի գրողների միության Իրինա Գյուլնազարյանի (ԱՄՆ) անվան ամենամյա մրցանակաբաշխության արդյունքներով Ադրդեական Հանրապետության մայրաքաղաք Մայկոպում ասպրող գրող Ռոզա Խասսոյանն արժանացել է «Գրական հայտնություն» մրցանակին:

23. Նոր գրառումներ Արդվինի նահանգի Բորչքա քաղաքում, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2014, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 8:

Խոփայի խոսվածքով և գրական հայերեն թարգմանությամբ տպագրվել են Ս. Վարդանյանի գրառումները՝ «**Աղ ցանուշէ**» և «**Լուսնիկա խալէսուշի հեքիյան**» զվարճախոսությունները, **2 հանելուկ, 1 առած, 1 ասացվածք և 1 ժողովրդական խոսք**:

24. «Մեզանից ոմանք կրօնափոխ հայերին հայ չեն համարում, սա օտարում է իրանց մեզանից, բայց հայը հայ է՝ անկախ կրօնից», Մերկէյ

Վարդանեան, համշենագետ, Սառա Գալստեան, «Զարթօնք», օրաթերթ, Պէյրուք, 2014, սեպտեմբերի 14, № 197, էջ 2, 3:

Ս. Վարդանյանը պատմում է Թուրքիայի կրոնափոխ համշենցիների թվաքանակի, բարբառի իմացության, տարազի, երգերի, տոների և այլնի մասին: Տպագրվել են նաև Ս. Վարդանյանի լուսանկարները Համշենում և Արդվիհնի նահանգի Խոփա գավառում:

Տե՛ս նաև «**Չայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2014, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 6:

25. «Մեզանից ոմանք կրոնափոխ հայերին հայ չեն համարում, սա օտարում է նրանց մեզանից, բայց հայը հայ է՝ անկախ կրոնից», Մերգեյ Վարդանյան, համշենագետ, «**Չայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2014, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 6:

**Nyut.am**-ի թղթակից Սառա Գալստյանի խնդրանքով Ս. Վարդանյանը պատմում է կրոնափոխ համշենցիների մասին (Nyut.am, 16. 07.2014):

Տե՛ս նաև «**Զարթօնք**», օրաթերթ, Պէյրուք, 2014, սեպտեմբեր 14, № 197, էջ 2, 3:

26. Երկփեղկված կյանք, «**Չայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2014, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 7:

Արխագիայի Գագրայի շրջանի Գանթիադի ավանի հայկական դպրոցն ավարտելուց հետո 1966 թ. Երևան ուսանելու եկած Ալվարդ Առաքելյանի մասին է, որը ամուսնանալով բնակվել է Սպիտակում, որտեղ էլ 1988 թ. երկրաշարժի ժամանակ զոհվել է նրա որդին:

27. Հայկական հետք, «**Չայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2014, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12:

Հոդվածը նվիրված է Խոփայի ճաշարանների հայերեն անվանումներին և ցույցերի ժամանակ օգտագործվող Խոփայի խոսվածքով (համշենցական) լատինատառ- թուրքագիր ցուցապաստառներին:

28. Խոսում են Թուրքիայի համշենցիները, «**Չայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2014, հունվար-փետրվար, № 1-2:

Թուրքիայի մի խումբ համշենցիների հետ թուրքագետ Մելինե Անումյանի վարած «Համշենն ու համշենահայերը, ներկայացնում են համշենցի մտաւորականները» հարցազրույցի տպագրության առաջաբանն է (էջ 3):

29. Զորիկ Քեշիշյան, Ֆիդայիներ, պատմվածքներ, վիպակ, հոդվածներ, խմբագիր, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ՝ Մերգեյ Վարդանյան, Երևան, «ՎՄՎ-Պրինտ» հրատ., 2014 (- 96 էջ):

Աբխազահայ արձակագիր Զորիկ Քեշիշյանի երրորդ ժողովածուում ընդգրկված են 1915-23 թթ. Տրապիզոնի նահանգի հայերի ինքնապաշտպանական մարտերի ու գոյապայքարի մասին հեղինակի իրապատում պատմվածքները, վիպակը և հոդվածները: Գրքի «**Համշենցի ֆիդայիների տարեգիրը**» առաջաբանի (էջ 3-5) և 50 ծանոթագրությունների հեղինակը Ս. Վարդանյանն է:

### **Երկրորդ բաժին (հարցազրույցներ)**

30. Անադոլուկ հայրենասերը, հարցազրույցը՝ մայր Գնել Շահնազարյանի, «**Հայ զինվոր**», շաբաթաթերթ, Երևան, 2014, հոկտեմբերի 23-29, № 41, էջ 8:

«Ձայն համշենական» թերթի 10-ամյակի առթիվ հարցազրույցը արձարծում է համշենահայության տարբեր խնդիրները: Տպագրվել է Ս. Վարդանյանի լուսանկարը՝ հարցազրույցի ժամանակ: Հարցազրույցից հատված. «**Խորհրդային տարիներին երգիչ-երգահան Հայրիկ Ղազարյանը Մուրադ Մեբաստացու մասին երգ էր հորինել, որտեղ այսպիսի տողեր կային. «Հայ եմ փնտրում, եղբայր, հայը՝ մեկ ոսկի, որբեր եմ հավաքում տարաբախտ ազգիս»:** Ինչպես հայտնի է՝ Մեծ եղեռնից հետո մեծ հայորդին քրդերից, թուրքերից և արաբներից մեկ ոսկով հավաքագրում և հայությանն էր վերադարձնում մեր ազգի մասունքները: Ձեր կատարած գործը հիշեցնում է Մուրադ Մեբաստացու գործը:

Այս ժամանակներում, երբ մեկ համշենահայի «դարձի» բերելը, իր արմատներին, էությանը հասու դարձնելը ամիսների, տարիների քրտինք է պահանջում, Դուք տեղյակ լինելով այսօրվա արտագաղթին՝ չե՞ք հուսահատվում, չե՞ք կորցնում Ձեր հավատը մեր վաղվա օրվա հանդեպ:

–Այո՛, ամեն մի հայը մի ոսկի է: Եվ մենք այդ ոսկիները շաղ տվեցինք աշխարհով մեկ... Հիշում եմ, որ 1980-ական թթ. Աբխազիայում և Կրասնոդարի երկրամասում հավաքագրում էի հայ ընտանիքների, ովքեր համաձայն էին Հայաստան տեղափոխվել: Այդպիսի **շուրջ 100** ընտանիք էի ցուցակագրել: Բայց պետական աջակցություն չստացա, նաև երկրաշարժը խափանեց բոլոր ծրագրերս: Իսկ հիմա արդեն Հայաստանից են Կրասնոդարի երկրամաս և Աբխազիա արտագաղթում:

Կրկին առիթ է, պիտի ասեմ, որ վաղուց ժամանակն է, որ բռնի իսլամացված մեր համշենցի քույրերի ու եղբայրների համար թուրքերեն գրքեր հրատարակենք, որոնցում հանրամատչելիորեն կներկայացնենք նրանց պատմությունը, կիրապարակենք տարբեր վայրերի համշենցիների լու-

սանկարներ: Իսկ առայժմ ես նրանց եմ բաժանում իմ «Ձայն համշենական» թերթը, որի էջերում տպագրում եմ նաև Թուրքիայի համշենցիների, հատկապես՝ բանահյուսական նյութեր ասացողների լուսանկարները, որպեսզի ինչ-որ կապ հաստատվի թերթի հետ, մինչև որ շատերը հայերեն կարդալ սովորեն: Ուրախությամբ նշեմ, որ արդեն մի քանի հոգի սովորել են և սիրով կարդում են «Ձայն համշենականը», որի հրատարակման 10-ամյակը լրացավ այս օգոստոսին»:

31. «Ես գտա իրական Մակոնդոն՝ Արդվինի նահանգում գտնվող ծովափնյա Խոփա քաղաքը», գրույցը՝ Արմինե Սարգսյան, «**Իրասուե de facto**», եռօրյա թերթ, Երևան, 2014, հոկտեմբերի 24-27, № 66, էջ 14, 15:

Տպագրվել են Ս. Վարդանյանի լուսանկարները՝ երիտասարդ տարիքում (1970), Համշենում (2012) և Արդվինի նահանգի Խոփայի գավառի Հենդեք գյուղում (2011): Հարցազրույցը Ս. Վարդանյանի անցած ուղու մասին է: Հատված. «**Փաստորեն, ամբողջովին նվիրվել եք համշենահայերին, իսկ երիտասարդ տարիների Ձեր երազանքները՝ երբևէ Մարկեսի Մակոնդոն տեսնելը և Կարպատներում գուցուլներին ուսումնասիրելը, այդպես էլ անիրագործելի մնացին:**

– Ինչո՞ւ, ընդհակառակը, իմ երազանքներն իրագործվել են: Գիտե՞ք, շատերի երազանքներն են իրականանում, բայց նրանք դա չեն էլ իմանում, որովհետև մենք երազանքների իրագործումը պատկերացնում ենք դրանց պարզունակ կատարմամբ: Այնինչ Աստված երբեմն ավելին է տալիս: Այնպես ստացվեց, որ ես, ուկրաինական գուցուլներին ուսումնասիրելու փոխարեն, զբաղվում եմ քրիստոնյա և իսլամ համշենցիներով, որոնք հայ են և շատ հարուստ մշակույթ ունեն, երգ, պար, բարբառ և այլն, նաև գուցուլների նման լեռներում պարկապուկ են նվագում ու շուրջպար բռնում: Իսկ Մակոնդոն, ինչպես հայտնի է, իրականում չկա, Գարսիա Մարկեսի հորինած քաղաքն է, որի փոխարեն ես գտա իրական Մակոնդոն՝ Արդվինի նահանգում գտնվող ծովափնյա Խոփա քաղաքը, որի 19 հազար բնակիչների մեծ մասը իսլամ համշենցի է, որոնք, սահմանի փակ լինելու պատճառով, չեն շփվել հայերի հետ և, ինչպես Մակոնդոնի բնակիչները, մոռացել են շատ առարկաների և երևույթների անունները. շատերն էլ աթեիստներ են, և պետք է, ինչպես Մակոնդոնում, մեծ պաստառի վրա գրել՝ «Վերևում Աստված կա», որովհետև իսկապես կա, և Նա է իրականացնում մեր երազանքները»:

Արտատպությունը տե՛ս «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2014, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 4, 5:

32. «Ես գտա իրական Մակոնդոն՝ Արդվիների նահանգում գտնվող ծովափնյա Խոփա քաղաքը», գրույցը՝ Արմինե Սարգսյանի, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2014, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 4, 5:

Ս. Վարդանյանի անցած ուղու մասին է: Արտատպվել է «Իրատես de facto» թերթի 2014 թ. հոկտեմբերի 24-27 (№ 66) համարից:

Տպագրվել են Ս. Վարդանյանի երիտասարդ տարիների լուսանկարները:

### Երրորդ բաժին

33. Աշոտ Ավետիսյան, Թերթը՝ ի պատկերի յուրում, «Գրական թերթ», շաբաթաթերթ, Երևան, 2014, հոկտեմբերի 17, № 33, էջ 6:

Հայաստանի գրողների միության անդամ, արձակագիր, Երևանի Ս. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հայոց լեզվի դասախոս Աշոտ Ավետիսյանը (1950-1921) «Ձայն համշենական» թերթի 10-ամյակի առթիվ անդրադառնում է խմբագրի անցած ուղուն: Տպագրվել է նաև Ս. Վարդանյանի լուսանկարը: Հոդվածից հատվածներ. «Տասնամյակներ առաջ, երբ գրքերում կարդում էի Սրվանձտյանի, Լալայանի և մեր մյուս երախտավորների անունները, նրանք իրենց գրի առած հեքիաթ-առասպելների հերոսների պես անիրական էին թվում, իսկ նրանց մարդկային տեսակը՝ ժամանակի հոլովույթի մեջ այլևս չկրկնվող:

Ի՞նչ իմանայի, որ տարիներ անց այդպիսի մեկի ընկերությունը պիտի վայելեմ:

...Ինչին ձեռք զարկեց՝ հայտնագործություն եղավ գոնե սովետահայերիս համար: Մտավորականի իր սուղ միջոցներից կոպեկ-կոպեկ հետ գցեց, գնաց Աբխազիա, Կրասնոդար, Ստավրոպոլ, Ղրիմ, Միջին Ասիա, Պամիր՝ հայության մոռացված բեկորները գտնելու: Ուր է, թե դժվարությունը միայն նյութականի պակասը լիներ: «Եվ հաճախ էր պատահում, որ մի տեղացի այլազգի թռչակառու կոմունիստ կամ ցածրաստիճան կուսակցական, տեղական պաշտոնյա իր պարտքն էր համարում ստուգել իմ փաստաթղթերը, տնտղել, թե ինչու եմ եկել, ինչու եմ միայն հայ երեխաներին լուսանկարում, ինչ նպատակով եմ գրի առնում Մեծ եղեռնը տեսածների հուշերը, ովքեր են ինձ ուղարկել: Պատահում էր, որ առգրավում էին արածս լուսանկարները»:

...Բանասերների, պատմաբանների, ազգագրագետների համար խոսքի տարածք էր, նյութը՝ անհատնում: Կարելի էր նստել, և մի քանի ամիս հետո դիսերտացիան պատրաստ կլիներ: Բայց կոչում ստանալը Սերգեյ Վարդանյանի նպատակը չէր: Բանահյուսական ու ազգագրական մասունքները փրկել էր պետք, և նա շտապում էր... ...Հարկավոր էր գործուն, կենդանի մի միջոց՝ Համշեն-Հայաստան և հետադարձ կապն ամրացնելու համար: Եվ ծնվեց թերթ ունենալու գաղափարը: ...2004 թ.-ից հրատարակվող «Չայն համշենական» թերթը դարձավ այդ գործուն կապը: Դժվարանում եմ որոշել թերթի բնույթը՝ ազգագրական, հասարակական-քաղաքական, պատմաբանասիրական, թե՛ գեղարվեստական: Ամեն ինչ կա: Ծայրից ծայր կարդացվող այդ թերթի ամեն մի համարը մի նոր բան է ավելացնում եղածին, մի նոր շերտ բացում, մի նոր երանգ ու շունչ՝ կամաց-կամաց վերականգնելով մեր էթնիկ ամբողջականությունն ու միասնական հայացքով ապագային նայելու մեր կորսված կարողությունը»:

Արտատպությունը՝ «Չայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2014, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 1:

34. Աշոտ Ավետիսյան, Թերթը՝ ի պատկերի յուրում, «Չայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2014, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 1:

Արտատպվել է «Գրական թերթի» 2014 թ. հոկտեմբերի 17-ի (№ 33) համարից:

35. Հրայր Մաթևոսյան, «Առաջին իսկ հանդիպման ժամանակ զգացի, որ Եդեսիան նաև իմն է դառնալու, ես պարտք եմ եդեսիացիներին», «Իրատեսու de facto», եռօրյա թերթ, Երևան, 2014, նոյեմբերի 21-24, № 74, էջ 13:

Հողվածը ՌԴ Ստավրոպոլի երկրամասի Եդեսիա (Էդիսիա) գյուղի մասին է, անդրադարձ կա նաև Ս. Վարդանյանի գործունեությանը. «Ասեմ, որ ես շատ եմ հարգում արձակագիր, լրագրող Սերգեյ Վարդանյանին: Հիշում եմ ես, ժամանակին նա գրեց «Հայաստանի մայրաքաղաքները» գիրքը, որն ունեցավ երկրորդ հրատարակություն: Եղավ մի ժամանակ, որ մեր գրողներից ոչ քչերը, այդ թվում նաև Սերո Խանգադյանը, իրենց համար նոր աշխարհի բացեցին՝ համշենահայությունը: Կարելի է ասել՝ Երևանը բացվեց նրանց դեմ: Համշենահայ գրողները գրքեր տպագրեցին մայր հայրենիքում, իրենց ուրույն երգ ու պարով զարմացրին բոլորիս: Հիշում եմ նաև Կարեն Սմբատյանին, որը համշենահայերի դիմանկարներ էր ստեղծել: Համշենահայության ճակատագիրը անբաժան մնաց Սերգեյ Վարդանյանից: Գրեց ու գրում է, սպառել չկա: Մեն-մենակ նաև ամսաթերթ է հրատարակում, ձրի

բաժանում: Ի՛նչ լավ գրույցներ է վարում տարբեր տարիքի ու մասնագիտության տեր մարդկանց հետ: Մի խոսքով, դա առանձին թեմա է»: Հեղինակը, հավանաբար, նկատի ունի այն, որ Կ. Սմբատյանը նկարել է աղլերցի ազգագրագետ և երկարամյա մանկավարժ Անդրանիկ Զեյթունյանին, որի հետ Կ. Սմբատյանի խնդրանքով ծանոթացրել է Ս. Վարդանյանը:

36. Թորոս Թորանեան, Հայրենական մամուլ, «**Զարթոնք**», օրաթերթ, Պեյրուք, 2014, օգոստոսի 24, № 179, էջ 3:

Բազմաթիվ գրքերի և հոդվածների հեղինակ, սփյուռքահայ ճանաչված գրող, լրագրող, հրապարակախոս, հասարակական գործիչ, բժիշկ Թորոս Թորանյանը (1928, Հալեպ - 2021, Երևան) անդրադարձել է «Ձայն համշենական» թերթին: Հոդվածից հատված. ««Ձայն Համշենական» ամսագիրը նկարագարողուած է համշենահայերու լուսանկարներով: Կը տպագրուի հազար օրինակ, կը բաժնուի անվճար: Խմբագիրն է Սերկէյ Վարդանեանը:

Ուրեմն այս ամսագիրը սկսած է հրատարակուիլ 2004 թուականի Օգոստոսին, որով թերթին տասնամեակն է արդէն: Եկէք Սփիւռքէն եւս շնորհաւորենք «Ձայն Համշենական»ի օգտաշատ տասնամեակը: Ամսագիրին յաջորդ թիւը նուիրուած է թերթին տասնամեակին, ուր կը հանդիպինք տասնեակ ստորագրութիւններու: Տուեալ յօդուածագիրները իրենց գրութիւնները վերնագրած են այսպէս. «Խօսք երախտիքի ի խորոց սրտի», «Ձայն Համշենականի Ինքնատիպ Ձայնը», «Ձայն կարօտի եւ ռահիբրան հաւատքի», իմբագիրի մասին «Ներածական խօսք, որը նաեւ ինքնակենսագրութիւն է», «Ստանբուլի հայկական դպրոցները», «Բանահիւսական նշխարներ», «Արտուին նահանգում արուած բանահիւսական նոր գրառումներ» եւ բանաստեղծութիւններ:

...Հայրենական մամուլին հետեւիլը ոչ միայն կը հարստացնէ մեզ գիտելիքներով, այլ մեզ առաւել եւս կը կապէ Հայրենիքին:

Երանի մեր դեսպանատուները ի սփիւռս աշխարհի կազմակերպեն հայրենական մամուլը մեզի հասցնելու օգտաշատ գործը»:

37. Магдалина Затикян, Тираж идёт в разные страны. Газете амшенцев 10 лет, «**Голос Армении**», газета, издаётся трижды в неделю, Ереван, 2014, 11 октября, № 108.

«Ձայն համշենական» թերթի 10-ամյակի առթիվ հեղինակն անդրադառնում է Ս. Վարդանյանի՝ համշենահայերին նվիրված գործունեությանը:

38. Համշենահայերը վերադառնում են ակունքներին. «Ձայն համշենական» թերթը 10 տարեկան է, «**Հայաստանի Հանրապետություն**», օրաթերթ, Երևան, 2014, հուլիսի 25, № 136, էջ 5:

Նախօրեին կայացած Ս. Վարդանյանի մամուլի ասուլիսի մասին «Արմենպրեսի» հաղորդումն է, «Ձայն համշենականի» խմբագիրը խոսում է քրիստոնյա և մահմեդական համշենցիների մասին, անդրադառնում է նաև առաջիկա ամիսներին Ստամբուլում մահմեդական համշենցիների հրատարակելիք «Gor» հանդեսին: Տպագրվել է Ս. Վարդանյանի լուսանկարը՝ ասուլիսի ժամանակ:

39. Իվան Կրբաշյան, Իսկական համշենցին, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2014, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 1:

Հայաստանի «Համշեն» հայրենակցական-բարեգործական ՀԿ նախագահ Ի. Կրբաշյանը շնորհավորում է «Ձայն համշենականի» տասնամյակը և բարձր գնահատում գլխ. խմբագրի աշխատանքը: Հոդվածից հատված. «Երբ 10 տարի առաջ հիմնադրվում էր «Ձայն համշենական» թերթը, երևի Հայաստանի «Համշեն» հայրենակցական կազմակերպության անդամների մտքով անգամ չէր անցնում, որ այն անընդմեջ, առանց ընդհատումների կտպագրվի 10 տարի շարունակ, և այդ ի շնորհիվ կազմակերպության փոխնախագահ, թերթի գլխավոր խմբագիր և միակ աշխատակից Սերգեյ Վարդանյանի անձնագոհ ջանքերի: Անձամբ բազմիցս ակնատես եմ եղել, թե ինչպես է նա տպարանից մեն-մենակ տանում և իր բնակարան բարձրացնում թերթի ողջ տպաքանակը, հետո էլ բաժանում և ուղարկում Հայաստանից դուրս: Եվ քանի որ նա նոր էր ինֆարկտ ստացել, տարիներ առաջ քանիցս նրան խնդրել, համոզել եմ, որ տպարանից մենակ չտանի թերթերը, սպասի մինչև ես էլ կգնամ, կօգնեմ: Երբեմն համոզվում էր, մանավանդ երբ սիրտը չէր դիմանում ծանրաբեռնվածությանը, բայց ավելի հաճախ չէր ուզում նեղություն տալ և թերթի կապոցները միայնակ էր տանում: Քանի՜ քանի անգամ միասին օդանավակայան ենք տարել թերթերը և Սոչի կամ Կրասնոդար մեկնող անձանոթ ուղևորների խնդրել, որ մի 50-100 օրինակ հետները տանեն, բաժանեն: Ոմանք կասկածանքով էին նայում, ոմանք դժկամությամբ, ոմանք էլ սիրով էին տանում: Եվ երբ իմ ծանոթները հարցնում են, թե ճի՞շտ է, որ Ս. Վարդանյանը համշենցի չի, այլ վանեցի է, ես ասում եմ, որ ճիշտ է վանեցի է, բայց իսկական համշենցին նա է»:

40. Հարություն Մարության, Նվիրվածություն, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2014, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 1:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պ.գ.դ. «Վասպուրական» ՀԿ փոխնախագահ Հ. Մարության-

նը «Ձայն համշենականի» տասնամյակի առթիվ բարձր է գնահատում թերթը և գլխ. խմբագրի աշխատանքը. «Միայն մեկ հայրենակցական միություն կա Հայաստանում, որն արդեն 10 (տասը) տարի շարունակ... պարբերաթերթ է հրատարակում: Ընդ որում, ոչ սիրողական բնույթի: Ինչու՞ եմ սա շեշտում: Որովհետև վերջին 20-25 տարիներին ականատեսը եղանք պրոֆեսիոնալիզմի անկմանը տնտեսության և մշակույթի գրեթե բոլոր ոլորտներում, սիրողական և, մասնավորապես, ուռահայրենասիրական բնույթի ձեռնարկումների, հրապարակումների իսկական «հեղեղի»:

...Թեմայով հետաքրքրվող ուսանող թե հետազոտող կարող է իր համար անհրաժեշտ հսկայական նյութ ձեռք բերել «Ձայն համշենականից»: Ամենակարևորը, սակայն, այն է, որ թերթն ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ ոչ միայն համշենահայերի ու նրանց ժառանգների, այլև ընթերցողների շատ լայն շրջանակի կողմից:

...Սերգեյն ունի գործընկերների ու ծանոթների հսկայական ցանց, և անընդհատ փնտրտուքի մեջ է: Մակայն, ի տարբերություն պրոֆեսիոնալ խմբագրի, Սերգեյն ինքն է անվճար թերթը, ամառ թե ձմեռ, իր ձեռքով հասցնում ընթերցողներին, որոնց թիվը տպաքանակից բազմակի անգամ շատ է»:

41. Գևորգ Յազըճյան, Խոսք երախտիքի՝ ի խորոց սրտի, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2014, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 2:

Լիբանանի լրագրողների միության անդամ, պ.գ.թ. Գ. Յազըճյանը «Ձայն համշենականի» տասնամյակի առթիվ բարձր է գնահատում թերթը և գլխ. խմբագրի աշխատանքը. ««Ձայն համշենականը» հայկական ժամանակակից մամուլի այն եզակի պարբերականներից է, որն ընթերցում եմ ծայրից ծայր, այնքան հետաքրքրական են նրա բոլոր նյութերը: Ինձ առանձնապես գրավում են խմբագրի՝ իմ սիրելի ընկերոջ՝ Սերգեյ Վարդանյանի հավաքած բանահյուսական և ազգագրական նյութերը, որոնք թերթում հրապարակվում են գիտական բարձր մակարդակով: **Դրանք մնայուն արժեք են հայագիտության համար:** ...«Ձայն համշենականը» փնտրվող պարբերական է նաև սփյուռքում: Մեւ ծովի աբխազական և ռուսական ափերում հաստատված համշենցիների համար նա թթվածնի արժեք ունի, համարները ձեռքից ձեռք են փոխանցվում: Թերթի յուրաքանչյուր համարից օրինակներ են հասնում Լիբանան՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի մատենադարանին, Հայկազյան համալսարանի գրադարանին, լիբանանահայ պարբերականների խմբագրություններին և մտավորականների: Եվ

թող տարօրինակ չթվա, որ թերթի յուրաքանչյուր համարին անհամբեր սպասողներ կան Լիբանանում, որոնք մտահոգվում են եւ սկսում ինձ անհանգստացնել, եթե ինչ-ինչ պատճառներով (հատկապես ձմռան ամիսներին) թերթի նոր համարների առաքումը ուշանում է...

...Առանց չափազանցության, «Ձայն համշենականը» համարում եմ **Երեւոյք ոչ միայն հայ պարբերական մամուլի պատմության, այլեւ՝ հայագիտության մեջ**»:

42. Երագիկ Հարությունյան, Ձայն կարոտի և ռահվիրան հավատի, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2014, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 3:

Կրասնոդար քաղաքի «Արմատ» կիրակնօրյա դպրոցի ղեկավար, բ.գ.թ. Ե. Հարությունյանը «Ձայն համշենականի» տասնամյակի առթիվ բարձր է գնահատում գլխ. խմբագրի աշխատանքը. «...Պատմությունն ու նախախնամությունը այնքան էլ բարեհաճ չեն եղել մեր ազգի նկատմամբ, և Աստծո աջն էլ հաճախ է բացակայել մեր գլխավերնից: Սակայն պատմության բոլոր շրջաններում ունեցել ենք այնպիսի անշահախնդիր նվիրյալներ, որոնք իրենց ուսերին ծանրացրել են մեծագույն հոգսեր, ծավալուն և նշանակալից անելիք, պատվով ու համարձակ առաջ են ընթացել, լիպցնելով բավականին տարողունակ դատարկություններ: Նրանց շնորհիվ է կանգուն մնացել Հայոց աշխարհը, նրանց ստեղծագործ աշխատանքն է կենդանի, գունագեղ և մրցունակ պահել հայոց մշակույթը, նրանք են այն հենակները, որոնց փաթաթվել, ընձյուղվել և վեր են բարձրացել հայոց մտքի մշտադալար շիվերը: Նրանք միշտ եղել են, նրանք կան մեր կողքին, մեզնից քիչ հեռու, Հայկական աշխարհի տարբեր ոլորապտույտներում: Նրանք ծրագրեր են մշակում, ձգտում և ջանքեր թափում, իրականացնում և ձախողվում, հիասթափվում և հուսալքվում, երագում ու պայքարում և միշտ մնում հայ ու հայասեր:

Այս նվիրյալներից է գիտնական, բանասեր, գրող և լրագրող Սերգեյ Վարդանյանը: Հոգու կանչով ու ժամանակի պահանջով նա դարձավ մեր ժողովրդի մի ամբողջ ստվար հատվածի կնքահայր: Համշենահայեր... Ժողովուրդ, որի մեծ մասը բռնի հեռացված է իր հայրենիքից, հավատից, սովորույթներից, որ հարյուրամյակներ շարունակ ներքին և արտաքին պայքարի մեջ էր իր ինքնության հաստատման, իր երբեմնի իշխանական տեսակի փրկության և աշխարհին բնականոն կերպով ներկայանալու համար:

...Մեկ-մեկ զարմանում ես, թե ինչպես է այսքան բան հասցրել, տասնյակ հայկական անհայտ բնակավայրեր է գտել և ներկայացրել հայկական աշխարհին, տասնյակ հազարավոր մարդկանց օգնել է մնալ ազգային ակունքներին մոտ, հայ ժողովրդական բանահյուսությունը հարստացրել և շարունակում է համալրել համշենական ախորժ բարբառով և երաժշտությամբ: Եվ վերջապես, այս ամենի ամենակենդանի և մշտահունչ ակորդը՝ «Ձայն համշենական» ամսաթերթը»:

43. Արմեն Սարգսյան, «Ձայն համշենականի» ինքնատիպ ձայնը, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2014, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 2:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ.գ.թ. Ա. Սարգսյանի «Ձայն համշենականի» տասնամյակի առթիվ գրված հոդվածից հատված. «Ս. Վարդանյանը տարիների ընթացքում կուտակել է համշենահայերի մասին արժեքավոր հավաքածու (իրեր, հազարավոր լուսանկարներ, Եղեռնի վկաների ձեռագիր հուշեր, տարբեր լեզուներով գրքեր և հրապարակումներ և այլն), որի պահպանությունն ու ժողովրդին, այդ թվում մասնագետներին հասու դարձնելը մեկ մարդու ուժերից վեր է: Եվ պետությունը կամ բարեարները պարտավոր են աջակցել նրան իրականացնելու տարիների երազանքը, ստեղծելու Համշենագիտական կենտրոն, որտեղ կմեկտեղվեն խմբագրությունը, թանգարանը, գրադարանը, համշենահայերի երգի ու պարի ստեղծվելիք համույթը և այլն:

Մարդիկ կան, որոնց աշխատանքային գործունեությունն ու դրա արդյունքը գրեթե անտեսանելի-անշոշափելի է: Անհատներ էլ կան, որոնց գործունեությամբ հարստանում է մարդը, նաև՝ ազգը, աշխարհը, առավել ևս, երբ այդ գործունեությունը վերաբերում է ժողովրդագիտությանը, այն էլ՝ մեր այս խենթ ու խելառ ժամանակներում... Դրա համար անմնացորդ նվիրում է պետք, խենթության հասնող նվիրում... Մերգեյ Վարդանյանը այդ սակավաթիվ նվիրյալներից մեկն է»:

Տե՛ս նաև Արմեն Շավարշի Սարգսյան, Ձեռքի հետ՝ դեսից դենից, Երևան, Հեղինակային հրատարակություն, Ոսկան Երևանցի տպագրատուն-հրատարակչություն, 2020 (- 196 էջ), էջ 153-155:

44. Արթուր Անդրանիկեան, Նամակ խմբագրութեանը, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, Երևան, 2014, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 2:

Գրող, գրականագետ Ա. Անդրանիկյանը «Ձայն համշենականի» տասնամյակի առթիվ գնահատանքի խոսք է ասում թերթի և նրա խմբագրի հասցեին. «Ամենեւին սխալուած չեմ լինի, եթէ «Ձայն համշենական»-ի

տասնամեայ յոբելեանի բարեմաղթանքիս խօսքը մասնաւորեմ Ձեր՝ ազգագրագետի, հրապարակագրի, բանահաւաքի, արձակագրի ուրոյն գործունէութեան յիշատակումով, նախ եւ առաջ այն պարզ պատճառով, որ ամսաթերթի տասնամեայ անխաթար լոյս ընծայումը կապուած է Ձեր եռանդի, բանիմացութեան, աշխատունակ նուիրեալութեան հետ: Մանաւանդ եւ յատկապէս այն պատճառով, որ այն միակ պաշտօնաթերթն է Հայաստանում գործող հայրենակցական միութիւնների: Չսահմանափակուելով համշէնահայութեան պատմական, հոգեւոր-մշակութային, կենցաղային եւ այլ ոլորտները հանրութեան մեծավ մասամբ անիրազէկ լայն զանգուածներին ներկայացնելուց, Դուք մշտաբար ամսաթերթի էջերում անդրադառնում էք մերձտարածաշրջանային պատմական-պատմագիտական այն խնդիրներին, որոնց հրատապութիւնը ուղղակիօրէն առնչուում է տարածաշրջանային հետագայ զարգացումների հետ»:

45. Լենդրուշ Ալոյան, Հայանպաստ գործունէություն, «**Ձայն համշէնական**», ամսաթերթ, Երևան, 2014, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 2:

ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի մամուլի պատմության և տեսության ամբիոնի դասախոս, բ.գ.դ., պրոֆեսոր Լ. Ալոյանը «Ձայն համշէնականի» տասնամյակի առթիվ բարձր է գնահատում թերթը և գլխ. խմբագրի աշխատանքը. «Չկա համշէնահայության մասին քիչ թե շատ կարևոր մի տեղեկատվություն, որ նա չիմանա: Չիտեսենք արդէն որպէս կազմակերպչի նրա հմտության մասին: Մեծ կապեր ունենալով Երևանի պետական համալսարանի տարբեր ամբիոնների դասախոսների, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի տարբեր գիտահետազոտական ինստիտուտների գիտնականների, Հայաստանի և Սփյուռքի մտավորականների հետ, նա պատվիրում և թերթի ընթերցողների դատին է ներկայացնում նրանց հոդվածները, ստեղծագործությունները, թարգմանությունները, ինքն էլ Թուրքիայի համշէնցիներից, բազմաթիվ վտանգավոր խոչընդոտներ հաղթահարելով, գրառում է բանահյուսական եզակի նմուշներ, փրկում նրանց բարբառը, որում բազմաթիվ հետաքրքիր գրաբարյան և նորաստեղծ բառեր կան: Փառք ու պատիվ մեր գրչեղբորը, շնորհալի, հայանվեր այս գործը պատվով կատարելու համար»:

46. Ռոզա Խասսոյան, Ինքնություն, «**Ձայն համշէնական**», ամսաթերթ, Երևան, 2014, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 4, 5:

ՌԴ Ադրդեական Հանրապետության մայրաքաղաք Մայկոպում ապրող գրող Ռոզա Խասսոյանի հոդվածը նվիրված է Լրատվական ռադիոյի «Համ-

**շենական գրուցարան»** հաղորդաշարին և հեղինակին՝ Ս. Վարդանյանին. «...Ոչ միայն զարմացա, այլ մինչ այդ չտեսնված ու չզգացված երջանկության թուփերն ապրեցի, երբ իմացա, որ համշենահայության բարբառը, ծեսերն ու սովորությունները ոչ միայն չեն անտեսված իմ հայրենակիցների կողմից, այլև Երևանի «**Լրատվական ռադիոն**» շաբաթական երկու անգամ «**Համշենական գրուցարան**» վերնագրով ռադիոհաղորդումներ է նվիրում համշենահայերին, և հաղորդաշարն այդ անվճար վարում է իր ազգին ու գործին նվիրված մի մարդ, բանասեր ու հայագետ Սերգեյ Վարդանյանը, որը երեսունհինգ տարի է զբաղվում է համշենահայերի խնդիրներով, լուսաբանում է նրանց կյանքն ու կենցաղը, պատմությունն ու մշակույթը: ... Ամենահետաքրքիրն իմ այս հայտնագործության մեջ այն էր, որ ինձ թվում էր, եթե ես ծնվել ու մեծացել եմ համշենական ընտանիքում, ուրեմն ամեն ինչ գիտեմ մեր մասին: Քավ լիցի: Բանից պարզվեց, որ բարբառից (այն էլ՝ տարաբնույթ, բազմիմաստ օտար բառերով) ու մի քանի սովորություններից բացի, ոչինչ էլ չգիտեմ: Ես նույնիսկ չգիտեի շատ կարևոր բաներ հենց իմ ծննդավայր Օբերկա գյուղի մասին և Սերգեյ Վարդանյանի ռադիոհաղորդման ժամանակ լսելով, պարզապես ցնցվեցի ու ապշեցի, պարզվում է՝ իմ ամենասիրելի երգահանը՝ Նիկոլ Գալանդեդյանը, որի երգերը ես պատանեկան տարիներից առ այսօր երգում եմ, պատկերացնում եմ, 1910-11 թթ. երգեցողության ուսուցիչ է աշխատել... իմ գյուղի դպրոցում և Օբերկայում է գրել իր հրաշալի երգերից մի քանիսը: Այստեղից էլ նա մեկնել է Թեհրան: Այս ռադիոհաղորդումից հետո ես երկար ժամանակ ուշքի չէի կարողանում գալ, քանզի իմ գյուղի մասին այդ ապշեցուցիչ տեղեկությունը Հայաստանից հնչող «**Համշենական գրուցարանից**» էի իմանում:

Ռադիոհաղորդման առաջին իսկ հնչյուններից էությունս, երևի գենետիկորեն վերհիշելով իր արմատները, ակամայից դողում է: Կարճ, շատ կարճ մի խոսք է հնչում հաղորդման սկզբում, որը և մինչև Հոգուս խորքն է հասնում.

«Մա հայերեն է...»:

Ու այստեղ ցնծում եմ ես՝ հեռավոր ժառանգս իմ այն նախնիների, որոնց մի մասը նահատակ դարձավ, մյուսն էլ շարունակեց ապրել ամեն միջոցով, որպեսզի ես այսօր ինձ ՀԱՅ զգամ ու արտասովեմ այդ իրականության երջանիկ փաստից:

Ես շատ բաներ իմացա իմ արմատների մասին, այդ թվում նաև, որ կան մուսուլման համշենցիներ, որոնց մասին նախկինում չգիտեի: Դա ինձ տա-

բօրինակ ու անընդունելի թվաց սկզբում, դե՛, մուսուլմանական կրոնը դատապարտող քրիստոնյա ընտանիքում էի մեծացել ու սերտել այն ամենը, ինչ հակառակ պիտի լիներ մահմեդական կրոնին: Սակայն, ես արդեն հատուն մարդ եմ և կարողացա քննության ենթարկել հայ մարդու համար տհաճ այդ երևույթը և հասկանալ հայի բռնի իսլամացման դրդապատճառները ԱՅՆ պարագայում ու ԱՅՆ պատմական իրավիճակում: ...Ասեմ նաև, դրանում ինձ շատ օգնեցին Մերգեյ Վարդանյանի հրաշալի, պարզ ու հասկանալի ռադիոհաղորդումները, որտեղ նա ո՛չ միայն պատմում էր իր շրջագայությունների մասին, բացատրում ու բացահայտում հայերի իսլամացման պատճառները, խոսում մեզ՝ փաստացի համշենցի հայերիս, արմատների պնդության ու հայ լինելու մասին, ինչքան էլ շատերն ուզենային հերքել, այլև ծանոթացնում էր մեր շատ բառերի ու բառակապակցությունների հետ, որոնք, ի զարմանս ինձ, անսովոր ու անծանոթ էին: ...Բացի դրանից, ինձ անասելի հրճվանք ու ուրախություն պատճառեց նաև այն, որ նույն «**Համշենական գրուցարան**» ռադիոհաղորդաշարի միջոցով ես ունկնդրեցի ու հիացա... չե՛, ի՞նչ եմ ասում, ուղղակի երջանկացա, երբ լսեցի ԻՍԿԱԿԱՆ երգեր իմ բարբառով: ...«Լրատվական ռադիոն» ինձ հնարավորություն տվեց հիանալու և հպարտանալու իմ արմատներով, քանի որ և՛ երգերը, որոնք լսեցի ռադիոհաղորդումների ժամանակ, և՛ խոսքերը գրված են մասնագիտական բարձր մակարդակով, չնայած ժողովրդական են: ...Ու ես առաջին անգամ իմ այս տարիքում, ի լուր աշխարհի ՀՊԱՐՏՈՐԵՆ կարող եմ հայտարարել՝ երջանիկ եմ, որ համշենցի հայերի ներկայացուցիչն եմ:

Որպես երախտագիտության արտահայտություն, ուզում եմ խոնարհվել մեծահոգի, նվիրյալ ՄԱՐԴՈՒ՝ Մերգեյ Վարդանյանի առաջ: Անհամեստություն չթվա արածս՝ ուզում եմ բոլոր համշենահայերի անունից իմ խորին շնորհակալությունը հայտնել ԵԶԱԿԻ ՄԱՐԴՈՒՆ, որն իր նվիրվածությամբ ոչ միայն չթողեց, որ պատմության շրջադարձների մեջ մոռացվի Համշենի հայությունը, այլև երեսունհինգ երկար տարիների ընթացքում, անշահորեն, իր առողջության և հնարավորությունների հաշվին շրջագայում է այնտեղ, որտեղ թեկուզ մի քանի տասնյակ համշենցի կա, ինչ է թե՛ ասի-խոսի նրանց մասին, նաև հույս տա այդ մարդկանց. «Չե՛, դուք կորած չեք: Ձեզ հիշում են, ընդունում ու սիրում են որպես յուրայինների ձեր հայրենիքում», ինչով և փրկում է նրանց հոգևոր կործանման վտանգի երախտներից»:

47. Վահան Իշխանյան, Ովքե՞ր են նրանք, մուսուլման հայախոս համ-  
շենցիները, Երևան, Ակտուալ արվեստ հրատ., 2014 (-148 էջ), էջ 71, 72 79,  
80, 110:

Ս. Վարդանյանը և նրա կատարած ուսումնասիրությունները հիշա-  
տակվում են հետևյալ էջերում՝ 71, 72, 79, 80, 110: 20-րդ հոման մեջ (էջ 79)  
գրված է. «Սովետական համշենցիների վերաբերյալ բոլոր տեղեկություն-  
ները վերցված են Սերգեյ Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի  
բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասի-  
րություններ)» գրքից, ԵՊՀ, 2009»:

48. Համո Մոսկոֆեան, Անմոռանալի հանդիպումներ համշենահայերու  
հետ, «Արարատ», օրաթերթ, Բեյրութ, 2014, մարտի 7, էջ 2:

Հեղինակը պատմում է տարբեր երկրներում համշենահայերի հետ իր  
հանդիպումների մասին. ««Համշեն» Հայրենակցական միութեան մեջ կը  
ծանօթանանք նաեւ Հ.Հ. կրօնի նախկին փոխ-նախարար, Համշենագետ,  
գրող ու մտաւորական Սերկէյ Վարդանեանի հետ: Ան միաժամանակ, իր  
անձնական ջանքերով կը հրատարակէ «Չայն Համշենական» հանդէսը, շա-  
բունակելով այն մեծ գործը, որ սկսած էր 1984 թ.-ին Ղազախստանի աքսո-  
րեալ համշենահայերուն գիւղերը այցելելով եւ հանդիպելով 1944 թ-ին  
Լավրենթի Պերիայի կողմէ բռնագաղթուած Աքպէտյիքովներու (Ճերմա-  
կեան), Քարախարահիմովներու, Շապանօղլիներու ընտանիքներուն: Իսկ  
Խ. Հայաստանի օրերուն, իր տան մէջ իսկ հիւրընկալած է Խրիզստանի  
համշենահայերու ղեկավար՝ Ռուշտուն Քարապաճաքովը, որոնց Հայաս-  
տան տեղափոխումը այդ օրերուն... այսօր (...) բախած էր պետական  
շրջանակներու արգելքին, որովհետեւ, թէկուզ առերես, մահմետական  
էին...»:

49. Ջեմիլ Աքսու, Ովքե՞ր են համշենցիները, որտեղի՞ց են եկել, ու՞ր են  
գնում, թարգմանեց Մելինե Անումյանը, «Չայն համշենական», ամսաթերթ,  
2014, № 5-6, էջ 1-3:

Նախկին քաղբանտարկյալ, 2008-2010 թթ. Խոփայում հրատարակված  
“Bir yaşam” (թարգմ.՝ Մի կյանք) ամսագրի խմբագիր Ջեմիլ Աքսուի  
“Hemşinliler Kimdir? Nereden Geldiler, Nereye Giderler?” թուրքերեն հոդվածը  
թարգմանվել է Ստամբուլի “Toplumsal Tarih” (2013, agosto, № 236, s. 40-47)  
ամսագրից: Հեղինակն անդրադառնում է նաև Ս. Վարդանյանի հրապա-  
րակումներից մեկին. «Համշենցիների իսլամացման գործընթացի վերա-  
բերյալ ոչ վաղ անցյալում մի կարևոր փաստաթուղթ հրատարակվել է

Սերգեյ Վարդանյանի կողմից: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Պողոս վարդապետ Մեհերյանն իր ինքնակենսագրական գրքում պատմում է Համշենում գտնվող Խևակ գյուղ իր այցի և այնտեղ իր հետ պատահածների մասին: Այնուհետև նա մեջ է բերում Ս. Վարդանյանի հոդվածում տպագրված Պ. Մեհերյանի հուշագրությունից «...ատի ընդ իս զՏէր Պետրոսն» տողից մինչև «Եւ տես դու, զի ուրացեալքն ի ժամ պատարագին լնուին զեկեղեցին» տողը հատվածը, որը Ջ. Աքսուն թուրքերեն կարդացել է «Համշեն եւ համշենահայություն (գիտաժողովի նյութեր)», Երևան-Պեյրուք, 2007 (- 296 էջ) գրքի թուրքերեն թարգմանության մեջ, տե՛ս S. Vardanyan, 1776 yılına ait Müslüman Hemşinli Ermeniler Hakkındaki önemli bir Şehadetname // **Hemşin ve Hemşinli Ermeniler** (Konferans makalaler), Yerevan, 2007 (-306 s., 278-286), s 283.

50. Yad ediyoruz!, “**Gor**”, Hemşin kültür, dil, tarih dergisi, Istanbul, 2014, sonbahar, № 1, s. 46-51.

Վերնագիրը թարգմանվում է «Հիշում ենք»: Ստամբուլաբնակ համշենցի ճանաչված արվեստագետներ, ռեժիսոր Օզջան Ալփերը և երգիչ Հիքմեթ Աքչիչեքը գրուցում են Թուրքիայի կրոնափոխ համշենցիների պատմության, մշակույթի, լեզվի, այդ թեմաներով գրքերի, ուսումնասիրությունների, հրապարակումների մասին, հիշատակվում են նաև **Ս. Վարդանյանը** և «**Չայն համշենական**» ամսաթերթը (էջ 50):

51. Մելինե Անումեան, Համշենահայերու առաջնահերթ խնդիրը լեզուի եւ մշակոյթի պահպանումն է, «**Զարթօնք**», օրաթերթ, Պեյրուք, 2014, օգոստոսի 1, էջ 3:

Արդվինի նահանգի Խոփա քաղաքից հայրենաճանաչության նպատակով Երևան եկած երկու համշենահայերի (Սալան Ջանջըր, Ռեմզի Գեղիք) հետ Երևանի Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնում կազմակերպված հանդիպման և հարցուպատասխանի մասին է: «Հանդիպմանը նաեւ մասնակցեցաւ Հայաստանի մէջ արդէն 10 տարի անընդմէջ հրատարակուող «Չայն համշենական» ամսաթերթի գլխաւոր խմբագիր Սերկէյ Վարդանեանը: Ան նոյնպէս որոշ պարզաբանումներ կատարեց ներկաներու հարցումներուն»:

52. Հայկազուն Ալվրցյան, Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, Երևան, Էդիթ Պրինտ հրատ., 2014 (-152 էջ), էջ 101, 111:

Բ.գ.թ. Հ. Ալվրցյանն անդրադառնում է նաև կրոնափոխ համշենցիներին, հատված գրքից. «Համշենահայերի կրոնափոխության մասին վկայող

տարբեր աղբյուրների մեջ հատկապես ուշագրավ է թերեւս առաջին հայերեն աղբյուրը, որի հեղինակն է Մխիթարյան միաբանության անդամ Հայր Պողոս վարդապետ Մեհերյանը, ով «Համշենի Խեւակ գյուղում է եղել դեռեւս 1776 թ. եւ իր «Պատմություն վարուց...» հուշագրության մեջ խիստ կարեւոր տեղեկություններ է հաղորդում», հղում № 132, էջ 101, «(ամբողջական վերնագիրն է «Պատմութիւն վարուց Տեառն Հ. Պողոս վարդապետի Մեհերեան, շարագրեալ յիւրմէ 1811 Վենետիկ, ի վանս սրբոյն Ղազարու», հղում № 133, էջ 101):

№ 132 հղում. «Սերգեյ Վարդանյան, Համշեն եւ համշենահայութիւն, գիտաժողովի նիւթեր, Երեւան-Պէյրոյթ, 2007, էջ 269»:

№ 133 հղում. «Սերգեյ Վարդանյան, Կարեւոր սկզբնաղբյուր մահմեդականացված հայերի մասին, «Պատմա-բանասիրական հանդէս», Երեւան, 2004, թիւ 3: Հոդվածի վերջում հատվածներ են տպվել հուշագրությունից» (էջ 101):

2015

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Сергей Варданян, Окровавленные семена, Ереван, изд. ВМВ-Принт, 2015 (- 80 стр., 70 фотографии), формат 70x100 1/16, тираж 400.

Երկրորդ համաշխարհային պատերազմին Կրասնոդարի երկրամասի և Աբխազիայի հայության մասնակցության մասին է: Նրանք տվել են Խորհրդային Միության 13 հերոս, նաև բազմաթիվ ռազմական գործիչներ, ակտիվորեն մասնակցել պարտիզանական շարժմանը:

2. Որոշ դիտարկումներ Համշենի բարբառի Խովայի խոսվածքի մասին // Ակադեմիկոս Գ. Ջահուկյանի ծննդյան 95-ամյակին նվիրված ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի կազմակերպած «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015 (- 224 էջ), էջ 167-174:

3. Երագի թեման մահմեդական համշենցիներից գրառված բանահյուսության մեջ // «Քունը և երագը հեքիաթում», Հովհ. Թումանյանի թանգարան, 2015 թ. նոյեմբերի 27, գիտաժողովի ծրագիր և թեզիսներ, Երևան, 2015 (- 48 էջ), էջ 22:

Գիտաժողովի կազմակերպիչներ՝ Հովհ. Թումանյանի թանգարան, Fabula armeniaca ծրագիր, ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոն:

4. Համշենցի հայեր, «Աղբյուր», ամսագիր, Երևան, 2015, № 7-8, էջ 21-23:

Պատանի ընթերցողներին համառոտ ներկայացվում է քրիստոնյա և բունի կրոնավորական համընթացների դարավոր պատմությունը:

5. Sergey Vardanyan, Müslümanlaştırılmış Hemşinli Ermeniler: Kurbanlar ve Tanıklar Ermeniceden çeviren Pakrat Estukyan // **Мүслиманлаш(tırıl)мис Ermeniler, Konferans Tebliğleri**, Kasım 2013, İstanbul, Hrant Dink Vakfı Yayınları, 2015 (- 470 s.), s. 75-86.

(Թարգմանություն՝ Սերգեյ Վարդանյան, Մուսուլմանացված համընթացի հայեր. զոհեր և վկաներ, հայերենից թարգմանիչ՝ Բագրատ Էստուքյան, 2013 թ. նոյեմբերի 2-4 Ստամբուլի Բողազիչի համալսարանում կայացած «Իսլամաց(վ)ած հայեր» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ստամբուլ, Հրանտ Դինք հիմնադրամի հրատ., 2015 (- 470 էջ), էջ 75-86):

Ժողովածուի վերջում տպագրվել են զեկուցողների կենսագրությունները, այդ թվում՝ Ս. Վարդանյանի, էջ 435:

6. Խոփայի խոսվածքով գրառումներ Թուրքիայում, «**Ձայն համընթացական**», ամսաթերթ, Երևան, 2015, հունվար-փետրվար, № 1-2, էջ 5, 8:

Խոփայի խոսվածքով և գրական հայերեն թարգմանությամբ տպագրվել են Ս. Վարդանյանի գրառումները՝ «**Էյ վախ**» իրապատում զրույցը, «**Լուսնիկա**» և «**Ցար, յար**» երգերը:

7. Կոչ, «**Ձայն համընթացական**», ամսաթերթ, Երևան, 2015, № 1-2, էջ 8:

Նույնը տե՛ս նաև «**Ձայն համընթացական**», ամսաթերթ, № 3-4, էջ 8, № 7-8, էջ 8, № 9-10, էջ 5:

Կոչ է արվում նյութապես օգնելու համընթացի հայերի պատմությանը, ազգագրությանը, բանահյուսությանը, բարբառին, Եղեռնի զոհերին, նաև ֆիդայիներին նվիրված անտիպ գրքերի հրատարակմանը: Արձագանք չի եղել:

8. Обращение, «**Ձայն համընթացական**», ամսաթերթ, Երևան, 2015, № 1-2, էջ 7, № 5-6, էջ 5:

Թերթում տպագրված «Կոչի» ռուսերեն թարգմանությունն է: Արձագանք չի եղել:

9. Գրառումներ Համընթացի բարբառի Խոփայի խոսվածքով, «**Ձայն համընթացական**», ամսաթերթ, Երևան, 2015, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 7, 8:

Խոփայի խոսվածքով և Ս. Վարդանյանի գրական հայերեն թարգմանությամբ տպագրվել են **5 առած-ասացվածք**, «**Համընթացի չքիդացող արչե**» զվարճապատումը, «**Մէլուսէս**» երաժշտախմբի երգացանկից «**Խաղուլիզ**» և «**Գարմի**» երգերը, «**Գօր**» ամսագրի № 1-ից՝ «**Ջերմագ ջինջուխ**» բանաստեղ-

ծուրթունք, «Վօվա» երաժշտախմբի «**Գելինի**» երգը, Յուսուֆ Վայիչի «**Գիվ քաշեցի**» բանաստեղծությունը, նաև անհայտ հեղինակի 1 երգ:

10. Солдат отчизны, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2015, մայիս-հունիս, № 5-6, էջ 5:

Արխագիայի Հայկական Անուխվա գյուղում ծնված և Երկրորդ համաշխարհային պատերազմին մասնակցելուց հետո Երևանում բնակություն հաստատած Գրիգոր Գունդակչյանի մահվան առթիվ գրված հիշատակի խոսք է:

11. Մեր հանրագիտարանը. Համշենցի հայեր, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2015, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 4, 5:

Հոդվածը ներկայացնում է համշենցի հայերի պատմությունը:

12. Ճյուղակոտոր տոհմաձառ, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2015, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 4, 5:

«Տոհմաձառ» ընդհանուր վերտառության տակ Ս. Վարդանյանի առաջաբանով տպագրվել են Արխագիայի Պրիմորսկոյե գյուղում ծնված և 1965-ից Երևանում բնակվող Անժելա Գարանյանի հուշերը, որի աղջիկը՝ Մարիամ Խազարյանը, 2006 թ. գոհվել է Երևան-Սոչի ավիալըծարի ժամանակ:

13. Խոփայի խոսվածքով երգերի նոր թարգմանություններ, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2015, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 7, 8:

Հոդվածը ներկայացնում է «**Մելուսե**» ոռք խմբի «**Քրնացին**», «**Հօրթե**», «**Բօբօլ**» և Խոփայի գավառից Սալիհ Յըլմազի «**Մարնին**» խոսակավառակի «**Լուսնիքա**» և «**Էլվիթ**» երգերը՝ բնագրով և Ս. Վարդանյանի գրական հայերեն թարգմանությամբ:

14. Յուրահատուկ բառեր Թուրքիայի համշենցիների Խոփայի խոսվածքում, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2015, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 8:

Գիտական հոդված է, որտեղ Ս. Վարդանյանը անդրադառնում է Խոփայի խոսվածքում կիրառվող «**վերաձաքլար**», «**թուսթերչիզ**», «**գարմեզուցք**», «**ձիձաման**», «**փօղօց**», «**փերնիչ**» բառերին:

15. Խմբագրի կողմից, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2015, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 1:

Արխագիայում վերաբնակված Թուրքիայի արխագ գրող և պատմաբան Հայրի Էրսոյի «Համշենցի Բիլալ քեռին» պատմվածքի հայերեն թարգմա-

նության (թարգմանիչ՝ պ.գ.դ., թուրքագետ Արսեն Ավագյան) տպագրության առթիվ ներկայացվում է ով է Հ. Էրսայը (էջ 1):

### **Երկրորդ բաժին (հարցազրույցներ)**

16. Ասք մոռացված հերոսների մասին, պատրաստեց Շ[ուշան] Ստեփանյանը, «**Հայ զինվոր**», շաբաթաթերթ, Երևան, 2015, մայիսի 7-13 (№ 17), էջ 6:

2015 թ. Երևանում հրատարակված Ս. Վարդանյանի «**Окровоавленные семена**» (Արյունոտ սերմեր) գրքի մասին է: Տպագրվել է Ս. Վարդանյանի լուսանկարը: Պատմում է գրքի հեղինակը. «Ինչո՞ւ ընտրեցի Աբխազիան եւ Կրասնոդարի երկրամասը: Վերջին քսան տարիների ընթացքում հայերին հաճախ են մեղադրում, թե նրանք անկոչ հյուրեր են, սպառողներ, ավանդ չունեն այդ տարածաշրջանում: Ընդ որում, այս գործում խառն է նաև Ադրբեջանի մատը: Փաստերն ու պատմությունները պետք են ոչ միայն հայերին, այլև նրանց հետ ապրող այլ ազգերին, կուսակցությունների անդամներին, տեղական իշխանություններին: Այդ մտահոգություններից դրդված «Պատմության էջեր» գլխում համառոտ ներկայացրի, թե երբ և որտեղից են հայերը հայտնվել այդ երկրամասում: Քանի որ Կրասնոդարի երկրամասի հայերի զգալի մասը համշենահայեր են, գրում եմ, թե ովքեր են համշենահայերը, ներկայացնում եմ նրանց ծագումնաբանությունը: Ցավոք, նրանցից շատերն իրենք էլ չգիտեն այդ մասին, կտրվել են ազգային արմատներից»:

### **Երրորդ բաժին**

17. Վարդանյան Սերգեյ Գագիկի // **Հայ գրատպություն և գրքարվեստ. հանրագիտարան**, ՀՀ Գիտությունների Ազգային ակադեմիա, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2015 (- 1120 էջ), էջ 1014:

Ս. Վարդանյանի կենսագրությունն է:

18. «**Ձայն համշենական**», ամսաթերթ // **Հայ գրատպություն և գրքարվեստ. հանրագիտարան**, ՀՀ Գիտությունների Ազգային ակադեմիա, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2015, էջ 650:

«**Ձայն համշենական**», ամսաթերթ: «Համշեն» հայրենակց.-բարեգործ. ՀԿ-ի հրատ.: Լույս է տեսնում 2004-ից Երևանում: Հիմնադիր-խմբագիր՝ Սերգեյ Վարդանյան:

Տպագրում է համշենահայության (քրիստոնյա և մահմեդ.) պատմությամբ, ազգագրությամբ, բանահյուսությամբ, բարբառին վերաբերող հայ և

օտարազգի գիտնականների հոդվածներ, անդրադառնում Աբխազիայի, Ռուսաստանի, Թուրքիայի, Ղազախստանի, Ղրղզստանի և Ուզբեկստանի համշենահայության պատմությանն ու հիմնախնդիրներին, հրատարակում համշենահայերից (նաև մահմեդականացված) գրառած բանագիտ. նյութեր: Լույս է ընծայում հայ և օտարազգի հեղինակների չափածո ու արձակ ստեղծագործություններ», էջ 650:

19. Лина Пирузян, Амшенские герои Великой Отечественной, «**Голос Армении**», газета, издаётся трижды в неделю, Ереван, 2015, 14 мая, № 49:

2015 թ. լույս տեսած «Окровавленные семена» գրքի և հեղինակի մասին է: Հոդվածագիրը Մագդալինա Ջատիկյանն է, բայց, քանի որ թերթի նույն համարում այլ հոդված ևս ունի, հրատարակել է իր լրագրողական կեղծանունով:

Նույնը արտատպվել է «**Չայն համշենական**» ամսաթերթում, Երևան, 2015, № 5-6: Շատ փոքր փոփոխություններով հրատարակվել է նաև «**Պատմաբանասիրական հանդեսում**», 2016, № 2, էջ 262-265:

20. Лина Пирузян, Амшенские герои Великой Отечественной, «**Չայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2015, մայիս-հունիս, № 5-6:

2015 թ. հրատարակված Ս. Վարդանյանի «Окровавленные семена» գրքի մասին է:

Արտատպվել է «**Голос Армении**» թերթի 2015 թ. մայիսի 14-ի № 49-ից:

21. Adnan Genç, Ermenistan’da iki dilli etnik bir yayın organı var, «Bu nedenle Hemşinlilerin Sesi gazetesini kurmaya karar verdim. Dünyanın her tarafından Hemşinliler’den haber geliyor ve bunları ben yayınlıyorum», “**Gor**”, Hemşin Kültür, Dil, Tarih Dergisi, Türkçe-Hemşince, İstanbul, 2015, sayı 2, s. 58-59. (Թարգմանություն՝ Ադնան Գենչ, Հայաստանում երկլեզվյան էթնիկ մի հրատարակչական մարմին կա, «Այս պատճառով որոշեցի Համշենցիների Չայն թերթը հիմնել: Աշխարհի ամեն կողմից համշենցիներից լուրեր են գալիս և ես դրանք հրատարակում եմ», «**Գոր**», Համշենի մշակույթի, լեզվի, պատմության հանդես, թուրքերեն-համշեներեն):

Հոդվածի ընդարձակ տարբերակը տե՛ս Adnan Genç, Hemşinlilerin Sesi Gazetesi Yayımcısı Vartanyan: Hemşin kültürü için gazete yapıyorum, “**Bir Gün**”, gazete, İstanbul, 2008, 24 Ağustos. (Թարգմանություն՝ Համշենցիների Չայն թերթի հրատարակիչ Վարդանյան. Համշենի մշակույթի համար թերթ եմ պատրաստում): Ս. Վարդանյանի մասին է:

22. Լիլիթ Մանուկյան, Պարզևատրվեցին լավագույնները, «**Գրական թերթ**», շաբաթաթերթ, Երևան, 2015, փետրվարի 13, № 2, էջ 3:

Տեղեկացվում է, որ փետրվարի 6-ին տեղի է ունեցել 2014 թ. ՀԳՄ ամենամյա մրցանակաբաշխությունների մրցանակների հանձնման արարողությունը: Նշվում է նաև. «ՀԳՄ վաստակի համար մեղալ շնորհվեց Սերգեյ Վարդանյանին»:

23. Հայաստանի գրողների միության նախագահության որոշում, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2015, հունվար-փետրվար, № 1-2:

Հայաստանի գրողների միության նախագահության որոշմամբ «Ձայն համշենական» թերթի գլխավոր խմբագիր, գրող, հրապարակախոս Սերգեյ Վարդանյանը 2015 թ. փետրվարի 6-ին պարգևատրվել է «Գրական վաստակի համար» մեդալով (էջ 8):

24. Ռուբեն Մելքոնյան, Միեր Աբրահամյան, Օսմանյան Կայսրության և Թուրքիայի Հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք, Երևան, ՎՄՎ-Պրինտ հրատ., 2015 (- 240 էջ):

Գրքում հիշատակվում են նաև Ս. Վարդանյանը և նրա ուսումնասիրությունները, տե՛ս էջ 24, 25, 52, 53, 219, 228: Գրքից հատված. «Այսպես, համշենահայերի խնդրի բազմամյա ուսումնասիրող Սերգեյ Վարդանյանը հրատարակել է Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Հայր Պողոս վարդապետ Մեհերյանի անտիպ ուղեգրությունից մի հատված, որում նա 1776 թ. սեպտեմբերին, լինելով Համշենի Խնակ գյուղում, գրում է, որ այնտեղ ապրում էին 200 տուն մուսուլման և 5-6 տուն քրիստոնյա հայեր: Թեև բնակչության մեծամասնությունը պաշտոնապես եղել է մուսուլման, բայց ինչպես նշում է հոգևորականը. «Յաջմե եւ յահեկե համբուրեին զաջն իմ»: Ավելին՝ շատ իսլամացված համշենահայեր խնդրել են քրիստոնեական ծեսով օրհնել իրենց նախնիների գերեզմանները» (էջ 52, 53):

25. «Համշենահայերը տարբերվում են քաղաքական հայացքներով, աշխարհընկալմամբ, սեփական ինքնության մասին պատկերացումներով», գրույցը՝ Արմինե Սարգսյանի, «**Իրատես de facto**», թերթ, տպագրվում է շաբաթը երկու անգամ, Երևան, 2015, ապրիլի 14-16, № 25, էջ 10:

Հարցազրույցը պատմական գիտությունների թեկնածուներ Թեհմինե Մարտոյանի և Մելինե Անուսյանի հետ է, որոնք այցելել են Թուրքիա՝ համշենցիների բնակավայրեր: Հիշատակվում են Ս. Վարդանյանը և «Ձայն համշենական» ամսաթերթը. «Եթե անդրադառնանք համշենական մշակույթը ներկայացնելուն ուղղված աշխատանքներին, ապա նախ պետք է հիշատակենք արդեն տասը տարի անընդմեջ Հայաստանում հրատարակ-

վող «Ձայն համշենական» ամսաթերթը, որի գլխավոր խմբագիրն է կրոնափոխ համշենահայերի բանահյուսության, բարբառի և երգարվեստի վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրությունների հեղինակ Սերգեյ Վարդանյանը»:

26. Սահակ Լևոնյան, Գեղարվեստական գրականություն Համշենի բարբառի Խոփայի խոսվածքով, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2015, հունվար-փետրվար, № 1-2, էջ 4, 5:

Ս. Լևոնյանի գրախոսականը նվիրված է ստամբուլաբնակ երիտասարդ արձակագիր Մահիր Էօզքանի «Համշենեան պատմուածներ» (Ստամբուլ, «Արաս», 2014) պատմվածքների ժողովածուին, հողվածը սկսվում է հետևյալ պարբերությամբ. «2008 թվականն էր: «Վովա» խմբի հայաստանյան հյուրախաղերը պիտի մեկնարկեին: Սպասում էինք հյուրերին: Ես և Սերգեյ Վարդանյանը գրուցում էինք միջանցքում: Երբ հյուրերը ժամանեցին, նրանցից առաջինը մեզ մոտեցավ ծիծաղկուն դեմքով աշխույժ մի երիտասարդ: Ծանոթացանք: Երբ նա հայտնեց իր անունը, Սերգեյը թուղթ ու գրիչ պարզեց, ասաց.

-Գրի՛ր, կմոռանամ:

Երիտասարդը թղթի վրա գրեց թուրքերեն. «Էօզքան Մահիր»:

27. «Համշենցիները» խորագրեալ ձեռնարկին Կարո Աբրահամեանի արտասանած խօսքը, «Ազդակ», օրաթերթ, Պեյրուֆ, 2015, Յուլիս 1, թիւ 94, էջ 4:

Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայ երիտասարդաց ընկերակցության «Անդրանիկ» մշակութային միության նախաձեռնությամբ 2015 թ. հունիսի 19-ին Բեյրութի «Տեմիրճեան» կենտրոնում կայանալիք «Համշենցիներ. «Իսլամ են՝ թուրք չեն, Հայ են՝ քրիստոնեայ չեն» միջոցառմանը (տե՛ս «Ազդակ», Յունիս 16, թիւ 81, էջ 3, Յունիս 19, թիւ 84, էջ 9) հրավիրված բանախոսներն էին Ս. Վարդանյանը և ստամբուլաբնակ երիտասարդ մանկավարժ և գրող Մահիր Էօզքանը, բայց ինչ-ինչ պատճառներով Ս. Վարդանյանը չի կարողացել Բեյրութ մեկնել: Միջոցառման նախաձեռնողներից, «Փթիթ» մանկական պարբերականի խմբագիր Կարո Աբրահամյանն իր ելույթում անդրադառնում է նաև Ս. Վարդանյանին. «Հիւսիսային համշենցիներու Վրաստանի, Աբխազիոյ, Ռուսիոյ, Խրքիստանի, Ղազախստանի, Իրաքիստանի խմբաւորումները հայախօս են եւ քրիստոնեայ, եւ ունին «Ձայն Համշենական» ամսաթերթը՝ իբրեւ պաշտօնաթերթը Համշեն հայրենակցական բարեգործական հասարակական կազ-

**մակերայութեան:** Թերթին երկարամեայ խմբագիրն է Սերգեյ Վարդանեան, եւ թերթը կը հրատարակուի Երեւան, 8 էջ ծաւալով, 1000 օրինակ տպաքանակով եւ կը տարածուի անվճար: Այս տարի թերթը կը նշէ իր հրատարակութեան 10-ամեակը» (էջ 4):

Ճշտենք, որ «Խրրիւրդիստանի, Ղազախստանի, Իւզպէքիստանի» համշէնցիներն, այո՛, հայխոս են, բայց քրիստոնյա չեն:

2016

### **Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)**

1. Սերգեյ Վարդանյան, Լուսինե Սահակյան, Գիլըր մնաց հիշատակող (Տառապանքի ուղիներով), «Յոյս», երկշաբաթաթերթ [հրատարակվում է ամսագրի ձևաչափով], Թեհրան, 2016, հունվարի 13, թիւ 208, էջ 16-19:

Մտնողով Վանի Հայոց ձոր գավառի Քերձ գյուղից Երվանդ Կյուրեղյանի 2009 թ. Երևանում հրատարակված «Իմ հուշերի ճանապարհով» (հրատարակության պատրաստեցին, խմբագրեցին և ծանոթագրեցին Սերգեյ Վարդանյանը և Լուսինե Սահակյանը) գրքի առաջաբանի արտատպությունն է:

2. Ղազախստանի, Ղրղզստանի և Թուրքիայի մահմեդական համշէնահայերից գրառված հայերեն մի քանի բառերի մասին, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2016, № 3, էջ 81-95:

Ս. Վարդանյանն անդրադառնում է **փուչ, փէչօտ, չախօտ, էրաք, սիյօղ, փեղաձաքլար, փաղբօրի, քեղալբօջիզ/կրղալբօջիք, թուսթերչիզ/թուսթերչիչ, զիթիք, մօէխ, օթիս, ցիբու, ցանց/ցօնձ, ձիձաման/ձիձօմօն, գարմէգուցք, բօչքէօխ, լաթգախ, փօղօց, չէխչէխան/չախչախան, ձիափ, փերնիչ** բառերին:

3. Ղրղզստանի, Ղազախստանի և Թուրքիայի մահմեդական համշէնահայերից գրառված հայերեն եզակի բառեր // «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր», 9-րդ միջազգային գիտաժողով, 2016 թ. սեպտեմբեր 24-25, Ջեկուցումների դրույթներ, Երևան, «Գիտություն» հրատ., 2016 (-410 էջ), էջ 386-388:

4. Դերասան Արման Կոթիկյանը՝ բանաստեղծ, թարգմանիչ և Եղեռնի տարեգիր // **Գրական Համշէն**, Արխագահայ գրողների ստեղծագործությունների պլանախի, կազմողներ՝ Կարլ Յալանուզյան, Արտավազդ Սարեցյան, Երևան, Հայաստանի գրողների միության հրատարակչություն, 2016 (- 264 էջ), էջ 105-115:

Որպես Արխագահայի հայերի «Սնծովյան այգաբաց» գրական միավորման Պատվավոր անդամ Ս. Վարդանյանի հողվածը ևս ընդգրկվել է ժողո-

վածուի մեջ: Տպագրվել է նաև Եղեռնի օրերին վերապրածներից Ա. Կոթիկյանի գրառած հինգ հուշ-վկայություն:

Հոդվածի տարբերակը տե՛ս «**Կինոաշխարհ**», ամսաթերթ, 2013, ապրիլ, № 4:

5. Թուրքիայի կրոնափոխ համշենահայերից գրառված մի երգի մասին // **Գիտական հոդվածների ժողովածու**, նվիրվում է Հ. Աճառյանի ծննդյան 140-ամյակին, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, «Աստղիկ» հրատ., 2016 (- 398 էջ), էջ 353-366:

«Ցունե էլեվ, փըրնեց չամին դալինե» սկզբնատողով երգի մասին է, բացատրվում են երգի «**դալ**», «**էրօնդ**», «**լէր**», «**փէրգ**», «**թօրխ**», «**գօր**», «**օդ**», «**բիձիգ**» բառերը:

Արտաստությունը տե՛ս «**Ձայն համշենական**», ամսաթերթ, 2017, № 1-2, էջ 4-6:

6. Կորած հայերի հետքերով Ճանապարհորդություն Միջին Ասիա. 1984 թ., «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2016, № 1-2, 3-4, 5-6, 7-8, 9-10:

1944 թ. Աջարիայից Ղազախստան և Ղրղզստան արքայազմ կրոնափոխ համշենահայերին Ս. Վարդանյանի փնտրել-գտնելու և այցելելու պատմությունն է: Տպագրվել են Կենտրոնական Ասիայում Ս. Վարդանյանի արած մի շարք լուսանկարներ:

7. Բանահյուսական գրառումներ Թուրքիայի Օսմանիյե գյուղում, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2016, հունվար-փետրվար, № 1-2, էջ 8:

Խոփայի խոսվածքով և գրական հայերեն թարգմանությամբ տպագրվել են Խոփայի գավառի Օսմանիյե գյուղում գրառված «**Սօյ հարս քըղնուշե**» նյութը, նաև վախ չափելու ամբողջ գործընթացը և աղոթքները ներկայացնող «**Վախ չափելու աղոթք**» (Վախ չափուշի դուվա) հոդվածը:

8. Բանահյուսական գրառումներ Արդվինի նահանգում, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2016, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 7:

Խոփայի խոսվածքով և գրական հայերեն թարգմանությամբ տպագրվել են «**Արդեկեցե փաղ գիյուշի հէքիյան**» և «**Ձագե**» զվարճապատումները, 1 մանկախաղ և 1 անեծք ու զայրույթի խոսք:

9. Բանահյուսական գրառումներ Արդվինի նահանգի Օսմանիյե գյուղում, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2016, մայիս-հունիս, № 5-6, էջ 7, 8:

Խոփայի խոսվածքով (համշենցնակ) և գրական հայերեն թարգմանությամբ տպագրվել են 3 առած-ասացվածք, 1 հանելուկ, 4 խաղիկ: Տպագրվել է նաև «Չար աչքի աղոթք (Աչիչի դուվա)» վերնագրով հողված, որտեղ ներկայացվում են չար աչքի համար աղոթելու գործընթացը և աղոթքները:

10. Նոր գրառումներ Արդվինի նահանգի Օսմանիյե գյուղում, «Չայն համշենցնական», ամսաթերթ, Երևան, 2016, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 7:

Խոփայի խոսվածքով և գրական հայերեն թարգմանությամբ տպագրվել են 1 խաղիկ և Օսմանիյե գյուղում ծնված ստամբուլաբնակ երգչուհի Նուրջանըմի երգացանկի երգերը՝ «Ասա դարդեթ», «Մօնա, մօնա», «Ասա՛, յէ՛ մա, ասա՛», որտեղ ևս օգտագործվել են ժողովրդական խաղիկներ:

11. Մեկ երգ Քազրմ Քոյունջուի երգացանկից, «Չայն համշենցնական», ամսաթերթ, Երևան, 2016, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 8:

Լազ նշանավոր երգիչ, վաղամեռիկ Ք. Քոյունջուի Խոփայի խոսվածքով երգած «Քա՛, թուն մի թա խենդաս օչ» երգի բնագիրը և Ս. Վարդանյանի թարգմանությունն է:

### Երրորդ բաժին

12. Магдалина Затикян, Сергей Варданян, Окровавленные семена, Ереван, изд. ВМВ-Принт, 2015, 80 с., «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2016, № 2, էջ 262-265:

Ներկայացվում են «Окровавленные семена» գիրքը և հեղինակը:

Հողվածի տարբերակը տպագրվել է «Голос Армении» թերթի 2015 թ. մայիսի 14-ի համարում:

13. Remzi Yilmaz, Bozkırın Atlı Göçebelere Hemsinliler, Ankara, 2016 (-384 s.), s. 63, 77, 83, 164, 174.

1955 թ. Խոփայի գավառի Քյոփրյուջյու գյուղում ծնված իսլամ համշենցի Ռեմզի Յըլմազը նավթագործ-ինժեներ է, ապրում է Ստամբուլում: Հետաքրքրվում է պատմությամբ և բանասիրությամբ: Համշենցիների թյուրքական ծագման ջատագով և քարոզիչ է: Իր «Տափաստանների հեծյալ քոչվոր համշենցիները» թուրքերեն գրքում միտումնավոր խեղաթյուրված է ներկայացրել 2013 թ. Խոփայում իր և Ս. Վարդանյանի գրույցը: Նրա հակահայ գործունեությանը շատ հակիրճ անդրադարձել է Ս. Վարդանյանն իր «Բանահյուսական պատումի միջավայրը (Կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները)» (2022) մենագրության մեջ, էջ 79, 80:

14. Հայկագուն Ալվրցյան, Համշենը եւ համշենահայությունը. արդի հիմնախնդիրները, Երևան, Էդիթ պրինտ հրատ., 2016 (-152 էջ):

Ս. Վարդանյանն ու նրա ուսումնասիրությունները հիշատակվում են հետևյալ էջերում՝ 7, 8, 42, 105, 108, 109, 110, 114, 115, 119, նաև № 3, 53, 128, 130, 131, 132, 134, 135-րդ ծանոթագրություններում:

Հատվածներ գրքից. «Որևէ տարածքում ժողովրդի բնիկության մասին սովորաբար լավագույնս վկայում են տվյալ ժողովրդի առասպելները: Եւ ճիշտ է նկատել Ս. Վարդանյանը, որ հայոց նախնիներից Անգեղա Տորքը իր երկիրը թշնամական նավերից պաշտպանում է Պոնտոսում, եւ բերում է դրա մասին պատմահայր Խորենացու վկայությունը...» (էջ 7, 8): «Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Հայկական ազգային շրջանը հայտնվեց պատերազմական գոտում եւ խիստ տուժեց, իսկ պատերազմից հետո շատ քան այլևս հնարավոր չեղավ վերականգնել: Հատկապես անդառնալի կորուստ էր հայկական դպրոցների փակումը: 1951 թ. 140 հայկական դպրոցների փոխարեն այսօր գործող շուրջ 10 դպրոցները մեծ պայմանականությամբ կարելի է համարել հայկական, քանզի դրանցում հայերեն են դասավանդվում միայն հայոց լեզուն և հայ գրականությունը: Ռուսաստանի հայկական համայնքների խնդիրներին քաջածանոթ Ս. Վարդանյանը, հանգամանալից ներկայացնելով հայկական համայնքի կրթական համակարգի կորուստերի ողջ պատկերը, ավելացնում է. «Փակվել են նաև նախկինում Կրասնոդար քաղաքում գործած հայկական թատրոնը, տպարանը, ժողովրդական համալսարանը, վաղուց լռել են երկրամասի տարբեր քաղաքների հայկական ռադիոհաղորդումները: Թեև երկրամասում կան մի շարք հայկական համայնքային կազմակերպություններ, բայց հասարակական-քաղաքական, մշակութային կյանքը թմբիկի մեջ է: Այլևս չկան նախկին տասնյակ համույթներն ու թատերախմբերը, երգչախմբերը, և միայն Մոչիի Լազարևսկի շրջանի մի քանի պարախմբերն են, որ դժվարին պայքարով դեռևս պահպանում են համշենցի հայերի հարուստ մշակույթը վերջնական ուժացումից» (էջ 109, 110):

Հեղինակը Ս. Վարդանյանից քաղվածաբար ներկայացնում է նաև 1984 թ. նրա հանդիպումը Սև գետի գավառի Տեր Կարապետի սերունդներից մեկի հետ (էջ 42, № 53 հղում):

15. Արմեն Շավարշի Սարգսյան, Մանկական զվարճախոսություններ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, «Գիտություն» հրատ., 2016 (-232 էջ), էջ 87, 207:

Գրքում ընդգրկված մանկական իրապատում գվարձախոսություններից երկուսը (թիվ 118, 119) պատմել է Ս. Վարդանյանը:

Նույնը տե՛ս նաև՝ Արմեն Շավարշի Սարգսյան, Մանկական ծիծաղադարան. աշխարհը երեխաների աչքերով, տպագրվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ, Երևան, Հեղինակային հրատ., 2019 (- 272 էջ), էջ 45, թիվ 118, 119:

16. Հայկանուշ Մեսրոպյան, Կրոնակեղեցական բառապաշարը հայերենի բարբառներում, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, Երևան, «Ասողիկ» հրատ., 2016 (-352 էջ):

Գրքում Ս. Վարդանյանը և նրա «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ)» (2009) գիրքը հիշատակվում են 42, 51, 62, 99, 341 էջերում:

17. Նայիրա Հայրապետեան, Մահիր Օզքան, Համշենի լեռներից, գետերից եւ ծովից լսուող ձայնը, «Ազգակ», օրաթերթ, Պեյրուֆ, 2016, փետրուար 16, էջ 5:

Ընդարձակ հոդվածում ներկայացվում են ստամբուլաբնակ համշենցի երիտասարդ մտավորական, գրող Մահիր Օզքանի հետ հանդիպումներն ու զրույցները, նրա և հեղինակի մտորումները համշենցիների անցյալի ու ներկային մասին, հիշատակվում է նաև Ս. Վարդանյանը, որպես համշենցիների երկարամյա ուսումնասիրող գիտնական, խմբագիր, քաղվածքներ են արվում նրա խոսքից: Հատված հոդվածից. «1980-ականներից սկսած՝ Ս. Վարդանեանը զբաղում է համշենահայերի բանահիւսութեամբ, բարբառի եւ երգարուեստի ուսումնասիրութեամբ, հրատարակել է բազմաթիւ յօդուածներ եւ բանահիւսական նիւթեր, որոնց մեծ մասը տպագրուել են իր իսկ կողմից հրատարակուող «Ձայն Համշենական» թերթում: Այս տարիների ընթացքում նա Ղազախստանում, Ուզպեթիստանում, Խրբիսըզիստանում յայտնաբերել է կրօնափոխ համշենահայերի բնակավայրեր, կազմակերպել փոխադարձ այցելութիւններ:

Վերջին տարիներին ուսումնասիրութիւններ եւ բանահաւաքական աշխատանքներ է կատարել Թուրքիայի Խոփայ եւ Բորչկայ գաւառներում, Էրզրումի եւ Ռիզէի նահանգների համշենցիների գիւղերում: Համեմատութիւններ կատարելով նաեւ ռուսաստանաբնակ, Աբխազիայի համշենցիների հետ, միաժամանակ նշելով տարբեր փոխազդեցութիւնները՝ նա ասում է. «Համշենցիների բանահիւսութիւնը ընդհանրութիւններ ունի հայաստանցիների, Ղարաբաղի, Ղարատաղի բանահիւսութեան հետ, բայց չի

հաւաքուել, չի հրատարակուել... եւ հաւաքում եմ, ի հարկէ, բայց դա քիչ է: Հիմնականում մանիկները՝ խաղիկներէն եւ լաւ պահպանուել, եւ դրանցով համեմատութիւններ անելը շատ հեշտ է»:

Այս տեսակէտից չափազանց կարեւոր է Ս. Վարդանեանի «Կրօնափոխ համշէնահայերի բարբառը, բանահիւսութիւնը եւ երգարւեստը» գիրքը, որը հրատարակուել է 2009 թ.»:

Տե՛ս նույնը «**Ձայն համշէնական**», ամսաթերթ, Երևան, 2016, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 2, 3:

18. Նաիրա Հայրապետյան, Մահիր Օզքան. Համշէնի լեռներից, գետերից և ծովից լսվող ձայնը, «**Ձայն համշէնական**», ամսաթերթ, Երևան, 2016, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 2, 3:

Հոդվածի բնագիրը հրատարակել է «**hetq.am**» կայքէջը: Նույնը տե՛ս «**Ազդակ**», օրաթերթ, Պէյրուս, 2016, Փետրուար 16, էջ 5:

19. Ռոզա Խասոյան, Երջանկություն, «**Ձայն համշէնական**», ամսաթերթ, Երևան, 2016, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 3:

ՌԴ Ադրդեական Հանրապետությունում բնակվող բանաստեղծուհի Ռոզա Խասոյանը Ս. Վարդանյանի նախաձեռնությամբ Հայաստանի գրողների միության անդամ ընտրվելու կապակցությամբ գրել է «Երջանկություն» վերնագրով երախտիքի խոսք: Հատված. «Խոնարհումս պրն Սերգեյ Վարդանյանին, որ համշէնցի տիկնոջ մեջ տեսավ պոետ ու բախտին սպասող աղջնակին... ու օգնեց նրան ԲԱԽՏԱՎՈՐ ԸԼԼՈՒՇ» (էջ 3): Տպագրվել են նաև Ռ. Խասոյանի բանաստեղծությունները:

20. Каринэ Халатова, Живая память - правдивая легенда: От составителя и переводчика, Старый Ереван 20-40-х годов XX века в рассказах и мемуарах армянских классиков, составитель и переводчик Каринэ Халатова, Ереван, изд. «Цицернак», 2016 (-180 с.), с. 4-8.

Գրքում թարգմանաբար ներկայացված են Երևանի և երևանցիների մասին Մարիետա Շահինյանի, Ակսել Բակունցի, Ստեփան Զորյանի, Վահան Թորոպենցի, Դերենիկ Դեմիրճյանի, Գուրգեն Մահարու և այլ գրողների ստեղծագործություններից հատվածներ: Ժողովածուի կազմող և թարգմանչուհի Կարինե Խալաթովայի առաջաբանում հիշատակվում են նաև Ս. Վարդանյանի գրքերը. «Ереван- двенадцатая столица Армении. Ее предшественниками были города Ван, Армавир, Ервандашат, Арташат, Тигранакерт, Вагаршапат, Двин, Багаран, Ширакаван, Карс, Ани. (Читайте книгу Сергея Варданяна «Столицы Армении», изданную в 1985-м и 1995 г. на арм. яз.)» (с. 4).

21. Թամար Հայրապետյան, Արքետիպային հարակցումները հայկական հրաշապատում հեքիաթներում և վիպապատմական բանահյուսության մեջ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016 (-462 էջ):

Բ.գ.դ. Թ. Հայրապետյանն իր մենագրության 3-րդ գլխի «Սողոմոն իմաստունը» բաժնում՝ 365-366-րդ էջերում վերապատմում է «Հրեղեն ձին» (1981) բանահյուսական ժողովածուում տպագրված «Սողոմոն իմաստունի գաղտնիքները» (էջ 92) և «Սողոմոն իմաստունն ու բիձեն» (էջ 94), իսկ «Թագավորի երագները» (2003) բանահյուսական ժողովածուից՝ «Սողոմոն իմաստունն ու հնձվորը» (էջ 17) գրույցները:

22. Արսեն Էդուարդի Հարությունյան, Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2016 (- 548 էջ, որից 102 էջ լուսանկարների ներդիր):

Ս. Վարդանյանը և նրա «Հայաստանի մայրաքաղաքները» (1995) գիրքը հիշատակվում են 26, 388, 433 էջերում:

23. Adnan Genç - Hikmet Akçiçek, Lusine Sahakyan ile Hemşinliler ve Hemşin tarihi üzerine..., “Gör”, dergisi, Istanbul, 2016, Kaun/Bahar, sayı 4, s. 36-42.

Ստամբուլաբնակ համշենցիներ, լրագրող Ադնան Գենչի և երգիչ, «Հատիկ» միության քարտուղար Հիքմեթ Աքչիչեքի «Լուսինե Սահակյանի հետ համշենցիների և Համշենի պատմության մասին...» հարցազրույցում թուրքագետ, բ.գ.թ. Լուսինե Սահակյանը մասնավորապես ասում է. «Մեր օրերում համշենահայերի մասին կան Սերգեյ Վարդանյանի աշխատությունները: Սերգեյ Վարդանյանը 1980-ական թվականներից ի վեր Խորհրդային Միությունում՝ Կրասնոդարում, Աբխազիայում, Ղազախստանում և Ղրղզստանում հաստատված համշենցիների և հետագայում Թուրքիայի համշենցիների մասին կարևոր ուսումնասիրություններ է կատարել: Նրա 1981 թ. գրած «Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ» հոդվածը Հայաստանում Համշենի մասին կատարվող ուսումնասիրությունների համար մի նոր դուռ է բացել» (էջ 38):

2017

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Թուրքիայի մահմեդական համշենահայերի բնակավայրերի և թվաքանակի մասին, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2017 թ., № 2, էջ 46-59:

Հաստիքի հոդվածից. «2009 թ. մեր հրատարակած գյուղացանկն ընդգրկում էր 22 գյուղ ու գյուղակ, որոնց մասին տեղեկությունները 1980-ական թթ. հավաքել էինք 1944 թ. Ղազախստան և Ղրղզստան արտրված կրոնափոխ տարեց համշենցիներից, ովքեր մինչև 1930-ական թթ. հնարավորություն էին ունեցել Աջարիայի իրենց գյուղերից այցելել Խոփայի գավառի ազգականներին:

...2010 թ. ի վեր քանիցս շրջագայելով Խոփայի գավառում՝ տեղում ճշտել ենք գյուղացանկը, որը ներկայացնում ենք ստորև (փակագծերում նշել ենք նաև գյուղերի նախկին անունները և գյուղացիների օգտագործած բարբառային տարբերակները, զծիկով առանձնացրել ենք բնակչության թիվը 2000 թ. տվյալներով, 1. Բարբլը/Բարբբեյ (Ձենդիդ)-320, 2. Բաշոբա (Խիգի, Խիգօբա)-760, 3. Գյունեշի (Չաղրինա, Չաղրինա)-420, 4. Էշմեքայա (Վեյի Արդալա)-427, 5. Հենդեք (Գարջի)-525, 6. Յուղերե (Չուրբիջի)-990, 7. Չավուշլու (Չավուշին)-778, 8. Չիմենլի (Վայի Արդալա)- 400, 9. Փրնարլը (Անչիօղ, Անչորօխ)-190, 10. Քոյունջուլար (Չալունա, Չալունա)- 600 (էջ 50):

Այսպիսով, Խոփայի գավառի համշենցիների 10 գյուղում 2000 թ. բնակվում էր 5.410 մարդ:

Այժմ թվարկենք նույն գավառի Քեմալփաշայի (Մաքրիյալ) գյուղախմբի (բուջաքի) համշենցիների բնակավայրերը՝ Քեմալփաշա (Մաքրիյալ) ավանը և նրա տեղական ինքնակառավարման մարմնի՝ քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող գյուղերը՝ Աքդերե (Չօլի քեղ, Մեղօղում քեղ), Գյունյուշերե (Խելու քեղ), Չամուղլու (Չանչախանա, Չանչաղօն), Ուչքարդեշ (կան նաև լազեր), Քազըմիյե (Վեյի Սարփ, երբեմն անվանում են Սօլլի ցօր), Քարասամանիյե (Խեձեղօն, Խեցեղան), Քեոփրյուջու (կան նաև լազեր), Օսմանիյե (Քեշօղեց քեղ, Քեշօղիխօուն քեղ), Քայաքեյ գյուղը, որը կազմավորվել է չորս գյուղակներից՝ Շանա (այստեղ է գյուղապետարանը), Խալբաշի՝ Հալբաշը, Գորամաթ, Փափաթ՝

---

\* Գյուղանունների բարբառային տարբերակները հասկանալու համար բացատրենք վեյի-վերին, վայի-վարի, ներքին, մեղօղում-մութ, քեղ-գետ, ցօր-ձոր բարբառային բառերը: Սօլլի ցօր-Մոլլայի ձոր թաղամասում ապրում են Մոլլօղլիները, ցօր-ձոր բառը Խոփայի համշենցիները չեն հասկանում, այս տեղանունն ապացուցում է, որ նախկինում խոսվածքն ունեցել է այդ բառը: Քեշօղեց, Քեշօղիխօուն-Քեշօղի սոհմանուն է: Չօլի քեղ և Խելու քեղ գյուղերում համապատասխանաբար բնակվում են «Չօլիսօք» և «Խելունսօք» սոհմերը, նաև ուրիշներ: Գյուղացիներն ասում են. «Չօլի քեղէ Չօլիսօցէ արբաձ քյաղին անունն ա, Խելու քեղն ալ Խելունսօցէ արբաձ քյաղին անունն ա»:

Քենավիաշայի (Մաքրիյալ) գյուղախմբում, ըստ 2000 թ. տվյալների, բնակվում էր 4.129 մարդ: Այսպիսով, 2000 թ. Խոփայի գավառի 10 գյուղերում և Քենավիաշայի գյուղախմբում ապրում էր 9.539 մարդ: Անցած մեկուկես տասնամյակի ընթացքում բնակչության աճ է գրանցվել: Հասկանալի է, որ նրանք բոլորը համշենցիներ չեն, կան նաև լազեր, թուրքեր, այլ ազգերի ներկայացուցիչներ:

Ի մի բերելով, կարող ենք ասել, որ 2016 թ. տվյալներով Արդվինի նահանգի Խոփայի գավառի 35.406 բնակիչների կեսից ավելին՝ շուրջ 20 հազարը համշենցի է:

Համարյա 2000-2.500 կրոնափոխ, բայց հայախոս համշենահայեր են բնակվում նաև Արդվինի նահանգի Բորչքայի գավառի (2016 թ. բնակչությունը՝ 22.036 մարդ) Բորչքա քաղաքում և Չիֆթեբեռփոյու (Չիսալա), Չայլը (Բեյիվան, Բեղլեվան, Բաղիվան), Յեշիլքեոյ (Մանասթըր) և այլ գյուղերում (էջ 51):

...Ի դեպ, Արդվինի նահանգի համշենցիների վերը թվարկված 26 գյուղում, ըստ մեր ուսումնասիրությունների, խոսում են Համշենի բարբառի Խոփայի խոսվածքի երկու ենթախոսվածքով, 5 գյուղում (Էշմեքայա, Չիմենլի, Փընարլը, Գյունեշլի և Յեշիլքեոյ) խոսում են արդալացիների ենթախոսվածքով, իսկ մնացած 21 գյուղերում՝ թուրքսանցիների (դրսեցիների) ենթախոսվածքով:

Կրոնափոխ համշենցի հայերի գյուղեր կան նաև Թուրքիայի Մաքարյայի նահանգի Քարասուի, Քոջաալիի ու Ֆերիզլիի, ինչպես նաև՝ հարևան Դյուզդեի նահանգի Աքչաքոջայի գավառներում: Շրջակա գյուղերի այլազգիները նրանց «Էրմենի» են ասում» (էջ 52):

2. Հայտնի և անհայտ Արման Կոթիկյանը // «**Չմոռանաք իմ անունն էլ տալ...**». **Արման Կոթիկյան**, կազմեց Սեդա Կոթիկյանը, Երևան, Հեղ. հրատ., 2017 (-292 էջ+12 էջ նկար), էջ 189-199:

Արման Կոթիկյանի մասին տարբեր տարիներին տպագրված հոդվածների և հուշերի, նաև նրա հեղինակած հոդվածների ժողովածու է, որը կազմել է դուստրը՝ Սեդա Կոթիկյանը: Ժողովածուում նշված է (էջ 199), որ Ս. Վարդանյանի «Հայտնի և անհայտ Արման Կոթիկյանը» հոդվածը արտատպվել է «**Կինոաշխարհ**» ամսաթերթի 2013 թ. ապրիլի (№ 4) համարից, սակայն «Կինոաշխարհ» ամսաթերթի այդ համարում հրատարակվել է Ս. Վարդանյանի նույն թեմայով գրված մեկ այլ հոդված՝ «Դերասան Արման Կոթիկյանը՝ նաև բանաստեղծ, թարգմանիչ և Եղեռնի տարեգիր» վերնագ-

րով: Իրականում գրքում զետեղվել է «Ձայն համշենական» ամսաթերթի 2007 թ. նոյեմբեր-դեկտեմբերի (№ 11-12) համարում հրատարակված «Հայտնի և անհայտ Արման Կոթիկյանը» հոդվածը, որի վերջում գրքի կազմողը «Կինոաշխարհ» ամսաթերթից ավելացրել է երկու պարբերություն և Եղեռնը վերապրածներից Ս. Կոթիկյանի գրառած երկու վկայություն:

3. Թուրքիայի կրոնափոխ համշենահայերից գրառված մի երգի մասին, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2017, հունվար-փետրվար, № 1-2, էջ 4-6:

«Ցունե էլվ, փրոնեց չամին դալինե» սկզբնատողով երգի մասին է, բացատրվում են երգում հանդիպող «դալ», «էրօնդ», «լեր», «փերգ», «թօրխ», «գօր», «օդ», «բիձիգ» բառերը:

Տպագրվել է ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատարակած «Գիտական հոդվածների ժողովածուում», Երևան, 2016, էջ 353-366:

4. Թողարկվել է Ալթան Ջիվելեքի խոսակավառակը, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2017, հունվար-փետրվար, № 1-2, էջ 8:

Հոդվածը նվիրված է Խոփայի գավառի Քյոփրյուջյու գյուղում ծնված, ստամբուլաբնակ երգիչ Ալթան Ջիվելեքին: Բնագրով և թարգմանությամբ տպագրվել են նրա նոր խոսակավառակի երգերը՝ «Մաղմունդ մօնա՛, մօնա՛», «Յէ՛, մօմի»:

5. Թուրքիայի կրոնափոխ համշենահայերի թվաքանակի մասին, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2017, մարտ-ապրիլ, № 3-4, էջ 7, 8:

Հոդվածը նվիրված է Թուրքիայի կրոնափոխ համշենահայերի թվաքանակին, թվարկված են տարբեր նահանգներում գտնվող նրանց գյուղերը: Հոդվածի վերջում տպագրվել է Խոփայի խոսվածքով և Ս. Վարդանյանի գրական հայերեն թարգմանությամբ **4 խաղիկ**:

6. Արդվինի նահանգում գրառված խաղիկներ, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2017, № 3-4, էջ 8:

Տպագրվել են Արդվինի նահանգի կրոնափոխ համշենցիներից գրառված խաղիկների բնագրերը և Ս. Վարդանյանի արևելահայերեն թարգմանությունները: Անստորագիր է, հեղինակը Ս. Վարդանյանն է:

7. Լույսը հեռու լեռներում, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2017, մայիս-հունիս, № 5-6, էջ 6, 7:

Հոդվածը Սոչիի Ադլերի շրջանի Ներքին Շիլովկա գյուղի հայկական դպրոցի մասին է:

Արտատպվել է «**Դպրություն**» եռօրյա թերթից, Երևան, 1990 թ. ապրիլի 27, № 34:

8. 25 տարի առաջ, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2017, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 2:

Հոդվածը նվիրված է 25 տարի առաջ՝ 1992 թ. սկսված վրաց-աբխազական պատերազմի պատճառով Հայաստանում ապաստանած աբխազահայ փախստականներին օգնելու պատմությանը: «25 տարի առաջ սկսվեց վրաց-աբխազական պատերազմը» ընդհանուր վերնագրի ներքո արտատպվել են այդ թեմայով Ս. Վարդանյանի երկու հոդվածները՝ Աբխազահայ փախստականներ Հայաստանում, «**Ազգ**», 1992, նոյեմբերի 10, № 126 և Աբխազահայեր. մոռացյալ բեկորներ, «**Ազգ**», 1993, մարտի 24, № 53:

9. Թուրքիայի մուսուլման համշենահայերի բանահյուսության նմուշներ, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2017, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 8:

Խոփայի խոսվածքով և գրական հայերեն թարգմանությամբ տպագրվել են Ս. Վարդանյանի գրառած **7 խաղիկ, 3 հանելուկ, 7 առած-ասացվածք, 1 ասույթ**:

10. Կոմիտասի դասընկեր Շահան-Սիմոնը՝ Աբխազիայում ուսուցիչ (Շահան-Սիմոն 150), «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2017, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 1-3:

Էջմիածնի ճեմարանում Կոմիտասի հետ նույն դասարանում սովորած ապագա ճանաչված երաժիշտ, խմբավար և մանկավարժ Սիմոն Շահանյանը՝ Շահան-Սիմոնը 1923-1930 թթ. ուսուցիչ է աշխատել Աբխազիայի Գագրայի շրջանում: Այդ տարիների Աբխազիայի հայկական դպրոցների, երգչախմբերի, համշենահայերի սովորությունների մասին պատմող նրա հուշագրությունից Ս. Վարդանյանը ԳԱԹ-ում պահվող արխիվից հետաքրքիր դրվագներ է հրատարակել: (Հոդվածում Լապստարիսա գյուղի հայկական դպրոցի աշակերտների թվի փոխարեն՝ 116, սխալմամբ տպագրվել է Գանթիադիի (Ցանդրիպշ) հայկական դպրոցի աշակերտների թիվը՝ 182, այդ մասին «Ուղղում» կա թերթի հաջորդ՝ № 11-12-ում, էջ 2):

11. [Անվերնագիր], «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2017, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 4:

Աբխազիայի և ՌԴ Կրասնոդարի երկրամասի մտավորականներին և ուսուցիչներին կոչ է արվում թղթակցել «**Ձայն համշենականին**»:

12. Արդվինի նահանգի մուսուլման համշենահայերից գրառված խաղիկներ, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2017, սեպտեմբեր-հոկտեմբեր, № 9-10, էջ 8:

Խոփայի խոսվածքով և թարգմանությամբ տպագրվել են Ս. Վարդանյանի գրառած **8 խաղիկները**:

13. Աբխազիայի հայկական դպրոցների տխուր վիճակագրությունը, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2017, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 1, 2:

Հոդվածը նվիրված է Աբխազիայի 24 հայկական դպրոցներին, տպագրվել են 2016-17 և 2017-18 ուստարիների տվյալները, ուսուցիչների և աշակերտների թվերը: Վերջում կա նախորդ համարին վերաբերող «Ուղղում»:

Արտաստպությունը տե՛ս Սերգեյ Վարդանեան, Աբխազիայի հայկական դպրոցների տխուր վիճակագրությունը, «**Նոր Ցառաջ**», երկօրյա թերթ, Փարիզ, 2018, յուլիս 21, № 1229, էջ 5, 6:

### **Երկրորդ բաժին (հարցազրույցներ)**

14. «Ինչի՞ համշենակ խաբրե չես», հարցազրույցը՝ Մարինա Բաղդազյուլյանի, «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2017, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 8:

«**Մեդիալաբ**» (Medialab.am) լրատվական գործակալության թղթակից Ս. Բաղդազյուլյանը Ս. Վարդանյանի հետ զրուցում է քրիստոնյա և իսլամ համշենցիների մասին: Հատված հարցազրույցից. «-**Պարո՛ն Վարդանյան, համշենցիների մասին կարդացի-լսեցի ու եկա այն եզրակացության, որ նրանք ինքնության հյուծվող թելից կախված մարդիկ են՝ մի մասը մուսուլման է դարձել, իսկ քրիստոնյա համշենցիները խոսում են անծանոթ ու մեռնող բարբառով:**

- Քրիստոնյա համշենցիները, բնականաբար, իրենց հայ են համարում: Եթե նրանց հարցնես՝ որտեղացի՞ ես, կասեն՝ ջնիկցի եմ, օրդեցի եմ, տրապիզոնցի եմ: Կրասնոդարի երկրամասում, Աբխազիայում ինձ երբեմն հարցնում էին, թե ինչո՞ւ են իրենց համշենցի ասում: Վերջին տասնամյակներում այդ մասին շատ գրվեց, հիմա բոլորը գիտեն, որ իրենց պապերը Ջնիկ, Օրդու, Տրապիզոն են եկել Համշենից: Օրինակ՝ սասունցիները Սասունից են եկել Թալին, եթե Թալինից էլ մի ուրիշ տեղ են գնում, հարցնում են՝ որտեղացի՞ եք, ասում են՝ Թալինից ենք: Իմացողը հասկանում է, որ նրանք նաև սասունցի են: Չիմացողն էլ երևի կմտածի, որ Էստոնիայի մայ-

րաքաղաք Տալլինից են: Իսկ իսկան համշենահայերը, որ ապրում են Ստամբուլում կամ Արդվինի նահանգում, որպեսզի չասեն՝ թուրք ենք, ասում են՝ համշենցի ենք, քանի որ չեն կարող ասել հայ ենք, որովհետև քրիստոնյա չեն: Սա ինքնությունը և՛ պահելու, և՛ թաքցնելու միջոց է»:

### Երրորդ բաժին

15. Из Стамбула до Амшена, из Амшена в Ереван, интервью с Эролом Амагуни Безирганом, провела беседу и перевела с турецкого Инесса Ташян, «Չայն համշենական», ամսաթերթ, Երևան, 2017, հուլիս-օգոստոս, № 7-8, էջ 4, 5:

Էրոլ Բեզիրգանի նախնիները Համշենից են՝ Չամլրիեմշինի Մոլևինց գյուղից, 19-րդ դարի վերջին են հեռացել այնտեղից: Նա, փնտրելով իր արմատները, եկել է Հայաստան: Ս. Վարդանյանը նրան տարել է Օշական: Ինեսա Թաշյանի հարցին նա պատասխանել է.

«Думаю, что многих читателей заинтересует Ваш псевдоним Амагуни, с чем связан такой выбор?

- Прежде всего, конечно, с историей Амшенского княжества (Армянскими князьями Хамамом и Шапухом Амагуни). Также огромное впечатление на меня произвело посещение в 2016 году могил Месропа Маштоца и Ваана Амагуни в селе Ошакан вместе с филологом, историком и автором книг об амшенцах, замечательным человеком Сергеем Варданяном. В тот момент я действительно прочувствовал всю глубину наших корней и истории, всю неразрывную связь с нашей страной и народом. Это было непередаваемо! Именно тогда я решил приехать в следующий раз с детьми и показать им это место. Вопрос с выбором армянского имени также был для меня решён».

16. Araz Qurbanov, «Müsəlman ermənilər». Regionda geosiyasi oyunların yeni iştirakçıları. Etnosiyasi oçerklər. Bakı, 2017 (- 404 s.), s. 121, 128, 130, 131, 216, 325, 389.

Ադրբեջանի նախագահին առնթեր Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի առաջատար գիտաշխատող Արազ Քուրբանովի «Մուսուլման հայեր». Տարածաշրջանում աշխարհաքաղաքական խաղերի նոր մասնակիցներ. Էթնոքաղաքական ակնարկներ» կոչվող, ծայրից ծայր հակահայկական այս գրքում հեղինակն առաջ մղելով համշենցի հայերի ծագման թյուրքական և ադրբեջանական «վարկածը», կեղծարարությունների դիմելով, անդրադառնում է համշենահայերի մասին Ս. Վարդանյանի ուսումնասիրություններին և 2013 թ. Ստամբուլի Բողազիչի համալ-

սարանում կայացած գիտաժողովում նրա կարդացած զեկուցմանը (տե՛ս էջ 121, 128, 130, 131, 216, 325, 389):

Ս. Վարդանյանը Արագ Քուրբանովի գրքին հակիրճ անդրադարձել է իր «Բանահյուսական պատումի միջավայրը (Կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները)» (Երևան, 2022) մենագրության 80, 81, և 82 էջերում:

17. Շաքե Երիցյան, Ոչ թե առօրեական մտածողությամբ, իսկապես ավանդապահությամբ, լեզենդներով, **«Գրական թերթ»**, շաբաթաթերթ, Երևան, 2017, մայիսի 5, № 14, էջ 2, 8:

Ապրիլի 26-ին ՀԳՄ Կլոր սրահում տեղի ունեցած «Գրական Համշեն», ժողովածուի շնորհանդեսի մասին է. «ՀԳՄ նախագահը արժևորեց Կ. Յալանուզյանի, Ս. Վարդանյանի և այլոց ամենօրյա աշխատանքը, որոնց գործունեության հիմքում համշենահայության հարցերն ու խնդիրներն են, նրանց ստեղծածի նշանավորումը» (էջ 2), ««Ձայն համշենական» թերթի խմբագիր, «Համշեն» հայրենակցական միության նախագահի տեղակալ Սերգեյ Վարդանյանը պատմական նշանակության գործ համարեց գիրքը կազմողների՝ Կ. Յալանուզյանի և Ա. Սարեցյանի կատարած աշխատանքը: Այա նշելով, որ գրքում ընդգրկվել են նաև տասը արխիվ գրող, ցավով փաստեց, որ հայ-արխիվական գրական կապերը զարգացում չունեցան» (էջ 8):

18. Ռոզա Խաստյան, Երկու խոսք բարբառիս մասին, **«Ձայն համշենական»**, ամսաթերթ, 2017, նոյեմբեր-դեկտեմբեր, № 11-12, էջ 2:

Ծնունդով Աբխազիայից, ՌԴ Մայկոպ քաղաքում բնակվող բանաստեղծուհու խոհերն են Համշենի բարբառի և նրանով ստեղծագործելու մասին. «Համշենի բարբառի հետ զրավոր առնչվեցի նաև մեծարգո Սերգեյ Վարդանյանի՝ մեծ մտավորականի և իսկական հայրենասերի գերմարդկային ջանքերով հրատարակվող «Ձայն համշենական» պարբերականի մեջ, որտեղից էլ տեղեկացա աշխարհի տարբեր անկյուններում ապրող իմ հայրենակից քրիստոնյա և մահմեդական դարձած համշենահայերի կյանքի մասին, նրանց հույզերի և հույսերի մասին, նրանց անկոտրում կամքի և հավատի մասին առ այն, որ մոռացված չեն ոչ մի հայի կողմից:

Ցավալին այն է, որ թերթը կարդացողները, արձագանքողները, որոնք շատ-շատ են, մեծ մասամբ համշենցիներ չեն...

Մեծ ուրախությամբ ունկնդրում եմ «Համշենական գրուցարան» ռադիո-հաղորդաշարը, որի ծնունդը և պարբերական թողարկումները նույնպես հարգելի Սերգեյ Վարդանյանի մտահղացումներից են:

Այս ռադիոհաղորդման առաջին իսկ ելևեջներից Հոգիս ալեկոծվում է, և այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ այն սկսվում է համշենահայերին հատուկ շատ տխուր մի մեղեդու հնչյուններով, որոնք ուղեկցվում են աննման բարբառիս բերանացի խոսքերով՝ հնչեցված անծանոթ համշենցի կնոջ կողմից, ալեկոծելով ոչ միայն իր հարազատ երանգով, այլև ասածի իմաստով, որը ոչ այլ ինչ է, քան հայկական կարոտի բառամարմին ստացած ցավ...

Պարբերականի և ռադիոհաղորդաշարի բոլոր, շեշտում եմ՝ ԲՈՒՈՐ նյութերը ոչ միայն հետաքրքիր են և անհրաժեշտ ամենքիս համար, մանավանդ՝ ծագումով համշենցի հայերիս համար, այլև կատարում են ազգը համաձուլող, նրան կուռ ու միահամուռ մնալու կոչող խոսնակի դեր»:

Թերթի հաջորդ էջում (էջ 3) տպագրվել են Համշենի բարբառով Ռ. Խաստյանի գրված բանաստեղծությունները և դրանց գրական հայերեն թարգմանությունները:

19. Իշխան Անդրանիկեան, Աբխազիա այցելութեանս նպատակը եւ Աբխազիոյ հայ գաղութին մասին, «Ազդակ», **Բացառիկ**, Պէրոյթ, 2017, ապրիլ 24:

Եղեռնի տարիներին իրար կորցրած մոր՝ Զանակի և որդու՝ Սամվելի 43 տարի անց հանդիպման մասին «Ձայն համշենականում» հրապարակումների (2011, № 3-4, 5-6, 11-12) շնորհիվ իր ազգականներին գտած Սամվելի որդու՝ Իշխան Անդրանիկյանի Աբխազիա այցի մասին է (էջ 114-121), որտեղ հիշատակվում են նաև Ս. Վարդանյանը (էջ 118) և «Ձայն համշենական» թերթը (էջ 118, 121):

20. Լուսինե Մխիթարյան, Համշենահայ գրականության հետքերով. Պետական աջակցությամբ լույս է տեսել «Գրական Համշեն» ավանախը, «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, Երևան, 2017, ապրիլի 27, № 76, էջ 5:

Հոդվածագիրը ներկայացնում է գիրքը և ՀԳՄ Կլոր սրահում կայացած շնորհանդեսը. «Իր խոսքում «Ձայն համշենական» թերթի գլխավոր խմբագիր Սերգեյ Վարդանյանը գրքի հրապարակումը դիտարկել է որպես գավակի ծնունդ»:

21. Արմեն Շավարշի Սարգսյան, Ջավեշտի դրսևորման միջոցները հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017 (-300 էջ):

Բ.գ.թ. Ա. Սարգսյանը նշում է. «Ի դեպ, արևելահայերենում և համշենահայոց բարբառում ևս որոշ բառեր հակառակ իմաստներ ունեն: Այսպես, **փոսը** արևելահայերենում **վիրասպ** հասկացությամբ է գործածվում, իսկ Համշենի բարբառում **փոս** նշանակում է **հարթ տարածք, հարթավայր, հրապարակ**» (էջ 54): Հղում է արվում Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը...» (2009) գրքի էջ 325-ին:

22. Հասմիկ Խաչատրյան, Սենյակ հասկացության բառանունները բարբառային հայերենում // **Գիտական հոդվածների ժողովածու**, ժողովածուն նվիրվում է Գրիգոր Ղափանցյանի 130-ամյակին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, «Աստղիկ», 2017, էջ 164-173:

Լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ.գ.թ. Հ. Խաչատրյանի հոդվածում հիշատակվում են նաև Ս. Վարդանյանը և նրա «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը...» (2009) ուսումնասիրությունը. «Ս. Վարդանյանը Խոփայի համշենահայերի խոսվածքում փաստել է **կօրք, քօրք, գօրք** բառաձևերը **նախասենյակ, կողասենյակ** և **փացիսա՝** ճաշասենյակ իմաստներով բառերը, որոնց ծագումը մեզ անհայտ է» (էջ 171):

23. Հասմիկ Խաչատրյան, Տան բաղկացուցիչ մասերի անվանումները բարբառային հայերենում // **«Ջահուկյանական ընթերցումներ»** միջազգային գիտաժողով, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, 2017, հունիսի 15-17, զեկուցումների ժողովածու, Երևան, «Գիտություն» հրատ., 2017 (-389 էջ), էջ 144-159:

Բ.գ.թ. Հ. Խաչատրյանը զեկուցման մեջ հղում է կատարել նաև Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը...» (2009) գրքի 316 և 317 էջերին. «Ս. Վարդանյանը համշենահայերի մոտ մթերքի պահեստ իմաստով գրանցել է **սարբեն** բառանունը, ինչպես նաև **սերենդեր** բառաձևը, որը գետնից 2-3 մետր բարձր փայտե սյուների վրա կառուցված, չորս կողմից բաց պատշգամբով շրջափակված տախտակամած մթերանոց է» ( էջ 155):

24. Ժաննա Միքայելյան, Բայի երկրորդական վերլուծական ժամանակները հայերենի արևմտյան խմբակցության բարբառներում // **«Ձահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողով**, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, 2017, հունիսի 15-17, զեկուցումների ժողովածու, Երևան, «Գիտություն» հրատ., 2017 (-389 էջ), էջ 274-285:

Լեզվի ինստիտուտի աշխատակից, բ.գ.թ. Ժ. Միքայելյանն անդրադարձել է նաև «Ձայն համշենական» թերթի 2016 թ. № 3-4 և 5-6 համարներում տպագրված Ս. Վարդանյանի «Բանահյուսական գրառումներ Արդվինի նահանգում» հրապարակման **«Ձագե»** զվարճախոսությանը, նաև «Բանահյուսական գրառումներ Արդվինի նահանգի Օսմանիյե գյուղում» հրապարակման մեջ նրա գրառած մեկ խաղիկում առկա քերականական ձևերին՝ առանց հոդվածագրի՝ բանահավաքի ու թարգմանչի անունը, հոդվածների վերնագրերը, բանահյուսական նյութերի գրառման վայրերը նշելու, բավարարվելով միայն թերթի այդ համարներին հղելով. «Անհրաժեշտ ենք համարում օգտվել նաև «Ձայն համշենական» ամսաթերթի՝ տարբեր տարիներին լույս տեսած համարներում տպագրված բարբառային նյութերից: Դրանցում գործածված բայերի խոնարհված ձևերը հաստատում են Հ. Աճառյանի հիշատակածն առ այն, որ հենց գլխավոր բաղադրյալ ժամանակներում օժանդակ բայի դերը ստանձնել է **ունիմ**-«ունենալ» բայը: Օրինակ՝ ... խաբար **տրված ունիմ**: Դադան մօրե **դեսաձ ունի** անա, լալօվ **ասթաձ ունի** թա...: Բերված նախադասություններում խոնարհված բայերի թարգմանություններն են՝ տվել է, տեսել է, ասել է: Այլ օրինակներ. Թէլան բադ **ադաձ ունիմ**... Կուրբօն վադ **ադաձ ունիմ**: Նույն բայը՝ ուղիղ խնդրի հետ, մի անգամ թարգմանվում է՝ «ցանկապատ եմ **ասարքել**», մյուս նախադասությունում՝ «խոստում եմ տվել»: Հետաքրքիր է նշել, որ հիշյալ լրագրերում բարբառային նյութերին անմիջապես հաջորդում են գրական արևելահայերեն թարգմանությունները:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ Համշենի բարբառում բայի երկրորդական հարադրական կառույցներ, իրոք, չեն դիտվում: Ի դեպ, մեր քննած տարբեր բարբառներին վերաբերող նյութերում առաջին անգամ է հանդիպում, որ եմ օժանդակ բայի փոխարեն գործառի **ունիմ**-ը» (էջ 279-280):

25. Վահե Սայադյան, Կրոնական կազմակերպությունների սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրները Հայաստանի Հանրա-

պետությունում, ՀՀ ոստիկանության կրթահամալիր, «ՄԻՍՄԱ» ՍՊԸ, Երևան, 2017 (-168 էջ), էջ 100-101:

Հեղինակը, մեկ հատված վերապատմելով, հղում է կատարում Ս. Վարդանյանի «Ազգային փոքրամասնությունները՝ որպես կրոնական փոքրամասնություններ» հոդվածին, տե՛ս «**Օրբան**», օրաթերթ, Երևան, 2003, հունիսի 27, № 106 (252), էջ 6:

26. Նունե Փեն, Կյանքամեջում սղված երիտասարդություն, Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2017 (- 92 էջ):

Նունե Փենը (Փեներջյան) երիտասարդ տարիքում ընտանիքի հետ տեղափոխվել է Լոս Անջելես: Վիպակն արտագաղթածների բազմաթիվ դժվարությունների և հայրենիքի անամոք կարոտի մասին է: Անձանոթ, տաղանդավոր հեղինակի անտիպ վիպակը համացանցում կարդալով՝ Ս. Վարդանյանը որոշ հատվածներ է տպագրել «Ձայն համշենական» թերթում, 2016, № 7-8 (144-145), էջ 1-3:

2017 թ. Երևանում հրատարակված գրքի 91-րդ էջում Ն. Փենը շնորհակալություն է հայտնում «բոլոր նրանց, ովքեր աջակցեցին գրքի լույսընծայմանը», այդ թվում՝ Ս. Վարդանյանին:

2018

### Մռաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Հայերեն յուրահատուկ բառեր Թուրքիայի համշենցիների խոսվածքում // **Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ № 1**, Հայ ժողովրդական մշակույթ XVII, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Ստեփան Լիսիցյանի ծննդյան 150-ամյակին նվիրված ժողովածու, Երևան, ՀԱԻ հրատ., 2018 (-508), էջ 491-502:

Հոդվածում անդրադարձ է կատարվում Թուրքիայի Արդվինի նահանգի բարբառախոս և Ռիզեի նահանգի թուրքախոս իսլամ համշենցիների խոսքում օգտագործվող հայերեն մի շարք յուրահատուկ բառերի՝ **սիյոյ, փեթա-ձաքլար, քեղալբոյիք, թուսթերչիչ, գարմեզուցք, բօքբեյոս, լաթգախ, փոօց, ձիափ**: Որոշ դեպքերում դրանք համեմատվում են Սև ծովի հյուսիսային ափերին բնակվող քրիստոնյա համշենահայերի օգտագործած նույնանիշների հետ:

2. Տառապանքի փշոտ ճանապարհներին, «**Ազդակ**», օրաթերթ, Պեյրուք, 2018, մայիսի 3, № 46, էջ 5:

Ե. Զաքարյանի «43 տարի անց» հուշագրությունը «**Ձայն համշենական**» ամսաթերթից (2011, № 3-4) «Ազդակ» թերթում արտատպվելուց (տե՛ս 2018,

ապրիլի 24, № 40, էջ 4, ապրիլի 30, № 44, էջ 6, մայիսի 1, № 45, էջ 6) հետո արտատպվել է նաև այդ հուշագրությանն առնչվող Մ.Վարդանյանի հոդվածը, ցավոք, առանց աղբյուրը՝ «**Ձայն համշենական**» ամսաթերթը (2011, № 5-6) նշելու:

3. Մուսուլման համշենահայերից գրառված մի զվարճախոսության տարբերակների համեմատությունը հայկական, թուրքական և պարսկական փոփոխակների հետ // ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանի ծննդյան 125-ամյակին նվիրված գիտաժողովի ծրագիր, Երևան, 2018, էջ 4:

Գիտաժողովը անց է կացվել 2018 թ. հունիսի 26-ին և 27-ին ՀՀ ԳԱԱ նախագահության Մեծ դահլիճում:

4. Սերգեյ Վարդանեան, Աբխազիայի հայկական դպրոցների տխուր վիճակագրությունը, «**Նոր Յառաջ**», երկօրյա թերթ, Փարիզ, 2018, յուլիս 21, № 1229, էջ 5, 6:

Արտատպված է «**Ձայն համշենական**» ամսաթերթից, 2017, № 11-12, էջ 1, 2:

### **Երկրորդ բաժին (հարցազրույցներ)**

5. Պատմում է Յանգուն Հուսեփի ծոռը՝ Աիդա Մարգարյանը, զրուցեց Սերգեյ Վարդանյանը, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2018, հունվար-փետրվար, № 1-2:

Յանգուն Հուսեփը եղել է ճանաչված ֆիդայի, նրա մասին որոշ մանրամասներ է պատմում ծոռը՝ Աբխազիայում ծնված Աիդա Մարգարյանը: Թերթի նույն համարում տպագրվել է նաև գրող Արշավիր Զիդարյանի «Յանգուն Հուսեփը» (1958) պատմվածքը:

6. Աջարիայի հայերի կրթամշակութային կյանքից, զրուցեց Սերգեյ Վարդանյանը, «**Ձայն համշենական**», ամսաթերթ, Երևան, 2018, հունվար-փետրվար, № 1-2:

Հարցազրույցը Բաթումի Մ. Մաշտոցի անվան մեկօրյա դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Սաթենիկ Դանիելյանի հետ է:

### **Երրորդ բաժին**

7. Վարդանյան Սերգեյ Գագիկի // **Հանրագիտական բառարան**, 2 հատորով, հատոր 2, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2018 (- 1144 էջ), էջ 923:

Ս. Վարդանյանի համառոտ կենսագրությունն է, որտեղ թվարկվում են գրքերը, մրցանակները և մեդալները:

Կրոնի գործերի պետխորհրդում աշխատելու վերջին տարին՝ 2002, սխալմամբ տպագրվել է 2001:

Տե՛ս նաև նույն հանրագիտարանի «Ձայն համշենական» հոդվածը, էջ 236-237:

8. «Ձայն համշենական» // **Հանրագիտական բառարան**, 2 հատորով, հատոր 2, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2018 (- 1144 էջ), էջ 236-237:

««Ձայն համշենական» պատմ., ազգագր., բանահյուս., գր. ամսաթերթ (2004-ից, Երևան): «Համշեն» հայրենակց-բարեգործ. ՀԿ-ի հրտ-յուն: Հիմնադիր-խմբ.՝ Սերգեյ Վարդանյան»:

Ավելացնենք, որ թերթի վերջին միացյալ համարը լույս է տեսել 2018 թ. հունվար-փետրվարին № 1-2 (162-163), որից հետո դադարել է հրատարակվել:

Տե՛ս նաև նույն հանրագիտարանի «Վարդանյան Սերգեյ Գագիկի» հոդվածը, էջ 923:

9. Թադևոս Տոնոյան, Խնդիրը տաղանդն է, «**Գրական թերթ**», շաբաթաթերթ, Երևան, 2018, հունիսի 29, № 22, էջ 3:

Մանկապատանեկան «Աղբյուր» (նախկին՝ «Պիոներ») ամսագրի գլխ. խմբագիր, բ.գ. թ., բանաստեղծ Թ. Տոնոյանն իր հոդվածում կարևորում է մանուկների և պատանիների համար գրելը, այն համարում է տաղանդի նշան և անցյալից բերում է օրինակներ, թե ինչպես նշանավոր գրողներն ու գիտնականները՝ արձակագիր Հրանտ Մաթևոսյանը, արվեստաբան Լևոն Հախվերդյանը, ճարտարապետ Վարազդատ Հարությունյանը, բանասեր Ռաֆայել Իշխանյանը ժամանակին չզլացան և ամսագրի պատանի ընթերցողների համար պատմվածքներ ու հոդվածաշարեր գրեցին, իսկ «ազգագրագետ Սերգեյ Վարդանյանը գրեց ու ամսագրի յուրաքանչյուր համարում ներկայացրեց հայոց մայրաքաղաքներից հերթականը»: Նկատի ունի «Պիոներ» ամսագրի 1983 թ. № 1-12-ում տպագրված Ս. Վարդանյանի «Հայոց մայրաքաղաքները» հոդվածաշարը:

10. Հասմիկ Խաչատրյան, Իրականության յուրահատուկ ընկալման բառային դրսևորումներ Համշենի բարբառում // «**Ձահուկյանական ընթերցումներ**», Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, Ասողիկ հրատ., 2018 (274 էջ), էջ 113-123:

Լեզվի ինստիտուտի աշխատակից, բ.գ.թ. Ն. Խաչատրյանը **թել պանիր, կաթնաշոռ** նշանակող «**վոզնադ**» բառի առնչությամբ (էջ 115) հղում է Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը» (2009) գրքի 318-րդ էջին:

11. Հասմիկ Խաչատրյան, Օիսապաշտամունքային որոշ բառեր Համշենի բարբառում // Հայերենագիտության արդի խնդիրներ (գիտական հոդվածների ժողովածու), ժողովածուն նվիրված է ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հիմնադրման 75-ամյակին, Էլ. հրատ., 2008 (- 110 էջ), էջ 41-50:

Հոդվածում հղում է արվում նաև Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը» (2009) գրքի 117 և 278 էջերին. «Ի հաստատումն այս ամենի, ըստ Ս. Վարդանյանի վկայության՝ **բուբրիզը** Համշենի բարբառում ծիսական տիկնիկն է» (էջ 44):

12. Hrach Martirosyan, The Armenian dialects // **The languages and linguistics of Western Asia, an areal perspective** (edited by Geoffrey Haig, Geoffrey Khan), Series: The world of linguistics, vol. 6, Berlin, Boston, De Gruyter Mouton, 2018, p. 46-105.

Նիդեռլանդների Լեյդեն քաղաքի համալսարանի աշխատակից, բ.գ.թ. Հրաչ Մարտիրոսյանի հոդվածը նվիրված է հայերենի բարբառներին, հիշատակվում է նաև Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը» (2009) գիրքը (էջ 53, 103):

13. Avedis Hadjian, Secret Nation. The Hidden Armenians of Turkey, I. B. Tauris & Co.Ltd, London·New York, 2018 (- XX+572 p.).

1968 թ. Հալեպում ծնված, Բուենոս Այրեսում, Նյու Յորքում, վերջին տարիներս Վենետիկում ապրող լրագրող Ավետիս Հաճյանի «Գաղտնի ազգ. Թուրքիայի ծածուկ հայերը» անգլերեն սովորածավալ գրքի 32 ենթագլուխներից 2-ը (29-րդ՝ էջ 413-432 և 32-րդ՝ էջ 464-541) նվիրված են իսլամ համշենցիներին: Առաջաբանում հեղինակը շնորհակալություն է հայտնում բոլոր նրանց, ովքեր օժանդակել են գիրքը գրելուն: Նրանց թվում հիշատակվում է նաև Ս. Վարդանյանը. «In Yerevan, Sergey Vardanyan, with his pioneering research on the Hamshen Armenians, lent his selfless support», p. XI, (թարգմանությունը՝ Ավետիս Հաճյանի. «Երևանում Սերգեյ Վարդանյանը համշենահայերի մասին իր ռահվիրայական հետազոտությամբ անձնվեր աջակցություն ցույց տվեց», էջ XI): Մի փոքր պարզաբանեմ, թե հավանաբար ինչ նկատի ունի Ա. Հաճյանը: Նրա հետ ծանոթացել եմ 2010 թ.: Նա Նյու Յորքում համշենցիների մասին զեկուցում պիտի կարդար և հաճախ այնտեղից ինձ էր զանգահարում թեմային առնչվող հարցերով:

«Չայն համշենական» ամսաթերթի 2010 թ. № 3-4-ում հրատարակվեց «Թրքաբնակ համշենահայերու մասին դասախօսութիւն Նիւ Յորքի մէջ» վերնագրով հոդված, որը պատմում էր մարտի 26-ին «Հայ կեդրոնում» իր դասախոսության մասին, որը նվիրված էր ֆեյսբուքի օգնությամբ Թուրքիայի 87 համշենցիների շրջանում Ա. Հաճյանի անցկացրած հարցման արդյունքներին: Այդ նույն հարցման շատ մանրամասն տվյալները հրատարակվեցին թերթի № 9-10-ում: «Վիճակագրութիւն. Հարցախոյզ համշենցիներու մէջ (մարտի 10-20, 2010)» վերնագրով իր հոդվածի առաջաբանում Ա. Հաճյանը նշում է. «Այս գործը կարելի պիտի չլլար առանց թանկագին օգնութեան Սերգեյ Վարդանեանի, Արտաշ Չիլինկիրողլուի, Արփի Չանքարի եւ Մուրատ Քուրթուի»: Հետագայում էլի հանդիպումների և հեռախոսազրույցների առիթներ եղան:

Ա. Վարդանյանը հիշատակվում է նաև գրքի 473-րդ էջում՝ Արդվինի նահանգի Խոփայի գավառի Չավուշլու գյուղում տեղացիների հետ Ա. Հաճյանի զրույցի դրվագում. “We are starving for history,” said Yaver, a man in his 20s in Çavuşlu. He was with his mother and a friend outside their house, and they initially reacted with misgivings. “He may be a policeman”, Yaver later joked in Hamshetsnak, also curious to know where I had learned their language, smiling but still a tad suspicious. Yet they warmly welcomed me into their home with tea and cookies spread on the table, for far more often than not, in Hamshen as elsewhere in the land, hospitality was the attitude that prevailed toward the traveler. His mother was excited. She had found out only five years ago that the Hamshentsis were of Armenian descent, and she was still in awe of the discovery that had been brought by a professor from Yerevan—she was probably talking about Sergey Vardanyan” (թարգմ.՝ «Մենք պատմություն իմանալու սով ունենք»- Չավուշլուում ասաց մի 20 անց մարդ՝ Յավերը: Նա իր մոր ու ընկերոջ հետ կանգնած էր տան բակում, և իրենք ի սկզբանե վախով արձագանքեցին: «Նա կարող է ոստիկան լինել» – ավելի ուշ համշեցնակ կատակեց Յավերը: Նա նաև ժպտալով, բայց դեռ մի փոքր կասկածամտորեն հարցրեց, թե որտեղ եմ ես սովորել իրենց լեզուն: Չնայած դրան, նրանք ինձ ջերմորեն տուն հրավիրեցին, որտեղ սեղանին թեյ և թխվածքաբլիթ կար: Նրա մայրը ոգևորված էր: Նա ընդամենը հինգ տարի առաջ էր բացահայտել, որ համշենցիները հայկական ծագում ունեին, և նա այդ բացահայտումով պարտական էր Երևանից մի պրոֆեսորի – նա հավանաբար խոսում էր Սերգեյ Վարդանյանի մասին»):

Գրքի «Farther Reading» (թարգմ.՝ Լրացուցիչ գրականություն) բաժնի ոչ ընդարձակ ցանկում նշվում է (էջ 556) նաև Ս. Վարդանյանի «Կրոնավորի համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը» (2009) գիրքը:

2019

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Իսլամացված համշենահայերից գրառված մի գվարձապատումի յոթ տարբերակների մասին // **Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր**, 10-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, Գյումրի, 27-29 սեպտեմբերի, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Երևան, Գյումրի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019 (- 536 էջ), էջ 341-343:

Ռուսերեն տարբերակը՝ О семи вариантах забавной истории, записанной у исламизированных амшенских армян, с. 343-344. Անգլերեն տարբերակը՝ On the seven variants of a funny story recorded from islamized Hamshen Armenians, p. 344.

2. Ali aşun Kuka // VOVA, Garmi DOÇ, Istanbul, ADA Müzik, 2019.

Ստամբուլաբնակ համշենցի երգիչ Հիքմետ Աքչիչեքի VOVA (Վով ա՞, ո՞վ է), վոկալ-գործիքային խմբի «Garmi DOÇ» («Կարմիր ԴՕՉ», ԴՕՉ-ը Խոփայի գավառում շատ տարածված կարմիր բեռնատարների անվանումն է) խտասկավառակի «Ալի աշուն քուբա» երգի, ինչպես նշված է այբումում (էջ 24, 35, 37), 2-5-րդ քառյակները 1984 թ. Ս. Վարդանյանը գրառել է Ղրղստանում, Սուվեյման Քարաիբրահիմօղլուից, որը 1978 թ. այցելելով Թուրքիա, Խոփայի գավառի Չաուշլու գյուղում ձայնագրել է իր ազգականներին երգելիս: Դրանցից մեկը՝ «Ցունե էլեվ, փրրնեց չամին դալինե» սկզբնատողով երգը քանիցս հրատարակել է Ս. Վարդանյանը, տե՛ս Ս. Վարդանյան, Համշենի մուսուլման հայերը, «Փյունիկ», պարբերաթերթ, Երևան, 1991, հունվարի 25, № 1, էջ 3, 4: Նույնի՝ Համշենի մուսուլման հայերը, «Իրան-նամե», հանդես, Երևան, 1993, № 4, էջ 12, 13:

«Ասա, բիձիգ, ասա» վերնագրված երգը, նոտագրված տե՛ս նույնի՝ Կրոնավորի համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), Երևան, ԵՊՀ, 2009 (- 428 էջ), էջ 205-210:

Հ. Աքչիչեքը երգի վերջում հավելել է 6-րդ քառյակը և «Ալի աշուն քուբա» սկզբնատողով մեկ քառյակ՝ սկզբում (գրառող՝ Սերաֆեթթին Չելիք), որը դարձել է երգի նոր վերնագիրը:

3. Norhars Ellim // **SAMIDA**, Alaca, Istanbul, Kalan Müzik, 2019.

Ստամբուլի “Kalan Müzik” ստուդիան 2019 թ. թողարկել է “**SAMIDA**” վոկալ-գործիքային համույթի “Alaca” (Ալաջա, թուրք.՝ խայտաբղետ, գույնգույն) անունով առաջին խտասկավառակը: «Մամի դա» վրացերեն նշանակում է «երեք քույր», և իսկապես, երգչուհիները՝ Դամլա, Յուլուս և Թամարա Շահինները քույրեր են, որոնք թուրքերեն և վրացերեն երգերի հետ երգում են նաև մեկ երգ Համշենի բարբառի Խոփայի խոսվածքով: Այն 1984 և 1987 թթ. Ղազախստանի համշենցիներից Ս. Վարդանյանի գրառած «Նորհարս էլլիմ» երգն է, որին երգչուհիները ծանոթացել են Այշենուր Քոլիվարի 2012 թ. Ստամբուլում թողարկված «Bahçeye Hanımeli» (թարգմանություն՝ «Տիկնաթաթիկ պարտեզի համար») խտասկավառակից, տե՛ս Ս. Վարդանյան, Այշենուր Քոլիվարի հայերեն երգերը, «**Չայն համշենական**», 2013, № 3-4, էջ 4, 5:

Ի դեպ, նրանք ստամբուլաբնակ իսլամ վրացի հանրահայտ երգիչ Բայար Շահինի դուստրերն են: Բայար Շահինը ծնվել է 1965 թ. Արդվինի նահանգի Բորչքայի գավառի Ջամիլի գյուղում, 2007 թ. թողարկված իր “Nalia” (Նալիա՝ «սարբեն») անունով խտասկավառակում ընդգրկել է Համշենի բարբառի Խոփայի խոսվածքով մեկ երգ՝ «**Գասադ մենուշ**» (Կարոտ մնալ, խոսքի և երաժշտության հեղինակ՝ Հարուն Աքսու):

Երգչի մասին, նաև երգի թարգմանությունը տե՛ս Ս. Վարդանյան, Երկու երգ Արդվինի նահանգի Խոփայի և Բորչկայի գավառներից, «**Չայն համշենական**», 2013, № 11-12, էջ 8:

Յավոք, երգը և թարգմանությունը տպագրվել են որոշ սխալներով:

4. Վեճը (պատմվածք) // **Մայրենի 4**, Դասագիրք 4-րդ դասարանի համար, մաս 2 / Կ. Թորոսյան, Վ. Սարգսյան, Հ. Խաչատրյան, Կ. Չիբուխյան, նկարիչ՝ Խ. Հակոբյան: Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից, Երևան, ՄԱՆՄԱԸ, 2019 (էջ 80-176 = 96), էջ 86-88:

Հրատարակվել է 2009, 2012, 2015, 2018, 2019 և 2022 թթ.:

### **Երկրորդ բաժին (հարցազրույցներ)**

5. Հիսուն տարի անց... Կրկին համշենահայերի մասին, գրույց համշենագետ Սերգեյ Վարդանյանի հետ, գրույցեց Գևորգ Գյուլումյանը, «**Ազգ**», շաբաթաթերթ, Երևան, 2019, հուլիսի 19 (№ 28), էջ 5, 6:

Հարցազրույցը համշենահայերի հետ 1969 թ. Ս. Վարդանյանի առաջին ծանոթության, 1979 թ. նրանց նվիրված հոդվածի, հետագա տասնամյակ-

ներում Ռուսաստանում, Արխագիայում, Կենտրոնական Ասիայում և Թուրքիայում համշենցիների ուսումնասիրությունների մասին է: Հարցազրույցում անդրադարձ կա նաև 2016 թ. Անկարայում տպագրված Ռեմզի Յըլմազի «Տափաստանների հեծյալ, քոչվոր համշենցիները» թուրքերեն և 2017 թ. Բաքվում լույս տեսած Արազ Քուրբանովի «Մուսուլման հայեր» տարածաշրջանում աշխարհաքաղաքական խաղերի նոր մասնակիցներ» ադրբեջաներեն գրքերին:

Խոսվում է նաև հայերեն Վիքիպեդիայում տեղադրված «Համշենահայերի ապստամբություն Թուրքիայում» հոդվածի մասին, որի հղումը Մոսկվայում ռուսերեն տպագրվող «**Ноев ковчег**» (Նոեվ կովչեգ) թերթի 2014 թ. համարներից մեկն է: Ս. Վարդանյանն անդրադառնում է այդ ապատեղեկատվությանը նախորդող Երևանի «**Новое время**» (Նովոե վրեմյա) ռուսերեն թերթի 2014 և 2015 թթ. հրատարակումներին, Մոսկվայի «Ռուս-հայկական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի» կայքէջում դրանց տեղադրմանը: Այդ կայքէջից օգտվելով Գ. Սարոյանը 2015 թ. Կրասնոդարում տպագրված հայ ժողովրդի պատմությանը նվիրված իր ռուսերեն գրքում, վստահելով հեղինակավոր լրատվամիջոցներին, վերապատմում է այդ կեղծիքը և անզուշաբար այն տարածում: Հարցազրույցում խոսվում է նաև 2018 թ. փետրվարին «Չայն համշենական» թերթի տպագրությունը դադարեցնելու մասին:

Տպագրվել է Ս. Վարդանյանի լուսանկարը Համշենում:

### **Երրորդ բաժին**

6. Լուսինե Սահակյան, Համշենը հայկական ձեռագրերում, խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Մերգեյ Վարդանյան, ԵՊՀ, Երևան, 2019 (- 364 էջ + 132 էջ ներդիր և քարտեզ):

Բ.գ.թ., թուրքագետ, դոցենտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների հայ-օսմանական առնչությունների բաժնի ղեկավար Լ. Սահակյանն իր մենագրության մեջ Ս. Վարդանյանին և նրա ուսումնասիրությունները հիշատակում է 2, 15, 17, 21, 38, 44, 58, 74, 130, 141, 145, 146, 147, 148, 195, 199, 247, 248, 249, 253, 282, 332, 348, 364 էջերում:

Քաղվածքներ գրքից. «Առանձին հարցերի քննության և պարզաբանումների համար կարևոր են եղել 2010, 2011, 2012, 2013 թթ. Համշենում մեր կատարած դաշտային աշխատանքները, որոնց մի մասին մասնակցել է նաև

գրքիս խմբագիր Ս. Վարդանյանը» (էջ 15), «Օգտակար և արժեքավոր խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում գրքի խմբագիր, համշենագետ Սերգեյ Վարդանյանին» (էջ 16-17), «Ծնունդով Ռիգեի նահանգի Փազարի գավառի Խաչափիթ գյուղից համշենցի մտավորական Իբրահիմ Քարաջան հրապարակել է իր մեծերից լսած վախը չափելու աղոթքը...: Սերգեյ Վարդանյանը մեզ հուշեց, որ նման մի վախ չափելու աղոթք էլ ինքն է գրառել Համշենի բարբառի Խոփայի խոսվածքով՝ Արդվինի նահանգի Բորչկայի գավառում, որի շնորհիվ հնարավոր է վերականգնել նաև Ի. Քարաջայի գրանցած աղոթքի նախնական տարբերակը և բացատրել... [գրքում տպագրվել է Ս. Վարդանյանի գրառածը և թարգմանությունը- Ս. Վ.]» (էջ 141), «Խոփայի համշենցիներից փերիների մասին պատմություններ գրանցել է նաև Ս. Վարդանյանը» (էջ 147), «Խիպիլիկի մասին պատմություններ է գրառել նաև Ս. Վարդանյանը՝ Արդվինի նահանգի Խոփայի և Բորչկայի գավառների համշենցիներից: Ըստ նրանց պատկերացումների... [այնուհետև գրքում պատմվում է խիպիլիկի մասին- Ս.Վ.]» (էջ 148):

«Համշենի հայ բնակչության իսլամացման և համշենցի Սերովբե քահանայի մասին պատմող բացառիկ և արժեքավոր սկզբնաղբյուր է Մխիթարյան հայր Պողոս վրդ. Մեհերյանի ձեռագիր հուշագրությունը: Այս սկզբնաղբյուրի՝ Համշենին վերաբերող հատվածները ծանոթագրելով հրատարակել է Ս. Վարդանյանը, ամբողջական աղբյուրը՝ Գ. Տեր-Վարդանյանը [այնուհետև վերապատմվում է Համշենին վերաբերող հատվածը – Ս.Վ.]» (էջ 247-249), «Ի դեպ՝ Ս. Վարդանյանը 1984 թ. Կրասնոդարի երկրամասի Մայկոպ քաղաքի մոտ՝ Պրոլետարսկի հայաբնակ գյուղում, հանդիպում է Կարապետ քահանայի սերունդներից մեկին՝ կալաֆկացի 84-ամյա Մարգար Դուկայանին, որի տան պատին փակցված էր 1906 թ. նրա պապի գործած կարպետը՝ հյուսված հետևյալ գրությամբ «Տեր Խորեն քահանայ Տեր Կարապետի, ծն. 1831 թ.»» (էջ 253) և այլն:

7. Համշենը՝ հայկական ձեռագրերում, «**Հայաստանի Հանրապետություն**», օրաթերթ, Երևան, 2019, մարտի 19, թիվ 47, էջ 5:

Հոդվածն անստորագիր է, պատմում է ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հայ-օսմանական առնչությունների բաժնի ղեկավար, թյուրքագիտության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Լուսինե Սահակյանի «Համշենը հայկական ձեռագրերում» մենագրության շնորհանդեսի մասին, որը տեղի է ունեցել ԵՊՀ Չարենցի անվան դահլիճում, մարտի 18-ին: Բեմ է հրավիրվել նաև գրքի խմբագիր Ս. Վարդանյանը. «Այնուհետև ելույթ ունե-

ցավ ազգագրագետ, բանահավաք Մերգեյ Վարդանյանը՝ շեշտելով, որ գրքի շնորհանդեսը տոնի է վերածվել: Նա պատմեց ուսումնասիրությունների ընթացքի ու առաջացող բարդությունների մասին»:

8. Ասպրամ Ծառուկյան, «Մտա ցուցասրահ ու ձայնեցի՝ Նիկո՛, որտե՞ղ ես»..., «**Իրատես**», եռօրյա թերթ, Երևան, 2019, հունիսի 28-հուլիսի 1, թիվ 46, էջ 10, 11:

Ընդարձակ հոդվածը նվիրված է տաղանդաշատ նկարիչ Նիկոլայ Մանուկյանի (Նիկո) հետմահու ցուցահանդեսին, նրա անցած ուղուն: Հոդվածագիրը ցուցասրահում հարցեր է տալիս Նիկոյի հին ընկերներին, այդ թվում՝ Համազգային հայ կրթական մշակութային միության հիմնադրամի նախագահ, արձակագիր Սպարտակ Ղարաբաղյանին և Ս. Վարդանյանին. «Ա.Ծ. - Ցուցահանդեսի մի առանձին բաժնում ներկայացված էին Նիկոյի ձևավորած գրքերը: Ազգագրագետ Մերգեյ Վարդանյանը հիացմունքով էր հիշում, թե ինչ ներշնչանքով է Նիկոն 1981 թ. ձևավորել նրա կազմած «Հրեղեն ձին» բանահյուսական ժողովածուն: Եվ կատակով ասաց, այդ տարիներին ոմանք այդ գիրքը գնում էին՝ դուստրերի օժիտում դնելու, որպեսզի նրանք հետո կարդան իրենց զավակների համար: Նիկոն ձևավորել է նաև Մերգեյ Վարդանյանի կոչով 1978-1982 թթ. Վրաստանի, Աբխազիայի, Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի ԻՄ, Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասի հայկական դպրոցների երեխաների հավաքած բանահյուսական նյութերով ստեղծված հաջորդ «Թագավորի երազները» հեքիաթների և զվարճապատումների ժողովածուն, որ, ցավոք, շատ ուշ տպագրվեց՝ 2003-ին: Մերգեյն ավստասանքով ասաց, որ ցուցահանդեսում փնտրեց այդ գրքի համար Նիկոյի արած ձևավորումները՝ մոտավորապես երեք տասնյակ գունազեղ, հեքիաթային նկարներ, բայց չգտավ: Գուցե հաջորդ ցուցահանդեսին լինեն: Որպես բնագիր՝ դրանք ավելի գեղեցիկ են»:

9. Наталья Оганова. Гёкхан Бирбен: Мы говорим на разных языках, но песни поём на одном, “**Ноев Ковчег**”, еженесячная газета, г. Москва, 2019, декабрь, № 12 (323), с. 18.

Հոդվածը ծնունդով Թուրքիայի Ռիզեի նահանգի Փագարի գավառի Խաչափիթ գյուղից համշենցի երգիչ Գյոքհան Բիրբենի՝ 2019 թ. նոյեմբերի 15-ին Հայֆիլհարմոնիայի Առնո Բաբաջանյան դահլիճում կայացած համերգի մասին է: Հեղինակը մեջ է բերում Գյոքհան Բիրբենի բեմից ասած խոսքը համերգի կազմակերպիչների մասին, որոնց թվում է նաև «филолог, этнограф, прозаик, публицист, главный редактор газеты «Дзайн амшенакан» Сергей Вардамян»: Տպագրվել է Ս. Վարդանյանի լուսանկարը Գյոքհան

Բիրբենի և նրա հետ Համշենից, Տրապիզոնից, Ստամբուլից եկած երաժիշտների, ինչպես նաև Լուսինե Սահակյանի և Մարգոս Քեչյանի հետ:

10. Հասմիկ Խաչատրյան, Հինհայերենյան բառաշերտի որոշ իրողությունների արտացոլումը Համշենի բարբառում // **Ջահուկյանական ընթերցումներ**, գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019 (-224 էջ), էջ 66-75:

Լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ.գ.թ. Հ. Խաչատրյանի հոդվածում քանիցս հղում է արվում Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը» (Եր., 2009) գրքի 84, 87, 298, 330-րդ էջերին, տե՛ս հոդվածի հետևյալ էջերը, **օնլուր** բառի մասին՝ էջ 67, **գեջ**՝ էջ 71, **գործելի**՝ էջ 72, **ձառի գիլ**՝ էջ 72:

11. Բառնապյան Ջենմա, Հ. Թումանյանի «Սուտասանը» հեքիաթի գրառումները հայերենի տարբեր բարբառներով (լեզվամտածողության առանձնահատկություններ) // **Ջահուկյանական ընթերցումներ**, գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019 (-244 էջ), էջ 15-24:

Լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ.գ.թ. Ջ. Բառնապյանի հոդվածում հղում է արվում «**Ձայն համշենական**» թերթի 2012 թ. հունվար-փետրվար համարին, որտեղ տպագրվել է «Սուտասանի» Խոփայի խոսվածքով Ս. Վարդանյանի թարգմանությունը (էջ 18), նշվում է, որ ըստ Ս. Վարդանյանի, «թագավոր» բառը չկա Խոփայի խոսվածքում, գործառվում է «փաղիշահ», իսկ քրիստոնյա երկրի թագավորին ասում են «քռալ»:

12. Արմեն Շ. Մարգարյան, Վիշապը հայոց բառ ու բանում // **Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին [գիտական հոդվածների ժողովածու]**, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀԱԻ հրատ., 2019 (- 656 էջ), էջ 247-256:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ.գ.դ. Ա. Մարգարյանն իր հոդվածի 252-253-րդ էջերում անդրադառնում է նաև Ս. Վարդանյանի հրատարակած «Թագավորի երագները» (2003) բանահյուսական ժողովածուի «Փափագն ու Մանուկը» (էջ 106 -118) և «Վիշապ օձի և Նագանի հեքիաթը» (էջ 86), ինչպես նաև «Հրեղեն ձին» (1981) բանահյուսական ժողովածուի «Սըտանեն» (էջ 36-39) հեքիաթներին:

13. Hrach Martirosyan, The Armenian dialects: Archaisms and innovations; description of individual dialects, «**Армянский гуманитарный вестник**», № 5, Ереван, 2019, с. 164-258.

Հիշատակվում է Ս. Վարդանյանը, էջ 203, 204:

14. Հայկանուշ Մեսրոպյան, **Աղօթք** հասկացության բարբառային համարժեքները, «**Армянский гуманитарный вестник**», № 5, Ереван, 2019, с. 259-270.

«Բանահավաք Ս. Վարդանյանը գրի է առել Խոփայի և Բորչկայի մահմեդական համշենցիների վախի աղոթքի մի քանի տարբերակներ, որոնք կոչվում են վախի դուվա», էջ 264, «**Ձայն համշենական**», 2011, № 88, 89:

2020

### Երրորդ բաժին

1. Վարդանյան Սերգեյ Գագիկի // Հայ երգիծանքի հանրագիտարան, գիրք Գ, կազմ. Կարո Սթանոզ, Երևան, Հեղինակային հրատ., 2020 (- 316 էջ), էջ 258-260:

Հանրագիտարանի կազմողը՝ Պետրոս Մարկոսյանը, ծածկանուն է ընտրել Ցեղասպանությունից փրկված իր պապի և նրա ծննդավայրի՝ Անկարայի մոտակա Սթանոզ գյուղաքաղաքի անունները (էջ 247): «Հայ երգիծանքի հանրագիտարանում» տպագրվել են Ս. Վարդանյանի կենսագրությունը և լուսանկարը:

2. Երուանդ Տեր-Խաչատուրեան, Գեղանկարիչ Բարդուղ Վարդանեանի մասին, «**Պայքար**», շաբաթաթերթ, ք. Վաթերթատուն, Մասաչուսեթսի նահանգ, ԱՄՆ, 2020, յուլիսի 12, թիւ 28 (183), էջ 16:

ԵՊՀ երկարամյա դասախոս, ճանաչված գրականագետ և արվեստաբան, բ.գ.թ. Երվանդ Տեր-Խաչատրյանը (Յուրի Խաչատրյան) «Նամակներ երկրից» խորագրի ներքո հրատարակված հերթական՝ 103-րդ նամակը սկսում է այսպես. «Օրերս խօսում էինք նկարիչների եւ հայ նկարչութեան մասին, եւ ես խօսքի մէջ տուեցի Բարդուղ Վարդանեանի անունը: Մարդիկ անունը չէին լսել, թէպէտեւ գրականութեան, հանրային կեանքի, նաեւ մշակոյթի հետ առնչուող անձեր էին: Ճիշտն ասած, ես, նախ, անակնկալի եկայ, յետոյ, ի հարկէ, զարմացայ: Մեր մի ընկերը՝ Սերգեյ Վարդանեանը՝ Համշենի պատմութեամբ, համշենահայութեամբ գլխովին տարուած մարդ, իր գործի փայլուն գիտակը, խնդրեց, որ աւելի մանրամասն պատմեմ: Ես պատմեցի, յետոյ մտածեցի՝ ինչո՞ւ քեզ էլ չպատմեմ»:

3. Հասմիկ Խաչատրյան, Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանունների բարբառային պատկերը Արագածոտնի տարածաշրջանում // «**Արդի հայերենագիտության խնդիրներ**», գիտական հոդ-

վածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, Էլ. հրատ., 2020 (ժողովածուում նշված է 132 էջ, իրականում 196 էջ է), էջ 96-107:

Լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ.գ.թ. Հասմիկ Խաչատրյանը 104 և 105-րդ էջերում հղում է անում Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համընդհանրաբարձր, բանահյուսությունը և երգարվեստը» (2009) գրքի 117, 278 էջերին՝ «Ի դեպ, ըստ Ս. Վարդանյանի վկայության՝ **բուրբիզը** Համընդհանրաբարձրում ծիսական տիկնիկն է»:

4. Հասմիկ Խաչատրյան, Բառիմաստային յուրօրինակ զարգացումները Համընդհանրաբարձրում // «**Ձահուկյանական ընթերցումներ**», Ակադեմիկոս Գևորգ Ձահուկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հայերենագիտական միջազգային առցանց գիտաժողովի նյութեր (Երևան, 2020 թ., դեկտեմբերի 17-18), ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020 (ժողովածուի տվյալների բաժնում նշված է 198 էջ, իրականում 210 էջ է), էջ 77-87:

Լեզվի ինստիտուտի գիտաշխատող, բ. գ. թ. Հասմիկ Խաչատրյանի հոդվածում հղումներ են արվել Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համընդհանրաբարձրի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը» (2009) գրքի 291 և 287-րդ էջերին՝ **իժիր** բառին. «Կրոնափոխ համընդհանրաբարձրի շրջանում բառանունը արձանագրված է իժէէ, իժիյէ հնչյուններով «ամեն անգամ, ամեն ժամանակ, միշտ, մշտապես» էջ 81 և **թաթալ** բառի մասին՝ էջ 86:

5. Արմեն Շավարշի Սարգսյան, Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ (անեկդոտներ), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀԱԻ հրատ., 2020 (- 512 էջ):

Բ.գ.դ. Ա. Սարգսյանի մենագրությունը նվիրված է ժողովրդական զվարճապատումներին, երգիծական մանրապատումներին, հայ և օտարազգի զվարճախոսներին: Ս. Վարդանյանը և նրա գրքերն ու հոդվածները հիշատակվում են 40, 41, 84, 229, 231, 232, 268, 348, 349, 360, 361, 401, 488, 495, 496, 499, 502, 508 էջերում:

Գրքից հատված. «Արձակագիր, լրագրող, հետագայում նաև բանագետ-ազգագրագետ **Սերգեյ Վարդանյանը** 1978-1983 թթ. հայաստանյան և արտասահմանյան պարբերականներում դարոցականներին ուղղված կոչ է տպագրում՝ բանահյուսական նյութեր գրառելու հորդորով և լավագույնները տպագրելու խոստումով, ինչը անմիջապես տալիս է իր պտուղները:

Հայաստանի և արտերկրի երեխաները մեծահասակներից գրառում և խմբագրություն են ուղարկում մեծ քանակությամբ բանարվեստի նմուշներ, որոնց մեջ կան նաև բազմաթիվ ժողովրդական երգիծանքի դրսևորումներ: Ս. Վարդանյանի տքնաջան աշխատանքի արդյունքը արտացոլվում է մանկական հրաշալի երկու ժողովածուների հրատարակությամբ» (էջ 40):

«Կավե ամանների ծանրության պատճառը ստուգաբանող ավանդազրույցի հենքի վրա ստեղծված հեքիաթային բնույթի յուրօրինակ զվարճապատում է հրատարակել բանագետ-ազգագրագետ Ս. Վարդանյանը «Հրեղեն ձին» ժողովածուում» (էջ 84): «Թե ինչու են կավե ամանները ծանր» զվարճապատումը «Հրեղեն ձին» (1981, էջ 76) ժողովածուից արտատպվել է գրքի **Հավելված 1**-ում, № 14 (էջ 401):

«Փաստենք նաև, որ բանագետ-ազգագրագետ Սերգեյ Վարդանյանը խելապակասության թեմաներից գլուխը պոկվելուն առնչվող 22 տարբերակ է առանձնացրել (դրանցից 3-ը Թուրքիայի իսլամ համշենահայերից Վարդանյանի գրառած նմուշներն են), ցույց տալու համար պարսկական և թուրքական նմանատիպ սյուժե ունեցող պատումների հանդեպ հայկականների կառուցվածքային և գեղարվեստական առավելությունը:

Հետագա տարիներին այդ դիպաշարով նյութերի քանակը հասցնելով 37-ի՝ Ս. Վարդանյանը հրատարակության է պատրաստել «Կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակների մասին» ծավալուն հետազոտությունը՝ համապատասխան բնագրերով (անտիպ)» (էջ 231, 232):

«Համշենցի մահմեդական ջերմագցիների մասին ասվում է, որ նրանք ամենասարամիտներն ու քաջերն են, նաև՝ աղմկարարներն ու բարձրաձայն խոսողները՝ օգտագործելով նրանց բնորոշող «Ջերմագցին բարխան ջուգալ քիլա գու» (Ջերմագցին ժայռից կաթսա է գլորում) արտահայտությունը» (էջ 348, 349): Տե՛ս հղումը. «**Ձայն համշենական**», ամսաթերթ, 2016, մայիս-հունիս, թիվ 5-6, (142-143), Գրառումը՝ բանագետ-ազգագրագետ Սերգեյ Վարդանյանի, Ղազախաստան, Չիմբենդի մարզ, գ. Չիրկինո, Աջարիայի Բաթումին սահմանակից գյուղերից 1944 թ. արքայրված կրոնափոխ համշենահայերից» (էջ 349):

«Հետաքրքիր է Ս. Վարդանյանի «Թագավորի երագները» գրքում ընդգրկված արցախյան «Պըլը-Պուղին ու Մոլլա Նասրադինը» պատումը, որտեղ արցախցի զվարճախոսը հանդիպում է Արևելքի զվարճախոսին: Վերջինս, տեսնելով Պուղու շավարին՝ տեղ-տեղ արված կարկատանները,

ձեռ առնելով ասում է. «Պուղի՛, տեղ-տեղ շնհավեր ինի», ինչին հետևում է Պուղու՝ «Օրումեջ ապրես» պատասխանը» (էջ 361):

6. Արմեն Շավարշի Սարգսյան, Սերգեյ Վարդանյանը և «Ձայն համշենական»-ի ինքնատիպ ձայնը («Ձայն համշենական» ամսաթերթի 10-ամյակի առթիվ) // **Ձեռքի հետ՝ դեսից-դենից**, Երևան, Հեղինակային հրատարակություն, Ոսկան Երևանցի տպագրատուն-հրատարակչություն, 2020 (-196 էջ), էջ 153-155:

Բ.գ.դ. Արմեն Սարգսյանի գրքում ընդգրկված են տարբեր տարիներին իր գրած սեղմասույթները, հումորեսկները, խորհրդածությունները, հուշագրությունները, գրախոսություններն ու հոդվածները, այդ թվում՝ «Ձայն համշենականի» 10-ամյակին նվիրված հոդվածը, որը տպագրվել է թերթի 2014 թ. № 7-8 համարում: Շնորհակալություն հայտնելով մեր գործընկերոջը թերթը և խմբագրի աշխատանքը բարձր գնահատելու համար, նշենք, որ արտատպելիս սխալմամբ օգտագործվել է համակարգչային շարվածքի նախնական տարբերակը, կան զգալի տարբերություններ (խմբագրական, ոճական, նաև փաստերի և թվերի անճշտություններ): Ինչպես նաև դուրս է մնացել հոդվածի վերջաբանից հետևյալ հատվածը. «Մ. Վարդանյանը տարիների ընթացքում կուտակել է համշենահայերի մասին արժեքավոր հավաքածու (իրեր, հազարավոր լուսանկարներ, Եղեռնի վկաների ձեռագիր հուշեր, տարբեր լեզուներով գրքեր և հրապարակումներ և այլն), որի պահպանությունն ու ժողովրդին, այդ թվում մասնագետներին հասու դարձնելը մեկ մարդու ուժերից վեր է: Եվ պետությունը կամ բարերարները պարտավոր են աջակցել նրան իրականացնելու տարիների երազանքը, ստեղծելու Համշենագիտական կենտրոն, որում կմեկտեղվեն խմբագրությունը, թանգարանը, գրադարանը, համշենահայերի երգի ու պարի ստեղծվելիք համույթը և այլն»:

8. Արսեն Հարությունյան, Երևանի Ս. Անանիա առաքյալի անապատը կամ Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցին, «Մատենադարան», ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցի, 2020 (-354 էջ):

Գրքի 38, 135, 177, և 188 էջերում հղումներ են արվում Ս. Վարդանյանի «Հայաստանի մայրաքաղաքները» (1995) գրքի 208, 222, 223-րդ էջերին:

9. Էսթեր Խեմյան, Տավուշի բանահյուսական ժառանգությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., 2020 (- 232 էջ), էջ 104, 221:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ.գ.թ. Է. Խեմյանի աշխատության 104-րդ էջում հղում է արվում «Թագավորի երազները» (2003) բանահյուսական ժողովածուի «Մկան պատմությունը» հեքիաթին, էջ 11-13:

10. Այլա Ջին Յաբլի, Ստամբուլյան փոքր հրատարակչությունն աջակցում է հայ գրականությանը, անգլերենից թարգմանեց Գևորգ Ասատրյանը, «Ազգ» («Մշակույթ» հավելված), շաբաթաթերթ, Երևան, 2020, փետրվարի 28, № 8, էջ Բ:

Հոդվածը Ստամբուլի «Արաս» հրատարակչության հրատարակած գրքերի մասին է, մասնավորապես նշվում է. «Ներգրավվածության ոգին տարածվել է նաեւ համշեներենի՝ արեւմտահայերենի մի բարբառի վրա, որ խոսում են Թուրքիայի Սևծովյան լեռներում գտնվող Համշեն քաղաքի մոտ բնակվող 1000-ից պակաս մուսուլմանները»:

«Ազգի» ծանոթագրության մեջ «1000-ից պակաս մուսուլմանների» մասին նշված է. «Կարծում ենք, այս թիվը խիստ նվազեցված է: Բացի այդ, ոչ բոլոր համշենահայերն են իսլամացած: Ի դեպ, համշենագետ Սերգեյ Վարդանյանի կարծիքով՝ իսլամացած համշենահայերը ավելի մաքուր են պահել իրենց բարբառը, քան քրիստոնյա համշենցիները: Ծ. Խ.»:

2021

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Խաչքարերի քաղաքը // Արգամ Այվազյանի գիտական վաստակի գնահատանքներ, կազմող՝ Արգամ Այվազյան, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2021 (- 436 էջ), էջ 90, 91:

Արգամ Այվազյանի «Ջուղա» (Երևան, 1984) գրքին նվիրված գրախոսությունը որոշ կրճատումներով արտատպվել է «Կուլտուր-լուսավորական աշխատանք» (1989-ի հուլիս-օգոստոսից՝ «Մշակույթ») հանդեսից (Երևան, 1985, № 5, էջ 5-9):

2. Առեղծված, ո՛չ, զավթված հողեր, «Ազգ», շաբաթաթերթ, Երևան, 2021, հունիսի 25, № 24 (5664), էջ 8, 9:

Հոդվածը նվիրված է խորհրդային տարիներին զանազան պատճառներով և պատրվակներով Հայաստանից Ադրբեջանին անցած հողերին, արտատպվել է «Խորհրդային Հայաստան» թերթի 1989 թ. հոկտեմբերի 18-ի համարից: «Ազգ»-ի խմբագրության նախաբանից հատված. «Ստորեւ՝ «-Խորհրդային Հայաստան» օրաթերթից արտատպվող հոդվածի հեղինակը

մեր լավագույն մտավորականներից, ազգագրագետ, համշենագետ, «Ձայն համշենական» թերթի խմբագիր Սերգեյ Վարդանյանն է, որի այս գրությանը նախորդել է նույն թերթի՝ «Խորհրդային Հայաստանի» գլխավոր խմբագիր եւ հանրահայտ գործիչ եւ գրականագետ Շչորս Դավթյանի հոդվածը՝ նույն թեմայով, որը պատրաստվում ենք հրատարակել առաջիկայում»:

Մինչ այս, Ս. Վարդանյանի հոդվածը դեռ 1989 թ. արտատպվել էր Բեյրութի «**Զարթոնք**» թերթում՝ նոյեմբերի 18-ի և 19-ի համարներում: Նույն հոդվածի որոշ կրճատումներով ռուսերեն թարգմանությունը տե՛ս u Размышления над картой о «перекройке границ», «территориальных притязаниях» и одной арифметической головоломке..., «**Комсомолец**», газета, издавалась трижды в неделю, Ереван, 1989, 25 ноября, № 140, с. 2.

3. Sergey Vardanyan, Abhazy ve Krasnodar Hemşinlilerinde Müzik, “**Gor**”, Hemşin Kültür, Dil, Tarih Dergisi, Türkçe-Hemşince, Istanbul, 2020-2021, Kaun-Aşun, № 12-13, s. 45-48.

Հոդվածը գրվել է խմբագրության խնդրանքով, Ս. Վարդանյանը պատմում է տասնամյակների ընթացքում Աբխազիայի և Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասի քրիստոնյա համշենցիների երգերի և խաղիկների գրառման, հրատարկման, ժողովրդական նվագարաններ պատրաստողների և երաժիշտների մասին: Անդրադարձ կա նաև Համշենի բարբառով հին կամ նոր գրված երգերով 2006 թ. ի վեր թողարկված խտասկավառակներին:

4. Կրոնափոխ համշենահայերի բարբառի և բանահյուսության ուսումնասիրության պատմությունից // **Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ – 4**, Երևան, ՀԱԻ հրատ., 2021 (- 271 էջ), էջ 210-228:

Հոդվածում ժամանակագրական հերթականությամբ անդրադարձ է արվում Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի կրոնափոխ համշենցիներից կատարված բանահյուսական և բարբառագիտական գրառումներին, որոնց մի մասը կորել է: Փոքրաթիվ բանահավաքների և բարբառագետների մեջ կարևոր դեր են խաղացել նաև այլազգի գիտնականները:

Հոդվածի համառոտ նկարագրությունները տե՛ս Անահիտ Խեչոյեան, Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի աշխատութիւններ 4, ՀԱԻ հրատ., Երևան, 271 էջ, «**Հայկազեան հայագիտական հանդէս**», Պեյրութ, 2023, հատոր 43/1, էջ 492, «**Լրաբեր հասարակական գիտությունների**», հանդէս, Երևան, 2023, № 2, էջ 318:

## Երրորդ բաժին

5. Պարբերական ակնարկ Խորհրդահայ Մամուլի, Հոկտեմբեր-Դեկտեմբեր, Խորհրդահայ Մամուլը 1982ի Աշնան (Բ, Մաս) // Վաչէ Բրուտեան, **Երկիրը Արտերկրեն (Յօրուածներու Ժողովածու)**, Երևան, Լուսակն, 2021 (- 392 էջ), էջ 175-178:

Վաչէ Բրուտյանի հոդվածը «Գարուն» ամսագրի 1982 թ. 11-րդ համարում տպագրված Ս. Վարդանյանի «Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ» ուղեգրության մասին է:

Վ. Բրուտյանի հոդվածը արտատպվել է «Ազդակ», Պէրյուր, 1983, Յուլիսի 19, «Ազատ օր», Աթենք, 1983, յուլիսի 27, «Հայրենիք», Բոստոն, օգոստոսի 16 և այլ թերթերում:

6. Երուանդ Տէր-Խաչատուրեան, Նամակներ երկրից. նամակ № 139, Մի անակնկալ հանդիպումի մասին, «Պայքար», շաբաթաթերթ, Վաթերթաուն, Մասաչուսեթսի նահանգ, ԱՄՆ, 2021, ապրիլի 18, թիւ 15 (222), էջ 16:

Նամակը Հայաստանի և արտերկրի հայրենասեր և դավաճան (հեղինակի բնորոշմամբ՝ թուրքածին) հայերի մասին է: Հատված հոդվածից. «Միրելի բարեկամ, օրերս պատահմամբ հանդիպեցի մի երիտասարդ ազգագրագետի, ուսումնասիրողի, հետազոտողի ու էլ չգիտեմ, թե ինչ զբաղմունքի տեր մի հետաքրքրական մարդու: Եւ շատ հետաքրքրական գրոյց ունեցանք, այնքան հետաքրքրական, որ ցանկութիւն ունեցայ այն փոխանցելու քեզ: Ահա թէ ի՛նչ էր ասում իմ երիտասարդ գրուցակիցը: Խնդրում եմ նկատի առնես, որ ես իր խօսքերն եմ փոխանցում քեզ:

...- Այ, չգիտեմ, ճանաչո՞ւմ էք, թե՛ չէ, Սերգէյ Վարդանեան կայ, որ փայլուն ազգագրագետ է, ընտիր հետազոտող, լաւ գիտնական, տասնեակ տարիներ Համշենի եւ համշենահայերի պատմութիւնը, կեանքն ու կենցաղն է ուսումնասիրում, մեծաթիւ արժէքաւոր աշխատանքներ է հրապարակել, յետոյ էլ՝ թրքախօս հայեր է յայտնաբերել Միջին Ասիայում... Հետաքրքրական է, չէ՞... Դէ, ես էլ այլախօս թուրքեր եմ յայտնաբերել, որոնք չգիտես ինչու՝ հայ են գրում, եւ հայախօս թուրքեր, որոնք գնալով շատանում են»:

7. Գրիգոր Նալբանդյան, Արսեն Հարությունյան, Աշոտ Հակոբյան, Բազարանի Շուշանավանքը, Երևան, Տիգրան Մեծ, 2021 (- 256 էջ):

Եռալեզու՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն գրքում Արսեն Հարությունյանի հոդվածում Ս. Վարդանյանի «Հայաստանի մայրաքաղաքները» (1995)

գրքի 125-րդ էջին հղում է արված՝ հայերենում՝ էջ 21, 22, ռուս.՝ էջ 77, 78, անգլ.՝ 131, 132:

8. Մարիետա Խաչատրյան, Արմեն Շեկոյանի պոեզիան հետո ավելի են սիրելու, «Ազգ», թերթ, Երևան, 2021, օգոստոսի 12, № 29:

Լրագրող և արձակագիր Մարիետա Խաչատրյանը 2021 թ. հուլիսի 29-ին՝ 68 տարեկանում կյանքից հեռացած բանաստեղծ, արձակագիր և լրագրող Արմեն Շեկոյանի հիշատակին նվիրված հոդվածում գրում է. «Տողերիս հեղինակը Արմենին ճանաչել է երիտասարդության տարիներից, այն ժամանակից, երբ ուսանողական եռյակը՝ **Արմեն Շեկոյանը, Հակոբ Մովսեսը և Մերգեյ Վարդանյանը** իրենց հումորով, էրուդիցիայով և անգամ մի փոքր լեզվանիությամբ ընկերական հավաքների աղն էին դառնում, հետագայում բոլորն էլ իրենց ճանապարհներով գնալիս ստեղծեցին արժեքներ, իսկ կոնկրետ Արմեն Շեկոյանը, մամուլում աշխատելով, նաև լրագրողների սիրելին էր»:

9. Հասմիկ Խաչատրյան, Իմաստափոխության իրողություններ Համշենի բարբառում // «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական նստաշրջան (Երևան, հունիսի 24-25, 2021 թ.), ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, 2021, էջ 38-48:

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ.գ.թ. Հ. Խաչատրյանը հղում է անում (էջ 45) նաև Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը» գրքի 317 էջին, գրելով. «Ս. Վարդանյանը կրոնափոխ համշենահայերի բառապաշարում արձանագրել է նաև **սիրտ** բառից բաղկացած **սերդոդ**-ը՝ «գայրացած» (սերդոդ մարթ՝ գայրացած մարդ), սերդեռուշ-ը և սերդեռուշ-ը՝ «գայրանալ, վիրավորվել, խռովել», իսկ **սիրդ**-ը «գայրույթ» իմաստով»:

10. Հասմիկ Խաչատրյան, Լուսամուտ և պատշգամբ հասկացությունների բառանունները բարբառային հայերենում // **ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի 2021 թ. անցկացրած Հայերենագիտական առցանց գիտաժողովի զեկուցում**, էջ 1-9:

Լեզվի ինստիտուտի ավ. գիտաշխատող, բ.գ.թ. Հ. Խաչատրյանը նշում է. «Ս. Վարդանյանը կրոնափոխ համշենահայերի բարբառում հիշատակել է «պատշգամբ» հասկացության **փեքա** բառանունը, որի ծագումը մեզ անհայտ է» (էջ 7): Հղումը արված է Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը» գրքին (էջ 324):

11. Էդվարդ Միլիտոնյան, Աներևույթ շղթա, Երևան, «Ծիծեռնակ» հրատ., 2021 (- 244 էջ):

Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանի արձակ ստեղծագործությունների «Աներևույթ շղթա» ժողովածուում ընդգրկված համանուն պատմվածքը պատմում է իր ուսանողական դասընկեր, արձակագիր Ռուբեն Ֆիլյանի մասին, որի կյանքի թելը ողբերգականորեն կտրվեց երիտասարդ տարիքում. 1983 թ. հունվարի 6-ին նա սպանվեց Հնդկաստանի Գոա նահանգում: Պատմվածքում հեղինակը հիշատակում է նաև Ռուբեն Ֆիլյանի մտերիմ ընկեր և դպրոցական դասընկեր Ս. Վարդանյանին. «Նրանց տունը Մոնումենտում էր, սեփական երկհարկանի մի տուն, որի երկրորդ հարկը միայն Ռուբենի սենյակն էր, մի վայր, ուր տարիների ընթացքում հավաքվում էին ճանաչված ու սկսնակ արվեստագետներ՝ Հովհաննես Գրիգորյանը (սենյակ էր վարձել Ռուբոյենց տան դիմաց և ամուսնացավ այդ թաղից մի աղջկա, մեր ընտանիքի շատ սիրելի Երանուհու հետ), Վարուժան Վարդանյան, Մալխաս, Չելսի Հովիկ, Մամվել Կոսյան, երգիչներ Չախի Հարություն, Աջ Հարություն, Ալեքսանդր և Անահիտ Թովչյաններ և շատ այլ մարդիկ, որոնց Ռուբենի սենյակն էր ձգում խմիչքներով, սրճով, գրույցներով, հումորով ու նախ արտասահմանյան հեղինակների նոր տպագրված ստեղծագործությունների քննարկումներով: Չմոռանամ ասել, որ շատ ձգող էր նաև նրանց բակի սեղանի թենիսը: Ինքը՝ Ռուբենը, սպորտասեր չէի ասի, բայց լավ էր խաղում թենիս, հետագայում, երբ սպայական կոչման համար ուսանողներիս երկու ամսով տարան Գյումրիի Սևերսկի գորանոցում վերջնական պարապմունքների, ազատ ժամերին ֆուտբոլ էինք խաղում, և Ռուբենը մեր թիմի առաջնակարգ հարձակվողներից էր: Ասել կուզի հիպիական հովերով տարված պատանին չի մեկուսացել թաղի տղաներից, ընդհակառակը՝ և՛ խաղացել է, և՛ միաժամանակ պահել երկար մազեր ու հագել ջինսե շալվարներ ու խոսել բիթլերների և Ջիմի Հենդրիքսի և ջահելության սիրտը գրաված այլ երաժիշտների մասին:

Այդպիսի երևանյան թաղի՝ Մոնումենտի տղա էր նաև նրա մտերիմ ընկեր, խարտյաշ մազերով, պայծառ դեմքով Սերգեյ Վարդանյանը, որի հիպիզմից համշենագիտություն թոփչքը կարելի է արձակագրի ֆուտբոլային հնարք համարել» (էջ 41, 42):

12. Լուսինե Մահակյան, Խաղտիք-Համշենը հայոց բնօրրանի և պետականության մաս // ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների

**կենտրոնի «Գիտական աշխատություններ»,** հ. 24, Գյումրի, 2021, № 3, էջ 60-77:

ԵՊՀ դոցենտ, թուրքագետ Լ. Սահակյանն իր հոդվածում հղումներ է անում (էջ 63, 65, 66, 73) Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը» (2009) գրքի 9-18-րդ էջերին:

13. Անժելա Սարգսյան, Կարս. անցյալը և ներկան // ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 24, Գյումրի, 2021, № 3, էջ 131-139:

Թուրքագետ, թանգարանագետ Ա. Սարգսյանն իր հոդվածում (էջ 132, 135) հղում է Ս. Վարդանյանի «**Հայաստանի մայրաքաղաքները**» (1995) գրքի 139 և 147-րդ էջերին:

14. Մարինե Խեմչյան, Նվիրատուն և խորհրդատուն հայ ժողովրդական հեքիաթներում. ուսումնասիրություն և նշացանկ, Երևան, ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., 2021 (- 240 էջ), էջ 10, 78, 182, 208, 210, 228:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ.գ.թ. Մ. Խեմչյանն իր աշխատության 10-րդ էջում հղում է անում «Հրեղեն ձին» (1981) և «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը» (2009) գրքերին, 78-րդ էջում՝ «Թագավորի երագները» (2003) բանահյուսական ժողովածուի «Ոսկե սելի հեքիաթին», նույնը՝ 182-րդ էջում, 208-րդ էջում՝ «Հրեղեն ձին» բանահյուսական ժողովածուի նույնանուն հեքիաթին, 210-րդ էջում՝ «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը» գրքի «Մախքե» հեքիաթին:

15. Սերգեյ Վարդանյան (1952), բանասեր, արձակագիր, բանահավաք, ազգագրագետ, հրապարակախոս, «Ձայն համշենական» թերթի հիմնադիր-խմբագիր (2004), ՀՀ գրողների (1991), ժուռնալիստների միությունների անդամ – 70 ամյակ // **Հիշարժան տարեթվեր 2022**, կազմող՝ Գոհար Սարգսյան, Հայաստանի ազգային գրադարան, Երևան, «Գիրք» հրատ., 2021 (- 230 էջ), էջ 158:

2022

### **Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)**

1. Սերգեյ Վարդանյան, Բանահյուսական պատումի միջավայրը (Կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀԱԻ հրատ., 2022 (- 352 էջ + 16 էջ գունավոր լուսանկարների ներդիր), տպաքանակը՝ 400:

Գրքում համեմատվում են Ղազախաստանի և Թուրքիայի կրոնափոխ համշենցիներից հեղինակի գրառած վեց զվարճապատումները և Բոստոնում Թուրքիայից վերաբնակված մի կրոնափոխ համշենահայից Հարվարդի համալսարանի երեք աշխատակիցների գրի առած մեկ տարբերակը տարբեր երկրներում ու գավառներում քրիստոնյա հայերից գրառված 30 փոփոխակների հետ:

Հեղինակն անդրադառնում է նաև ռուսական, ասորական, թուրքական և պարսկական նույնատիպ երգիծապատումներին: Տպագրվել են բոլոր զավեշտալի մանրապատումների բնագրերը:

2. Համշենի հայերի բարբառի սխալ անվանման մասին // **Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր**, 11-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Գյումրի, 23-24 սեպտեմբերի, 2022, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Երևան-Գյումրի 2022, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022 (- 312 էջ), էջ 245, 246, ռուսերեն տարբերակը՝ *О неправильном наименовании диалекта амшенских армян*, с. 246, 247, անգլերեն տարբերակը՝ *On incorrect name of the dialect of Hamshen armenians*, pp. 247, 248.

Չեկուցումը նվիրված է սխալմամբ շրջանառվող «համշեցմա» լեզվանվանմանը:

3. Վեճը (պատմվածք) // **Մայրենի 4**, Դասագիրք 4-րդ դասարանի համար, մաս 2 / Կ. Թորոսյան, Վ. Սարգսյան, Հ. Խաչատրյան, Կ. Չիբուխյան, նկարիչ՝ Խ. Հակոբյան: Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից, Երևան, ՄԱՆՄԱԸ, 2019 (էջ 80-176 = 96), էջ 86-88:

Հրատարակվել է 2009, 2012, 2015, 2018, 2019 և 2022 թթ.:

### **Երկրորդ բաժին (հարցազրույցներ)**

4. «Մահմեդական են՝ թուրք չեն, հայ են՝ քրիստոնյա չեն», հարցազրույց ազգագրագետ Սերգեյ Վարդանյանի հետ, զրույցը վարեց Աննա Կարապետյանը, «**Օրեր**», համաեվրոպական անկախ ամսագիր, ք. Պրահա, Չեխիա, 2022, սեպտեմբեր-դեկտեմբեր, № 94, էջ 51-53:

Հանդեսի համահիմնադիր, [www.orer.eu](http://www.orer.eu) կայքէջի գլխ. խմբագիր Աննա Կարապետյանի վարած հարցազրույցը զետեղվել է «**Օրերի**» նույն համարում տպագրված նրա «**Սերգեյ Վարդանյան. Վանեցի «համշենցին» 70 տարեկան է: Դիմանկար հոբելյանի առիթով**» հոդվածի հարևանությամբ և

լրացնում են իրար: Հատված հարցազրույցից. «-Իսկ ինչպիսի՞ն է իրավիճակը ԽԱՀՄ փլուզումից հետո:

–Թուրքիայի սահմանի բացումից հետո Կենտրոնական Ասիայից որոշ թվով համշենցիներ տեղափոխվեցին Արդվինի նահանգի Խոփայի գավառ, իրենց ազգականների մոտ, ես նրանց հաճախ եմ հանդիպել տարբեր գյուղերում: Հետաքրքիր է. որ Արդվինի նահանգի համշենցիներից ոմանք իրենց համար հարսնացուներ են ընտրում Կենտրոնական Ասիայում բնակվող կամ Ռուսաստան տեղափոխված ազգակիցներից: 2015թ. մի առիթով 40 հոգի հաշվեցի:

Երբեմն նրանց հանդիպում էի խանութներում, եթե ռուսերեն էին խոսում իրար հետ, պարզ էր՝ ԽՍՀՄ-ից էին: Մի անգամ Խոփա քաղաքում՝ դեղատանը, հերթ էի կանգնել, դիմացս երկու նորահարս ռուսերեն էին խոսում, երևի որ տեղացիները չհասկանան, չդիմացա, միացա նրանց զրույցին, պարզվեց Ղազախստանի համշենցիների Չիրկինո գյուղից են: Ցույց տվեցի Չիրկինոյում 1984 թ. իմ արած լուսանկարները, որոնք տպագրել էի իմ «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը» գրքում: Աղջիկներից մեկը շատ հուզվեց, ասաց իրենց տան դիմացի մանկասայլակի միջի երեխան ինքն է, իսկ սայլակի մոտ իր հորաքույրն է կանգնած: Մի ուրիշ գյուղում Վորոնեժից եկած հարսանքավորների մեջ միջին տարիքի մի կին ինձ ճանաչեց, ասաց, որ հիշում է, ինչպես էի ես Ղրղզստանի իրենց գյուղում երեխաներին լուսանկարում: Գրքիս նկարների մեջ իսկույն գտավ իրեն ու հարազատներին, չկարողացավ արցունքները զսպել: Գիրքը նվիրեցի: Այդպիսի շատ հանդիպումներ են եղել» (էջ 51, 52):

### Երրորդ բաժին

5. Лусине Саакян, Амшен в армянских рукописях, редактор: научный сотрудник Института археологии и этнографии НАН РА Сергей Варданян, ЕГУ Институт арменоведческих исследований, Ереван, изд. «Лусакн», 2022 (- 308 с. + приложения (80 с.) + карта).

Գրքի խմբագիրը Ս. Վարդանյանն է, նրա մասին և նրա ուսումնասիրությունների հղումները տե՛ս 2, 4, 14, 20, 32, 36, 46, 57, 109, 112, 113, 114, 150, 153, 198, 199, 202, 224, 262-264 էջերում:

6. Հասմիկ Խաչատրյան, Մելանյա Խառատյան, Բառաբարդումը որպես յուրահատուկ լեզվամտածողության արտահայտության միջոց Համ-

շենի բարբառում // ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ «Ձահուկյանական ընթերցումներ» 1-2 (17-18), Երևան, ԼԻ հրատ., 2022 (- 240 էջ), էջ 28-40:

Հոդվածում հղում է արվում Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը» գրքի 116 և 298-րդ էջերին. «...ըստ Ս. Վարդանյանի՝ **ձվածեղ** բառը կրոնափոխ համշենահայերին անձանոթ է, նրանք գործածում են **հավգիտ հալուշ, հալաձ հավգիտ** նկարագրական իրադրությունները: Ասում են նաև՝ **յաղի մէջ հավգիթ էփեց, հալէց: Օրինակ՝ Գայնանան էնիշտային համա հավգիթ հալէց** (Ձոքանչը փեսայի համար ձվածեղ արեց)» (էջ 30):

7. Հասմիկ Խաչատրյան, **Գետին** հասկացության բառանունները և նրանց իմաստային զարգացումները բարբառային հայերենում // ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ «Ձահուկյանական ընթերցումներ» 1-2 (17-18), Երևան, ԼԻ հրատ., 2022 (- 240 էջ), էջ 82-94:

Հոդվածում հղվում է նաև Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը» գրքի 300-րդ էջը: «Փոխաբերացմամբ գետին հասկացության բառանուններ են դիտարկվել նաև սահմանափակ կիրառությամբ գործածվող հոդ բառանվան՝ հող, խօղ (Խոփա)... հնչատարբերակները» (էջ 90):

8. Կարել Հանսա, Արևելքի արհավիրքները (60 բնօրինակ լուսանկարներով): Չեխերեն բնագրի քննական թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Աննա Կարապետյանի, Օրեր մատենաշար-1, Պրահա, 2022 (- 364 էջ):

1922 թ. Մերձավոր Արևելքում ճանապարհորդած չեխ Կարել Հանսայի (1890-1967) 1923 թ. հրատարակված գիրքը ականատեսի վկայություն է Հայոց Մեծ եղեռնից փրկվածների հյուղավանների և որբերի մասին:

Գրքի ծանոթագրությունների բաժնում՝ էջ 301-ում, Անիի առթիվ հղում է արվում (№ 46) Ս. Վարդանյանի «Հայաստանի մայրաքաղաքները» (1995) գրքի 156-187 էջերին, իսկ էջ 307-ի № 88 հղումում՝ Դվինի առթիվ՝ 108-121 էջերին:

9. Աննա Կարապետյան, Մերզեյ Վարդանյան. Վանեցի «համշենցին» 70 տարեկան է: Դիմանկար հոբելյանի առիթով, «Օրեր», համաեվրոպական անկախ ամսագիր, ք. Պրահա, Չեխիա, 2022, սեպտեմբեր-դեկտեմբեր, № 94, էջ 47-50:

Հանդեսի համահիմնադիր, [www.orer.eu](http://www.orer.eu) կայքէջի գլխ. խմբագիր Աննա Կարապետյանի հոդվածը տպագրվել է «Համշենագիտության նվիրյալը»

խորագրի ներքո: Այն սկսվում է 1981 թ. Ս. Վարդանյանի հրատարակած բանահյուսական ժողովածուի մասին տպավորություններով. «Երեխաներիս համար հեքիաթների գիրք էի ընտրում մեր ընտանեկան մեծ գրադարանից, երբ ձեռքս ընկավ «Հրեղեն ձին»: Այն արդեն շատ ընթերցվելուց մաշված էր ու սոսնձված: Ակնհայտ էր, որ եղբորս երեխաները բառի բուն իմաստով ձեռքից ձեռք էին անցկացրել ժողովածուն, որը բացի 55 հեքիաթից ներառում է նաև 250 երգ ու խաղիկ, 360ից ավելի հանելուկ, մոտ 320 առած-ասացվածք: Առաջաբանում ևս նշված է, որ եթե դրանք նորություն էլ չեն, անկրկնելի են իրենց տեղական բարբառային համ ու հոտով, իսկ մի մասը բանահյուսական նորահայտ նմուշներ են, երբեմն էլ գրառման միջավայրից տակավին դուրս չեկած ու չտարածված:

Զարմանալի չէ, որ ժամեր անցկացրի բանահյուսական հարուստ նյութ պարունակող այս գիրքը կարդալով: Շշմելուն դրա նախապատմությունն էր. 1978թ. «Պիոներ կանչ» թերթի միջոցով Սերգեյ Վարդանյանը դիմել էր դպրոցականներին, նրանց հորդորելով հենց բարբառներով գրի առնել իրենց մեծերից լսած հեքիաթները, խաղիկներն ու հանելուկները և ուղարկել խմբագրություն՝ տպագրության համար» (էջ 47):

Հեղինակն անդրադառնում է նաև Ս. Վարդանյանի գործունեությանը, հատված. «Աբխազիա և Կրասնոդարի երկրամաս նրա այցելություններն առաջիկայում կամփոփվեն «Համշենցիները ծանոթ և անծանոթ» ուղեգրությունում, որի միայն մի քանի հատված է հրապարակվել մինչ հիմա, իսկ կրոնափոխ համշենցիներից Կենտրոնական Ասիայում և Թուրքիայում գրի առած երգերն ու բանահյուսական նմուշները կմեկտեղվեն երգարաններում և գրքերում: Այսպես, հանդիպումներից հողվածներ, մտահղացումներից նախաձեռնություններ, ճամփորդություններից աշխատություններ, հետազոտություններից գրքեր շրջափոխվելով է ապրում գրող, լրագրող, ՀՀ Գիտությունների Ազգային ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Սերգեյ Վարդանյանը: Նա ասում է, որ գտել է իր Մակոնդոն, որ ի տարբերություն մարկեյանի, իրական է՝ Արևմտյան Հայաստանի Արդվինի նահանգի Խովիա քաղաքը, որի 20 հազարից ավելի բնակիչների կեսից շատը համշենահայեր են: Միայն իր Մակոնդոն գտած մարդը կարող էր արմատներով վանեցի լինելով հանդերձ 1992 թ. Երևանի «Համշեն» հայրենակցական միության հիմնադիր ժողովում ընտրվել փոխնախագահ, և հետո հասարակական կարգով ստանձնելով թերթի հրատարակությունը 2004-2018 թթ. միայնակ տպագրել «Ձայն համշենական» ամ-

սաթերթն ու անվճար բաժանել Հայաստանում և սփյուռքում, հատկապես համշենցիների գաղթօջախներում» (էջ 47, 48):

Շատ հակիրճ ներկայացվում են նաև Ս. Վարդանյանի անցած ուղու մասին Սերո Խանգաղյանի («Հայրենիքի ձայն», 1989), Լևոն Անանյանի («Գրական թերթ», 2002), Արմեն Շեկոյանի («Առավոտ», 2005), Գնել Շահնազարյանի («Հայ զինվոր», 2014) մամուլում տպագրված կարծիքները:

Ա. Կարապետյանն անդրադառնալով Ս. Վարդանյանի 2022 թ. լույս տեսած «Բանահյուսական պատումի միջավայրը (Կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները)» մենագրությանը՝ նուրբ դիտողականությամբ ամփոփում է խոսքը. «Գիտնականի երկար տարիների աշխատանքի արդյունքը պարզ եզրահանգումն է. «... այն կարևոր հանգամանքը, որ մեր կրոնափոխ ազգակիցներն այս զվարճապատումները պատմում են հայերեն՝ Համշենի բարբառի Խոփայի խոսվածքով, հիմնավորապես հաստատում են (...), որ դրանք հայկական բանահյուսական ժառանգության անբաժանելի մասն են»:

Սակայն գրքի արժանիքը միայն այս ճշմարտության լեզվա-մշակութային փաստական հիմքով հաստատումը չէ, այլ ազգագրական ու պատմագիտական այն համահավաք ծավալուն նյութը, որ հեղինակը ներկայացնում է բարեխիղճ ու մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում իրենից առաջ կատարված աշխատանքի նկատմամբ իրական մտավորականի ակնածանքով, չարվածի ու կորսվածի ճշմարիտ ափսոսանքով: Գիրքը հմուտ բանագետի կողմից դիպաշարային ընդհանրություններով զվարճապատումների միջավայրներով պայմանավորված փոփոխակների համեմատական հետազոտությունից զատ նաև համշենահայերի առնվազն վերջին 300 տարիների պատմությանն առնչվող կարևորագույն մի ուրվանկար է, որպես Հայկական բարձրավանդակի ազգագրական վառ պատկերի մի մաս, որտեղ մեծավաստակ գիտնականներից մինչև 12ամյա արցախցի բանահավաք Առաքել Բահաթրյանն ու ինքը՝ Սերգեյ Վարդանյանը, մի-մի հավերժ հիշատակելի ուրվագիծ են քաշել» (էջ 50):

Տե՛ս նաև «**Օրերի**» նույն համարում տպագրված «Մահմեդական են՝ թուրք չեն, հայ են՝ քրիստոնյա չեն», հարցազրույց ազգագրագետ Սերգեյ Վարդանյանի հետ, գրույցը վարեց Աննա Կարապետյանը, էջ 51-53:

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Sergej Wardanjan, Vor dem Vergessen gerettete armenische Märchen, Vorwort Sergej Wardanjan, Übersetzung Narine Howessjan, Deutsche Bearbeitung Dorothee Schmid (Schweiz), Jerewan, Lusakn, 2023 (-208 seiten, 176 s. + 32 s. bunte Beiblätter), տպաքանակը՝ 400:

«Մոռացությունից փրկված հայկական հեքիաթներ» վերնագրված գրքի բոլոր 82 հեքիաթներն ու ժողովրդական զվարճապատումները Ս. Վարդանյանի նախաձեռնությամբ 1978-1982 թթ. մամուլում հրապարակված կոչերով իրենց պապիկներից ու տատիկներից, մեծահասակներից տարբեր բարբառներով գրի են առել Հայաստանի, Ադրբեջանի, Արցախի, Նախիջևանի, Վրաստանի, Աբխազիայի, Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասի հայկական դպրոցների աշակերտները:

Դրանք տպագրվել են «Հրեղեն ձին» (1981) և «Թագավորի երագները» (2003) բանահյուսական ժողովածուներում, որոնցից էլ գերմաներեն է թարգմանել Նարինե Հովսեփյանը, գերմաներեն խմբագրել՝ Դորոթե Շմիդը (Շվեյցարիա):

Գիրքը նկարագարողել են Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի և Աբովյանի շրջանի Գեղաշեն գյուղի դպրոցի սաները:

### Երրորդ բաժին

2. Երուանդ Տեր-Խաչատուրեան, Սերգեյ Վարդանեանի մասին, «Պայքար», շաբաթաթերթ, ք. Վաթերթատուն, Մասաչուսեթս, ԱՄՆ, 2023, Յունուար 8, թիւ 1 (306), էջ 12:

Ճանաչված գրականագետ և արվեստաբան, բ.գ.թ. Ե. Տեր-Խաչատրյանի «Նամակներ երկրից» խորագրի ներքո հրատարակված 223-րդ նամակն է, որից ներկայացնում ենք հատվածներ. «Բանասեր, պատմաբան, ազգագրագետ, գրող, լրագրող, խմբագիր եւ վերջապես ընտիր մտաւորական Սերգեյ Վարդանեանը Երկրորդ համաշխարհային պատերազմից յետոյ աշխարհ եկած սերունդի մարդ է: ...Դպրոցը աւարտելուց յետոյ պատանի Սերգեյը 1969 թուականին... պարզապէս հանգստանալու համար մեկնում է Սեւ ծովի ափին գտնուող Ադլեր քաղաքը: Եւ այստեղ էլ հանգամանքների բերումով ծանօթանում է համշէնահայերի: Եւ սկսում է նրա տեւական ու յամառ, աւելի ուշ՝ յոյժ գիտական եւ ուսումնասիրական հետաքրքրութիւնը Համշէնի եւ համշէնահայութեան հանդէպ: Այդ ծանօթութեան առաջին տարիներին հաւանաբար ինքն էլ չէր կռահում, որ մեծ բեռան տակ է

մտնում եւ մեծ պատասխանատուութիւն է ստանձնում, ինչից ետ կանգնել այլեւս չի լինելու: Շատ շուտով Համշէնի, համշէնահայութեան պատմութեան, բանահիւսութեան, լեզուի, մշակոյթի, կեանքի ու կենցաղի խորագնին ուսումնասիրումը դառնում է Սերգէյ Վարդանեանի գիտահետազոտական աշխատանքի հիմնական նիւթն ու նպատակը:

...1982 թուականին «Գարուն» ամսագրում մի յօդուած է տպագրում՝ «Համշէնցիները՝ ծանօթ եւ անծանօթ» խորագրով: Ես չեմ յիշում որեւէ մէկ այլ յօդուած, որ այդքան իրարանցում առաջացնէր, այդքան արձագանգներ ունենար եւ որին գործնականօրէն անդրադառնային պետական մարմինները: Սերգէյը ոչ միայն նկարագրում եւ ներկայացնում էր, այլ շատ կարեւոր խնդիրներ էր առաջադրում: Եւ դրանք կապում էին ամէնից առաջ մեր ազգային գիտակցութեանը:

Դրան յաջորդեցին ուրիշ շատ կարեւոր, համարձակ ու մտահոգութիւններով լեցուն այլ յօդուածներ:

...Սերգէյ Վարդանեանը յաճախ էր «շեղում» իր հիմնական գործից, իր գործունէութեան հիմնական խնդրից ու նպատակից՝ Համշէնից ու համշէնահայութիւնից: Բայց կարեւոր, նշանակալից ու արդիւնաւոր: Այսպէս, նա, ասէնք, գրում է տասնէօթ յօդուած ու նիւթ իշխանուհի Մարիամ Թումանեանի ու իր բարեգործական գործունէութեան մասին, գրում է գիրք անման արտիստ, բանաստեղծ, դրամատուրգ եւ թարգմանիչ Արման Կոթիկեանի մասին կամ թէ դեռեւս 1989 թուականին «Խորհրդային Հայաստան» օրաթերթում հրապարակում է «Առեղծուած, ո՛չ, զաւթուած հողեր» խորագրով փաստերով ու փաստաթղթային վկայութիւններով յագեցած, քաղաքացու եւ հայրենասէրի շիտակութեամբ գրուած մեծախնդիր յօդուածը: Ի դէպ, այդ յօդուածը վերահրատարակել է «Ազգ» շաբաթաթերթը 2021 թուականի յունիսի 24-ին:

Սերգէյ Վարդանեանի նման պատուաբեր շեղումները տասնեակներով են:

Այդ «շեղումներից» մէկը չափազանց կարեւոր է ու նշանակալից: 1985 թուականին լոյս է տեսնում նրա «Հայոց մայրաքաղաքները» գիրքը: Այն տպագրուեց 20.000 տպաքանակով եւ շատ շուտով անհետացաւ գրախանութների վաճառասեղաններից: Գիրքը շուտով դարձաւ պատանի եւ երիտասարդ, հասուն եւ տարիքաւոր ընթերցողների սիրելի գիրքը: Առաջին անգամ իրար կողքի ներկայացում էին Հայաստանի տասներկու մայրաքաղաքը: 1995 թուականին Սերգէյ Վարդանեանը վերահրատարակեց գիր-

քը՝ հիմնովին վերամշակելով գիրքը՝ ընդարձակելով շարադրանքը, հարստացնելով այն գիտական ու փաստական մեծածառալ բովանդակությամբ, ինչպես նաև պատմական, հնագիտական, պատկերային եւ վաերագրական լուսանկարչական նիւթերով: Նոյնը եղաւ այս հրատարակութեան պարագային: Գիրքը անհետացաւ գրախանութներից եւ շուտով դարձաւ անգտանելի: Գրքի արժանիքները անժխտելի էին: Նախ, ամենակարեւորը, գիրքը գրուած էր շատ լաւ լեզուով: Գիտական եւ փաստական հարուստ նիւթը մատուցում էր պարզ, բնական խօսքով: Ի պատիւ հեղինակի, իր շարադրանքի լեզուն մեծապէս եւ ի հարկէ շահեկանօրէն տարբերում է մեզանում տասնամեակներով ձեւաւորուած եւ գիտական լեզուի համարում ստացած մեռած, գորշ, գրեթէ պատմաբանական ժարգոնի վերածուած կեղծ գիտական լեզուից: Սա մեծ առաւելութիւն է եւ անհերքելի արժանիք:

Երկրորդ բացառիկ արժանիքը այն էր, որ գիրքը սիրել էր տալիս երկիրը, հայրենիքը, Հայաստանը, մեր անցեալը, մեր պատմութիւնը, մեր ազգային պատմական յիշողութիւնը:

Այս մեծադիր ու մեծածառալ գրքի մասին կարելի է շատ երկար խօսել, բայց այսօր այս մի քանի տողը բաւական է:

... Սերգէյը այնքան գործ է արել, որ տեղ չմնաց իր անձի մասին խօսելու: Ինչ էլ ասացի, ասացի շատ քիչ եւ կցկտուր, որովհետեւ արուածը իրօք շատ է:

2022 թուականի նոյեմբերի 9-ին լրացաւ Սերգէյ Վարդանեանի եօթանասունամեակը: Սերգէյը վաստակ ունեցող անհատ է: Ինձ մնում է շնորհաւորել արժանաւոր հային ու քաղաքացուն իր եօթանասունամեակի առիթով:

Նա դեռ շատ անելիք ու ասելիք ունի»:

Տե՛ս նաև նույն հեղինակի մասամբ թեմային առնչվող մեկ այլ հոդվածը ևս, Երուանդ Տէր-Խաչատուրեան, Իմ մուրացկանութեան մասին, «Պայքար», ք. Վաթերթատուն, 2023, ապրիլի 23, թիւ 16, էջ 12:

3. Магдалина Затикян, История одной сказки от Амшена до Арцаха, продолжение следует, Golosarmenii.am, 2023-01-27.

«На базе Института археологии и этнографии НАН РА вышла в свет книга известного ученого, исследователя, эксперта по вопросам амшенских армян Сергея ВАРДАНЯНА «Среда фольклорного повествования (Варианты одной сатирической сказки от исламизированных амшенских армян)». Книга, опубликованная на армянском языке, посвящена исследованию одной сатирической

сказки, разные варианты которой присутствуют в устном народном творчестве как исламизированных амшенских армян, так и армян-христиан.

...«Работая с армянами-мусульманами, я сравнивал собранный у них материал с фольклорным наследием армян-христиан и находил множество параллелей. В новой монографии «Среда фольклорного повествования» я рассмотрел сатирическую сказку «Ардэлэцик авджи» - «Охотники из Ардалы» (село в Хопской провинции губернии Ардвин, Турция) и её варианты, бытующие в среде исламизированных амшенцев-армян, её оригинальные и опубликованные версии, популярные у армян-христиан.

... Я также сравнил армянские варианты с их русскими, персидскими, ассирийскими, турецкими версиями», - говорит автор.

...«По моим сведениям, самая ранняя запись арцахской версии сказки сделана в 1860 г. в Шуши Аракелом Баатэряном – будущим известным педагогом и общественным деятелем. Уроженец Шуши (1848 г.), он получил образование в Лазаревском институте, затем был направлен на учёбу в Германию, после чего работал в образовательных учреждениях Крыма, Тифлиса, Ростова, - рассказывает Сергей Варданян. – Аракел Баатэрян занимался также собирательством фольклора, и в 1860 г., в возрасте 12 лет, записал в Шуши на карабахском диалекте армянского языка вариант сказки «Охотники из Ардалы» - «Сказка карабахских глупцов». О том, что Аракел Баатэрян собирал сказки, писали разные авторы, но никто никогда не указывал его возраст. Собирательством занимались и братья Аракела – Григор и Александр Баатэряны. Они записали 64 сказки: 10 Александр, 21 Григор и 33 Аракел, причем все в 1860 г., в возрасте 12 лет».

...«Отмечу, что в 1860-х гг. среди армянской интеллигенции фольклор не пользовался той популярностью, которую обрел спустя 15 лет, когда в 1874 и 1876 гг. вышли в свет книги известного этнографа и фольклориста, позже епископа Гарегина Срвандзтянца. Предположительно, братья Баатэряны познакомились с Срвандзтянцем задолго до издания его книг, в 1861 г., когда он, 21-летний юноша, три месяца прожил в Шуши».

4. Магдалина Затикян, История одной сказки от Амшена до Арцаха, окончание, Golosarmenii.am, 2023-01-30.

«Кроме Аракела Баатэряна собирательством фольклора в Арцахе-Карабахе занималась также филолог-фольклорист Маргарит Григорян (Спандарян), которая оставила нам версию сатирической сказки «Охотники из Ардалы» - «Три священника Атерка», сохранившуюся в 5-ом томе сборника «Армянские народные сказки (1966). Как отмечает Сергей Варданян, все включенные в этот том сказки собраны Маргарит Григорян за период 1922 по 1958 годы.

«Урожденная шушинка Маргарит была влюблена в фольклор родного края и еще в школьные годы записала ряд сказок, – пишет Сергей Варданян. - В 1971 г. Маргарит издала книгу «Фольклор Нагорного Карабаха», куда вошли

1804 частушки, 28 сказок, 9 сказок-загадок, 7 преданий, 31 сатирическая сказка, 24 анекдота Пыл-Пути – персонажа армянского фольклора, 243 загадки, 461 пословица и поговорка и много другого материала».

Кем была эта женщина и каким был её жизненный путь? Об этом также можно узнать из книги Сергея Варданяна «Среда фольклорного повествования». Маргарит Спандарян родилась в Шуши. Ей было 7 лет, когда умер отец, и семья из 5 человек с трудом выживала. Маргарит была племянницей известного общественного деятеля, публициста, редактора газеты «Нор Дар» (Тифлис) Спандара Спандаряна – отца революционера Сурена Спандаряна.

Резня армян и пожар, инициированные азербайджанцами в Шуши в марте 1920 г., застали семью Маргарит, как и все население города, врасплох. Ранние записи фольклора, сделанные ею, пропали. В автобиографии она пишет: «Спустившийся с горных вершин туман спас крохотную часть населения Шуши: враг не видел убегающих в тумане. Пули попадали в людей по чистой случайности... Убежав и слившись с потоком бегущего народа, наша семья бродила по селам, оставшись без дома и хлеба – в одних лохмотьях. Спали, где попало: на снегу, в пекарнях, хлеву, под дождем, питались дикой зеленью. Мы не были сельчанами, и в деревнях у нас не было родных. Села также были сожжены и вместе с убегающими сельчанами мы шли неведь куда...».

5. Արմէն Քիրքճեան, Համառոտ պատմութիւն Համշէնի եւ Համշէնահայութեան, Թորոնթօ (Գանատա), 2023, «**Նոր Յարաջ**», երկօրեայ թերթ, Փարիզ, 2023, մարտի 16, № 1853, մարտի 18, № 1854, մարտի 25, № 1857, մարտի 28, № 1858, մարտի 30, № 1859, ապրիլի 1, № 1860, ապրիլի 4, № 1861, ապրիլի 6, № 1862, ապրիլի 8, № 1863, ապրիլի 13, № 1864, ապրիլի 18, № 1866, ապրիլի 20, № 1867, ապրիլի 29, № 1871, մայիսի 11, № 1874, մայիսի 13, № 1875, մայիսի 25, № 1879, մայիսի 27, № 1880:

Ա. Քյուրքյանը հաճախ իր օգտագործած աղբյուրները և դրանց հեղինակներին չի հիշատակում, միայն վերապատմում է կարդացածը, թեև կարելի էր եթե ոչ տողատակում, ապա շարադրանքում գրել: Նա Ս. Վարդանյանին հղում է կատարում մարտի 25-ի (№ 1857) համարում. ««Ձայն համշէնական» թերթի խմբագիր, բանասեր, ազգագրագետ, գիտաշխատող Սերկէյ Վարդանեան 1992-ին հնարաւորութիւն կ'ունենայ Վենետիկի Ս. Ղազար կղզին երթալու եւ Պօղոս վրդ. Մեհերեանի յուշագրութեան պարունակութեան ծանօթանալու: Վարդանեան կը գրէ...», այնուհետև, առանց տպագիր աղբյուրը նշելու Ա. Քյուրքյանը Պ. Մեհերյանի մասին Ս. Վարդանյանից քաղած ընդարձակ հատվածը թեև առնում է չակերտների մեջ, բայց վերածում է արևմտահայերենի, ինչը, հասկանալի է, գիտական չէ (էջ 4, 5):

Ս. Վարդանյանը հիշատակվում է նաև ապրիլի 13-ի (№ 1864) համարում. «2004-ին իր իսկ հիմնած «Ձայն Համշենական» անվճար ամսաթերթի գլխավոր խմբագիր, բանասեր, ազգագրագետ, գիտաշխատող, «Համշեն» հայրենակցական-բարեսիրական հասարակական կազմակերպության փոխնախագահ, 1952-ին Երևան ծնած Սերկեյ Վարդանեան այդ թերթի Նոյեմբեր-Դեկտեմբեր 2015 թիվին մեջ կը գրէ...», այնուհետև, առանց վերնագիրը նշելու, նա Ս. Վարդանյանի «Յուրահատուկ բառեր Թուրքիայի համշենցիների Խոփայի խոսվածքում» հոդվածից ընդարձակ հատված է տպագրում՝ բնագիրը փոխելով արևմտահայերենի, բնականաբար, նաև՝ ուղղագրությունը: Որից հետո գրում է. ««Ձայն Համշենական» թերթի Նոյեմբեր-Դեկտեմբեր 2014 թիվին մեջ ալ Սերկեյ Վարդանեան ստորագրությամբ կը կարդանք...» և կրկին առանց վերնագիրը գրելու (տե՛ս «Մեզանից ոմանք կրոնափոխ հայերին հայ չեն համարում, սա օտարում է նրանց մեզանից, բայց հայը հայ է՝ անկախ կրոնից» - Սերգեյ Վարդանյան, համշենագետ», Սառա Գալստյան, Nyut.am), Ս. Վարդանյանից արված ընդարձակ քաղվածքը արևմտահայերենի վերածած տպագրում է չակերտների մեջ: Նույն նյութում Ս. Վարդանյանից առանց չակերտների ևս մի քանի քաղվածքներ են արևմտահայերեն վերապատմվում (էջ 5, 6): Հոդվածաշարի վերջում (մայիսի 27, № 1880, էջ 5) նա «Օգտագործուած աղբիւրներ»-ում հիշատակում է Ս. Վարդանյանի ընդամենը երկու հոդվածը՝ «Կրօնափոխ Համշենահայերի Ուսումնասիրման Պատմութիւնից» և «Մահմեդական Համշենահայերի Մասին 1776 թ. Վերաբերող Մի Կարեւոր Վկայութիւն», առանց նշելու թե ո՞ր թվականին և որտե՞ղ են տպագրվել:

6. Խաչատուր Թահմազ, Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը, բարբառային նյութերով համալրեց, խմբագրեց և հրատարակության պատրաստեց բ.գ.դ. Հայկանուշ Մեսրոպյանը, Երևան, Լուսակն հրատ., 2023 (- 224 էջ):

Գրքի «Ներածություն» բաժնում (էջ 3-38), որի հեղինակը Հ. Մեսրոպյանն է, Ս. Վարդանյանը հիշատակվում է 15, 20, 21-րդ էջերում. «Սերգեյ Վարդանյանի հիմնադրած «Ձայն համշենական» թերթը լեզվական, բանահյուսական բազմաթիվ փաստեր ու հետաքրքիր տվյալներ է հաղորդում՝ մշտական գործուն կապ պահպանելով և՛ բուն Համշենի, և՛ Աբխազիայի, և՛ Միջին Ասիայի և այլ վայրերի համշենահայության հետ» (էջ 20, 21): Գրքում է արվում Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի բարբառը,

բանահյուսությունը և երգարվեստը» (2009) գրքին և քսան հոդվածներին (էջ 20, 21, 216-219):

7. ՀԳՄ վարչությունը շնորհավորում է արձակագիր, հրապարակախոս, լրագրող Սերգեյ Վարդանյանին ծննդյան 70-ամյակի առթիվ, «Գրական թերթը» միանում է շնորհավորանքին, «**Գրական թերթ**», 2023, մայիս 26, № 17, էջ 6:

Տպագրվել է նաև հոբելյարի լուսանկարը: Իրականում Ս. Վարդանյանի ծննդյան 70-ամյակը լրացել է 2022 թ. նոյեմբերի 9-ին, սակայն երկրի ծանր վիճակի և անուրախ մթնոլորտի պատճառով նրա խնդրանքով այն չի նշվել ո՛չ Գրողների միությունում, ո՛չ որևէ դահլիճում, ո՛չ «Գրական թերթի» էջերում: Իսկ սույն համարում վերատպվել է երկու տասնամյակ առաջ ՀԳՄ նախագահ Լևոն Անանյանի հրապարակած հոդվածից («Գրական թերթ», 2002, դեկտեմբերի 27, № 45) մեկ հատվածը, նաև տպագրվել են 2022 թ. լույս տեսած Ս. Վարդանյանի «Բանահյուսական պատումի միջավայրը (Կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները)» մենագրության մասին ԳԱԱ թղթակից անդամ, բ. գ. դ., պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանի և Գրողների միության վարչության քարտուղար, բ.գ.դ. Պետրոս Դեմիրճյանի գրած գրախոսությունները:

8. Աելիտա Դոլուխանյան, Խորքային հետազոտություն, «**Գրական թերթ**», 2023, մայիսի 26, № 17, էջ 6, 7:

Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկային ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Դոլուխանյանի գրախոսությունը նվիրված է Ս. Վարդանյանի «Բանահյուսական պատումի միջավայրը (Կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները)» մենագրությանը: Հատվածներ գրախոսությունից. «Սերգեյ Վարդանյանը հայ բանագետներին, հայ ժողովրդական բանահյուսության սիրահարներին, բարբառագետներին մատուցել է մի կարևոր հետազոտություն՝ նվիրված կրոնափոխ համշենահայերի բանահյուսությանը: Աշխատությունը նաև պատմական ու ճանաչողական մեծ արժեք ունի: Այն յուրօրինակ ձևով հայ ազգային ճակատագրի արտացոլանք է: Պատմականությունը և գիտականությունը գրքի հիմքերն են: Սա պայմանավորված է երկար տարիների նվիրման իրողությամբ, հետազոտելու, պրպտելու, որոնելու անձանձիր կամքով: Գրքում կան հատված-

ներ, որոնք պարզապես անմոռանալի են: Օգտագործված է հսկայական քանակի գրականություն՝ համապատասխան հղումներով:

Սերգեյ Վարդանյանը գրել է մի «Նոր նահանջ առանց երգի»: Նյու Յորքում 2010-ին լույս տեսած «1001 գիրք, որ ամեն մարդ պետք է կարդա մինչև մեռնելը» հանրագիտարանում ներկայացված են աշխարհի տարբեր ազգերի 1001 գրքեր, դրանց հեղինակների մեջ կան երկու հայեր՝ Մայքլ Առլեն Ավագը և Շահան Շահնուրն իր «Նահանջն առանց երգի» վեպով, որում ցավով ներկայացվում է հինավուրց քաղաքակրթություն ունեցող մի ողջ ազգի ուժացումը:

Ս. Վարդանյանի գիրքը բռնի ուժացման մասին է՝ բազում պատմական փաստացի վկայություններով:

...Այս գիրքը Վարդանյանի ազգօգուտ երկարատև տարիների աշխատանքի պատմությունն է: Նրանում կան բազում հայրենասեր մտավորականների կերպարներ:

... Գրքում գիտական շրջանառության մեջ են դրված մի շարք գիտական փաստեր, որոնք շրջանառության մեջ չեն դրվել նախորդ հետազոտողների կողմից:

Դրանցից մեկը վերաբերում է Գարեգին Սրվանձտյանցի՝ երեք ամիս Արցախում գտնվելուն և «Մեղու» տասնօրյա հանդեսում նրա տպագրած անստորագիր հոդվածին:

... Իր թերին մեղր է բերել նաև Սերգեյ Վարդանյանն այս գրքով:

...Սերգեյ Վարդանյանի «Բանահյուսական պատումի միջավայրը» գիրքը նույնքան կարևոր է հայագիտության համար, որքան 1995-ին տպագրված «Հայաստանի մայրաքաղաքները» հրաշալի գիրքը:

9. Պետրոս Դեմիրճյան, Հայապահպանության նվիրյալ բանահավաք-ազգագրագետը, «**Գրական թերթ**», 2023, մայիսի 26, № 17, էջ 7:

Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար, բ.գ.դ. Պ. Դեմիրճյանի գրախոսությունը նվիրված է Ս. Վարդանյանի «Բանահյուսական պատումի միջավայրը (Կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները)» մենագրությանը: Գրախոսությունից հատվածներ. «1972 թվականից աշխատելով «Գրական թերթի» քննադատության բաժնում՝ ստեղծագործական և անձնական շփումների ընթացքում հնարավորություն եմ ունեցել հետևելու այսօր արդեն վաստակաշատ բանահավաք-ազգագրագետ Սերգեյ Վարդանյանի առաջին քայլերին ու հետագա գործունեությանը՝ նրա մեջ նկատելով հայոց պատմության, մշակույթի,

գիտության և գրականության հետազոտությանն ու զարգացմանը նպաստելու, ազգապահպանությանը սատարելու իսկական նվիրյալի հատկանիշներ: Մասնավորապես՝ բանահավաքչության և ազգագրության բնագավառում: Դրա վառ վկայություններից էր, օրինակ, դեռևս 1978 թվականին մամուլի միջոցով նրա նախաձեռնած պատանեկան բանահավաքչական շարժումը, որին մասնակցեցին Անդրկովկասյան երեք հանրապետությունների, նաև Արցախի, Նախիջևանի և Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասի հայկական դպրոցների աշակերտները: Հավաքված մեծաթիվ բանահյուսական նյութերը՝ Սերգեյ Վարդանյանի մշակմամբ ու «Երկու խոսք»-ով, հրատարակվեցին «Հրեղեն ձին» (1981) և «Թագավորի երազները» (2003) ժողովածուներով, որոնցից ընտրված հեքիաթները՝ «Փրկված հեքիաթներ» վերնագրով, ավելի ուշ Երևանում լույս տեսան նաև անգլերեն (2007) և գերմաներեն (2009): Ապա հաջորդեցին Հայաստանի մայրաքաղաքների մասին պատմող երկու հատորները՝ 1985 և 1995 թթ.՝ ներդիր լուսանկարներով, վիմագրություններով ու քարտեզներով:

Հետագա տասնամյակներին՝ արդեն ՀՀ ԳԱԱ ՀԱ ինստիտուտի գիտաշխատող Սերգեյ Վարդանյանի գիտական հետաքրքրությունները սևեռվեցին Սուլթանական Թուրքիայում բռնությամբ կրոնափոխ դարձած համշենահայությանն առնչվող հիմնահարցերի մանրազնին հետազոտության և հրապարակման վրա, ինչը, բնականաբար, քրտնաջան աշխատանք, անդու կամք և շատ ժամանակ էր պահանջում: Թուրքիայի, Ռուսաստանի և Կենտրոնական Ասիայի կրոնափոխ համշենահայերի մասին նրա հետազոտությունները տպագրվել են ոչ միայն հայրենի և արտերկրի մամուլում, այլև «Չայն համշենական» ժողովածուի երրորդ հատորում (1989), ԵՊՀ հրատարակությամբ լույս տեսած «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ)» (2009) մենագրությունում:

...Ահա թե ինչու Սերգեյ Վարդանյանի նոր՝ «Բանահյուսական պատումի միջավայրը (Կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները)», (Եր., ՀԱԻ հրատ., 2022, 351 էջ) ծավալուն հատորը ամենևին էլ անակնկալ չէր: Հատորի ազդագրում այն իրավամբ որակվում է որպես «եզակի ուսումնասիրություն», որում ներկայացված են նաև հավաքված նյութերի բնագրերն ու թարգմանությունները: Հիրավի, ընդհանուր առմամբ, հետազոտական վիթխարի աշխատանք է կատարված, բացի մեծ տարածաշրջաններ ու վայրեր ընդգրկող շրջագայությունների ընթացքում

նյութերի հավաքումից ու հետազոտությունից, ուսումնասիրվել են նաև հատորի ավելի քան չորս տասնյակ էջերը զբաղեցնող արխիվային նյութեր (11 միավոր), դասական ու ժամանակակից գրքեր և ժողովածուներ (271 միավոր), հայերեն պարբերականներ (198 միավոր), ռուսերեն, սլովակերեն, ֆրանսերեն, իսպաներեն, անգլերեն, գերմաներեն, ադրբեջաներեն, թուրքերեն գրքեր և պարբերականներ, հունարեն հոդված, թուրքերեն երեք խտասկավառակ (153 միավոր)»:

10. Լևոն Անանյան, Արմատների որոնումը (հատված), **«Գրական թերթ»**, 2023, մայիսի 26, № 17, էջ 6:

«Գրական թերթի» 2002 թ. դեկտեմբերի 27-ի (№ 45) համարում տպագրված ՀԳՄ նախագահ Լևոն Անանյանի «Արմատների որոնումը» հոդվածը նվիրված էր Ս. Վարդանյանի անցած ուղուն և ծննդյան 50-ամյակին: Ս. Վարդանյանի ծննդյան 70-ամյակի առթիվ հոդվածից արտատպվել է մեկ հատված:

11. Սուսաննա Հարությունյան, արձակագիր, «Հրեղեն ձիու» թռիչքը, **«Գրական թերթ»**, 2023, հունիսի 16, № 20, էջ 7, 8:

Հոդվածը նվիրված է Ս. Վարդանյանի նախաձեռնությամբ 1978-1982 թթ. Հայաստանի, Ադրբեջանի, Արցախի, Նախիջևանի, Վրաստանի, Աբխազիայի, Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասի հայկական դպրոցների աշակերտների շրջանում ծավալված «Պատանի բանահավաք» շարժմանը, որի մասնակիցներից էր նաև Ս. Հարությունյանը: Փրկված բանահյուսական նյութերով հրատարակվել են «Հրեղեն ձին» (1981) և «Թագավորի երազները» (2003) ժողովածուները, որոնց ընտրանին թարգմանվել է նաև անգլերեն (2007) և գերմաներեն (2009): «Սակայն գերմաներեն գրքի ոչ մեծ ծավալը և այն, որ տեխնիկական պատճառներով չէին տպագրվել ասացողների և գրառողների անուններն ու տվյալները, հանգիստ չէին տալիս Ս. Վարդանյանին: Եվ նա, թարգմանչուհի Նարինե Հովեյանի և գերմաներենի խմբագիր Դորոթե Շմիդի (Շվեյցարիա) հետ տարիների դժվարին աշխատանքով ի վերջո այս տարի կարողացավ լույս ընծայել «Sergej Wardanjan, Vor dem Vergessen gerettete armenische Märchen, Jerewan, Lusakn, 2023, 208 seiten» (Մերգեյ Վարդանյան, Մոռացությունից փրկված հայկական հեքիաթներ, Երևան, Լուսակն, 2023, 208 էջ) գիրքը, որն ընդգրկում է 82 հեքիաթ և ժողովրդական զվարճալի պատմություններ...» (էջ 8): Տե՛ս նաև 2023-ի № 1 նկարագրությունը:

12. Սուսաննա Հարությունյան, արձակագիր, Հայկական հեքիաթները՝

գերմաներեն, «**TV ալիք**», շաբաթաթերթ, Երևան, 2023, հունիսի 29, № 27, էջ 2, 10:

«Հրեղեն ձին» (1981) և «Թագավորի երգները» (2003) բանահյուսական ժողովածուներից ընտրված 82 հեքիաթների ու զվարճապատումների գերմաներեն թարգմանությունների (թարգմանիչ՝ Նարինե Հովեյան, գերմ. խմբագիր՝ Դորոթե Շմիդ) գրքի՝ Sergej Wardanjan, Vor dem Vergessen gerettete armenische Märchen, Jerewan, Lusakn, 2023, 208 seiten. (Մերգեյ Վարդանյան, Մոռացությունից փրկված հայկական հեքիաթներ, Երևան, Լուսակն, 2023, 208 էջ) մասին Ս. Հարությունյանի «Գրական թերթում» 2023 թ. հունիսի 16-ին տպագրված ««Հրեղեն ձիու» թռիչքը» գրախոսության ավելի ընդարձակ տարբերակն է, տե՛ս նախորդ նկարագրությունը:

13. Անահիտ Հարությունյան, բ.գ.թ., Նոր գիրք կորած թե մոռացված հայերի միջավայրի մասին, [ankakh.com/hy/article/131974](http://ankakh.com/hy/article/131974), 2023, հունիսի 27:

«**Անկախ**» շաբաթաթերթը 2018 թվականից դադարել է տպագրվել, գործում է միայն կայքէջը:

Մատենագետ, բ.գ.թ. Ա. Հարությունյանի գրախոսությունից հատված. «Սեղանիս է Մերգեյ Վարդանյանի նոր լույս տեսած «Բանահյուսական պատումի միջավայրը (Կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները)» գիրքը, որի շնորհիվ հաջողվեց մի շաբաթով կտրվել մեր օրերի ճնշող իրադարձություններից, հեռանալ ոչ շատ վաղ անցյալ և նոր գիտելիք ձեռք բերելու հաճելի պահեր ապրել:

...Ես լավ գիտեմ հեղինակին, նրա հետ ժամանակին աշխատել եմ նույն խմբագրությունում, տեսել եմ նրա գործելաոճն ու գիտելիքների պաշարը, կարդացել եմ նրա «Հայաստանի մայրաքաղաքները», մյուս գրքերը, հոդվածները, միշտ հիացել եմ նրա պրպտելու, փաստեր հավաքելու ջանասիրությամբ ու այդ փաստերն իրար կապելու, բացահայտումներ անելու կուռ տրամաբանությամբ, կարծրատիպեր կոտրելու համարձակությամբ, ընթերցողին կլանող շարադրանքի պարզությամբ և կարծում էի, որ այս նոր գիրքն այլևս ոչնչով չի զարմացնելու, պարզապես հերթական հաճելի ու օգտակար ընթերցանություն է լինելու: Բայց և այնպես այս անգամ էլ զարմացա:

... Գիրքն ուղեկցվում է մոտ հազար տողատակերի հղումներով, մեծ մասամբ՝ ընդարձակ մեկնաբանություններով:

Եվ գրքի վերջում էլ հեղինակը գետեղել է իր օգտագործած արխիվային նյութերի, գրքերի ու ժողովածուների, մամուլի նյութերի ընդարձակ ցանկը:

Փաստորեն կրոնափոխ համշենահայերի մասին բանագիտական, ազգագրական, պատմագիտական, բարբառագիտական գրականության մատենագիտական ցանկը: Մի հանգամանք, որ կրկնակի է դարձնում աշխատության արժեքը:

Եվ դա արվել է՝ ելնելով ապագա մասնագետների նկատմամբ հոգատարությունից, որպեսզի չանցնեն որոնումների այն նույն դժվարին ճանապարհը»:

14. Արմեն Շ. Սարգսյան, Սերգեյ Վարդանյան. Բանահյուսական պատումի միջավայրը (կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները), «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2023, № 2 (223), էջ 315-317:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության պատմության և տեսության բաժնի առաջատար գիտաշխատող, բ.գ.դ. Ա. Սարգսյանի գրախոսությունից հատված. «դ. Չնայած սույն ուսումնասիրության առաջ քաշած խնդիրների սահմանափակ հնարավորությանն ու ծավալին՝ այնուամենայնիվ, աշխատության հեղինակը գիրքը դարձրել է հանրագիտարանային բնույթի մի ինքնատիպ աշխատանք, որտեղ շատ բանագետներ, լեզվաբաններ, մշակութաբաններ ու այլ մասնագետներ և ուսանողներ կարող են հաղորդակցվել և յուրացնել ի մի բերված մի շարք նոր ու հետաքրքիր փաստեր և մասնագիտական հարուստ տեղեկություններ:

Ե. Իր և այլոց կողմից գրառված պակասամտության թեմայով զվարճապատումներից մեկի երեսունյոթ տարբերակները, ինչպես նաև դրանցից յուրաքանչյուրի գրառողի կենսագրությանը, համշենահայության հետ ունեցած առնչություններին, գրառած նյութի լեզվական առանձնահատկություններին անդրադարձները հետազոտությանը կցելով՝ Ս. Վարդանյանն օգնել է բանագետներին, բարբառագետներին, մշակութաբաններին ու այլ մասնագետներին և ուսանողությանն անհրաժեշտության դեպքում հեշտությամբ օգտվել դրանցից:

գ. Հեղինակը սոսկ նյութը ներկայացնող-փաստագրողի դերում չի հանդես գալիս: Նա շատ ու շատ հարցերում հակադրվում է հայ և օտարազգի գրառողների ու հետազոտող-հրատարակիչների բերած փաստերին ու տեսակետներին, առաջադրում իր մոտեցումները՝ դրանք հիմնավորելով համապատասխան փաստարկներով:

Ծանոթանալով հետազոտության հեղինակի օգտագործած հայերեն և այլալեզու մեծածավալ տպագիր ու անտիպ գրականությանը (հայերեն գրքեր և տարատեսակ ժողովածուներ՝ 271 միավոր, հայերեն պարբերականներ՝ 198 միավոր, հայկական արխիվային նյութեր՝ 11 միավոր, ռուսերեն, անգլերեն, իսպաներեն, ֆրանսերեն, գերմաներեն, սլովակերեն, հունարեն, թուրքերեն, ադրբեջաներեն զանազան գրքեր և պարբերականներ՝ 150 միավոր, ինչպես նաև որոշ խտասկավառակներ)՝ ընթերցողի համար նոր միայն պարզ է դառնում, թե որտեղի՞ց է գալիս վերլուծության ժամանակ փոքրածավալ թվացող թեմայի վերաբերյալ ներկայացված այդքան առատ տեղեկատվությունը:

...Ս. Վարդանյանի «Բանահյուսական պատումի միջավայրը (Կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները)» աշխատությունն առաջադրած խնդիրներով և դրանց տրված համոզիչ պատասխաններով նոր խոսք է հայ բանագիտության ասպարեզում:

15. Mahir Özkan, Hamsentsnag-Hemşince. Hemşince Gramer Kitabı, Batı Ermenice ile Karşılaştırmalı, İstanbul, ARAS yayıncılık, 2023 (- 256 s.), s. 227-238.

Թուրքիայի կրոնափոխ համշենցիների խոսվածքի քերականությանը նվիրված ստամբուլաբնակ համշենցի մանկավարժ և գրող Մահիր Էօզքանի գրքում լատինատառ հրատարակվել են այդ խոսվածքով 160 ժողովրդական խաղիկներ, որոնց հինգ գրառողների մասին ընդհանուր նշված է. «Maniler/ Anonim, Derleyenler: Mahir Özkan, Hikmet Akçiçek, Sergey Vardanyan, Yusuf Vayic, Harun Aksu» (էջ 227):

16. Անահիտ Խեչոյեան, Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի աշխատութիւններ (ՀԱԻԱ), 4, խմբ. Ս. Գ. Հոբոսեան, Յ. Տ. Մարութեան, Թ. Լ. Հայրապետեան, Տ. Ս. Դալալեան, ՀԱԻ հրատ., Երևան, 271 էջ, «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէրոլթ, 2023, հատոր 43/1, էջ 483-493:

Ներկայացվում են 2021 թ. Երևանում հրատարակված «Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ - 4» գիտական ժողովածուի 21 հեղինակների, այդ թվում՝ Ս. Վարդանյանի հոդվածները. «Ժողովածուի վերջին բաժինը, որ վերնագրուած է «Բանագիտութեան եւ ազգագրութեան պատմութիւն», ներառում է 3 յօդուած: Առաջինը համշենագետ-բանագետ Սերգէյ Վարդանեանի «Կրօնափոխ համշենահայերի բարբառի եւ բանահիւսութեան ուսումնասիրութեան պատմութիւնից» ուսումնասիրութիւնն է (էջ 210-28): Այստեղ ժամանակագրական հերթականութեամբ անդրադարձ է կատարում Թուրքիայում եւ Կենտրոնական Ասիա-

յում բնակուող կրօնափոխ համշէնցիներից կատարուած բանահիւսական եւ բարբառագիտական գրառումներին: Հեղինակը նշում է, որ 1984ին եւ 1987ին Ղրղզստանում, Ղազախստանում եւ Ուզբէկստանում կրօնափոխ համշէնահայերից գրառած նիւթերի մի մասը հրատարակել է Ձայն համշէնական ժողովածուի 3րդ հատորում: Վարդանեանը նշում է, որ առաջիններից մէկը, ով փորձել է ուսումնասիրել կրօնափոխ համշէնցիների Խոփայի խօսուածքը, վրացի լեզուաբան Իոսէֆ Ղիփշիձէն է: Հարվըրտի համալսարանի երեք աշխատակիցներ՝ Բերթ Վոքսը, Սերջիօ Լա Փորթան եւ Էմիլի Թաքըրը, Համշէնի բարբառի Խոփայի խօսուածքի թուրցեանցիների (դրսեցիների՝ այլ գյուղերի բնակիչների) ենթախօսուածքով, Պոստոնում ձայնագրել են գուարճալի մի պատում, որը յետագայում տպագրուել է ԱՄՆ հանդէսներից մէկում: Վարդանեանն իր կատարած ճամփորդութեան ընթացքում գրառել է համշէնահայերի բանահիւսութեան արձակ եւ չափածոյ բազմաթիւ նմուշներ՝ երգեր, խաղիկներ, որոնք յետագայում տեղ են գտել հայկական երգիչ-երգչուհիների, ազգագրական երգի-պարի խմբերի երգացանկում» (էջ 492):

Ա. Խէչոյանի գրախոսության համառոտ տարբերակը տե՛ս «**Լրաբեր հասարակական գիտությունների**», հանդէս, Երևան, 2023, № 2, էջ 313-319:

17. Անահիտ Խէչոյան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 4, խմբ.՝ Ս. Գ. Հոբոսյան, Հ. Տ. Մարոյան, Թ. Լ. Հայրապետյան, Տ. Ս. Դալայան, Երևան, ՀԱԻ հրատ., 2021, 271 էջ, էջ 313-319, «**Լրաբեր հասարակական գիտությունների**», հանդէս, Երևան, 2023, մայիս-օգոստոս, № 2 (668), էջ 313-319:

Համառոտ ներկայացվում են «Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ, 4» գիտական ժողովածուի հեղինակների, այդ թվում՝ Ս. Վարդանյանի հոդվածները «Ժողովածուի վերջին՝ «Բանագիտության և ազգագրության պատմություն» բաժնում ընդգրկված է համշէնագետ-բանագետ Սերգէյ Վարդանյանի՝ «Կրօնափոխ համշէնահայերի բարբառի և բանահյուսության ուսումնասիրության պատմությունից» հետազոտությունը (էջ 210-228): Այստեղ հեղինակը, պահպանելով ժամանակագրական հերթականությունը, անդրադարձ է կատարում Թուրքիայում և Կենտրոնական Ասիայում բնակվող կրօնափոխ համշէնահայերից գրառված բանահյուսական և բարբառագիտական նյութերին» (էջ 318):

18. Բագրատ Էսդուգեան, Նոյժ՝ Սերկեյ Վարդանեանի ազգագրական վաստակէն, «Ակօս», շաբաթաթերթ, Ստամբուլ, 2023, դեկտեմբերի 1, թիւ 1424, էջ 8:

«Ակօսի» հայերէն բաժնի խմբագիր, ճանաչված լրագրող Բագրատ Էստուկյանի հոդվածը նվիրված է Ս. Վարդանյանի «Բանահյուսական պատումի միջավայրը (Կրօնափոխ համընդհանրային մի զվարճապատումի տարբերակները)» (Երևան, 2022) մենագրությանը, հատված. «Հանրածանօթ ազգագրագետ Սերկեյ Վարդանեանի ակադեմական աշխատութիւններուն առանցքը կը կազմեն Համընդհանրային կորուստի եզրին հասած հայ հասարակութեան ձօնուած ուսումնասիրութիւնները:

...Ան այս անգամ մեզի կը ներկայանայ բանասերներու, բանագետներու, բարբառագետներու, ազգագրագետներու, մշակութաբաններու թեմաներով հետաքրքիր ընթերցողներու լայն զանգուածներու համար խիստ շահեկան հատորով մը: Ան այս վերջին հրատարակութիւնով կ'ուսումնասիրէ Համընդհանրային մշակոյթին մէջ տեղ գտած զուարճապատում մը, որուն հետքերը որոնելով կը շրջի բաւական ընդարձակ աշխարհատարածքի մը վրայ: Աւելի իմաստալից պատկերացում մը ներկայացնելու միտումով կուզենք հայերէն էջերու ընթերցողներուն ներկայացնել այդ պատումի բնագիրն ու թարգմանութիւնը: Սակայն հեղինակը չէ բաւարարուած միայն այս օրինակով, եւ ուսումնասիրած է այս զուարճապատումի տարբերակները: Այսպէտով մենք կը շրջինք Ղազախստանէն ԱՄՆ, Թուրքիայէն Արցախ եւ Նախիջեւան հետզհետէ Ջաւախք, Կեսարիա, Լոռի, Տաուշ, Սիւնիք, հասնելով մինչեւ Պէրսիոյ կամ Հալէպի մէջ գրառուած տարբերակներուն: Հատորը նաեւ կը բովանդակէ պատմական անդրադարձ մը, ապա կը նկարագրէ կրօնափոխ համընդհանրային բարբառի եւ բանահիւսութեան պատմութիւնը»: Այնուհետև գրքից արտատպել է 2011 թ. հոկտեմբերին Խոփայում Հիքմեթ Յաղջիից Ս. Վարդանյանի գրառած «Յիլէք արդէլէցի» զվարճապատումը (էջ 246), որի արևելահայերէն թարգմանության փոխարեն, «Ակօսի» ընթերցողներին ավելի հասկանալի լինելու համար, հրատարակվել է արևմտահայերէնի վերածված տարբերակ: Տպագրվել է նաև գրքի շապիկի նկարը:

19. Շուշան Ղազարյան, Երջանիկ օրեր էին, անցան, գնացին, «Աղբյուր», մանկապատանեկան ամսագրի 100-ամյակին նվիրված համար, Երևան, 2023, էջ 8-15:

Ճանաչված լրագրող Շուշան Ղազարյանի հուշերն են ամսագրի խմբագրությունում աշխատած տարիների մասին: Ս. Վարդանյանը հիշատակ-

վում է 8-12-րդ էջերում. «... Մեր գլխավոր խմբագիրները: Միայն անկեղծ գնահատանքով ու սիրով: Անվանի արձակագիր, պետական մրցանակի դափնեկիր Անահիտ Սահինյանը:

...Գրող էր, և ուշքն ու միտքը միայն իր գրելիքն էր: Տարվա մեջ մի քանի կարճ օրեր էր լինում խմբագրությունում, հիմնականում Ծաղկաձորի Գրողների հանգստյան տան իր սենյակում էր ապրում, ու պատասխանատու քարտուղարը ամեն ամիս տպարան ուղարկվող հերթական համարը վարորդի հետ տանում էր Ծաղկաձոր՝ կարդալու ու ստորագրելու: Իսկ երբ գալիս էր աշխատանքի, նախապես ոչ մեկիս չէր տեղեկացնում, դռների մեջ հայտնվում էր անսպասելի, հուշիկ, սահուն քայլքով, անձայն, մեզ հանկարծակիի բերելով: Գալուց էլ ոչ մեկիս չէր բարևում:

Ու որքան էլ պահանջկոտ էր իր վեպերի ու գրելիքի հանդեպ, նույնքան անհաղորդ ու անհանդուրժող էր աշխատակիցների ազատ ժամանակի հարցում: Հիմնականում ստեղծագործողներ էինք ու ազատ արձակուրդի կարիք ունեինք: Այդպիսի բան չկար, մանավանդ պատասխանատու քարտուղարի պարագայում, ով փոխարինում էր խմբագրին նրա բացակայության երկար ու ձիգ ամիսներին: Ստիպված էինք գողեգող գնալ «արձակուրդ»՝ առանց խմբագրի իմացության, մեկս մեկին գաղտնի փոխարինելով: Այդպիսի մի օր, երբ ես «փոխարինում էի» պատասխանատու քարտուղար Սերգեյ Վարդանյանին, դռների մեջ հանկարծ ու անկարծ հայտնվեց Անահիտ Սահինյանը: Թարգմանչուհի Լիլի Տեր-Մինասյանը լուրը տեղ էր հասցրել, և Սահինյանը Ծաղկաձորից շտապել էր Երևան՝ «բռնացնելու հանցագործին»: Այդ օրը պատասխանատու քարտուղար Սերգեյ Վարդանյանը զրկվեց աշխատանքից, իսկ ամսագիրը՝ հրաշալի ազգագրագետ բանահավաքից, կազմակերպչից, մշակութային Հայաստանի ամենավառ անհատներից մեկից, անսահման հումորով օժտված մի անձից, որի շուրջ հավաքված էր ամսագրի համար գրող հեղինակների հիմնական մասը:

...Մեր պատասխանատու քարտուղարները: Նրանց մտավորական կեցվածքն էր աշխատողներիս թիկունքին: Այս իմաստով մենք բախտավոր ենք եղել: Թե Սերգեյ Վարդանյանը, թե Թադևոս Տոնոյանը, խմբագրությունում ապահովել են աշխատանքային, ստեղծագործական ու մարդկային հարաբերությունների ազատ, ջերմ մթնոլորտ, այնպես, որ գլխավոր խմբագիրների տևական բացակայությունը երբևէ չի մթագնել մեր հարաբերություններն ու ամսագրի կանոնավոր տպագրությունը:

... Ամսագրի առաքելությունը:

Մեկն էր:

Հայ պատանիներին հասցնել այն բարձր գիտելիքը, ինչը չէր ուսուցանվում խորհրդային կադապարներով, գլավլիտի կանոններով արգելված դպրոցական դասագրքերում: Իսկ դասագրքերում շատ բան չկար սովորելու: Հայ ժողովրդի պատմությունը անցնում էին 9-րդ դասարանում, ընդամենը մեկ կիսամյակ, և ուրեմն ամսագիրը պիտի փակեր այդ դատարկ պատուհանը: Սերգեյ Վարդանյանը տպագրել էր իր «Հայոց մայրաքաղաքները» շարքը, և դա ազդակ եղավ, որ ես շարունակեմ այդ գործը: Ջանգահարեցի պրոֆեսոր Ռաֆայել Իշխանյանին: Առաջարկեցի դպրոցականների համար գրել հայ ժողովրդի պատմության շարք՝ Ուրարտուից մինչև մեր օրեր»: Տպագրվել է նաև Ս. Վարդանյանի լուսանկարը, էջ 10:

20. Վարդանյան Սերգեյ // **Գրական տեղեկատու**, Հայաստանի գրողների միության անդամներ (Հայաստան, Սփյուռք, Արցախ), կազմեց Էդվարդ Միլիտոնյանը, Երևան, «Վան Արյան» հրատ., 2023 (- 404 էջ), էջ 277-279:

Գրական տեղեկատուն ներկայացնում է ներկայումս ապրող գրողների կենսագրությունները, գրքերը և պարզևները, լուսանկարները, հասցեներն ու հեռախոսահամարները:

21. Hasmik Khachatryan, Lexical features of Hamshen dialect // **«Ջահուկյանական ընթերցումներ» 2 (20)**, գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, Երևան, ԳԱԱ Լի հրատ., 2023 (- 112 էջ), էջ 35-49:

Լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ.գ.թ. Հասմիկ Խաչատրյանը «Համշենի բարբառի բառապաշարային առանձնահատկությունները» անգլերեն հոդվածում բարբառի «կէչ» բառին անդրադառնալիս (էջ 41) հղել է Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի բարբառը բանահյուսությունը և երգարվեստը» (2009) գրքի 298-րդ էջին (վրիպակ է, պետք է հղվեր 297-րդ էջին):

22. Հրաչ Մարտիրոսյան, բ.գ.թ., Բեռլին/Լեյդեն, Իգական սեռական անդամի անվանումները հայերենում // **Կինը արևելքում, հոդվածների ժողովածու, պրակ 2**, Երևան, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 2023 (- 276 էջ), էջ 124-140:

«Կինը արևելքում» ժողովածուն ընդգրկում է 2022 թ. սեպտեմբերի 22-23-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում անցկացված «Կանայք արևելքում» միջազգային գիտաժողովի նյութերը: Հոդվածում Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը...» (2009) գրքի 278-րդ էջին հղում է արվում «բուլիզ-աղջնակ» բառանվանը (էջ 128):

2024

### Առաջին բաժին (հեղինակ՝ Ս. Վարդանյան)

1. Մերգեյ Վարդանյան, ազգագրագետ, խմբագիր, Առեղծուած, ո՛չ, զավթուած հողեր, «Ազդակ», օրաթերթ, Պէյրուք, 2024, Յունիս 26, թիւ 83, էջ 5, 6:

Արտատպութիւն է՝ տե՛ս «Խորհրդային Հայաստան», օրաթերթ, Երևան, 1989, հոկտեմբերի 18, թիւ 224, էջ 3:

Նույնը տե՛ս «Զարթօնք», թերթ, Պէյրուք, 1989, Նոյեմբերի 18, 19:

Նույնը տե՛ս «Ազգ», շաբաթաթերթ, Երևան, 2021, հունիսի 25, թիւ 24, էջ 8, 9:

Նույնը տե՛ս «Անկախ» շաբաթաթերթի առցանց տարբերակ, տեղադրվել է 2024, մայիսի 22-ին:

Ռուսերէն թարգմանութիւնը տե՛ս Размышления над картой о «перекройке границ», «Комсомолец», газета, Ереван, 1989, 25 ноября, № 140, с. 2 (որոշ կրճատումներով):

### Երրորդ բաժին

2. Հասմիկ Պողոսյան, Համշենի անցյալի ու մշակույթի պատմագիրը, «Շողակն Արարատյան», ամսաթերթ, Երևան, 2024, փետրվար, № 2 (487), էջ 6:

Ս. Վարդանյանի «Բանահյուսական պատումի միջավայրը (Կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները)» (2022) գրքին նվիրված հոդվածից հատվածներ. «Հայագիտության և հայ ազգագրության ու բանագիտության բնագավառի երևելի անուններից է Մերգեյ Վարդանյանը. գիտնական, բանագետ, բարբառագետ, հրապարակախոս, «Ձայն համշենական» թերթի հիմնադիր խմբագիր, ով երիտասարդ տարիքից նվիրվել է քրիստոնյա և բռնի կրոնափոխված համշենահայության ուսումնասիրությանը, նրա բանավոր մշակույթը փրկելու բանահավաքչական աշխատանքին: Բանարվեստի այդ եզակի նմուշների մի մասը ամփոփվել է 2009 թ. ԵՊՀ-ի հրատարակած նրա «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (կյութեր և ուսումնասիրություններ)» (- 428 էջ) աշխատության մեջ:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Մերգեյ Վարդանյանը վերջերս հայագիտության անդաստանում ավելացրել է ևս մի կոթողային աշխատություն՝ «Բանահյուսական պատումի միջավայրը (կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները)»:

## Անձնուրաց գիտնականի վիթխարի գործը

Մերգեյ Վարդանյանի կյանքի ու գիտական ժառանգության մասին պատմելը մի ամբողջ մենագրության նյութ կարող է ընդգրկել: Բավական է նշել, որ տասնամյակներ շարունակ նրա գիտական հետաքրքրությունները սնեովել են Օսմանյան Թուրքիայում բռնությամբ կրոնափոխված համշենահայությանն առնչվող հիմնահարցերի մանրագնին հետազոտության և հրապարակման վրա, ինչը, բնականաբար, մեծ կամք ու անմնացորդ նվիրում պահանջող աշխատանք է: Թուրքիայի, Ռուսաստանի և Կենտրոնական Ասիայի կրոնափոխ համշենահայերի մասին նրա հետազոտությունները տպագրվել են հայրենի և արտերկրի մամուլում, տարբեր գիտական ժողովածուներում:

1984 և 1987 թվականներին Ղրղզստանում, Ղազախստանում և Ռուսաստանում հայտնաբերել է իսլամադավան համշենցիների: Վտանգելով կյանքը՝ բազմիցս եղել է Թուրքիայի Արդվինի նահանգի Խոփայի և Բորչքայի գավառներում, գտել 20-ից ավելի հայախոս գյուղեր: Ուսումնասիրություններ կատարել նաև Ռիզեի և Էրզրումի նահանգների կրոնափոխ, թուրքախոս համշենցիների գյուղերում:

Մերգեյ Վարդանյանի հերթական՝ բանահյուսական պատումների միջավայրին նվիրված այս աշխատությունը կրոնափոխ համշենցիներից և XIX-XX դարերում տարբեր վայրերի քրիստոնյա հայերից գրառված, սյուժետային ընդհանրություններ ունեցող 37 անտիպ ու տպագիր զվարճապատումները համեմատելու և մեկտեղելու առաջին փորձն է: Գիտնականը բանարվեստի յուրաքանչյուր նմուշ քննության ենթարկելիս ներկայացրել է նաև բանասացների, բանահավաքների և հրատարակիչների, տվյալ պատումում հիշատակվող բնակավայրի, գործող անձանց մասին հետաքրքիր ու կարևոր տեղեկություններ. սա հեղինակի եզակի, նորարար մտեցումներից է:

... Մերգեյ Վարդանյանը բանագետներին և ժողովրդին պարզել է պատմա-ճանաչողական մեծ արժեք ունեցող աշխատություն: Իսկ վերջում ընթերցողի առաջ բացվում է տարբեր լեզուներով օգտագործված սկզբնաղբյուրների մի հսկայական ցանկ, որը համակարգելը, մշակելը պահանջել է երկար տարիների նվիրական աշխատանք:

Գիրքը արմատներով վանեցի գիտնականի տուրքն է ազգին ու նրա մշակույթին, որի կարևորագույն հաստատումն է Համշենն իր պատմությամբ»:

3. Գեւորգ Գյուլումյան, Արժեքավոր աշխատություն կրոնափոխ համշենահայերի մասին, «**Էջմիածին**», ամսագիր, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, ք. Վաղարշապատ, 2024, փետրուար, Բ., էջ 156-161:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող Գևորգ Գյուլումյանի գրախոսությունը նվիրված է Ս. Վարդանյանի գրքին. «2022 թ. դեկտեմբերի վերջին ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ լույս տեսավ **անվանի հայագետ, համշենագետ** Սերգեյ Վարդանյանի «Բանահյուսական պատումի միջավայրը (կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները)» ուսումնասիրությունը (Երևան, ՀԱԻ հրատ., 352 էջ + 16 էջ գունավոր ներդիր):

...Դժվար, գրեթե անհնար է անդրադառնալ Համշենին եւ համշենահայերին՝ առանց հիշելու Սերգեյ Վարդանյանին, որն ապրած տարիների մեծ մասը նվիրել է համշենագիտությանը: Նախորդող շրջանի բանագիտության մեջ բավական սակավ էր համշենահայությանը՝ մասնավորապես կրոնափոխ համշենցիներին առնչվող նյութը, որն իր շուրջ կեսդարյա գործունեության ընթացքում, հաճախ կյանքը վտանգելով, անհամեմատելիորեն հարստացրեց Ս. Վարդանյանը: Հետեւաբար առանց չափազանցության կարելի է ասել, որ նրա անվան հետ է կապվում համշենագիտության դպրոցի հիմնումը:

... Ս. Վարդանյանը, բազմաթիվ զրկանքներ կրելով, շատ անգամներ մեկնում է թե՛ խորհրդային տարբեր հանրապետություններ, թե՛ Արեւմտյան Հայաստան՝ հաճախ նույնիսկ առերեսվելով կյանքին սպառնացող ստույգ վտանգների: Դեռեւս 1984 թ. եւ 1987 թ. Ղազախստանում, Ուզբեկստանում, Ղրղզստանում եւ Ռուսաստանում հայտնաբերում է մահմեդականությանը դավանած համշենահայերի: 2019 թ. տողերիս հեղինակը ծավալուն հարցազրույց է անցկացնում նրա հետ (տե՛ս «50 տարի անց... կրկին համշենահայերի մասին», «Ազգ», 2019, հուլիսի 19): Այդ հարցազրույցում նվիրյալ հայագետը խոսում է իր կյանքի կեսդարյա ուղու մասին, հիշում դեպի մեծ նվիրում տանող ճանապարհին ընտրելու հանգամանքները:

... Այս գիրքը, այո՛, մարդկանց մասին է, նաեւ այն մարդկանց, որոնք, ինչպես վերոհիշյալ հարցազրույցում հիշում է Ս. Վարդանյանը, «ամռան տապին երկարաթեւ վերնաշապիկներ հագած եւ թղթապանակներն ամուր բռնած, հոգաաշատ դեմքերով տնետուն էին գնում եւ հայկական դպրոց բացելու համար ստորագրություններ հավաքում»:

Այդ մարդկանց մասին ավելի քան կես դար է, ինչ իր գրքերում պատմում է Ս. Վարդանյանը՝ այն վստահ գիտակցումով, որ նրանց մասին, բացի իրենից, «ոչ ոք չի գրի, որովհետեւ նրանց թոռներն ու ծոռները հիմա շատ զբաղված են, ռուսական էստրադային երգերի բարձր հնչյունների

ներքո ծովափին արեւկող պատկած հանգստանում են կամ էլ հերթական արձարանը, ռեստորանը, հյուրանոցն են բացում»:

Սերգեյ Վարդանյանի «Բանահյուսական պատումի միջավայրը (կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները)» հիմնարար հետազոտություն է, շատ կողմերով գիտական նորույթ պարունակող աշխատանք, եւ այն իր մնայուն տեղը կունենա հայ բանագիտության պատմության մեջ»:

4. Գեորգ Գիլլումեան, Համշենագիտութեան նոր աստիճանը, «Պայքար», շաբաթաթերթ, ք. Վաթերթաուն (Բոստոն), Մասաչուսեթս, ԱՄՆ, 2024, մարտ 24, թիւ 12 (367), էջ 8:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող Գեորգ Գիլլումյանի հոդվածը Ս. Վարդանյանի «Բանահյուսական պատումի միջավայրը...» (2022) գրքի մասին է. «Շուրջ մէկ տարի առաջ լոյս տեսաւ անուանի հայագէտ, համշենագէտ Սերգեյ արդանեանի «Բանահիւսական պատումի միջավայրը (կրօնափոխ համշենահայերի մի զուարճապատումի տարբերակները)» ուշագրաւ մենագրութիւնը (Երեւան, ՀԱԻ հրատ., 352 էջ): Այս գիրքը, ի տարբերութիւն ամէն օր լոյս տեսնող բազմաթիւ գրքերի, անհաղորդ ոճով, չոր-ցամաք գրուած շարադրանք չէ, այլ գիրք է մարդկանց մասին. «Մոյն մենագրութեան մէջ... փորձել ենք կոտրել գիտական գրականութեան մէջ տասնամեակներ իշխող այն կարծրատիպը, երբ հեղինակին յղելիս կամ որեւէ մէկին անդրադառնալիս, յաճախ առանց որեւէ կենսագրական տուեալ յիշատակելու, նշում է սոսկ նրա ազգանունն ու անուան միայն սկզբնատառը՝ մոռանալով, որ ինչ էլ որ գրում ենք, ի վերջոյ, այդ ամէնը մարդկանց մասին է», - գրում է հեղինակը գրքի առաջաբանում՝ միանգամից պարզաբանելով գրքի գիտական շարադրանքի սկզբունքը, ասել է՝ ընթերցողին մեկնելով աշխատութեան, այսպէս ասած, բանալին:

Սերգեյ Վարդանեանն աւելի քան յիսուն տարի առաջ է սկսել համշենագիտութեամբ զբաղուել, եւ ինչպէս երէկ, այնպէս էլ այսօր դժուար է խօսել համշենագիտութեան մասին՝ առանց հոլովելու նրա անունը: Աւելի դիպուկ՝ ոչ թէ դժուար է, այլ՝ անհնար, քանի որ նա այն հայագէտն է, որն իր ապրած տարիների մեծ մասը նուիրել է այդ գործին, որը նրա համար, կարելի է ասել, ուսմունք ու համոզմունք է դարձել, որին նա հաւատարիմ է արդէն, ինչպէս ասացինք, ավելի քան կէս դար: Սերգեյ Վարդանեանը շատ քիչ բան ժառանգելով համշենագիտութեան զգրոցներից՝ երկար ու ձիգ

տարիների ընթացքում, յաճախ կեանքը վտանգելով, անհամեմատելիորեն հարստացրեց եղածն ու, այո՛, համշենագիտութեան դպրոց հիմնեց, եւ դա ամենեւին չափազանցութիւն չէ:

...Նա գրկանքներ կրելով բազմիցս եղել է թէ՛ խորհրդային տարբեր հանրապետութիւններում, թէ՛ Արեւմտեան Հայաստանում (Ժամանակակից Թուրքիայում)՝ յաճախ առերեսուելով կեանքին սպառնացող ստոյգ վտանգների: Դեռեւս 1984 եւ 1987 թթ. Ղազախստանում, Ուզբեկստանում, Ղրղզստանում եւ Ռուսաստանում յայտնաբերել է իսլամադաւան համշենահայեր:

...«Բանահիւսական պատումի միջավայրը (կրօնափոխ համշենահայերի մի գուարճապատումի տարբերակները)» մենագրութիւնը, որն, ի շարք բազմաթիւ իւրայատկութիւնների, առանձնանում է նաեւ մահմեդական եւ քրիստոնէայ հայերի բանահիւսութիւնը առաջին անգամ համապարփակ քննութեան ենթարկելու առումով: Այս գիրքը բոլորովին նոր մօտեցմամբ է ներկայացում ընթերցողին, այն եզակի է ոչ միայն համշենագիտութեան, այլեւ բովանդակ հայագիտութեան ասպարէզում, քանի որ մի քանի հարիւր էջերում արտացոլուած են Համշենի վերջին 300 տարուայ պատմութիւնն ու համշենագիտութեան հետ այս կամ այն աղերսն ունեցող շատերի կենսագրութիւնները, ակադեմիական մակարդակում, ի հարկէ:

...Բացառիկ արժէք ունի գրքի «Կրօնափոխ համշենահայերի բարբառի եւ բանահիւսութեան ուսումնասիրութեան պատմութիւնից (XIX –XXI դդ.)» գլուխը, որտեղ հեղինակը մանրամասն անդրադառնում է համշենագիտութեան ձեռքբերումներին եւ այդ համատեքստում կրօնափոխ համշենահայերի մասին գրուած գրքերին ու յօդուածներին: Նա երախտագիտութեամբ եւ յարգալից բժախնդրութեամբ է մօտենում Համշենի պատմութեամբ զբաղուած ամէն մի գիտնականի ու հատ-հատ նշում է նրանց ուսումնասիրութիւնները, հրատարակման թուականը, վայրը, պայմանները՝ չմոռանալով, ի հարկէ, տալ արժանի գնահատականը՝ նշելով առաւելութիւններն ու թերութիւնները:

Այնուհետեւ հեղինակն սկսում է հակիրճ շարադրել «Արդէլեցիք՝ աւջի» գուարճապատման 37 պատումները, որոնք XIX-XXI դդ. գրի են առնուել Ղազախստանում, ԱՄՆ-ում, Արեւմտեան Հայաստանում (նախկին Օսմանեան կայսրութեան եւ Ժամանակակից Թուրքիայ), Արցախում, Ղարադաղում, Նախիջեւանում, Ջավախքում, Կեսարիայում, Լոռիում, Տաւուշում, Սեւանայ լճի աւազանում, Սիւնիքում, Փէրիայում, Մուշում, Հալէպում եւ այլուր: Յատկանշական է, որ կրօնափոխ համշենցիների 7 փոփոխակնե-

րից 6-ը գրառել է Ս. Վարդանեանը, մէկը՝ Ղազախստանում, հինգը՝ Արդուփնի նահանգում, իսկ մէկը՝ Հարվարդի համալսարանի երեք աշխատակիցները՝ Պոստոնում, այնտեղ Խոփայի գաւառից բնակութեան տեղափոխուած համշէնցի երիտասարդից:

Հեղինակը մանրամասն անդրադառնում է նաեւ այն պատումներին, որոնց տուեալները նշուած չեն: Հմտօրէն համադրելով եւ ուսումնասիրելով առկայ մեծ ծաւալի նիւթը, Ս. Վարդանեանն այդ ամէնը համեմատութեան մէջ է դնում նաեւ յիշեալ պատումի՝ այլ ժողովուրդների (ռուսների, թուրքերի, պարսիկների, ասորիների) տարբերակների հետ՝ առաւել մեծ արժէք ու գիտականութիւն հաղորդելով իր այս ծանրակշիռ մենագրութեանը»:

5. Անահիտ Հարությունյան, Հին-նոր պատմություն՝ հյուսված ներքին թշնամու փշալարերով, «**Անկախ**» շաբաթաթերթի կայքէջ, 2024, 22 մայիսի, <https://ankakh.com/hy/article/157685>:

Հատված. ««**Անկախը**» վերահրապարակեց երկու հոդված անցյալից՝ 1989 թ. «Խորհրդային Հայաստանից»: Առաջինը պատմաբան-բանասեր, հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ Շչորս Դավթյանի «Մեղրիի ճանապարհի առեղծվածը կամ ով էր կտրում Հայաստանի զարկերակը» հոդվածն է (<https://ankakh.com/hy/article/157620>), որ տպագրվել է «Խորհրդային Հայաստան» թերթի 1989 թ. սեպտեմբերի 16-ի համարում, երկրորդը՝ պատմաբան-բանասեր, գրող-հրապարակախոս Սերգեյ Վարդանյանի «Առեղծված. ո՛չ, զավթված հողեր» հոդվածը (<https://ankakh.com/hy/article/157628>), որ տպագրվել է նույն թերթում մի ամիս անց՝ հոկտեմբերի 18-ի համարում:

Ինչո՞ւ: Որովհետև այսօր, տավուշյան դեպքերի խորապատկերում դրանք նույնքան, ո՛չ, ավելի արդիական են, քան այն օրերին: Այս հեղինակները, անշուշտ, այն ժամանակ չէին պատկերացնի, որ անկախանալուց, հաղթած պատերազմով Արցախը վերադարձնելուց տարիներ անց տանուլ ենք տալու ամեն ինչ և մնալու ենք առհասարակ Հայաստանը կորցնելու վտանգի տակ»:

6. Ասպետ Մանճիկեան, «Բանահյուսական պատումի միջավայրը (Կրոնափոխ համշէնահայերի մի զվարճապատումի տարբերակները)» (Հեղինակ՝ Սերգեյ Վարդանեան), «**Ազդակ**», օրաթերթ, Պէյրուս, 2024, 15 Յուլիս, թիւ 98, էջ 5:

«Ազդակի» աշխատակից Ա. Մանճիկյանը թերթի «Ստացուած գիրքեր» բաժնում համառոտ ներկայացնում է հայագիտության քիչ ուսումնասիր-

ված հարցեր շոշափող Ս. Վարդանյանի մենագրությունը և եզրակացնում. «գիրքը բանագիտական լուրջ աշխատութիւն է եւ մեծարժէք պատմագրութիւն»: Տպագրվել է գրքի կազմի լուսանկարը:

7. Hrach Martirosyan, Armenian body part nams: exteranal genitalia // **Studies in Armenian Grammer and Lexicon**: Proceedings of the Workshop on Armenian Linguistics, Würzburg, 4-5 April 2022 (ed. by Petr Kocharov & Daniel Kölligan). Dettelbach: Verlag J. H. Röhl (Münchener Studien zur Sprachwissenschaft, Beiheft 35), 2024, p. 161-225.

Հոդվածում Ս. Վարդանյանի «Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը...» (2009) գրքի 336-րդ էջին հղում է արվում «բիբիլ» բառի, իսկ 278-րդ էջին՝ «բուլիզ» բառի համար:

8. Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության արխիվի տեղեկագիր մատյան. Երուսաղեմի Հայոց պատրիարքարան, հ. Ա, աշխատասիրեցին՝ Լուսինե Սահակյանը, Անի Ոսկանյանը, Անի Սարգսյանը, առաջաբանը՝ Լուսինե Սահակյանի:

Հրատարակվել է Երուսաղեմի Հայոց պատրիարքության, Երևանի պետհամալսարանի գիտական խորհրդի, Նորթրիջի Կալիֆորնիայի նահանգային համալսարանի Հայագիտական ուսումնասիրությունների ծրագրի երաշխավորությամբ, Երուսաղեմ-Երևան, «Լուսակն», 2024 (- 1040 էջ):

Գրքի ներկայացագրից՝ անտացիայից, հատված. «Առաջին անգամ մանրամասն ցուցակագրված և ծավալուն նկարագրությամբ ներկայացված են Երուսաղեմի Հայոց պատրիարքարանում պահվող Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի հովանու ներքո ստեղծված «Տեղեկատու դիւանի» «- Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության արխիվի» առաջին տուփում հավաքված 634 վավերագրեր (հայերեն, օսմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, ռուսերեն)՝ համապատասխան ծանոթագրություններով: Այս արխիվն ունի աղբյուրագիտական եզակի արժեք 1912 - 1922 թթ. Հայկական հարցի զարգացման հանգրվանների և Հայոց ցեղասպանության ուսումնասիրության համար: Արխիվում են հավաքված հայ և օտար քաղաքական-հասարակական, հոգևոր գործիչների, դիվանագետների բազմաթիվ զեկույցներ, տեղեկագրեր, նամակներ, ակնատեսների վկայություններ և օրագրեր, ինչպես նաև՝ Առաջին աշխարհամարտից առաջ և հետո Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ վայրերի հայ բնակչության, որբերի, իսլամացված ու առևանգված հայերի, նյութական կորուստների վիճակագրական ցանկեր, առաջնորդարաններից՝ Կ. Պոլսի պատրիարքարան ուղարկված նամակ-

ներ, օսմանյան իշխանությունների՝ հայերի բնաջնջման հրամանագրեր, երիտթուրք ռճրագործների անվանացանկեր և այլն»:

Գրքի խմբագիրներին՝ Վահրամ Շեմմասայանին (ԱՄՆ), Վաչե Բրուսյանին (ԱՄՆ), Ռուբեն Մելքոնյանին, Միհրան Մինասյանին, Ալեքսանդր Սաֆարյանին, Սերգեյ Վարդանյանին, Սեդա Գասպարյանին, Վարուժան Պողոսյանին «Երախտագիտության խոսք»-ում հատ-հատ ներկայացնելուց առաջ աշխատասիրողները գրել են. «Հատորի աշխատասիրողներս, ի խորոց սրտի, երախտապարտ ենք մեր խմբագրակազմին: Ուսումնասիրության ընթացքում, հուրախություն և ի հպարտություն մեզ, մեր շուրջը համախմբվեց հայ մտավորականների բացառիկ փառանգ: Գրքի խմբագիրները տարբեր ոլորտների փայլուն մասնագետներ են, որոնք իրենց կյանքը նվիրել են հայ ժողովրդի պատմության, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության խնդիրների ուսումնասիրությանը: Վավերագրերի բազմազան բնույթից ելնելով՝ մեր աշխատասիրության հիմքում դրվել են քննության միջառարկայական համեմատական և վերականգնման մեթոդները, ուստի խմբագիրներից յուրաքանչյուրը հարցերը դիտարկել է նաև իր մասնագիտական տեսանկյունից՝ տալով արժեքավոր խորհուրդներ, որից գիրքը միայն շահել է: Խմբագիրների՝ տարիների ընթացքում ձեռք բերած փորձն ու ամբարած գիտելիքների գանձարանը մեզ օգնել է նաև գտնել շատ հարցերի պատասխաններ: Գործընկերների՝ հատորի ստեղծման բացառիկության արժևորումն ու գործի հանդեպ ջերմ վերաբերմունքը և նաև մեր կատարած աշխատանքի նկատմամբ հավատն էր, որ օգնեց հաղթահարել տարատեսակ խոչընդոտներ և այս պատասխանատու աշխատանքը հասցնել ավարտին» (էջ 9-10):

«ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, հայագետ, ազգագրագետ և բանագետ, «Ձայն համշենական» թերթի հիմնադիր-գլխավոր խմբագիր Սերգեյ Վարդանյանը, ստանձնելով հատորի խմբագրական աշխատանքը, ոչ միայն տվել է արժեքավոր խորհուրդներ, իր անձնական արխիվից տրամադրել համապատասխան նյութեր, այլև մեր ընդհանուր գործի հաջողությանը ծառայեցրել գիտահրատարակչական աշխատանքի ու մշակույթի վաստակաշատ գործչի իր բացառիկ փորձը» (էջ 11):

9. Շչորս Դավթյան, Մեղրիի ճանապարհի առեղծվածը, կամ ո՞վ էր կտրում Հայաստանի զարկերակը, «Ազդակ», օրաթերթ, Պեյրուօ. 2024, Յունիս 25, թիւ 82 (26589), էջ 5, 6:

Արտատպություն է, տե՛ս «**Խորհրդային Հայաստան**», թերթ, Երևան, 1989, սեպտեմբերի 16:

«**Խորհրդային Հայաստան**» թերթի խմբագիր Շչորս Դավթյանի հոդվածը, որպեսզի խնդիրը ամբողջական ներկայացվի, «**Ազդակ**» թերթում արտատպվել է մի փոքր նախաբանով. «Սահմանային խնդիրները պատմութեան տարբեր ժամանակաշրջաններուն իրենց վրայ հրաւիրած են լուսարձակները: Վերջին տարիներուն եւս սահմանազատումն ու սահմանագծումը ամէնօրեայ նիւթ է. յատկապէս մեկնելով այն իրողութենէն, որ Հայաստանի այսօրուան յանձնուողական քաղաքականութիւն վարող իշխանութիւնները, արդէն իսկ գաղտնի համաձայնութիւններով սկսան սահմանագծման գործընթացը՝ Տաւուշէն:

Մեր յաջորդական թիւերով կը հրատարակենք «**Խորհրդային Հայաստան**» օրաթերթին մէջ 1989 թականին լոյս տեսած երկու յօդուածներ՝ սահմանային հարցերու եւ գրաւուած կամ տրուած հողատարածքներու մասին, առաջինը՝ գրականագէտ, գործիչ Շչորս Դաւթեանի գրիչին պատկանող, իսկ երկրորդը՝ ազգագրագետ, մտաւորական, խմբագիր Սերգէյ Վարդանեանի արձագանգը՝ Շ. Դաւթեանին»:

Իրականում, «**Խորհրդային Հայաստան**» թերթի գլխավոր խմբագիր Շչորս Դավթյանի հոդվածը գրվել է Ս. Վարդանյանից հետո:

Ս. Վարդանյանի «Առեղծված ծ, ո՛չ, զավթված հողեր» հոդվածը «**Խորհրդային Հայաստան**» թերթից արտատպվել է «**Ազդակ**» թերթի 2024 թ. հունիսի 26-ի թիվ 83-ում, էջ 5, 6:

10. Նոյ նահապետը (ժողովրդական վիպաշար), աշխատասիրությամբ Կարեն Հովհաննիսյանի, գիտ. խմբագիր՝ Տորք Դալայյան, Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., 2024 (- 128 էջ):

Նոյ նահապետի և համաշխարհային ջրհեղեղի մասին գրավոր և բանավոր ավանդագրույցների քննությունն է, տպագրվել են նաև բնագրերը, այդ թվում՝ «Թագավորի երազները» (2003) բանահյուսական ժողովածուից «Նոյ նավապետն ու օձը» ավանդագրույցը:

«Թագավորի երազները» ժողովածուի բոլոր նյութերը Ս. Վարդանյանի կոչով 1978-1982 թթ. տարբեր բարբառներով գրի են առել ոչ միայն Հայաստանի, այլև տարածաշրջանի հայկական դպրոցների աշակերտները: Ավանդագրույցն իր տատիկից՝ Շուշանիկ Մուրադյանից (ծնվ. 1906 թ.) Ջավախքի (Ախալքալաքի) Բուռնաշեթ գյուղում բարբառով գրառել է թոռը՝ 9-

րդ դասարանում սովորող Շուշանիկ Մուրադյանը և փրկել կորստից: Այն նրա տատիկը փոքր տարիքում լսել է իր հորից՝ Բարդուղիմեոսից:

Ավանդազրույցը թարգմանվել է անգլերեն («Captain Noah and The Snake») և 2007 թ. տպագրվել «The salvaged tales» (Փրկված հեքիաթներ) անգլերեն ժողովածուում (էջ 6):

«Թագավորի երագները» գրքում հրապարակվելուց ուղիղ 20 տարի անց՝ 2023 թ., այն Սերգեյ Վարդանյանը հրատարակել է գերմաներեն՝ «Kapitän Noah und die Schlange» վերնագրով իր կազմած «Մոռացությունից փրկված հայկական հեքիաթներ» («Sergej Wardanjan, Vor dem Vergessen gerettete armenische Märchen, Übersetzung Narine Howessjan, Deutsche Bearbeitung Dorothee Schmid (Schweiz), Jerewan, Lusakn, 2023 (-208 seiten, 176 s. + 32 s. bunte Beiblätter), բանահյուսական ժողովածուում (էջ 8, 9):

11. Աելիտա Դոլուխանյան, Մեծ Հայքի 12 մայրաքաղաքներն՝ ըստ Սերգեյ Վարդանյանի մեծարժեք գրքի, «Գրական թերթ», շաբաթաթերթ, 2024, դեկտեմբերի 27, № 44, էջ 7, 8:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանի գրախոսությունից հատվածներ. «2025-ին լույս կտեսնի Սերգեյ Վարդանյանի գրվածքների «Ընդարձակ մատենագիտությունը» (1974-2024), այն բաղկացած է 342 մեծադիր էջերից: Նրանում բանասեր, պատմաբան, բանագետ, բանահավաք, բարբառագետ, արձակագիր, մանկագիր, հրապարակախոս Սերգեյ Վարդանյանի գործերն են, որոնց հեղինակին ճանաչում եմ Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ընդունելության քննություններից՝ հայոց լեզու գրավոր, նաև բանավոր առարկաներից: Գրավորի քննության ժամանակ ուշադրությունս գրավեց եվրոպական արտաքինով մի գեղեցիկ տղա, որ հանգիստ գրեց իր շարադրությունը: Որքան մեծ եղավ ուրախությունս, որ այդ տպավորիչ տղան ընկել էր բանավորի քննության այն լսարանը, ուր ես գտնվում էի վիճակահանությամբ: Պարզվեց՝ գրավորից «4» գնահատական էր ստացել, սա արդեն մեծ նվաճում էր, որովհետև մանկավարժականում «4» կամ «5» գնահատականները խստորեն հսկվում էին, իսկ «5»-եր գրեթե չէին լինում: Տղան փայլուն գիտեր հարցերը, պատասխանեց նաև լրացուցիչ հարցերի, ես հիացած էի, սակայն հայոց լեզվից նրա գիտելիքները «4»-ի էին: Քննական հանձնաժողովի նախագահը հայտնի լեզվաբան Աշոտ Աբրահամյանն էր, և նա պետք է որոշեր՝ «5» կամ «4»: Ես կանչեցի Աշոտ Աբրահամյանին, ներկայացրի իրավիճակը և խնդրեցի, որ դիմորդը «5» ստանա: Նա քննեց տղային, ասաց, որ գիտելիքները գրականություն-

նից փայլուն են և կանչեց ռեկտորին՝ Մուսայել Քոչարյանին՝ «5»-ի թույլտվություն ստանալու: Երբ ռեկտորը եկավ, ասացի՝ տղան ուսանողի գիտելիքներ ունի: Սա դարձավ զավեշտալի պատմություն. կասկածեցին, թե մեկ ուրիշն է եկել Սերգեյ Վարդանյանի փոխարեն քննություն հանձնելու: Փակեցին մեզ քննասենյակում, ստուգեցին նրա գործերը. լուսանկարը համապատասխանում էր դիմորդին: Ռեկտորը հարցրեց. «Տղա՛ ջան, դու եղբայր ունե՞ս»: Սերգեյը ժպտալով պատասխանեց. «Ես մի ծին եմ, միսու՛ճար»: Բոլորը ծիծաղեցին, և նա ստացավ իր «գերազանց» գնահատականը: Որքան ճիշտ էր հասկացվել պատանի Սերգեյի օժտվածությունը, երբ նա բուհ էր ընդունվում: Եվ ահա արդյունքը՝ ծանրաբեռ ու մեծարժեք մատենագիտություն, հրաշալի գրքեր և դրանց մեջ ամենահիշարժանը՝ «Հայաստանի մայրաքաղաքները», որն առաջին անգամ լույս է տեսել 1985-ին՝ «Հայոց մայրաքաղաքները» վերնագրով: Պատմական առումով գիտական ու ճշգրիտ հետազոտություն, բոլորովին գուրկ ազգային սնապարծությունից» (էջ 7):

«Այս առումով Սերգեյ Վարդանյանի «Հայաստանի մայրաքաղաքները» գիրքը վերժամանակյա երևույթ է և արժանի՝ եվրոպական լեզուներով թարգմանվելու:

Վարդանյանը թվարկում է եվրոպացի այն գիտնականների անունները, որոնք զբաղվել են ուրարտական սեպագրերով: 1985 և 1995 թվականներին, երբ Սերգեյ Վարդանյանը հրատարակում էր իր կոթողային գործը, դեռ Նիկողայոս Ադոնցի «Քննական պատմություն Հայոց» աշխատության հայերեն թարգմանությունը չկար: Մեծ բյուզանդագետն ու հայագետը գիտակցաբար Հայոց պատմության հատորները գրում էր ֆրանսերեն՝ աշխարհին հայերի ճշգրիտ պատմությունը ներկայացնելու համար:

...Գրքում կան փաստացի հատվածներ, որոնք ճշգրիտ դասեր են այսօրվա Հայաստանի համար. ամեն ազգ պետք է հույսն իր վրա դնի. «Օտարերկրյա հյուպատոսները բանակցելու պատրվակով քանիցս ինքնապաշտպանների մոտ գալով՝ ուսումնասիրում են նրանց դիրքերը և հայտնում թուրքերին, իսկ անգլիական հյուպատոս Մ. Ուլիամը ճշտում է թուրքերի թնդանոթների դիրքը և ուղղում հայկական պաշտպանական գծի խոցելի տեղերի վրա» (էջ 8):

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝

1. «Ազատամարտ», շաբաթաթերթ, ՀՅԴ հրատարակություն, Երևան, հիմնադրվել է 1991 թ.:
2. «Ազատ օր», օրաթերթ, ՀՅԴ պատասխանատու մարմնի պաշտոնաթերթ, լույս է տեսնում 1945-ից Աթենքում՝ հայերեն և հունարեն: «Նոր օր» (1923-40) օրաթերթի շարունակությունն է:
3. «Ազատ օր», Բացառիկ, ազգային, կուսակցական հոբելյանների կամ Ամանորի առթիվ «Ազատ օր» (Աթենք) թերթի հոդվածների գունազարդ, շքեղ ժողովածու:
4. «Ազգ», Երևան, լույս է տեսնում 1991-ից, սկզբում եռօրյա թերթ, այնուհետև՝ օրաթերթ, 2014-ից՝ շաբաթաթերթ:
5. «Ազդակ», օրաթերթ, ՀՅԴ Լիբանանի շրջանի պաշտոնաթերթ, լույս է տեսնում Բեյրութում, 1927-ից:
6. «Ազդակ», Բացառիկ, ազգային, կուսակցական հոբելյանների կամ Ամանորի առթիվ «Ազդակ» (Պեյրութ) թերթի հոդվածների գունազարդ, շքեղ ժողովածու:
7. «Ալիք», ՀՅԴ պաշտոնաթերթ, Թեհրան, 1931-ից մինչև 1941-ը՝ շաբաթաթերթ, ապա՝ երկօրյա թերթ:
8. «Ակունք», ամսաթերթ, ք. Ախալքալաք, տպագրվել է Երևանում, 2001 թ. օգոստոսից: Հիմնադիր և հրատարակիչ՝ «Ակունք» միություն:
9. «Աղբյուր», մանկապատանեկան ամսագիր, Երևան, նախկինում՝ «Պիոներ», հրատարակվել է 1923-ից, 1991-ից՝ «Աղբյուր»:
10. «Այբ-Ֆե», շաբաթաթերթ, Երևան, լույս է տեսել 2002 թ. դեկտեմբերից:
11. «Այժմ», շաբաթաթերթ, Երևան, հիմնադիր և հրատարակիչ՝ «Ազգային ժողովրդավարական միություն» (ԱԺՄ), լույս է տեսել 1996 թ. հունվարից մինչև 1998 թ. վերջը:
12. «Անդին», ամսագիր, Երևան, հրատարակվում է 2012 թ. դեկտեմբերից:
13. «Անկախ», շաբաթաթերթ, Երևան, լույս է տեսել 2009-2018 թթ., այնուհետև գործում է իր կայքէջի միջոցով:
14. «Ապագա բժիշկ», ԵՊԲՀ պաշտոնաթերթ, տպագրվում է 1958-ից:

---

\* Անհարկի սխալներից խուսափելու համար չեմ նշում տարբեր լեզուներով շուրջ 180 անուն թերթերի, ամսագրերի և հանդեսների հրատարակման, ընդհատման, վերսկսման, տպագրության դադարեցման, պարբերականների փակման, վերաբացման և այլնի մասին:

15. «Առագաստ», կանանց շաբաթաթերթ, հրատարակվել է Երևանում 1991-1994 թթ.: Տե՛ս նաև ռուսերեն «Апарат»:

16. «Առավոտ», օրաթերթ, Երևան, լույս է տեսնում 1994-ից:

17. «Ասպարեզ», օրաթերթ, ԱՄՆ, Գլենդել, ՀՅԴ Արևմտյան Ամերիկայի կենտրոնական կոմիտեի պաշտոնաթերթ, հիմնադրվել է 1908 թ.:

18. «Ասպետ», ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության պարբերաթերթ, Երևան, հրատարակվել է 1999-ից:

19. «Ավանգարդ», ՀԼԿԵՄ ԿԿ պաշտոնաթերթ, Երևան, լույս է տեսնում 1923-ից, 1991-ից՝ անկախ: 2012-ից՝ շաբաթաթերթ:

20. «Աւետիք», հանդես, Պէյրուօ, Պաշտօնաթերթ Հայ Կայսրողիկե Պատրիարքութեան: Լույս է տեսնում 1932-ից Բեյրութում (1971-1983 թթ. չի հրատարակվել), 1994-ից՝ քառամսյա հանդես:

21. «Արարատ», օրաթերթ, Բեյրութ, ՄՂՀԿ Կենտրոնական վարչության և Լիբանանի շրջանի պաշտոնաթերթ, լույս է տեսնում 1937-ից ընդհատումներով, տարբեր տարիների եղել է շաբաթաթերթ, օրաթերթ:

22. «Արմենիան թայմս» («Armenian Times», «Армениян таймс»), հայերեն-ռուսերեն ամսաթերթ, Մոսկվա, հրատարակվել է 2008-ից մինչև 2012թ. դեկտեմբեր ամիսը՝ 50 համար:

23. «Արտաշատ», ՀԿԿ Արտաշատի շրջկոմի և ժողովրդական դեպուտատների Արտաշատի շրջանային և քաղաքային խորհուրդների երկօրյա թերթ, հրատարակվել է 1958 թ.-ից, ք. Արտաշատում:

24. «Բազմավեպ», հայագիտական-բանասիրական-գրական հանդես, հրատարակվում է 1843 -ից, Վենետիկում:

25. «Բանբեր Երևանի համալսարանի», Երևանի պետական համալսարանի հասարակական գիտությունների քառամսյա հանդես, լույս է տեսնում 1967-ից, 2010-ից հրատարակվում է 6 առանձին մասնագիտական շարքերով:

26. «Բանբեր», սկզբում շաբաթաթերթ, ապա՝ երկշաբաթաթերթ, Երևան, Հայաստանի քրիստոնեա-դեմոկրատական միության պաշտոնաթերթ, հրատարակվել է 1993-1995 թթ.:

27. «Բնօրրան», Երևան, Հայաստանի հայրենակցական միությունների խորհրդի հանդես, լույս է տեսել 1995-ից:

28. «Գարդմանի կանչ», ամսաթերթ, Երևան, հիմնադիր՝ «Գարդմանահայերի հայրենակցական միավորում» ՀԿ, լույս է տեսել 1996 թ. հուլիսից մինչև 2004 թ. «Գարդմանք» անունով, 2006-ից մինչև 2014 թ.՝ «Գարդմանի կանչ»:

29. «Գարուն», ամսագիր, Երևան, մինչև 1990 թ. ՀԼԿԵՄ ԿԿ և ՀԳՄ վարչության հրատ., լույս է տեսնում 1967-ից:

30. «Գարուն», ամսագիր, Միդնեյ, Ավստրալիա, հրատարակիչներ՝ Համագրայինի «Նայիրի» և Հ.Մ.Ը.Մ.-ի «Արարատ» մասնաճյուղերի միացյալ վարչություն, հիմնադրվել է 1992 թ.:

31. «Գեղարվեստ», կիսամյա թերթ, Երևան, հրատարակիչ՝ ՀՀ մշակույթի նախարարություն, հրատարակվել է Երևանում, առաջին համարը լույս է տեսել 1990 թ. հոկտեմբերին, վերջինը՝ 1992 թվականին: Համարվել է 1969-90 թթ. Երևանում հրատարակված ՀԽՍՀ պետկինոյի և կինեմատոգրաֆիստների միության տասնօրյա պաշտոնաթերթ «Ֆիլմի» իրավահաջորդը, այդ պատճառով համարների հերթական թիվը՝ ընդհանուրը, հաշվարկվել է «Ֆիլմից»:

32. «Գուլոս Արմենիի», շաբաթաթերթ, Երևան, «Голос Армении» ռուսերեն թերթի հայերեն տարբերակն է, լույս է տեսել 2006-2007 թթ.:

33. «Գործարար/Горбизар», միջազգային երկլեզվյան ռուսերեն-հայերեն հասարակական, մշակութային, գրական գունազարդ ամսագիր, 1999 թվականից հրատարակվում է ՌԴ Կալուգայի մարզի Կալուգա քաղաքում, սկզբում ամիսը մեկ, հազվադեպ՝ երկու ամիսը մեկ՝ միացյալ երկու համարով, 2008-ից՝ երեք ամիսը մեկ՝ միացյալ երեք համարով:

34. «Գրական թերթ», Երևան, Հայաստանի գրողների միության շաբաթաթերթ, հրատարակվում է 1932-ից, մինչև 1946 թ.՝ տասնօրյա: 1941թ. նոյեմբերից մինչև 1944 թ. դեկտեմբեր չի տպագրվել:

35. «Գրքերի աշխարհ», ամսաթերթ, ՀՀ հրատպետկոմի և գրքասերների հանրապետական կամավորական ընկերության պաշտոնաթերթ, լույս է տեսել Երևանում, 1968-1999 թթ.:

36. «Դիտակ», պատկերազարդ հանդես, Բեյրութ, անհատական հրատարակություն, լույս է տեսել 1996-ից մինչև 2016 թ.՝ տարբեր պարբերականությամբ:

37. «Դիտորդ», Մարդու իրավունքները Հայաստանում, պարբերական, Հայաստանի հելսինկյան կոմիտեի տեղեկագիր, հրատարակվել է «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի» ու «Սահմանադրական և իրավական քաղաքականության ինստիտուտի» օժանդակությամբ, Երևան, 2002: Տպագրվել է նաև անգլերեն տարբերակը «Ditor» (Observer) անունով:

38. «Դպրոց», շաբաթաթերթ, Երևան, հրատարակվել է 1995-1997 թթ., տե՛ս հաջորդ նկարագրությունը:

39. «Դպրություն», եռօրյա թերթ, Երևան, ՀԽՍՀ լուսավորության մինիստրության և ժողովրդական կրթության ու գիտության աշխատողների արհմիության հանրապետական կոմիտեի պաշտոնաթերթ: Հրատարակվել է

1990-94 թթ., 1995-97 թթ.՝ «Դպրոց», 1997-ից՝ «Կրթություն» անուններով: Տե՛ս «Սովետական դպրոց»:

40. «Դրօշակ», ամսագիր, ՀՅԴ ամենամսյա պաշտոնաթերթ: Լույս է տեսել 1891-2011 թթ.՝ Ժնևում, Թիֆլիսում, Կոնստանցայում, Փարիզում, Բեյրութում, Աթենքում, 1999-ից՝ Երևանում:

41. «Եզերք», Երևան, Հայրենադարձության և հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միության հանդես: Հրատարակվել է 2 համար, առաջինը՝ 2006 թ. ապրիլին, երկրորդը՝ 2007 թ. օգոստոսին:

42. «Եթեր», շաբաթաթերթ, Երևան, 1957-94 թթ.՝ ՀՀ հեռուստառադիոպեկոմի շաբաթաթերթ, տպագրվել է «Ռադիո և հեռուստատեսություն», «Խոսում է Երևանը», «Խոսում և ցուցադրում է Երևանը», 1969-94՝ «Եթերում է Երևանը», 1994-ից՝ «Եթեր»: Տպագրում է հեռուստատեսային ծրագրեր, նաև մշակութային լուրեր և հոդվածներ:

43. «Եթերում է Երևանը», տե՛ս «Եթեր»:

44. «Երեկոյան Երևան», օրաթերթ, մինչև 1990 թ. ՀԿԿ Երևանի քաղկոմի և ժող. պատգամավորների քաղխորհրդի, 1990-ից՝ պատգամավորների Երևանի քաղխորհրդի պաշտոնաթերթ, լույս է տեսել Երևանում, 1957-99 թթ., մինչև 1964 թ. կոչվում էր «Երևան»:

45. «Երևանյան ժամանց», կիսամսյա հանդես, հրատարակել է Երևանում տեղի ունեցող թատերական, սպորտային, մշակութային միջոցառումների, ցուցահանդեսների, հյուրախաղերի մասին լրատվություն, հրատարակվել է 2003 թ. Երևանում:

46. «Երկիր», ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի պաշտոնաթերթ, լույս է տեսել Երևանում 1991-94 և 1998-2012 թթ.:

47. «Զարթոնք», հասարակական-քաղաքական, գրական օրաթերթ, Բեյրութ, ՌԱԿ-ի կենտրոնական վարչության պաշտոնաթերթ, լույս է տեսնում 1937-ից (ընդհատումներով):

48. «02», ՀՀ ՆԳՆ շաբաթաթերթ, Երևան, տպագրվում է 1990 թ.-ից:

49. «Էկոնոմիկա», տնտեսական, կրթամշակութային, վերլուծական եռամսյա հանդես, լույս է տեսնում 2006-ից, Երևանում:

50. «Էջմիածին», Պաշտօնական ամսագիր Ամենայն հայոց կաթողիկոսության Մայր աթոռոյ Սրբոյ Էջմիածնի: Լույս է տեսնում 1944-ից, մինչև 1961 թ. տպագրվել է Երևանում, ապա՝ Էջմիածնում:

51. «Թի Վի ալիք» (TV ալիք), հեռուստատեսության և ռադիոյի ծրագրերի, նաև գովազդային շաբաթաթերթ, Երևան, հրատարակվում է 1997-ից, ունի ռուսերեն տարբերակ՝ «TV канал»:

52. «Ժամանակ», օրաթերթ, լույս է տեսնում 1908-ից Ստամբուլում:

53. «Ժամանակ», օրաթերթ, լույս է տեսնում 2006-ից Երևանում:
54. «Իմ իրավունքը», անկախ պարբերաթերթ, հրատարակվել է 2005-2006 թթ.:
55. «9-րդ հրաշալիք», մշակութային, ուսումնակրթական, ժամանցային շաբաթաթերթ, Երևան, հրատարակվում է 1994-ից:
56. «Իրան-Նամե», Երևան, գիտամշակութային, հասարակական-քաղաքական, այնուհետև՝ արևելագիտական պարբերական: Առաջին համարը լույս է տեսել 1993 թ. մայիսին: Մինչև 2015 թ. տպագրվել է 46 համար:
57. «Իրավունք», հասարակական-քաղաքական եռօրյա թերթ, Երևան, «Սահմանադրական իրավունք» միության պաշտոնաթերթ, լույս է տեսնել 1989-ից:
58. «Իրավունքը de facto», հասարակական-քաղաքական թերթ, Երևան, հիմնադիր և հրատարակիչ՝ «Տեսակետ» ՍՊԸ, լույս է տեսել 2008 թ. հունիսի 3-ից մինչև 2010 թ. հուլիսի 8-ը, երեքշաբթի և ուրբաթ:
59. «Իրատես de facto», հասարակական-քաղաքական թերթ, Երևան, հիմնադիր և հրատարակիչ՝ «Տեսակետ» ՍՊԸ, լույս է տեսել 2010 թ. հուլիսի 9-ից մինչև 2016 թ. փետրվարի վերջը, երեքշաբթի և ուրբաթ:
60. «Իրատես», հասարակական-քաղաքական թերթ, Երևան, հիմնադիր և հրատարակիչ՝ «Տեսակետ» ՍՊԸ, լույս է տեսել 2016 թ. մարտի 1-ից մինչև 2020 թ. դեկտեմբերի 25-ը, երեքշաբթի և ուրբաթ: Գործում է irates.am կայքէջը:
61. «Լրաբեր», Ամերիկահայ առաջադիմական միության հրատ., լույս է տեսել 1938-79 թթ. Նյու Յորքում, 1979-90 թթ.՝ Լոս Անջելեսում:
62. «Լրաբեր հասարակական գիտությունների», ՀՀ ԳԱԱ գիտական ասոցիա, լույս է տեսնում Երևանում (1940-65-ին՝ «Տեղեկագիր հասարակական գիտությունների»):
63. «Լրագիր օր», օրաթերթ, Երևան, հրատարակվել է 1996 թ. հունվարից:
64. «Լրագիր», անկախ օրաթերթ, լույս է տեսել Երևանում, 1994-96 թթ.:
65. «Լույս», շաբաթաթերթ, ԱՄՆ, Գլենդեյլ, լույս է տեսել 1998-ից:
66. «Լույս Համշենի», առաջին համարը լույս է տեսել «Լույս համշենյաց» անունով, Սոչիի «Սևան» հայկական մշակութային կենտրոնի ամսաթերթ, հրատարակվել է Երևանում, 1991-1992-ին, ընդամենը՝ 6 համար, առաջինը՝ 1991 թ. նոյեմբերին, № 5-6-րդը՝ ապրիլ-մայիս միացյալ համարը՝ 1992 թ. մայիսին: Ողջ տպաքանակը՝ 2000-ական օրինակ, առաքվում էր Սոչի:
67. «Լուսակն», պատկերազարդ հանդես, Երևան, լույս է տեսել 2010-2013 թթ.:
68. «Լուսանցք», շաբաթաթերթ, Երևան, լույս է տեսել 2007-ից:

69. «Խորհրդային Հայաստան», օրաթերթ, ՀԿԿ ԿԿ պաշտոնաթերթ, լույս է տեսել Երևանում՝ 1921-1940, 1988-1991 (1940-88-ին՝ «Սովետական Հայաստան»), 1991-ից՝ «Հայաստան»:

70. «Խորհրդային Ղարաբաղ», որպես պաշտոնաթերթ տարբեր հաճախականությամբ 1923-1992 թթ. լույս է տեսել Ստեփանակերտում (1940-1989 թթ.՝ «Սովետական Ղարաբաղ»):

71. «Ծիծեռնակ», Երևան, ՀԼԿԵՄ Կենտկոմի և Վ. Ի. Լենինի անվան համամիութենական պիոներական կազմակերպության հանրապետական խորհրդի մանկական ամսագիր՝ հոկտեմբերիկների համար: Հրատարակվում է 1929-ից:

72. «Կանչ», մանկապատանեկան եռօրյա թերթ, մինչև 1990 թ.՝ «Պիոներ կանչ»:

73. «Կինոաշխարհ», Հայաստանի ազգային կինոկենտրոնի ամսաթերթ, Երևան, տպագրվել է՝ 2011 թ. դեկտեմբեր - 2013 թ. դեկտեմբեր:

74. «Կուլտուր-լուսավորական աշխատանք» (1989 թ. հուլիս-օգոստոսից՝ «Մշակույթ»), ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության հասարակական-քաղաքական, կուլտուրայի և արվեստի հարցերով գիտամեթոդական հանդես, լույս է տեսել 1960 - 1989 թթ.:

75. «Կռունկ», ամսաթերթ, Սուխում, Աբխազիայի Հայկական մշակութային-բարեգործական «Կռունկ» ընկերության երկլեզվյան՝ հայերեն և ռուսերեն ամսաթերթ, հրատարակվել է 1990-91 թթ.՝ ընդամենը 5 համար, ևս 2 համար՝ ռուսերեն 1994 թ.: Տպագրվել է Երևանում և տարվել Աբխազիա:

76. «Համշեն», ռուսերեն-հայերեն գրական-լուսավորչական պարբերաթերթ, Սուխում, հրատարակվել է 1991 թ. հոկտեմբերից, 2015 թ. հունվարից անվանափոխվել է և հրատարակվել է «Գրական Համշեն» անունով, ամիսը 2 անգամ, նյութերի մեծ մասը՝ ռուսերեն:

77. «Հայ աշխարհ», Երևան, «Վերնատուն» համազգային կրթամշակութային համալիրի պարբերաթերթ, հրատարակվել է 1990-ից: Հիմնականում անդրադառնում էր Ներքին սփյուռքի անցյալին ու ներկային:

78. «Հայ զինվոր», Երևան, ՀՀ պաշտպանության նախարարության շաբաթաթերթ, տպագրվում է 1993 թ. ապրիլից:

79. «Հայաստան», շաբաթաթերթ, Երևան, Հայաստանի Ազգային Անկախության կուսակցության պաշտոնաթերթ, լույս է տեսել 1989 թվականից ամսագրի ձևաչափով:

80. «Հայաստանի աշխատավորուհի», Երևան, մինչև 1990 թ.՝ ՀԿԿ Կենտկոմի հասարակական-քաղաքական, գրական-գեղարվեստական ամսագիր, լույս է տեսել 1924-1998 թթ. (1941-58 թթ. ընդհատվել է):

81. «Հայաստանի գրուցակից», հասարակական-քաղաքական, կրթամշակութային շաբաթաթերթ, լույս է տեսել 2007-13 թթ. Երևանում, հայերեն և անանձին ռուսերեն՝ «Собеседник Армении»:

82. «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, լույս է տեսել 1990-2023 թթ. Երևանում, մինչև 2000 թ.՝ ՀՀ ԳԽ (Ազգային ժողով) պաշտոնաթերթ, 2001-ից՝ «Հայաստանի Հանրապետություն» ՓԲԸ հրատ.:

83. «Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցի», Հայ Ավետարանչական ընկերակցության եռամսյա հանդես, Երևան, լույս է տեսել 1997-2011 թթ., 60 համար:

84. «Հայկազեան հայագիտական հանդես», հրատարակում է Բեյրութի Հայկազյան համալսարանի հայագիտական ամբիոնը, լույս է տեսնում 1970-ից (1975-76 և 1985-90 թթ. ընդհատվել է), մինչև 2021 թ. տարեկան մեկական, 2022-ից՝ երկուական համար:

85. «Հայոց աշխարհ», օրաթերթ, Երևան, տպագրվում է 2000-ից:

86. «Հայրենական», հասարակական-քաղաքական, մշակութային մարզային թերթ, ք. Արմավիր, տպագրվել է Երևանում, 2001-ից, սկզբում շաբաթաթերթ, այնուհետև՝ ամսաթերթ:

87. «Հայրենիք», հասարակական-քաղաքական, գրական օրաթերթ, ՀՅԴ Ամերիկայի արևելյան շրջանի կենտրոնի պաշտոնաթերթ, լույս է տեսնում 1899-ից Նյու Յորքում, 1900-ից՝ Բոստոնում, 1986-ից՝ Ուոթերթաունում:

88. «Հայրենիքի ձայն», Երևան, Սփյուռահայության հետ մշակութային կապի կոմիտեի շաբաթաթերթ, լույս է տեսել 1965-96 թթ.:

89. «Հայք», Երևան, Հայոց համագգային շարժման շաբաթաթերթ, լույս է տեսել 1989-99 թթ. և 2006-2010 թթ. (1995-98-ին՝ օրաթերթ):

90. «Հանրապետական», Երևան, Հայաստանի Հանրապետական կուսակցության ամսագիր, հրատարակվել է 2003-2012 թթ., 104 համար:

91. «Հետք» (Hetq.am) ինտերնետային թերթ, հրատարակիչ՝ «Հետաքննող լրագրողներ» ՀԿ, 2009 սեպ. մինչև 2011 թ. դեկտ. տպագրվել է նաև «Հետք» շաբաթաթերթը:

92. «Հորիզոն», հայերեն, անգլերեն և ֆրանսերեն շաբաթաթերթ, ՀՅԴ Կանադայի շրջանի պաշտոնաթերթ, լույս է տեսնում 1979-ից Մոնրեալում:

93. «Հիւսիսափայլ», պարբերաթերթ, Երևան, տպագրվել է 2005 թ. օգոստոսից:

94. «Ձայն համշենական», ամսաթերթ, Երևան, Հայաստանի «Համշեն» հայրենակցական-բարեգործական ՀԿ պաշտոնաթերթ, հրատարակվել է 2004 թ. օգոստոսից մինչև 2018 թ. փետրվարը՝ 168 համար:

95. «Նոր Մարմարա», օրաթերթ, լույս է տեսնում 1940-ից Ստամբուլում:

96. «Մենք մեր մասին», մշակութային եռամսյա պատկերազարդ հանդես, լույս է տեսել 2005 թ.-ից Երևանում:

97. «Մաշտոց», թերթ, Երևան, հրատարակվել է 1991 թ. ապրիլից - դեկտեմբեր:

98. «Մշակույթ», Երևան, ՀՍՄՀ կուլտուրայի մինիստրության և Մշակույթի ֆոնդի հասարակական-քաղաքական, մշակույթի և արվեստի հարցերով գիտահանրամատչելի պատկերազարդ հանդես, լույս է տեսել 1989 թ. հուլիս-օգոստոսից:

99. «Սոլորակ», թերթ, Երևան, հրատարակվել է 1996-ից:

100. «Յառաջ», հասարակական-քաղաքական և գրական օրաթերթ, Փարիզ, լույս է տեսել 1925-2009 թթ., 2009 թ. հոկտեմբերից՝ «Նոր Յառաջ» շաբաթաթերթ:

101. «Յոյս» մշակութային և հասարակական երկշաբաթաթերթ, Թեհրան, տպագրվում է 2007 թ. մայիսի 2-ից (ամսագրի ձևաչափով):

102. «Նոյյան տապան», շաբաթաթերթ, Երևան, հրատարակիչ «Նոյյան տապան» ՍՊԸ, անգլերեն թողարկումը տպագրվել է 1993 թ. մայիսից, ֆրանսերենը՝ 2007 թ. մարտից, հայերենը՝ 2007 թ. մայիսից:

103. «Նոր աշխարհ», շաբաթաթերթ, Աթենք, ՌԱԿ-ի Հունաստանի շրջ. վարչության պաշտոնաթերթ, լույս է տեսնում 1968-ից:

104. «Նոր Նորք», Երևան, Նոր Նորքի թաղապետարանի պաշտոնաթերթ, շաբաթաթերթ, լույս է տեսնել 1998 թ.:

105. «Նորաթերթ», օրաթերթ, Երևան, «XXI դար» միջազգային անկախ ասոցիացիայի հրատարակություն, հրատարակվել է 1999-ից:

106. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի Տեղեկագիր, Երևան:

107. «Շողակն Արարատյան», Երևան, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի ամսաթերթ (1996 թ. մինչև 2000 թ.՝ Արագածոտնի թեմի, Օշական):

108. «Շրջադարձ», մշակութային, գիտական, հասարակական համահայկական, ամսագիր, հրատարակվել է Երևանում, 2004 թ. ապրիլից-դեկտեմբեր, 5 համար:

109. «Ոգնի», երգիծական պատկերազարդ ամսաթերթ, տարբեր պարբերականությամբ լույս է տեսնում 1954-ից, Երևանում:

110. «Ոսկե դիվան», Երևան, միջազգային հեքիաթագիտական հանդես, տարեկան մեկ անգամ հրատարակում է Հովհ. Թումանյանի թանգարանի հեքիաթագիտության բաժինը և fabula armeniaca ծրագիրը՝ համագործակցությամբ Երևանի պետական համալսարանի: Հրատարակվում է 2009-ից:

111. «Պայքար», ՌԱԿ-ի պաշտոնաթերթ, լույս է տեսնում 1922 թ.-ից ԱՄՆ-ում՝ Բոստոնում:

112. «ՊԱՍ», «ՊԱՍ» ՍՊ ընկերության շաբաթաթերթ, Երևան, հրատարակվել է 1994 թ. դեկտեմբերից:

113. «Պատանեկան արձագանգ», մանկապատանեկան ամսագիր, Բեյրութ, Լիբանան: Լույս է տեսնում 1936-ից: Սեփականատեր՝ Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցիների միություն:

114. «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, ՀՀ ԳԱԱ եռամսյա, հետազայում՝ քառամսյա գիտական հանդես, լույս է տեսնում 1958-ից:

115. «Պիոներ», Երևան, ՀԼԿԵՄ Կենտկոմի և Վ. Բ. Լենինի անվան պիոներական կազմակերպության հանրապետական խորհրդի մանկական ամսագիր, տպագրվել է 1923-ից: 1990-ից մինչև 2021 թ.՝ «Աղբյուր»:

116. «Պիոներ կանչ», եռօրյա թերթ, ՀԼԿԵՄ ԿԿ-ի և Հայաստանի պիոներական կազմակերպությունների հանրապետական խորհրդի պաշտոնաթերթ, Երևան, լույս է տեսել 1925-90 թթ., 1991-ից՝ «Կանչ»:

117. «Ջանասեր», Մերձավոր Արևելքի Հայ Ավետ. եկեղեցիների միության երկշաբաթաթերթ, հրատարակվում է ամսագրի տեսքով, լույս է տեսնում 1937 թ.-ից Բեյրութում:

118. «Սեվան», արևելահայերեն հանդես, Լոս Անջելես, լույս է տեսել 1982-ից ամիսը երկու անգամ՝ ամսի 1-ին և 15-ին:

119. «Սովետական արվեստ», ՀՍՍՀ Կուլտուրայի մինիստրության և ՀՍՍՀ Կինեմատոգրաֆիայի պետական կոմիտեի գիտատեսական, քննադատական և գեղարվեստական ամսագիր, Երևան: Լույս է տեսել 1932-1996 թթ. (1932-41 թթ.՝ «Խորհրդային արվեստ», 1943-55-ին՝ «Սովետական գրականություն և արվեստ», 1955-89-ին՝ «Սովետական արվեստ», 1989-96-ին՝ «Արվեստ»):

120. «Սովետական գրականություն», Երևան, Հայաստանի գրողների միության վարչության գրական-գեղարվեստական, տեսական-քննադատական ամսագիր, հրատարակվում է 1934 թվականից, 1988-ից՝ «Նորք»:

121. «Սովետական դպրոց», Երևան, ՀՍՍՀ լուսավորության մինիստրության, ՀՍՍՀ պրոֆտեխնիկական կրթության պետկոմիտեի և լուսավորության, բարձրագույն դպրոցի ու գիտական հիմնարկների արհմիության հանրապետական կոմիտեի պաշտոնաթերթ, շաբաթաթերթ, լույս է տեսել 1932-97 թթ., 1932-34 թթ.՝ «Կուլտուրական ֆրոնտ», 1935-41-ին՝ «Խորհրդային դպրոց», 1941-89-ին՝ «Սովետական դպրոց», 1990-94-ին՝ «Դպրություն», 1995-97-ին՝ «Դպրոց», 1997-ից՝ «Կրթություն»:

122. «Սովետական Հայաստան», ամսագիր, Երևան, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ամսագիր, լույս է տեսել 1945-88 թթ., 1989-90 թթ.՝ «Վերածնված Հայաստան», 1991 թ.՝ «Հայրենի եզերք» անուններով:

123. «Սովետական Հայաստան», օրաթերթ, լույս է տեսել 1920-91-ին Երևանում, 1991-ից՝ «Հայաստան»:

124. «Վերածնված Հայաստան», ամսագիր, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի և արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերության հասարակական, գրական-գեղարվեստական պատկերազարդ հանդես, տե՛ս «Սովետական Հայաստան» ամսագրի տվյալները:

125. «Տեղեկագիր», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, Երևան, հրատարակվել է 2004 թ. հոկտեմբերից:

126. «Ուրախ զնացք», մանկական ճանաչողական, ժամանցային ամսագիր, Երևան, հիմնադիր և հրատարակիչ՝ «Էդիթ Պրինտ» հրատ., տպագրվել է 2009-ից:

127. «Փյունիկ», Երևան, հասարակական և քաղաքական անկախ պարբերաթերթ, անհատական հրատարակություն, հրատարակվել է 1990-ից, ամիսը մեկ-երկու անգամ: Հիմնականում տպագրվել են հայագիտական և արևելագիտական հոդվածներ:

128. «Քաղաքական գրուցակից», Երևան, ՀԿԿ Կենտկոմի հասարակական-քաղաքական հանդես, տարբեր անուններով հրատարակվել է 1933-1991 թթ. Երևանում, 1989-ից «Քաղաքական գրուցակից», լույս է տեսել ամիսը 2 անգամ:

129. «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկատվական-վերլուծական հանդես, Երևան, հրատարակվել է 2003-ից, հայերենը՝ երկամսյա, անգլերենը՝ կիսամսյա:

130. «Քուլիս», գրական, գեղարվեստական, տեղեկատվական կիսամսյա հանդես, Ստամբուլ, հրատարակվում է 1946 թ.-ից:

131. «Օրեր», համաեվրոպական հայկական հանդես, Չեխիա, Պրահա, հիմնադիր՝ «Կովկաս-Արևելյան Եվրոպա լրատվական կենտրոն» ոչ կառավարական կազմակերպություն, լույս է տեսնում 1999-ից, մինչև 2023 թ. հուլիս ամիսը տպագրվել է 95 համար: Ունի քառալեզու՝ հայերեն, չեխերեն, ռուսերեն, անգլերեն կայքէջ:

132. «Օրբան», օրաթերթ, Երևան, հիմնադիր և հրատարակիչ՝ «Լոկուս Ստանդի» ՍՊԸ, լույս է տեսել 2002-ից, ուներ անգլերեն առցանց տարբերակ:

## Ռուսերեն

133. «Аврора», ՀԱՍԼԿԵՄ ԿԿ, ԽՍՀՄ գրողների միության, Ռուսաստանի գրողների միության հասարակական-քաղաքական, գրական-գեղարվեստական ամսագիր, հրատարակվել է Լենինգրադում, 1969-ից:

134. «Амшен-Понто», պատմա-մշակութային գիտական հանդես, հրատարակիչ՝ «Ռուս-հայկական ընկերակցություն» ՀԿ, Կրասնոդար, Սոչի, Տուսայսե: Հրատարակվում է 2009-ից:

135. «Анив», Մինսկ, հայերի և Հայաստանի մասին պատմա-մշակութային հանդես, հրատարակվում է 2005-ից:

136. «Армянский гуманитарный вестник», հայագիտական հանդես, Մոսկվա- Երևան, հրատարակվում է 2006 թ.-ից:

137. «Арагаст», կանանց շաբաթաթերթ, հայերեն «Առագաստ» թերթի ռուսերեն հավելվածն է, հրատարակվել է Երևանում 1991 -1994 թթ.:

138. «Голос Армении», երկօրյա թերթ, Երևան, ՀԿԿ ԿԿ-ի, ՀԽՍՀ ԳԽ-ի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի, 1990-ին՝ ՀԿԿ ԿԿ պաշտոնաթերթ, 1991-ից՝ անկախ հասարակական-քաղաքական ռուսերեն օրաթերթ, լույս է տեսնում 1934-ից, 1934-90 թթ.՝ «Коммунист»: 2006-2007 թթ. լույս է տեսել նաև «Գոլոս Արմենիի» հայերեն տարբերակը՝ շաբաթաթերթ:

139. «21-й век», «Նորավանք» հիմնադրամի հանդես, հայերեն, ռուսերեն և անգլերեն հրատարակվել է Երևանում, 2012-ից:

140. «Детская литература», մանկական գրականության մասին ամսագիր, հրատարակվել է Մոսկվայում 1932-ից մինչև 2000-ական թթ. կեսերը:

141. «Диаспоры», Մոսկվա, ՌԴ ԳԱ արևելագիտության ինստիտուտի գիտական ամսագիր, առաջին համարը լույս է տեսել 1999 թ.:

142. «Ереван», ամսագիր, Երևան, հրատարակիչ՝ «Էթնոպրես» (Մոսկվա) ՓԲԸ, տպագրվել է Ֆինլանդիայում, 2005-2013 թթ., 88 համար:

143. «Еркрамас», ռուսերեն ամսաթերթ, ք. Կրասնոդար, Ռուսաստանի հայերի թերթ, հրատարակվել է 1996 թ. նոյեմբերից:

144. «Коммунист», տե՛ս «Голос Армении».

145. «Комсомолец», Երևան, ՀԼԿԵՄ կենտկոմի երկօրյա ռուսերեն թերթ, հրատարակվել է 1938-90 թթ., 1991-98 թթ.՝ «Эпоха», շաբաթաթերթ, (1938-41, 1945-54-ին «Сталинец» շաբաթաթերթ):

146. «Комсомольская Правда», Համամիութենական ԼԿԵՄ կենտկոմի օրաթերթ, Մոսկվա, հրատարակվել է 1925 թ.-ից:

147. «Литературная Армения», Երևան, Հայաստանի գրողների միության գրական-գեղարվեստական և հասարակական-քաղաքական ամսագիր: Հրատարակվում է 1958 թ. դեկտեմբերից:

148. «Наири в Калининграде», ամսաթերթ, Կալինինգրադ, «Հայկական գիտատեղեկատվական մշակութային կենտրոն» տարածաշրջանային ՀԿ պաշտոնաթերթ, լույս է տեսնել 2003 թ. սեպտեմբերից մինչև 2013 թ., 100 համար, ունի նաև հայերեն էջեր: Հիմնադիր և հրատարակիչ՝ թերթի խմբագրական խորհուրդ:

149. «Новое время», երկօրյա թերթ, Երևան, հասարակական-քաղաքական անկախ թերթ, լույս է տեսնում 1992 թ. դեկտեմբերից:

150. «Ноев ковчег», ամսաթերթ, Մոսկվա, հրատարակվում է 1997 թ. օգոստոսից:

151. «Собеседник Армении», շաբաթաթերթ, լույս է տեսել Երևանում 2007-13 թթ., հրատարակվել է նաև հայերեն տարբերակը՝ «Հայաստանի զրուցակից»:

152. «Советский Союз», ամսագիրը Մոսկվայում հիմնադրել է Մաքսիմ Գորկին, մինչև 1950 թ. կոչվել է «СССР на стройке»: Հրատարակվել է աշխարհի 20 լեզուներով, վաճառվել՝ 100 երկրներում:

153. «Ти Ви канал» («TV канал»), հեռուստատեսության և ռադիոյի ծրագրերի, գովազդի շաբաթաթերթ, հայերեն «TV ալիքի» ռուսերեն տարբերակն է: Հրատարակվում է Երևանում 1997-ից:

154. «Урагу», շաբաթաթերթ, Երևան, հիմնադիր՝ թերթի աշխատակազմ, հրատարակվել է 1992 թ. հուլիսից:

155. «Hamshen», Մոսկվայի «Համշենցի հայերի ասոցիացիայի» ռուսերեն հանդես, առաջին համարը տպագրվել է 2009 թ. օգոստոսին, վերջինը՝ 2011 թ. ամռանը, ընդամենը՝ 4 համար:

#### Անգլերեն

156. «Armenian Folia Anglistika», Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիա ՀԿ միջազգային գրախոսվող հանդես, հրատարակվում է 2004 թվականից Երևանում:

157. «Armenian forum», եռամսյա հանդես, Կոմիտաս ինստիտուտի հրատարակություն, ԱՄՆ, Նյու Ջերսի, Փրիքթոն, տպագրվել է 1998-2003 թթ.:

158. «The Armenian Mirror-Spectator», շաբաթաթերթ, լույս է տեսնում 1932-ից Բոստոնում: ՌԱԿ-ի Հյուս. Ամերիկայի շրջանային վարչ. պաշտոնաթերթ:

159. «The Armenian Observer», շաբաթաթերթ, Լոս Անջելես, լույս է տեսնում 1970-ից:

160. «The Armenian Reporter», շաբաթաթերթ, լույս է տեսել 1954-ից Նյու Յորքում, ապա՝ Նյու Ջերսիում, Վաշինգտոնում, 2010-ից՝ Էլեկտրոնային տարբերակով:

161. «Ditord» (observer), տեղեկագիր պարբերական, հրատարակվում էր, «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի» և «Սահմանադրական և իրավական քաղաքականության ինստիտուտի» օժանդակությամբ, Երևանում, 2002 թ.: Ուներ նաև հայերեն տարբերակ:

162. «Monday Morning», ամսագիր, Բեյրութ:

163. «Today's Zaman», Ստամբուլում հրատարակվող թուրքերեն ամենօրյա «Zaman» թերթի անգլերեն տարբերակն է, հիմնադրվել է 2007 թ. հունվարին, 2016 թ. պետական հեղաշրջման փորձից անմիջապես հետո արգելվել է:

164. «Journal of Armenian Studies» (թարգմ.՝ «Հայագիտական հանդես»), 1975-2004 թթ. Տարբեր հաճախականությամբ լույս է տեսել ԱՄՆ-ի Մասաչուսեթսի նահանգի Բելմոնտ քաղաքում:

165. «Journal of Genocide Research», United Kingdom, London, Taylor and Francis Ltd, Routledge, հրատարակվում է 1999 թ.-ից:

166. «21 st century», «Նորավանք» հիմնադրամի գիտական պարբերական, հրատարակվել է Երևանում, հայերեն, ռուսերեն և անգլերեն 2012-ից:

#### Թուրքերեն

167. «Agos» («Այոս»), շաբաթաթերթ, լույս է տեսնում 1996-ից, Ստամբուլում, 20 էջ՝ թուրքերեն, 4 էջ հայերեն ներդիրով:

168. «Aksiyon, թուրքերեն ամենշաբաթյա հանդես, հրատարակվել է 1994 թ. դեկտեմբերից, Ստամբուլում, փակվել է 2016 թ. Թուրքիայի պետական հեղաշրջման փորձից հետո հայտարարված արտակարգ դրության ժամանակ:

169. «Bir Gün», թուրքերեն օրաթերթ, հրատարակվում է Ստամբուլում, 2004թ. ապրիլից, ձախակողմյան ուղղվածությամբ մեծադիր թերթ է:

170. «Gor», կրոնափոխ համշենցիների Ստամբուլի «Hadig» (Հատիկ) մշակութային միության թուրքերեն հանդեսն է, տպագրում է նաև լատինատառ նյութեր Համշենի բարբառով: Հրատարակվում է 2014-ից՝ տարեկան մեկ կամ երկու համար: Մինչև 2023 թ. հրատարակվել է 13 համար:

171. «Folklor/Edebiyat», բանահյուսությանը և գրականությանը նվիրված թուրքերեն եռամսյա գիտական հանդես, հիմնադրվել է 1994 թ. Անկարայում, 2008-ից հրատարակվում է ինքնահեռանակ Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության Նիկոզիա քաղաքի Կիպրոսի միջազգային համալսարանում:

172. «Paros», հայկական արվեստին և մշակութային կյանքին նվիրված թուրքերեն պատկերազարդ ամսագիր, լույս է տեսնում 2011 թ. հոկտեմբերից, Ստամբուլում:

173. «Tarih ve Toplum – Yeni Yaklaşımlar», Ստամբուլում հրատարակվող գիտական պարբերական:

174. «Toplumsal Tarih», 1994 թ.-ից Ստամբուլում հրատարակվող գիտական պարբերական:

#### Իսպաներեն

175. «Ararat», Արգենտինա, Բուենոս Այրես, Ազգային առաջնորդարանի պարբերաթերթ, 10 էջ՝ իսպաներեն, 2 էջ՝ հայերեն:

176. «Մեւան Sevan», իսպաներեն և հայերեն շաբաթաթերթ, Արգենտինահայ մշակութային միության հրատարակություն: Լույս է տեսել 1960-1990 թթ. Բուենոս Այրեսում:

177. «Krunck», հանդես, «Սովետական Հայաստան» ամսագրի իսպաներեն առանձին տպագրվող հավելված, որը հրատարակվել է Երևանում 1981-91 թթ.:

#### Իտալերեն

178. «L'osservatore Romano», օրաթերթ, Վատիկան, հրատարակվում է 1861թ. հուլիսի 1-ից:

#### Հունարեն

179. «Αρμένικος Τύπος» (տառադարձվում է՝ Արմենիկոս Տիպոս), հունարեն տպագրվող հայկական ամսագիր, Աթենք:

#### Հունգարերեն

180. «Szovjet irodalom» (թարգմ.՝ «Սովետական գրականություն»), ամսագիր, Բուդապեշտ, տպագրվել է 1975-1990 թթ.:

181. «Kisalföld», օրաթերթ, ք. Դյոր, Հունգարիա, Դյոր-Շոպրոնի մարզի կուսակցական և գործադիր ղեկավար մարմինների պաշտոնաթերթ:

#### Սլովակերեն

182. «Revue svetovej literatúry» (թարգմ.՝ «Համաշխարհային գրականության տեսություն»), Սլովակիա, Բրատիսլավա, հրատարակիչը համաշխարհային գրական ֆոնդն է, Բրատիսլավա (Vydavateľstvo Slovenského Literárneho fondu, Bratislava).

#### Ֆրանսերեն

183. «Azad Magazine», (Կրճնուպլի Հայ ակումբի լրատու), Գրենոբլ, Ֆրանսիա, Էռամսյա պատկերազարդ հանդես, լույս է տեսել 1977-ից, ֆրանսերեն, 2 էջը՝ հայերեն:

184. «Krounk», հանդես, «Սովետական Հայաստան» ամսագրի ֆրանսերեն առանձին տպագրված հավելված, որը հրատարակվել է Երևանում 1981-91 թթ.:

## Մերգեյ Գագիկի Վարդանյան

ԸՆԴԱՐՁԱԿ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

(1974-2024)

Խմբագիր՝ Անահիտ Հարությունյան  
Բանասիր. գիտությունների թեկնածու

Համակարգչային շարվածքը և էջադրումը՝  
Տիգրանուհի Լևոնյանի

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ



Հրատարակչություն

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:

Հեռ.՝ 055. 52.79.74:

Էլ. փոստ՝ [lusakn@rambler.ru](mailto:lusakn@rambler.ru)